ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Историко-филологический журнал

1

2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

Պատմաբանասիրական Հանդես

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

2023, 1 (222)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
PUBLISHING HOUSE «GITUTYUN» NAS RA

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN
2023

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

The journal has been published since 1958
Editor-founder M. G. Nersisyan

Խ մ բ ագ ր ակ ան խ ո ր հ ո ւ ր դ

Ն ա խ ագ ա հ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գ լ խ ավ ո ր խմբագիր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գ լ խ ավ ո ր խմբագրի տեղակալ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Ա ն դ ամ ն ե ր՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՉՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ),
ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ, ԶԵՔԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ,
ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ ՎԱՀԱՆ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ),
ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա)

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – АЭЛИТА ДОЛУХАНЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, БАРДАКЧЯН ГЕВОРГ (США),
ДЕВРИКЯН ВАРДАН, ЗЕКИЯН ЛЕВОН (Италия), КАТВАЛЯН ВИКТОР,
АСРАТЯН МУРАД, ОГАНИСЯН ГЕНРИК, ОГАНЕСЯН НИКОЛАЙ,
МУРАДЯН САМВЕЛ, ТЕР-ГЕВОНДЯН ВААН, ТЕРЯН АБРААМ (США),
ТОНАПЕТЯН АНАИТ (Франция)

Editorial Board

Chair: ASHOT MELKONYAN
Editor-in-Chief: ANUSHAVAN ZAKARYAN
Deputy Editor-in-Chief: AELITA DOLUKHANYAN
Members: ABRAHAMYAN LEVON, AVETISYAN PAVEL, BARDAKJIAN KEVORK (USA),
DEVRIKYAN VARDAN, ZEKIYAN LEVON (Italy), KATVALYAN VIKTOR,
HASRATYAN MURAD, HOVHANNISYAN HENRIK, HOVHANNISYAN NIKOLAY,
MURADYAN SAMVEL, TER-GHEVONDYAN VAHAN, TERIAN ABRAHAM (USA),
TONAPETYAN ANAHIT (France)

Պատմաբանասիրական հանդես, 2023
Историко-филологический журнал, 2023
Historical and Philological Journal, 2023

Հապավումը՝ ՊԲՀ
Аббревиатура – ИФЖ
Abbreviation: HPhJ

ՀՏԴ : 929:947.925 Տատրյան

Doi:10.54503/0135-0536-2023.1-3

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿԱՆԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԸ*

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Վահագն Տատրյան, Հայոց ցեղասպանություն, տեղահանություն, Հայաստան, Արցախ, Սփյուռք, Օսմանյան կայսրություն, հասարակապիտություն, ոճրապիտություն, զոհապիտություն, վավերագիր, մամուլ:

Նախաբան

Հայոց ցեղասպանության նշանավոր ուսումնասիրող Վահագն Տատրյանի (1926[1], մայիսի 26 – 2019, օգոստոսի 7) կյանքն ու գիտական գործունեությունն առանց վարանելու կարելի է բնութագրել որպես իրական առասպել: Անգնահատելի է նրա ներդրումը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Տատրյանը, մասնավորապես, Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը հաղորդելով նոր որակ՝ հիմնարար հարցադրումներով և գիտական նոր տեսությունների ու համեմատական ցեղասպանագիտության հենքի վրա այն դարձրեց հասանելի միջազգային գիտական շրջանակներին: Ուստի այսօր չափազանց կարևոր է Տատրյանի գիտական ժառանգության վերաարժևորումը, հատկապես, երբ Հայաստանն ու Արցախը կրկին հայտնվել են հայ ժողովրդի գոյության և Հայաստանի ինքնիշխանության վտանգող թուրք-ադրբեջանական ծավալապաշտական նկրտումների հանդիման: Վ. Տատրյանի աշխատությունները հիմնարար գիտական լինելուց բացի՝ ունեն քաղաքագիտական արժեք: Ցեղասպանագետը, առաջին անգամ շրջանառության մեջ դնելով հույժ կարևոր վավերագրեր, փաստական այդ նյութերը քննել է միջազգային իրավունքի, քրեագիտության, հասարակագիտության և ոճրագիտության տեսանկյունից՝ միաժամանակ ստեղծելով Հայոց ցեղասպանությունը գիտականորեն բնութագրող եզրույթներ ու սահմանումներ: Վ. Տատրյանի՝ գիտական նոր մեթոդաբանությամբ արված ուսումնասիրություններն ամրագրում են Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու իրողութ-

* *Ներկայացվել է 27. I. 2023 թ., գրախոսվել է 06. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH–042 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում: ԱՄՆ-ում Լոս Անջելեսի «Արարատ-Էսքիջյան» թանգարանում, պահվող Վահագն Տատրյանի արխիվում աշխատելու հնարավորության և մեզ նյութեր ու լուսանկարներ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում տնօրեն Մագի Մանգասարյան Գոչինին, ում շնորհիվ այդ արխիվը Բոստոնից տեղափոխվել է Լոս Անջելես և ի պահ տրվել սույն թանգարանին:*

[1] *Վ. Տատրյանի անձնական արխիվում պահվող նրա թուրքական անձնագրում ծննդյան թիվը նշված է 1921 թ.:*

յունը: Մեծ ցեղասպանագետի ուսումնասիրությունները ներկայացնում են հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական ժամանակաշրջանի՝ կենճռռտ ու դեռևս արդար հատուցում չստացած հարցերը, որոնց ուղղակի հետևանքն է Հայաստանի Հանապետության ներկայիս բարդ իրավիճակը և Արցախի մեծագույն մասի կորուստը:

Էջեր Վահագն Տատրյանի կենսագրությունից

Տատրյան ընտանիքը սերում է Կեսարիայի գավառի Գերմիր (Կարմիր) գյուղաքաղաքից[2]: Հետագայում տեղափոխվել է Սեբաստիայի նահանգի Զորում գյուղաքաղաք, որտեղ ապրում էին մեծ թվով հայեր: Տատրյաններն այնտեղ հայտնի էին որպես ազգասեր տոհմ: Գերդաստանի մեծ հոր՝ Աբրահամ էֆենդու բարերարությամբ կառուցվել է քաղաքի եկեղեցին, իսկ որդին՝ Վ. Տատրյանի հայրը՝ Հակոբը, հիմնել է քաղաքի դպրոցի շենքը: Նրանց առանձնատունը հյուրատեղի է եղել քաղաքի և՛ հարուստների, և՛ աղքատների համար: Ինչպես գրում է Վ. Տատրյանի ավագ քույրը՝ Ադրինեն՝ «Հայրս ալ կրկնած էր, թէ Զորումի մեր տունը բնաւ չէր դոցուեր: Հոնկէ ներս կը մտնէին անօթիներ, տաք կերակուր մը գտնելու և որևէ գործի առթիւ խնդրագիրներ գրել տալու համար»[3]: Հակոբ Տատրյանը, ավարտելով Մարզվանի Ամերիկյան քոլեջը, Զորումում աշխատել է որպես վաստաբան, զբաղվել է առևտրական գործերով, ինչպես նաև ճանաչված էր թուրք քաղաքական գործիչների շրջանակում:

Հակոբ Տատրյանը մոր, առաջին կնոջ և զավակների՝ Աբրահամ Վահեի ու Ադրինեի (ախոռապանի գրկում) հետ, Զորում:

Հայոց ցեղասպանության ընթացքում Տատրյան ընտանիքը, անցնելով բռնագաղթի ճանապարհը, հաստատվում է Դամասկոսից հարավ՝ Հորդանանի խորքերում գտնվող չերքեզական Ջերեզ գյուղաքաղաքում[4]: Տարագրության ճանապարհին՝ Հալեպում, մահանում է Հակոբի կինը՝ Հայկանուշը[5], և նա իր մոր, երեք զավակների՝ ավագ որդու՝ Աբրահամ Վահեի, դստեր՝ Ադրինեի և փոքր որդու՝ Բյուզանդի հետ հանգրվանում է Ջերեշում: Տեղի քաղաքապետարանում Հակոբը պաշտոն է ստանում և չնորհիվ իր կապերի՝ կարողանում է Զորումից բավական հայ ընտանիքներ, այդ թվում՝ ազգականներին տեղափոխել Ջերեշ: Հետագայում նա իր ընտանիքով անցնում է Կ. Պոլիս՝ Բաքըրգյուղ (Բաքըրքյոյ, նախկինում՝ Մաքրի գյուղ), իսկ այնուհետև՝ հաստատվում

---

[2] *Ա. Տատրեան. 1995, 52–53:*

[3] *Ա. Տատրեան. 1995, 20–21:*

[4] *Ա. Տատրեան. 1995, 9: Տատրյանների ազգական Վահրամ Տատրյանն իր հուշերում ևս պատմում է ընտանիքի տեղահանության պատմությունը (տե՛ս Տատրեան. 1945, 564,* Dadrian. 2003, 408*):*

[5] *Ա. Տատրեան. 1995, 53:*

Քաղըգյուղում (Քաղըքյոյ): Հ. Տատրյանն ամուսնանում է երկրորդ անգամ իր ծանոթ քահանայի աղջկա՝ Մայրենիի հետ: Այդ միությունից ծնվում են Վահագն Նորայր Տատրյանը և քույրը՝ Մելինեն[6]: Վ. Տատրյանը մանուկ հասակում կորցնում է մորը: Հիվանդության պատճառով մահանում է նաև հայրը: Ստիպված Վահագնին և Մելինեին ուղարկում են Սկյուտարի դիշերօթիկ դպրոց[7]:

Վ. Տատրյանը նախնական կրթություն է ստանում Կ. Պոլսի Սկյուտարի Ներսեսյան-Երմոնյան վարժարանում, որից հետո վեց տարի սովորում է Բանկալթիի Վիեննական Մխիթարյան կրթահամալիրում[8], ապա՝ ընդունվում Ստամբուլի համալսարան[9]: Արժանանալով Ալեքսանդր Ֆոն Հումբոլդի կրթաթոշակին՝ նա իր ուսումը հաջորդաբար շարունակում է Բեռլինի համալսարանի մաթեմատիկայի, Վիեննայի համալսարանի պատմության և Ցյուրիխի համալսարանի միջազգային իրավունքի ֆակուլտետներում[10]: Այդ տարիներից ուրվագծվում է ապագա գիտնականի հետաքրքրությունների շրջանակը: Ինչպես հետագայում գրում է Տատրյանը, «Ես պատկանում եմ հայերի այն սերնդին, ովքեր ծնվել են Ստամբուլում Թուրքիայում, և մեծացել են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության հետո: Ինչպես իմ սերնդակիցներից շատերի, այնպես էլ իմ կյանքի վրա ևս զգացվել է ցեղասպանության ավերածությունների հետևանքները: Ի հավելումն ընտանեքիս մի քանի անդամների՝ հիմնականում իմ հորական և մորական տատիկի կորստին, ես ստիպված էի դիմանալ այդ տրավմայի պատճառով ի հայտ եկած այն անողոք տառապանքին, որը կրեցին իմ ողջ մնացած ընտանիքի անդամները, մինչև իրենց կյանքի վերջը»: Եվ ողբերգությունն ու նրա զոհերն էին, ինչպես գրում է Տատրյանը, որ իրեն մղեցին գիտական ոլորտների[11]:

Նրա մասնագիտական վերջնական կողմնորոշման համար շրջադարձային է եղել ավստրիացի վիպասան Ֆրանց Վերֆելի[12] «Մուսա լեռան քառասուն օրը»[13] վեպի ընթերցումը. «Ես միշտ հետաքրքրվել եմ մաթեմատիկայով, ինչ-

---

[6] *Ա. Տ ա տ ր ե ա ն. 1995, 53–54:*

[7] *Ա. Տ ա տ ր ե ա ն. 1995, 68:*

[8] *«Բուբաստան» (Մոնթրէալ), 1963, թիւ 4–5, յուլիս–օգոստոս, 7:*

[9] *«Պայքար» (Բոստոն), 28. VIII. 1957:*

[10] "The Armenien Reporter" (New York), 19. IV. 1976.

[11] D a d r i a n. 2010, 235.

[12] *Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ֆ. Վերֆելն որոշ ժամանակ ապաստանում է Սբ. Ղազարի Մխիթարյան միաբանությունում և վանականներից իմանալով թուրքերի հարձակումների դեմ Մուսա լեռան հայերի հերոսական դիմադրության մասին՝ ներշնչված գրում է «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը (տե՛ս Մ ա ր տ ի կ ե ա ն. 1957, 343):*

[13] W e r f e l. 1933. *Այնքան մեծ է եղել Ֆր. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի ազդեցությունն ու արձագանքները, որից խիստ անհանգստացած՝ նացիստները, Գերմանիայում հավաքելով գրքի օրինակները, այրել են: Նույնը տեղի է ունեցել Կ. Պոլսում (տե՛ս Վ ե ր ֆ ե լ. 2022, 10): Մի խումբ հայեր, թուրքական կառավարությանը հաճոյանալու և իրենց հավատարմությունը ցույց տալու համար, կամ, միգուցե, վախից դրդված, 1935 թ. դեկտեմբերին այս գիրքը հավաքում են*

պես նաև փիլիսոփայությամբ, մասնավորապես՝ իմացաբանության հետ նրա առնչակցությամբ, բայց Վիեննայի համալսարանի իմ դասախոսներից մեկի՝ պրոֆ. Ֆրիդրիխ Կայնցի հետ չփվելու ընձեռնված հնարավորության դիպվածը փոխեց ամեն ինչ:

Իմանալով, որ ես հայ եմ, նա հորդորեց, որ կարդամ իր համադասարանցու՝ Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը: Վերֆելը Կայնցին խոստովանել էր, որ այդ վեպը գրելու դիխավոր դրդապատճառը գեղարվեստական միջոցներով ամբողջ աշխարհին հայերի զանգվածային ոչնչացման ներկայացումն էր, որը հրեաներին ուղղված չարագույժ կանխագուշակում էր: Այդ գրքի ուժը, չնայած նրա մռայլ, նույնիսկ ողբերգական էությանը, իմ երիտասարդ մտքի վրա գործեց երբևէ չթուլացող ազդեցություն: Երկու հատորներում ներկայացված անհամաչափ հարաբերակցությունն այնպիսի երևույթների, ինչպիսիք են՝ մի կողմից մարդկային բարեպաշտությունը վչտի ու տառապանքի պահին, այդ տառապանքը կրելու ունակությունն ու հերոսականությունը և մյուս կողմից՝ համատարած անհավասարությունը, անտանելի դաժանությունը, որն էլ ավելի էր խորանում մնացյալ աշխարհի անտարբերության արդյունքում, ի վերջո, ստիպեցին ինձ վերաուղղորդել սեփական հետաքրքրությունն ու կենտրոնանալ հետազոտության նոր բնագավառի, այն է՝ իշխանությամբ օժտված հանցագործ խմբավորման կողմից խոցելի հավաքականությունը նահատակության ենթարկելու հիմնահարցի վրա»[14]:

Վահագն Տատրյանն ավագ քրոջ՝ Ադրինեի և կրտսեր քրոջ՝ Մելինեի հետ:

Տատրյանն անձնական զրույցներում նշել է, որ իր համար բեկումնային է եղել նաև տրապիզոնցի Լևոն-Զավեն Սուրմելյանի «Ջեզ եմ դիմում տիկիններ և պարոններ» ինքնակենսագրական վեպը[15], որում հեղինակը պատմում է Տրապիզոնում անցկացրած մանկությունն ու 1915 թ. Հայոց ցեղասպանությունը տասնամյա ականատեսի աչքերով:

1951 թ. տեղափոխվելով ԱՄՆ՝ Դետրոյթի Ուեյնի համալսարան, Տատրյանը մասնակցում է հասարակագիտության դասերին և ստանում մագիստրոսի աստիճան, իսկ 1954 թ. Չիկագոյի համալսա-

---

Բանկալթի Թաղամասի հայոց եկեղեցու բակում և ցուցադրաբար Վերֆելի մեծադիր լուսանկարի հետ այրում: Կրակը վառում է «Ազդարար» ու «Նոր լուր» թերթերի թղթակից Ա. Քեչյանը, իսկ Բեյօղլուի հայկական վաքըֆի կառավարիչ Ա. Ասլանը ելույթ է ունենում՝ քծնելով թուրքական կառավարությանը և Վերֆելի վեպը հռչակելով «ցնդաբանություն»: Այդ լուրը, տեսարանի լուսանկարով, հայտնվում է թուրքական հեղինակավոր «Ջումհուրիեթ» և մի շարք այլ թերթերի էջերում ["Cumhuriyet" (İstanbul), 16. XII. 1935; B a l i. 1989, 21–22]*:*

[14] D a d r i a n. 1995, XV–XVI; Д а д р я н. 2007, XVI.

[15] *U n e r m e l j a n. 1980:*

րանում՝ դոկտորի աստիճան[16]: 1956 թ. նա դասախոսական աշխատանքի է անցնում Այդահոյի համալսարանում[17]: Այնուհետև հասարակագիտություն է դասախոսում Բոստոն քոլեջում (համալսարան)[18], զուգահեռ աշխատակցելով «Հայրենիք» օրաթերթին[19]: Տատրյանը շուրջ քսան տարի ամերիկյան մի շարք համալսարաններում դասավանդել է հասարակագիտություն, սոցիալ-հոգեբանություն, քրեագիտություն և այլ առարկաներ, որպես ավագ գիտաշխատող պաշտոնավարել է Հարվարդի համալսարանի Միջին Արևելքի ուսումնագիտական և Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) Միջազգային ուսումնասիրությունների կենտրոններում, Դյուքի համալսարանում՝ որպես հրավիրյալ դասախոս[20]:

Վահագն Տատրյանը երիտասարդ տարիքում:

Տատրյանի համար ճակատագրական է եղել Բեյրութում հանդիպումը կաթոլիկ հոգևորական հայր Գրիգոր Գերգերյանի (Գրիգեր)[21] հետ: Վերջինիս՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հիմնաքարային ուսումնասիրությունները ճանապարհ են հարթել Տատրյանի հետագա գիտական գործունեության համար: 1964 թ. «Նյու Յորք Թայմս» թերթում Հայոց ցեղասպանության մասին Տատրյանի հրապարակումից հետո՝ 1965 թ., Գրիգերը նրան հրավիրում է Բեյրութ[22]: Այդ հանդիպման ժամանակ Տատրյանը տեղեկանում է, որ գոյություն ունեն մարդկության դեմ իրագործված մեծագույն ոճրի մասին վկայող ապացույցներ և ոճրագործների դատավարությանը վերաբերող իրական վավերագրեր: Հատկապես Գրիգերն արժևորում է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող արխիվը:

Արխիվը ժամանակին հավաքել է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ու Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի հովանու ներքո, նաև՝ Գրի-

---

[16] *«Բուբաստան», 1963, թիւ 4–5, յուլիս–օգոստոս, 7:*

[17] *«Բուբաստան», 1963, թիւ 4–5, յուլիս–օգոստոս, 7:*

[18] *«Հայրենիք» (Բոստոն), 06. X. 1964:*

[19] *«Արմենիա» (Բուենոս-Այրես), 02. IX. 1968:*

[20] *Դադրյան. 2012, 3: Տե՛ս նաև Տատրեան. 2009, 33:*

[21] *Գրիգերը ծնվել է 1911 թ. մայիսի 12-ին Սեբաստիայի նահանգի Կյուրինի շրջանում: Նա ընտանիքի 16 երեխաներից ամենափոքրն էր: Տեղահանության ժամանակ փրկվել են ընտանիքից միայն վեցը, իսկ մյուս տասը երեխաները՝ ծնողների հետ սպանվել: Ավագ եղբոր հետ նա 1916 թ. հասնում է Բեյրութ և ապաստան գտնում որբանոցում: 1925 թ. Գրիգերն ընդունվում է Զմմառի հայ կաթոլիկ վանքի դպրոցը: 1930 թ. ավարտում է Բեյրութի Սբ. Հովսեփ ֆրանսիական համալսարանը: Կրթությունը շարունակել է Հռոմի Լևոնյան ակադեմիայում՝ դառնալով աստվածաբան և հոգևորական: Անավարտ է մնացել Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա դոկտորական ատենախոսությունը: Գրիգերի արխիվում կան իր իսկ կողմից լուսանկարված, երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող «Տեղեկատու դիվանի» մի շարք վավերագրեր (տե՛ս Ակչամ. 2019, 37–39): Ակչամը հայտնում է, որ Գրիգերի կյանքի մասին տեղեկությունները ստացել է Էդմոն Գերգերյանից (Ակչամ. 2019, 327):*

[22] *Տե՛ս նաև Մանուկյան. 2019, 180–181:*

գոր Դավիթյանի նախաձեռնությամբ 1919 թ. հիմնված «Տեղեկատու դիվանը»[23]: Այդ արխիվում տեղ գտած վավերագրերը պետք է փոխանցվեին Կ. Պոլսում օտար, մասնավորապես՝ Բրիտանական բարձր հանձնակատարության: 1918 թ. Մուդրոսի զինադադարի 142-րդ և 230-րդ հոդվածների համաձայն Ազգերի լիգայի դատարանների առջև ոճրագործները պետք է դատապարտվեին: Գրիգորը գրում է. «Թուրք Պատերազմական Ատեանի վարած դատավարութեանց ընթացքին 1919–1921, Հայերը իրաւական կողմ էին Ատեանի առջեւ եւ այս իսկ հանգամանքով իրաւունք ունէին թուրք վաւերագրերէն պաշտօնապէս վաւերացուած պատճէններ եւ օրինակներ ունենալու»[24]: «Տեղեկատու դիվանի» հավաքած այս վավերագրերի մի մասը ևս հիմք են դարձել Տատրյանի կոթողային ուսումնասիրությունների համար:

Վ. Տատրյանն ուղղակիորեն զարգացրել և գիտամեթոդական նորագույն եղանակներով շարունակել է Հայոց ցեղասպանության վերապրած հեղինակների գործերը: Նրանք վավերագրական ճշգրտությամբ թողել են բացառիկ հուշագրություններ ու հետազոտություններ, որոնք աղբյուրագիտական արժեք են ներկայացնում բոլոր ժամանակների հետազոտողների համար: Առանց այդ աղբյուրների հնարավոր չէր լինի վեր հանել Հայոց ցեղասպանության վավերագրական մանրամասները ու հանցագործության ծավալները: Անգնահատելի են Արշակ Ալպոյաճյանի, Արամ Անտոնյանի, Թեոդիկի, Գրիգորիս վրդ. Բալաքյանի, Վահան Միրզաբեկյանի, Սեպուհ Ակունու, Արշակ Զոպանյանի, Զապել Եսայանի, Երվանդ Օտյանի, Մուշեղ Սերոբյանի, Կարապետ Գաբիկյանի, Ավետիս Նագաշյանի, Հովհաննես արք. Նազլյանի, Արշակ Սաֆրաստյանի, Վահան Մինախորյանի, Վահե Հայկի, Հայկազն Ղազարյանի, Լևոն Վարդանի կատարած ուսումնասիրությունները և գիտական ժառանգությունը, անշուշտ, Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Տեր-Եղիայանի «Պատրիարքական հուշերս»[25], ինչպես նաև՝ այլ երախտավորների գործերը: Մտավորականների այս վաղանցն էր, որ ամենայն բծախնդրությամբ ու մանրամասնությամբ թղթին է հանձնել իր տեսած ու խմացած բոլոր ոճրագործությունները՝ շրջանառության մեջ դնելով տարաբնույթ վավերագրեր և տեղեկագրեր, ընդհուպ օսմանյան իշխանությունների՝ հայերի ոչնչացման հրամանագրերն ու դրանց գաղտնագերծված օրինակները՝ օսմաներեն, հայատառ թուրքերեն և հայերեն տարբերակներով: Ահա այս անհատականությունները էին, որ հարթեցին գիտական այն մայրուղին, որի բարդ ու վայրիվերումներով լի ճանապարհն ընտրեց մեծանուն գիտնական Վ. Տատրյանը: Սիյուռքի և Հայաստանի գիտնականների սերունդը համոզված առաջնորդվում էր այն գիտակցությամբ, որ իր ապրած յուրաքանչյուր օրն ու գործունեությունը նպաստելու է Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հատուցման գործընթացին:

Վ. Տատրյանը, հիմք ընդունելով վերոհիշյալ հեղինակների աշխատությունները, հետազոտել է աշխարհի տարբեր արխիվներում պահվող Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող բազմալեզու վավերագրեր՝

[23] *Սահակյան. 2022, 5–32:*
[24] *Գրիգէր. 1980, 71:*
[25] *Զաւէն Արքեպս. 1947:*

կիրառելով գիտական ուսումնասիրման միջառարկայական նոր մեթոդաբանություն՝ առաջադրված խնդիրները քննելով պատմագիտության, միջազգային իրավունքի, հասարակագիտության, ոճրագիտության և զոհագիտության տեսանկյունից: Եվ պատահական չէր, որ Տատրյանն ընտրվեց «Միջազգային ոճրագիտության ընկերության» նախագահ:

1970–1991 թթ. զբաղեցնելով Նյու Յորքի նահանգային Ջենեսիոյի համալսարանում հասարակագիտության պրոֆեսորի պաշտոնը՝ Տատրյանը դասախոսական աշխատանքի հետ չարունակում է իր ուսումնասիրությունները Հայոց ցեղասպանության բնագավառում: Համալսարանում Տատրյանն առաջին անգամ սկսում է վարել «Համեմատական ցեղասպանագիտություն» դասընթացը[26]:

1975 թ. Նյու Յորքի համալսարանից կրթաթոշակ ստանալով՝ սկսում է իր հետազոտությունները Լոնդոնի, Փարիզի, Բեռլինի, Բոննի և Վիեննայի պետական արխիվներում[27]: Նրան հաջողվում է ձեռք բերել և առաջին անգամ շրջանառության մեջ դնել Բրիտանական հանրային արխիվում պահվող 1918–1920 թթ. Կ. Պոլսի Բրիտանական Բարձր հանձնակատարության, Մերձավոր Արևելքում ռազմական և քաղաքական հետախուզության գրասենյակների թղթածրարները և, հատկապես, Բրիտանական արքայական իրավաբանական գրասենյակի փաստաթղթերը[28]: Տատրյանն ուսումնասիրություններ է կատարել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, թերևս, իր ծավալով ամենամեծ ու բացառիկ արխիվում: Նրա ուսումնասիրության առավելություններից մեկն էլ այն է, որ վերլուծաբար շրջանառել է արխիվում պահվող օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների հանցագործությունները փաստող վավերագրերը, թուրքական Ռազմական (Պատերազմական) արտակարգատյանի արձանագրությունները, դատական գործընթացներին վերաբերող «Թաքվիմ-ի Վեքայի» թերթի հոդվածները[29]: Տատրյանը նշում է՝ ինչքան իրեն հայտնի է, Երուսաղեմի արխիվից բացի, որևէ այլ արխիվային հիմնարկ կամ գրադարան չունեն թերթի այդ համարները, քանի որ թուրքական իշխանությունները տպվելուց անմիջապես հետո դրանք հավաքել են[30]:

---

[26] "The Armenian Reporter", 07. XII. 1972.

[27] *«Արեւ» (Գահիրէ), 02. V. 1975: Տե՛ս «Ալիք» (Թեհրան), 26. IV. 1975:*

[28] D a d r i a n. 1989, 221.

[29] D a d r i a n. 1991, "International Journal of Middle East Studies", Vol. 23, № 4, 549–576.

[30] D a d r i a n. 1989, 221. *«Թաքվիմ-ի Վեքայի» թերթի կարևորությանն անդրադարձել է նաև Գրիգերը. «Պաշտօնաթերթ Թագուիմը Վագայի նոյնութեամբ արձանագրած է Պատերազմական Ատեանի նիստերուն ատենագրութիւնը, բայց ոչ ամէնը, այլ կարեւորներ. տուած է բազմաթիւ թուրք պաշտօնական վաւերագրեր, որոշումներ, վճիռներ եւ կարեւոր աղբիւրներ: Թուրք պաշտօնաթերթի Թագուիմը Վագայի ոչ թէ միայն յիշած է թուրք պաշտօնական վաւերագրերը, այլ անոնցմէ շատեր նոյնութեամբ հրատարակած է: Այս վաւերագրերը կը հաստատեն վերջնականապէս թէ երիտասարդ Թուրքերու Կուսակցութիւնը 1914 Յուլիս ամիսէն սկսեալ կազմակերպեց Թէշքիլաթը Մահսուսայի հրոսապետները եւ հրոսակները (չէթէ) որոնց պաշտօն տրուեցաւ հայ կառաւաններ կոտորել եւ հափշտակել ինչքերն ու դոյքերը» (Գ ր ի կ է ր. 1980, 33, 35):*

1960–1990-ական թվականներին Տատրյանը հանդես է եկել ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն բազմաթիվ դասախոսություններով՝ Բեռլինի, Մյունխենի, Պարմայի, Տորինոյի, Ցյուրիխի, Ուփսալայի, Մայնի, Ֆրանկֆուրտի, Բոխումի, Մյունստերի, 1993–1994 թթ.՝ Ամստերդամի, Ուտրեխտի, Ժնևի և Բրյուսելի համալսարաններում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի փարիզյան կենտրոնում ու ՄԱԿ-ի նյույորքյան կենտրոնակայանում[31]: 1996 թ. Բրիտանական համայնքների պալատում տեղի ունեցած Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցի առթիվ Տատրյանը զեկուցողի պատվին արժանացած առաջին հայ գիտնականն էր[32]: 1999 թ. նա ստանձնում է Տորոնտոյում Զորյան հաստատության Ցեղասպանության ուսումնասիրության գծով տնօրենի պաշտոնը[33]: Լայնածավալ գիտելիքների և օտար լեզուների (թուրքերեն, օսմաներեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն) փայլուն իմացության արգասիքն են Տատրյանի բազմաթիվ հոդվածներն ու գրքերը Հայոց ցեղասպանության մասին. աշխատություններ, որոնք հիմնարար աղբյուրագիտական փաստարկումներով ու նրա՝ մաթեմատիկական ճշգրիտ մտածողությամբ նոր որակ են հաղորդում և նոր մակարդակի են բարձրացնում Հայոց ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը:

Վ. Տատրյանի գրչին են պատկանում տարբեր լեզուներով գրված 22 մենագրություն և շուրջ 140 գիտական հոդված, բազմաթիվ հրապարակումներ, ինչպես նաև տվել է բազմաթիվ հարցազրույցներ: Նա 1971 թ. անգլերեն է թարգմանել 1926 թ. Զարևանդի «Միացեալ, Անկախ Թուրանիա» գիրքը[34]: Մեկ տասնյակից ավելի հոդվածներ է գրել մասնագիտական հանրագիտարաններում[35]: Գիտական արժեքավոր ժառանգություն է նաև Տատրյանի ստեղծած բազմահազար էջանոց արխիվը, որը նրա 40 տարիների տքնաջան, բեղուն ու անձնվեր աշխատանքի արդյունքն է: Տատրյանն այս արխիվը ստեղծել է սեփական միջոցներով՝ աշխարհի տարբեր գրադարաններից ու արխիվներից հավաքելով Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանությանը վերաբերող բազմալեզու բացառիկ վավերագրեր, որոնք էլ դարձել են նրա ուսումնասիրության առաղձը: Ցեղասպանագետի արխիվից ակնհայտ է դառնում գիտնա-

---

«Թաքվիմ-ի Վեքայի» թերթի մի շարք համարներ ուսումնասիրել է նաև Ա. Փափազյանը (տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի. 1989):

[31] *Դադրյան. 2012, 3:*

[32] *Պողոսյան. 2001, 49:*

[33] *Դադրյան. 2012, 3:*

[34] Zarevand. 1971.

[35] Dadrian. 1999, Encyclopedia of Genocide, vol. 1, 87–89; Dadrian. 1999, Encyclopedia of Genocide, vol. 1, 90–93; Dadrian. 1999, Encyclopedia of Genocide, vol. 1, 93–95; Dadrian. 2005, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, vol. 1, 67–76; Dadrian. 2005, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, vol. 1, 92–94; Dadrian. 2005, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, vol. 2, 489–491; Dadrian. 2005, Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, vol. 3, 1019–1020 *(Վ. Տատրյանի գիտական հրապարակումների ցանկը տե՛ս նաև հետևյալ կայքում՝* www.genocidestudies.org/vahakn-dadrian).

կանի բծախնդրությունը նյութի հանդեպ: Տատրյանի արխիվը կարևոր աղբյուր է այդ ժամանակաշրջանի պատմությունն ուսումնասիրողի համար:

2019 թ. մեծանուն հայ գիտնականը մահանում է՝ թողնելով գիտական բացառիկ ժառանգություն Հայոց ցեղասպանության ուսումնասիրության վերաբերյալ:

Վ. Տատրյանի գիտական-հասարակական գործունեության լուսաբանումը սփյուռքյան մամուլում (1960–1990-ական թվականներ)

1960–1990-ական թվականներին, ինչպես նաև 2000-ական թվականների առաջին տասնամյակին Վ. Տատրյանի ծավալած գիտական-հասարակական գործունեությանն ու հրատարակություններին արձագանքել է սփյուռքյան և օտարալեզու մամուլը՝ համակողմանիորեն բացահայտելով նրա անհատի և գիտնականի կերպարը: Անվանի ցեղասպանագետը մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների և դասախոսություններ կարդացել Սփյուռքի տարբեր համայնքներում: 1960-ական թվականներին երեք անգամ եղել է Խորհրդային Միությունում, երկու անգամ Խորհրդային Հայաստանում[36] կատարելով գիտական ուսումնասիրություններ, որոնց հիման վրա 1963–1970 թթ. ընթացքում գիտական հանդեսներում ու մամուլում հրապարակել է Խորհրդային Միության ազգային խնդիրների վերաբերյալ մի շարք արժեքավոր հոդվածներ: Վերլուծել է կոմունիստական գաղափարաբանությունն ու սոցիալիզմի բովանդակությունը, Մոսկվայում տեղի ունեցող ապրիլի 24-ի միջոցառումները, Խորհրդային Հայաստանի հայերի հասարակական և մշակութային զարգացումների հիմնական օրինաչափությունները, ազգային շարժումների աղբյուրներն ու նշանները, ազգերի նկատմամբ խորհրդային սկզբնական դիրքորոշման՝ Լենինի և Ստալինի դերերի վերագնահատմամբ: Անդրադարձել է Ղարաբաղի հարցին, Խորհրդային Անդրկովկասում ազգամիջյան հակամարտություններին, խորհրդային տարիներին Հայաստանում և Վրաստանում ազգային նարատիվների զարգացումներին, արդյունաբերականացման և էթնոցենտրիզմի նորագույն միտումներին, Հայաստանում համայնավարության ու ազգային շարժումների դրսևորումներին[37]:

Գիտնականի հոդվածներից ակնհայտ է դառնում, որ նրա ուշադրության կենտրոնում էին Խորհրդային Հայաստանը և 1960-ական թթ. սկզբներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում աղրբեջանցիների գործադրած հակահայ քաղաքականությունը: 1964 թ. Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի հոկտեմբերի 6-ի համարում լույս է տեսնում Տատրյանի ամերիկյան ազդեցիկ “Christian Science Monitor” *օրաթերթում 1964 թ. սեպտեմբերի 25-ին հրապա-*

[36] *«Արմենիա», 02. IX. 1968:*

[37] Dadrian. 1963, “Armenian Review” (Watertown), vol. 16, no. 4–64, 3–14; Dadrian. 1967, “Armenian Review”, vol. 21, no. 2–78, 9–26; Dadrian. 1965, 375–379; Dadrian. 1967, “Armenian Review”, vol. 20, no. 1–77, 64–78; Dadrian. 1967, 16, 70–71; Dadrian. “Indian Sociological Bulletin”, VI, no. 1, October 1968, 18–38; Dadrian. 1968, “Armenian Review”, vol. 21, no. 3–83, 57–84; Dadrian. 1969, “International Review of History and Political Science”, 6, no. 2, 79–92; Dadrian. 1970, “Political Scientist”, 2, no. 1–2, 13–20; Dadrian. 1972, vol. 28, 53–68; Dadrian. 1972, no. 2, 183–212; Dadrian. 1977, 201–258.

րակված «Հայերու բողոքը Մոսկվայի դեմ» հոդվածի հայերեն տարբերակը: Հոդվածում նա քննել է Արցախի հայերի բողոքը՝ ուղղված ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Խրուշչովին. «Ղարաբաղի երկու հարիւր հազար հայերը, իրենց այդ հանրագրումեամբ, կը բողոքէին Պր. Խրուշչովին, պարզելով իրենց կեանքի անտանելի պայմանները, «եղբայրական» Ազրպէյճանի իշխանութեան ներքեւ»: Այդ փաստաթղթում շուրջ 2.500 հայերի անունից Մոսկվայի կենտրոնական իշխանությանը տեղեկացվում է, որ Ղարաբաղի ինքնավար մարզի և հարակից շրջանների շուրջ 200.000 հայ բնակչության համար «ստեղծուել է անհանդուրժելի դրութիւն»: Տատրյանն ընդգծում է՝ այդ ամբաստանության մեջ նշվող գանգատների շարքում ամենագլխավորն այն է, «թէ տեղական իշխանութիւնները, որոնք Ազրպէյճանցիներ են (թրքացեղ ժողովուրդ մը որ կապուած է Թուրքիոյ թուրքերուն կրօնական եւ ազգագրական խնամիութեամբ) Հայերու հանդէպ բռնատիրութիւն ի գործ կը դնեն»: Նաև՝ «Ղարաբաղի Ինքնավար Մարզը, որուն բնակչութեան ճնշիչ մեծամասնութիւնը Հայերէ կը բաղկանայ եւ ուր ներկայ խմորումներու թատերաբեմն է»[38]: Մեկնաբանելով այդ բողոքը՝ Տատրյանը գրում է, որ պատմության, տրամաբանության և «ազգերի լենինյան սկզբունքի» պատգամները պետք է հարկադրեին, որ ինքնավար այս մարզը Խորհրդային Հայաստանի մաս կազմեր, մինչդեռ այն ենթարկվել է Ադրբեջանի գերիշխանությանը: Խիստ արդիական և ուսուցողական է հետևյալ դիտարկումը ևս. «Այդ է պատճառը, որ պատահական փոքրամասնութեան մը տրուած գերադաս հեղինակութիւնը անբնական եւ անկանոն կենսապայմաններու ազդակ դարձած է: Եթէ նոյնիսկ բնական պայմաններ տիրէին հոն, Հայերու համար նման կարգավիճակ մը ամենայն հաւանականութեամբ օտար լուծի մը ճնշման համազօր պիտի ըլլար»[39]: Ստեղծված իրավիճակում հարցը բարդանում է մասնավորապես այն իրողությամբ, որ «ներկայ պարագային, իշխանութիւնները թրքացեղ եւ թրքամիտ հանգամանք կը կրեն: Արդարեւ, արդի պատմութեան մէջ Հայերու համար Թուրքերը կը հանդիսանան խորհրդանիշը այն բոլոր դաժանութեանց, որոնց ենթարկուած են Հայերը: Իրողութեան մէջ, սակայն, պր. Խրուշչովին յղուած հանրագրութեան մէջ խօսացող գանգատները ցոյց կուտան թէ բնական պայմաններ չեն տիրեր Ինքնավար Մարզին մէջ եւ Հայերը ստորադաս գոյավիճակի մը անպատեհութիւններուն չէ որ միայն կը հանդուրժեն»[40]:

Տատրյանն առանձնացնում է բողոքի մեջ հիշատակված հետևյալ կետերը՝ մշակութային կեղեքում, տնտեսական խափանում և բնակչության բռնագաղթ եզրահանգելով, որ գործադրված այս վերջին քայլի նպատակակետը երկու ազգերի բնակչության՝ տվյալ պահի համեմատությունը փոխելն է և ի վերջո՝ չրջելը: Բողոքագրում հայերը հայտարարում են. «Ուղղակի տարւում է ազգային-չովինիստական, պան-թուրքիստանական (Համաթուրանական) քաղաքականութիւն» և «այս քաղաքականութիւնը մարզից դուրս գտնուող հայկական չրջաններում (Շամխորի, Շահումյանի, Խանլարի չրջաններ) աւելի նող-

[38] *«Հայրենիք», 06. X. 1964:*
[39] *«Հայրենիք», 06. X. 1964:*
[40] *«Հայրենիք», 06. X. 1964:*

կալի ձեւեր է ընդունել», և ընդգծվում՝ այս շրջանները «90 % հայկական ազդաբնակչութիւն ունեն»[41]:

Մեկնաբանելով բողոքագրում ներկայացված իրողությունը՝ ընդորոշում է՝ «աննորմալ եւ ծանր իրավիճակը ... ծաղր մըն է ինքնավարութեան»: Հայերն իրենց զայրույթն էին հայտնում Մոսկվայի հանդեպ, և, փաստորեն, այդ կեղծ ինքնավարությունը քողազերծում է կեղեքումը հանդուրժող մի պետության դեմքը[42]:

Տատրյանը Ղարաբաղի հայերի այս քայլը գնահատում է խիզախ, հանդուգն, նաև՝ վտանգավոր պնդում, երբ բողոքագրում նշվում է. «Ստեղծուել է անհանդուրժելի դրութիւն, խտրականութիւն ամենուր եւ ամէն ինչում: Մեր վիճակն այժմ վատթար է, քան 1918–1920 թուականներին, թուրք-Մուսաֆաթական եւ անգլիական նուաճման շրջանում: Այժմ կատարուում է նոյնը՝ բարեկամութեան ու եղբայրութեան քողի տակ և այս փաստաթղթի ստորագրողները «իրենց իսկ ձեռքով հայտնում են իրենց ինքնութիւնը»՝ չվարանելով քաղաքական կուռ պահանջ ներկայացնելուց ու Մոսկվային մարտահրավեր նետելուց»: Բողոքագրում սուր ակնարկութիւններով խորհրդային իշխանութիւններին հիշեցվում է անցյալում նրանց տրված հանդիսավոր երաշխիքները: Արցախի հայերը պահանջում էին «անյապաղ վճռել Լեռնային Ղարաբաղը եւ յարակից հայկական բոլոր շրջանները Հայկական ՍՍՌ-ի մէջ վերամիաւորելու հարցը», և այդ կերպ մխայն կլրականանա «Լենինեան ազգային քաղաքականութեան» սկզբունքը[43]:

Ջափազանց արժեքավոր է 1964 թ. օգոստոսի 3-ին «Նյու Յորք Թայմզում» հրապարակված Տատրյանի «Յանուն ազատ Հայաստանի կատարուած հողային պահանջներուն ժխտումը կը վերագրուի անխիղճ դիւանագիտութեան» խորագրով նամակը, որի հայերեն թարգմանությունը լույս է տեսել 1964 թ. օգոստոսի 19-ի «Ազդակ» օրաթերթում: Այդ նամակում անդրադարձել է ԱՄՆ հանրապետականների ընտրական ծրագրի ութերորդ հոդվածին, որը առաջադրում է՝ «Գերյալ ազգերի վերջնական ազատագրումը»: Տատրյանի մեկնաբանմամբ՝ այն քաղաքականության անկաշկանդ ուղեգծերի համար մի նպաստ է, նաև՝ քննադատում Ս. Լ. Սալցբերգերին[44]: Վերջինս դեմ էր ծրագրի այդ հոդվածին՝ որակելով «անիմաստության մի խառնուրդ», և հատկապես նսեմացնում էր խորհրդային երկու հանրապետությունները՝ Ուկրաինան և Հայաստանը՝ առարկելով, որ այս երկու երկրները վաղուց գտնվում են ռուսական տիրապետության տակ: Տատրյանը նրան հարց է ուղղում՝ արդյո՞ք տրամաբանական է օտար տիրապետության տևողությունն ընդունել որպես վավերականության չափանիշ: Խորհրդային լծից Հայաստանի ազատագրելու խնդիրը հայտնի լրագրող Սալցբերգերն անբացատրելիորեն կապում է միևնակից Թուրքիայի հողային ամբողջականության դեմ սպառնալիքին: Որպես պատասխան՝ Տատրյանը գրում է. «Իսկապէս, ըլլայ ազատագրումի թէ առանց ազատագրումի, ըմբռնելի ի՞նչ հիմերու վրայ Հայերուն կարելի է պլանալ

[41] *«Հայրենիք», 06. X. 1964:*

[42] *«Հայրենիք», 06. X. 1964:*

[43] *«Հայրենիք», 06. X. 1964:*

[44] *Սայրես Լեո Սալցբերգերը «Նյու Յորք Թայմզ» թերթի միջազգային հարցերի թղթակիցն էր: Նրա ընտանիքին էր պատկանում սույն թերթը:*

իրենց պապենական հողերը վերստին ձեռք ձգելու պահանջքի իրաւունքը. հողեր, որոնք Թուրքերը իւրացուցին, անոնց բնակիչները ջարդելէ յետոյ: Այսպիսի դէպքում մը մեզի համարժէք պիտի չըլլա՞յ ցեղասպանութիւնը հողային ընդարձակման իբրեւ միջոց գործածելու դրութեան համակերպելու»[45]: Նամակում «Հայերը՝ դաշնակիցների կողքին» խորագրի ներքո Տատրյանը հիշեցնում է, որ երկու համաշխարհային պատերազմների ընթացքում հայերը դաշնակիցների կողքին կռվել են քաջաբար և բազմապիսի զոհաբերութիւններով, որոնք գերազանցում էին նրանց համեստ միջոցները: Իսկ Թուրքերն Առաջին աշխարհամարտի ժամանակ Գերմանիայի անդրդվել դաշնակիցն էին և երկրորդ աշխարհամարտի ընթացքում դաշնակիցներին հարեցին պատերազմի ավարտից միայն երեք ամիս առաջ: Իսկ ամենից կարևորն այն է, որ Թուրքերն անպատիժ գործադրեցին այնպիսի արարքներ, որոնց բնութագիրը Տատրյանը տալիս է՝ մեջբերելով Անգլիայի վարչապետ Ուիլյամ Գլադստոնի հետևյալ խոսքը. «Դժոխքի ամէնէն աներեւակայելի և զզուելի տեսարանները գերազանցող իրենց ծաւալով ու ահաւորութեամբ»[46]: Ուստի Տատրյանը կոչ է անում արդարամտութիւնը չչփոթել հարափոփոխ քաղաքական գործընթացների հետ: Ըստ նրա՝ ԱՄՆ-ում սպասվող նախագահական քարոզարշավը կարող է եզակի պատեհութիւնների հնարավորութիւն տալ, և այդ հույժ կարևոր խնդիրը ուշադրութեամբ քննութեան ենթարկվի որպես կենսական ազգային հարց[47]:

1965 թ. «Արեգակ» ամսաթերթը հաղորդում է, որ Տատրյանն ամերիկյան դրամաշնորհով Լոնդոնում կարողացել է ձեռք բերել արխիվային վավերագրեր և այդ առթիվ դասախոսել է «Հայ տանը»՝ լոնդոնահայ համայնքին ծանոթացնելով իր աշխատանքների մասին: Հայտնել է նաև, որ իր տրամադրութեան տակ ունի Հայոց ցեղասպանութեանը վերաբերող 1200 վավերագիր, որոնք լուսանկարել է ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնի պետական արխիվում, և դրանց մանրաֆիլմը նվիրելու է Հայաստանին: Այդ ժամանակ Տատրյանը Վաշինգտոնի համալսարանում հասարակագիտութեան դասախոս էր[48]:

Մինչ այդ նա Ամերիկայից մեկնել էր Լոնդոն, Փարիզ, Քյոլն, Բոնն, Բեռլին, Մյունխեն, Վիեննա և Մոսկվա: Ապա ուղևորվելու էր Հայաստան: Սակայն Մոսկվայում հայտնի է դառնում, որ նրա մուտքը հայրենիք արգելված է, և նա 1965 թ. մեկնում է Թեհրան: Տատրյանը դասախոսութիւններով հանդես է գալիս հայ համայնքի «Սիփան մշակութային միութեյունում», «Հայ ակումբում» և այլն: Բազմամարդ սրահներում նրա ելույթներն ընդունվում են մեծ ոգևորութեյամբ: Մասնակցում է նաև հայ պատանիների կազմակերպած «Խանասորի արշավանքի» հանդիսավոր տոնակատարութեյանը: Տատրյանը հայտնում է, որ երկու անգամ այցելել է Հայաստան՝ նպատակ ունենալով Ամերիկայից վերջնականապես տեղափոխվելու և իր գործը Մայր հայրենիքում շարունակելու համար: Ապա ավելացնում է. «երկու անգամներուն ալ գացած եմ որպէս հաւատացող մը Սովետական Հայաստանին. եւ թերահաւատ մը Հ. Յ. Դաշնակցութեան դերին հանդէպ: Երկու անգամներ այցելելէ ետք, եկած եմ

[45] «Ազդակ» (Պէյրութ), 19. VIII. 1964:
[46] «Ազդակ», 19. VIII. 1964:
[47] «Ազդակ», 19. VIII. 1964:
[48] «Արեգակ» (Լոնտոն), 1965, թիւ 17, օգոստոս, 11:

այն եզրակացութեան, որ ճշմարիտ է Հ. Յ. Դաշնակցութեան խօսքն ու գործը: Այսօր, ձեզի այցելելով կուգամ առ՛ աւելիով զօրացնելու հաւատքս ձեր Մեծ կուսակցութեան հանդէպ: Համայն հայ ժողովուրդը պէտք է հպարտանքով եւ երախտագիտական զգացումներով նայի Հ. Յ. Դաշնակցութեան սրբազան ղեկին»[49]*:*

Թեհրանում Տատրյանը հանդիպում է հայ համայնքի տարբեր խավերին և իրանահայ գաղթօջախը ընորոշում որպես օրինակելի համայնք, որտեղ հայութիւնը լծված է համերաշխ ու չինարար աշխատանքի, և սփյուռքը պետք է այդ ոգով առաջնորդվի: Իսկ հոդվածագիր Ժ. Ղարիբյանի հետ հարցազրույցում նա վեր է հանում իր ձեռնարկած աշխատանքի նպատակը. ցեղասպանութեան մասին վավերական, հատկապես՝ արխիվային և դիվանագիտական նյութեր հավաքել, բացահայտել թուրքերի չարժառիթներն ու բազմաթիվ պատճառները և համակողմանի վերլուծել «ջարդերուն աղէտը»: Անդրադառնալով Հայ դատի գործունեութեանը՝ Տատրյանը կարծում է, որ «ներկայ պայմաններու մէջ, Հայ Դատին լուծումը որոշ հեռանկարներ կրնայ ունենալ միայն, եթե Սովետ. Հայաստանը, որ տնտեսական եւ ճարտարարուեստի գետնի վրայ անսովոր բարգաւաճում կ՛արձանագրէ, եւ իսկապէս հիմը կրնայ կազմել ապագայ հզօր զինուրական կերպով Անկախ Պետութեան մը, այս բարգաւաճման զուգահեռ ձեռք ձգէ նաեւ համապատասխան քաղաքական Ազատութիւն, յատկապէս դիւանագիտական մարզին մէջ»[50]*:*

1966 թ. «Արմենիա» թերթը հայտնում է, որ «Հասարակագետների միջազգային միութեան» հրավիրած 6-րդ համագումարում Տատրյանը զեկուցում էր «Խորհրդային դիրքաւորումի փուլերը ազգութիւններու խնդրին մէջ» թեմայով, նաև հավելում՝ նա ելույթ է ունենալու Ֆլորիդայում կայանալիք «Ամերիկյան հասարակագետների միութեան» տարեկան համագումարի «Միջազգային հարաբերութիւնների» նիստում՝ բոլորովին մի նոր վարկած ներկայացնելով՝ «Արդիական ազգայնապաշտութեան կառուցուածքային տարրերը»[51]*:*

1970 թ. հուլիսի 18-ին Տատրյանը զեկուցում է «Արմենիա» մշակութային ընկերութեյան Գորտոպա քաղաքի մասնաճյուղում: Բազմամարդ սրահում նա անդրադառնում է հայ հեղափոխական կուսակցութիւններին: Մասնավորապես, հերքում է առաջ քաշվող այն թեզը, որ իբր հայկական ջարդերի պատասխանատուն հայ հեղափոխականութիւնն էր: Այնինչ՝ Տատրյանը պատմական ստույգ վավերագրերով հաստատում է, որ թուրքերը հայկական ջարդերը ծրագրել էին դեռևս առաջին աշխարհամարտից շատ առաջ և այն գործադրեցին՝ օգտվելով պատերազմի պատեհ առիթից: Անդրադառնալով Հայ դատին՝ նա հատկապես չեշտում է, որ բարեհաջող լուծման հասնելու համար հայ ժողովուրդը պետք է ապավինի սեփական ուժին և գործի միասնական ու միահամուռ կամքով, իսկ օտարներին պետք է ընկալել որպես օժանդակ գործոն[52]*:*

[49] *«Ալիք», 30. VIII. 1965:*
[50] *«Ալիք», 30. VIII. 1965:*
[51] *«Արմենիա», 26. VII. 1966:*
[52] *«Արմենիա», 30. VII. 1970:*

1970 թ. հուլիսի 23-ին արգենտինահայ համալսարանականների միության վարչության հրավերով Տատրյանը ներկայացնում է «Նոր արխեւային յայտնութիւններ Մեծ եղեռնի առնչութեամբ» դասախոսությունը[53]: Հայ կենտրոնի սրահում զեկուցելիս ընդգծում է. «Թուրքերու մօտ ազգային գիտակցութիւնը եւ պատասխանատուութեան զգացումը այնքան զօրաւոր էին, որ ոչ մէկ թուրք գտնուեցաւ որ այդ մասին նոյնիսկ ակնարկէ իր բարեկամ հայերուն»: Թվարկում է նաև հայերի թերացած կողմերը՝ դիտարկելով հասարակագետի տեսանկյունից, վերագրելով հայ ժողովրդի ղարավոր ստրկական վիճակին: Այդ հենքի վրա անդրադառնում է ցեղասպանության ընթացքում հայ լրտեսների, մատնիչների և դավաճանների դերին, որոնց գլխավորը իր իսկ հեղափոխական ընկերներին մատնող և քսան հնչակյան գործիչներին կախաղան առաջնորդող հայ լրտեսն էր[54]:

Ինչպես նշել է Տատրյանն իր ելույթում, երբ 1920 թ. թուրքական բանակը հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա, ճակատագրական այդ օրերին հայտնվում են հայեր, որոնք զենք են վաճառում թուրքերին: Հայ իրականության մեջ նման խնդիրներ վեր հանելու համար Տատրյանն արժանանում է հոդվածագրի՝ Հովսեփ Օղուլյանի քննադատությանը[55]: Այնինչ գիտնականը համարձակություն է ունեցել բարձրաձայնելու հայ իրականության մեջ այս ցավոտ ու կործանարար հարցերը՝ նման նորանոր դրսևորումները կանխելու նպատակով:

1972 թ. նոյեմբերին Տատրյանը[56] Հայոց ցեղասպանության ու զոհագիտության առնչվող զեկույցով ելույթ է ունեցել Կարակասում Միջամերիկյան ոճրագիտության երկրորդ համագումարում[57]: Վ. Տատրյանին հատուկ ճանաչում բերեցին ոճրածին կազմակերպությունների մասին բարձրացրած հարցերը: Նրան ընդունում է Վենեսուելայի նախագահը: Նույն աղբյուրը հայտնում է՝ Տատրյանը ցեղասպանության մասին դասախոսելու հրավերներ է ստանում աշխարհի տարբեր կողմերից: Ծրագրվում էր մի շարք դասախոսություններ կարդալ Արգենտինայում: 1973 թ. մասնակցելու էր երուսաղեմում նախատեսվող Համաշխարհային Զոհագիտության առաջին գիտաժողովին: Հրավիրված էր նաև համագործակցելու ՄԱԿ-ի ցեղասպանության ուսումնասիրությունների հանձնաժողովի հետ:

Մամուլից տեղեկանում ենք, որ Նյու Յորքի Ջենեսեո համալսարանում առաջին անգամ, «Համեմատական ցեղասպանագիտություն» դասընթացին զուգահեռ, Տատրյանը շարունակում է իր հասարակական գործունեությունը: Նա գրագրություն է ունեցել Ամերիկյան Կոնգրեսի անդամների հետ: Ապրիլի 24-ը սգո օր հայտարարելու կապակցությամբ առանձին նամակներ է հղել ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի հանձնախմբերի անդամներին՝ կոչ անելով նաև քվեարկել հօգուտ Հոլոքոստի բանաձևի: Նման առաջարկներ է արել նաև Նյու Յորք նահանգի 39 սենատական ներկայացուցիչներին: Հայոց ցեղասպանության 60-րդ տարելիցը ոգեկոչելու նպատակով և 1975 թ. ապրիլի 24-ը

[53] *«Արմենիա», 22. VII. 1970:*
[54] *«Արմենիա», 28. VII. 1970:*
[55] *«Արմենիա», 28. VII. 1970:*
[56] "The Armenian Reporter", 07. XII. 1972.
[57] *«Արեւ», 02. V. 1975:*

սգո օր հռչակելու համար ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի առաջարկով Տատրյանն ամփոփ մի զեկույց է պատրաստում, որը հիմք պետք է ծառայեր բանաձև ընդունելու համար: Այսպիսով, Տատրյանի ջանքերով ապրիլի 24-ը համընդհանուր ազգային սգո օր է հռչակվում ԱՄՆ Կոնգրեսի արձանագրության մեջ[58]*:*

1975 թ. «Ալիք» թերթը ծանուցում է, որ ապրիլի 21-ին Վ. Տատրյանը Սիրակուզի համալսարանում հանդես է գալու «Ցեղասպանությունը 20-րդ դարում», իսկ ապրիլի 23-ին դասախոսելու է Նյու Յորքում տեղի ունենալիք կրոնական համագումարում և Կոլումբիայի համալսարանում[59]*:*

1975 թ. օգոստոսի 25–29-ը Սան Ֆրանցիսկոյում կայանալիք Ամերիկյան հասարակագետների միության տարեկան համագումարի «Համաշխարհային հակամարտությունների սոցիոլոգիա» հատուկ նստաշրջանին մասնակցելու էին մեծ թվով հասարակագետներ: Հրավիրված էր նաև Տատրյանը՝ ներկայացնելու «Միջազգային բախումներում ցեղասպանությունը որպես գործառնություն» զեկույցը՝ ցեղասպանության համապարփակ տեսության վերաբերյալ[60]*: Մինչ այդ նա հատուկ հրավերով մասնակցելու էր հուլիսի 1–12-ը Իտալիայում «Զոհագիտություն և ժամանակակից քաղաքակրթության պահանջները» խորագրով գիտական նստաշրջանին, որտեղ բանախոսելու էր ապագա ցեղասպանության կանխարգելումի բարդ հարցի շուրջ*[61]*:*

1975 թ. Տատրյանը հրատարակում է միջազգային որոշ բախումների ընթացքում հավանական ցեղասպանածին պայմանները քննող աշխատություն[62]*: Այն ներկայացվելու էր Բելջոյում՝ ՆԱՏՕ-ի Զարգացող ուժմունքների ինստիտուտի «Զոհերը և արդի հասարակության կարիքները» խորագրով նույն թվականի հուլիս ամսին կազմակերպվող հատուկ ժողովում*[63]*: Ցեղասպանագետի հեղինակությունն ու ճանաչումն այնքան մեծ էին, որ, ինչպես հաղորդվում է, «… մասնագէտ եւ ազատ աշխարհը նրան հրաւիրել է ներկայ գտնելու ՆԱԹՕ-ի կազմակերպած յատուկ ժողովին, քննելու համար ռազմագիտական, տեխնիկական եւ զինուորական գիտական խնդիրներ»*[64]*: Գիտաժողովին մասնակցում էին Ճապոնիայից, Ավստրալիայից, Անգլիայից, Կանադայից ու Եվրոպայից, Ասիայի և Աֆրիկայի մի շարք երկրներից հրավիրյալ մասնագետներ: Վ. Տատրյանը ներկայացնում է ապագա ցեղասպանությունների հավանականությունը կանխատեսելու և այն հնարավորինս կանխարգելելու վերաբերյալ իր առաջարկները: Եվ ահա, նրա նախաձեռնությամբ գիտաժողովի մասնակիցներն ընդունում են մի բանաձև՝ ուղղված այն պետություններին, որոնք դեռ չեն վավերացրել ցեղասպանության դեմ Միացյալ Ազգերի ընդունած դաշինքը՝ անհապաղ այն ընդունելու կոչով: Տատրյանը, որպես տեսական քննադատ, մասնակցում է նաև գիտաժողովի ոճրագիտության ապա-*

[58] *«Արեւ», 02. V. 1975: Տե՛ս նաև «Ալիք», 26. IV. 1975:*
[59] *«Ալիք», 26. IV. 1975:*
[60] *«Ալիք» (Թեհրան), 26. IV. 1975:*
[61] *«Արեւ», 02. V. 1975:*
[62] *Տե՛ս* Dadrian. 1975, no. 2, 201–212.
[63] *«Ալիք», 26. IV. 1975:*
[64] *«Ալիք», 26. IV. 1975:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

գա հեռանկարների ու ոճրագիտական վարկածների և, հատկապես, հավաքաբար գործած ոճիրների մասին ստորաբաժանման աշխատանքներին:

1975 թ. «Արև» օրաթերթն անդրադարձել է Տատրյանի նույն թվականի հունիս ամսին Բեռլինի համալսարանի Ազգագրության ինստիտուտի բազմամարդ սրահում ցեղասպանության ընդհանուր թեմայի վերաբերյալ գերմաներենով ընդարձակ դասախոսությանը: Հիմնական թեման Հայոց և այլ ցեղասպանությունների մանրամասն և համեմատական վերլուծությունն էր: Նշենք նաև՝ Տատրյան-գիտնականի յուրահատուկ հատկանշական կողմերից մեկն էլ այն էր, որ նա իր դասախոսությունների ժամանակ ելույթ էր ունենում առանց գրառումների. «Ունկնդիրներու վրայ մեծ տպաւորութիւն թողուց Փրոֆ. Տատրեանի բացառիկ այն տաղանդը, որու չնորհիւ ան իր դասախօսութիւնը ներկայացուց ոչ միայն առանց ոեւէ նօթերու օգնութեան, այլեւ գիտական կուռ ոճով»[65]: Նաև՝ «Շատ մը գերման դասախօսներ ուղղակի զարմանք և հիացում յայտնեցին, որ օտար մը այսքան բարձր մակարդակով կրնար գերմաներէն լեզուով դասախօսութիւն մը տալ առանց օգտուելու գրաւոր նօթերէ և յենելով միայն իր յիշողութեան և կազմակերպուած մտքի վրայ»[66]:

1976 թ. Ամերիկյան հասարակագետների միության նորընտիր նախագահ Ալֆրեդ Մաքքլանկին Տատրյանին հրավիրում է կազմակերպելու և նախագահելու Համագումարի ցեղասպանությանը նվիրված հատուկ նստաշրջանը: «Արև» օրաթերթը գրում է. «Սա առաջին անգամն է, որ Միութիւնը, գնահատելով փրոֆ. Տատրեանի ընկերաբանական աշխատանքները կը ճանչնայ ցեղասպանութիւնը իբրեւ վաւերական ընկերաբանական նիւթ եւ կը տնօրինէ կազմակերպումը յատուկ նստաշրջանի մը»[67]: Օգոստոսի 30-ին տեղի ունեցած այդ նստաշրջանում գիտնական-ցեղասպանագետն իր վերլուծական ելույթում լուսաբանում է թուրքերի գործադրած տանջանքի և ահաբեկության դերը Հայոց ցեղասպանության ընթացքում[68]:

Սեպտեմբերի 5-ին այս նույն թեման Տատրյանը ներկայացնում է Վաշինգտոնի Ամերիկյան հասարակագետ-հոգեբանների ընկերության տարեկան համագումարում՝ մեծ տպավորություն թողնելով: «Արև» օրաթերթը նաև հայտնում է. «... Վ. Տատրեան կուռ ոճով մը և առանց օգտուելու նոթագրութիւններէ, ներկայացուց ուժեղ կազմակերպուած թեզ մը Հայկական ցեղասպանութեան մանաւանդ մէկ հանգամանքի մասին»: Հայ ցեղասպանագետը ընդգծում է տանջանքի և ահաբեկման տարաբնույթ եղանակները և դրանց նպաստող հասարակական պայմանները: Նաև նշում է, որ չարունակաբար անտեսվում է Հայոց ցեղասպանությունը[69]:

1980 թ. օգոստոսի 5–9-ը Ֆրանսիայի Լա Նավիոլ գյուղաքաղաքում՝ ցեղասպանագիտությանը վերաբերող գիտաժողովում, տասնչորս հեղինակավոր հրեա գիտնականների մեջ միակ հայը պրոֆեսոր Տատրյանն էր: Այդ ժամանակ նա Նյու Յորքի նահանգային համալսարանում հասարակագիտության դասախոս էր: Գիտաժողովին նա ընդարձակ զեկույցով մանրամասնում է

---

[65] «Արեւ», 11. VIII. 1975:
[66] «Արեւ», 11. VIII. 1975:
[67] «Արեւ», 02. V. 1975:
[68] «Արեւ», 13. X. 1976:
[69] «Արեւ», 13. X. 1976:

Հայոց ցեղասպանության թե՛ հասարակական, և թե՛ յուրահատուկ հատկանիշները՝ չեշտելով. ««Իւրայատկութիւնը» ցեղասպանութեան զոհ որևէ ազգի մը փորձառութեան բնագաւառին մէկ անբաժան մասը կը կազմէ. որով, ցեղասպանութեան ստորագելիները թե հասարակ յայտարարներով, և թէ իւրայատուկ հանգամանքներով կը բնորոշուին»[70]: Բանավեճի ժամանակ իսրայելցի մի շարք պատմաբաններ համառորեն պնդում են, որ հրեական «Ողջակիզումը» պետք է տարորոշել Հայոց ցեղասպանությունից: Տատրյանն իր զարմանքն ու ցավն է հայտնում, որ այդ պնդողները որքան քիչ և հարևանցիորեն են ուսումնասիրել Հայոց ցեղասպանությունը: Երուսաղեմի Հրեական համալսարանի հրեագիտության բաժնի վարիչ Եհուդա Բաուերն ընդունում է, որ իրենք քիչ բան գիտեն Հայոց ցեղասպանության մասին և հավանական է, որ հայերի ու հրեաների հանգամանքները համեմատելի են: Գիտաժողովին մասնակից մի շարք ամերիկացի հրեա պրոֆեսորներ, որոնց առաջնորդում էր Յեյլի համալսարանի ամերիկացի հրեա գիտնական, հայտնի հոգեբույժ Ռոբերդ Լիֆթոնը (նա պատրաստում էր ընդարձակ հատոր՝ բժիշկների հանցավոր դերը ցեղասպանության իրականացման մեջ թեմայով), չեշտում են, որ չպետք է տարվել ու սևեռվել հրեական Ողջակիզումի տարանջատումով ու բացառիկ զոհի բարդույթով: Տատրյանն իր երկրորդ ելույթում բացատրում է երկու թուրք բժիշկների՝ Ռեհաէդդին Շաքիրի և Նազըմի ունեցած որոշիչ դերը Հայոց ցեղասպանության կանխամտածման, ծրագրման և իրագործման մեջ: Ներկայացնում է փաստեր Էրզրումի գինվորական հիվանդանոցում կատարված իրր ժանտախտի դեմ փորձարկումների հետևանքով անթիվ հայերի զոհվելու փաստերը, հիշատակում է նաև Տրապիզոնի Պետական հիվանդանոցի թուրք բժշկի դահճային մասնակցությունը. նա հիվանդանոցում թունավորել էր հարյուրավոր երեխաների, ապա նրանց նետել Սև ծովը: Տատրյանի բերած այս տեղեկությունները նորություն էին մասնակիցների համար: Հետագայում գիտնականն այդ թեմայով հրատարակում է արժեքավոր հոդված[71]:

Հայտնություն էր նաև, երբ Տատրյանը գիտաժողովում բացատրում է Հայոց ցեղասպանության իրագործման մեջ բանտերից ղիտավորյալ ազատ արձակված ոճրագործների ունեցած բացառիկ դերի մասին:

Եզրափակիչ նիստում Տատրյանն իր զեկուցումը սկսում է Արիստոտելին հղելով՝ «Երբ մարդը անջատվում է օրենքի և արդարադատության կապանքներից, դառնում է վատթարագույն մի անասուն»: Ընդգծում է նաև մարդկային պատմության ողբերգական հանգրվանները, որոնք պայմանավորված են ատելության և դաժանության կրքերի գերակչիռ տարողությամբ: Հայոց ցեղասպանությունը բնորոշում է որպես մարդկային արդարության մղձավանջ և մարդկության սկզբունքների սնանկացման չունդալից փաստ: Ապա Տատրյանը հայտարարում է. «Իբրեւ հայ, չեմ վարանիր արտայայտելու իմ խորարմատ յոռետեսութիւնը մարդկութեան ապագայի մասին: Այս իմաստով կը համարձակիմ նոյնիսկ յայտարարել, որ անհատական կամ անկարելի պէտք չէ նկատել պայմաններու յեղաշրջումով մը Գերմանացիներու դիմադարձու-

[70] *«Արեւ», 26. VIII. 1980:*

[71] Dadrian. 1986, 169–192.

թիւնը»[72]: Ավելացնում է նաև, որ չի բացառվում՝ մի օր Գերմանիան կրկին որդեգրի նացիզմը և կանգնեցնի Հիտլերի արձանը՝ նրան հայտարարելով ազգային հերոս: Միզուցե այն ժամանակ հրեա գործընկերները հասկանան հայերի «հոգեկան լուծը և անսահման թախիծը», գնահատեն այն իրողությունը, որ եթե Գերմանիան հաղթեր, հրեաները հայտնվելու էին հայերի վիճակում: Նրանք ևս պետք է տանջվեին ու չարչարվեին իրենց զոհ-ազգ ներկայացնելու համար, թերևս այն ժամանակ կհասկանային, թե ինչ են զգում հայերը՝ տեսնելով Թալեաթի հուշարձանը կամ Անկարայում նրա անունով փողոց[73]:

1995 թ. Հայոց ցեղասպանության 80-րդ տարելիցին Երևանում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում Տատրյանը տեսական հիմնավորումներով ու փաստերով ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը՝ որպես պետական ոճիր («state crime»)[74]: 1997 թ. ապրիլի 17–29-ն Ավստրալիայի Մելբուրն քաղաքում նրան հյուրընկալում են Ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրությունների կենտրոնը և Հայոց ցեղասպանության ոգեկոչման հանձնախումբը՝ որպես ցեղասպանության 82-րդ տարելիցի ոգեկոչման գլխավոր բանախոս: Տեխնոլոգիական համալսարանում հայ և հույն գիտնականների ու գիտաշխատողների ներկայությամբ զեկուցում է «Օսմանյան կայսրության անկման օրերին ազգայնական հակամարտությունների դերի» մասին: Ապրիլի 22-ին Նյու Սաութ Վեյլզ նահանգում դասախոսում է «Ահաբեկչությունը որպես ցեղասպանության նախերգանք» թեմայով: Հանդիպումներ է ունենում ավստրալիական քաղաքական շրջանակների, Նյու Սաութ Վեյլզ նահանգի ընդդիմադիրների առաջնորդ Փ. Քոլինզի հետ:

Նահանգային խորհրդարանում Տատրյանը ներկայացնում է ցեղասպանության վերաբերյալ իր ուսումնասիրությունները: Այդ հանդիպմանը մասնակցում էին հայ համայնքի և Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի ներկայացուցիչները: Ապրիլի 24-ին Վիկտրի քաղաքում նահանգի բարձրաստիճան պաշտոնյաների և 1500 մասնակցի ներկայությամբ գիտնական-ցեղասպանագետը իր ելույթում պարզաբանում է մեծ ուժերի անտարբերության ու ոճրագործների անպատժելիության իրողությունը, որը թույլ տվեց ցեղասպանության չարունակության: Հանդիպմանը ելույթ է ունենում նաև նահանգի վարչապետ Բոբ Քարը՝ դատապարտելով Հայոց ցեղասպանության ժխտումը՝ պահանջելով, որ Գերմանիայի նման Թուրքիան ևս պետք է ճանաչի իր ոճիրը և կատարի համապատասխան հատուցում: Ապրիլի 26-ին Տատրյանը հայերեն դասախոսում է «Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարը ցեղասպանական հանցանքի ներքո» թեմայով, իսկ ապրիլի 26-ին՝ Ցեղասպանությունների համեմատական ուսումնասիրությունների կենտրոնում խոսում է Գերմանիայի պատասխանատվության մասին: Շուրջ 300 հոգու ներկայությամբ հիմնարար վերլուծություններով ապացուցում է Հայոց ցեղասպանությանը գերմանացիների ուղղակի մասնակցությունը՝ ցույց տալով, որ այդ «հաջողությունը» հրեական Ողջակիզումի նախատիպը դարձավ: Առաջադրում է մի շատ կարևոր թեզ. ժողովրդավար Գերմանիան ժամանակի ընթաց-

[72] Dadrian. 1986, 169–192.

[73] Dadrian. 1986, 169–192.

[74] *Տատրեան. 1995, 107–133,* Dadrian. 1999, 92–124.

Խոսքը, ինչպես տեսնում ենք, վերաբերում է Ս. Հակոբյանց վանքի գոյութեյան իրավունքին և նրա պատմական ու կրոնաբարոյական հիմնավորմանը, նրա պատմութեյան երկնառաք սկզբին, որ հատուկ է առհասարակ միջնադարյան չարադրանքներին: Բայց այստեղ կա գիրքը գրելու նաև զուտ երկրային պատճառ՝ այն, որ օտարների գրավոր գործերում թերի կամ նսեմացված է ներկայացված Ս. Հակոբյանց վանքի տեղն ու նշանակութեյունը Երուսաղեմում՝ հակառակ Ս. Տեղյաց մյուս միաբանութեունների («Ուստի յոյժ գովուեն վարկայ զնոցայն քան զմերն»): Հաննային չէր կարող գոհացնել օտար չարադրանքների մեջ հայկական սեփականութեյունների օրինականութեյան գնահատականը, մանավանդ հունական ուղղափառ եկեղեցու գնահատականը, որի գործնական դրսևորումներն ու հավակնութեյուններն այս ասպարեզում ստեպ պրովոկացել են դարերի ընթացքում և հատկապես խնդրո առարկա ժամանակաշրջանում: Այստեղ նշենք մի ընդհանրական իրողութեյուն՝ դավանական տարաձայնութեյունները Երուսաղեմի սրբավայրերի առթիվ՝ ոչ այլ ինչ էին,

[1] *Հ ա ն ն ա. 1782, 5–6:*

բայց եթե փոխադարձ հավակնություններ ու դրանց հերքումները միաբանությունների միջև՝ հանուն սեփականությունների: Հայտնի են կաթոլիկների և ուղղափառների՝ միմյանց կալվածքներին տիրանալու, վրացիների սեփականությունները հունական միաբանության կողմից սեփականացնելու, հայերի և հույների հարատև տարաձայնություններն ու ստացվածքների երկուստեք կրոստաններն ու յուրացումները, մասնավորապես, նրանց հակասությունները սորինների, հաբեշների և ղպտիների սեփականությունները ժառանգելու շուրջ և այլն: Հաննայի աշխատությունը, կարելի է ասել, թաքնված բանավեճ է այլ միաբանությունների, հատկապես ուղղափառ հոգևորականության դեմ՝ Ս. Տեղյաց սեփականությունների պատկանելության խնդրով՝ ի բավարարումն հայկական կողմի: Եվ հենց այս վերջինի օգտին նա շրջանառության մեջ է դնում՝ հանգեստս, միջնադարյան անվավեր այն պատումը, թե, իբր, Ս. Հակոբի վանքը Տրդատին և Լուսավորչին են պարգևել կայսր Կոստանդիանոսն ու պապ Սեղբեստրոսը[2]: Հենվելով դրան, նա վերադառնում է հունական կողմի հետ բանավեճին՝ թափանցիկ ակնարկով. «Ուրեմն երկբայողն, թէ Սբ Յակոբ ոչ է հայոց՝ պիտակոր լինի առաջի Սրբոյն Սեղբեստրոսի և Կոստանդիանոսի»[3]:

Սեփականատիրական վեճերը Երուսաղեմում չմարող ավանդույթների ուժով ոչ քիչ դեպքերում լուծվում էին անբարո միջոցներով՝ օսմանյան պաշտոնյաներին կաշառելով, գործի դնելով համազգի պաշտոնյաներին և ոտնահարելով դիմացինի իրավունքներն ու արդարացի պահանջները: Եվ կողմերը՝ հիմնականում ուղղափառները, հայերը և կաթոլիկներն ընդգրկված էին դարավոր բանավեճերի այս, թվում է, անվերջանալի գործընթացում: Հաննայի աշխատության մեջ, բնականաբար, ըստ ամենայնի և ամեն կերպ հիմնավորվում է հայկական սեփականությունների օրինավորությունն ու անժեռնմխելիությունը: Ճիշտ այնպես, ինչպես կտեսնենք ստորև, հունական սեփականությունները՝ Հաննայի ժամանակակից, Երուսաղեմի ուղղափառ պատրիարք Պարթենիոսի բանավիճային շարադրանքում:

Հաննայի պատմության մեջ բազմաթիվ դրվագներ կան, որտեղ ցույց են տրվում սեփականատիրական վեճի մեջ մտած տարբեր դավանանքների ձեռքբերումներն ու կորուստները: Նա կանգ է առնում հատկապես հայերի կորցրած սրբատեղիների վրա՝ տալով իր բացատրությունը. «Յայտ իսկ է ամենեցուն,— գրում է նա,— որ ազգս հայոց ի մօռացօնս առնեն զնշանաւոր դիպուածս ո՛չ գրելով. և ո՛չ հոգս առնեն գրել և այսու յապաղումեամբ բազումք սեպհականութիւնք մեր անճանաչ եղեալ՝ խլեցան ի ձեռաց մերոց յայլոց ազգաց: Նոքա տիրապետօղք գտանին և մլքատեարքս (մենք՝ մյուքի տերերս— Ա. Խ.) օտարացեալք. Ոչ գիտելով և ո՛չ բնաւ ծանօթանամք սեպհականութեան մերում»[4]:

Հաննան բերում է այդ անփութության և անտարբեր կեցվածքի պատճառով Ս. Հակոբյանց վանքի կրած ծանր կորուստների բազմաթիվ օրինակներ, ինչպես Ս. Գողգոթան, որ հայերից անցել էր վրացիներին, ապա հույներին,

---

[2] Այդ անվավեր պատմության մասին տե՛ս Բարթիկյանի առաջաբանը՝ Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա գ ո ւ. 2008, XI:

[3] Հ ա ն ն ա. 1782, 79:

[4] Հ ա ն ն ա. 1782, 200–201:

Հայր Աբրահամի վանքը, որ նույնպես անցել էր հույներին[5] և այլն: Նա արձանագրում է նաև կողմերի փոփոխական հաջողությունները, երբ այս կամ այն սրբավայրը ձեռքից ձեռք էր անցել Գողգոթայի նման, որը հինգ անգամ փոխել էր սեփականատիրոջը՝ ի դեմս վրացիների ու հայերի, և որի կես բաժինն տիրել էին «Ֆռանկն (կաթոլիկական միաբանությունը – Ա. Խ.) բռնութեամբ»[6]:

Միմյանցից սրբատեղիներ էին խլում այլ միաբանությունները ևս՝ հույները՝ հաբեշներից և հայերից, կաթոլիկները՝ հույներից և այլն: Ուշագրավ է, որ Հաննայի գրչի ներքո հայերը հանդես են գալիս սոսկ իրենց ունեցվածքի պաշտպանի և առավել քան կորցնողի կերպարով: Հակառակ կողմերը, ինչպես հույները և վրացիները (վերջիններս ժամանակի ընթացքում ամբողջովին կորցրել էին իրենց ունեցվածքը Երուսաղեմում)[7] և ըստ նրա բնութագրերի, գործում էին «բազում կաշառօք» կամ բռնութեամբ և այլ մեթոդներով: Այսուհանդերձ, ակնհայտ է Հաննայի բանավիճային մղումը հատկապես հույների՝ միաբանությունների մեջ, թերևս, ամենից ավելի համառ և հայերի «հետևակ» (դավանակից) ազգերի (ասորիների, հաբեշների և ղպտիների) ժառանգության հարցում մարտնչող միաբանության նկատմամբ: Հաբեշները, գրում է նա, «դաւանակից են մեզ և եամախ (բարեկամ – Ա. Խ.) ազգիս հայոց, բազում հրամանօք հաստատեալք: Այլ յորժամ անհետ եղեն ի քաղաքէս վասն դժուարութեան ճանապարհի երկրին Հապէշստանայ և հատան, յետոյ յոյնքն բազում կաշառօք ձեռամբ առաջիկայից (առաջավոր մարդկանց – Ա. Խ.) նոցին որք են ի դրունս արքունոյն՝ իբրև զանտէրունչ մուկք խլեցին զամենայն մուկքս հապէշից և տիրապետեցին վանօրէից նոցին, որ մեզ էր անդ ժառանգել զնոսա»[8]:

Երուսաղեմի ազգային սեփականությունների հիմնավորման հետ Հաննան զգալի ուշադրություն է հատկացնում նրա նյութական վիճակին: Վերջինս նրա հայեցության մեջ աղերսվում է Ս. Տեղյաց և, առաջին հերթին, հայկական բաժնի սրբավայրերի հանգամանալի նկարագրության հետ, որն ունի ճանաչողական ինքնատիպ նշանակություն: Հենվելով հայ և օտար բազմաթիվ սկզբնաղբյուրների վրա (որոնք նա չի նշում, բայց և դրանց մասին ակնարկում է իր աշխատության մեջ՝ հատկապես իր գիրքը գրելու պատճառների վերաբերյալ հատվածում)՝ Հաննան մանրամասն նկարագրում է սրբավայրերը, վանքերը, եկեղեցիները, գերեզմանները, կամարները և այլն՝ հաճախ հրաշապատում կամ առասպելախառն այժեներով: Նա առանձին տեղ է հատկացնում տնտեսական կամ օժանդակ շինությունների, միաբանության բնակարաններին ու այլն՝ որոշակի կառուցվածքային մոտեցմամբ, և անգամ ուխտավորներն ուղղորդող՝ սրբավայրեր այցելելու հերթականությանն ու երթուղուն, այդ ընթացքում նրանց քիստոնեավայել վարքին ու կեցվածքին:

Այսուհանդերձ, այստեղ մեզ հետաքրքրում է հատկապես Հաննայի աշխատության այն չերտը, որը վերաբերում է Երուսաղեմի հայոց պատրիարքության և Կ. Պոլսի պատրիարքության փոխհարաբերությունների պատմությունը: Հաննայի աշխատությունն ընդգրկում է քրիստոնեական սրբավայրերի պատ-

[5] *Հ ա ն ն ա. 1782, 201–203, 217:*
[6] *Հ ա ն ն ա. 1782, 203:*
[7] *Հ ա ն ն ա. 1782, 203:*
[8] *Հ ա ն ն ա. 1782, 209:*

մութիւնը՝ հնագոյն ժամանակներից մինչև իր ժամանակաշրջանը՝ 1730–1732 թթ.: Նրա պատմության վերջին դրվագներից են Ս. Հրեշտակապետ եկեղեցու նորոգման («ի ՌՃՀԹ [1729] թուականութեանս կատարեցաւ»[9]) և 1731 թ. Ղալաթիայի մեծ հրդեհի («ի ՌՃՂ թուիս [1731] կրկին եղև մեծ հրդեհումն ի Խալաթիա»), (երը այրվել էր Ս. Լուսավորիչ եկեղեցին– Ա. Խ.) իրողությունները, այլև այն, որ մինչև 1732 թվականը Հովհ. Կոլոտը չատ չանք է գործադրում այդ եկեղեցու նորոգման համար և որը, ի վերջո, հաջողվում է արքունի «ծայրագոյն վաճառապետի» պաշտոնը ստացած Սեղբեստրոսի չնորհիվ[10]:

Վերը մեջբերված՝ 1730-ականի սկզբների այս տվյալները ժամանակագրական իմաստով եզրափակում են Հաննայի աշխատությունը. 1730 թ. նա արդեն տակտ էր[11] և, ըստ երևույթին, ավարտել էր իր գործը՝ նախքան հույն-հայկական նոր բանավեճի բորբոքումը այդ տասնամյակի առաջին կեսին (վախճանվել է 1733 թ.)[12]: Նրա աշխատության սկզբնաղբյուրային նշանակությունը առավել չոշափելի է դառնում, կարծում ենք, ոչ միայն Երուսաղեմի քրիստոնեական միաբանությունների ու սրբատեղիների վերաբերյալ արժեքավոր լրատվությամբ, այլև հայկական միաբանության, Կ. Պոլսի պատրիարքության հետ Ս. Հակոբի վանքի շուրջ երևնամյա (1700–1720-ական թվականներ) փոխհարաբերությունների բացահայտման տեսակետից:

Երուսաղեմի հայոց պատրիարքությունը մինչև Հովհաննես Կոլոտ և հետո

Հայտնի է, թե ինչպիսի կրքոտությամբ էր դատապարտում Հաննան Երուսաղեմի պատրիարքությունը Կ. Պոլսի պատրիարքությանը միացնելու ձախողակ քայլը, որով, կարծեք, օրինականացվում էր Ս. Հակոբյանց վանքի ստացվածքի մսխումներն ու թալանը՝ Ավետիքի պատրիարքությունից հետո ևս, մինչև Հովհաննես Կոլոտ՝ 1702–1715 թթ.: Մենք արդեն նկատել ենք, որ պատրիարքությունների միացումը[13] ոչ թե Ավետիքի կամ Կ. Պոլսի պատրիարքության նախաձեռնության, այլ օսմանյան պաշտոնական քաղաքականության արդյունքն էր, որ իրականացնում էր չեյխ ուլ-իսլամ Ֆեյզուլլահը, և որի անմոռանչ գործիքն էր Ավետիքը: Մի կողմ թողնելով Մ. Ջամչյանի և Մ. Օրմանյանի՝ Ավետիքին տված հակադիր բնութագրերը՝ վերադառնանք Ավետիքի հովանավորի՝ Ֆեյզուլլահի ինքնության, որի անձնավորությամբ հիմնականում պայմանավորված էին Կ. Պոլսի պատրիարքի գործողությունները: Այս իմաստով հարկ է անդրադառնալ սիւնեցահայ պատմաբան Հայմոնդ Գևորգյանի հրապարակած արժեքավոր սկզբնաղբյուրին[14], որը վերաբերում է 1703 թ. ենիչերիների ապստամբությանը, Ֆեյզուլլահի գործունեությանը և դրանց առնչվող անցքերին, որոնք հանգեցրին սուլթան Մուսթաֆա

---

[9] *Հ ա ն ն ա. 1782, 149:*

[10] *Հ ա ն ն ա. 1734, 150:*

[11] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3327:*

[12] *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց. 1967, 643:*

[13] *Մ. Ջամչյանը և Տեր-Հովհաննիսյանը երկու աթոռների միացման սկիզբն են համարում 1701 թ., Մ. Օրմանյանը՝ 1702-ը (տե՛ս Ջ ա մ չ ե ա ն ց. 1786, 734, Տէր Յ ո վ հ ա ն ն ի ս ե ա ն ց. 1890, 420, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 138):*

[14] Kevorkian. 1987, 194–249.

Բ-ի (1695–1703) գահընկեցությանը և Ահմեդ Գ-ի (1703–1730) գահակալմանը: Այստեղ, մասնավորապես, ուշադրություն է հրավիրում սկզբնաղբյուրի հեղինակի՝ ժամանակակից հայ մարդու և իրադարձությունների ականատեսի դրչով պատկերված Ֆեյզուլլահի նկարագիրը: Ուլեմների դասի այդ ցայտուն ներկայացուցիչը խառնվածքով և գործելակերպով մի իսկական սինլքոր է, արկածախնդիր, որն օգտվելով սուլթան Մուսթաֆայի մանկության օրերի ուսուցիչը լինելու հանգամանքից՝ դիսապտույտ հաջողություններ և անառարկելի դիրքի է հասնում պալատում՝ բոլ մեջ հավաքելով սուլթանին, վալիդե սուլթանուհուն և երկրի ողջ բյուրոկրատական մեքենան: Սուլթանը նրան նշանակում է մուֆթի, «որ կոչի չէյխ յիսլամ»[15]: Իր նենգամտությամբ և ընչաքաղցությամբ[16] այս Ֆեյզուլլահը զարմանալիորեն հիշեցնում է չամչյանական Ավետիքին՝ իրական կյանքում իր կամակատարին: Ուշագրավն այստեղ այն է, որ Ավետիքի կենսագրականը և անանուն սկզբնաղբյուրի շարադրանքը, որպես այդպիսիք, լրացնում են միմյանց: Ավետիքը չի բացատրում, թե մեծ վեզիր Տալպատանն ինչու է հետամուտ իրեն մեղադրելու, երբ խստությամբ է վարվում իր հետ՝ Երուսաղեմի վանքը Կ. Պոլսի պատրիարքությանը կցելու առթիվ և որի ցասումից նրան փրկում է Ֆեյզուլլահը՝ մեծ վեզիրին ասելով, թե սուլթան Մուսթաֆան է տվել «նորա պատրիարքութեան մանուսուլն (պաշտոնը – Ա. Խ.) և Երուսաղէմայ առաջնորդութիւնն»[17]:

Անանունի շարադրանքից հասկանալի է դառնում դրա բացատրությունը. Ֆեյզուլլահը Բաբելոնից (Բաղդադ) բերել է տալիս Տալպատանին և մեծ կաշառք առնելով՝ դարձնում մեծ վեզիր: Սակայն վերջինս չի կարողանում դրծադրել իր իշխանությունը՝ Ֆեյզուլլահն իր հակընդդեմ հրամաններով խափանում է նրա վճիռները և այս հակադրությունը, ի վերջո, ավարտվում է ամենազոր չէյխ-ուլ իսլամի հաղթանակով, որը սպանել է տալիս ընդամենը չորս ամիս պաշտոնավարած մեծ վեզիրին[18]: Մ. Չամչյանի շարադրանքում Տալպատանի և Ֆեյզուլլահի հակադրությունը դրսևորվում է այն դրվագում, երբ աղրիանուպոլսեցի քահանաների հետ հաչվեհարդար տեսած Ավետիքին բարկացած մեծ վեզիրը հարցնում է. «ո՞ես դու, որ ունիս բանտս և չղթայս յորս կարասցես արգելուլ զպարտաւորս», և հրամայում է նրան տանել մահապարտների բանտ[19]: Ինչ ասել կուզի, Ավետիքն այս անգամ ևս փրկվում է կաշառքի և իր զորեղ հովանավորի միջամտությամբ: Այս միջադեպի մասին Մ. Օրմանյանը ևս նկատում է. «Սակայն եպարքոսը՝ Տալպատան Մուսթաֆա փաշա, անուս զինուորական մը, պատրիարքին վրայ դարձուց իր ցասումը, թէ ինչ իշխանութեամբ բանտեր և չղթաներ կրնայ ունենալ և նոյն ինքն՝ Ավետիքը բանտարկել հրամայեց»[20]: Մ. Օրմանյանի կարծիքը լիովին համընկնում է անանուն սկզբնաղբյուրին. «Ֆեյզուլլահ դեղպետը ... անհատատալի ըլլալու չափ գերիշխանութիւն կազմած էր Մուսթաֆա Բ սուլթանին անձի վրայ՝

---

[15] Kevorkian. 1987, 202.

[16] Kevorkian. 1987, 202–203.

[17] *Կենսագրութիւն Ավետիք պատրիարքի Հայոց. 1874, 151:*

[18] Kevorkian. 1987, 203.

[19] *Չամչեան. 1786, 739–740:*

[20] *Օրմանեան. 2001, 3146–3147:*

ամէն ուզածը ընել տալու չափ» և հատկապես ամեն մի եվրոպականի նկատմամբ[21]*:*

Հիրավի, անձանց գործողությունների հետևում ուրվագծվում էր ոչ միայն ուլեմներին հատուկ պահպանողականությունը, որն այս դեպքում ի հայտ էր գալիս ի դեմս Ֆեյզուլլահի, այլև չդադարող մրցակցությունն արքունիքի, պաշտոնեության և պահպանողական կրոնական դասի միջև, որին անդրադարձել ենք մեր նախընթաց հոդվածում[22]*: Այս ներհակությունները ու իշխանության համար մղվող պայքարը հաճախ կանխորոշում կամ ուղղորդում էին հոգևոր բարձրաստիճան պաշտոնյաների և աշխարհիկ վերնախավի գործողությունների և ազդեցության չափը ոչ մահմեդական հանրույթներում, այդ թվում և հայ համայնքում:*

Վերադառնալով Երուսաղեմում միաբանությունների փոխհարաբերություններին՝ նկատենք, որ նրանց միջև առաջացած վեճերը լուծելու էր կոչված դատարանը, սակայն, օսմանյան պաշտոնեության սևեռուն ուշադրության պայմաններում: Ս. Տեղյաց խնդիրը, տարաղավան միաբանությունների փոխադարձ դիմակայությունների պայմաններում սահուն կերպով գերաճում էր միջազգային հետաքրքրության առարկայի, որչափով այդ միաբանությունների հետևում կանգնած էին նրանց (ասել կուզի նաև իրենց) չահերին հետամուտ դավանակից տերությունները (Ֆրանսիան՝ կաթոլիկների, հատկապես XVIII դ. սկզբից Ռուսաստանը՝ ուղղափառների օգտին): Կայսրության տրամաբանությամբ վեճերն ամենից առաջ լուծվում էին որոշումների ուղղահայաց և պարտադիր բնույթով, մայրաքաղաքում՝ մեծ վեզիրից մինչև սուլթան հասնող վճիռներով: Սեփականությունների խնդիրներից զատ, Երուսաղեմում հայ և հույն միաբանությունների համար գայթակղության քար էր, այսպես կոչված, ծառազատիկը, երբ համընկնում էին ուղղափառների և հայերի զատկական տոների օրը, և սրանց միջև առաջանում էր առաջինը ճրագալույցի երեկոյան Ս. Գերեզման մուտք գործելու խնդիրը, հղի՝ կռվերի ընդհարման վտանգով: 1729 թ. սպասվող այդպիսի հետևանքից խուսափելու համար Գր. Շղթայակիրը դեռ մեկ տարի առաջ պայմանավորվել էր Երուսաղեմի ուղղափառ պատրիարք Մելետիոսի հետ՝ առանձին-առանձին տոնելու Զատիկը, որ և արվեց՝ առանց որևէ միջադեպի[23]*: 1735 թ. կնքվեց փոխադարձ խաղաղության և սիրո ուխտագիր: Վերջին փաստաթուղթը հույների կողմից, ըստ Տ. Սավալանյանից, ստորագրել են Երուսաղեմի պատրիարք Մելետիոսը և Կեսարիայի Պաղեստինի մետրոպոլիտ Պարթենիոսը, հայերի կողմից՝ Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքներ Գրիգոր Շերվանցին և Հովհաննես Կոլոտը*[24]*:*

Հայկական տեսակետը հույների հետ բանավեճում

Հույն-հայկական հակասությունները Երուսաղեմում, սակայն, թաքնվել էին վերստին ջրի երես ելնելու պայմանով: Հատկապես այն բանից հետո, երբ Հովհաննես Կոլոտը հեռատեսորեն նորոգել էր տվել Ս. Հակոբյանց վանքին հնում տրված և եղծված ու քայքայված հրովարտակները և ձեռք բերել

[21] *Օրմանեան. 2001, 3150:*
[22] *Խառատյան. 2022, 12–30:*
[23] *Սաւալանեանց. 1931, 702:*
[24] *Սաւալանեանց. 1931, 715–717:*

դրանք հաստատող հաշիվը հյումայուն (1728 թ.)[25]: Մ. Զամչյանը հակադրության պոռթկումը համարում է, սակայն, 1734 թվականը, երբ «Բորբոքեցաւ ի նոյն աւուրս և այլ իմն խռովութիւն մեծ ի մէջ Յունաց և Հայոց. քանզի Հայք զհետ լեալ չկանացան դարձուցանել յինքենաս զվիճակ հապէշիցն՝ որ յէրուսաղէմ զգրաւեալն ի Յունաց»[26]:

Իբրև դրա չարունակություն, Մ. Օրմանյանը մեջբերում է Հաննայինի. «...կրկին նորոգեաց զեղծեալ և զպատառոտեալ հին արքունական հրամանն, զթերին լրացուցանելով եւ զնոսա հաստի հաստատ հաւմայուն ընել տալով» (1734 թ. սեպտեմբերին կամ դրանից քիչ առաջ)[27]: Սակայն խնդիրը սոսկ հին վավերագրերը թարմացնելը չէր, այլ դրան անմիջապես առնչվող՝ «հետևակ ազգերի» (հաբեշներ, ասորիներ, ղպտիներ) ստացվածքի ժառանգումը. Մ. Զամչյանը գրում է, որ այդ հրովարտակով հայերը ժառանգում էին հաբեշների տեղերը և որ ապարդյուն անցան դրա դեմն առնելու՝ հույների ջանքերը, քանի որ նրանց կողմն էր եպարքոսը (մեծ վեզիր)[28]: Կողմերը, ըստ նրա, երկուստեք ծախսեր էին արել իշխանություններին իրենց կողմը թեքելու համար:

Ուղղափառ միաբանությունը, իր հերթին, հաջողության պետք է հասներ հաջորդ մեծ վեզիր Կյուրճի Իսմայիլի օրոք՝ 1735 թ.: Պատրիարք Մելետիոսը արքունի հրովարտակ է հանել տալիս (դրամի ուժով, ինչպես գրում է Տ. Սավալանյանցը), որտեղ իբրև հունական սեփականություններ են նշվում ոչ միայն Ս. Հակոբի վանքը, այլև Երուսաղեմի ու Բեթղեհեմի բոլոր եկեղեցիներն ու այլ սրբավայրերը, ինչպես և նրանց իրավասության ներքո էին համարվում ասորիների, հաբեշների ու ղպտիների միաբանությունները: Մելետիոսը, ըստ նույն հեղինակի, այդ հրովարտակի պատճենը ծածուկ արձանագրել է տալիս Երուսաղեմի դատարանի տոմարներում: Ըստ նույն հայկական տեսակետի, այնուհետև հունական կողմը գործի է դնում իր կապերն ու ծանոթությունները օսմանյան ազդեցիկ շրջաններում՝ հավակնելով իբրև իրենց սեփականություն ճանաչել տալ Ս. Հակոբյանց վանքը, որին, իբր, հայերը տիրացել էին խաբեությամբ[29]:

Հայկական կողմի մոտեցման հիմքում ընկած էր այն դրույթը, որ պետք է ճանաչվի իր ավանդական սեփականատիրությունը Ս. Հակոբի վանքի, ինչպես և իրավասությունը համաղավան ազգերի՝ Ս. Տեղյաց սեփականությունների նկատմամբ: Վերջին պնդումը հստակ ձևակերպել է Մ. Զամչյանը. «...այն տեղի նոցա՝ հայոց անկանի. որովհետև հապէշք և ղպտիք՝ ընդ որս և ասորիք՝ համարեալ լինէին իբր ի մասնէ հայոց»[30]:

Դրան կտրուկ առարկում էր հունական կողմը՝ իր ելակետային մոտեցմամբ, որ և պատճառ դարձավ չուրջ քառամյա բանավեճի ու փոխադարձ պայքարի, և որը պետք է ընդգրկեր օսմանյան իշխանությունների անխուսափելի

---

[25] *Բ ա մ պ ո ւ ք ճ ե ա ն. 1985, 50–51:*
[26] *Զ ա մ չ ե ա ն. 1786, 809:*
[27] *Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3328:*
[28] *Զ ա մ չ յ ա ն ց. 1786, 809:*
[29] *Տե՛ս Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի. 1866, 185, Ս ա ւ ա լ ա ն ե ա ն ց. 1931, 718, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3355:*
[30] *Զ ա մ չ ե ա ն. 1786, 809:*

միջամտությունը՝ տևական վարանումների և վերջնական վճիռ կայացնելու այս ամբողջ պատմության ընթացքում:

Հունական տեսակետը հայերի հետ բանավեճում

Վերոհիշյալ վարանումներն իրենց հերթին ընկած էին օսմանյան բյուրոկրատական մեքենայի գործունակության հիմքում. որքան արագ էին կատարվում մեծ վեզիրների փոփոխությունները, այնքան դանդաղ էր արձանագրում այդ մեքենան իր վճիռները՝ հակասական և իրարամերժ, քիչ արդյունավետ՝ կողմերին բավարարելու կամ առավելևս՝ պարտադրելու տեսակետից: Մաքսիմալիստական մոտեցում ցուցաբերելով իրենց պահանջներում՝ հույները պատմականորեն իրենց սեփականությունն էին համարում ամենից առաջ Ս. Հակոբի վանքը՝ այս բացահայտ կեղծիքին դիմելիս կրկնելով 1657 թ. իրենց անհաջող ավարտված փորձը՝ սեփականացնելու Ս. Հակոբի վանքը[31]: Այսուհանդերձ, հույները որոշակի հաջողությունների հասան մեծ վեզիր Կյուրճի Իսմայիլի թևարկությամբ. ոտքի ելան նրանց բարձրաստիճան հոգևորականներն ու աշխարհիկ հեղինակությունները՝ բողոքելով Ս. Հակոբի վանքը հայերի կողմից, իբր, յուրացնելու դեմ, այլև պնդելով, որ Երուսաղեմի քրիստոնեական միաբանությունների մեջ իրենք առաջատար համարվեն[32]: Թվում է՝ հայկական կողմը ուր որ է կորցնելու է Ս. Հակոբի վանքը՝ չնայած պատրիարք Հովհ. Կոլոտի եռանդուն ջանքերին (Հ. Նալյանին Երուսաղեմ ուղարկելը՝ վանքին տրված հնամյա վավերագրերը բերելու, ապա 1736 թ. Գրիգոր Շիրվանցուն Կ. Պոլիս կանչելը և այլն), իսկ հայ երևելիների կալանավորումը ցույց տվեց[33], որ մեծ վեզիրը թշնամաբար է տրամադրված հայերի նկատմամբ: Նոր մեծ վեզիր Էսսեյիդ Մեհմեդի պաշտոնակալումը փոխեց իրադրությունը և հարցի լուծումը հանձնվեց նոր քննության: Ի վերջո, օսմանյան կառավարության մոտեցումների մեջ կարևորություն էր ստանալու նախադեպի նորմը, որ կողմերը լավ էին հասկանում՝ երկուստեք կուտակելով վավերագրեր (փոխադարձաբար միմյանց մեղադրելով դրանք կեղծելու մեջ)՝ իրենց դատը չհեղելու համար: Այստեղ հունական կողմի տեսակետին ըստ իրենց իսկ սկզբնաղբյուրին ծանոթանալու իմաստով կարևոր նշանակություն է ստանում հույն երևելի հոգևորական, Կեսարիայի Պաղեստինի մետրոպոլիտ և մեզ հետաքրքրող բանավեճի գործոն մասնակից Պարթենիոսի պատմական շարադրանքը[34]:

---

[31] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 804:*

[32] *Օրմանեան. 2001, 3355: Քննարկվող ժամանակաշրջանում նախագահության կամ առաջնության խնդիրը տարադավան միաբանությունների միջև՝ կայանում էր հետևյալում. լատիններին (կաթոլիկներին) էին պատկանում Ս. Հարության տաճարը և Բեթղեհեմի երեք եկեղեցիների վականքները, նրանց փոխանորդը, որպես նախագահ էր բազմում միաբանությունների բոլոր ժողովներում և այս կարգն էր, որ վիճարկում էին հույները (Տէր-Յովհաննէսեան. 1890, 430–431): Այլ կերպ, Ս. Տեղյաց միաբանություններում նախագահության ինստիտուտը հենվում էր սեփականատիրական իրավունքի վրա:*

[33] *Զամչեան. 1786, 810, Օրմանեան. 2001, 3355, Սաւալանեան. 1931, 718:*

[34] *Պարթենիոս Աթենացու. ... 2008, 3–170:*

Պարթենիոսի աշխատությունն ընդգրկում է 1734–1740 թթ. հույն-հայկական բանավեճերի ժամանակաշրջանը, որի վերջին, եզրափակիչ փուլում նա արդեն փոխարինել էր Երուսաղեմի հունաց պատրիարք Մելետիոսին (ըստ Հ. Բարթիկյանի, Պարթենիոսն այդ պաշտոնին է եղել 1737–1766 թթ. և իր գործը գրել է 1730-ական թվականներին)[35]: Ավելացնենք, որ նա է, որպես պատրիարք, ստորագրել կողմերի միջև բանավեճին վերջ տալու վերաբերյալ 1739 թ. ապրիլի 7-ի համաձայնագիրը[36]:

Պարթենիոսի աշխատությունն ունի կարևոր ճանաչողական մի արժեք՝ բացահայտում է հույն-հայկական ներհակության մեջ ընդգրկված օսմանյան իշխանությունների պարտադրող, ոչ քիչ դեպքերում՝ կամայականության դրսևորումները երկու քրիստոնյա ազգերի տարաձայնությունների նկատմամբ, այլև հույների ու հայերի համարժեք գործելակերպը պաշտոնեության զոչաքաղության (կոռուպցիա) պայմաններում: Կարևոր են նաև աշխատության մեջ արտացոլված՝ հունական կողմի հիմնավորումները, նրանց գաղափարաբանությունն ու մեթոդները, որոնք նպատակների մեծ տարբերությամբ հանդերձ, հայկական կողմի հետ ունեն բավականաչափ ընդհանրություններ:

Խնդրո առարկա ներհակության հիմքում ամենից առաջ ընկած էր Երուսաղեմում սեփականությունների հարցը, Ս. Տեղյաց պատմական կառույցների՝ վանքերի, եկեղեցիների, անշարժ գույքի՝ կալվածքների, այգիների, շինությունների և նյութական այլ արժեքների պատկանելության հարցը: Հունական կողմն այս ներհակության մեջ շատ ավելի արմատական էր իր պահանջներում, քան հայերը, երբ ցանկանում էր ապացուցել, թե իբր հայերը խաբեությամբ են տիրացել իրենց եկեղեցու պատմական արժեքներին և որ նրանք անելիք չունեն Ս. Տեղյաց տարածքներում: Պարթենիոսը և նրա համախոհներն առաջ էին քաշում դրանից ածանցվող մյուս պահանջները՝ դավանակից ազգերի (ղպտիներ, ասորիներ, հաբեշներ) նկատմամբ իրենց նախապատվության իրավունքը, որ դրսևորվելու էր կրոնական արարողությունների ժամանակ: Եվ այս իմաստով հայերին պետք է համարել պաշտպանվող կողմ, որովհետև ձգտում էին պահպանել օսմանյան պետության կողմից ճանաչված իրենց սեփականությունները: Պարթենիոսի շարադրանքի ամբողջ բովանդակությունն այդ պաշտպանության հիմնիվեր բացատրումն է, որ և հերքվում է բանավիճող մյուս կողմի հակափաստարկներով, իրենց հերթին առաջ քաշած մեղադրանքներով և այլն: Այստեղ մեզ հետաքրքրողն այդ բանավեճի պատմության զարգացումներն են 1720–1730-ական թվականներին՝ Երուսաղեմի հույն պատրիարքներ Խրիսանթոսի, Մելետիոսի և Պարթենիոսի[37] ու Երուսաղեմի հայոց պատրիարք Գրիգոր Շիվանցու (Շղթայակիր) և Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհ. Կոլոտի դիմակայության պայմաններում:

Պարթենիոսի աշխատությունն ունի հետևողական կառուցվածք՝ քրիստոնեական բարոյախոսության մոդելի խստիվ պահպանմամբ, որ հատուկ է իր ժամանակաշրջանի բոլոր հեղինակների դավանած արժեքներին, որպիսիք են

---

[35] *Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա ց ո ւ. … 2008, VI:*

[36] *Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի պատրիարքի. 1866, 186:*

[37] *Երուսաղեմի հույն պատրիարքների պաշտոնակալման տարեթվերը տե՛ս Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա ց ո ւ. … 2008, VI, 161, 164:*

առաքինությունը, արդարացիությունը, ճշմարտախոսությունը, խիղճը և այլն: Սրանց շուրջ են պտտվում նրա գնահատումներն ու եզրակացությունները, որոնցից, ըստ այդ հեղինակի, կատարելապես զուրկ է հայկական կողմը: Կապված ներհակության տրամաբանության հետ, նա վերջիններիս է վերագրում բազում մեղքեր, որոնք հակադիր են նշված բարոյականությանը՝ ստախոսություն, արկածախնդրական հակումներ, կեղծավորություն, կաշառատվություն, խաբեբայություն և այլն: Ընդամի, ստեղծելով ծայրահեղ բևեռացումներ՝ Պարթենիոսն ամենուրեք յուրայիններին համարում է հակառակորդի նենգ մտության զոհ, մի տեսակ ուշացած պաշտպանվողներ, որոնք եթե ստիպված են անցնել ինքնապաշտպանության, ապա միայն դիմացինի անբարո գործողություններից հետո: Այստեղ հատկապես հարկ է ընդգծել, որ Պարթենիոսի գրչից դուրս ցայտող ատելությունը, ինչպես նաև նրա ընդդիմախոսների՝ հունական կողմին տված նույն բնույթի ծայրահեղ որակումները, կապ չունեն ոչ հույն, և ոչ էլ հայ բազմությունների դարավոր հաշտ ու խաղաղ համակեցության հետ: Եվ այս տեսակետից էլ պետք է նայել այն իրողությանը, որ բանավեճը մնում է բանավեճ, պամֆլետը՝ պամֆլետ (Պարթենիոսի երկն ամենից առաջ մոտենում է այս ժանրին), և որ նշված ատելությունը, կարելի է ասել, հանդես է գալիս իբրև բյուզանդական կայսրության ժամանակների կրոնաղավանական անհանդուրժողականության ախտանիշ և վերապրուկ, կրկնում ենք, անկախ երկու ազգերի իրական և փոխադարձ խաղաղ համակեցությունից:

Հույն-հայկական նշված բևեռացումը և յուրայիններին ամենուրեք ճշմարիտ համարելու մոտեցումը, կարելի է ասել, Պարթենիոսից պահանջել է, ըստ իր մտավոր և ստեղծագործական բարձր պատրաստականության, իր շարադրանքում գտնել ընթերցողին համոզելու հուսալի միջոց, որպիսին կարող էր լինել ոչ հույն, բայց հույների օգտին և նրանց ճշմարտացիության համար մարտնչող մի անաչառ և իսկապես վիպական անձնավորություն՝ Խալիսսա անվամբ: Պարթենիոսը ինքն էլ բանական է համարում «իրենց դատի համար արքունիքի մեծամեծներից մեկին գտնել ... որպեսզի նա քննարկվելիք խնդրում մեզ համար լինի և խորհրդական, և օգնական, ապա նաև արդարության պաշտպան՝ հայացքը միայն ու միայն արդարությանն ուղղած»[38]:

Եվ կուսակալության էկոնոմը (ըստ երևույթին՝ մեծ վեզիրի դիվանի աստիճանավոր) ստանձնում է ամենահաս դատապաշտպանի դեր՝ հենվելով Պարթենիոսի վկայակոչած այն փաստաթղթերի վրա (Օմար խալիֆի, Եգիպտոսի և Օսմանյան սուլթանների հրովարտակները), որոնց ուժով հունական կողմը հավակնում էր տիրել Երուսաղեմում գտնվող հայկական բոլոր սեփականություններին: Խալիսսան հունական կողմի օգտին գործում է 1730-ական թվականներին, առավել ակտիվ՝ 1735–1736 թթ., երբ վերջինիս հայրողությունները պետք է հասնեին իրենց գագաթնակետին, ապա բանավեճը ձգձգվեր տարիներ, մինչև վրա հասներ հանգուցալուծումը: Ըստ Տ. Սավալանյանցի, 1735 թ. հայերի հետ խաղաղասիրական և հաշտվողական համաձայնագիր ստորագրելուն զուգահեռ, Երուսաղեմի հունական պատրիարք Մելետիոսը դիմում է նախապատրաստական ծածուկ գործողությունների՝ գործի է դնում

[38] *Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա ց ու ց. ... 2008, 65:*

Արապ Գալֆա անվամբ իր ազգակցին, որը սուլթանի ներքինապետ Պեչիրի ճարտարապետն էր: Վերջինս ուղղակի սուլթանին է ներկայացնում նրա խնդիրը և հիմնավորումները՝ երուսաղեմում հույների սեփականությունները, իբր, հայերի կողմից խաբեությամբ զավթելու մասին[39]: Խալիսսան, ըստ Պարթենիոսի, ծագումով Ասորիքի Բերիայից (Հալեպ) էր և իր արտակարգ առաքինությունների շնորհիվ արժանացել էր կուսակալության կալֆայի և, ի վերջո, ավելի բարձր՝ էկոնոմի պաշտոնին[40]: Մի տեղ, սակայն, Պարթենիոսն ակամա բացահայտում է հունական կողմի և սուլթանի ներքինապետի միջև եղած կապը. երբ մեծ վեզիրը հանդիմանում է պատրիարք Մելետիոսին, նրա տեղապահ Պարթենիոսին և մյուս հույն հոգևորականներին՝ մայրաքաղաքում յուրայինների աղմկալի հավաքի համար, Պարթենիոսը պատասխանում է, որ դիմումը (իրենց հավակնությունների մասին) իրենք կանխավ ներքինապետին են տվել, այսինքն՝ նույն այն Պեչիրին, «բայց ամենից առաջ,– հարում է Պարթենիոսը,– արդարության ամենամեծ սատարողին, ճշմարտության պաշտպան էկոնոմ Խալիսսային»[41]:

Կարծում ենք, որ Պարթենիոսի դրչի տակ Խալիսսայի՝ սրբացված այդ կերպարի նախատիպը կարող էր լինել Արապ Գալֆա ճարտարապետը: Նա հանդես է գալիս հունական կողմի հաջողությունների բոլոր դրվագներում, մասնավորապես՝ 1735–1736 թթ., երբ վերջինս եռանդուն գործունեություն էր ծավալել օսմանյան, այդ թվում և դատական ատյաններում՝ հասնելով մինչև մեծ վեզիր Իսմայիլ Կյուրճի փաշա: Վերջինս, ինչպես նշում են հայ հեղինակները, «ազգաւ վրացի», ըստ ամենայնի պաշտպանում էր հունական կողմի բոլոր պահանջները, ընդհուպ մինչև Ս. Հակոբի վանքը հայերից խլելը և նրան հանձնելը[42]: Ինքը՝ Պարթենիոսը, խոստովանում է, որ Կյուրճի Իսմայիլի պաշտոնանկությունը տխրեցրել է հունական կողմին. «Մեր տխրելու պատճառն այն էր, որ մեր խնդիրն առաջ քաշողն ու տանողը Իսմայիլ փաշան էր» և որ «նրա պաշտոնանկ արվելու դիշերը հայերը հրճվանքի մեջ էին, ամբողջ դիշեր տոնախմբություն էր ...»[43]:

Բացասական թանձր գույներով է ներկայացնում Պարթենիոսը իր ժամանակի բոլոր հայ գործիչներին, հատկապես մահտեսի Սեղբոսին, որը կալանավորվել էր, մյուս երևելի հայի՝ Մելիտոնի հետ, Կյուրճի Իսմայիլի հրամանով[44], անշուշտ, Ս. Հակոբի վանքը հույներին հանձնելուց առաջ նրանց մեկուսացնելու համար: Նույն կերպ, Պարթենիոսը գույներ չի խնայում Հովհաննես Կոլոտին, Հակոբ Նալյանին, մահտեսի Մուրատյանին (որին հիշում է Մուրադօղլու անվամբ) բնութագրելիս[45] և քամահրական կամ ժխտական վերաբերմունք է ցուցաբերում հայկական կողմին համակիր բոլոր անձանց հանդեպ: Նկատենք, որ ոչ միայն Պարթենիոսը, այլև հայ հեղինակները երկուստեք մեմ-

---

[39] *Սաւալանեանց. 1931, 715–718:*

[40] *Պարթենիոս Աթենացու. ...2001, 69, 77:*

[41] *Պարթենիոս Աթենացու. ... 2008, 129:*

[42] *Սաւալանեանց. 1931, 720, Յովհաննէսեան. 1890, 40, Զամչեանց. 1786, 809–810 և այլն:*

[43] *Պարթենիոս Աթենացու. ... 2008, 147:*

[44] *Օրմանեան. 2001, 3355:*

[45] *Պարթենիոս Աթենացու. ... 2008, 47, 135, 137– 139, 147:*

յանց մեղադրում են կաշառակերության, նենգամտության, խաբեբայության ու հատկապես փաստաթղթերը խարդախելու և կեղծելու մեջ: Այդ հասկանալի է դառնում բուն ներհակության տրամաբանությամբ՝ կողմերից յուրաքանչյուրն ունի այն ներքին համոզվածությունը, որ պաշտպանում է յուրայինների սեփականատիրական իրավունքը և որ արդարությունն ու ճշմարտությունը կոչված են ծառայելու այդ գերակա և անվիճելի նպատակին:

Հանդուցալուծումը

Կյուրճի իմայիլից հետո շուրջ երեքամյա քաշքշուկների ընթացքում կողմերը ձեռք էին բերում միմյանց հակասող և պատմական նշանակություն կամ դրան հավակնող հրովարտակներ ու վավերագրեր, Երուսաղեմի և օսմանյան տարբեր ատյանների վճիռներ, տեղեկություններ՝ օսմանյան պաշտոնակիցների և այլ շրջաններում: Գործի ընթացքից տագնապած Հովհաննես Կոլոտը և ազգային պլխավորները 1736 թ. Գրիգոր Շիրվանցուն չտապ կանչում են Կ. Պոլիս՝ իր հետ բերելու Ս. Հակոբյանց վանքում գտնվող համապատասխան բոլոր հրովարտակներն ու սենեթիները (մուրհակները)[46]: Հայկական կողմի դատին իր աջակցությունը ցուցաբերեց օսմանյան կառավարող շրջաններում հեղինակություն վայելող և փորձառություն ոչ պակաս նենգամտության պաշարներ կուտակած ֆրանսիական դեսպան Շառլ Վիլնյովը: Այս դիրքորոշմամբ, կարծում ենք, դեսպանը ի դեմս հայերի, դաշնակիցներ էր որոնում Երուսաղեմի ֆրանցիսկյան միաբանության համար՝ հաշվի առնելով հույն-կաթոլիկական հետագա հարաբերությունների (կամ սեփականատիրական նկրտումների) սրացման հնարավորությունը, և մյուս կողմից, սիրաշահում էր Հովհաննես Կոլոտին և Կ. Պոլսի ազգային երևելիներին՝ մեղմացնելու հայ կաթոլիկների դեմ պահպանողականների և օսմանյան իշխանությունների անհանդուրժողականությունը:

Այս ամբողջ ներհակության մեջ հայկական կողմը կարողացավ հասնել իր համար ցանկալի ելքի՝ պահպանել իր իրավունքներն ու սեփականությունները Երուսաղեմում: Օսմանյան կառավարության վճռով 1739 թ. ապրիլի 7-ին փոխադարձ խաղաղության համաձայնագիր ստորագրվեց հույների և հայերի միջև, որով ամեն ինչ մնում էր այնպես, ինչպես կար այս ներհակությունից առաջ, և որն ամփոփված էր հետևյալ երեք կետերում.

1. Հույները պահպանում են Ս. Չաբաթվա արարողության առաջնությունը, պատրիարքները միասին են մուտք գործում Ս. գերեզման, ճրագալույցի կրակը նախ վառում են հույները, ապա նրանցից անմիջապես հետո՝ հայերը:

2. Հաբեշները, ասորիները և ղպտիները, ինչպես եղել է ի սկզբանե, շարունակում են մաս կազմել այն դավանության, որին ենթակա են եղել (իմա՝ հայկական կողմին, որ ժառանգել է նրանց սեփականությունները):

3. Ս. Հակոբի մեծ վանքի, նաև Երուսաղեմում գտնվող իրենց սեփականությունների ժառանգորդ ճանաչվում են հայերը, և հույներն իրավունք չունեն միջամտելու կամ որևէ բան պահանջելու այս հարցում[47]:

---

[46] *Գրիգոր Շղթայակրի ճանապարհորդության նպատակի և ապա Կ. Պոլսում նրա գործունեության մասին տե՛ս նրա հույժ արժեքավոր «ինքնագիր ստորագրությունը»՝ Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի պատրիարքի. 1866, 122–127, 141–143, 184–190:*

[47] *Սաւալանեան Գ. 1931, 729, Յովհաննէսեան Գ. 1890, 54–55: Մ. Զամչյանը և նրան հղելով՝ Մ. Օրմանյանը, գրում են, որ հաբեշների վիճակը մնաց*

Փաստաթուղթը կազմվել էր իտալերենով:

Համաձայնագիրը ստորագրել էին կողմերի երկուական պատրիարքները (Երուսաղեմի և Կ. Պոլսի)՝ կնիքներով ու երդմամբ: Եվ այս իմաստով ուշագրավ է, որ Պարթենիոսը, ով որպես Երուսաղեմի հունաց պատրիարք, ստորագրել է այս փաստաթուղթը, իր զրքում այն շրջանցել է լռելյայն: Պարթենիոսը մնում էր անդրդվելի: Իր ժխտական և միաժամանակ, թաքցրած վերաբերմունքը այս համաձայնության, ասել կուզի՝ օսմանյան պետության վճռի նկատմամբ, նա հայտնում է դեռևս նախքան այդ հանգուցալուծումը, երբ հայտնի էր դարձել իշխանությունների որոշումը՝ «Այսուհետև սույն վեճն այլևս քննարկման ենթակա չէ» ձևակերպմամբ[48]: Փոխարենը, նա բավարարվում է իր և յուրայինների համակերպման մասին ժլատ մի դարձվածով, իսկ վեճը շարունակելու արգելքը , որ դրվել էր երկու կողմերի՝ հայերի, հույների և լատինների վրա, հասցեագրում է միայն հայերին. «Այս նշումից հետո բազում հարցերի շուրջ մեծ աղմուկ բարձրացավ, որի պատճառով որոշեցինք ձեռք քաշել: Այդ ընթացքում թագավորական հաստատությունների բազում որոշումներ էին դուրս գալիս, որոնց վրա մեկն էլ գրի առնվեց ընդդեմ նրանց, ովքեր երբևիցե կհանդգնեն դիմում գրել կամ ապացույց ներկայացնել: Այն ուղղված էր հայերի դեմ, նրանց սպառնում էր բանտարկություն և մահապատիժ»[49]:

Այս կարգի հետագա մեկնաբանությունները և խնդրի վերարծարծումները կանխելու նպատակով հայկական կողմը վավերացնել է տալիս այս համաձայնագիրը՝ Վիլնյովի միջնորդությամբ, որ և ամրագրվում է 1739 թ. դեկտեմբերի 23-ի հաթթը չերիֆով[50]:

Եզրակացություն

XVII դ. վերջերից մինչև 1710-ական թվականները իր կառավարման անկազմակերպ ու ինքնագլուխ վիճակով Երուսաղեմի հայոց պատրիարքությունն անմիջականորեն կրում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքության անկայուն կացության բոլոր հետևանքները: Ընդհուպ մինչև 1715 թ., Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի կողմից համապատասխանաբար Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների պարտականությունները ստանձնելը, երբ վերստին բաժանվեցին Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները և Ս. Հակոբի վանքը վերադարձավ իր նախկին ինքնավար կառավարմանը, ցույց են տրված Հաննայի «Գիրք պատմութեանց» աշխատության մեջ: Այդ սկզբնաղբյուրի գլխավոր ուղղություններից մեկը նաև Երուսաղեմում հայոց պատմական ու սեփականատիրական իրավունքների հիմնավորումն ու պաշտպանությունն է՝ օտար միաբանությունների ոտնձգությունների դեմ: Նշված երկն առավել

հույների ձեռքին, սակայն վերոհիշյալ համաձայնագրի տեքստում դրա մասին ոչինչ չի ասվում (Զ ա մ չ ե ա ն. 1786, 824, Օ ր մ ա ն ե ա ն. 2001, 3382):

[48] Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա գ ո ւ. ... 2008, 157:

[49] Պ ա ր թ ե ն ի ո ս Ա թ ե ն ա գ ո ւ. ... 2008, 157–158:

[50] Ս ա ւ ա ն ե ա ն ց. 1931, 730: Մ. Զամչյանն այդ հրամանագիրն ամրագրել է 1740 թվականով (Զ ա մ չ ե ա ն. 1786, 823–824, տե՛ս նաև Կ ի ւ լ է ս է ր ե ա ն. 1904, 139):

նշանակալի է դառնում Երուսաղմի միաբանությունների և Ս. Տեղյաց վերաբերյալ արժանահավատ տեղեկատվությամբ:

Վերը նշված պատրիարքությունների միացման քայլը, փաստորեն, օսմանյան պաշտոնական քաղաքականության իրականացումն էր հայ մլեթի նկատմամբ, որը խրախուսում էր Ավետիք պատրիարքի հովանավոր չեյխ-ուլ իսլամ Ֆեյզուլլահը:

Կարելի է կարծել, որ Հովհաննես Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի եռանդուն գործողությունները՝ Երուսաղեմի պատրիարքությանը վերաղարձնելու նրա վաղեմի հեղինակությունն ու տեղը հայրենական ու արտաքին (հունական և լատինական միաբանություններ) շրջաններում, առիթ դարձան հայ-հունական ներհակության ծավալմանը Երուսաղեմում: Եթե հայկական կողմը վերադառնում էր 1657 թ. հույների հետ Երուսաղեմում հաբեշական ժառանգության սառեցված վիճակին՝ վիճարկելով հաբեշների ստացվածքը հույներին անցնելու իրողությունը, ապա հունական կողմը ևս վերադառնում էր նույն թվականին Ս. Հակոբի վանքը հայերից խլելու չիրականացած նպատակին: 1734–1735 թթ. հաջողության հասավ նախ հայկական կողմը, 1736 թ.՝ հունական միաբանությունը, որոնք ձեռք բերած հակադիր հաթթը չերիֆներով (որ վկայում է օսմանյան պաշտոնեության մեջ ամենուրեք տարածված զոչաքաղության մասին) ժամանակավորապես գերազանցում էին միմյանց: Շատ հանգամանքներ կախված էին իրար փոխարինող մեծ վեզիրներից և սուլթանի կամքից: Խնդիրը հանգուցալուծվեց 1739 թ., երբ ներհակությանը վերջ տալու խստիվ պահանջով օսմանյան պետությունը վճռեց սեփականություններն ու հետևորդ ազգերի կարգավիճակի հարցում ամեն ինչ թողնել այնպես, ինչպես կար նախքան վեճի բորբոքումը. Ս. Հակոբը մնում էր հայերին և պահպանվում էր նրանց գերակայությունը դավանակից ասորիների, հաբեշների և ղպտիների նկատմամբ, իսկ հունական կողմը պետք է բավարարվեր Ս. Տեղյաց այն սեփականություններով, որոնք նրան էին մնացել 1657 թ. ի վեր և որոնց հավակնում էին հայերը՝ 1734 թ. հաթթը չերիֆով: Օսմանյան իրավունքը հավատարիմ էր մնում իրեն՝ պահպանելով մլեթների ստատուս քվոն:

Պարթենիոսի աշխատությունն անդրադարձնում էր այս ներհակության պատմության մեջ ուղղափառ միաբանության գործելակերպը, ուղղությունն ու նպատակները, եթե վերապահումներ անենք հեղինակին՝ հայկական կողմի և նրա դավանանքի դեմ ուղղված մշտական հարձակումների գայթակղություններից չխուսափելու համար: Հայկական կողմը, ի դեպ, նույնպես զերծ չի մնացել այդպիսի գայթակղություններից, սակայն շատ ավելի զուսպ և պաշտպանական ռազմավարության սահմաններում:

Բանավեճն այս խնդրի շուրջ 1730-ական թվականներին ընթացել է փոփոխակի հաջողություններով, որտեղ կողմերին աստարել են օսմանյան վարչական վերնաշերտի հետ կապեր և հարաբերություններ ունեցող ազգակիցներն ու համադավան անձինք՝ իրենց ազդեցությունը հասցնելով ընդհուպ մինչև չեյխ-ուլ իսլամ, արքունիքի ներքինապետ և մեծ վեզիր: Կողմերը հաճախ գործի են դրել օսմանյան պաշտոնեության համար առօրեական դարձած կաշառքն ու անձնական կապերը: Պարթենիոսն ամբողջականորեն է ներկայացնում հունական կողմի տեսակետն ու գործելակերպը՝ դրան տալով իր անձնական նկարագրի և անհատականության կնիքը: Օսմանյան արդարադա-

տութեանը համոզիչ չեն թվացել ուղղափառների փաստարկները՝ վավերագրական հիմնավորվածության, հայերի կողմից ղրանք նենգափոխելու և նրանց սեփականատիրական իրավունքները Ս. Տեղյաց տարածքներում վերացնելու կամ սահմանափակելու տեսակետից: Ս. Հակոբի վանքը ուղղափառներին հանձնելը կնշանակեր փոփոխություն ենթարկել քրիստոնեական միաբանությունների «ստատուս քվոն» Երուսաղեմում, որ իր հերթին կնշանակեր խնդրի լուծման քաղաքական բովանդակավորում. պատահական չէ, որ այդպիսի փոփոխությանը կտրականապես դեմ էր ֆրանսիական դեսպան Շ. Վիլնյովը, որի ակտիվ աջակցությունը ևս նպաստեց հայերի հաջողությանը: Բայց ամենակարևորը՝ հայկական կողմը հաջողության հասավ իր համառության ու հաստատակամության չնորհիվ՝ ոտնձգություններից սեփական օրինական իրավունքները պաշտպանելու դժվարին մաքառումներում:

Ալբերտ Խառատյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր մասնագետ, հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և մամուլի պատմություն, Օսմանյան Թուրքիայի հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 8 գրքի և ավելի քան 200 հոդվածի: alkhar39@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղաւնունի Մ. 1929, Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 544 էջ:

Անասեան Յ. 1987, Մանր երկեր, Լոս Անջելես, հրատ. Ամերիկահայ միջազգային քոլեջի, 965 էջ:

Բամպուքճեան Գ. 1985, Յովհաննէս պատրիարք Կոլոտ (1678–1741), Ստանպուլ, Dizgi ve Baski Murad Ofset, 415 էջ:

Բարթիկյան Հ. 2004, «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը. – ՊԲՀ, № 2, էջ 65–116:

Բարթիկյան Հ. 2008, Առաջաբան Պարթենիոս Աթենացու «Պատմություն հունաց և հայոց տարածայնության» երկի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ III–XVI:

Խառատյան Ա. 2022, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունների փոխհարաբերությունները (XVIII դ. սկիզբ–20-ական թթ.). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 12–30:

Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի հայոց, 1847. – «Արարատ» (Վաղարշապատ), թիւ Բ, Գ, Դ, Ե, էջ 71–75, 112–116, 150–156, 192–195, տպարան ս. Կաթուղիկէ էջմիածնի, 232 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, ժէ դար (1641–1660), հ. Գ, կազմ. Հակոբյան Վ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1015 էջ:

Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. 1967, հ. 2, կազմ. Պողարեան Ն., Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 671 էջ:

Յովհաննէս Հաննա, 1782, Գիրք պատմութեան Սրբոյ և մեծի Քաղաքիս Աստուծոյ Երուսաղէմիս և Սրբոց տնօրինականաց Տեղեաց, Կ. Պոլիս, տպարան Յոհաննէսի և Պօղոսի, 355 էջ:

Չամչեանց Մ. 1786, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, ի տպարանի Յովհաննու Փիացեանց, 896+195 էջ:

Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի Պատմություն հունաց և հայոց տարածայնության. 2008, Առաջաբանը, թարգմանությունն ու ծանոթագրությունները Հրաչ Մ. Բարթիկյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 170 էջ:

Սաւալանեանց Տ. 1931,Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1387 էջ:

Ստորագրութիւն ուղևորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի պատրիարքի Ս. Աթոռոյս յԵրուսաղէմի ի Կ. Պօլիս, 1866. – «Սիոն» (Երուսաղէմ), թիւ 8, էջ 122–127, թիւ 9, էջ 141–143, թիւ 12, էջ 184–190:

Տէր Յովհաննէսեանց Ա. 1890, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Ա, Երուսաղէմ, ի տպարանի Սրբոց Յակոբեանց, 461 էջ:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում, հ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3893 էջ:

ИЕРУСАЛИМСКОЕ АРМЯНСКОЕ ПАТРИАРШЕСТВО И ГРЕКО-АРМЯНСКОЕ ПРОТИВОСТОЯНИЕ ВОКРУГ СВЯТЫХ МЕСТ (1700–1730-е годы)

АЛЬБЕРТ ХАРАТЬЯН

Р е з ю м е

Ключевые слова: Иерусалимское армянское патриаршество, Армянское патриаршество Константинополя, собственность Святых мест, Ованес Ганна, патриарх Аветик, патриарх Ованес Колот, патриарх Григор Ширванаци, муфтий Фейзулах, греческий патриарх Иерусалима Мелетий.

С конца XVII века армянские патриаршества Иерусалима и Константинополя стояли перед испытаниями и преодолением их тяжелых последствий. Константинопольское патриаршество, ослабевшее от теологических распрей, не сумело сохранить неприкосновенность Иерусалимского монастыря св. Иакова. Монастырь оказался во власти авантюристов и алчных представителей местной верхушки, которые безжалостно грабили собственность монастыря. Частая смена патриархов привела к тому, что под вопросом оказалось даже само существование армянской конгрегации в Иерусалиме. Этой катастрофической ситуации положило конец избрание Ованеса Колота и Григора Ширванаци духовными главами соответственно Константинопольского и Иерусалимского армянских патриаршеств. Монастырь св. Иакова ожидали новые испытания из-за претензий греческой

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

конгрегации к самому монастырю и его имуществу. Взаимная борьба между армянской и греческой конгрегациями вокруг так называемого эфиопского наследия закончилась в 1739 г., когда османское государство решило сохранить статус-кво, существовавший до 1734 г., т. е. до начала армяно-греческого противостояния. Монастырь св. Иакова со всем своим имуществом оставался армянским, в Иерусалиме сохранялся их сюзеренитет над единоверцами-ассирийцами, эфиопами и коптами.

Альберт Харатьян – д.и.н., проф., член-корреспондент НАН РА, главный научный сотрудник Института истории НАН РА, заведующий отделом истории армянской периодической печати и общественной мысли. Научные интересы: история армянской общественно-политической мысли и периодической печати, история армянских общин Османской Турции. Автор 8 книг и более 200 статей. alkhar39@mail.ru

THE ARMENIAN PATRIARCHATE OF JERUSALEM AND THE GREEK–ARMENIAN CONFRONTATION AROUND THE HOLY PLACES (1700s–1730s)

ALBERT KHARATYAN

Summary

Keywords: Armenian Patriarchate of Jerusalem, Armenian Patriarchate of Constantinople, properties of Holy Places, Hovhannes Hannah, Patriarch Avetik, Patriarch Hovhannes Kolot, Patriarch Grigor Shirvantsi, Faizullah Mufti, Greek Patriarch Meletios of Jerusalem.

Since the end of the 17th century, the Armenian Patriarchates of Jerusalem and Constantinople have faced trials and overcoming their grave consequences. The Patriarchate of Constantinople, weakened by theological strife, was unable to maintain the inviolability of the Jerusalem monastery of St. Jacob. The monastery was at the mercy of adventurers and greedy representatives of the local elite, who ruthlessly plundered the property of the monastery. The frequent change of patriarchs led to the fact that even the very existence of the Armenian congregation in Jerusalem was called into question. This catastrophic situation was put to an end by the election of Hovhannes Kolot and Grigor Shirvanatsi as spiritual heads of the Armenian Patriarchates of Constantinople and Jerusalem, respectively. The monastery of St. Jacob awaited new trials because of the claims of the Greek congregation to the monastery itself and its property. The mutual struggle between the Armenian and Greek congregations around the so-called Ethiopian heritage ended in 1740, when the Ottoman state

decided to maintain the status quo that existed until 1734, i.e., before the start of the Armenian-Greek confrontation. The Monastery of St. Jacob with all its property remained Armenian, in Jerusalem their suzerainty over fellow believers- Assyrians, Ethiopians and Copts was preserved.

Albert Kharatyan – Doctor of Historical Sciences, Professor, Corresponding Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Chief Researcher of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Head of the Department of Armenian History of Press and Social Thought. Scientific interests: the history of the Armenian socio-political thought and periodical press, the history of the Armenian communities of Ottoman Turkey. Author of 8 books and more than 200 articles.
alkhar39@mail.ru

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ՀՏԴ : 891.981.09

Doi:10.54503/0135-0536-2023.1-74

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ
ՀԻՇԱՏԱԿԻ 850-ԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՆՈՐԱՐԱՐԸ*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

«Սերն առ հայրենիք՝ սերն է առաջին,
Եվ սերն է երկրորդ՝ առ Աստված սիրուց հետո»:
ՊՈԼ ՎԵՐԼԵՆ[1]

Բանալի բառեր՝ Ներսես Շնորհալի, XII դար, աստվածաբան, հանելուկ, չարական, նորարար, միջնադարյան գրականություն, «Ողբ Եղեսիոյ», «Յիսուս Որդի»:

Նախաբան

Այս տարի լրանում է միջնադարյան հայ մատենագրության չատ երևելի ու դարերով պաշտամունքի արժանացած հոգևոր նշանավոր գործիչ, կաթողիկոս, գրող, դրիչ, երաժիշտ, մանկավարժ Ներսես Շնորհալու հիշատակի 850-ամյակը (1100–1173): Սա պատեհ առիթ է վերստին անդրադառնալու հայ մատենագրության մեջ խոր հետք թողած, հայ մտավոր կյանքում Ոսկեդարի հայ գրականության լավագույն ավանդույթները շարունակած ու նոր շրջադարձեր նախապատրաստած, հիացմունքի արժանի մարդու կյանքին ու գործին:

Միջնադարի հայ երևելի մատենագիրներից սկսած՝ չատերն են անդրադարձել Ներսես Շնորհալու կյանքին ու ստեղծագործությանը ոչ միայն հայ իրականության մեջ, այլև օտար գիտական շրջանակներում, և ամենքն էլ համերաչխ ձևով նրան գնահատել են որպես մեծ հայրենասերի, բազմագիտակի, մարդասերի ու հայ գրականության նորարարի:

Այս ազնվական հոգևոր գործիչը սերում է նշանավոր Պահլավունի նախարարական գերդաստանից, որի մեծագույն նախորդը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին էր՝ կարծես եվրոպական Վերածննդի մեծ մտածողներից մեկը, միայն թե ավելի չուտ՝ XI դարում հայկական իրականության մեջ ապրած ու գործած:

Առաջին նշանավոր բանասերը, որը XIX դարում հանգամանալի քննեց ու մեկնաբանեց Ներսես Շնորհալու կյանքն ու գործը, Ղևոնդ Ալիշանն էր՝ իր

---

* *Ներկայացվել է 28. XI. 2022 թ., գրախոսվել է 01. XII. 2022 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

[1] Verlaine. 1977, 18.

«Շնորհալի եւ պարագայ իւր» հիմնարար աշխատութեամբ[2]: Խորհրդային տարիներին Շնորհալու կյանքին ու գործին հատուկ ծավալուն մենագրութիւն է նվիրել Գրիգոր Հակոբյանը[3] ավելի մանրամասնելով Մանուկ Աբեղյանի ելակետային դրույթները[4]:

Ասատուր Մնացականյանը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական նյութերի հիման վրա հրատարակել է Շնորհալու հանելուկների քննական բնագիրը[5]:

Շնորհալու գանձերի ու տաղերի քննական բնագիրը պատրաստել և հրատարակել է Արմինե Քյոշկերյանը[6]: 1977-ին ՀՍՍՀ ԳԱ-ն հրատարակել է «Ներսես Շնորհալի» հոդվածների ժողովածուն[7] նվիրված մեծ մտածողի մահվան 800-ամյակին: Ժողովածուն բացվում է ՀՍՍՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի «Հայ մշակույթի անմար աստղը» սեղմ բնութագրով, որում հիացական ջերմ խոսքերով ներկայացվում է Շնորհալու կատարածը, չեշտվում վերջինիս բազմագիտակ լինելը ու, ելնելով իր տիեզերագիտական ու աստղագիտական գիտելիքներից, մեկնում է Արևին նվիրված հանելուկի ծածկագիրը: Տեղին է այդ փաստը մեջբերել նույնությամբ.

Նա բարձրանայ Այբէն ի Քէն
եւ խոնարհի դարձեալ անդրէն.
Ամէն գըրի՝ հինգ օր՝ յիսէն,
Գընայ ըզվեց ամիսն ամէն [8]:

Պետք է ասել, որ այս հանելուկը սոսկ Արևին չի վերաբերում, այլև տարվա օրերին ու կիսամյակներին: «Փաստորեն այստեղ ունենք մի ծածկագրված բանաձև՝ հետևյալ սխեմայով.

36 (Ա-ից Ք). 5= 180 օր (6 ամիս)
36 (Ք-ից Ա). 5 = 180 օր (6 ամիս)
360 օր (12 ամիս)[9]:

Շնորհալու մասին գնահատանքի խոսքեր է գրել ֆրանսիացի նշանավոր հայագետ Էդուարդ Դյուլորիեն[10], իսկ բելգիացի հայագետ Ֆելիքս Նևն իր «Քրիստոնյա Հայաստանը և նրա գրականությունը» մենագրության մեջ մի ամբողջ բաժին նվիրել է Ներսես Շնորհալու կյանքին ու գործին՝ ֆրանսերեն թարգմանելով

[2] *Ալիշան, 1873:*
[3] *Հակոբյան. 1964:*
[4] *Աբեղյան. 1970, 96–156:*
[5] *Մնացականյան. 1980, 200–354:*
[6] *Ներսես Շնորհալի. 1987:*
[7] *Ներսես Շնորհալի. 1977:*
[8] *Ներսես Շնորհալի. 1977, 8:*
[9] *Ներսես Շնորհալի. 1977, 8:*
[10] *Դուլուխան յան. 2004, 21, 23:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

նաև վերջինիս չարականները[11]: Շնորհալուն շատ բարձր է գնահատել նաև Վալերի Բրյուսովն իր «Поэзия Армении» *ժողովածուի առաջաբանում[12]: Շնորհալու հարուստ երաժշտական ժառանգությանն է նվիրված Նիկողայոս Թահմիզյանի «Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ» ուսումնասիրությունը[13]: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում մեծարժեք ծավալուն հոդված է տպագրել միջնադարագետ Գևորգ Տեր-Վարդանյանը[14]:*

Ներսես Շնորհալու կյանքը

Շնորհալու ծննդյան հաստատուն թիվը գտնված չէ. այն մոտավոր է: «Ամենայն Հայոց կաթողիկոսներ» ժողովածուում գրված է՝ մոտավորապես 1100[15]: 1854 թ. Վենետիկում տպագրված «Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ պատմութիւն վարուց» հետազոտության մեջ, որը, ըստ էության, առկա է հետագա բանասերների ուսումնասիրություններում, որոնք զբաղվել են Ներսես Շնորհալու կյանքով ու գործով, կլասիցիստական գրականությանը հատուկ ոճով ներբողական բազում հատվածներ կան՝ նվիրված միջնադարի այդ նշանավոր մեծ անհատի անձին ու գործունեությանը: Մի քանի անգամ կրկնվում է, որ նա Գրիգոր Լուսավորչի զարմից է[16]: Շեշտվում է, որ նրա ազգակիցը եղել է Գրիգոր Մագիստրոսը՝ Բջնի ամրոցի տերը, վերջինիս հայրը մարտիրոսական մահով է վախճանվել: Շնորհալու կենսագրության մեջ արժեքավոր փաստեր կան Գրիգոր Մագիստրոսի, նրա որդու՝ Գրիգոր Վկայասերի, Շնորհալու եղբորորդի պատանի Ապիրատի մասին, որի հորդորով Շնորհալին գրեց իր լավագույն գործերից մեկը՝ «Ողբ Եղեսիոյ» ծավալուն քերթվածը: Շնորհալու վարքում բացատրվում է նաև, թե ինչու Հայաստանի կաթողիկոսական աթոռը տեղից տեղ է փոխադրվում ու հաստատվում Եփրատի ափին գտնվող Հռոմկլա անառիկ բերդում[17]:

Ինչպես Շնորհալու վարքում, այնպես էլ Ղ. Ալիշանի «Շնորհալի եւ պարագայ իւր» ծավալուն մենագրության մեջ բացատրվում է, թե ինչու Ներսեսը կոչվել է Կայեցի, Երգողն, սակայն ամենաբնորոշը եղել է Շնորհալի պատվանունը[18]: Կենսագիրը շատ է կարևորում նաև Պահլավունիներ Վասակին ու Վահրամին, որոնք պայծառացան Բագրատունիների փառքի վերջին տարիներին: Պահլավունիների հայրենասիրական դաստիարակության արդյունքն էր Ներսես Շնորհալին, որը 19–20 տարեկանում արդեն կուսակրոն քահանա էր, իսկ 1166-ից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս[19]: Ալիշանի՝ Շնորհալուն նվիրված աշխատությունը մեծարժեք է իր նյութի բազմակողմանիությամբ: Նրանում

---

[11] *Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2001, 35–40:*

[12] Поэзия Армении. 1987, 43–45.

[13] *Թ ա հ մ ի զ յ ա ն. 1973:*

[14] *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան. 2002, 787–793:*

[15] *Ամենայն Հայոց կաթողիկոսներ. 2001, 132:*

[16] *Շ ն ո ր հ ա լ ի. 1854, 12, 74:*

[17] *Հռոմկլայի ավերակներն այսօր էլ կանգուն են ու խիստ տպավորիչ: Ես դրանք տեսել եմ 2010 թ. օգոստոսին:*

[18] *Ա լ ի շ ա ն. 1873, 3:*

[19] *Ա լ ի շ ա ն. 1873, 13:*

ներկայացված է ոչ միայն Կիլիկյան Հայաստանի, այլև Մեծ Հայքի՝ XI–XII դդ. պատմական կյանքի իրական պատկերը՝ նշանավոր մտավորականներով, Անիով ու անեցիներով, Մխիթար Գոշով, Հովհաննես Սարկավագով, Սամվել Անեցիով և մյուս նշանավորներով:

Բոլոր կենսագիրներն անպայման Շնորհալու կենսագրությունը կապում են Գրիգոր Մագիստրոսի հետ, քանի որ Ներսեսը եղել է Մագիստրոսի զատեր որդու տղան[20]:

Ներսես Շնորհալին գրող, հասարակական գործիչ և նորարար

1121-ին Շնորհալին գրում է իր առաջին ծավալուն երկը՝ «Վիպասանութիւնը»: Նրա նպատակն էր անմահացնել բոլոր հերոս ու հայրենասեր հայ նախնիներին՝ Հայկազյաններին, Արշակունիներին, Գրիգոր Լուսավորչին, նաև Պահլավունիներին: Նա «Վիպասանութիւնը» սկսում է Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» հերոսական էջերից ու հասցնում է մինչև Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Վկայասեր, մինչև իր ապրած ժամանակահատվածը:

«Վիպասանութիւնը» սկսվում է նախահայր Հայկի ծննդաբանությունից.

Այլ Թորգոմա զՀայկ ծնեալ,
Յուրմէ և Հայք մեք անուանեալ[21]:

Արշակունիների Հայաստան գալը և Հայաստանի պատմության հետագա դեպքերը մինչև 428 թվականը չափածո տողերով, էպիկական շնչով կրկնվում են ըստ Խորենացու.

Այն, որ Արշակ Մեծ անուանեալ,
Զպատերազմ ազանց վանեալ...
...Նաև եղբօր ձիր պարգևեալ
Որ Վաղարշակն էր անուանեալ
Եւ աստանօր թագաւորեալ[22]:

Խորենացին Վաղարշակին Մեծ Հայքի վրա թագավոր կարգելու մասին գրում է. «Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, պատեհ համարեալ այսպէս իմն անչարժ իւրոյ թագաւորութեան մնալ»[23]: Հետագա շարադրանքի մեջ Շնորհալին հիշում է Տիգրան Մեծին, որին Խորենացին Տիգրան Միջին է անվանում: Տիգրան Մեծը հաղթել է հույներին ու հռոմեացիներին, կրասոսին «մահացուցեալ»[24]: Հիշատակվում են Եղեսիայի Աբգար արքայի ու Հիսուսի նամակագրությունը[25], Արտաշեսի և

[20] Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 26:
[21] Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 42:
[22] Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 46:
[23] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 28:
[24] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 49:
[25] Խ ո ր ե ն ա ց ի. 1913, 56:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ալանների բախումը, Արտաշեսի՝ Սաթենիկի հետ ամուսնանալը, Արտավազդի՝ դևերի կողմից գերեվարվելն ու Մասիս սարի լեռան մեջ չղթայվելը[26]*:*

Տրդատի և Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Արշակ երկրորդի, Պապ թագավորի պատմություններից հետո խոսվում է Մեսրոպ Մաշտոցի[27] *և Արշակունի վերջին արքայի՝ Արտաշեսի մասին, որին պարսից արքան գահընկեց արեց հայ նախարարների պահանջով*[28]*:*

Հայրենասիրական այն ուղղվածությունը, որը տեսնում ենք Շնորհալու առաջին ստեղծագործության մեջ, իր շարունակությունն է գտնում հետագա մյուս գործերում:

Բոլոր այն բանասերները, որոնք քաջատեղյակ են հայ միջնադարյան մատենագրությանը, միաբերան հաստատում են, թե Շնորհալին եղել է մեծ նորարար: Դրա առաջին օրինակը տվել է XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որը չի եղել Կիլիկիայում, սակայն, քանի որ վաղ հասակում սովորել է Կիլիկիայում կրթված և Գոշավանքում իր ղպրոցը հիմնած Մխիթար Գոշի հաստատությունում, ծանոթ էր Շնորհալու նորարարական մոտեցումներին, որոնց թվում խիստ կարևոր տեղ են զբաղեցնում հայ միջնադարում այնքան սիրված հանելուկները: «Պատմություն Հայոց» աշխատության մեջ Գանձակեցին ամենաջերմ գովեստներով բնութագրելով Շնորհալուն, որն անվերապահ հեղինակություն էր այն ժամանակվա քրիստոնեական աշխարհում քաղաքակրթության առումով առաջատար բյուզանդական կայսրության երևելիների մոտ, գրում է. «Զայս իրրև ընթերցան, գովեցին զհաւատս հայոց ամենայն իմաստունքն յունաց: Եւ զի յամենայնի հանճարեղ էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց, և հանելուկս, զի փոխանակ առասպելեաց՝ զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս»[29]*: Գանձակեցու այս վկայությունը երկուստեք արժեքավոր է: Նախ՝ դրանից իմանում ենք, որ Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած հին վիպասքի հատվածները դեռ XII դարում երգում էին հայկական հարսանիքներում ու ժողովրդական տոների ժամանակ, և երկրորդ՝ դրանք մերժելու համար Շնորհալին ժողովրդի մշակույթի մեջ ընտանի դարձրեց գրական նոր տեսակ՝ հանելուկը: Ջմռռանանք՝ Գրիգոր Մագիստրոսի ՀԳ (73-րդ) թղթում կա հայ հին վիպասքի մի հրաշք հատված՝ կապված Արտաշես Արքայի հետ, որը չկա Խորենացու երկում.*

Ո՛ տայր ինձ զծուխս ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարդելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորաց[30]:

Տեղին է այստեղ նույնությամբ մեջբերել Շնորհալու նորարարությանը տրված Ֆրանսիացի հիանալի հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրե-

[26] *Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 66:*
[27] *Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 95:*
[28] *Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 98:*
[29] *Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 147:*
[30] *Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910, թուղթ ՀԳ, 87:*

դերիկ Ֆեյդիի հետևյալ բնորոշումը. «Կարելի է ստուգապես ասել, որ հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին ծնված Ֆրանսուա Ասիզից (François Assise) *երեք քառորդ դար առաջ, դարձավ առաջմղիչը այնպիսի բարեշրջման, որի նմանը մեզ հայտնի է գաղիականություն անունով: Նա ջանում էր քրիստոնեությունը մոտեցնել հավատացյալ զանգվածներին և դրա համար իրեն վերապահում էր աստվածաբանական վեճեր վարել ընտրելագույնների հետ՝ ժողովրդի գիտակցության մեջ կրոնի վարդապետությունը քարոզելով ավելի հրապուրիչ ձևերով՝ ներկայացնելով Աստծու անսահման սերը իր արարածների նկատմամբ: Նա դիմում էր ժողովրդին՝ չխորչելով գրել նրանց խոսակցական լեզվով: Այդ նորարարության հետևանքը եղավ ժողովրդական լեզվով ստեղծված մի քնարերգություն, որն իր մեջ չրջադարձ ունեցավ դեպի պարսկական զգացական ձևերը՝ իր խորքում միշտ կրելով քրիստոնեական խորհրդապաշտությունը»*[31]*:*

Ովքեր Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում աշխատել են ձեռագրերի հետ կամ նայել Մատենադարանի Մայր ձեռագրացուցակների երկու հատորները՝ լույս տեսած 1965 (Ա հատոր) և 1970 (Բ հատոր), կիմանան, թե միջնադարի որքան շատ ձեռագրերում են տարածում գտել Շնորհալու հանելուկները: Պատահական չէ, որ հայ գրատպության հիմնադիր Հակոբ Մեղապարտը 1513-ին Վենետիկում տպագրած «Տաղարանում» հոգևոր տաղերի կողքին տպագրել է աշխարհիկ բովանդակությամբ Հովհաննես Թլկուրանցու սերո տաղերը[32]*, նաև Ներսես Շնորհալու հանելուկներից մի հարուստ փունջ*[33]*: Նա իր գրքի վերնագիրը համապատասխանեցրել է իտալական Բարձր Վերածննդին, որի գլխավոր նպատակն էր արվեստի լեզվով քրիստոնեական կրոնը մոտեցնել մարդու իրական կյանքին, հոգևոր հարստության կողքին պատկերել մարդու գեղեցկությունը, բնության չքնաղությունը, որն առավել կարևորվում է և նպատակին հասնում, երբ մարդն ապրում է ըստ Աստծու 10 պատվիրանների: Սա Վերածննդի գերագույն խորհուրդն էր, որը Մեղապարտը տեսավ և՛ հայ միջնադարյան տաղերգության մեջ, և՛ Շնորհալու հանելուկներում: Հենց այդ նպատակով նա գրքի խորագիրը դրեց «Տաղարան է սայ հոգոյ և մարմնոյ»:*

Շնորհալու և միջնադարյան հանելուկների մասին սպառիչ խոսք է ասել Ա. Մնացականյանն իր «Հայ միջնադարյան հանելուկներ (V–XVIII դդ.)» մեծարժեք գրքում: Այդ գրքում Շնորհալու նորարարությունը բնութագրվում է հետևյալ ձևով. «Հանգամանալի հետազոտությունը թույլ է տալիս ավելի վստահորեն պնդել, թե հայ գրականության աշխարհականացման ամենացայտուն արտահայտություններից մեկը, իրո՛ք, Ներսես Շնորհալու հանելուկներն են: Նա գրեց ավելի մեծ թվով հանելուկներ, քան մյուս բոլոր հեղինակները միասին վերցրած: Երևույթի ուժը, սակայն, ոսկ քանակի մեջ չէ, այլ գաղափարական բովանդակության, ստեղծագործական հնարանքների, ինչպես նաև ժողովրդական հանելուկների լիարժեք օգտագործման՝ թե ձևի, թե բովանդակության առումով»[34]*:*

[31] Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2008, 172:
[32] Տաղարան. 1513, Թ մամուլ, 2–4:
[33] Տաղարան. 1513, Ե մամուլ, 11, Ը մամուլ, 5:
[34] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 99:

Շնորհալու հանելուկների մեկնաբանումներում Մնացականյանը դիտարկում է գրողի կրկնակի նպատակները: Դրա լավագույն ապացույցներից մեկը մրջյունին նվիրված հանելուկն է.

Կարի տեսայ ես չառ կարուան,
Որ կու իջնոյր ի խորառան.
Իշուին բոքիկ էր ՚ւ անփալան,
Մեկիկ հառիկ բառնան ու գան:

Շնորհալին, որպես մեծ մանկավարժ ու դաստիարակ, փառաբանում է թե մարդու և թե կենդանական աշխարհի աշխատանքային եռուզեռը[35]:

Շնորհալու հանելուկներն ունեն թեմատիկ բազմազանություն և ճանաչողական մեծ արժեք: Բացի Աստվածաշնչի կերպարներից, հայոց պատմության դեմքերից, բնության ու կենդանական աշխարհի մետաֆորներից (փոխանուններից), հեղինակն օգտագործել է նաև միջնադարյան քրիստոնեական խորհրդանիշները: Հայտնի է, որ Հիսուս Քրիստոսի խորհրդանիշներից է ցորենը: Շնորհալու հանելուկներում կարդում ենք.

Մեռանիմ և մահանամ,
Դարձյալ յառնեմ, կենդանանամ,
Ձաչս ի յերկինըս համբառնամ,
Բազմաւոեղօք պայծառանամ[36]:

Մեր օրերի մեծատաղանդ ու դասական բանաստեղծ Համո Սահյանն իր ստեղծագործական կյանքի վերջին տարիներին միջնադարյան ոգով հայրենիներ էր գրում: Արդյո՞ք նա չի ազդվել Շնորհալու վերոնշյալ հանելուկից, երբ գրում է.

Որքան հող կա, որքան երկինք
Ցորենի մեջ այս մի հառիկ:
Այս մի հառիկ ցորենի մեջ
Քանի հազար սկիզբ ու վերջ[37]:

Շնորհալու ստեղծած գրականության, հայ կյանքում նրա կատարած դերի կարևորության գիտակցումն ունեցել են հայ միջնադարի գրեթե բոլոր կարևոր դեմքերը: Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» թարգմանիչ, մեկնիչ և ծանոթագրող Հրաչ Բարթիկյանը 1144-ին Ուռհայի անկման վերաբերյալ Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկի հայ գրականության մեջ ունեցած նշանակության մասին գրում է. «երբ 1144 թ. Ուռհայի վրա խուժեցին Զանգիի հրոսակները, քաղաքի պաշտպանների առաջին շարքերում հայերն էին կանգնած «Թորգոմյան ժողովուրդը», «հայոց՝ ազգաց ցեղը», որի սխրանքն ու նա-

[35] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 75:*
[36] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1980, 265:*
[37] *Ս ա հ յ ա ն. 1997, 195:*

հատակությունը Շնորհալին համեմատում է Վարդանանց քաջերի սխրանքի հետ»[38]:

Շնորհալին նորարար է նաև «Ողբ Եղեսիոյ» պատմական չափածո քերթվածով, որը չարադրված է որպես դիմառնություն: Այս պատմական չափածո ստեղծագործությունը, որն արդի գրականագիտական ըմբռնումներով ներկա օրերում համարվել է պոեմ, հսկայական ազդեցություն է թողել հայ միջնադարի քնարերգության վրա: XIII դարից մինչև XVII դարը դրա նմանությամբ ստեղծվել են մի շարք արժեքավոր ստեղծագործություններ՝ նվիրված Երուսաղեմի անկմանը: Առաջինը եղել է Գրիգոր Տղան, որը «Ներսես Շնորհալու օրինակով, ինչպես անձամբ, այնպես էլ ուրիշներին հորդորելով և պատվիրելով մեծ թափ է հաղորդել Կիլիկյան Հայաստանի գրավոր դպրության զարգացման գործին»[39]: Գրիգոր Տղայի «Վասն առմանն Երուսաղէմի» պատմական չափածո քերթվածը կրում է Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» երկի զորեղ ազդեցությունը: 1187 թ. մահմեդականները Սալահադինի գլխավորությամբ գրավում են քրիստոնյաների սրբազան քաղաքը՝ Երուսաղեմը, ու կործանում խաչակիրների հիմնած թագավորությունը: Այս պոեմն առաջին անգամ տպագրել է Էդուարդ Դյուլորիեն որոշ կրճատումներով՝ զուգահեռ դնելով հայերեն ու ֆրանսերեն բնագրերը[40]:

Հետագայում Երուսաղեմի անկմանն անդրադարձել է XVII դ. փիլիսոփա և բանաստեղծ, Լիմ անապատի հիմնադիր Ներսես Մոկացին: Ինչո՞ւ է դարեր անց Մոկացին անդրադառնում Երուսաղեմի անկմանը: Այդ պատասխանը տալիս է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2079-ի գրչագրի Մոկացու գործին կցված հիշատակարանը, ուր ասվում է, թե հեղինակը իր ողբը գրել է եղբայրակիցների խնդրանքով: Սա եղել է ժամանակի պահանջը. Ներսես Մոկացու ապրած ժամանակահատվածում թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանը տառապում էին երկու մահմեդական տերությունների լծի տակ[41]: Մոկացու քերթվածը ևս կրում է Շնորհալու «Ողբ Եղեսիոյ» երկի ազդեցությունը:

Շնորհալին «Ողբ Եղեսիոյ» պոեմում օգտագործել է դիմառնության գեղարվեստական հնարանքը՝ իր ասելիքն առավել տպավորիչ դարձնելու համար: Չնայած Եդեսիան հայաբնակ քաղաք էր, սակայն այն Մեծ Հայքի քաղաքներից չէր: Սա առիթ էր Շնորհալու համար ողբալու հարազատ Մեծ Հայքի պետականության կորուստը, որի խորհրդանիշը «տիեզերահռչակ» Անի մայրաքաղաքն էր: Եդեսիան որդեկորույս մայր էր, որը ողբում էր իր որդիների անդառնալի կորուստը: Նա իրեն ողբակից է կանչում համայն քրիստոնյա աշխարհը և հատկապես Հայաստանի մայրաքաղաքներ Վաղարշապատին ու Անիին.

Բայց և զքեզ յայս հրաւիրեմ, արևելեան քաղաքդ Անի,
Կցորդ լեր ղու իմոյս ձայնի և սփոփիչ տարակուսի:

[38] *Ո ւ ռ հ ա յ ե ց ի. 1973, V:*
[39] *Գրիգոր Տղա. 1972, 30:*
[40] *Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2004, 24:*
[41] *Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2009, 88:*

Քանզի երբեմն և դու էիր վայելչական հարսն ի քօղի,
Մերձաւորաց յոյժ ցանկալի, հեռաւորաց փափագելի[42]:

Ողջ «Ողբ Եդեսիոյ» երկը շնչում է Մեծ Հայքի պետականության կորստի ցավով, Անիի բնակիչների տարագրության փաստով: Ողբում ներկայացված է Զանգի ամիրայի հրոսակների վայրագությունները՝ եկեղեցիների կործանումը, անմեղ բնակիչների կոտորածը, քրիստոնյաների գերեվարումը: Որպես որդեկորույս մայր՝ Եդեսիան անիծում է Զանգի ամիրային, նրա հրոսակախմբերին ու քերթվածի վերջում իրեն հուսադրում է խաչակիրների սպասվող արշավանքով: Շնորհալին Մեծ Հայքի վերածնունդն արտահայտել է հետևյալ տողերում.

Յայնժամ որդիքդ իմ հեռացած, որք այժմ յինէն էք բաժանած,
Գայք ի վերայ բարձրեալ կառաց, պալարակապ երիվարաց,
Որ ցրուեցաք յամէն կողմանց, չորեքծագեան տիեզերաց[43]:

Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկը համարվել է կարևոր ստեղծագործություն Արևելքի քրիստոնյաների ու խաչակիրների քաղաքական կապերը ներկայացնելու առումով: 1869 թ. այն թարգմանել է Էդուարդ Դյուլորիեն՝ շատ բարձր գնահատելով գրական այդ գործի պատմականությունը[44]:

Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկն արժեվորել է Վալերի Բրյուսովն իր «Поэзия Армении» ժողովածուում: Նա Ներսեսին համարել է հայ եկեղեցու ամենանշանավոր բանաստեղծներից, և նրա հիմները համեմատել է Պոլ Վերլենի "Sagesse" («Իմաստություն») գրքի բանաստեղծությունների հետ[45]:

Շնորհալին նորարար է նաև հայ չարականների բնագավառում: Միջնադարյան գրական այս տեսակը սկիզբ է առել V դարում և նրա առաջին հեղինակները դարձան Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը: Շնորհալին տաղաչափական նոր ձևեր մտցրեց չարականների մեջ: Դրանք դարձան շատ հիշելի, նպաստեցին հայերենի այբուբենի տառերի հերթականության ընկալելուն. չէ որ այդ տառերն ունեին նաև թվային արժեք ու այս առումով դրանց հերթականությունն անխափան իմանալը կիրառական արժեք էր ստանում.

Աչխարհ ամենայն՝
Առ իս նայեցեալ
Ախտակից լերուք:
Բանամ զշրթունս
Բարբառիմ լեզուաւս,
Բողոքեմ զանճնէս:
Գող եղէ մեղաց,

[42] *Շ ն ո ր հ ա լ ի. 1973, 36:*
[43] *Շ ն ո ր հ ա լ ի. 1973, 131–132:*
[44] *Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2004, 24:*
[45] Поэзия Армении. 1987, 44–45.

Գտող կորստեան,
Գուբ ինձ փորեցի[46]:

Ներսես Շնորհալու չարականները թարգմանվել են տարբեր լեզուներով: Դրանք 1879 թ. թարգմանել է Լազարյան ճեմարանի համբավավոր պրոֆեսոր Մկրտիչ Էմինն իր «Шаракан» ծավալուն աշխատությոյան մեջ[47]: Շնորհալու չարականները ռուսերենով վերստին թարգմանվել են «Поэзия Армении» ժողովածուում, իսկ 1989-ին լույս են տեսել Երևանում Սուրեն Զոլյանի թարգմանությամբ և Ն. Թահմիզյանի ծանոթագրություններով: Այդ չարականներից է նաև Վարդան Մամիկոնյանին և Ավարայրի հերոսամարտին նահատակված հայ նախարարներին փառաբանողը: Շարականն ունի Ներսեսի երգ դիմակապը: Շարականի մեջ փառաբանվում են Վարդան Մամիկոնյանը, Խորենը, Արտակը, Համայակը, Տաճատը, Վահանը, Արսենը, Գարեգինը և 1036 մյուս նահատակները, որոնց սրբազան գործի հիշատակը պահպանվում է բոլոր ճշմարիտ հայերի սրտերում: Վարդանանց և Ղևոնդյանց անունները մտել են Յամամատուրքների մեջ ու հայ ժողովրդի սիրելի եկեղեցական տոներից են առ այսօր, որոնց տոնակատարության ժամանակ երգվում են Շնորհալու «Նորահրաշ պսակատոր» և «Ղևոնդեանց» չարականները:

Հետևելով Ոսկեդարի ավանդույթներին՝ Շնորհալին լայնորեն օգտագործել է հայ ժողովրդական բանահյուսությունը: Նա գիտեր՝ ողջ միջնադարի հայ բանաստեղծների համար կատարելության ցուցանիշ էին Հոմերոսի «Իլիականն» ու «Ողիսականը»: Իսկ այդ չհնացող դյուցազներգությունները ստեղծվել են հին հունական բանահյուսության հիմքի վրա:

Ռուս միջնադարյան գրականության բացառիկ գիտակ և տեսաբան Դմիտրի Լիխաչովը միջնադարյան սլավոնական գրականության մասին ասում է. «Բայցևայնպես, որքան էլ տարբեր լինեին բանահյուսությունն ու գրականությունը միջնադարում, դրանք իրար հետ ունեին առավել մեծ աղերսներ, քան նոր ժամանակներում»[48]:

Շնորհալին հունարենին տիրապետում էր մայրենիի մակարդակով և ծանոթ էր Պլատոնի ու Արիստոտելի աշխատություններին, ավելին՝ երկու հանճարեղ փիլիսոփաները նրան ծանոթ էին դեռ շատ երիտասարդ տարիքից: Այդ մասին կա վկայություն «Վիպասանությունում» երկում.

Յաթենականըն քաղաքի
Զանճն իմաստիւք ոչ կըրթեցի.
Ուր լըսարանըն Պղատոնի,
Եւ չափ ոտիւք Հոմերովնի,
Ուր ստորոգողն Արիստոտէլ,
Տաըն բանիւ գըրողն էի[49]:

[46] *Շ ն ո ր հ ա լ ի. 1982, 26:*
[47] Э м и н. 1879.
[48] Л и х а ч е в. 1979, 76.
[49] *Շ ն ո ր հ ա լ ի. 1981, 31–32:*

Մեր օրերի միջազգային բանասիրության մեջ էլ ընդունված կարծիք է, որ հին ժամանակներում և միջնադարում գրաքննադատությունը հայացքով չրջվում էր դեպի Պատոնն ու Արիստոտելը[50]:

Շնորհալու բանահյուսական տաղաչափությունից օգտվելու և ժողովրդական թեմաներն արծարծելու խնդրի վերաբերյալ հումանհոմեական գրականության գիտակ Առաքել Առաքելյանը գրում է. «Ներսես Շնորհալու տաղաչափության լավագույն ուսումնասիրությունը տվել է Մ. Աբեղյանը իր մեծարժեք գրքի՝ «Տաղաչափության» մեջ: Այդ ուսումնասիրությունից երևում է, որ Շնորհալին, բացի այն, որ բազմաժանր գրող է, նա բազմազան չափերով է գրել նաև տաղերը, իսկ «Աւետեաց» տաղը գրել է գուսանական հայրենների չափերով»[51]:

Բանասերներն ու պատմաբանները հայ միջնադարի տարբեր մատենագիրների երկերն ուսումնասիրելիս փաստում են, թե վերջիններս տաղաչափական խնդիրներում ևս եղել են Շնորհալու հետևորդները. «Օգտագործելով իր նախորդների կիրառած տաղաչափական ձևերը, կրելով այդ բնագավառում հատկապես Ներսես Շնորհալու ազդեցությունը»[52]:

Բացի չարականներից Շնորհալին գրել է նաև տաղեր ու գանձեր, որոնք երգվել են հայկական եկեղեցիներում: «Չափազանց մեծ է Ներսես Շնորհալու դերը հայ եկեղեցու ծեսերի ու տոների կարգավորման գործում»[53],– գրել է Շնորհալու տաղերի ու գանձերի քննական բնագրերի կազմող և մեկնաբան Ա. Քյոշկերյանը:

Բնականաբար, տաղերի ու գանձերի թեմատիկան կապվում է Հին ու Նոր կտակարանների հետ: Բանաստեղծը գանձերի ու տաղերի համար գրել է նաև փոխեր: Շատ-շատ են Հիսուսի ծննդյանը նվիրված տաղերն իրենց փոխերով: Տաղերում ևս Շնորհալին կիրառել է այբբենականը: Դրա լավագույն օրինակը «Տաղ վասն խաչելութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ» քերթվածն է: Բերենք առաջին երեք տները և տաղի վերջին տունը.

Անեղ Որդին Հաւր միածին բազկատարած
Այսաւր եկաց ի յաւետնին մեղաւորաց:
Բարձեալ մարմնով ի խաչն անճառ խոնարհութեամբ:
Բերեալ բազկաւ ըղհեռացեալ ազգըս մարդկան:
Գառն անարատ, ածեալ ի սպանդ պատարագի,
Գայ հաշտութեամբ Հաւր՝ ի բառնալ զմեղս աշխարհի:
… Քո զաւրութեամբըդ պահպանեա՛ զփըրկեալ քո հաւատս,
Քեզ երգելով երկրպագեմք այժմ յաւիտեանս[54]:

Ինչպես պարզ երևում է, բանաստեղծի չնորհն այնքան հզոր է, որ ամեն տան երկրորդ տողը ևս ունի նույն այբբենականապային հնարը:

---

[50] Mcdonal. 2007, 44.
[51] *Առաքելյան. 1959, 339:*
[52] *Հարությունյան. 1985, 193:*
[53] *Շնորհալի. 1987, ԺԳ:*
[54] *Շնորհալի. 1987, 86, 90:*

Այդքան բնական, անբռնազբոս տաղաչափական հնարանքները վկայում են Շնորհալու բացառիկ տաղաչափական ու երաժշտական ունակությունների մասին: Շնորհալու երաժշտական մեղեդիների գիտակ Ն. Թահմիզյանը տաղերի բովանդակային ու մեղեդային խնդիրների վերաբերյալ ունի հետևյալ դիտարկումը. «Մեծ երգեցողի երաժշտաբանաստեղծական խառնվածքի արտահայտչակերպի ու նրա եկեղեցական գործերի մեջ աչխարհիկ անսքող տարրերի առկայության հարցերը, արվեստագետի ժառանգության վերաբերյալ առավել ընդհանուր հարցերից են»[55]:

Գանձերի մեջ Շնորհալին պահպանել է եկեղեցական գրական տեսակի պարտադիր տաղաչափական կանոնները, միաժամանակ տեսանելի ձևով գանձերի խորագրերում դրել է քարոզ բառը՝ հավաստելով, թե գանձը քարոզի բանաստեղծական, երգվող տեսակն է:

Շնորհալին չատ է կարևորել լուսավորությունը, մարդու կրթված ու գիտելիքներով զինված լինելը: Նա գրել է ուսուցողական-դիդակտիկ ոտանավորներ, որոնց մանկավարժական-դաստիարակչական խորաթափանցությունը հիացմունք է պատճառում: Մանկավարժական նպատակով գրված ոտանավորները ևս ստեղծվել են այբբենականով՝ Ա-ից մինչև Ք: Ամեն մի տառի հետ նա տալիս է մի այնպիսի խրատ, որն աշակերտին կապելու է ուսման, կրթության, աստվածային պատվիրաններով ապրելու պատասխանատվության հետ: Ա տառը լիովին քրիստոնեական վարդապետության է բխում.

Այբն առաջին ըզքեզ տըղայ, հանէ յիմաստըն գերակայ.
Երկրորդութեանըն մերձակայ
Լինիք երիք ստեղամբք նորա[56]:

Գ տառի բացատրական բնութագրման մեջ երևում է նաև XII դ. հայ դպրոցի պատկերը: Աշակերտները գրել են տախտակի վրա.

Գիմըն գանձ է քեզ բիւր բարի,
Գրելով զիմաստս ի տախտակի.
Ջնա արկ ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան զոսկի[57]:

Թ տառը խրատում է ուշադիր յուրացնել այն իմաստուն գրքերը, որոնք Հին կտակարանում կապվում են Սողոմոն Իմաստունի հետ.

Թոյն Թէ միտ դընես, առէ բանին
Իմաստութեան Սողոմոնին՝
Ոչ կարոտիս իմում խրատին,
Քանզի նովաւ խօսի Հոգին[58]:

[55] *Թ ա հ մ ի զ յ ա ն. 1973, 55:*
[56] *Շ ն ո ր հ ա լ ի. 1928, 369:*
[57] *Շ ն ո ր հ ա լ ի. 1928, 370:*
[58] *Շ ն ո ր հ ա լ ի. 1928, 371:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Բոլոր միջնադարագետները, ովքեր հետազոտել են Շնորհալու ստեղծագործությունը, հետևելով Ղ. Ալիշանի գնահատականին, բանաստեղծի գլուխգործոցը համարում են «Յիսուս Որդի» ծավալուն քերթվածը, որը ստեղծվել է Գրիգոր Նարեկացու հանճարեղ «Մատեան ողբերգութեան» երկի հզոր ներշնչանքով: Այդ իրողությունը շեշտում է նաև Մ. Աբեղյանը. «Շնորհալին այս երկի համար ազդվել է Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատյանից: Մյուս կողմից նա հետևել է նաև Գրիգոր Մագիստրոսի «Հազարատողյանին»: Ինչպես վերջինիս մեջ ոտանավորով տրված է Աստվածաշնչի բովանդակությունը, նույնպես Շնորհալու երկի վիպական կողմն առնված է Ս. Գրքից»[59]:

Շնորհալին ամենայն խորքով յուրացրել էր Գրիգոր Նարեկացու Մատյանի պատգամները: Այդ Մատյանը մի անզուսպ ճիչ է մարդկային կյանքի թերացումներից ծնված, մի հզոր ահազանգ մարդու բազում մեղանչումներից ծնված, ու այդ ճիչն ու ահազանգը դարերի համար են: Շնորհալին «Յիսուս Որդի» երկով մարդկության անցած ուղին պատկերում է ըստ Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարանների վարդապետության, պատկերում է հստակ ու հասկանալի, որպեսզի մարդը չանա ապրել ըստ Աստվածաշնչի պատվիրանների: «Յիսուս Որդի» երկն առկա է բազմաթիվ ճեռագիր օրինակներով, այն հաճախ է տպագրվել ու եղել է սիրված: Պոեմն առաջին անգամ աշխարհաբարի է վերածել Վիգեն Ղազարյանը՝ իր թարգմանությանը կցելով սեղմ, սակայն խիստ ուշագրավ առաջաբան: Այդ առաջաբանում նա իրավացիորեն Շնորհալու նշանավոր նախնուն՝ Մագիստրոսին, բնութագրում է հետևյալ ձևով. «...Գրիգոր Մագիստրոսը, ԺԱ. դարի այդ առեղծվածային հանճարը, հայկական ուսումնական հետևանքի այդ տխուր ասպետը, որին կարող է նախանձել նույնիսկ մեր դարի ինտելեկտուալը»[60]:

Շնորհալու գլուխգործոցը գնահատվել է որպես աստվածաբանական հանրամատչելի չարաղրանք, որը հայերի մեջ ամրապնդելու էր քրիստոնեական վարդապետությունը ու նպաստելու էր հասարակական բոլոր խավերի ինքնամաքրմանը:

Միջնադարյան հայ գրականության գիտակ Մայիս Ավդալբեգյանը Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմում մատնացույց է անում առաջին հերթին դաստիարակ-մանկավարժին[61]: Քրիստոնեական գրականության մեջ միջնադարյան հեղինակներն, ըստ իրենց երևակայության սահմանների, ներկայացնում էին դժոխքի ու դրախտի տեսարանները: Շնորհալին էլ «Յիսուս Որդի» երկն ավարտում է Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան տեսարանով ու Աստծու արդար դատաստանով: Գործին կցված հիշատակարանից իմանում ենք գրության թվականը՝ 1152.

Ի վեց հարիւր Հայոց թուական
Եւ առաջին սկըսեալ նոր ամ,
Բանըս գրեցաւ աղօթական
Երկհազարեան տամբ յանկական:

---

[59] *Աբեղյան. 1970, 123:*
[60] *Շնորհալի. 1991, 5:*
[61] *Շնորհալի. 1977, 54:*

Շնորհալին հայտնում է, թե ինչու այս երկով մարդիկ կարմրանան ու կզգաստանան՝ դասեր քաղելով նրանից.

Սովաւ զարմնուն և զգաստանան,
Թէ ընթեռնուն մըշտատևական[62]:

Շնորհալին գրել է նաև աղոթքներ: Աղոթքը, որն այնքան կարևոր է քրիստոնյա հավատացյալի, նաև այլակրոնների համար, մարդուն հոգեկան հանգստություն պատճառող, Աստծու հետ կապ հաստատելու ամենաընդունված և ամենաանձնական իրողությունն է: Մատթեոսի Ավետարանում աղոթքի մասին կարդում ենք. «Այլ դու երբ աղոթես, մտի՛ր քո սենյակը, փակի՛ր քո դռները եւ ծածուկ աղոթիր քո Հորը, եւ քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես»[63]:

Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթքը միջազգային տարածում ունի. այն թարգմանվել է աշխարհի 36 լեզուներով՝ անգամ սանսկրիտով: Այս աղոթքը համամարդկային ու մարդասիրական իմաստուն խրատ է: Հավատացյալը խնդրում է Աստծուն օգնել մարդու, որ նա չընթանա արատավոր ճանապարհով, հաճույք չստանա ուրիշների հետ պատահած չարիքի մասին լսելով, իր բերանից սուտ խոսք դուրս չգա, իր սրտում չմտածի չարության մասին, իր ձեռքերն անիրավություն չգործեն, և իր ոտքերը չբռնեն անիրավության ճանապարհը, այլ միայն ու միայն ինքը մնա Աստծու պատվիրանների սահմաններում.

Ամենախնամ Տէր,
Դի՛ր պահապան աչաց իմոց՝ զերկիւղ քո սուրբ՝
Ոչ ևս հայիլ յարատ.
Եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել զբանս չարութեան,
Եվ բերանոյ իմոյ՝ ոչ խոսիլ զստութիւն,
Եվ սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զչարութիւն,
Եվ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն,
Եվ ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանապարհս անօրենութեան.
Այլ ուղղեա զշարժումն սոցա
Լինիլ ըստ պատուիրանաց քոց յամենայնի[64]:

Շնորհալին հայ եկեղեցու ջատագով

Շնորհալին հստակ ու նպատակային իր բոլոր քերթվածներում կանոնակարգում է հայ հասարակությանը և ընդհանրապես մարդուն: Նա եռանդուն կրոնական և հասարակական գործիչ էր ու սերտ կապերի մեջ է եղել ժամանակի նշանավոր դեմքերի հետ՝ թե՛ հայ իրականության մեջ և թե՛ օտար: Հատկապես այդ իրողությունը երևում է այն նամակներում, որոնցում նա պաշտպանել է հայ եկեղեցու շահերը:

Շնորհալու ազգանպաստ գործունեությունը երևում է նրա թղթերում, որոնք հոգևոր նվիրյալ գործչի իրական կյանքում գործադրած ջանքերի ար-

[62] *Շ ն ո ր հ ա լ ի. 1997, 214:*
[63] *Մ ա տ թ է ո ս. 6, 6:*
[64] *Շ ն ո ր հ ա լ ի. 1982, 48:*

ձագանքներն են: Նա նամակագրական կապի մեջ էր բյուզանդական Մանվել կայսեր հետ, երբ իր եղբոր՝ Գրիգոր Գ. Պահլավունու (Ամենայն Հայոց կաթողիկոս, 1113–1166) օգնականն ու խորհրդականն էր: Այդ թղթից և ընդհանրապես նրա ողջ ստեղծագործությունից պարզորոշ երևում է, թե Շնորհալին որքան քաջ տիրապետում էր հայ ժողովրդի, նաև այն ժամանակվա քրիստոնյա ազգերի պատմությանը, Հին ու Նոր կտակարանների վարդապետությանը և դրանց շուրջ ստեղծված այլալեզու գրականությանը: Մանվել կայսերը, ներկայացնելով հայ եկեղեցու անցած ուղին, փաստում է, թե ամեն ինչ ասված է ճշգրիտ և առ կայսրն ունեցած խորին հարգանքով. «Արդ՝ ըստ խնդրոյ աստուածասիրութեան խոհեմագունիդ անձին, ո՛վ պատուական գլուխ և ի մանկան հասակի ունող զիմաստութիւն ծերոց՝ որպէս զՍողոմոն և զԴանիել, եղաք առաջի պատուականութեան ձերոյ համառօտ բանիւ զեկեղեցւոյ Հայաստանեայց զճշմարիտ դաւանութիւն»[65]:

Հայ եկեղեցու ազգապահպան խնդիրներում Շնորհալու դիրքորոշումն այնքան համահունչ է XX դարի I կեսի նշանավոր բյուզանդագետ ու հայագետ Նիկողայոս Ադոնցի հետևյալ բնորոշմանը. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում էր ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ամեն ազգի հոգեկան կյանքը»[66]:

Բնականաբար, Շնորհալին հայ եկեղեցու շահերը պաշտպանում էր նաև երկրի ներսում: Նա մի թուղթ ունի ուղղված այն հայերին, որոնք դեռ հեթանոս են ու պաշտում են արեգակը: Թուղթը կոչվում է «Տեառն Ներսիսի կաթողիկոսի Թուղթ ի Սամոսատիա քաղաք յաղագս արեւտրդեացն դարձի»: Արդեն թղթի խորագրից երևում է, որ հոգևոր հայրը մտածում է դավանաբանական խնդիրներում ազգային եկեղեցուց չեղված հայերին դարձի բերել: Շնորհալին, որ երազում էր Մեծ Հայքում վերականգնել հայկական պետականությունը, այդ գերագույն խնդրում տեսնում էր համայն հայությանը լուսավորչական եկեղեցու շուրջը համախմբելու գերխնդիրը: Ահա թե ինչ է գրում թղթում. «Գիտելի է ձեզ, զի վաղ ուրեմն եհաս ի ձէնջ գիր առ մեզ արևտրդեացդ, որք ի քաղաքի ձերում բնակեն, եթէ կամին և աղաչեն ի հօտն Քրիստոսի խառնել զնոսա. զի որպէս ազգաւ և լեզուաւ ի տոհմէ Հայոց են, յօժարին զի և հաւատով եւ հոգւով ի նոյն միաբանութիւն հաւասարեսցին ընդ նոսա»[67]:

Շնորհալին քրիստոնեական կրոնից չեղված հայերին դարձի բերելու համար իր թղթում առաջադրում է գործնական քայլեր, որոնց շնորհիվ այդ անհավատներին կբացատրվեն Հին և Նոր կտակարանների ծածուկ մտքերը: Նրա հրապարակախոսության և քաղաքական երազանքների լավագույն դրսևորումն առկա է նրա «Ատենաբանութիւն» ճառում, որն արտասանել է կաթողիկոս ընտրվելու առիթով[68]: Իր ճառում նորընծա կաթողիկոսը ցավով նշում է մայր հայրենիքում պետականության կորստի փաստը և կաթողիկոսական ամոռի Մեծ Հայքից տարագրվելը:

---

[65] *Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության. 2003, 478:*
[66] *Ա դ ո ն ց. 2006, 45:*
[67] *Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության. 2003, 463:*
[68] *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան. 2002, 788:*

Շնորհալու գրական ժառանգությունը բազմաժանր է և հարուստ: Ի պատիվ հայ եկեղեցու նվիրյալ գործիչների՝ այն պահպանվել է մեծ խնամքով:

Շնորհալուն նվիրված «Պատմութիւն վարուց» երկում կա այն փաստը, թե կաթողիկոսի սևեռուն հայացքը տարածվել է բոլոր այն վայրերը, որտեղ հայեր են բնակվում՝ «յԱղուանից մինչեւ ի կողմանս Սուրացւոյ և մինչեւ յարեւմտային կողմանս»[69]:

Շնորհալու հետաքրքրությունների սահմաններում է եղել նաև տիեզերագիտությունը: Գրիգոր Մագիստրոսի ջանքերով XI դարում Անանիա Շիրակացու գիտական, աստվածաբանական ժառանգությունը դրվել է շրջանառության մեջ: Այդ է վկայում այն փաստը, որ XII դ. նշանավոր բժշկապետ Մխիթար Հերացու պատվերով Շնորհալին գրում է դիմառնական ձևի մեջ նոր գործ՝ «Յաղագս երկնից և զարդուց նորա՝ բարառնաբար ի դիմաց նորին ի չափ երկոտասանից պարզեալ ոտից ի խնդրոյ առն բժշկապետի և աստղագիտի Մխիթարայ»:

Հիացած Շնորհալու բազմաժանր ստեղծագործությամբ՝ Ալիշանը վկայակոչում է XVII դ. կեսերի Ֆրանսիացի վարդապետ Վելրֆրուայի խոսքերը Շնորհալու մասին. «Բայց կա՞ տեսակ մի հմտության՝ որում հաջողած չըլլա այս հռչակավոր Հայրապետս»[70]:

Շնորհալին հասարակական խավերի դաստիարակ

Շնորհալու կրոնական, քաղաքական, հայրենասիրական գաղափարների գերազանց դրսևորումը տեսնում ենք «Թուղթ ընդհանրական» գործում: Սա հայերին ուղղված պատգամ է դարերի համար: Այն աղերսներ ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» եզրափակող Ողբի, Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» 56-րդ դրվագի հետ, որոնցում խիստ քննադատվում են հասարակական դրեթե բոլոր խավերը՝ իրենց քաղաքացիական ու մարդկային պարտքը չկատարելու համար: «Թուղթ ընդհանրականը» ուղղված է վանքերի խարազնազգեստ կրոնավորներին, վանական սուրբ ուխտերի առաջնորդներին, աշխարհի մեջ գտնվող եկեղեցու առաջնորդներին, որոնք եպիսկոպոս են կոչվում, քահանաների դասին, աշխարհի իշխաններին, զինվորների դասերին, քաղաքացիներին, երկրագործներին և համայն ժողովրդին, կանանց: Ինչպես պարզ երևում է, կաթողիկոսի պահանջներն ուղղված են հոգևոր ողջ հիերարխիային՝ քահանայից մինչև եպիսկոպոս:

Եթե մարդը որոշում է դառնալ հոգևորական, ապա սրբությամբ պետք է կրի այդ կոչումը և ոչ մի պարագայում չչեղվի իր ընտրած ճանապարհից: Որպեսզի կաթողիկոսի հեղինակավոր խոսքը սոսկական քարոզի չվերածվի, Շնորհալին բերում է կյանքից քաղած խոսուն օրինակներ: Երբ միմյանց հանդիպում են տարբեր միաբանությունների հոգևորականներ, փոխանակ մտքեր փոխանակեն հոգևոր խնդիրների շուրջ, իրար հարցնում են, թե ինչպիսին է այգու բերքը: Եվ մեկը նրանցից թախծոտ հայացքով սկսում է պատմել այգու աղետների մասին: Որոշ ծառերի բերք տուժել է ճիճուներից, մի շարք ծառեր ծաղկընկեց են եղել, խաղողի ողկույզներն՝ արևկեզ եղել, և ինքը չգիտի, թե

[69] *Շ ն ո ր հ ա լ ի. 1854, 78:*
[70] *Ա լ ի շ ա ն. 1873, 491:*

դրա վերջն ինչ է լինելու: Եվ մյուս միաբանը սկսում է ղեղատոմսեր թելադրել այգին փրկելու համար[71]*:*

Շատ երկար ու զայրալից Շնորհալին խոսում է գողության մասին՝ պնդելով, թե չկա մեծ կամ փոքր գողություն: Աստծու մատով գրված օրենքներում սպանությունից ու չնությունից հետո մեծագույն մեղք է գողությունը[72]*: Նա խարազանում է նաև բամբասանքը:*

Վանական սուրբ ուխտերի առաջնորդները պատասխանատու են իրենց ենթակաների թե՛ հոգևոր և թե՛ մարմնական կարիքների խնդիրներում: Առաջնորդն իրավունք չունի լինելու կողմնակալ: Կերակուրների բաշխումը պետք է լինի ըստ աշխատանքի՝ շատ կամ քիչ: Երբեք չպետք է անտարբեր լինել արդեն ծերացած միաբանների նկատմամբ: Եպիսկոպոսները, որոնք թեմերի առաջնորդներ են, պետք է հիշեն Պողոս առաքյալի պահանջը. «Եպիսկոպոսը պետք է լինի անարատ՝ որպես Աստծո տնտես, հեզ, ցածր, պարկեշտ, հյուրասեր, բարեսեր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասեր, ո՛չ կռվող, ո՛չ խփող, այլ՝ հանդարտ»[73]*:*

Շատ խիստ զգուշացումներ ուղղվում են քահանաներին, որոնք անմիջական շփման մեջ են ժողովրդի հետ: Նրանք ամեն բանում պետք է լինեն օրինակելի. հետևեն իրենց հագուստի մաքրությանը, աշխարհական զգեստներով ու կեղտոտ տրեխներով երբեք եկեղեցու բեմ չբարձրանան: Քահանաները միմյանց նկատմամբ ոխ ու նախանձ չպետք է ունենան: Դա հատկանիշ է տգետների համար[74]*:*

Զինվորականները չպետք է իրենց ռոճիկից դուրս աղքատներից բռնություններ անեն, բացի կռվի զենքերից, անհրաժեշտաբար պետք է ունենան հավատի զենքը: Քաղաքացիները երբեք չպետք է խաբեն միմիտ ռամիկներին: Երկրագործները հարբեցողությամբ չզբաղվեն, անարգալից խոսքերով չխոսեն, որոնց պատճառով կարող են սպանություններ լինել: Իրենց երեխաներին ըստ Աստծու պատվիրանների դաստիարակեն մանուկ հասակից: Համայն ժողովուրդը սեր պետք է ունենա աղքատների, մերկերի, հյուրերի, բանտարկյալների, հիվանդների նկատմամբ[75]*:*

Իշխաններին պատգամ է տրվում չնեղել աղքատներին ու տնանկներին, իրենց երկրի վրա անիրավ գործավարներ ու գավառապետներ չնշանակեն, պաշտպանեն այրիների իրավունքները, իրենց ենթակա մարդկանց չծառայեցնեն անբան կենդանիների նման[76]*:*

«Թուղթ ընդհանրականի» վերջին ուղերձը կաթողիկոսը հղում է հայ կանանց: Հայ կանայք իրենց պետք է զարդարեն ոչ թե ոսկով ու արծաթով, այլ ամոթխածությամբ ու պատկառանքով: Ջպետք է օտար ներկերով այլագունեն իրենց դեմքը և դրանով գայթակղեն անմիտ երիտասարդներին: Կանանց ամենամեծ պարգևը նրանց մանուկներն են, որոնց հետ վերջին դատաստանի օրը Տիրոջն ասելու են. «Ահա ես և իմ մանուկները, որոնց ինձ տվեցիր»[77]*:*

---

[71] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 44–45:
[72] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 54:
[73] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 67:
[74] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 88:
[75] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 121:
[76] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 105:
[77] Շ ն ո ր հ ա լ ի. 1991, 123:

Ներսես Շնորհալին իր գերթվածներով, իր քաղաքական, հասարակական, կրոնական, մանկավարժական գործունեությամբ XII դարը դարձրեց «արծաթե դար»՝ որպես այդ ժամանակահատվածի հայ իրականության մեծագույն մտածողը:

Եզրակացություն

Ներսես Շնորհալին XII դարի հայ միջնադարյան գրականության մեծագույն դեմքն է, հայ եկեղեցու սուրբ հայրերից, որն իր ապրած ժամանակահատվածում միջազգային համբավ ուներ համայն քրիստոնեական աշխարհում:

Շնորհալին հրաշալի տիրապետում էր իր ժամանակի քաղաքակիրթ երկրների լեզուներին ու գործնական կապերի մեջ էր թե Մեծ Հայքի և թե Կիլիկյան Հայաստանի նշանավոր հոգևոր գործիչների և ազնվական դասի ու արքունիքի հետ: Բազմագիտակ անհատականություն էր՝ օժտված բազում ձիրքերով, որի համար էլ կոչվել է Շնորհալի: Նա բանաստեղծ էր, երաժիշտ, գրիչ, թարգմանիչ, աստվածաբան, տիեզերագետ, մանկավարժ:

Շնորհալին առաջինը հայ իրականության մեջ ստեղծեց պատմական պոեմի մի քանի փայլուն օրինակներ: «Վիպասանությունն» պոեմով ապացուցեց, որ խորենացու «Հայոց պատմության» ազգային ծրագիրը ներգործող ուժ ուներ Կիլիկյան Հայաստանի թե հոգևոր և թե աշխարհիկ իշխող դասի համար: «Ողբ Եդեսիոյ» պոեմով ներշնչեց իր ժամանակակիցներին՝ վերականգնելու հայ պետականությունը Մեծ Հայքում՝ նրանց երբեմնի չեն մայրաքաղաքներում՝ Վաղարշապատում և Անիում:

Շնորհալին լայնորեն օգտագործեց հայ պաշտոնական գրականության մեջ մինչ այդ գոյություն չունեցած ժանրեր, որոնց մեջ ամենանշանակալին նրա հրաշալի հանելուկներն են: Նա իր գերթվածների լեզուն եվրոպական Վերածննդի գրականությունից առաջ դարձրեց ժամանակի խոսակցական լեզուն:

Ժամանակակիցները նրան համարում էին երկրորդ Գրիգոր Լուսավորիչ: Նշանավոր ու զարմանահրաշ քաղաքական գործիչ, գիտնական ու մատենագիր Գրիգոր Մագիստրոսի ծոռը դարձավ հայ ժողովրդի պետականության ջատագովը:

Շնորհալին նոր շունչ հաղորդեց V դարից հայ եկեղեցու համար այնքան կարևոր շարականներին՝ դրանք կապելով իրական կյանքի հետ: Շնորհալու մշակած տաղաչափական նոր ձևերը լայնորեն շարունակություն ունեցան հետագա դարերում:

Իր պլուխգործոց «Յիսուս Որդի» գերթվածով բանաստեղծն Աստվածաշնչի Հին ու Նոր կտակարաններն ավելի մոտեցրեց հավատացյալներին:

Շնորհալու մանկավարժական հայացքներն այսօր էլ ուսանելի են ու կիրառելի: Նրա որոշ գործեր վերժամանակյա երևույթներ են և կոչնկեցեն մարդկությանը՝ անկախ ազգային ու կրոնական պատկանելիության, որովհետև բոլոր մեծ գրողները խորապես ազգային լինելով նաև համամարդկային են:

Ալիտա Դոլուխանյան – բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննա-

դասավանդություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 36 գրքի և շուրջ 700 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1970, Երկեր, հ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 635 էջ:

Ադոնց Ն. 2006, Երկեր, հ. Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 674 էջ:

Ալիշան Ղ. 1873, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 538 էջ:

Ամենայն Հայոց կաթողիկոսներ. 2001, Երևան, «Հայագիտակ» հրատ., 275 էջ

Առաքելյան Ա. Գ. 1959, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն (I դ. մ. թ. ա.– XIV դ.), Երևան, «Հայպետհրատ», 724 էջ:

«Աստվածաշունչ» Մատեան Հին և Նոր կտակարանների. 2015, էջմիածին, 1345 էջ, 351 էջ:

Գրիգոր Մագիստրոսի թղթերը. 1910, բնագիրն առաջաբանով և ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալէքսանդրապօլ:

Գրիգոր Տղա. 1972, Բանաստեղծություններ, պոեմներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 451 էջ:

Դոլուխանյան Ա. 2001, Ֆելիքս Նևը և հայ քրիստոնեական գրականությունը, Երևան, «Արտագերս» հրատ, 91 էջ:

Դոլուխանյան Ա. 2004, էդուարդ Դյուլորիեն հայագետ, Երևան, «Լուսակն» հրատ., 72 էջ:

Դոլուխանյան Ա. 2008, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, ԵՊՀ հրատ., 266 էջ:

Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության. 2003, Ս. էջմիածին, 806 էջ:

Թահմիզյան Ն. 1973, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 247 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 426 էջ:

Հակոբյան Գր. 1964, Ներսես Շնորհալի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 298 էջ:

Հակոբյան Գր. 1971, Ներսես Լամբրոնացի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 374 էջ

Հարությունյան Է. 1985, Հ. Մխիթար Այրիվանեցի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 240 էջ:

Մատթեոս Ուռհայեցի. 1973, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 373 էջ:

Մնացականյան Ա. Շ. 1980, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 522 էջ:

Մովսես Խորենացի. 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Նմանահանություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:

Ներսես Շնորհալի. 1854, Սրբոյն Ներսեսի Շնորհալւոյ Պատմութիւն վարուց, Վենետիկ, 87 էջ:

Ներսես Շնորհալի. 1928, Բանք չափաւ, Վենետիկ, 675 էջ:

Ներսես Շնորհալի. 1973, Ողբ Եդեսիոյ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 157 էջ:

Ներսես Շնորհալի. 1982, Երգեր, Եդեսիայի ողբը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 214 էջ:

Ներսես Շնորհալի (հոդվածների ժողովածու). 1977, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 226 էջ:

Ներսես Շնորհալի. 1991, Թուղթ ընդհանրական.– «Գանձասար» հանդես, 124 էջ:

Ներսես Շնորհալի. 1981, Վիպասանութիւն, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ., 162 էջ:

Ներսես Շնորհալի. 1987, Տաղեր և գանձեր, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:

Ներսես Մոկացի. 1975, Բանաստեղծություններ, աշխ. Ա. Դոլուխանյանի, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ., 208 էջ:

Սահյան Հ. 1997, Ինձ բացակա չդնեք. Բանաստեղծի վերջին ժողովածուն, Երևան, «Զանգակ-97» հրատ., 249 էջ:

Տաղարան. 1513, Վենետիկ, տպ. Հակոբ Մեղապարտի, 150 էջ:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան. 2002, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 1072 էջ:

Лихачев Д. С. 1979, Поэтика древнерусской литературы. М., «Наука», 352 с.

Поэзия Армении с древнейших времен до наших дней. 1987, под редакцией со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова. Ереван, «Советакан грох», 523 с.

Шаракан. 1990, Из армянской поэзии V–XVвв. Ереван, «Советакан грох», 251 с.

Эмин Н. 1879, Шаракан. М., тип. В. Гатцука, 451 с.

Mcdonald Ronan. 2007, The Death of the Critic. New York, Continuum press., 160 p.

Verlaine P. 1977, Poésies. Moscou, Ed. Progrés, 316 p.

ВЕЛИКИЙ НОВАТОР АРМЯНСКОЙ СРЕДНЕВЕКОВОЙ ЛИТЕРАТУРЫ

АЭЛИТА ДОЛУХАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Нерсес Шнорали, XII век, богослов, загадка, шаракан, новатор, средневековая литература, «Плач об Эдессе» (Элегия на взятие Эдессы), «Иисус-Сын».

Нерсес Шнорали (1100–1173) – крупнейший деятель армянской средневековой литературы XII века, один из святых отцов Армянской церкви, еще при жизни имевший международное признание во всем христианском мире.

Шнорали прекрасно владел языками цивилизованных стран своего времени и состоял в деловых отношениях с видными духовными деятелям, знатным сословием и двором как Великой Армении, так и Киликийской Армении. Он был разносторонней личностью, наделенной многими способностями, за что его и прозвали Шнорали (Благодатный). Он был поэтом, музыкантом, писцом, переводчиком, богословом, космологом и педагогом.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Шнорали первым в армянской действительности создал несколько блестящих образцов исторической поэмы. Поэмой «Випасанутюн» он доказал, что национальная программа «Истории Армении» Хоренаци имела силу воздействия как на духовный, так и на светский правящий класс Киликийской Армении. Поэмой «Плач об Эдессе» поэт вдохновил своих современников на восстановление армянской государственности в Великой Армении, в ее бывших процветающих столицах Вагаршапате и Ани.

Шнорали широко использовал жанры, до того времени не существовавшие в официальной армянской литературе, среди которых наиболее показательны его чудесные загадки. Он сделал разговорный язык того времени языком своих произведений, когда еще не было европейской литературы эпохи Возрождения.

Современники считали его вторым Григорием Просветителем. Правнук известного и удивительного политика, ученого и летописца Григора Магистроса стал сторонником государственности армянского народа.

Шнорали вдохнул новую жизнь в столь важные для Армянской церкви гимны V века, связав их с реальной жизнью. Новые формы стихосложения, разработанные Шнорали, получили широкое распространение в последующие столетия.

Своим шедевром «Иисус-Сын» поэт приблизил к верующим Ветхий и Новый Заветы Библии.

Педагогические взгляды Шнорали поучительны и применимы и сегодня. Некоторые его произведения являются вневременными явлениями и будут сопровождать человечество вне зависимости от национальной и религиозной принадлежности, поскольку все великие писатели, будучи глубоко национальными, универсальны.

Аэлита Долуханян – д. филол. н., проф., член-корреспондент НАН РА, заведующая кафедрой армянской древней и средневековой литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: древняя и средневековая армянская литература, фольклор, современная армянская литература, методика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи. Автор 36 книг и около 700 статей. aelita.dolukhanyan@gmail.com

THE GREAT INNOVATOR OF ARMENIAN MEDIEVAL LITERATURE

AELITA DOLUKHANYAN

Summary

Keywords: Nerses Shnorali, 12th century, theologian, riddle, sharakan, innovator, medieval literature, "Lament for Edessa" (Elegy for the Capture of Edessa), "Jesus the Son".

Nerses Shnorhali (1100-1173) is a major figure in Armenian medieval literature of the 12th century, one of the holy fathers of the Armenian Church, and during his lifetime he had international recognition throughout the Christian world.

Shnorhali was fluent in the languages of the civilized countries of his time and he was in business relations with prominent spiritual figures, the nobility and the court of both Greater Armenia and Cilician Armenia. He was a many-sided person, endowed with many abilities, for which he was nicknamed Shnorhali (Beneficial). He was a poet, musician, writer, translator, theologian, cosmologist and teacher.

Shnorhali was the first to create several brilliant samples of historical poem in Armenian reality. With his poem "Vipasanutyun", he proved that the national program of the History of Armenia of Khorenatsi had an impact on both the spiritual and secular ruling class of Cilician Armenia. By his poem "Lament for Edessa" he inspired his contemporaries to restore Armenian statehood in Greater Armenia, in the former flourishing capitals Vagharshapat and Ani.

Shnorhali made extensive use of genres that did not exist in official Armenian literature until that time, among which his wonderful riddles are the most indicative. He made the language of his notes the colloquial language of the time when there was no European literature of the Renaissance.

Contemporaries considered him the second Gregory the Illuminator. The great-grandson of the famous and amazing politician, scientist and chronicler Grigor Magistros became a supporter of the statehood of the Armenian people.

Shnorhali breathed new life into the hymns of the 5th century, so important for the Armenian Church, connecting them with real life. The new forms of versification developed by Shnorhali became widespread in the following centuries.

With his masterpiece "Jesus the Son", the poet brought the Old and New Testaments of the Bible closer to believers.

Shnorhali's pedagogical views are instructive and applicable even today. Some of his works are timeless phenomena and will accompany humankind regardless of national and religious affiliation, because all great writers, being deeply national, are universal.

Aelita Dolukhanyan – Doctor of Philology, Professor, Correspondent Member of NAS RA, Head of the Chair of Armenian Ancient and Medieval Literature and Methods of its Teaching at ASPU after KH. Abovyan. Scientific interests: ancient and medieval Armenian literature, folklore, modern Armenian literature, methods of teaching literature, literary criticism, Armenology, literary connections. Author of 36 books and about 700 articles. aelita.dolukhanyan@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ՀՏԴ : 929:891.981 Թումանյան+891.981

Doi:10.54503/0135-0536-2023.1-96

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՐՏԱՎԱԶԴ» ԱՆԱՎԱՐՏ ԴՐԱՄԱՅԻ ՇՈՒՐՋ*

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, Մ. Խորենացի, առասպել, Արտաշես, Արտավազդ, Սաֆեենիկ, անավարտ դրամա, դրառումներ, դիպաշարային քարտեզ, նախանձ, տենչանք, հոգեբանական տիրույթ:

Նախաբան

Գեղարվեստական երկի ստեղծաբանական գործընթացի լիակատար ուսումնասիրությունը ենթադրում է դրա ինքնագրերի, հնարավոր տարբերակների, օգտագործված սկզբնաղբյուրների քննություն, ինչը թույլ է տալիս որոշակիորեն բացահայտել հեղինակի ստեղծագործական աշխատանոցն ու գեղարվեստական որոնումների ընթացքը: Այս տեսանկյունից ոչ սակավ հնարավորություն է ընձեռում Հովհաննես Թումանյանի թողած ճեռագիր ժառանգությունը, որի յուրաքանչյուր պատառիկ ստեղծագործ ոգու եզակի դրսևորում է:

ՀՀ գրականության և արվեստի թանգարանում պահվում են բանաստեղծի՝ «Արտավազդ» անավարտ դրամային վերաբերող սևագիր պատառիկներ, պատմագրական սկզբնաղբյուրների, կոմպոզիցիայի և այլաժետային չարժման վերաբերյալ մանրակրկիտ դրառումներ[1]: Հիշյալ ճեռագրերի և «Արտավազդի»[2] առիթով Թումանյանի աշխատանոցում պահպանված այլ նյութերի հիման վրա կարելի է մոտավոր պատկերացում կազմել դրամայի մտահղացման, նրա հնարավոր դիպաշարի, գաղափարական հիմնադրույթների, կերպարների հոգեբանական զարգացումների մասին: Համեմատական քննության միջոցով

** Ներկայացվել է 15. II. 2023 թ., գրախոսվել է 25. II. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

[1] Տե՛ս ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Հովհ. Թումանյանի ֆ., № 224:

[2] «Արտավազդ» դրամայի ստեղծագործական պատմությանն առաջին անգամ անդրադարձել է Արամ Ինճիկյանը՝ հրատարակելով մի պատառիկ, որը հետագայում զետեղվել է Հովհ. Թումանյանի «Երկերի լիակատար ժողովածուի» (այսուհետ՝ ԵԼԺ) 5-րդ հատորում (Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 532–537): Հատորի ծանոթագրողները նկատում են. «ԳԱԹ-ի Թումանյանի ֆոնդում Ինճիկյանի նշած համարի տակ և ֆոնդի մնացած նյութերում չհաջողվեց գտնել տույն պատառիկի ինքնագիրը, ուստի և տպագրվում է Ինճիկյանի գրքում մեջբերվածը» (տե՛ս Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, հ. 5, 812): Անհասկանալի կերպով դրամայի ստեղծագործական լաբորատորիայի որոշ պատառիկներ սպրդել են ուսումնասիրողների աչքից, ինչի արդյունքում դուրս են մնացել հիշյալ հատորից. տպագրվել է միայն վերոհիշյալ փոքրիկ հատվածը: «Արտավազդի» աշխատանքային ամբողջական տարբերակը տպագրվել է 2022 թ. լույս տեսած Հովհ. Թումանյանի ԵԼԺ 5-րդ լրամշակված հատորում:

ոչ միայն վերհանվել են Արտավազդի առասպելույթի տիպաբանական տարբերակման մի քանի էական բնութագրումներ, այլև առաջադրվել են Հովհ. Թումանյանի «Արտավազդ» դրամայի բովանդակային ենթաշերտերի բացահայտման հնարավոր վարկածներ:

Համադրական ու համեմատական մեթոդներով ուսումնասիրել ենք սկզբնաղբյուրների համանման դրվագները և ընդգծել տարբերակների առանձնահատկությունները՝ հընթացս մատնանշելով ու մեկնաբանելով Թումանյանի գրառումներում ու նրա «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածում առկա առանցքային բնութագրումները, Արտաշես-Արտավազդ ողբերգական հակասության հենքը:

Հայոց բանահյուսության ու պատմագրության մեջ գործող առասպելույթի կերպարային փոփոխակները Թումանյանի անավարտ դրամայում առավելապես դիտարկելի են պատմական միջավայրի և ժամանակի հոգեբանական որոշակի տիրույթում: Արտավազդն Արտաշես-Սաթենիկ անհամատեղելի գոյակցության գենետիկ կրողն է, որն իր բնութագրմամբ ու ճակատագրական տրվածքով դառնում է ծնողների, առավելապես՝ Արտաշեսի վշտի, ողբերգության ու անկման պատճառ:

«Արտավազդ» դրամայի ստեղծագործական-աշխատանքային պատմություն

Բացահայտ իրողություն են Հովհ. Թումանյանի բացառիկ սերը համաշխարհային դասական մշակույթի մեծագույն բանաստեղծ Շեքսպիրի[3] նկատմամբ և առանձնակի հակումը դեպի դրականության դրամատիկական ձևը՝ դրամատուրգիան: «Շեքսպիրը միշտ մնում է իմ ամենասիրելի բանաստեղծը,— խոստովանում է Թումանյանը Լեոյին գրած նամակում:— Թեև դրամա չեմ գրել դեռ, բայց դրաման բանաստեղծության մեջ իմ ամենասիրած ձևն է, ու ինձ թվում է, թե դրամատուրգի կոչումն ունիմ ես: Այս պատրանք է գուցե: Շեքսպիրն է ինձ այսպես կախարդել»[4]: Ամենայն Հայոց բանաստեղծի համար Շեքսպիրը մշտապես եղել է անգերազանցելի մեծության, «վիթխարի հանճար», որի ողբերգությունները՝ «Արքա Լիր», «Համլետ», «Օթելլո», «մարդկային խորհրդատության և փանտազիայի ամենավսեմ ստեղծագործություններն են»[5]:

Թերևս Շեքսպիրի ողբերգությունների կախարդիչ ներգործությամբ է նախևառաջ պայմանավորվում այն հանգամանքը, որ Հովհ. Թումանյանի դրամատուրգիական առաջին փորձը պատմական դրամա[6] էր: Ողբերգական

---

[3] *Դպրոցական տարիներին Թումանյանը, Թիֆլիսում դիտելով «Համլետը», մեծապես տպավորվել և ոգեշնչվել է նրանով: «Էդ գիշեր ինձ համար եղավ մի կախարդական գիշեր և դրեթե վճռական նշանակություն ունեցավ իմ ամբողջ գրական կյանքում,— խոստովանում է բանաստեղծը:— Էդ գիշեր ես էնքան սիրեցի Համլետը և հետո էլ Շեքսպիրը, որ մի քանի դրամա գրեցի ու միշտ ոչնչացրի, որովհետև ... Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել» (Թ ու մ ա ն յ ա ն. 1995, 255):*

[4] *Թ ու մ ա ն յ ա ն. 1997, 345:*

[5] *Թ ու մ ա ն յ ա ն. 1994, հ. 6, 54:*

[6] *Մեկնելով Թումանյանի «Արտավազդ» դրամայի հոգեբանական-կենսագրական նախահիմքերը՝ Դ. Դեմիրճյանը հաստատում է, որ բանաստեղծը տևական ժամա-*

իրաղարձումներով հարուստ մեր պատմությունն էլ, ըստ Ա. Ինճիկյանի, «նրա առջև բաց է անում չեքսպիրյան ցնցող ողբերգությունների մի ամբողջ շարք»[7], դիցապատմական հերոսների մի ամբողջ պատկերասրահ:

Պատահական չէ, որ բանաստեղծի ուշադրության կենտրոնում ստեղծագործական առաջին փորձերից իսկ հայտնվում է հոր կողմից նզովված, կիսապատմական-կիսառասպելական Արտավազդի կերպարը, որի անվան շուրջ հյուսվում են մարդկային հարաբերությունների բազմաշերտ նրբերանգներ՝ հոգին ու միտքն աղարտող կրքեր, սեր,ատելություն և մահ, գերմարդկային ուժ ու թուլություն, կեղծիք և մշտայրող գաղտնիքներ:

Թումանյանի վկայությամբ «Արտավազդը» մտահղացել է 1893 թվականին: 1894 թ. ապրիլի 17-ին Անուշավան Աբովյանին գրած նամակում հայտնում է, որ սկսել է խորանալ պատմանյութի ուսումնասիրության և երկի կառուցման սկզբունքների մշակման մեջ.«Մի քանի մեծ բաներ եմ սկսել: Մեկով («Արտավազդ Բ») շատ հետաքրքրվեցին մեր պատմագետ լիտերատորները և առհասարակ գրականական շրջանը. շատ հավանեցին հիմնադրության ձևն ու եղանակը և խոստացան իրանց աջակցությունը, խորհուրդները, գրադարանները բաց անել իմ առջև»[8]: Նույն օրն Արսեն Ղլտճյանին ուղղված նամակում գրում է. «Իմ «Արտավազդի» բանը լավ է երևում: Դու այժմ մի երկրում ես, որտեղ շատ բան կլինի մնացած հին ժամանակներից: Քո գիտեցած և լսած ժողովրդական երգերդ կգրես ու կուղարկես ինձ... Անհասկանալի բառերը բացատրիր, մեկ էլ գրիր ինձ, թե այդտեղ մեկին մյուսի վրա սիրահարեցնելու համար ինչ միջոց են գործ ղնում կամ ինչ ծաղիկ և ինչպես. հետո ատել տալու համար»[9]:

Ակներև է՝ բանաստեղծը միանգամայն լրջորեն է վերաբերվում գրելիք դրամային, ինչի մասին վկայում է նաև նույն թվականին «Հորիզոն» հանդեսում տպագրված «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածը: «1893 թ. մտածեցի մի բան հյուսել մեր աշխարհաշեն Արտաշես II-ի մեծ վշտերից և նրա մեծ որդու՝ նախանձոտ Արտավազդ II-ի կրքերից, — գրում է նա:— Այս նպատակի համար սկսեցի ուսումնասիրել Արտաշեսի ընտանեկան կյանքի առասպելախառն և փոթորկալի պատմությունը: Այդ պատմության մեջ ինձ պատահեցին մութ առասպելներ, խորհրդավոր ակնարկություններ, երգերի հատվածներ, մի խոսքով, պատմության հանելուկներ, որոնց բացատրությամբ միայն կարելի էր ժամանակն, իրերն ու իրողությունները ճիշտ հասկանալ»[10]:

նակ վերաղառնում էր դրամատուրգիական ժանրին և հայտնում՝ պետք է ողբերգություն գրի (այս և այլ մանրամասները տե՛ս Ի ն ճ ի կ յ ա ն. 1969, 532–537):

[7] *Ի ն ճ ի կ յ ա ն. 1969, 532:*

[8] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1997, 136:*

[9] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1997, 135:*

[10] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, հ. 6, 18: Բանաստեղծը, իբրև սկզբնաղբյուր ընդունելով Խորենացու Պատմությունը, կրկնում է այն փաստական չփոթը, որն առկա է Պատմահոր գրքում: Խորենացու կերտած Արտաշես Առաջինը շատ բաներով զիջում է իրականում հայոց պատմության մեջ մեծ անուն վաստակած Արտաշեսյան դինաստիայի հիմնադիր Արտաշես Առաջին Բարի թագավորին: Վերջինիս կատարած աշխարհաշեն գործունեությունը պատմիչը վերագրում է Պատմության մեջ հանդես եկող Արտաշես երկրորդին: Արտավազդ երկրորդն էլ իրականում Տիգրան Մեծի որդին է, քաղաքական ու ռազմական մեծ գործիչ, հոր արժանավոր հետնորդը (Արտավազդը*

Հարցի շուրջ մասնակի դատողությունները կամ վարկածները, սակայն, չեն ձևավորում վերջնական մտահանգումներ, և դուցե առկախ մնացած այս և այլ հարցադրումներն են եղել նաև պատճառը, որ Արտաշեսի ու Արտավազդի մասին դրամա գրելու մտահղացումը իրականացվել է ընդամենը մի քանի էջ ձեռագիր հատվածների չրջանակում, այն էլ՝ զուտ տեքստաբանական, աղբյուրագիտական աշխատանքի տեսքով: Կա նաև տեսակետ, ըստ որի՝ Թումանյանը դրաման ոչնչացրել է դեռևս անավարտ, սևագիր վիճակում: Բանաստեղծի դասընկերներից մանկավարժ, թարգմանիչ Վրեն Տաշրացին իր հուշերում գրում է, որ, երբ տարիներ անց Թումանյանին հարցրել են իր գրած դրամաների մասին, բանաստեղծը պատասխանել է. «Այրեցի իմ կալանավորվելուց առաջ … Անչափ ափսոսացի»[11]:

Փոքրածավալ պատառիկները բնականաբար քիչ բան են հուշում գրվելիք դրամայի գաղափարական-փիլիսոփայական հղումների, կոմպոզիցիոն, գեղարվեստական տարրերի մասին, սակայն պատմական և բանահյուսական նյութերի քննաբանության արդյունքում որոշակիորեն ուրվագծվում է Թումանյանի ստեղծագործական մտադրույթը, արտացոլվում նրա մտահոգությունները հայ ժողովրդի պատմության ողբերգական իրադարձությունների, հայրերի ու իշխանության տենչացող երախտամոռ որդիների աչխարհակործանման հակասությունների վերաբերյալ:

Արտավազդի առասպելի տարբերակների շուրջ

Անշուշտ, անավարտ դրամայի մասին խոսելուց առաջ նպատակահարմար է փոքր-ինչ անդրադառնալ նրա նախահիմքը հանդիսացող առասպելի շուրջ հայտնի տարակարծություններին: Վաղ միջնադարից ավանդված առասպելը՝ իբրև թափառիկ սյուժե, տարածված է բազմաթիվ ժողովուրդների բանահյուսություններում ու գրականության մեջ[12] և գործում է բովանդակային մի քանի վոփոխակներով: Առասպելի հիմքում ընկած է քարայրում անժամանակ փակված, շղթայված հերոսի պատումը, որը լի է տագնապի, վախի, հույսի զգացումներով, սպասման չավարտվող տագնապներով: Հայկական առասպելաբանության մեջ առկա են բանտված հերոսի վերաբերյալ ծայրահեղորեն տարբեր երկու հայեցակետեր՝ ավանդված Խորենացու և Եղնիկի կողմից: Եղնիկի տարբերակում[13] Արտավազդը բարի, փրկարար հերոս է. այս առասպելությի

նաև գրել է թատերախաղեր, ճառեր): Այսպիսով, Արտաշես Երկրորդի և Արտավազդ Երկրորդի կերպարներում ակնհայտ չվոթ կա, ուր միահյուսվել են պատմությունն ու միֆոլոգիան:

[11] Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2019, 293:

[12] Հ. Հովհաննիսյանը «Հնագույն դրաման Հայաստանում» աշխատության մեջ գրում է. «Բալկաններից մինչև Իրանական բարձրավանդակ (Սաբալան, Դմբավանդ), մինչև Կովկաս (Աբուլ լեռ), Այրարատյան աշխարհ և դեպի հյուսիս՝ Ազովի ծով, ամենուրեք կա շղթայվածի լեռ ու ավանդության մի տարբերակ: Եվ այնուամենայնիվ արխետիպն այնքան է կապված հայ բնաչխարհին, որ եթե ուզենք արմատախիլ անել լեռ ու հող տակնուվրա կլինի» (Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2010, 86):

[13] Գր. Խալաթյանցը նկատում է, որ Եղնիկ Կողբացու մոտ հանդիպող բարի Արտավազդը հանդես է գալիս իբրև դյուցազն, որին կապել են չար վիշապները. հայերն անհամբեր սպասում են, որ մի օր գերված Արտավազդը պիտի ազատվի ու

նախահիմքում գրականագետ Թ. Ավդալբեգյանը տեսնում է լույսի ու արևի աստված Միհրի արքետիպը, որը գրեթե նույնանում է պարսից Միթրայի հետ: Գրականագետը համոզված է՝ հայոց մեջ ևս իշխել է այն հավատալիքը, թե տիեզերական օրհասի պահին չարութ յան ուժերի դեմ կռիվ մղելու է բարութ յան աստված Միհրը (նույն գաղափարը կապվում է Միթրայի հետ): «Աշխարհի կատարածին բարի ոգու վերջին ելույթի մասին այս հավատալիքը տեսնում ենք հին հայոց մեր առասպելի—Արտավազդի առասպելի մեջ,— գրում է Թ. Ավդալբեգյանը,— որը յուր հնագույն կերպարանքով ոչ այլ ինչ է, բայց եթե Միթրայի հավատալիքի արտահայտութ յան մի նոր փոփոխակ հայ միջավայրում»[14]: Այս տեսանկյունից էլ ելնելով՝ Ավդալբեգյանն Արտավազդի առասպելն ազատագրում է պատմականացման միտումից, թոթափում նրան ճշգրիտ պատմականութ յուն վերագրելու փորձերը և հանգում այն տեսակետին, թե որևէ անվան հետ կապված դիցաբանական զրույց շատ ավելի հին է լինում, քան անունը կրող պատմական անձերը:

Մ. Աբեղյանի տեսակետը զարգանում է պատմական ու մեկնաբանական այլ հիմունքով: «Պատմականորեն դա Մեծն Տիգրանի որդի Արտավազդն է, մարերի (=վիշապագնների) թշնամին, որին Անտոնիոսը՝ մարերի հետ դաշնակցած՝ խաբեութ յամբ բռնում, շղթայում ու տանում է Եգիպտոս,— գրում է Աբեղյանը:— Երևի, իր ժամանակին սպասել են, որ նա գերութ յունից ազատվի և վերստին տիրի Հայոց աշխարհին. բայց այս ակնկալութ յունը չի կատարվել»[15]: Արտավազդի բնավորութ յան երկփեղկումը, նրա բինար բնույթը ևս Աբեղյանը շարունակում է մեկնաբանել առասպելույթի ոչ օրինաչափ զարգացումներով. «Այնուհետև կապված Արտավազդի այս պատմական զրույցը չփոթվել է Հրուդենի ձեռով շղթայված Աժդահակի[16] առասպելի հետ, որ շատ հին ժամանակներում իրանացիներից փոխադրված է եղել հրաբխային Մասիս լեռան վրա, և Աժդահակ անվան տեղ անցել է Արտավազդ անունը: Զրույցի այս զարգացման հետևանքով՝ Մասիսի մեջ կապված չար ոգու առասպելն ազդել է Արտավազդի պատմական զրույցի վրա: Ուստի Արտավազդը Վիպասանքի մեջ եթե մի կողմից՝ հանդիսանում է իբրև վիշապների-մարերի դեմ

փրկի աշխարհը: Ըստ Խալաթյանցի՝ Արտավազդի առասպելը կարող է «արճագանքը լինել իրանական այն զրույցների, որոնց հերոսն էր Հայաստանի Նպատ լեռան մոտ Անահիտ աստվածուհուն պաշտոն մատուցանող Ashavazdao *– Արտավազդը»* (Х а л а т я н ц. 1896, 316)*:*

Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին Արտավազդի առասպելի այս հատվածը նմանեցնում է չվեյցարական մի առասպելի. «Սա Շվեյցարիայի պառավների մոտ տարածված առասպել է, ըստ որի Սուրբ Բերնարդը բռնվել է դևերից և շղթայվել Քլեռվո վանքի չրջակա լեռներից մեկում: Ըստ այս առասպելի՝ կա մի սովորութ յուն. երկրի դարբինները ամեն երկուշաբթի աշխատանքն սկսելուց առաջ մուրճով երեք անգամ հարվածում են սալին, որ դևի շղթաներն ամրանան, և նա չկարողանա ազատվել» (տե՛ս Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. 2008, 133):

[14] *Ա ւ դ ա լ բ է գ ե ա ն. 1929, 54:*

[15] *Ա բ ե ղ յ ա ն. 1966, 147:*

[16] *Աժդահակը պարսից առասպելական կերպար է՝ երեքգլխանի, երեք բերանով և վեց աչքով ամպրոպային վիշապ, որին իբր ստեղծել է չար ոգին՝ մարդկային ցեղը ոչնչացնելու համար: Հրուդենը դարբին կավեի օգնութ յամբ հաղթել է Աժդահակին և գամել Դեմավենդ սարին, որտեղ մնալու է մինչև աշխարհի վերջը:*

կռվող քաջ արքայորդի, որին, ըստ եզնիկի, կապում են վիշապները, մյուս կողմից՝ նա ունի չար ու նախանձոտ բնավորություն[17], և նրան կապում են քաջքերը»[18]:

Հոդվածի համաբնագրում կարևոր նշանակություն է ձեռք բերում Խորենացու[19] Պատմության մեջ հանդես եկող Արտավազդը, ով, ըստ պատմահոր, դիվային, չար ու նախանձ է, և որին Մասիսի այրերից մեկում չղթայել են քաջքերը: Նա չների օգնությամբ, որոնք կրծելով պիտի արձակեին չղթաները, փորձում է դուրս գալ անձավից և կործանել աշխարհը: Արտավազդի մասին զրույցները Պատմահայրը փորձում է խորահայաց քննության ենթարկել՝ բացելով ամենախորհրդավոր շերտերը: Գողթան երգիչները պատում են, որ «վիշապազունք զողացան զմանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եղին»[20]: Խորենացին չտապում է հավելել, որ այս զրույցը պատմական հիմքից զուրկ է, երևակայության առաջած դրվագ, մեկնություն: Արդեն ձևավորվում է մի կանխադրույթ, ըստ որի՝ առասպելի հերոսը սովորական մեկը չէ, նա մարդու և քաջքի, դիվային ու չար ուժի ծնունդ է, մթության ու չարության խորհրդանիշ: Գիտակցության լույսը ուղղվում է դեպի հերոսի դիվային ծագումնաբանությունը, որը հետո չարժման մեջ պիտի դնի Արտավազդի վարքագիծը, ներքին-հոգեբանական էներգիան: Պատմիչը տալիս է Արտավազդի ծննդյան ու մահվան առեղծվածների իր մեկնաբանությունը, պատմաքննական իր տեսակետը. պատմական հիշողությամբ ամրագրված հայոց և մարաց ռազմական ու արքունական փոխհարաբերությունների համատեքստում է գործում նրա հերոսը: «Ի չափ հասեալ Արտաւազդայ որդւոյ Արտաշիսի՝ եղև այր քաջ, անձնահաճ և հպարտ»[21],– բնութագրում է Խորենացին:

Հենց այս անձնահաճ ու քաջ մարդու տեսակն է հետաքրքրել Հովհ. Թումանյանին: «Արտավազդ» անավարտ դրամային վերաբերող ձեռագիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բանաստեղծն իր ապագա դրամայի հիմքում դնելու էր Պատմահոր ներկայացրած առասպելության տարբերակը: Ավելորդ չենք համարում հակիրճ ներկայացնել Արտավազդի կերպարի զարգացման չղթան Խորենացու երկում, որի ֆաբուլան խախտված է, ավելին, առասպելի պատումային հատվածները սփռված են նրա Պատմության առաջին և երկրորդ գրքերի տարբեր գլուխներում:

---

[17] *Գր. Խլաթեցու հաղորդած տարբերակի համաձայն՝ չարի խորհրդանիշ Արտավազդի փոխարեն հանդես է գալիս որդին՝ խելագար Շիդարը: Երբ հայոց թագավոր Արտաշավազդը մեռնում է և խելագարության պատճառով գահը չի տալիս որդուն, խռովություններ են լինում երկրում: Մի օր Շիդարը հեծելազորի ուղեկցությամբ դուրս է գալիս զբոսանքի՝ իբրեն թագավոր հայտարարելով: Կամրջով անցնելիս դիվահարվում է և ընկնում գետը, անհետանում: Լուր է տարածվում, թե աստվածներն են Շիդարին հափշտակել և չղթայակապ պահում են Մեծ Մասիսի մեջ (տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2000, 448):*

[18] *Ա բ ե ղ յ ա ն. 1966, 147:*

[19] *Խորենացու տարբերակին են հարում Վանական վարդապետի, Կիրակոսի և Գր. Անավարզեցու հաղորդած տարբերակները (տե՛ս Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2000, 447–425):*

[20] *Խ ո ր ե ն ա ց ի. 1981, 232:*

[21] *Խ ո ր ե ն ա ց ի. 1981, 214:*

Առաջին անդրադարձին հանդիպում ենք I գրքի Լ. գլխում. «…Տենչայ Սաթենիկ տիկին տենչանս՝ զարտախուրտ խաւարտ և զտից խաւարծի ի բարձից Ագաւանայ»[22]: Ինտրիգն ակնհայտ է, բայց Խորենացին որևէ մեկնաբանություն այս առնչությամբ չի տալիս: Ավելի ուշ գրում է. «Սա առաջին եղեալ ի կանանցն Արտաշիսի՝ ծնանի նմա զԱրտաւազդ …» (II, ԾՐ, 214): Այնուհետև. «… Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ, և դև փոխանակ եդին» (II, ԿԱ, 232): Արդեն նշեցինք, որ Խորենացին այս գրույցը համարում է երևակայության արդյունք. Արտավազդի դիվային էությունը փորձում է մեկնել մոլորությամբ ապրելու սխալ ընտրությամբ:

«… Եվ իբր տրփանք Սաթինկան ընդ Վիշապազունն՝ առասպելաբար, այս ինքն ընդ զարմս Աժդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց» (II, ԽԹ, 208): Պատմահայրը դարձյալ հիշատակում է Գողթան երգիչների այն գրույցը, թե իբր Սաթենիկը սիրահարված էր Աժդահակի սերնդի ներկայացուցչին: Հանգուցային բառը իբր-ն է. սա նշանակում է, որ Խորենացին արժանահավատ չի համարում այս վարկածը:

«Ի չափ հասեալ Արտաւազդայ որդւոյ Արտաշիսի՝ եղև այր քաջ, անճնահաճ և հպարտ. և նախանձ բերելով ընդ ծերանտյն Արգամայ՝ հրապուրեաց զհայր իւր ցասնուլ Արգամայ, որպէս թէ թագաւորել ի վերայ ամենայնի խորհիցի» (II, ԾԱ, 214): Քաղաքական ասպարեզում հայտնվում է նախանձ ու փառասեր արքայորդին. տրամաբանական զարգացումը ենթադրում է՝ Արտավազդ-Արգավան հակասությունը պիտի առարկայական դառնա: Առիթը չի ուշանում: Արգավանը, ի պատիվ Արտաշեսի, խնջույք է կազմակերպում. «Ճաշ ասեն գործեալ Արգաւանայ Ի պատիւ Արտաշիսի, Եվ խարդաւանակ լեալ նմին Ի տաճարին վիշապաց» (I, Լ, 100): Ուշագրավ է, որ այս մասին կարդում ենք Պատմության I գրքում, իսկ տրամաբանական շարունակությունը զարգանում է II գրքի ԾԱ գլխում. «… Երթալով Արտաշիսի ի ճաշ Արգամայ կասկած իմն անկեալ, իբր թէ դաւել զարքայն խորհիցին՝ յարուցանեն որդիքն արքային ապշոպ, և անդէն իսկ ի հացին քարշեն զալիսն Արգամայ … և զապարանն Արգամայ այրել… Այսմ ոչ կարացեալ համբերել որդւոցն Արգամայ՝ ընդդիմանան նմա պատերազմաւ. բայց յաղթեալ արքայորդւոյն՝ սատակէ զամենայն ծնունդս Արգամայ հանդերձ հարսն … Այս Արգամ է, որ յառասպելին Արգաւանն անուանի, և ա՛յս պատճառ պատերազմին ընդ Արտաւազդայ» (II, ԾԱ, 214, 216):

Վիշապազուն Աժդահակի զարմից սերված Արգավանի և նրա սերնդի դեմ վարած պատերազմն Արտավազդը մեկնաբանում է կռիվ հոր՝ Արտաշեսի իշխանական գահը խլել փորձող, տիրադավ մեկի դեմ: «Այս նշանակում է, որ Արգավանի ու սրա սերնդի դեմ վարած կռիվը բառացի վիշապամարտություն է,— գրում է Թ. Ավդալբեգյանը:— Կռվի հետևանքով ոչ միայն սպանվում է վիշապազունների հայր Արգավանն, այլև բնաջնջվում է վիշապազունների սերունդը»[23]: Արգավանի նկատմամբ ատելության հիմքը մեկնաբանվում է նաև արդեն հայտնի ենթադրությով, որ հավանական են համարում ուսումնասի-

---

[22] *Խորենացի. 1981, 100: Այսուհետև տեքստում կնշվեն «Հայոց պատմություն» աշխատությունից բերվող հատվածների մասերը, գլուխները, էջերը:*

[23] *Աւդալբէգեան. 1929, 63:*

րողները (Մկ. Էմին, Ք. Պատկանյան, Գ. Խալաթյան և ուրիշներ). Մուրացյան Արգավանը սիրային գաղտնի կապեր ուներ Արտավազդի մոր՝ Սաթենիկի հետ և դավ է նյութում Արտաշեսի դեմ, ինչն էլ Արտավազդին մղում է վրեժխնդրության:

Սպանելով Մուրացյան Արգամին ու նրա որդիներին, այնուհետև դավեր լարելով Սմբատ Բագրատունու դեմ՝ Արտավազդը ճեռք է բերում թե՛ իշխանություն, թե՛ ունեցվածք: Պատմության տարբեր ղրվագներում Արտավազդը հանդես է բերում հակասական վարքագիծ ու բնավորություն. զորեղ է, անհրաժեշտության պահին պայքարում է հանուն հայրենիքի, Տիրան եղբոր հետ փրկում է Կովկասում բանտարկված Զարեհ եղբորը, մյուս կողմից՝ նույն Տիրանի հետ սպանում է Մաժան եղբորը՝ լսելով նրա նյութած դավի մասին: Հոր մահից հետո իրեն զգալով լիակատար գահակալ՝ Արտավազդը հալածում է եղբայրներին դեպի Ազիհովիտ ու Առբերանի գավառները, իր մոտ պահում միայն Տիրանին, քանի որ զավակ չուներ:

«Արտավազդ» դրամայի թումանյանական լաբորատորիան

Դրամային վերաբերող ինքնագրերում[24] Թումանյանը խորհնացու գրառած առասպելի դիպաշարային մանրամասները, կերպարային զարգացումները վերաշարադրում է ներքին որոշակի բաժանումներով, որոնցում հաճախ նկատելի են բովանդակային կրկնություններ: Հստակ է դրամայի վերնագիրը՝ «Արտավազդ», որին փակագծերում հաջորդում է նախանձ բառը՝ դառնալով բանաստեղծի մտադրության որոշակիորեն նշանակիր միավոր: Այնուհետև ղրվագ առ ղրվագ բանաստեղծը շարադրում է Արտաշես-Սմբատ-Արգավան-Սաթենիկ-Արտավազդ հերոսների մանևակցությամբ ու նրանց շուրջ ծավալվող գործողությունների շղթան: Հիմք ընդունելով Թումանյանի արխիվային գրառումները՝ կազմենք բովանդակային հնարավոր զարգացումների աշխատանքային քարտեզը, որը կարող էր ունենալ «Արտավազդ» դրաման:

Դրվագ առաջին, որ կարելի է անվանել «Արտաշես»

Նստելով գահին՝ Արտաշեսը երախտագիտորեն վարձատրում է Արգամին ու Սմբատին, ամուսնանում Սաթենիկի հետ, ապա սկսում Հայոց աշխարհը շենացնելու և բարեկարգելու մեծածավալ գործունեությունը: Մեծ էր Արտաշես արքան՝ իբրև պետության հինարար, սակայն մարդկային հոգին ավելի գաղտնիքներ ունի, քան ասվում է այդ մասին: Մաշվում էր Արտաշեսի սիրտը կնոջ անհավատարմությունից: Ստեղծվում է հոգեբանական դրամա, ինչից օգտվում է Արտավազդը: Արտաշեսը օրեցօր ավելի է խճճվում կասկածների որոգայթում. չար լեզուները նրան հավատացնում են, թե Արգամը նպատակ ունի թագը հափշտակելու. արքան հրաման է տալիս բնաջնջելու Աժդահակի սերունդը: Իր դեմ ապստամբությունը կանխելու համար Արտաշեսը կռվի դաշտ է ուղարկում Սմբատին և հաջողությունների համար վարձատրում նրան: Արտավազդը, լցված նախանձով ու ատելությամբ, ուզում է սպանել Սմբատին: Արտաշեսը վշտանում է ու խռովվում: Եղբայրների միջև գժտություն է ընկնում: Արտաշեսը թիակոտոր է Մաժան որդու սպանությամբ. նա Տրայանոսի մոտ չարախոսել էր Արտավազդին և Տիրանին, և վերջիններս որսի ժամանակ

[24] *ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆ., № 224:*

սպանում են նրան: Արտաշեսը մահանում է՝ չրթունքներին վերջին երգը. «–Ո՜վ տայր ինձ զծուխն ծխանի …»[25]:

Զափածո հատվածին հաջորդում են նախարարական տոհմերի անունները և պաշտոնները:

Դրվագ երկրորդ, որի կենտրոնում Սաթենիկն է

Սաթենիկ Թագուհի (տիկնաց տիկին)՝ դուստր ալանաց արքայի՝ 20 տարեկան որդու մայր, սաստիկ տենչանքով վառվում է դեպի Մարաց նահապետ Արգավանը, որին Արտաշեսն այնքան պատիվներով մեծարել էր: Սիրով տանջվում է տիկին Սաթենիկը, որով և առիթ է տալիս Արգավանի մահվան. սրանից օգտվում է փառասեր Արտավազդը, ով նախանձում էր Արգամին:

Հաջորդում են միջանկյալ պատմություններ: *Թումանյանն առանձնացնում է Սմբատի և Արգավանի կերպարները. սկզբնաղբյուրից քաղված դրառումները կարևորվելու էին Արտավազդի հոգեբանության ու մարդկային նկարագիրը դրամայում բացահայտելու տեսանկյունից:*

Սմբատ

Սմբատը փրկում է մանուկ Արտաշեսին և որոշ ժամանակ անց վերադարձնում արքունիք՝ հոր գահին: Բացառիկ նվիրվածության համար Արտաշեսը Սմբատին արժանացնում է մեծ պարգևների ու իշխանության: Սմբատի խորհրդով Արտաշեսը կնության է առնում Սաթենիկին: Արտավազդը նախանձելով ուզում է սպանել Սմբատին, և հայրը իմանալով՝ սաստիկ խռովվում է: Սմբատը կամովին հեռանում է Ասորեստան և հայոց զորքերի իշխանությունը թողնում Արտավազդին: Սմբատը մահանում է մինչև Արտաշեսի վախճանը:

Արգավան

Արտաշեսը երվանդի դեմ պատերազմելիս իրեն աջակցելու համար Մուրացյան Արգավանին պարգևում է երկրորդական գահը, «պսակ յակնթակապ, և գինդ յերկոսին ականջն, կարմիր զգեստ միոյ ոտինն. տարգալ ունել ոսկի և պատառաքաղ, և ոսկեղինօք ըմպել նուագօք» (II, խէ, 206): Արտավազդը նախանձելով՝ հորը տրամադրում Արգամի դեմ՝ համոզելով, թե նա կամենում է գահն իրենից առնել և թագավորել Հայոց աշխարհում: Սաթենիկի տենչանքը դեպի Արգավանը դառնում է պատճառ վերջինիս դժբախտության. ընկնում է արքայի աչքից, զրկվում երկրորդական պատվից, ճաշի ժամանակ ամբաստանվում և մահվան դատապարտվում:

Դրվագ երրորդ. Արտավազդ

Արգամի նկատմամբ ունեցած մոր տենչանքը դառնում է պատրվակ նրանից երկրորդական պատիվը վերցնելու: Ճաշի ժամանակ վիշապազունների ապարանքում, համոզելով՝ իբրև թե դավ, որոգայթ է լարված թագավորի դեմ, եղբայրներին դրդում է հարձակման. սպանում են Արգամին և նրա որդիներին: Սմբատը հաղթանակով վերադառնում է Պարսկաստանից, Արտաշեսը նրան է նվիրում Գողթանի հասույթը. Արտավազդը նախանձից ուզում է սպանել Սմբատին, սակայն դավադրությունը բացահայտվում է. կռիվ է ծագում որդու և հոր միջև:

Վերջին պատումն այն փոքրիկ հատվածն է, որ հասել է մեզ իբրև «Արտավազդ» դրամայի մշակված հատված: Արտավազդը նախանձում է հոր թագ-

[25] *ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆ., № 224:*

ման փառավորությանը և վշտացած տանջվում: Այսնազարդ պալատում դիշերով հոր ուրվականը երևում է հայրաղավ որդուն և հարցնում, թե ինչու է իրեն ծնած հորը նախանձում (Արտաշեսը հռետորական այս հարցադրմամբ, թերևս, ակնարկում է Արտավազդի վիշապազուն լինելը): Ուրվականի հայտնությունից, ապա արքայի անեծքից խելագարված Արտավազդը վաղ առավոտյան գնում է որսի: Թումանյանական անավարտ դրաման ավարտվում է բացառիկ գեղեցկության հատվածով. «Ջա՛ր, չեն հանդուրժիլ քեզ ազատ Մասիսի քաջերը, և երբ որսի կերթաս դեպի սարերն ազատ Մասյաց, քեզ կբռնեն քաջերը, կճգեն մութ և անլույս վիհը, որ էլ լույս չտեսնես: Հոր անեծքին կայծակներն ու դժոխքը ուղեկից են:— Հարազատներիդ արյունն ու արտասուքը բաց են արել կործանման վիհը քեզ համար»[26]:

Դրամայի հոգեբանական հնարավոր զարգացումների քննության փորձ (վարկած)

Թվում է՝ վերը մոտավոր շարադրված դրվագների գեղարվեստական կերտումով պետք է հյուսվեր «Արտավազդ» պատմական դրաման: Սակայն բանաստեղծն այդպես էլ ձեռագիր հավաքած նյութը բաղձալի ավարտի չի հասցնում: Պատճառները կարող են տարբեր լինել, սակայն ենթադրելի է, որ Թումանյանին չի հաջողվել մինչև վերջ բացահայտել հայոց պատմության այդ ժամանակահատվածի շատ «հանելուկներ», որոնց բացատրությամբ է, ըստ բանաստեղծի, հնարավոր «ժամանակն, իրերն ու իրողությունները ճիշտ հասկանալ»[27]: Եվ խոսքը վերաբերում է ոչ այնքան ազգային-քաղաքական-պատմական անցուդարձերի, որքան ժամանակի մարդու հոգեբանության ու կենսափիլիսոփայության, բարոյական կերտվածքի ուսումնասիրմանը. խնդիր, որ մշտապես արծարծվել է Թումանյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում: «Խորենացու «Տենչայր Սաթենիկ» հատվածի առթիվ» հոդվածում հանելուկներից ամենադժվարն ու խորհրդավորը Թումանյանը համարում է «Տենչայր տիկին Սաթենիկ» հայտնի հատվածը, որի հանգուցալուծմամբ է, ըստ նրա, հնարավոր «մտնել Արտաշեսի պալատը»: Որոշ բանագետների մեկնություններն անհամոզիչ են թվում բանաստեղծին: Նա երկրորդում է Խորենացուն՝ նշելով, թե Սաթենիկի տենչանքը նկարագրող հատվածը՝ իբրև թե սիրահարված Սաթենիկը տենչում էր ձեռք բերել Արգամի բարձերից «արտախուր խավարտ և տից խավարծի», այսինքն՝ նրա սերը, պատմական իրողություն չէ, այլ Գողթան երգիչների, ժողովրդի հնարածը, ուստի «Սաթենիկի տենչանքի վրա պետք է նայել ոչ իբրև մի անհատի ցանկության, այլ մի ժողովրդի, որ առասպելի մեջ արտահայտել և դրել է անհատի սրտում»[28]: Թումանյանի՝ մինչ օրս չմեկնաբանված այս տեսակետը վերջավորվում է առավել ուշագրավ մի ենթադրությամբ: «Ներկա դեպքում,— գրում է Թումանյանը,— երգի կտորը կարող էր ակնարկել և մի ուրիշ սովորություն, որովհետև առասպելը միայն ասում է, թե Սաթենիկը տենչում էր Արգավանի բարձերի ծաղիկներին, իսկ այդ ծաղիկների բարձերի մեջ դնելու մասին լռում է. ո՞վ էր դրել այդ ծաղիկները՝ չի պատասխանում: Հին մեծերն ու իշխաններն ունեին իշխա-

[26] *ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆ., № 224:*

[27] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, հ. 6, 18:*

[28] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, հ. 6, 20:*

նական բարձեր: Այդ բարձերը նրանց մեծության աստիճանն ու հարգն էին որոշում և իրանց այս բարձր նշանակությամբ համարվում էին սրբազան, որոնք և պետք է ժամանակի օրհնությամբ ու կախարդանքներով կրոնի տեսակետից ապահովված ու զորացած լինեին» [29]*: Այսպիսով՝ կախարդանքներով հայտնի մարաց նահապետ Արգավանը իր իշխանական մեծության աստիճանն ու հարգը որոշող սրբազան բարձերի մեջ կարող էր ունենալ ծաղիկներ՝ խորհրդավոր, զանազան զորություններով օրհնված, որոնք պահպանում էին իշխանի «զգայմունքների ու հատկությունների գաղտնիքները, և նրանց գողանալը նույն էր, թե գողանալ նրանց զորությունը» (ընդգծումը մերն է – Ե. Մ.)*[30]*:*

Թումանյանի յուրովսան մեկնաբանությունը գեղարվեստական մարմնավորում ստանալու դեպքում հաստատապես կառաջադրեր ոչ միայն բովանդակային նոր զարգացումներ, այլև մարդկային էության ու հոգեբանության բացառիկ տիպեր, որոնք կհարաբերվեին կյանքի ընդգրկման բազմակողմանի շերտերով և կունենային չեքսպիրյան կերպարների լիարժեքություն: Թումանյանի վերոհիշյալ միտքը թույլ է տալիս մեզ ևս վերապահությամբ մոտենալու առաջին հայացքից ակնհայտ թվացող և մեծապես շրջանառվող վարկածին[31]*, ըստ որի՝ Սաթենիկի տենչանքն (Արգավանի բարձերից ձեռք բերելու «արտախուր խավարտ և տից խավարծի») սիրահարված կնոջ ձգտում է, որի նպատակն է խորհրդավոր բույսերի միջոցով ներազդել ցանկալի տղամարդու վրա, հմայել կամ գրավել նրա սերն ու ուշադրությունը: Ընդգծենք հանգուցային բառը՝ «տենչանք», որն ակադեմիական բառարանում բացատրվում է երկու իմաստով՝ ա. մեծ ցանկություն, փափագ, բաղձանք, իղձ, բ. տարփանք, կիրք: Մեր կարծիքով Սաթենիկի տենչանքն առավել խոր ենթաշերտ ունի, քան արտաքուստ հավանական թվացող կանացի կիրքը: Ալանների արքայադուստր, ապա հայոց թագուհի Սաթենիկի բուռն ցանկությունը, ձգտումը ուղղված են դեպի «արտախուր խավարտ և տից խավարծին», որոնք ձեռք բերելու պարագայում թագուհին կարող է (գուցեև դյուցազնական ծիսաարարողությամբ) իրագործել հեռահար որոշ նպատակներ, նաև հասնել հայոց արքունիքում երկրորդը համարվող Արգավանի իշխանափլուզման: Առաջին նվագ թյուր ու անհիմն թվացող այս ենթադրությունն ունի գոյության որոշ հիմքեր. փառասիրական մեծ նկրտումներ ունեցող Արտավազդի և Արտաշեսի ակնհայտ հակասությունները, վերջինիս՝ Արգավանի նկատմամբ տածած հարգանքն ու մեծարումը օտարածին հայոց թագուհուն կարող էին մտավախություն ներշնչել անդրանիկ որդու ապագայի նկատմամբ: Առհասարակ, հայ գրականության մեջ եզակի չեն պատումները՝ օտար կնոջից ծնված որդիների, որոնք մեծանում են ինքնահաճ ու փառասեր և ձգտում իշխանության: Նպատակին հասնելու համար նրանց գաղտնի օգնում են մայրերը, ինչպես կլեո-*

---

[29] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 26:*

[30] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 27:*

[31] *Հավանական այլաժետային այլ վարկած է ենթադրում Գ. Սրվանձտյանցը. «Արտավազդն պտուղն Սաթինկան տարփանաց բարձից Արգավանա ...», այսինքն՝ Արտավազդը Սաթենիկի դավաճանության պտուղն է, որն ըմբռստանում է իրեն ծնունդ տված Արգավանի դեմ: Տեսակետի հիմքում Սրվանձտյանցը դնում է «դև փոխանակ եղին» միտքը (Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. 1978, 179):*

պատրան՝ որդիներին՝ ծնված Տիգրան Մեծից, Իսմիլ խաթունը՝ Մսրա Մելիքին՝ ծնված Մեծ Մհերից:

Սաթենիկի տենչանքը գործողություններ պլանում չի երևում, քողարկված է, սակայն այն միանգամայն իրագործելի է ներքին հոգեբանական տիրույթում: Գողթան երգիչների գրույցները Սաթենիկի սիրահարվածության վերաբերմամբ հաստատում են բոլորովին այլ իրակություն. Սաթենիկը չի սիրում Արտաշեսին. նրանց ամուսնությունը քաղաքական գործարք է, իսկ երգերում ներկայացված հարսանեկան մանրամասները՝ ընդամենն արտաքին փայլ ու զեղեցկություն, որի հիմքում բացակայում է սերը: Միանգամայն հավանական է, որ հայոց թագուհու կարգավիճակ ձեռք բերած օտարուհին, ապրելով ամուսնու կողքին, գոյաբանական անհաշտվողականությամբ չարունակի կյանքի ընթացքը՝ առաջնորդվելով սեփական կենսափիլիսոփայությամբ: Ակնհայտ է մի բան. Սաթենիկը, զուցեև ինքնաբերաբար, կյանքի առաջին օրերից մայրական կաթի հետ Արտավազդին կարող էր փոխանցել գենետիկ չարության ցածրակարգ կիրքը հայոց թագավորի և, առհասարակ, շրջապատող մարդկանց նկատմամբ: Մայրական զգացմունքները կարող են դրսևորվել որոշակի օբյեկտների և գործընթացների հետ կոնկրետ հույզերի կապվածությամբ՝ արքունական ինտրիգներ, բարեպաշտ ու երախտագետ ամուսին, որդու փառատենչ ձգտումներ, դրանց իրականացման ճանապարհին ծառացած բազում խոչընդոտներ, արքունիքում երկրորդը համարվող Արգավան և այլն: Այս իրավիճակում Սաթենիկին կարող է առաջնորդել վախի հույզը, որ նաև «… պաշտպանական հակազդեցությունն է իրական կամ թվացյալ վտանգի հանդեպ: Վախը կազմակերպում է վարքը, որն ուղղված է վտանգի չեզոքացմանը»[32]: Զուգեև «արտախուր խավարտ և տից խավարծի» ձեռք բերելու տենչանքն Արգավանի զորությունը չեզոքացնելու և որդուն իշխանության բերելու միտում ուներ:

Այսպիսով՝ որդին՝ Արտավազդը, ծննդյան օրից ընդունում է մոր ստեղծած հոգեբանական աուրան: Նա մեծանում է չար ու նախանձ, իշխանատենչ. դառնում է մոր ալտերէգոն: Աստիճանաբար հիմք է դրվում ողբերգական զարգացումների: Մայր-որդի-արքա հարաբերությունների արտաքին չերտը լուսավորվում է ներաշխարհ թափանցումներով. թաքնված դժնդակ ատելությունն ու գահակալության կիրքը ձևավորում են հոգեբանական ու ֆիզիկական դավադրություն՝ Արտաշեսի անկման և Արտավազդի՝ բարձին դրվելու գործընթացի: Վերը բերված դրվագների այժմեական հոսքերը տարբեր լուծմունքներով պտտվում են արքայորդու չուրջ: Պատմությամբ փոխանցված կերպարներից յուրաքանչյուրը մեծ կամ փոքր չափով աղերսվում է նրա հետ. փոխհարաբերությունների կենտրոնում Արտավազդն է, ով դրեթե բոլոր դրվագներում դրսևորում է նույնատիպ վարքագիծ. նախանձ է, փառասեր, հավակնոտ, համառ:

Կարող ենք ընդհանրացնել՝ Թումանյանի դրամայի կենտրոնական հերոսը լինելու էր պատմական Արտավազդը, որի զգայական հայեցումների աշխարհը պարզունակ չէ: Թեև կերպարի բնութագրիչ հատկանիշը նախանձն է, սակայն նրա ներաշխարհային զարգացումները հաճախ են անակնկալի բերում իշխա-

[32] https://www.ysmubooks.am/uploads/, *Բժշկական հոգեբանություն, 89 (13. II. 2023):*

նատենչումբյան, դաժանումբյան ու մարդատյացումբյան անըմբռնելի չրջապտույտով: Թե՛ օտարների, թե՛ հարազատների նկատմամբ չարումբյան ու նենգումբյան դրսևորումները հիմք են դառնում հոր՝ Արտաշեսի ներքին ողբերգումբյան ծավալմանը: Թումանյանին մտահոգում է այդ տառապանքի ծանրումբյունը, որը հանգեցնում է որդեկործան անեծքի: Հայր-որդի կերպարային հակասումբյունն ամփոփում է մարդկային համարժեք տեսակներին հատուկ հոգեբանումբյունն ու աշխարհայեցումբյունը, կրքերն ու մտապատրանքները: Ավելին, տեղափոխվելով դրամատիկական գործողումբյունների դաշտ, այն է՝ քաղաքական, ազգային տիրույթ, հայր և որդի անտեսանելիորեն դառնում են փոխկործանման պատճառ:

Այսպիսով՝ Հովհ. Թումանյանը կյանքի չի կոչում դրաման. ամենայն հավանականումբյամբ, ստեղծագործական որոնումների ճանապարհին նրան չեն բավարարում զորեղ ու համոզիչ փաստարկումները, որոնք պիտի բացեին պատմական մեծ ժամանակաշրջանի մարդկային փոքր հարաբերումբյունների խոր ենթաշերտերը, կրքերի ու հույզերի հոգեբանական նրբերանգները: Թումանյանի հանճարը թույլ էր տալիս չգրել մի բան, որ «Շեքսպիրի դրածների նման» [33] *չէր դուրս գալու:*

Եզրակացումբյուն

1. «Արտավազդ» պատմական դրամայի թեմատիկ և ժանրային ընտրումբյունը նախևառաջ պայմանավորված է եղել Շեքսպիրի նկատմամբ տածած պաշտամունքով և 1890-ական թվականների պատմական ժամանակի ողբերգական իրադարձումբյուններով:

2. Առասպելումբի չրջանառվող տարբերակներից Թումանյանը նախընտրել է խորենացու գրառածը՝ Արտավազդին առավելապես ներկայացնելով իբրև պատմական հերոս:

3. Թումանյանը Սաթենիկի և Արգավանի չուրջ պտտվող սիրային պատմումբյան վարկածները համարում է պատմական հիմքից զուրկ, թեև վերջնականապես չի ձևակերպում սեփական տեսակետը:

4. Ջեռագրերի քննումբյունը միանգամայն թույլ է տալիս կազմելու դրամայի ենթադրյալ սյուժետային զարգացումների չղթան:

5. Բանաստեղծի ուշադրումբյան կենտրոնում Սաթենիկ-Արտաշես-Արտավազդ հարաբերումբյուններն են և պատմական ու հոգեբանական այն հակասումբյունները, որոնք ընկած են հոր ու որդու առնչումբյունների հիմքում:

6. Դրաման մնացել է անավարտ (հիմնական մասով մնացել է աղբյուրագիտական աշխատանքի մակարդակում). ամենայն հավանականումբյամբ, Թումանյանն այդպես էլ չի կարողացել մինչև վերջ բացել պատմումբյան մութ անկյունները և հրաժարվել է արհեստական լուծումներ տալուց:

Եվա Մնացականյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականումբյան ինստիտուտի Թումանյանագիտական խմբի ղեկավար, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրումբյունները՝ ժամանակակից հայոց լեզու, հայ գրականումբյան պատմումբյուն և քննադատումբյուն, Թումանյանագիտումբյուն: Հեղինակ է

[33] *Թ ու մ ա ն յ ա ն. 1995, 255:*

3 մենագրության, 3 ուսումնամեթոդական ձեռնարկների և ավելի քան 80 **հոդվածի**: MnacakanyanEva@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 571 էջ:

Աւդալբէգեան. 1929, Միհրը հայոց մէջ, Վիեննա, Մխիթարյան տպ., 160 էջ:

Դոլուխանյան Ա. 2008, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, ԵՊՀ հրատ., 268 էջ:

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 831 էջ:

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 670 էջ:

Թումանյան Հովհ. 1995, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 718 էջ:

Թումանյան Հովհ. 1997, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 707 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2019, հ. 1 (լրամշակված հրատարակություն), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 624 էջ:

Ինճիկյան Ա. 1969, Հովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:

Խորենացի Մ. 1981, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 588 էջ:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հովհ. Թումանյանի ֆ., № 224:

Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 527 էջ:

Հովհաննիսյան Հ. 2010, Հնագույն դրաման Հայաստանում, Երևան, «Նաիրի» հրատ., 200 էջ:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 410 էջ:

Халатянцъ Г. 1896, Армянскій эпосъ въ Исторіи Арменіи Моисея Хоренскаго. Опытъ критики источниковъ, ч. 1–2. М., Типография Варвары Татцук, 347 с.

https://www.ysmubooks.am/uploads/

НАБЛЮДЕНИЯ О НЕОКОНЧЕННОЙ ДРАМЕ ОВ. ТУМАНЯНА «АРТАВАЗД»

ЕВА МНАЦАКАНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Ов. Туманян, М. Хоренаци, легенда, Арташес, Артавазд, Сатеник, неоконченная драма, записи, мифологическая карта, зависть, вожделение, психологическая область.

На основе рукописей и других материалов, сохранившихся в архиве Туманяна, можно составить примерное представление о замысле драмы «Артавазд», ее возможном сюжете, идейных основах, психологических разра-

ботках автора, символах. Сравнительный анализ позволяет не только выделить некоторые существенные черты типологической дифференциации легенды об Артавазде, но и возможные гипотезы выявления контекстуальных подслоев драмы. Вопрос рассматривался с применением сопоставительного, историко-сравнительного, интерпретационного методов, с выявлением и анализом основы трагического конфликта между Арташесом и Артаваздом и ключевых черт, представленных в заметках Туманяна и в статье «Об одном разделе “Тенчаир Сатеник” Хоренаци».

Сопоставление последовательно сделанных замечаний писателя по поводу персонажей позволяет сделать вывод, что среди циркулирующих версий характера Артавазда, его мифологемы, устойчивости времени и хаоса, добра и зла, двойственности и, наконец, вечной борьбы между жизнью и смертью, Туманян предпочитает записанную версию М. Хоренаци. На страницах тетрадей и рабочих заметок, наряду с описанием типологической и характерной системы мифа, иногда отчетливо просматриваются отдельные наблюдения поэта, раскрывающие его точку зрения и мировоззренческие ориентиры для оценки событий.

Ева Мнацаканян – д. филол. н., руководитель туманяноведческой группы Института литературы им. М. Абегяна НАН РА, доцент кафедры родного языка и методов его преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: современный армянский язык, история армянской литературы и критика, туманяноведение. Автор 3 монографий, 3 учебно-методических пособий и более 80 статей. MnacakanyanEva@mail.ru

SOME OBSERVATIONS ON H. TUMANYAN’S UNFINISHED DRAMA “ARTAVAZD”

YEVA MNATSAKANYAN

Summary

Keywords: H. Tumanyan, M. Khorenatsi, legend, Artashes, Artavazd, Satenik, unfinished drama, notes, mythological map, envy, longing, psychological domain.

On the basis of the manuscripts and other materials preserved in the archives of Tumanyan, one can make a rough idea of the tendency of the drama “Artavazd”, of its possible plot, ideology, psychological developments of the author, and symbols. By means of a comparative examination, not only several essential characteristics of the typological differentiation of Artavazd myth are highlighted, but possible hypotheses for revealing the contextual sub-layers of H. Tumanyan’s “Artavazd” drama are also suggested. While studying the issue, we applied the comparative, historical-comparative, interpretive methods, pointing out and analyzing the basis of tragical conflict between Artashes and

Artavazd and the key features in Tumanyan's notes and in the article "On the section of "Tenchair Satenik" by Khorenatsi".

Comparison of the writer's successive remarks about the characters allows us to conclude that among the circulating versions of Artavazd's character, his mythologems, the stability of time and chaos, good and evil, duality, and finally, the eternal struggle between life and death, Tumanyan prefers the recorded version of M. Khorenatsi. On the pages of his notebooks and working notes along with the descriptions of the typological and characteristic system of the myth, sometimes certain observations of the poet are clearly visible, which reveal his standpoint and worldview references for assessing the events.

Yeva Mnatsakanyan – Doctor of Sciences in Philology, Head of Tumanyan Study Group at the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA, Associate Professor at the Chair of Native Language and Methods of its Teaching at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: contemporary Armenian language, history of Armenian literature and criticism, Tumanyan studies. Author of 3 monographs, 3 methodological textbooks, and more than 80 articles. MnacakanyanEva@mail.ru

ՀՏԴ : 929:891.981 Իսահակյան+891.981

Doi:10.54503/0135-0536-2023.1-112

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՓՈՔՐԻԿ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»*

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ավ. Իսահակյան, գեղարվեստական արձակ, ստեղծագործական նախագիծ, հուշեր, պատմվածք, բանտ, խաչ, ողբերգություն, միկրոաշխարհ, մակրոաշխարհ, առանցքային դաղափար, հումանիստական աշխարհայացք:

Նախաբան

Ավետիք Իսահակյան մարդու, մտածողի, ստեղծագործողի համար երիտասարդ տարիքում բանտային առաջին ազատազրկումը եղել է հոգեմտավոր ցնցումով բացառիկ կենսափորձ, որի ստեղծագործական անդրադարձներն են «Մի չաբաթ մահապարտի հետ», «Քուրդ Ամոն», «Բայրամ Ալին» պատմվածքները: Տարբեր տարիների, կյանքի տարբեր փուլերում հրապարակված այս ստեղծագործությունները ժամանակի քննադատության ուշադրությանը չեն արժանացել: Հետագայում, սակայն, մասնավորապես՝ 1950-ականներից, Իսահակյանի գեղարվեստական արձակի այլ երկերի չարքում դարձել են ուսումնասիրողների քննության առարկա՝ անվերապահ միակարծությամբ գնահատվելով որպես հեղինակի հումանիստական փիլիսոփայության, աշխարհայացքի արտահայտություններ: Ուսումնասիրողները տարակարծիք են, սակայն, երկերից ամեն մեկի հիմնարար դաղափարի, առանցքային խորհրդի հարցում: Տարբեր են նաև պատմվածքների փոխառնչությունների հարցի վերաբերյալ դիրքորոշումները: Ընդամին, ուսումնասիրողները չեն անդրադարձել հեղինակի՝ դաղափարական հիմնարար որոշ ամրագրումների, բովանդակային կարևոր տարրերի, որոնք փոխում են երկերի համատեքստն ու վերարժևորման հիմք տալիս: Պարզաբանման կարոտ է մնում նաև վերոնշյալ բացառիկ կենսափորձին և պատմվածքներին առնչվող «Բանտային հուշերից» ստեղծագործական նախագծի ճակատագրի հարցը:

Տառապող մարդը՝ Իսահակյանի սիրո և կարեկցանքի կիզակետում

Ավ. Իսահակյանի «Ես սիրո երգիչ եմ, սիրո՝ դեպի մարդը, կենդանիները, բնությունը, տիեզերքը: Իմ վիշտը, իմ պեսիմիզմը բխել է այդ սիրուց»[1] անկեղծ ու պարզ ինքնաբնութագիրը տարբեր այլ ձևակերպումներով բազմիցս կրկնել, հաստատել, հիմնավորել է ոչ միայն հեղինակն ինքը, այլև նրա ստեղծագործական ժառանգության բազմաթիվ ուսումնասիրողներ՝ Ա. Ղանալան-

---

* *Ներկայացվել է 06. X. 2022 թ., գրախոսվել է 26. XII. 2022 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

[1] *Ի ն ճ ի կ յ ա ն. 1977, 38:*

յան, Ա. Ինճիկյան, Ակ. Զաքարյան, Ս. Աղաբաբյան, Գ. Հովհաննիսյան, Մ. Մկրյան, Ա. Իսահակյան և այլք: Եվ ուրեմն՝ նոր ապացույցների կարիք չունի Իսահակյանի կենսական արժեքների համակարգում սիրո՝ գերագույն արժեք լինելու առանցքային դրույթը: Կարևոր է, սակայն, ընդգծել, որ, ըստ Իսահակյանի աշխարհընկալման, այդ գերագույն արժեք սերը նախ և առաջ համատիեզերական բացարձակ մեծություն է: Իսկ մարդն Աստծո ստեղծած մարդ-բնություն-տիեզերք համակարգերի հաջորդականորեն միմյանց ներառող, օրգանական ամբողջությամբ համատիեզերական մակրոհամակարգի անքակտելի մասն է. անքակտելի, բայց և, միաժամանակ անհաշտ, աններդաշնակ մասը: Եվ հենց նրան է Իսահակյանը բաժին հանում ինչպես ամենաշատ սերը, այնպես էլ ամենամեծ գումն ու կարեկցանքը: Ինչո՞ւ: Որովհետև մարդը տառապում է: Ընդամին՝ հանուն և ընդդեմ մակրոհամակարգ-ամբողջությանը ներդաշնակվելու ներքին ու արտաքին հանապազօրյա հարատև կռիվ տվող մարդու տառապանքն անվերջ է և բազմաչերտ: Իսկ կռիվը գոյութենական է, անխուսափելի և անհավասար, որովհետև «Մարդը չի հաշտվում բնության դաժան օրենքների հետ, աստծու «դրուքի» հետ: Միտքը հաշտվում է, սիրտը չի հաշտվում»[2]: Եվ դա դեռ քիչ է, ստիպված է ապրել, գոյել նաև մարդկանց՝ իր նմանների սահմանած օրենքներով կառավարվող աշխարհում, մարդու ստեղծած հասարակական միկրոհամակարգերում, բնության դաժան օրենքների հետ անհաշտ իր էությունը հաշտեցնել մարդկանց օրենքներին, որոնք, թերևս, առավել անողոք են՝ ըստ աֆորիտիկ հետևյալ հանրահայտ բնութագրի.

Ձեր օրենքները – լուծ ու խարազան, և անելք մի
ցանց խոլական սարդի,
Եվ որոնց ժահրով թունավորում եք երգը բլբուլի,
անուրջը վարդի[3]:

Իսահակյանն այս համոզմանը հանգել էր ինքն իրեն և, ընդհանրապես, մարդուն ճանաչելու, քննելու տեսական ու գործնական-փորձնական տևական ուսումնասիրությունների արդյունքում, ինչպես նաև դիտարկելով ու վերլուծելով սեփական ժողովրդի և մարդկության անցյալն ու ներկան, որոնք, ընդհանուր առմամբ, պատկերանում և ընկալվում էին որպես մարդկային մեծ ու փոքր տարբեր հանրույթների ներքին և արտաքին սոցիալական, տնտեսական, քաղաքական ու մշակութային անվերջանալի անհաշտ հակամարտություններ, միմյանց տիրելու կամ ոչնչացնելու բազմազան միջոցների կիրառման ու «կատարելագործման» անկասելի ընթացք՝ խարսխված մարդկանց սահմանած գրավոր ու բանավոր կանոնների, կարգերի, օրենքների վրա: Բանաստեղծական բառապատկերային վերոհիշյալ ձևակերպումը (բազմաթիվներից մեկը) օրենքների՝ որպես բռնության, խաբեության, պղծման գործիք կիրարկելու ընդհանրական ավերիչ հետևանքները ցուցանելուց բացի, երևակում է Իսահակյանի համապարփակ հոգեմաչ ցավն այդ անփոփոխ իրողությունից:

[2] *Ինճիկյան. 1977, 228:*
[3] *Ավ. Իսահակյան. 2008, 198:*

Գեղարվեստական արձակում, մասնավորապես՝ միասնական ծագում ունեցող, նույն միկրոաշխարհից սերող «Մի չաքաթ մահապարտի հետ», «Քուրդ Ամոն», «Բայրամ Ալին» պատմվածքներում, Իսահակյանը և՛ գործիքը, և՛ ավերիչ հետևանքները, և՛ ցավը ներկայացնում է շատ որոշակի ու անհատականացված: Այստեղ, որպես օրենք-ավերիչ գործիքի առանցքային խորհրդանիշ, հանդես է գալիս մարդկության ողջ պատմության ընթացքում մարդկանց արդարադատության համակարգի միջնաբերդը, մարդկանց սահմանած իրավական կարգով դատապարտվածների պատժավայր բանտը: Եվ այն գուգորդվում է մեկ այլ հնագույն խորհրդանիշի՝ խաչին [«Զանգվի ափին խաչաձև նստել է մռայլ ու տխրադեմ Երևանի բանտը: Այս վիթխարի խաչի ճակ թևի վրա մեր խցերն էին գտնվում ...»[4] («Քուրդ Ամոն»)], որի բազմազան իմաստներից առկա համատեքստում ընդգծվում են հետևյալները՝ հին աշխարհում, հատկապես՝ քրիստոնեության մարդափրկիչ ուսմունքը ոչնչացնել ձգտող աշխարհակալ տերության Հռոմեական կայսրությունում, մարդու անարգ ու տառապագին մահվան և չարչարանքների, ինչպես նաև այլևայլ նեղությունների, վշտերի, անարգանքի, անեծքի, նախատինքի գործիքի[5]: Սրանց գումարվում են խորհրդանշական այսպիսի նոր իմաստներ՝ խաչի՝ հենց վերը նշված իմաստներին նույնիսկ մարդկության խաչապաշտ հռչակված հատվածի անղավաճան հավատարմության, Աստծո՝ մեղանչած մարդուն ևս սիրող ու ներող, սերը կյանքի ոսկե կանոն հռչակած Աստվածամարդ Քրիստոսի, նրա քարոզած արժեքների, մեղավոր մարդու փրկության համար նրա ինքնազոհաբերության նկատմամբ որպես քրիստոնեական ուսմունքի-դավանանքի հետևորդ հայտնի մարդկության իրական վերաբերմունքի: Ասվածի վկայությունն է պատմվածքի առաջին տարբերակի նույն հատվածում խիստ զգացմունքային հետևյալ մեջբերումը. «Բանտի այդ հսկայական խաչի վրա չղթայակապ և անչղթա, ազատությունից և արևից խլված հոգիները խաչվել են և կենդանի տառապում ...

Սրանք՝ ամենքը վրեժխնդրության զոհերն են հասարակություն կոչվող վիշապի ...»[6]:

Տողերի խիստ զգացմունքայնությունն ավելի քան բնական է և պայմանավորված երիտասարդ հեղինակի «խաչյալի տառապանքի» առավելապես անձնական փորձառությամբ: 1896–1897 թթ.՝ շուրջ մեկ տարի, քսանմեկ-քսաներկուամյա Իսահակյանն ազատազրկված էր եղել բանտում: Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող հայրենի երկրի՝ Երևանի բանտում նա հայտնվել էր իր ժողովրդի կենսական իրավունքների պաշտպանության՝ ազգային-ազատագրական պայքարին մասնակցելու քաղաքական մեղադրանքով[7]:

---

[4] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 26:*

[5] *Տե՛ս Բառարան Սուրբ գրոց. 1881, 242–243:*

[6] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 608:*

[7] *Ձերբակալվել է 1896 թ. մայիսի 1-ին, բանտից ազատվել՝ 1897 թ. ապրիլի 17-ին: Գործը, որի շրջանակում մեղադրանք էր հարուցվել Իսահակյանին (ինչպես նաև Հնչակյան կուսակցության անդամ մյուս ձերբակալվածներին), վերնագրված էր* «О Тайном армянском сообществе, имеющему целью возбудить своих

Բանտից ազատվելուց ամիսներ անց արած գրառումներում «բանտի սոսկալի» կյանքն Իսահակյանը մեկ բառով բնորոշում է «տրագեդիա»[8]՝ ողբերգություն: Մեկ այլ գրառմամբ էլ ամենայն անկեղծությամբ արձանագրում է ապրած ողբերգության մի դրվագ. «Երբեմն այնպիսի պահիկա – երկյուղ էի զգում բանտում, որ միտս հալվում էր, աղիքներս գալարվում, քիչ էր մնում, որ ուշաթափվեի ... Սիրտս մարում էր, աչքերս սևանում ... Սև, սև աշխարհք:

Զգում էի դրությունս անելք, անելանելի դրություն, որ անկարող եմ, ջնջված, փակված, ողջ-ողջ գերեզմանի մեջ. կենդանի մեռել եմ, որ տանջվում եմ սարսափելի տանջանքներով. չունչս կտրվում էր, կարծես օդ չկար. ծծում էի, բայց օդ չկար...

Մահն զգում էի աչքերիս առաջ, և սոսկում, պատրաստ էի ամեն մի բարոյական գիջում հանձն առնել, միայն թե ապրել, բանտից ազատվել <...>. միայն կյանք և ազատություն ... »[9]:

Բնականաբար, արձանագրվածն իր ապրած հոգեկան ու ֆիզիկական տառապանքի մի մասն է միայն, անձնական ողբերգության դրվագային պատկեր, որն արտացոլում է անհատական էության ցնցման ուժգնությունը: Այն բազմապատկվում է համատեղ, բանտում՝ զոր ու գիշեր անմիջապես իր կողքին, գտնվող մարդկանց տառապանքներով, որոնց ամենօրյա ականատես, ականջալուր համազգաց–ապրումակցող գերզգայուն ստեղծագործողի համար բացահայտվում են մարդկային էության և կեցության բազմաթիվ ճշմարտություններ, մարդկային տարաբնույթ ողբերգություններ՝ մղելով նրան գեղարվեստորեն առարկայացնելու, կերպավորելու դրանք: Չէ՞ որ ինքն էր ասում. «Ամեն բան անցնում է իմ սրտի միջով: Ես անտարբեր չեմ կարող կանգնել աշխարհի առաջ, անարձագանք, անանդրադարձ»[10]:

Եվ անմիջապես էլ սկսվում է աշխատանքը՝ ողբերգությունները ներկայացնելու համար ընտրելով գրական ստեղծագործության նոր ձևաչափ՝ գեղարվեստական արձակի նոր ժանր[11]: Առաջին փորձը «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքն էր: Սկսած 1897 թ.՝ այս երկի վերջնական բնագիրը հրատարակվել է միայն 1955 թ.[12]: Հեղինակի՝ տևական, բազմափուլ աշխատանքը, ինքնագիր, մեքենագիր և տպագիր տարբերակները[13], վերնագրի «Մի մահա-

---

турецких соплеменников к восстанию против Оттоманского Правительства» *(տե՛ս Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 355):*

[8] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 243:*

[9] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 249:*

[10] *Տե՛ս Ի ն ճ ի կ յ ա ն. 1977, 65:*

[11] *Մինչև 1897 թ. Իսահակյանը ստեղծագործում էր գերազանցապես չափածո, իսկ արձակ երկերի շարքում բացակայում էր պատմվածքի ժանրը:*

[12] *Առաջին տարբերակն ավարտել է 1902 թ., սակայն չի տպագրել, հաջորդ անդրադարձին (1923 թ., Վենետիկ) հետևել է առաջին տպագրությունը 1923 թ. [«Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 30. I. 1923, 808–811], վերամշակումների հաջորդ փուլն ավարտվել է 1955 թ.՝ վերջնական բնագրի տպագրությամբ [«Սովետական գրականություն» (Երևան), 1955, սեպտեմբեր, № 9, 4–7]:*

[13] *ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Ավ. Իսահակյանի ֆ., № 495–II համարի ներքո պահվում է երկու՝ ոչ ամբողջական ու անթվակիր ինքնագիր, որոնք զգալի տարբերվում են հրատարակված տարբերակներից,*

պարտի վերջին բաղձանքը», «Մահապարտի մոտ» փոփոխակները[14] վկայում են, որ մահվան դատապարտված մարդու ողբերգությունը դյուրին չի տրվել կերպավորման, պատումի:

Հաջորդը «Քուրդ Ամոն» պատմվածքն էր, որը հրատարակվել է բանտից ազատվելուց տասը տարի անց՝ 1907 թ.՝ «Բանտիս հուշերից» խորագրի ներքո[15]: Երկի վերջնական տարբերակի տպագրությունը 1951 թ.[16] էր:

Երրորդը՝ «Բայրամ Ալին», գրվել է 1924 թ., և դարձյալ հրատարակված առաջին տարբերակից (1926 թ.)[17] տևական ժամանակ անց՝ 1940 թ., հետևել է երկրորդ տպագիր տարբերակը[18]:

Ուշագրավ է, որ Իսահակյանը սկզբնապես, համաճայն ծոցատետրային դրառումների, ուրվագծել է մտադրություն՝ գրելու փոքր հուշեր բանտից[19], ապա, ըստ էության, դրանցից առաջինի՝ «Քուրդ Ամոն» պատմվածքի առաջին հրատարակությամբ հանրայնացրել է որոշակիացրած նախագիծը՝ ստեղծելու պատմվածքների շարք: Սակայն հետագայում «Բանտային հուշերից» խորագրով որևէ գործ չի հրատարակել, ներառյալ՝ «Քուրդ Ամոն»: Անտիպների մեջ ևս այդպիսիք չեն գտնվել: Ինչո՞ւ է հեղինակը հրաժարվել խորագրից ու շարքից, և վերոհիշյալ երեք պատմվածքը, որ, թվում է, նախագծի իրականացված մասն են, հրատարակել առանձին-առանձին: Ամենահավանական պատճառն այն է, որ նա դրանցում հանգել է մարդաբանական, փիլիսոփայական, գեղարվեստական այնպիսի ընդհանրացումների, որոնք այդ գործերը դուրս են բերել նախնական մտահղացման բովանդակության (բանտային կյանքի դրվագներ) ու ձևի (փոքր հուշ) շրջագծից: Նշված հանգամանքով, սակայն, չեն խաթարվել այս ստեղծագործությունների՝ թեև հեղինակի չընդգծած («Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքի դեպքում վերջնական տարբերակում նաև փոխում է պատմողին՝ ինքն այլևս ոչ թե ականատես պատմողն է, այլ վերապատմող), այդուհանդերձ, օրգանական ակնառու կապերը, ընդհանուր համատեքստը: Եվ, թերևս, դա է պատճառը, որ Իսահակյանի արձակն ու-

---

և մեքենագիր անթվակիր մի օրինակ՝ հեղինակի ուղղումներով՝ առաջին տպագիր տարբերակից ու վերջնական բնագրից տարբեր, հավանաբար, առաջին և երկրորդ հրատարակությունների միջև ընկած ժամանակահատվածում արված մշակում, իսկ ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆ., № 2171–II համարով՝ առաջին տպագիր բնագրի մշակում:

[14] ԳԱԹ, Ավ. Իսահակյանի ֆ., № 495–II:

[15] «Արօր» (Թիֆլիս), 02. IX. 1907:

[16] Ավ. Իսահակյան. 1951, 16–20:

[17] «Յուսաբեր» (Կահիրէ), 18. III. 1926, 20. III. 1926:

[18] Ավ. Իսահակյան. 1940, 205–209:

[19] Այդ մասին է փաստում ըստ Ավիկ Իսահակյանի՝ 1900-ական թթ. ծոցատետրից ստորև ներկայացվող դրառումը.

«Գրելիք փոքր հուշեր, բանտից.

– Պատուհանից զարկվողը՝ կախվող քուրդը.

– Կարապետի սպանությունը.

– Թուրքը, կարցերի ոճրագործը, որ լամպի չուշով փորը կտրեց. աղիքները իր մատներով հանեց,

մորն էր երգում.

– Կախվողները, գիշերը տարան կախելու.

«Ընկերներ, մնաք բարով» (Ա. Իսահակյան. 1975, 173):

սումնասիրող վաստակաշատ գիտնականներից Ա. Ինճիկյանը, չնայած վերոնշյալ փաստերին, այս պատմվածքները դիտարկել է իբրև շարք[20]: Ի դեպ, նա ընդհանրականորեն բնութագրում է այդ շարքը՝ որպես սոցիալական պայմանների, հասարակության հոգի կարգերի զոհերի մասին պատմությունների որոշակի ամբողջություն[21]: Համակարծիք լինելով պատմվածքների փոխառնչությունների վերաբերյալ տրված «որոշակի ամբողջություն» բնորոշմանը՝ հարկ է նշել, որ թեմայի հետ կապված կարծիքի ընդհմախոսը նախ և առաջ Իսահակյանն է՝ «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքի ինքնագիր տարբերակի՝ մահապարտներին վերաբերող հետևյալ տողերով. «Նրանց մեջ կային հռչակավոր ավազակներ, քրեական ոճրագործներ, քաղաքական ահաբեկիչներ: Յուրաքանչյուրը առնվազն մի մարդ սպանած կլիներ, ոմանք մեկից ավելի: Սակայն նրանք մեզ թվում էին անմեղ զոհեր ոչ ընկերվարական այն տեսության առումով, թե ամեն ոճրագործ հոգի հասարակության արդյունք է, այլ ուղղակի անմեղ զոհեր, որովհետև մեր երևակայության տարողությունից դուրս [...] էր թվում նրանց տառապանքը, անըմբռնելի, անկշռելի մղձավանջը, տանջանքը ... Նրանք մահ էին նյութել մարդկանց մի վայրկյանի մեջ, սպանվողի համար հանկարծակի, անսպասելի, իսկ իրենք սպասում են հիմա ամեն վայրկյան ...» (ընդգծումը մերն է – Մ. Ա.)[22]:

Պատմվածքների ընդհանուր ծագմանը և «Բանտային հուշերից» նախագծին՝ որպես «Բանտիս հուշերից» ընդհանուր խորագրով պատմվածաշարի ծրագրի հետ դրանց առնչությանն անդրադարձել է մեկ էլ Իսահակյանը[23]:

Ինչ վերաբերում է Իսահակյանագետների՝ պատմվածքներից ամեն մեկի թեմային, գաղափարական առանցքին առնչվող կարծիքներին, երկերի ընդհանրական արժևորմանը, դրանք հիմնականում տարամետ են:

Այսպես՝ «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքը, գրականագետ Գարիկ Հովհաննիսյանի կարծիքով, հեղինակի արձակի լավագույն գործերից չէ՝ դրանում «... գերիշխողը մարդկային անզորությունն է ...»[24] և «...փոքրիկ հիվանդագին երանգ են ընդունում հոգեբանական պեղումները...»[25] վաստարկներով: Ա. Իսահակյանը հակառակ կարծիքին է. «Այս երկը կարելի է համարել Իսահակյան ռեալիստի լավագույն գործերից մեկը, ըստ որում հոգեբան ռեալիստի»[26]: Նրա կարծիքով՝ պատմվածքի առանցքն է «... մարդու հոգեկան վիճակը օրհասի դիմաց, ... երբ կարծես խախտվում է կյանքի և մահ-

[20] Ինճիկյան. 1977, 45:

[21] Ինճիկյանը գրում է. «Բանաստեղծի հայացքը թափանցում է մարդկային հոգու խորքերը և տեսնում, որ իր բնությամբ ու էությամբ մարդը լավ է, և միայն արտաքին (սոցիալական) պայմաններն են նրան վատացնում, խաթարում ու խեղաթյուրում նրա հոգին: Այս տեսակետից խիստ ուշագրավ են Իսահակյանի «Բանտի հուշերի» շարքը («Մի շաբաթ մահապարտի հետ», «Քուրդ Ամոն», «Բայրամ Ալին»): Բանտի հաստաբետ պատերի մեջ փակվածներին նա համարում է հասարակության հոգի կարգերի զոհերը ...» (Ինճիկյան. 1977, 45):

[22] ԳԱԹ, Ա վ. Իսահակյանի ֆ., № 495–II:

[23] Տե՛ս Ա. Իսահակյան. 1975, 173:

[24] Հովհաննիսյան. 1963, 8:

[25] Հովհաննիսյան. 1963, 7:

[26] Ա. Իսահակյան. 2000, 363:

վան միջև ընկած սահմանը, երբ իրականն սկսում են ընկալել որպես անիրական, երբ մարդն ընկնում է յուրատեսակ ինքնամոռացության, ցնորքների գիրկը»[27]*:*

«Քուրդ Ամոն» պատմվածքը Հովհաննիսյանն ավելի բարձր է գնահատում, քանի որ, ըստ նրա, հերոսի «... դրամատիկ կամ ողբերգական ճակատագրի պատկերումով հաստատվում է մարդկային հոգու ուժն ու գեղեցկությունը»[28]*: Իսկ հերոսի՝ «սովորական մարդու սովորական ողբերգությունը» մեկնաբանում է այսպես. «Մեն մի տարվա գարնան կարոտ և ինքնասպանություն, այս է մարդկային կենսասիրության, միաժամանակ և ողբերգականի իսահակյանական չափանիշը»*[29]*: Ա. Իսահակյանի դիտանկյունից՝ «Պատմվածքի հիմնական թեման ազատության և բռնության հարաբերությունն է»*[30]*, այսինքն՝ ըստ էության, անհատ-հասարակություն բախման դասական թեման՝ դատելով հետևյալ վերլուծություններից. «... հասարակությունը, որի բնությունը նա բնավ չէր հասկանում և ընկալում, զամել էր նրան՝ «լուռ, հսկա գերեզմանի պես բանտին»*[31] *և «... տեղի է ունենում ողբերգական անհամատեղություն ազատասքաղաք մարդու բնության և բռնի իրականության միջև ...»*[32] *ու հանգուցալուծումն էլ աներկբա՝ փաստարկով՝ «... ազատ մարդը, ազատ էակը չի կարող հաշտվել բռնության, գերության հետ և որ նախընտրելի է մահը, քան կյանքը առանց ազատության»*[33]*:*

Քննվող վերջին՝ «Հայրամ Ալին» պատմվածքին ուսումնասիրողների անդրադարձներն ավելի հպանցիկ են: Ըստ Գ. Հովհաննիսյանի՝ ուխտ, հավատի կորստյան տրամադրության չաղախը «սիրո իսահակյանական ծանոթ մոտիվներով» գրված այս երկին, «... արտաքին հայացքից պրիմիտիվ սիրային այս պատմությանը տալիս է մարդկային-հասարակական ավելի քան մեծ հնչեղություն»[34]*: Ա. Իսահակյանն անդրադառնում է միայն պատմվածքի հիմքին՝ բնորոշելով այն որպես «ռոմանտիկ ու ըմբոստ մի իգիձի սիրո տխուր պատմություն»*[35]*:*

Ա. Ինճիկյանը, ինչպես «Հայրամ Ալին», այնպես էլ «Քուրդ Ամոն» պատմվածքները համարում է «... այդ ժամանակների գյուղական իրականության ճշմարտացի ու ցնցող պատկեր», հերոսների դժբախտության պատճառը՝ «սոցիալական անհավասարությունը»[36]*:*

Ներկայացված կարծիքներն ու տեսակետերը թույլ են տալիս արձանագրել, որ ուսումնասիրողների ուշադրությանը չեն արժանացրել պատմվածքների այս շարքում Իսահակյանի մարդաբանական, փիլիսոփայական, առանցքային որոշ ամրագրումներ, դիտարկումներ, մեկնություններ: Մինչդեռ դրանք են

---

[27] *Ա. Իսահակյան. 1984, 385*
[28] *Հովհաննիսյան. 1963, 8:*
[29] *Հովհաննիսյան. 1963, 47:*
[30] *Ա. Իսահակյան. 1975, 173*
[31] *Ա. Իսահակյան. 1975, 174*
[32] *Ա. Իսահակյան. 1975, 175:*
[33] *Ա. Իսահակյան. 1975, 177:*
[34] *Հովհաննիսյան. 1963, 58:*
[35] *Ա. Իսահակյան. 2000, 365:*
[36] *Ինճիկյան. 1977, 175:*

մեծապես պայմանավորում նշյալ երկերի՝ ժամանակային որոշակի սահմաններ ջնջող և համամարդկային ընդգրկումն ու անանց արժեքը:

Բանտային փոքրիկ հուշերից համամարդկային «փոքրիկ ողբերգություններ»

«Մի շաբաթ մահապարտի հետ», «Քուրդ Ամոն», «Բայրամ Ալին» պատմվածքները, միավորված չլինելով մեկ շարքում, մեկ խորագրի ներքո, այնուամենայնիվ ունեն միասնական համատեքստ, միավորող հիմնարար և փոխլրացնող գաղափարներ, փիլիսոփայություն, գաղափարաբանություն, խորհրդաբանություն: Միավորող առանցքային գործոնն այս երկերի բուն բովանդակությունն է, էությունը՝ ողբերգությունը:

Պատմվածքներից ամեն մեկն իր եզակի հերոսի եզակի պատմությամբ առարկայորեն ներկայացնում է մարդու–մարդկային հիմնարար մի ողբերգություն: Մյուս միավորող կարևոր գործոնն այդ ողբերգությունների միևնույն «թատերաբեմն» է՝ բանտը, որն այս գործերում ներկայացվում է որպես մարդկության ամենաբնութագրող դյուտերից, «արարումներից» մեկը, մարդկային և հասարակական հարաբերությունների անփոփոխ, չհնացող գործիք, բայց առավելապես՝ որպես մարդկային աշխարհի մի յուրօրինակ մոդել, միկրոաշխարհ: Դրանում ևս մարդիկ հայտնվել են ակամա, հանգամանքների բերումով, ոչ իրենց ընտրությամբ. մինչև իսկ Բայրամ Ալու վերաղարձը բանտ ոչ թե ընտրության արդյունք է, այլ այլընտրանքի բացակայության: Այդ միկրոաշխարհում ևս՝ մեկ ընդհանուր հարկի տակ, իրար կողքի, ակամա հայտնվել են ու իրենց կյանքի որոշակի, ոչ իրենց կողմից սահմանված ժամանակահատվածն են ապրում տարբեր աշխարհներից եկած և տարբեր աշխարհներում ապրող բազմազան մարդիկ: Նրանք ազգային, էթնիկ, կրոնական տարբեր համայնքներից են՝ հայ, թուրք, քուրդ, ասորի, աղրբեջանցի …, քրիստոնյա ու մահմեդական …, հասարակական տարբեր շերտերից՝ գյուղացի, մտավորական, ավազակ …, տարբեր աշխարհընկալումներով, բարոյականությամբ՝ մարդու, կյանքի, տիեզերքի վերաբերյալ հարուստ գիտելիքներով, կրթությամբ, աշխարհ տեսած, մարդկանց կյանքը բարեփոխելու նպատակով գաղափարական պայքարի մարտիկներ, հասարակական, պետական կարգը փոխելու համար պայքարող, «իրան՝ թագավորի դեմ կռվող» «ջահել իգիթ»[37]-ներ՝ իրենց կյանքը հանուն այդ պայքարի վտանգի ենթարկող, գոհաբերելու պատրաստ անհատներ, անվանի և ոչ անվանի ավազակներ՝ «…քարավան կտրած, պետական պոստը կողոպտած: Բեկերի ու աղալարների դեմ հողի ու ջրի համար վրեժխնդիր իրավատերեր … իրենց իսկ ձեռքով դատաստան արած: Սիրտ հերոսներ … սիրած կանանց համար արյուն թափած …»[38], որոնց համար դատապարտյալի շղթաների շառաչը «իրենց փառքն էր ու մեծությունը»[39], կյանքը իր գյուղից այն կողմ չպատկերացնող, չքավոր ու ապահով կյանքով ապրած հասարակ մարդիկ … և այլք: Եվ այս բոլորը, անկախ իրենց անհատական, անձնային, հասարակական, տնտեսական, մշակութային և այլ

[37] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 136:*
[38] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 135–136:*
[39] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 135:*

բազմազանություններից, ունեն մեկ կարգավիճակ՝ բանտարկյալ-խաչյալ, ճիշտ այնպես, ինչպես բանտից դուրս, ազատ կոչվող աշխարհում, անկախ ամեն ինչից, մարդիկ ունեն միևնույն կարգավիճակը՝ մարդ:

Բայց, ինչպես մարդու աստվածարար-ընաստեղծ տիեզերական բանտում՝ մակրոաշխարհում, այնպես էլ մարդու համար մարդու ստեղծած բանտ միկրոաշխարհում, մարդն ապրելու, գոյելու անընդհատ, անվերջ, հարատև կենսական պայքարի մեջ է: Բնականաբար, միկրոաշխարհում այդ պայքարն ավելի սուր է. այստեղ ամեն օր, ամեն պահ փորձություն են անցնում, վերագնահատվում և վերախմաստավորվում մարդկային ու կենսական արժեքները, այստեղ մարդուն շատ մոտ և շատ հաճախակի տեղի է ունենում, սկսվում կամ ավարտվում մեկ այլ մարդու ողբերգությունն:

Հենց այդ ողբերգություններն են պատմվածքների առանցքը: Հեղինակը արձանագրում է իր հերոսների հանցանք գործած լինելը, պատմում նրանց կյանքի ընթացքը բեկած, բանտում հայտնվելու պատճառ դարձած իրադարձությունների մասին, սակայն ո՛չ քննության առարկա է դարձնում հանցանքները, ո՛չ մեղադրում կամ արդարացնում դրանք գործածներին, ո՛չ վիճարկում նրանց պատիժները: Այսպիսով՝ հեղինակն անուղղակիորեն ի ցույց է դնում մարդու մեղավոր էությունն իբրև անժխտելի փաստ ընդունելու և քննության առարկա չդարձնելու իր դիրքորոշումը: Փոխարենը՝ դիտարկման, քննության և պատկերման առարկա, նյութ է դարձնում մարդու հարաբերվելն իր պատժին, վիճակված ճակատագրական փորձությանը, դրա ընթացքում տեղի ունեցած բեկումը և վերջինի հետևանքները՝ մարդու անհատական կենսական արժեքային հենասյուների՝ կարեկցանքի, ազատության, սիրո, արդարության խորտակում, անհատի աշխարհի ոչնչացում, մարդու կործանում՝ անկախ դրա ձևից՝ ֆիզիկական կամ հոգևոր:

Այսինքն՝ ողբերգությունների առանցքում, լայն առումով, անակնկալ և անողոք կենսական հանգամանքների հետ հոգեբանական մենամարտում անհատի չախչախումն է:

«Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքի առանցքում ճակատագիրը բեկած դիպվածի և անբեկանելի դատավճռի աքցաններում հայտնված հերոսի բազմաչերտ-բազմատարր ողբերգությունն է: Ակամա մարդասպան դարձած և մահվան դատապարտված հայ երիտասարդին կեղեքում են իր՝ ոճրագործ լինելու անժխտելի դաժան իրողությունն ու ոճրագործ դառնալու առեղծվածը (նա չի հասկանում, թե ինչպես կարող էր անել իր համար ևս անընդունելի, դատապարտելի, անմարդկային արարք, ինչպես կարող էր մարդուց վերածվել գազանի): Նրան տանջահար են անում մեղքի զգացումն ու գիտակցումը և դրանցից ազատվելու, գործած ոճիրը որևէ կերպ մտքից, հոգուց, կենսագրությունից ջնջելու անհնարինությունը, նաև մորը պատճառած ցավն ու տառապանքը, ընտանիքի ավանդույթին դավաճանելը, ինքնաղատապարտումը, անսահման զղջումը: Առավել ուժգին խոշտանգում են իրեն կյանքից զրկելու անողոք գերագույն պատիժն ու վերահաս մահվան սարսափը՝ մի կողմից և ապրելու (թեկուզև անազատության մեջ) տենչը՝ մյուս կողմից, բայց նաև՝ մեղքը քավելու, ճակատագիրը խմբագրելու հնարավորության չունենալու ցավն ու վախը: Այդ իրավիճակում անմարդկային կտտանք է դառնում դատավճռի բեկանման սպասումը՝ հուսավառման և հուսահատության միջև

ցնցումներով, ապագայի՝ «մա՞հ, թե՞ կյանք» անորոշության խենթացող մղձավանջով, ամեն օր «անհույս հույսով» մեռնել-հառնելով: Հետևում է վատթարագույնը՝ ըստ էության, կյանքի, ապրելու Սեդրակի պայքարն ավարտվում է կյանքի, ապրելու խնդրանքի մերժումով. գիծության, ներման աղերսը չի արժանանում ոչ մի գիծության, և բռնի մահը դնում է ողբերգության անբեկանելի վերջակետը:

«Քուրդ Ամոն» պատմվածքի հերոսի ողբերգությունը շատ ավելի «պարզ» է՝ իր իսկ սրտի ու մտքի, անգիտակցականի և գիտակցականի անհաշտության, ավելի ճիշտ՝ մտքի (գիտակցականի) անկարողության, անզորության՝ գոնե հանուն ապագա կյանքի առժամանակ սանձելու սրտի (անգիտակցականի) անզուսպ, անկառավարելի ձգտումն ու ցանկությունը:

«Մի երիտասարդ, առույգ ու սիրուն մարդ էր Ամոն. մեկին վիրավորելու պատճառով ինն ամիս բանտ էին վճռել. նոր էր նշանված»[40]. Հերոսի, նրա հանցանքի ու պատժի հեղինակային սկզբնական այս ներկայացումը չի պարունակում նույնիսկ դրամատիզմի որևէ տարր կամ նախադրյալ: Ամոյի տառապանքի ողջ խորությունը, ողբերգության չափը երևակում է սեփական ձեռքերով դրած իր կյանքի վերջակետը: Սառը դատողությամբ որքան, ըստ հեղինակի, «անտեղի» է նրա «հսկայական տանջանքը»[41], նույնքան անակնկալ, անհիմն ու անհասկանալի է այդ վերջակետը. չէ՞ որ ընդամենը մոտ յոթանասուն օրից կարողանալու էր վայելել ազատությունը, իր կարոտած բնությունն ու սերը: Սակայն Ամոյին պակասում էր հենց սառը դատողությունը. «Զարմանալի մարդ էր … ճիշտ և ճիշտ բնության որդի, հեռուն չէր մտածում և զգացմունքի գերի…»[42] էր սրտի բանտում: Խնդիրն այն է, որ նա ապրում, աշխարհն ընկալում, աշխարհի հետ հաղորդակցվում է գերազանցապես սրտով, հույզով, բնազդով, զգացմունքով: Ուստի իր կենսական տարածքից՝ բնությունից, պոկված, անջատ և բնական կենսաձևից ու կենսապայմաններից՝ ազատությունից, զրկված նրա սիրտը պարզապես կորցնում է գոյության հնարավորությունը՝ միաժամանակ խլելով այն իր գերուց՝ բանտարկյալից՝ չթողնելով նրան որևէ այլընտրանք, թույլ չտալով հետևելու մտքի՝ թեկուզ միայն մի քիչ էլ սպասելու, համբերելու, տառապանքին դիմանալու հորդորին: Ամոն ինքն է խոստովանում. «… կուզեմ չտանջվեմ, գիտեմ, որ քիչ է մնացել. ուրիշներին տեսնում եմ, որ տարիներ նստել են ու ախ չեն քաշում, ամա սիրտս խոսք չի հասկանում»[43] … Եվ բանականության նկատմամբ սրտի կենսասիրության «հաղթանակն» ամրագրվում է կենսասպանության ողբերգությամբ:

«Բայրամ Ալին» պատմվածքի հերոսն էլ ապրում է կյանքի բացարձակ ունայնության, իրենից դուրս աշխարհից բացարձակ օտարացման ողբերգությունը: «Աղքատ սարի որսկան», «կորիճ տղա» Ալին, անձնվիրաբար իր և սիրելիի սիրելու իրավունքը պաշտպանելուց, սիրած կնոջը տված խոստումը կատարելու, նրան երջանկացնելու վճռով ու երազանքով կյանքը մահացու վտանգի ենթարկելով տաժանավայրից փախչելուց հետո առերսվելով նույն

[40] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 27–28:*
[41] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 30:*
[42] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 29:*
[43] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 28:*

այդ կնոջ դավաճանությանը, կեղծիքի, անարդարության, բռնության դրսի աշխարհից իրեն զատում է բանտով: Հիմնարար կենսական հիմնասյուների՝ սիրո, հավատարմության, արդարության փլուզումը, իր ներսի ու դրսի աշխարհների միջև կենսահաստատ կամուրջների ոչնչացումը, անդունդի գոյացումը, դրսի աշխարհում իրեն օտար արժեքներով ապրող մարդկանց հասարակությունում, նրանց հետ կողք կողքի ապրելու անիմաստությունը, անհնարինությունը, կյանքի արժեզրկումն ընդհանրապես, ներսի ու դրսի աշխարհների հատման կետերի վերացումը մղում են բացարձակ մեկուսացման, ինքնազնդանման:

Իսահակյանի այս պատմվածքները, հիրավի, «փոքրիկ ողբերգություններ» են: Դրանց հերոսներն անհատներ են, որևէ մարդկային տեսակի, խմբի, հանրույթի հավաքականություն չեն ներկայացնում, ամենահասարակ մարդիկ են, մահկանացուներ, սակայն նրանց՝ հեղինակի պատկերած անհատական ողբերգություններն իրենց բազմազան փոփոխակներով՝ ըստ էության, համամարդկային են, մարդկային գոյության, թերևս, անքակտելի, անօտարելի բաղադրիչներ:

Իսահակյանը չափազանց անկեղծ, կենդանի ու խորն է պատկերում իր հերոսների ողբերգությունները, քանի որ դրանք հորինված, երևակայված չեն, իրական մարդկանց իրական պատմություններ են: Բայց և դրանց մեծ մասն իր ապրած անձնական ողբերգություններ են նաև, որոնք որոշակիորեն նույնացնում են հեղինակին ու հերոսին: Քանի որ այդ հարցի քննությունը դուրս է սույն հոդվածի շրջանակից, միայն մի քանի օրինակ. Սեդրակի նման ինքն էլ էր ապրել մահվան վախը բանտարկությունների ընթացքում (վկա հիշատակված գրառումները), երբ չգիտեր՝ ինչ կարող է վճռել դատարանն իր համար: Եվ հետո, քաղաքական պայքարի այն ուղին, որ ընտրել էր[44], ընկերներից չատերին կյանք էր արժեցել, այնպես որ ինքն էլ կարող էր վաղը լինել Սեդրակի տեղում: Նրա մորն ակամա պատճառած ցավի հետ կապված տառապանքը ևս հարազատ էր Իսահակյանին:

Ամոյի ազատության բաղձանքը և առանց դրա ապրելու անհնարինությունը հարազատ ու նույնական է Իսահակյանի՝ նույն պայմաններում ապրածին, վկա թեկուզ այս մեկ գրառումը. «Բանտում ուզում էի լինել թափառական և միայն ազա՛տ երկրում, ազատ թափառել:

Իսկ երբ լսում էի դրսից երգերի ձայներ, անուշ ձայներ, որոնք ինձ ծանոթ էին, որոնց ես երգել էի կամ լսել՝ ուրախ, ազատ ժամանակ՝ քիչ էր մնում՝ կատաղությունից ինձ սպաններ»[45]:

---

[44] *Իսահակյանը հայոց ազգային-ազատագրական պայքարի գործիչ էր, 1890–1899 թթ. ակտիվորեն մասնակցում էր Արևմտյան Հայաստանն ազատագրելու նպատակով կամավորական խմբեր կազմելու, զենք հայթայթելու և Օսմանյան կայսրություն ուղարկելու Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության գործողություններին: Կուսակցության գործունեությունը Ռուսական կայսրությունում գաղտնի էր, օրենքից դուրս՝ դրանից բխող հետևանքներով (տե՛ս Ա. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 153–154):*

[45] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 248:*

Բայրամ Ալու սիրո պատմությունն էլ գլխավոր գծերով Իսահակյանի սիրո և այդ սիրո դեմ համախմբված մարդկանց, Շուշիկի ամուսնության այլաբանությունն է:

Այս «փոքրիկ ողբերգությունները», բացի առանցքային ողբերգությունից, հիմնարար գաղափարից, ունեն ողբերգության ևս երկու շերտ, այսինքն՝ նաև երկու հիմնասյուն գաղափար:

Մեկն այն է, որ առանցքային ողբերգության հերոսների ապրածը, չնայած համամարդկային բնույթին, յուրաքանչյուր մարդու դրա վերաբերելիությանը, բոլոր մարդկանց կամ յուրաքանչյուր մարդու համար չէ, որ ողբերգությունն է և արձագանք առաջացնում. դիցուք՝ բանտի ծառայողների, նույնիսկ բանտարկյալների մի մասի:

Մյուսը հետևյալն է. գլխավոր հերոսներից յուրաքանչյուրի ողբերգությունը, այն ապրող մարդուց բացի, որպես այդպիսին, տեսանելի-ընկալելի է մի-այն նրան կարեկից, զթասիրտ ակնդիր-ունկնդիր մեկ այլ մարդու կողմից, որի հոգին ունակ է հաղորդակից լինելու իր նման մարդկային էակի հոգուն, որի հոգում արձագանքվում է այլ մարդու ցավը, և որը ոչ միայն ապրումակցում է, այլև չի մոռանում՝ ինքը ևս ստեղծված է նույն փխրուն կավից՝ կենդանությունն ստացած նույն չնչով: Եվ մարդկային ցավին, տառապանքին արձագանքող, հաղորդակից մարդը՝ այս դեպքում հեղինակը, ապրում է իր ողբերգությունը՝ տառապողին օգնելու, ողբերգությունը կանխելու անկարողության և տիեզերքի, բնության, մարդկության, պետության, հասարակության, հանրույթի գրված ու չգրված օրենքների դեմ իր անզորության, ինչպես նաև, մարդու գոյության այդ հավերժական ու անխուսափելի, երբեմն իրարամերժ ուղեկիցների հետ իր կյանքի ճանապարհը մինչև վերջ անցնելու և մարդ մնալու խաչի ահավոր ծանրության:

Այդպիսով ընդլայնվում ու միավորվում է պատմվածքների ողբերգական համատեքստը, բազմաճայնվում ամեն մի առանցքային ողբերգություն՝ բազմապատկելով գլխավորապես կործանվող անհատի համար ցավն ու ափսոսանքը, ըստ էության, ողբը, որով ավարտվում են բոլոր երեք պատմվածքները: Այսպես՝ Սեդրակին մահապատժի տանողների ոտնաձայները լռելուց հետո «... լսվում էր խեղճ մահապարտի հետզհետե մարող շղթաների մռայլ շառաչը:

Նրանց հետևեց մի ծանր լռություն և ճնշեց ողջ բանտը, բոլոր բանտարկյալներին»[46]:

Ամոյի ինքնասպանության դեպքում առավել հուզառատ է ողբը. «Օրը անդթորեն գեղեցիկ էր, թարմ, և երկինքը պայծա՛ռ՝ կյանքի պես՝ անու՛չ ու չքե՛ղ...

– Խեղճ Ամո, իմ խեղճ Ամո, – փղձկացի ես և ընկա անկողնուս վրա»[47]:

Բայրամ Ալու համար էլ հնչում են. «Ափսո՛ս իգիթ, ափսո՛ս, Բայրամ Ալի»[48] պարզ խոսքերը:

Այսպիսով՝ «բանտային շարքի» պատմվածքները, ստեղծագործական երկարամյա պատմության ընթացքում մշակվելով, հեղինակի ահռելի կենսա-

[46] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 13:*
[47] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 31:*
[48] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2019, 140:*

կան փորձով իմաստնացած հայացքով ու կենսափիլիսոփայությամբ վերանայվելով, որոշակիորեն բյուրեղացրել են մարդ անհատի կործանման մի քանի առանցքային ողբերգություն: Դրանք ներկայացվում են որպես մարդու էության ու կեցության տարբեր հարթություններում՝ ներսում՝ գիտակցականի և անգիտակցականի, դրսում՝ բնածին և մարդածին աշխարհների, և ներսի ու դրսի միջև ծավալվող հավերժական խուլ հակամարտությունների հետևանք: Այդ ողբերգություններից ածանցվում և դրանց հարակցում են մարդկային տառապանքին ինչպես հաղորդության, այնպես էլ անհաղորդության ողբերգություններ՝ բոլորն էլ համամարդկային և հավերժ մարդկային:

Եզրակացություն

Ավ. Իսահակյանի «Մի չաքաթ մահապարտի հետ», «Քուրդ Ամոն», «Բայրամ Ալին» պատմվածքները, սերելով «Բանտային հուշերից» ստեղծագործական մտահղացումից, վերածվել են բազմաշերտ «փոքրիկ ողբերգությունների»: Դրանք եզակի, բայց ոչ բացառիկ մարդկանց անհատական, ոչ եզակի ողբերգություններ են՝ համալրված այդպիսի ածանցյալ-հարակից այլերով. բոլորն էլ մարդկային էության և գոյության անքակտելի բաղադրիչներ են, այսինքն՝ համամարդկային ու հավերժ մարդկային:

Մարդաբանական, փիլիսոփայական, գեղարվեստական ընդհանրացումները, որոնց հեղինակը հանգել է այս երկերում մտահղացումից իրականացում ընթացքում, դրանց դուրս են բերել նախնական մտահղացման շրջագծից՝ նաև, ամենայն հավանականությամբ, վճռելով «Բանտային հուշերից» ստեղծագործական նախագծի ճակատագիրը: Ընդամին, որպես բացարձակապես ինքնակա գրական միավորներ ներկայացված այս պատմվածքները միավորված են իրենց հիմնարար, ածանցյալ և փոխլրացնող գաղափարներով, փիլիսոփայությամբ, գաղափարաբանությամբ, խորհրդաբանությամբ, ընդհանուր համատեքստով:

Եվ ուրեմն՝ այս երկերի ուսումնասիրությունը կարևոր է Ավ. Իսահակյանի գեղարվեստական արձակն ըստ ամենայնի արժևորելու, ինչպես նաև հեղինակի անհատականությունը համակողմանիորեն ընկալելու, կենսագրության որոշ դրվագներ հականանալու առումով՝ հատկապես նկատի ունենալով հերոսների հետ հեղինակի որոշակի նույնականությունը:

Մարինե Սարգսյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ դասական գրականություն, տեքստաբանություն, հայագիտություն: Հեղինակ է 2 գրքի և 7 հոդվածի:
m.sargsyan.msy@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Արօր» (Թիֆլիս), 02. IX. 1907:

Բառարան Սուրբ գրոց. 1881, Կոստանդնուպոլիս, տպագրութիւն Ա. Յակոբ Պօյաճեան, 635 էջ:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Ավ. Իսահակյանի ֆ., № 495–II, 2171–II:

Ինճիկյան Ա. 1977, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 257 էջ:

Իսահակյան Ա. 1975, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, «Հայաստան» հրատ., 278 էջ:

Իսահակյան Ա. 1984, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 476 էջ:

Իսահակյան Ա. 2000, Ավետիք Իսահակյան, գիտական կենսագրություն, գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 601 էջ:

Իսահակյան Ավ. 1940, Ընտիր երկեր երկու հատորով, հ. 2, Երևան, Հայպետհրատ, 328 էջ:

Իսահակյան Ավ. 1951, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 327 էջ:

Իսահակյան Ավ. 1977, Հիշատակարան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 471 էջ:

Իսահակյան Ավ. 2008, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 4, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.,731 էջ:

Իսահակյան Ավ. 2019, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 6, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 882 էջ:

«Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք), 30. I. 1923, էջ 808–811:

Հովհաննիսյան Գ. 1963, Ավետիք Իսահակյանի արձակը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 186 էջ:

«Յուսաբեր» (Կահիրէ), 18. III. 1926, 20. III. 1926:

«Սովետական գրականություն» (Երևան), 1955, սեպտեմբեր, № 9, էջ 4–7:

«МАЛЕНЬКИЕ ТРАГЕДИИ» АВЕТИКА ИСААКЯНА

МАРИНЕ САРГСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Ав. Исаакян, художественная проза, творческий проект, воспоминания, рассказ, тюрьма, крест, трагедия, микромир, макромир, ключевая идея, гуманистическое мировоззрение.

Для человека, мыслителя, творца Аветика Исаакяна тюремное заключение в молодом возрасте стало исключительным жизненным опытом, творческим отражением которого являются рассказы «Одна неделя со смертником», «Курд Амо» и «Байрам Али». Рожденные от творческой идеи «Из тюремных воспоминаний», они превратились в многослойные «маленькие трагедии».

Доработанные и пересмотренные автором, умудренным огромным жизненным опытом, они определенным образом кристаллизовали вечные конфликты, протекающие в разных плоскостях природы и бытия человека.

Внутри – между сознательным и бессознательным, вовне – между мирами, созданным природой и созданным человеком, между внутренним и внешним, а также несколько основных трагедий уничтожения человека, индивида, вытекающие из этих конфликтов, и вдобавок производные трагедии причастности и непричастности человека к человеческим страданиям. И все эти трагедии являются общечеловеческими и вечными.

Антропологические, философские и художественные обобщения, к которым пришел автор в этих произведениях, от замысла до воплощения, вывели их за рамки первоначального замысла, а также, вероятно, решили судьбу творческого проекта «Из тюремных воспоминаний». При этом, рассказы, представленные как совершенно самостоятельные литературные единицы, объединены своими основными, производными и взаимодополняющими идеями, философией, идеологией, символикой, общим контекстом. Поэтому изучение этих произведений важно как с точки зрения всесторонней оценки художественной прозы Ав. Исаакяна, так и многогранного восприятия личности автора, понимания некоторых эпизодов биографии, особенно учитывая его определенное тождество со своими героями.

Марине Саргсян – к. филол. н, старший научный сотрудник одтела текстологии Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: армянская классическая литература, текстология, арменоведение. Автор 2 книг и 7 статей. m.sargsyan.msy@gmail.com

AVETIK ISAHAKYAN'S "LITTLE TRAGEDIES"

MARINE SARGSYAN

Summary

Keywords: Avetik Isahakyan, artistic prose, creative project, memoir, short story, prison, cross, tragedy, microworld, macroworld, key idea, humanistic world view.

For the person, thinker, creator Avetik Isahakyan imprisonment at a young age became an exceptional life experience, creative reflection of which are the short stories of "One Week With a Convict", "Kurd Amo" and "Bayram Ali". Born from the creative idea of "From Prison Memories", they turned into multilayered "little tragedies".

Perfected and revised by the author, wise with vast life experience, they in a certain way crystallized eternal conflicts that occur in different planes of nature and human existence. Inside – between the consciousness and unconsciousness, outside – between the worlds created by nature and created by man, between the inner and outer, as well as several basic tragedies of the destruction of man, the individual, resulting from these conflicts and in addition, derivative-adjacent tragedies of human involvement and non-involvement in human suffering. Moreover, all these tragedies are panhuman and eternal.

The anthropological, philosophical and artistic generalizations to which the author came in these works, from conception to realization, led them out of the circle of the original conception, as well as, probably, decided the fate of the creative project "From prison memories". At the same time, the short stories presented as completely independent literary units are united by their basic, derivative and complementary ideas, philosophy, ideology, symbolism, general context.

Therefore, the study of these works is important both from the point of view of a comprehensive assessment of the artistic prose of Avetik Isahakyan, and the multifaceted perception of the author's personality, understanding some episodes of biography, especially given the author's certain identity with his characters.

Marine Sargsyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher of the Division of Textology of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA. Scientific interests: Armenian classical literature, textology, study of Armenian. Author of 2 books and 7 articles. m.sargsyan.msy@gmail.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ՀՏԴ : 929:891.981 Չրաքյան+891.981

Doi:10.54503/0135-0536-2023.1-128

ТИРАН ЧРАКЯН (ИНТРА) И ЕГО ПОЭТИЧЕСКИЙ СБОРНИК «КИПАРИСОВАЯ СТРАНА»*

БУРАСТАН ЗУЛУМЯН (Москва)

Ключевые слова: Тиран Чракян, Интра, «Кипарисовая страна», сонеты, символизм, красота, совершенство, иной мир.

Вступление

В блестящей плеяде западноармянских поэтов начала XX в. Тиран Чракян занимает свое особое место. Чракян, избравший для публикаций псевдоним Интра, – автор всего лишь двух опубликованных при жизни отдельными книгами произведений – лирико-философской поэмы в прозе «Внутренний мир» (1906) и цикла сонетов «Кипарисовая страна» (1908). Однако он активно публиковался в армянской периодической печати: с 1896 по 1914 гг. вышло в свет множество его эссе, статей и стихов.

С первых же публикаций вокруг творчества Интры развернулась бурная полемика – от признания до полного отрицания и памфлетов. В советское время его отнесли к декадентской, упадочнической литературе и не уделяли ему особого внимания[1], тогда как имена Мисака Мецаренца, Сиаманто, Даниеля Варужана были более известны, хотя, нужно подчеркнуть, что в целом существовало осторожное отношение ко всем западноармянским поэтам, испытавшим влияние литературного направления символизма и философии начала XX в. Со временем подходы и к символизму, и к Интре в частности, стали меняться и в армянском литературоведении все чаще стали говорить, что Интра несправедливо обойден вниманием: интерес к нему стал возрастать. Позже, начиная с 2000-х, появился ряд работ, освещающих различные стороны и художественные особенности его поэтического мира, а также серьезные философские исследования, касающиеся его творчества[2].

Ерванд Тер-Хачатрян, автор вступительной статьи к новому двухтомному собранию произведений Интры, изданному в 2014[3], проделал

* Представлена 01. IX. 2022 г., рецензирована 05. IX. 2022 г., принята к печати 23. III. 2023 г.

[1] См. об этом: *Հայ նոր գրականության պատմություն. 1979, 624–629, Յեղին սիրտը. 1991, 3–29:*

[2] *Դևմիրճյան. 2003, Ավետիսյան. 2005, Տէր-Խաչատրեան. 2014, 5–45, Դևմիրճյան. 2016:*

[3] *Տէր-Խաչատրեան. 2014, 5–45:*

огромный труд по сбору статей и эссе поэта, разбросанных в периодической печати. В 2016 г. вышла в свет объемная монография Петроса Демирчяна[4], большую часть своей научной деятельности посвятившего творчеству Интры.

Очевидно, что сегодня никто не может подвергнуть сомнению тот факт, что Интра – выдающийся армянский поэт, философ и публицист начала XX в., но его творчество все еще нуждается не только в разносторонних исследованиях, но и в представлении иноязычному читателю.

Жизненный путь

Тиран Чракян родился 15 сентября 1875 г. в Константинополе. Семья поселилась в квартале Скютар, когда его отец Гаспар Чракян был назначен служащим в монетном дворе, и они из провинции Арабкир перебрались в столицу. Мать Анна была тонкой поэтической натурой и, судя по посвященным ей стихам, Тиран был сильно к ней привязан, находя истоки своего таланта именно в ее богато одаренной личности.

В 1891 г. Чракян окончил Перперяновскую гимназию в Константинополе, директор которой, Ретеос Перперян, выдающийся педагог своего времени, оценил незаурядные способности юного Тирана и стал его наставником на многие годы. Юноша был одарен живописным талантом и после гимназии поступил в Художественное училище. Както Ованес (Иван) Айвазовский во время своего пребывания в Константинополе в 1888 г., знакомясь с работами учеников этого заведения, обратил внимание на акварели молодого Чракяна и, высоко оценив его талант, сказал, что он может стать большим художником[5].

Уже в то время Тиран писал стихотворные произведения, эссе, в которых также угадывался незаурядный талант поэта и склонность к философскому осмыслению мира.

В 1894–1896 гг. весь армянский народ тяжело переживал волну избиений, учиненных «кровавым» султаном Абдул-Гамидом. Эти события были первым серьезным испытанием, наложившим тяжелую печать на тонкую, ранимую душу молодого художника.

В 1897–1998 гг. Чракян предпринимает большое путешествие по Европе – это было его давней мечтой и в то же время бегством из Константинополя, погрузившегося в кошмар реакции абдул-гамидовского правления. Чракян посещает Париж, Женеву с целью совершенствовать свое живописное мастерство. Из-за крайне скудных материальных возможностей с трудом сводит концы с концами, путешествует, знакомится с последними новостями литературы, философии. В 1898 г. по приглашению своего друга Микаэла Кюрчяна едет в Египет, о котором

[4] *Դ ե մ ի ր ճ յ ա ն. 2016:*

[5] *Թ ո փ չ յ ա ն. 1976, 213:*

грезил с юных лет. Эта древняя страна с пирамидами, пустынями и оазисами производит на него неизгладимое впечатление.

В 1890 г. после многолетней влюбленности Чракян женится на Вержин Пейазян, сыгравшей большую роль в его жизни. Она стала прообразом лирической героини его произведений, выступая под именем Ирена.

Не получив другого образования кроме гимназического, благодаря самообразованию и своей неуемной страсти к чтению, Чракян глубоко изучил историю, искусство и философию, хорошо знал и естественные науки, и неслучайно считался одним из образованнейших людей своего времени. Много лет, с 1900 по 1914 г., Чракян преподавал, как он сам пишет в одной из своих записок, «историю цивилизаций, французский язык и литературу, психологию, эстетику и этику»[6]. К этому списку необходимо добавить и биологию: с детства любил природу, часами мог наблюдать за насекомым или цветком, а впоследствии сам иллюстрировал материалы своих уроков. На протяжении всего этого периода Чракян выступал в печати со статьями, эссе, очерками; они составляют интереснейшую часть его наследия.

Первая мировая война стала для Чракяна, как и для всего армянского народа, трагедией, вселенской катастрофой. Он не погиб во время Геноцида 1915 г. в Османской империи, как почти весь цвет армянской художественной интеллигенции, однако был обречен позже на все муки и смерть Голгофы. Его стремление обрести опору в жизни, поиски истинной чистой веры привели его к Адвентистам седьмого дня. Он стал проповедником. Продолжал преподавать и публиковаться, но постепенно охладел к семье, сжег весь свой архив, новые циклы стихотворений, и к 1914 г. полностью отошел от привычных форм деятельности. В том же году Чракян был призван в турецкую армию. Он отказался носить оружие и участвовать в военных действиях. Его определили секретарем-переводчиком. Но и здесь он не смог выполнять свои обязанности: уже сказывались признаки серьезного душевного расстройства, которое он получил за это время.

Уйдя со службы, Чракян переживает жесточайший душевный кризис: сжигает весь свой архив, бросает семью, занятия творчеством и становится христианским проповедником. Бродит из села в село, из города в город, проповедуя, пока его не арестовали в 1921 г. В кандалах много сотен километров гнали его по дороге в ссылку, избивая и издеваясь над душевнобольным человеком, пока, не выдержав всех этих испытаний, он не скончался 6 июня того же года. По свидетельству очевидцев, до последней минуты он благословлял всех, призывая к любви и миру. Его похоронили, но и здесь его тело не нашло успокоения:

[6] *Թ ո ւ ի ֆ յ ա ն. 1976, 214:*

труп выкопали ради последней нательной рубашки. Несколько армян вновь похоронили его останки на пшеничном поле[7].

Цикл сонетов «Кипарисовая страна» как метафора жизни

Творчество и жизнь, общеизвестно, связаны неразрывно, переплавляясь в горниле воображения в уникальный мир художника. И для Интры все, что он создал за свою недолгую жизнь, – плод сложнейших интеллектуальных и душевных поисков, вобравших интенции европейской художественной и философской мысли, глубоких переживаний и в конечном итоге – судьбы человека, прошедшего крестный путь вместе со своим народом. Да и в целом, переживание этой судьбы (несмотря на всю абстрагированность содержания его основных произведений, разомкнутых в осмысление больных вопросов этого мира) и составило глубинную суть творчества Чракяна, точно так же как в той или иной степени и форме наполнило страницы почти всех западноармянских поэтов.

Разнообразные впечатления и размышления молодых лет Чракяна легли в основу уникального произведения под названием «Внутренний мир», которое автор завершил к 1900 г. К публикации этого произведения он выбрал себе псевдоним Интра – анаграмму собственного имени и, по его же пояснениям, ассоциированного с именем индийского бога света и грозы Индры. Исследовательница творчества Чракяна Лусине Аветисян считает, что псевдоним ассоциативно связывался также с названием его первого творения – «Внутренний мир», в основе которого лежала идея света, переживания света как основы мира[8]. Логично, что для Чракяна, прекрасно владеющего иностранными языками, импульсом стало значение intra – внутрь, вовнутрь, обращение к внутреннему миру человека, к его личности, что сопрягается с глубинными интенциями этого совершенно нового в армянской литературе и по замыслу, и по исполнению произведения.

«Внутренний мир» Чракяна вышел в свет через 6 лет после его завершения – в 1906 г.: цензура никак не могла решиться дать разрешение на издание, хотя трудно предположить, что антиправительственного можно было усмотреть в этом философском по сути произведении.

Публикация вызвала бурную реакцию: на страницах журналов развернулись дискуссии, было написано множество как положительных, так и отрицательных рецензий. Однако для всех было очевидно, что это новое явление в армянской художественной действительности[9].

Жанр этого творения современными исследователями Чракяна определяется как философско-лирическая поэма, либо лирико-философская

[7] *Դեմիրճյան. 2016, 622–623:*
[8] *Ավետիսյան. 2005, 50–52:*
[9] *Ավետիսյան. 2005, 6:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

проза. Ему посвящена большая критическая и исследовательская литература.

В 1908 г. выходит в свет поэтический сборник «Кипарисовая страна», гораздо менее изученный по сей день, чем «Внутренний мир». После бурной реакции на «Внутренний мир» его выход был встречен гораздо более спокойно, скорее, можно сказать, остался незамеченным. Исследователь В. Киракосян[10], и вслед за ним Л. Аветисян считают цикл слабым стихотворным отражением «Внутреннего мира»[11]. Е. Тер-Хачатрян, возражает давним и современным оппонентам Интры: «…меж тем «Кипарисовая страна» – это выдающееся явление поэтического искусства и культуры»[12]. Отчасти восполнил этот пробел анализом цикла в своей объемной монографии интравед Петрос Демирчян[13].

Непривычная сложность Интры, на наш взгляд, не позволила современникам единовременно охватить весь масштаб его поэтического мира, и только со временем, накопив определенный опыт общения с этим не менее выдающимся, чем «Внутренний мир», произведением становится возможным приближение к имманентным слоям поэтического сборника «Кипарисовая страна».

Первая особенность, выделяющая это произведение в ряду других изданий тех лет, – это цикличность. Если в XIX в. поэтические сборники выходили под названием «Стихотворения», или «Песни», то в начале XX в. выходящие один за другим сборники западноармянских поэтов – Сиаманто, Ваана Текеяна, Мисака Мецаренца, Варужана, Рубена Севака – уже отмечены выраженным циклическим мышлением. Мы имеем дело не со сборниками стихотворений, более или менее тематически связанных друг с другом, как это наблюдается в изданиях предыдущего поколения поэтов XIX в., а именно с циклом, где идея, тема и содержание произведений теснейшим образом связаны друг с другом и раскрывают некую сверхзадачу автора[14]. Таковы были интенции символистского направления в искусстве начала века, когда поэты придали новый смысл и качество оформленным в циклы стихотворным произведениям. Это было нововведение и примета символизма в целом. Тем не менее, и в этом ряду по внутреннему единству идеи, содержания, образного строя и композиции «Кипарисовая страна» Интры стоит особняком.

В заглавие сборника выведено название распространенного в Средиземноморье и на Востоке дерева – кипариса. Интра использовал широко распространенный символ кипариса[15], но наполнил его своим ав-

[10] *Կիրակոսյան. 1985, 145:*

[11] *Ավետիսյան. 2005, 143:*

[12] *Տէր-Խաչատրեան. 2014, 29:*

[13] *Դեմիրճյան. 2016, 457–479:*

[14] См.: Геворкян. 1994; Геворкян. 1995.

[15] Символика кипариса почти всегда была двойственной. Кипарис связывался с жизнью, плодородием (он был в том числе и фаллическим знаком),

торским содержанием. В армянской поэзии образ кипариса встречается в духовной поэзии, у Товмаса Терзяна, Егиа Темирчипашяна[16], однако они остаются в пределах общей семантики, закрепленной издревле за этим символом, в частности в духовной литературе и поэзии (кипарис широко используется в настенной живописи, миниатюристике как атрибут ближневосточной реальности в его символическом значении).

В европейской, в частности французской поэзии, с усилением символического мировосприятия поэты (Мюссе, Бодлер), а затем и поэты символисты Верлен и Рембо, обращаются к символике кипариса[17], но такого глобального применения образа кипариса, как у Интры, когда символ становится конструктором смысла произведения, мы не наблюдаем. Пожалуй, только в русском символизме Иннокентий Анненский создает цикл под названием «Кипарисовый ларец». Однако автор статьи «С розой дружен кипарис: мистика растений в поэзии Вячеслава Иванова», Л. Г. Каяниди приходит к выводу, что образ кипариса у Иванова не выходит за пределы устоявшейся символики кипариса[18].

Хотя для армянского менталитета это растение привычное, оно росло и в верховьях Тигра и Евфрата, и в исторической Киликии (ныне терр.

рождением и бессмертием. Одновременно он считался символом смерти и траура. В верованиях разных народов кипарис был посвящен множеству богов, иногда имеющих прямо противоположные функции. В Древнем Вавилоне он рассматривался как дерево богини плодородия и любви Иштар. В дни посвященных ей празднеств жрицы танцевали перед вратами храма в венцах из кипарисовых ветвей. Финикийцы почитали кипарис как Мировое Древо, под сенью которого родилась Астарта (финикийская ипостась Иштар). Оружие из этого дерева имел и Мелькар – молодой бог, покровитель города Тир, которого эллины почитали под именем Геракла. Египетский крест жизни и вечности – Анх, один из атрибутов бога Осириса, был изготовлен именно из кипариса. В древнеперсидской мифологии это было дерево огня и света (Ахурамазды), богатства, вечной божественной силы и любви. В античном царстве мертвых, из деревьев растут лишь плакучие ивы и кипарисы. Кипарисовую рукоятку для своего факела изготовил бог Гермес (Меркурий). Он брал этот факел с собой, когда провожал в Аид души умерших. История о кипарисе связана с богом Аполлоном. В ближневосточной христианской традиции церкви и рукописи украшались изображениями кипариса, используется в праздничных венках, посвященных Дню въезда Иисуса в Иерусалим, совмещаются пальмовые и кипарисовые ветви. Крест Голгофы был изготовлен из нескольких сортов священных деревьев, в том числе и кипариса. Идея вечной жизни души связала их с христианскими погребальными традициями. Взмывающие вверх остроконечные кроны деревьев указывают душам прямой путь к небесам, символизировали веру в жизнь после смерти (Мифологический словарь, 290).

[16] См.: *Տ և մ ի ր ճ ի պ ա չ յ ա ն. 1986:*

[17] См.: Кассу. 1999, 181–286.

[18] К а я н и д и. 2018, 28–36.

Филологический журнал • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Турции, Анталия), и в Константинополе, где армяне жили издревле, все же его употребление в поэтическом тексте кажется экзотическим. Причем это не роща, как иногда переводят на русский язык, а именно страна: *նոճի* – кипарис, *աշան* – страна, переводить следует в этом расширительном значении (но не в других значениях этого корня), ибо на смысловом и метафорическом уровнях символика кипариса у Интры отражает глобальный характер авторской интерпретации кипарисов как единого сообщества и теснейшим образом связывает все произведения. Важная для поэта семантическая единица выведена в название и, как мы увидим, скрепляет лирическое повествование от начала до конца.

Стихотворения цикла датированы 1904–1908 гг., однако они выстроены в соответствии с авторским замыслом, а не по хронологии написания. Цикл предваряется посвящением матери: она скончалась в 1908 г., этим же годом, месяцем март, датировано стихотворение. Следовательно, ее смерть не влияла на смысловой уровень цикла, а лишь выявив некое внутреннее задание, органично предварило его, придав новую высоту глубинным интенциям.

Поэт увековечивает память матери, вознося ей гимн любви. Восхваляется не доброта, нежность, забота, любовь к сыну, ее многотрудная жизнь, как это мы видим в произведениях других авторов, а ее поэтическая натура, бесконечная сострадательная любовь ко всему сущему. Все, что она любила, что переживала, и составляло суть ее тонкой души, вознеслось и, пройдя круговорот в других совершенных мирах, воплотилось в поэтическом даре сына, ведь он находит в ее богато одаренной натуре истоки своего дарования. В его лире душа матери обрела вечную жизнь.

Եւ որ, այս տարի, փոխուելով այլ եւս ի հող՝
Եւ ի տեսիլ, ի զօրութիւն, ի շունչ, ի գաղափար,
Ի գերմարդկային անմարմնաւորութիւն,
Կը ժպտի, կը խայտայ, կուլայ, կը խօսի ու կը մտմտայ
Իմ մէջս, ու քնարիս մրմունջներուն մէջ.,
Եւ կը թեւածէ, կը հանգչի ի յաւիտենական տեսլականն, ի Տէր,
Զօն նոճեզալար եւ նոճեսօսափ սիրոյ…[19]*:*

Той, что в году нынешнем ушла в мир иной,
И как видение, как сила, как дух, как мысль,
В сверхчеловеческом своем перевоплощении
Улыбается, ликует и плачет, беседует и трепещет
Во мне и в напевах лиры моей,

[19] *Ինտրա. 2014, 234* (далее страницы цитат будут указаны в тексте)*:*

И возносится и находит свое завершение (покоится),
подобно вечной идее в Боге – В гимне моем Любви,
кипарисовострунной и подобной шелесту кипарисов.
(Здесь и далее подстрочные переводы выполнены мною – *Б. З.*)

Уже в предваряющем цикл стихотворении присутствует образ кипариса: поэт сравнивает свою любовь к матери с вечнозелеными и вечно шелестящими кипарисами, для поэта они – высшая степень сравнения, мерило всего сущего.

Образ и символика кипариса присутствовали на протяжении всего творчества Интры, впервые они были представлены во «Внутреннем мире» и неразрывно связаны с художественной символикой этого произведения, но они не имеют смыслообразующего значения, в цикле же они обрели абсолютное *самодовлеющее и смыслопорождающее* значение. Цикл отличает потрясающий душевный накал, искренность и глубина переживаний на грани жизни и смерти, поиск веры и неизменная нравственная направленность.

То, что кипарис стал ключевым образом для этого цикла, не только не случайно, стихийно-спонтанно, но имеет глубокие ментально-символические и философские основания, в то же время отсылает к конкретно-жизненным обстоятельствам. Двухэтажный дом родителей поэта находился на окраине Константинополя, у кладбища, которое было засажено кипарисами (эта традиция идет издревле и связана с символикой кипариса). Детство его прошло среди этих деревьев («Место прогулок»). Однако в цикле они не составили пейзажный фон, не стали предметом импрессионистических зарисовок (именно так зачастую интерпретируют поэзию Интры[20]), а явились стержнем, сутью, смысловым ядром цикла. Этот древний многозначный и противоречивый образ Интра наполнил своим собственным содержанием и символикой.

В 1898 г., получив весть о смерти отца, Чракян был вынужден прервать свое путешествие по Европе и вернуться в Константинополь. Так сложилось, что он вновь поселился в районе, неподалеку от кладбища, что также тонкими аллюзиями отразилось в цикле. Но жизненные референции не могли бы быть воплощены в творчестве, если бы не соответствовали внутренним глубинным потребностям художественного и интеллектуального мира поэта.

[4] *Լատիներենի հոլովման համակարգի մեկնաբանության համար հիմք ենք ընդունել հետևյալ ձեռնարկները՝ Աղայան. 1950, 9–34,* Виничук. 1985, 23, 26, 30, 32, 45, 50– 52, 60, 63–64.

սարազոր ցուցանշաններ են եզակի ուղղականի և սեռականի նշանակիչները՝ -ei և -es: *Եթե հոլովման սեռային նշանի խիստ բևեռացված տիպավորում կատարելու լինենք, ապա կարող ենք ասել, որ լատիներենի հոլովման նշանակյալները հիմնականում երկու սեռի համատեղմամբ դրսևորվող արական ու իգական և արական ու չեզոք սեռերն են, իսկ նշանակչի դիտանկյունից կհիմնվենք հոլովման համակարգում ամենից կայուն ցուցանշանների վրա՝ տարբերակելով եզակի սեռականի համապատասխան վերջավորությամբ ձևավորվող* AE, I, IS, S, EI *հոլովումներ:*

Գրաբարի հոլովման տիպերի ընդհանուր բնութագիրը

Հայերենի գոյականը չունի սեռի քերականական կարգ, ուստի սեռային նշանակյալով հոլովիչներ չեն կարող լինել: Գրաբարի համար հոլովումների դասակարգման տարբեր սկզբունքներ են մշակված, որոնք երկու խմբի ենք բաժանում՝ ավանդական և պատմահամեմատական: Ավանդականն այն է, որով ուսուցում են մեր համալսարաններում գրաբարը: Պատմահամեմատական դասակարգման հեղինակը Գ. Ջահուկյանն է, որը, հենց ծագումնաբանական խնդիրներով պայմանավորված, գրաբարի հոլովման համակարգը ներկայացնում է՝ հիմք ընդունելով հոլովման տիպերի միայն արտահայտական կողմը, այլ կերպ ասած՝ նշանի բևեռներից մեկը՝ նշանակիչը, որով էլ պայմանավորված՝ նրա խմբավորումը կարելի է անվանել նաև հոլովումների նշանակչային տիպաբանություն: Ըստ այդ հայեցակետի՝ Գ. Ջահուկյանը տարբերակում է ձայնավորահիմք, ձայնորդահիմք և տարահիմք (ձայնավորաձայնորդահիմք) հոլովումներ[5]: Գրաբարի հոլովումների դասակարգման ավանդական սկզբունքը ևս, ըստ էության, առավելապես նշանակչով պետք է պայմանավորել[6]: Սա բացատրվում է մի կողմից՝ նրանով, որ որքան էլ այս կամ այն հոլովումը բնութագրելիս քերականները նշում են, թե այս ինչ իմաստային խմբերն են պատկանում տվյալ հոլովմանը, այնուամենայնիվ, հեղհեղուկ են այդ խմբավորումները, որովհետև կայուն չէ դրանցով որոշվող հոլովման տիպը, և նույն խմբի այլ բառեր կամ հենց նույն բառերից չատերը զուգահեռաբար այլ հոլովումների մեջ էլ են հայտնվում: Կարծում ենք՝ սա բացատրելի է այն բանով, որ V դարում արդեն սկսվել էր հին հայերենի հոլովման համակարգի քայքայման ընթացքը, և այն, ինչը կանոնական կարող էր համարվել V դարին նախորդող շրջանում՝ ըստ իմաստային խմբերի առանձնացման, V դարում արդեն հոլովման տիպերի տեղաշարժերի և փոխանցումների էր հանգեցրել: Մյուս կողմից՝ հոլովման տիպը նշանակչով որոշելու դյուրությունը բացատրելի է հոլովման բնույթի այն կանոնական առավելությամբ, որին այդպես էլ հետագայում չհասան գրաբարին հաջորդած գրական գոյաձևերը: Բանն այն է, որ հոլովիչը գրաբարում հետևողականորեն դրսևորվում էր բոլոր թեք ձևերում, միաթեք (պարզ) հոլովման դեպքում՝ անխտիր բոլոր թեք

[5] *Ջ ա հ ո ւ կ յ ա ն 1959, 95–109:*

[6] *Գրաբարի հոլովման՝ ավանդական ու նորագույն մոտեցումների, ինչպես և թեքական թե կցական տիպի պատկանելության ուշագրավ դիտարկումներ կան վերջին շրջանի ուսումնասիրություններում (տե՛ս Ա վ ե տ յ ա ն. 2020, 40–53, Ա վ ե տ յ ա ն. 2021, 223–236):*

ձևերում, երկթեք (խառը) հոլովման դեպքում՝ մինչև եզակի գործիականը՝ մի հոլովիչով, եզակի գործիական և հոգնակի թեք ձևերում՝ մյուս հոլովիչով: Ոչ մի անկանոնություն չկա այն բանում, որ երկթեք հոլովման բառերը համաչափորեն չեն դրսևորվում եզակի և հոգնակի հարացույցներում: Ակնհայտ է, որ հոգնակի հարացույցի թեքաղրանքով է եզակի գործիականը ևս երկրորդ հոլովիչ ունենում, որովհետև հոգնակի հարացույցի համաչափությունը պիտի ապահովվեր մեկ (տվյալ դեպքում՝ երկրորդ) հոլովիչով, իսկ հոգնակի գործիականը, ի տարբերություն երկթեք հոլովման հոգնակի մյուս թեք ձևերի, եզակի գործիականից է կազմվում: Պետք է կարծել՝ լեզվի ներքին ձևի թեքաղրանքով հոգնակի հարացույցի հոլովչային միասնականությունը պահպանելու օրինաչափությամբ է եզակի հարացույցի գործիականին տրվել երկրորդ հոլովիչով արտահայտվելու «արտոնություն»:

Գրական արևելահայերենի հոլովման տիպավորումը՝ պատմականության, գործունության և կենսունակության հարաչափությամբ

Կարծում ենք՝ գրաբարից հետո հայերենի գրական գոյաձևերից հոլովման տիպերի ուշագրավ համակարգ ունի գրական արևելահայերենը, որի տիպաբանությունը նույնպես կփորձենք նորովի մատուցել՝ հիշյալ տիպերը ներկայացնելով պատմականության, կենսունակության, գործունության հատկանիշների փոխհարաբերությամբ (նշանայնության հատկանիշին առանձին ենք անդրադառնում): Ըստ որում ինչպես հոլովման տիպերը, այնպես էլ բնորոշող հատկանիշները խստորեն անջրպետված չեն իրարից, ավելին, հաճախ նույն հատկանիշով հնարավոր է լինում մեկնաբանել հոլովման տարբեր տիպերը:

Հիմք ընդունելով է. Աղայանի դիտարկումը հնչյունափոխության վերաբերյալ՝ ըստ որի՝ հնչյունափոխությունը միշտ պատմական բնույթ ունի[7], ժամանակին հնչյունափոխությունը խմբավորել ենք ավարտուն պատմական և գործուն պատմական սկզբունքներով[8]: Պետք է նկատել, որ նույնը վերաբերում է նաև հոլովմանը: Այսօր գործող հոլովման յուրաքանչյուր տիպ արդյունք է նախորդ փուլերից մեկում կատարված ձևավորվածության: Այս առումով հոլովման բոլոր տիպերը պատմական են: Միայն թե պատմականության հատկանիշն այս դեպքում ևս զուգորդվում է գործունության հատկանիշով: Այս երկու հատկանիշի համատեղմամբ ունենում ենք ավարտուն (ոչ գործուն) պատմական և գործուն պատմական հոլովումներ:

Ավարտուն պատմական են այն հոլովումները, որոնք՝ իբրև ավարտուն վիճակ, դրական մերօրյա գոյաձևին են անցել որևէ նախորդ փուլի (տվյալ դեպքում՝ գրաբարի) հոլովման համակարգից որպես սահմանափակ կիրառության անփոփոխ ժառանգություն: *Ավարտուն պատմական են արտաքին* Ա, Ո *և ներքին* Ե *հոլովումները: Սրանք հոլովման այս տեսակին են պատկանում, քանի որ դրանցով հոլովված բառերը ներկայիս դրական հայերենի ներհամակարգային արտաքին* Ի *հոլովման բառեր են և վերը նշված հոլովումներով գործածվելիս կիսաքարացած ձևերի դրսևորում են: Այս հոլովումները արևելահայ դրական լեզվի համակարգին հակահամակարգ են: Ուստի կարող ենք*

[7] *Աղայան. 1987, 265:*
[8] *Գյուլզատյան. 2015, 74–75:*

ընդհանրացնել, թե ավարտուն պատմական են մեր հոլովման հարացույցում հակահամակարգ ներկայացնող հոլովումները:

Գործուն պատմական են այն հոլովումները, որոնք սկզբնավորվել և գործել են մեր լեզվի նախորդ շրջաններում, ժառանգաբար փոխանցվել և գործում են ներկա փուլում՝ ունենալով այս կամ այն աստիճանի կենսունակություն: *Սրանք ներհամակարգային հոլովումներ են:*

Այս հոլովումներից ամենից կենսունակն ու գործունն արտաքին Ի հոլովումն է ոչ միայն իր տարածվածությամբ, այլև տարածունակությամբ, որի համար էլ ընդհանրական կամ հասարակ հոլովում է կոչվում:

Գրական արևելահայերենի հոլովման տիպերի նշանագիտական բնութագիրը

Նշանայնության առումով կարելի է ասել՝ Ի հոլովումը չեզոք հոլովում է. ունի մասնակի նշանայնություն. բացի -անի, -ենի, -ուստ, ում-, ացի, -եցի, -ի, -ցի, -ուիյուն, -ուհի *ածանցներով և -ի վերջավորությամբ կազմվող գոյականներից, որոնք սեռական հոլովումներն ունեն, մնացած գոյականակերտ ածանցներով բառերը նշան են ծառայում գոյականի Ի հոլովման պատկանելության: Առերևույթ կարող է թվալ, թե քիչ չեն այդ ածանցները* (-արան, -անք, -եղեն, -բան, -եստ և այլն), *սակայն դրանք չեն ներկայացնում այն միասնական խմբավորումները, որոնց հանդիպում ենք մյուս հոլովումները դիտարկելիս, և բացի այդ՝ դրանցից անհամեմատ շատ են այն պարզ ու բարդ բառերը, որոնք չեն մտնում նշանային որևէ խմբի մեջ և ենթարկվում են Ի հոլովման: Քանի որ արտաքին նշաններով մասնակիորեն են ճանաչելի Ի հոլովման գոյականները, թեև այդ ճանաչողությունը նշանի ոչ թե բևեռային (կա՛մ նշանակչի, կա՛մ նշանակյալի), այլ բևեռների միասնական ընդգրկվածությամբ է իրացվում, ուստի այդ հոլովման յուրահատկությունն ենք համարում հենց մասնակի նշանայնությունը՝ հակառակ մյուս հոլովումների, որոնք ինքնին նշանային պայմանավորվածություն ունեն անգամ բևեռներից միայն մեկի առկայությամբ:*

Նշանակրության առումով մյուս հոլովումները խմբավորվում են նախ՝ նշանի լիածավալության և բևեռացվածության սկզբունքով, ապա՝ բևեռներից մեկին հատկացվածության սկզբունքով:

Ա) Նշանային լիածավալ հոլովումներ են՝

ա. ՈՒ հոլովումը՝ ոչ սոսկ ձևային ենթախմբերի բառերի համար, որոնք են՝ 1) -ալի, -ելի, -անի, -ենի *վերջածանցներով գոյականները՝ բանալի – բանալու, ունելի – ունելու, մատանի – մատանու, թզենի – թզենու, 2) անորոշ դերբայի համար՝ տեսնել – տեսնելու, զգալ – զգալու, 3) ձի գոյականի համար՝ իր միակությամբ՝ ձի – ձիու:*

բ. Ան հոլովումը՝ 1) -ում ածանցով բայանուններում՝ ա) կառուցում – կառուցման, բ) մանուկ բառում՝ իր միակությամբ՝ մանուկ – մանկան, 2) այդ հոլովման -վան տարբերակը՝ մահ բառում՝ իր միակությամբ՝ մահ – մահվան:

գ. Յան հոլովումը՝ 1) -եստ, -ուստ ածանցներով բառերում՝ հանգիստ – հանգստյան, կորուստ – կորստյան, 2) -ունդ ածանցով ծնունդ բառում՝ իր միակությամբ՝ ծնունդ – ծննդյան:

դ. Ա արտաքին հոլովումը՝ 1) աղջիկ բառում՝ իր միակությամբ՝ աղջիկ – աղջկա:

ե. Ո ներքին հոլովումը՝ հայր, մայր, եղբայր բառերում՝ հայր – հոր:

գ. Ա ներքին հոլովումը՝ 1) -ուԹյուն ածանցով գոյականներում՝ լիուԹյուն – լիուԹյան, 2) անուն բառում՝ իր միակուԹյամբ՝ անուն – անվան, 3) «տուն» իմաստային դաշտով միավորված և -ուն հանգն ունեցող բառերում՝ տուն – տան, սյուն – սյան և այլն:

է. Յ հոլովումը՝ 1) -(ա/ե/ո/ու)նք վերջածանցավոր բառերում՝ պապոնք – պապոնց. 2) -ցի ածանցով խոսակցական երանգով տեղաբնակ նշանակող բառերում՝ երևանցիք – երևանցոց:

ը. ԱՆՅ հոլովումը՝ մարդ-կին նշանային դաշտի մեկ-երկու բառերում՝ 1) -իկ հոգնակերտով՝ մարդիկ – մարդկանց, 2) -այք հոգնակերտով՝ կանայք – կանանց:

Նշանային միաբևեռ հոլովումները խմբավորվում են հենց այդ բևեռներով՝ միայն նշանակյալով կամ միայն նշանակչով:

Բ) 1) Նշանի նշանակյալով պայմանավորված հոլովումներ են՝

ա. ՈՒ հոլովումը՝ Աստված, մարդ, ամուսին, անկողին բառերում՝ Աստծու, մարդու, ամուսնու, անկողնու:

բ. ԱՆ հոլովումը՝ տարվա եղանակների անուններում՝ գարնան, ամռան, աշնան, ձմռան:

գ. ՎԱ հոլովումը (ժամանականիշ բառեր)՝ օրվա, ամառվա և այլն:

դ. ՈՋ հոլովումը (ընկերուԹյուն-խնամակցուԹյուն և այլն նշող բառեր)՝ ընկերոջ, կնոջ և այլն:

ե. ՅԱՆ հոլովումը՝ ժամանակային հականշուԹյամբ բառերում՝ առավոտյան, երեկոյան:

զ. Ո արտաքին հոլովումը՝ վսեմ ոճի (դավանաբանական հասկացուԹյուն բովանդակող) բառերում՝ Աստծո, Հուտ, Հավատ և այլն:

է. Ա արտաքին հոլովումը՝ հատկանունների՝ տեղանունների և անձնանունների պատկառելի բազմուԹյան մեջ, որոնց մեծ մասը դրաբարում ենթարկվել է այս հոլովման, որն այսօր պահպանված է սահմանափակ կիրառուԹյուններում՝ Գեղամա (լեռներ), Վանա (ծով/լիճ), Տիգրանա (ժամանակներ) և այլն:

Բ) 2) Նշանի նշանակչով պայմանավորված հոլովումներ են՝

ա. ՈՒ հոլովումը՝ ուղղականում -ի վերջավորուԹյամբ[9] բառերում՝ այգի – այգու, քեռի – քեռու և այլն:

բ. Ե հոլովումը՝ -[ը]ր հանգով դուստ[ը]ր – դստեր, կայս[ը]ր – կայսեր:

Ըստ հոլովման հարացույցներում դրսևորվող հոլովիչների քանակի՝ արևելահայերենի հոլովումները բաժանում ենք մի-ինգ և երկինգ խմբերի: Թեև վերը խոսում էինք, օրինակ, ԱՆ, ՎԱ, ՈՋ, ՈՒ և այլ հոլովումների մասին, սակայն ինքնուրույն այս նշվածները իրականում այդ անուններով չպիտի կոչվեն, որովհետև զուգակցվում են այլ հոլովիչներով ևս: Գրական արևելահայերենի հոլովումների տիպերն իրականում հետևյալ պատկերն են ներկայացնում:

---

[9] *Այս կարգի բառերի՝ ուղղականում «ի» վերջահանգ ձայնավորի՝ վերջավորուԹյուն լինելն ապացուցել է Է. Աղայանը (տե՛ս Ա ղ ա յ ա ն. 1967, 234):*

Միավեք հոլովումներ: *Այս հոլովման են պատկանում այն բառերը, որոնք կամ եզակի և հոգնակի հարացույցները ձևավորում են նույն հոլովիչով, կամ էլ անհոգնական կամ անեզական գոյականներ են, որոնք, հասկանալիորեն, մեկ հոլովիչով են թեքվում: Երկու հարացույցով միավեք է Ի հոլովումը: Միավեք են Ց անեզական հոլովումը, ՈՒ հոլովումը՝ միայն անորոշ դերբայի հոլովական հարացույցում (անհոգնական է), Ա ներքին հոլովումը՝ -ություն ածանցով անհոգնական գոյականներում:*

Երկվեք հոլովումներ: *Այս հոլովումների երկրորդ հոլովումը հոգնակի հարացույցին է պատկանում, որի՝ ամենից տարածված հոլովիչն է [ի] ձայնավորը: Երկվեք են արտաքին ՈՒ/Ի, ԱՆ/Ի, ՎԱ/Ի, ՈՋ/Ի, ՈՋ/ԱՆՑ (կնոջ/-կանանց), ՈՒ/ԱՆՑ (մարդու/մարդկանց), ներքին Ո/Ի, Ա/Ի, ե/Ի հոլովումները (վերջինում եզակի բացառականը ևս Ի հոլովման կանոնով է կազմվում՝ կայսրից):*

Քանի որ լեզուներում հանդիպում է նաև հոլովների կազմության տարահիմքություն կամ նույնիսկ տարարմատություն, ապա տարբերակվում են նաև հոլովման համարմատ և տարարմատ, նույնահիմք և տարահիմք տիպեր: Որպես կանոն՝ տարարմատությունը կամ տարահիմքությունն արտահայտվում է դերանունների հոլովակազմության մեջ, ուստի տարբերակվում են հոլովման դերանվանական, անվանական, անվանադերանվանական տիպեր: Արևելահայերենի հոլովման այս տիպերի մասին շահեկան ուսումնասիրություն ունի Է. Աղայանը[10], որի դիտարկումներից մեկին կանդրադառնանք այստեղ: Խոսքն անվանադերանվանական հոլովման պատկանող ո՞վ դերանվանն է վերաբերում: Նկատելով, որ այս դերանվան թեք ձևերը, թեև ծագումնաբանորեն եզակի են, սակայն համաժամանակյա մոտեցմամբ դա ոչ մի նշանակություն չունի, որովհետև այդ ձևերը հավասարապես վերաբերում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվին, Է. Աղայանը բացահայտում է, որ այդ իսկ թեք ձևերն իրականում չեզոք թիվ են նշում: Շարունակելով դիտարկումը՝ լեզվաբանը նկատում է, որ, ինչպես սեռականն ու տրականը, այնպես էլ եզակի ուղղականն աննշույթ է, ուստի այդ երեք հոլովների թվային նույնացում է կատարում՝ ուղղականն էլ թեք ձևերի պես համարելով չեզոք թիվ և ձախակողմյան հարացույցն այդպես հակադրելով հոգնակի թվին, որի համաձայն՝ արևելահայերենում նշված դերանվան երկու թիվ է տարբերակում՝ չեզոք և հոգնակի[11]: Թեև խիստ կարևոր է հայ լեզվաբանության համար չեզոք թվի հայտնագործությունը, սակայն ակնբախ է նաև տրամաբանական խոցելիությունը: «Չեզոք» հասկացությունն կարող է լինել միայն հակադիր բևեռների միջև, ըստ այդմ անտեղի նույնացում է կատարվել, ուստի ո՞վ դերանվան համար տարբերակում ենք երեք թիվ՝ եզակի (ո՞վ), հոգնակի (ովքե՞ր) և չեզոք, որի քերույթներն են (grammeme) *առաջին երկուսի համար ընդհանուր թեք հոլովաձևերը (ո՞ւմ, ումի՞ց, ումո՞վ)*:

[10] *Ա ղ ա յ ա ն. 1967, 262–274:*
[11] *Ա ղ ա յ ա ն. 1967, 269–270:*

Եզրակացություն

Ի մի բերելով վերն արծարծված դրույթները՝ պարզվում է հետևյալը.

Ա) Հոլովակիր լեզուներում հոլովը կապված է նաև այլ կարգերի հետ: Այդ լեզուներում հոլովների՝ այս կամ այն թվով դրսևորվելը պարտադիր է, ուստի հոլովակիր լեզուներում հոլովի և թվի քերականական կարգերի համատեղումը **բացարձակ հանրույթ** *է:*

Բ) Սեռակիր լեզուներում հոլովման կարգն անբաժան է սեռանիշ ցուցչից, և հոլովման տիպերի գաղտորոշման հարցում էական դեր կարող են ունենալ սեռային նշանի թե՛ նշանակյալը, թե՛ նշանակիչը: Այդպիսի լեզուներ են լատիներենը, գերմաներենը, արդի ռուսերենը: Այս լեզուներում հոլովների՝ սեռի նշանով և նրա բևեռներով՝ նշանակյալով ու նշանակչով, տիպավորումը **հանրալեզվային արժեք** *ունի:*

Գ) Սեռազուրկ լեզուները հոլովման տիպերի տարբերակման այլ սկզբունքներ ունեն, որոնցից նախորդների հետ չփման կետ ունի նշանային տարբերակումը՝ նշանակյալով, նշանակչով կամ լիածավալ նշանով: Տարբերությունը նշանակազմում սեռային իմաստի բացակայությունն է, ասել է՝ հակադրվում է հանրույթին **որպես** *տարբերույթ: Այս լեզուներում հոլովման տիպերի տարբերակման ցուցանիշներ են նաև պատմականությունը, կենսունակությունը, գործունությունը: Ձևակազմական առումով հոլովման տիպերի առանձնացման հիմք է հոլովիչների քանակը, ըստ որի՝ տարբերակվում են միաթեք և երկթեք հոլովումներ: Այդպիսի լեզուներ են հին հայերենը (որտեղ կան սակավ հանդիպող եռաթեք ձևեր ևս), գրական արևելահայերենը: Արևելահայերենում ամենից կենսունակը Ի հոլովումն է: Թեև ոչ նույնքան կենսունակ, բայցևայնպես գործուն են ՈՒ/Ի, ՎԱ/Ի, ԱՆ/Ի, ՈՋ/Ի, Ø արտաքին և Ո/Ի, Ա/Ի ներարտաքին (երկթեք) հոլովումները:*

Դավիթ Գյուլզատյան – բ. գ. թ., դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանական տիպաբանություն, նշանագիտություն, մաթեմատիկական լեզվաբանություն, լեզվափիլիսոփայություն, հանրալեզվաբանություն: Հեղինակ է 2 ուսումնական ձեռնարկի, 1 մենագրության և 40 հոդվածի:
davitgiulzadyan@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղայան Է. 1950, Լատիներեն լեզվի քերականություն. I գիրք. Ձևաբանություն, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 182 էջ:

Աղայան Է. 1967, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 404 էջ:

Աղայան Է. 1987, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 736 էջ:

Ավետյան Ս. 2020, Որքանո՞վ թեքական կամ կցական է հին հայերենի անվանական հոլովումը. – «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 3, էջ 40–53:

Ավետյան Ս. 2021, Անվանական հոլովման տիպաբանական զարգացումը հայերենում. – «Հայագիտության հարցեր», թիվ 1, էջ 223–236:

Գյուլզատյան Դ. 2015, Գրական արևելահայերենի արտահայտաբանություն, Երևան, «Գլոբալ համալսարան», 296 էջ:

Հարությունյան Մ. 1996, Գերմաներենի քերականության համառոտ ձեռնարկ, Երևան, «Ան. Շիրակացի» հայկական համալսարանի հրատ., 238 էջ:

Ջահուկյան Գ. 1959, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 410 էջ:

Винничук Л. 1985, Латинский язык, Самоучитель для студентов. М., «Высшая школа», 328 с.

Камынина А. 2010, Современный русский язык. Морфология. М., Изд. Московского университета, 240 с.

ВОКРУГ ВОПРОСА О ТИПОЛОГИИ СКЛОНЕНИЯ
(На основе сравнения древнеармянского, литературного восточноармянского, латинского, немецкого, русского языков)

ДАВИТ ГЮЛЗАТЯН

Р е з ю м е

Ключевые слова: типы склонений, монофлективное склонение, бифлективное склонение, знак, означающее, означаемое, сигнификативное полномасштабное и униполярное склонения, мужские склонения, женское и феминоидное склонения, нейтральные склонения.

В языках, в которых представлена категория склонения, парадигма склонения формируется по разным принципам. Исходя из этих принципов, выделяются различные типы склонения.

Путем сравнения нескольких лингвистических структур в панхроническом аспекте производится новая классификация типов склонения по двум разным принципам для двух разновидностей армянского языка с разными системами склонения, в которых отсутствует категория рода, и для языков с родовой системой склонения.

Эти разные типы, однако, объединены семасиологической концептуальностью: полномасштабными и униполярными крыльями семы. В языках, в которых представлена категория склонения, склонение связано с другими грамматическими категориями. В этих языках обязательно, чтобы склонение проявлялось в том или ином числе, поэтому в них совмещение склонения и числа является абсолютной универсалией.

В языках, в которых представлена категория рода, данная категория неотделима от показателя родовой семы, и в разграничении типов склонения существенную роль могут играть родовые семы как означающего, так и означаемого. К таким языкам относятся латинский, немецкий, современный русский.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

В языках, в которых отсутствует категория рода, действует иной принцип различения типов склонения: с языками, имеющими категорию рода, их связывает семасиологическая дифференциация с помощью означаемого, означающего или полномасштабного знака. Отличие заключается в отсутствии родового значения в знаковой системе. Показателями различения типов склонения в этих языках являются также историчность, продуктивность, функциональность.

С точки зрения морфемного состава, основой для дифференциации типов склонения служит количество флексий, исходя из этого выделяются монофлективное и бифлективное склонения. Такими языками являются древнеармянский (где встречаются и единичные трефлективные формы) и литературный восточноармянский.

В восточноармянском языке самым продуктивным является склонение на *–i*. Впрочем, не менее продуктивными являются типы внешнего склонения на *u/i, va/i, an/i, oǰ /i, c‘* и типы бифлективного склонения на *o/i, a/i*.

Давит Гюлзатян – к. филол. н., доцент кафедры армянского языка Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна. Научные интересы: общее языкознание, лингвистическая типология, семиотика, математическая лингвистика, лингвофилософия, социолингвистика. Автор 2 учебных пособий, 1 монографии и 40 статей. davitgiulzadyan@gmail.com

A NOVEL INTEPRETATION OF THE DECLENSION TYPOLOGY
(By comparison of Grabar, Literary Eastern Armenian, Latin, German, Russian)

DAVIT GYULZATYAN

Summary

Keywords: types of declension, monoflexive declension, biflexive declension, sign, signifier, signified, sign-based full-scale and unipolar declension, masculine declensions, feminine and feminoid declensions, neutral declensions.

In languages with declensions, the declension paradigms are formed by different principles. It is according to these principles that declension types are determined.

By comparing several linguistic formations in the panchronic aspect, a new grouping of declension types by two different principles has been made for the two existential forms of the Armenian language with gender-free declension system and for languages with a gender-based declension system.

These different types are unified semiotically, more precisely by the full-scale and polarized wings of the sign. In languages with declensions, the declension is associated with other categories. It is mandatory in those languages that the

declensions are expressed by this or that number, thus in those languages a synergy of declension and number is an absolute universality.

In gender-based languages, the category of declension is indivisible from the gender indicator and in distinguishing declension types, both the signified and the signifying units of the gender sign have an essential role. Among such languages are Latin, German and modern Russian.

Gender-free languages have other principles for distinguishing declension types, one of which has a point of contact with the aforementioned (gender-based declension systems) and that is the sign distinction with its signified, signifying or full-scale signs. The difference in the sign-totality is the absence of the sense of gender, i.e. opposes universality as a distinction. In these languages, indicators for distinguishing types of declension also include historicity, viability and usage.

In terms of formation, the number of declension marks is a basis for setting declension types apart, whereby monoflexive and biflexive declensions are distinguished. Among such languages are the old Armenian (which incorporates rare occurrences of triflexive declension forms as well) and literary Eastern Armenian.

In Eastern Armenian, the "ee" declension is the most viable and though not as much viable, but nonetheless active are the external *u/i, va/i, an/i, oǰ /i, cʻ* declensions and *o/i, a/i* internal-external (biflexive) declensions.

Davit Gyulzatyan – Doctor of Philology, Associate Professor of the Armenian Language Chair at the State University of Vanadzor after H. Toumanyan. Academic interests: general linguistics, linguistic typology, semiotics, mathematical linguistics, linguistic philosophy, social linguistics. Authored 2 teaching manuals, 1 monograph and 40 articles. davitgiulzadyan@gmail.com

ՀՏԴ : 902(475.25)+39

Doi:10.54503/0135-0536-2023.1-166

ԱՍՏՎԱԾՆԵՐԸ, ՀԵՐՈՍՆԵՐԸ ԵՎ ՍՐԲԵՐԸ. ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՍՐԲԱԶԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՄԻՁԱՎԱՅՐ*

ԱՐՍԵՆ ԲՈՐՈԽՅԱՆ

Բանալի բառեր՝ աստվածներ, հերոսներ, սրբեր, վիշապ, բարձր լեռնային գոտիներ, հնագիտական հուշարձաններ, ավանդազրույցներ:

Նախաբան

Վաղ կոթողային արվեստին նվիրված իր արժեքավոր ուսումնասիրության մեջ Գարեգին Հովսեփյանը գրում է. «Քրիստոնեական արվեստի նշանավոր պատմաբան Կրաուզը մի խոսք ունի, թե ազգերի արվեստը գերեզմաններից է սկսվում. այս ճշմարիտ է ոչ միայն նախնական ազգերի համար, որոնց չինարարություններն ու ստեղծագործական երևույթները իրոք գերեզմանների հետ են կապված, այլև հետագա դարերի նոր հոսանքների ընդունելության ժամանակ, համապատասխան նոր արվեստի և մշակույթի ստեղծագործության աղբյուր է դառնում, հետզհետե հնից դեպի նորը վոխակերպվելով»[1]:

Եվ, իրոք, մարդու ճգտումն արդարացնելու իր ժամանակավոր գոյությունն այս կյանքում ստիպել է նրան հիշել և ստեղծագործել՝ հաճախ ավելի մեծ ուշադրություն դարձնելով անցավորին: Այս իմաստով, ինչ-որ տեղ, մարդու ստեղծած մշակույթը ոչ այլ ինչ է, քան սեփական գոյության պրոյեկցիան անցյալի = ապագայի ոլորտներում, հանճին որի, երկու դեպքում էլ, մարդը վերարտադրել է մահվան միջավայրը՝ ամենահաստատ և ամենակայուն միջավայրը: Այս ըմբռնումը մարդը տարածել է ոչ միայն ժամանակային, այլև տարածական ոլորտում՝ ուղղահայաց գոտիավորելով իր կենսատարածքը: Այդ կենսատարածքում բարձր լեռները ընկալվել են որպես գերբնական ուժերի միջավայրեր՝ կապվելով աստվածների, հերոսների ու սրբերի գործունեության, բայց նաև՝ այդ գործունեության դադարի հետ:

Սա ժամանակին նկատել է Հայր Ղևոնդ Ալիշանը, նշելով, թե հները լեռների ու բլուրների վրա գերեզմաններ են դրել հիմնականում վեհազունների համար և ավելացնելով՝ «... բարձրադիր գերեզմաններ դնելու պատճառները կարող են շատ լինել. գուցե մեկն էլ առլեզների իջնելու դյուրության համար լինի»[2]:

Քննարկվող երևույթը դիտարկենք Հայկական լեռնաշխարհի բարձրադիր գոտիների օրինակով, մասնավորապես՝ վիշապների ու նրանց առնչվող տվյալ-

---

* *Ներկայացվել է 14. II. 2023 թ., գրախոսվել է 25. II. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21AG–6A080 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:*

[1] *Հ ո վ ս ե փ յ ա ն. 1987, 153:*

[2] *Ա լ ի շ ա ն. 2002, 208:*

ների համատեքստում: Վերջիններս կարծես մշակութայնացրել են այդ գոտիները՝ իրենք էլ կերպափոխվելով աստվածների, հերոսների ու սրբերի:

Աստվածները

Գրեթե բոլոր ժողովուրդների մոտ բարձր լեռները աստվածների հիմնական բնակավայրն է կամ նրանց գործունեության կարևորագույն բեմահարթակը[3]: Հայկական հիշողության մեջ ևս բարձր լեռների հետ են կապվում մի շարք հնագույն աստվածներ և սրբավայրեր[4]:

Հայկական լեռնաշխարհն այն բացառիկ տարածքն է, որտեղ տվյալներ են պահպանվել բարձր լեռնային ծիսական հուշարձանների մասին: Այդ հուշարձանները ներկայացված են տարատեսակ կառույցներով, ժայռապատկերներով, կոթողներով, հատկապես՝ կարևորվում են վիշապաքարերը, որոնք հատուկ սրբավայրերի հանգուցակետում դրված ձկնակերպ կամ ցլակերպ աստվածությունների բրոնզեդարյան արձաններ են[5]:

Վիշապաքարերի գործառույթին վերաբերող տարբեր մեկնություններ կան: Դրանցից այստեղ մեզ հետաքրքրում է նրանց՝ դամբարանների և թաղումների հետ առնչելու վարկածը: Այս տեսակետը զարգացրել է նախ ժողովուրդը: Այսպես, սար-վիշապ-գերեզման կապն արտահայտված է հայկական ավանդազրույցներում[6]: «Կիկլոպյան» կառույցները, դամբանաթմբերը ժողովրդի կողմից հաճախ մեկնաբանվել են վիշապային համատեքստում[7]:

Մասնագետները ևս վիշապաքարերը վաղուց դիտարկել են թաղման ծեսի համատեքստում: Այսպես, Ն. Մառը քննարկում է վիշապների կապը դամբարանի և թաղման հետ՝ ելնելով խոսքի պալեոնտոլոգիայի իր տեսությունից, Կամախ սրբավայրի և ձուկ-դամբարան սեմանտիկ կապի տեսանկյունից[8]:

Ն. Մառի աշակերտ Աշխարհբեկ Քալանթարը ևս անդրադառնում է այս խնդրին. դիակը վառելը, իրեր չղնելը, հացաբույսերի առկայությունը Զվարթնոցի մոտ պեղված դամբանաթմբերում, ըստ նրա, կապված է տվյալ հասարակության գաղափարական պատկերացումների հետ: Այդ նույն դամբարանների օրինակով նա կուրգան երևույթը մեկնաբանում է որպես տոհմապետի / նահապետի դամբարան և համադրելով Արագածի այլ հուշարձանների, մասնավորապես մեգալիթների՝ դոլմենների, կրոմլեխների, մենհիրների, «և անգամ «վիշապարձան» դամբարաններ»-ի հետ՝ բոլորն էլ համարում է առաջնորդների գերեզմաններ[9]:

---

[3] *Քննարկվող տարածաշրջանի համար համմտ.* Haas. 1982.

[4] *Բոբոխյան. 2017:*

[5] Gilibert, Bobokhyan, Hnila. 2012; *Բոբոխյան, Ջիլիբերտ, Հնիլա. 2015:*

[6] *Ղանալանյան. 1969, 273:*

[7] *Դամբանաթմբերի՝ որպես «օշապի բլուրների» համար համմտ.* Асрян. 1999, 14.

[8] Марр, Смирнов. 1931, 20–22; *համմտ.* Марр. 1902.

[9] *Քալանթար. 1935, 48–50:*

Վիշապաքարերը դամբարանների և դրանց հետ կապված հավատալիքների համատեքստում է ներկայացնում Ն. Մառի հաջորդ աշակերտը՝ Նիկողայոս Ադոնցը[10]:

Խոսելով մեգալիթյան հուշարձանների ու, մասնավորապես, կրոմլեխների մասին՝ Ստ. Լիսիցյանը և Ե. Բայբուրթյանը գրում են, որ դրանք ի հայտ են գալիս խմբերով, հիմնականում պատկանում են բրոնզի դարին ու Հայաստանում հանդիպում են հատկապես Արագածի վրա. «Նրանք տեղ-տեղ թաղման վայրեր են եղել, սակայն ավելի հաճախ՝ ի հիշատակ հանգուցյալի կանգնեցրած քարեր (թաղումը տեղի է ունեցել ոչ այդ շրջանի մեջ) և այդտեղ կատարվել են տոնական ծիսակատարություններ կամ նվիրական պարեր, երբեմն էլ դրանք դատաստանի կամ խորհրդակցության ժողովատեղիներ են եղել»[11]:

Գեղարդալճի, Վանատանի, Թռեղքի ու Ջավախքի վիշապաքարերին կից «դամբարանները» այդ կոթողների համատեքստում են ներկայացրել այլ մասնագետներ[12]:

Այս համատեքստում կարևոր տվյալներ են ի հայտ եկել վերջին շրջանում Արագածի հարավային բարձունքներում գտնվող Տլրինկատարի սրբազան լանդշաֆտի հետազոտության ընթացքում[13]: Այս սրբավայրը բնորոշվում է 12 վիշապաքարերով և դրանց հարակից կառույցներով: Մասնավորապես, № 10 վիշապաքարի ու դրա շրջակայքի պեղումները ցույց տվեցին՝ վիշապաքարը ծիսական բնույթի յուրահատուկ համալիրի մի մասն է, որի հիմնական տարրերն են կլորավուն կառույցները՝ կրոմլեխները, որոնք համաչափորեն տեղադրված են նույն առանցքի շուրջ. դրանց տրամագիծը հասնում է մինչ 7 մ: Կրոմլեխները միացված են միջանցքներով կամ ազատ տարածություններով, որոնք օգտագործվել են նաև որպես ընծայման միջավայրեր: Բոլոր կառույցների միջնամասում դրված էին մշակված քարեր, առաջինում՝ ձկնակերպ վիշապաքար, մնացածում՝ մշակված սալաքարեր: Ուշագրավ է, որ այդ միավորները մի տեսակ «թաղված» են կրոմլեխի տակ, վիշապաքարը՝ մասամբ (դրա վերնամասն ի սկզբանե պիտի տեսանելի լիներ), իսկ այլ քարերը՝ ամբողջությամբ: Սակայն ձևով դամբարանների նմանվող կրոմլեխներն ամենևին էլ մարդկանց թաղումներ չեն, այլ, ամենայն հավանականությամբ՝ սրբազան քարերի. դրանցից մեկն էլ վիշապաքարն է: Առկա հնագիտական նյութի (խեցեղենի և վանակատի բեկորներ, խեցանոթներ, ուլունքներ) և ռադիոածխածնային տվյալների հիման վրա քննարկվող համալիրը թվագրվում է Ք. ա. III–II հազ. սահմանով:

Վերոնկարագրյալն իր որոշակի զուգահեռներն է գտնում այլ՝ նմանապես բնության զարթոնքին առնչվող միջավայրերում: Այսպես, Հին աշխարհի առասպելներում հայտնի է վիշապի կամ գարնան ու զարթոնքի հետ առնչվող համանման աստվածության ծիսական թաղման կամ սպանության երևույ-

---

[10] *Ադոնց. 1972, 21:*

[11] *Լիսիցյան, Բայբուրթյան. 1928, 20–21:*

[12] *Մարտիրոսյան. 1969, 193, Տեր-Ղազարյան. 1984, 39,* Mansfeld. 1996, 379; Narimanishvili, Shanhanshvili, Narimanishvili. 2013, 149; *Պետրոսյան. 2008, 94:*

[13] Bobokhyan, Gilibert, Hnila. 2018.

թը[14]: Օրինակ՝ Օսիրիսի տոնը Եգիպտոսում նշվում էր այն ժամանակ, երբ եգիպտացիները ցանում էին հացահատիկը: Այս կապակցությամբ նրանք թաղում էին հացի աստվածության արձանը, որը պատրաստվում էր հողից ու սերմից, որպեսզի աստվածությունը, որը «մահացել էր» թաղման ժամանակ, կարողանար վերադառնալ կյանք՝ նոր բերքով[15]: Պլուտարքոսը «Իսիդայի և Օսիրիսի մասին» երկում գրում է. «Ասում են, որ Օսիրիսը թաղված է, երբ ցանքը փորում են հողի մեջ և որ վերադառնում է կյանք ու նորից գալիս է, երբ ծիլերը սկսում են բարձրանալ»[16]:

Պտղաբերության և գարնանային զարթոնքի, մեռնող և հարություն առնող բնությունը մարմնավորող արևելասլավոնական Յարիլո աստվածության խրտվիլակը թաղում էին հունիսի վերջերին: Առաջին օրը Յարիլոյին դիմավորում էին, երկրորդ օրը՝ թաղում: Նրան պատկերում էին որպես մեծ մարդ կամ տիկնիկ մեծ փալոսով: Յարիլոյի արձանը կարող էր դրված լինել սարի վրա ու կապվել բեղմնավորող ցլի հետ: Տոնակատարությունն անցնում էր բացատ տեղում՝ թաղման ողբով, երգով, պարով, դրամատիկական խաղերով[17]: Յարիլոյի կերպարը և նրան վերաբերող ծեսերը վաղուց համեմատվել են հայկական Ակլատիզի և Արայի ու նրանց առնչվող ծեսերի հետ, չեչոտվել է վիշապաքարերի հետ ունեցած նրա կապը[18]:

Տարբեր մշակույթներում (Աֆրիկա, Հնդկաստան, Չինաստան) ճուկը մահացածի ոգու և նրա վերածննդի խորհրդանիշն է եղել, իսկ նրա կերպարը հաճախ օգտագործվել է թաղման ծեսում (Հին Եգիպտոս): Մահվան ու վերածննդի հետ է կապվում նաև բիբլիական Հովնանի պատմությունը, որին կուլ է տալիս ճուկը: Այստեղ ճուկն անդրաշխարհի խորհրդանիշն է և հարության համար պետք էր հայտնվեր նրա մեջ: Մահվան, ջրային քաոսի մարմնավորում է Լևիաթանը, որը պատկերվում է և՛ որպես վիշապ, և՛ որպես ճուկ: Նրան հաղթում է Յահվեն՝ մարմնից ստեղծելով աշխարհը. մարմնի մասերը դառնում են տիեզերքի մասեր (օրինակ՝ մաշկը օգտագործվում է երկինքը կերտելու համար): Վերջինիս իրանական զուգահեռն է Կարա ճուկը, որ աճում է Վորուկաշա լճի մեջտեղում (Համմ. հակա ձկան իրանական մոտիվը, որն լողում է անդրաշխարհի օվկիանոսում՝ իր վրա տանելով աշխարհի հենք հանդիսացող ցլին): Անդրկովկասի ժողովուրդները հավատում էին մարդկային լեզվով խոսող Մայր–Ձկան գոյությանը և իրականացնում էին նաև ձկան թաղման ծես[19]:

Ինչ վերաբերում է զուտ հնագիտական տվյալներին, որպես զուգահեռ հիշատակենք Հին Եգիպտոսի մումիֆիկացված ձկների դամբարանները[20]: Բացի այդ, ցլի թաղման երևույթը շատ նման է եգիպտական Ապիս, Մնևիս, Բուխիս սրբազան ցլերի թաղմանը և համապատասխան ծիսակատարություններին. վերջիններս, ի դեպ, թաղվում էին մարդկանց նման[21]:

---

[14] *Վիշապի սպանության համար համմ. Թադևոսյան. 2007, 131:*

[15] Андрианов. 1978, 60.

[16] Плутарх. 1977, 242.

[17] Гаврилов, Ермаков. 2009.

[18] *Բդոյան. 1950, 21,* Капанцян. 1952, 37, 51.

[19] Топоров. 1992, 392–393. *Լևիաթանի համար համմ.* Евсюков. 1986, 57.

[20] Bard. 2005, 432–433; Dunand, Lichtenberg. 2006, 110.

[21] Коростовцев. 1976, 14–16. *Եզին արժևորելու և մարդու պես թաղելու մասին հայերի մեջ համմ. Ատպետ. 1912, 124:*

Հերոսները

Բարձր լեռների հետ են կապվում նաև հերոսները, որոնք, որպես կանոն, հայտնվում են հսկաների կերպարով: Հսկա-դյուցազուններին (աղնավուրներին, ճինուըզներին, օղուզներին) են վերագրվում համապատասխան բարձրլեռնային «կիկլոպյան շինություններ»՝ հաճախ գերեզմանական համատեքստում[22]:

Վիշապ հասկացությունը կամ վիշապաքարն ինքը որոշակիորեն առնչվել է հսկաներին և նրանց տներին: Մասնավորապես, ժողովուրդն Արագածի վիշապաքարերը կապում է հսկա-օղուզների գերեզմանների հետ[23]: Ուշագրավ է, որ օղուզ ասելիս, ժողովուրդը հասկացել է մի կողմից «հսկա», մյուս կողմից էլ՝ «եզ», ինչը հավելյալ հենք է ստեղծում երևույթը վիշապաքարերի համատեքստում քննարկելու համար[24]:

Ե. Լալայանի գրառած զանգեզուրյան մի ավանդազրույցում Սաղսարան լեռան վրա է ապրում Հրուշան անունով հսկան, որին ժողովուրդը նաև վիշապ է անվանում: Վերջինս, չբավարարվելով իր այդ կացարանով, դիմացի Գարահող լեռան վրա՝ փոքր տափարակում, մի այլ բնակարան է կառուցում՝ վիթխարի երեք քար կանգնեցնելով և մեկն էլ դրանց վրա դնելով[25]:

Յա. Սմիրնովը, օղուզի գերեզմանների և վիշապների առնչության հարցը քննարկելով, նկատում է, որ առաջինների վրա պատկեր չկա, իսկ քարե կուռատակումներով առանձնացվող դրանցից որոշների պեղումները բնորոշվում են որոշակի հնագիտական նյութերով: Այդ նույն քարե կուռատակումների մասին է, ըստ նրա, վկայում Փավստոս Բուզանդը (III, 7), թե խոսրով արքայի ժամանակ պարտության մատնվեցին հյուսիսային բարբարոսները ու որպեսզի երկիրը համաճարակից փրկվի, մեծ քարերի կուտեր էին անում: Այս կապակցությամբ հեղինակը նշում է, որ եթե նույնիսկ ցյակերպ վիշապաքարերը կարող էին կոթողի դեր խաղալ՝ վերդամբանային, տաճարական կամ սահմանաքարի նշանակությամբ, ապա քարե ճկների նշանակությունը բարձրադիր վայրերում մնում է առեղծվածային[26]:

Վիշապաքարերի նոր հետազոտությունները հաստատում են այդ կոթողների առնչությունը ժողովրդի կողմից «հսկայի տուն» կոչված կառույցների հետ, որոնք հիմնականում ճառագայթաձև ելուստներ են ունենում, գտնվում են վիշապաքարին կից և ընդհանուր համալիրի մաս են կազմում (հմմտ., օրինակ, Գեղամա լեռներում գտնվող Վիշապասար 1, Մաղաղներ 1 վիշապաքարերը):

Նման շինությունները գործառութային տեսանկյունից կարող են ընդհանուր զուգահեռներ գտնել զրադաշտական միջավայրում: Այսպես, Նեմրութ լեռան ճեռակերտ լցաթումբը սրբավայր էր՝ կապված Անտիոքոս արքայի հուղարկավորության ծեսի հետ, սակայն դա վերջինիս գերեզմանը չէր: Ըստ էության, Նեմրութի տեմենոսը դախմե էր (լռության աշտարակ), հանգուցյալ

---

[22] *Լ ա լ ա յ ա ն . 2004, 195, 204, Լ ե ւ ո ն ե ա ն. 2013, 128, էպոսի համար տե՛ս Զ ա ք ա ր յ ա ն. 2004, 169:*

[23] П и о т р о в с к и й. 1939, 13. *Հմմտ. Զ ա ք ա ր յ ա ն. 1988ա, 3:*

[24] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1955, 535:*

[25] *Լ ա լ ա յ ա ն. 1898, 16, Հմմտ. Դ ի լ ա ն յ ա ն. 2012, 65:*

[26] М а р р, С м и р н о в. 1931, 64.

թագավորի ոսկորների՝ փափուկ հյուսվածքներից անջատելու վայր, իսկ ոսկորները պահվում էին մեկ այլ տեղում՝ նաոսում կամ տոհմական հանգստարանում: Փաստորեն, ըրաղաչտական ծեսում դիակները դրվում էին մոտակա լեռան անթաղ որևէ զարատակի վրա, որոշ ժամանակ անց այդ բացօթյա դիարանից հատուկ տուփերի մեջ ոսկորները տեղափոխվում էին և վերջնականորեն թաղվում այլ տեղում՝ հատուկ ժայռափոր դամբարաններում՝ ննջեցյալ նախնիների կողքին[27]: Նման ըրաղաչտական ատրուշաններ (կրակի աշտարակներ) և դախմաներ (դիակների դրման տեղեր), թերևս, առկա են նաև հայկական ժողովրդական մշակույթում[28]:

Հսկաների դամբարանների և բարձր լեռների առնչության տեսանկյունից, եթե հաշվի չառնենք Խորենացու պատմությունը Մասիսի վիհերում չղթայված Արտավազդի մասին[29], ամենավաղ տեղեկությունը պատկանում է Յակուտ ալ Համավիին: Ըստ արաբ պատմիչի՝ «Արմինիայի մեջ երկու լեռներ են, որոնց վրա են գտնվում Հայաստանի թագավորների չիրխմները իրենց գանձերով: Ասում են, թե Պինիոս իմաստունը կախարդել է այդ լեռները՝ որպեսզի մարդիկ չկարողանան բարձրանալ վերև»[30]: Երկու լեռների և դրանց վրա բարձրանալու արգելքի հանգամանքը վկայում է, որ խոսքը Սիսի ու Մասիսի մասին է, մանավանդ որ հաջորդ տողում հեղինակը հիշում է Դվինի մոտ գտնվող Հարիս և Հուայրաս լեռները, այսինքն՝ նույն Մասիսն ու Սիսը[31]: Ուշագրավ է նաև մեկ այլ հանգամանք. Պինիոս իմաստունը (Բալինաս), ըստ ավանդության, Հուտութքի / Թալիսմանի հայրն է, ով չատ քաղաքներում թողնում է հմայակներ՝ պաշտպանելու համար նրանց փոթորիկներից, օձերի և կարիճների խայթոցից[32]: Լեռան, դամբարանի, Հուտութքի և Հողմի պահը կրկնակի կապ է ստեղծում վիշապային համատեքստի հետ[33]: Այս տեսանկյունից հիշարժան է նաև հայկական հեքիաթների «վիշապի այցելությունը արքայի գերեզմանին» մոտիվը[34]:

Համավիի հիշյալ տեղեկությունը համընկնում է ճանապարհորդների իրական նկարագրություններ հետ: Մասնավորապես, սկսած XIX դ. սկզբներից՝ վկայություններ կան Մասիսի վրա գտնվող «հսկաների գերեզմանների» վերաբերյալ: Հատկապես Փոքր Մասիսն է հիշատակվում այս կապակցությամբ: Այսպես, Փոքր Մասիսի վրա հնարավոր գերեզմաններ է փաստում արդեն Ֆ. Պարրոտը[35]: Է. Ռեկլյուն Սևանա լճի ավազանում հիշում է «բազմաթիվ գերեզմանական հողաբլուրներ, որ կոչում են օղուզների, այն է՝ «հսկաների» չիրխ», որոնք չատ տեղերում, առանձին կամ չարքերով կանգնած են

---

[27] *Մ ա ր գ ա ր յ ա ն. 2014, 145–147:*

[28] Л и с и ц я н. 1992, 135.

[29] *Մանրամասների համար, վիշապների համատեքստում, տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 53–54:*

[30] *Յ ա կ ո ւ տ ա լ Հ ա մ ա վ ի. 1965, 51:*

[31] *Համմտ. Տէր-Ղ ե ւ ո ն դ ե ա ն. 1971, 223, 228, նաև՝ Գ ր ի գ ո ր ե ա ն. 2014, 25:*

[32] *Յ ա կ ո ւ տ ա լ Հ ա մ ա վ ի. 1965, 155, ծանոթ. 139:*

[33] *Համմտ. Տէր-Ղ ե ւ ո ն դ ե ա ն. 1971, 225:*

[34] Г у л л а к я н. 1983, 87.

[35] *Պ ա ր ր ո տ. 1990, 97–98:*

բարձրավանդակի վրա՝ «նման այն գերեզմաններին, որ գտնվում են Արագածի և մինչև անգամ Փոքր Մասիսի գագաթներին»[36]: Մ. Թաղիադյանը գրում է. «Լիճ ի կատար Փոքուն Մասեաց՝ առ որով մացառք թեղեաց և գերեզմանք Հսկայից՝ հասարակօրէն օղուզի գերեզման կարդացեալ»[37]: Հայր Ղ. Ալիշանը Փոքր Մասիսի կապակցությամբ ևս չեշտում է. «Ի տափաճեւ գագաթանն կան մեծամեծ վէմք թաւալեալք, իբրեւ 15 երկայն, 5–6 լայն զորս ռամիկն կոչէ Գերեզմանս Օղուզի այսինքն Հսկայից»[38]: Ա. Մխիթարյանը նույնպես Փոքր Մասիսի վրա հիշում է «Օղուզի գերեզմաններ»[39]: Ս. Մոցիկյանը գրում է. «Անոր (Փոքր Մասիսի – Ա. Բ.) կատարին վրայ լճին եզերքը կը նկատուին քանի մը գերեզմաններ: Նախապարեան այս հողակոյտերը իրենց վրայ կը կրեն չիրմաքարեր, կճեայ տապաններ: Առնցմէ ոմանք մինչև 16 ոտք երկայնութիւն և 6 ոտք լայնութիւն եւ հաստութիւն ունին ... Փոքրիկ Մասիսն ալ զուրկ չէ առասպելական աւանդութիւններէ: Արարատաբնակ ժողովուրդը կը կարծէ, թե այդ լեռան կուրծքին մէջ կապրին դևեր, ամեհի օձեր, վիշապներ, բազմագլխեան հրէշներ, որոնք երբեմն դուրս կելլեն իրենց մթին որջերէն, և կիջնեն դաշտ: Կատարը գտնուող գերեզմանները քաջերու, պաշտուած հերոսներու և հսկաներու կը պատկանին: Այն տեղ կայ «ուղտերու կարաւան մը» քարացած: Ուղտապանին մեկ ձեռքը առաջնորդ ուղտին սանձը, իսկ միւս ձեռքը ցուպ մը»[40]: Ըստ Մ. Աբեղյանի, Լ. Տիգրանյանը նմանապես Փոքր Մասիսի գագաթին հիշում է ազնավուրի / օղուզի / հսկաների գերեզմաններ և ավանդազրույցներ բերում ուղտերի քարացած քարավանի, լճի, վիշապների ու ահագին մեծության օձերի մասին, որոնք անվանի գրականագետը համեմատում է Նեմրութ սարի ջրավազանի և Բելի ուղտերի առասպելի հետ: Մասիսը, որպես վիշապների բնակավայր, հայտնի է դեռ Խորենացուց և պատահական չէ, որ «Յայսմավուրքում» այն կոչվում է «Սեավ լեառն», ժողովրդի մեջ՝ Մուխն աշխարհ. հեքիաթներում Սև լեռան վրա բնակվում են աժդահար վիշապներ, այնտեղ է նաև նրանց ապարանքը: Մ. Աբեղյանը չեշտում է, որ Մասիսի վերաբերյալ նման ըրույցները հիմնականում վերաբերում են Փոքր Մասիսին, թեև դրանք հեշտությամբ կարող էին անցնել Մեծից Փոքրին[41]:

Բարձրլեռնային «կիկլոպյան» շարվածքով «Հսկա-ազնավուրների գերեզմաններ» բացի Մասիսից հայտնի են նաև Սիփանի[42], Խամուր (Խնուսի մոտ)[43] լեռների բարձունքներին, ներկայիս Հայաստանի դրեթե բոլոր բարձր լեռների

---

[36] *Ռեկլյուս. 1891, 19: Հսկայի/օղուզի գերեզմանների համար հմմտ. նաև* Bergé. 1874, 423.

[37] *Թաղիադյան. 1975, 51:*

[38] *Ալիշան. 1890, 485:*

[39] *Մխիթարեան. 1874, 17:*

[40] *Մոցիկյան. 1917, 413–414:*

[41] *Աբեղյան. 1985, 185–186, 192, հմմտ. նաև Ղանալանյան. 1969, 261, 468–469: Լ. Տիգրանյանի նույն տեղեկության քննարկումը քաջքերի, դևերի ու Արտավազդի համատեքստում տե՛ս նաև Գէորգեան. 1899, 77–78, Փոքր Մասիսի դամբարանադաշտի մասին հմմտ. Գրիգորեան. 2014, 20, 25:*

[42] Лин ч. 1910, 435, 438, рис. 189; *Բենէ. 1972, 50:*

[43] *Մելիքեան. 1964, 94:*

վիշապային միջավայրում (հատկապես՝ Արագածի, Գեղամա և Սյունիքի լեռնահամակարգերում):

Նախալեռնային շրջաններում ևս հիշվում են ազնավուրի գերեզմաններ, մասնավորապես՝ Գ. Սրվանձտյանցի կողմից: Ութ քայլ մեծությամբ, քարակույտով մեծացրած մի այդպիսի գերեզման կա, ըստ նրա, Մանազկերտի Թաշգրն գյուղի մոտ և այլ տեղերում, որի անունը ենթադրել է տալիս՝ սրանք ազնվականների, նահապետների, հսկաների հնագույն գերեզմաններ են եղել[44]: Մանազկերտի Բոստան խայա գյուղի մոտ մեկ այլ ազնավուրի գերեզման էլ կա, որը 20 կանգուն երկարությամբ թումբ է[45]: Այս գերեզմանի պատմության մեջ Սրվանձտյանցը նշում է, որ ազնավուրին վիպասանները նաև ղև են կոչում: Պատմության մեջ ազնավուրի խորամանկ կինը վերջինիս ասում է. «Գնա՛, Սիփանա ղևերից մեկ աման հարիսա բեր ուտենք»[46]: Ազնավուրի գերեզման կա Մակուի Սանգյար գյուղի մոտ, որի մասին ասում են, թե ազնավուրի մայրը՝ իր երեխային արևից պաշտպանելու համար, երկու հսկայական քար է մոտեցրել իրար[47]: Բացի ազնավուրների գերեզմաններից հիշվում են նաև ազնավուրների բերդեր[48]: Գ. Սրվանձտյանի հիշատակած տեղեկությունները Վասպուրականի ազնավուրի գերեզմանների մասին որոշ հեղինակներ համարում են վկայություն վիշապաքարերի մասին[49]:

Ուշագրավ է, որ, ըստ այլ հեղինակների, ազնավուրների կամ օղուզների գերեզմանները, որոնք իրականում «կռապաշտության ժամանակների ցեղապետերի դամբարաններ են», նոր շրջանում ժողովրդի համար ուխտատեղիներ են դարձել[50]:

Հսկա-դամբարան-լեռ կապը պահպանված է ժողովրդական հիշողության մեջ նաև անհատական մակարդակում: Այսպես, հսկա Բելը թաղված է համարվում Նեմրութ լեռան բարձունքներին[51]:

Ինչպես հայկական, այնպես էլ սկանդինավյան առասպելաբանության մեջ հերոս-հսկան կապվում է վիշապի և համապատասխան չինությունների հետ, բայց նաև նրա դեմ է դուրս գալիս: Այսպես, հսկայի կողմից վիշապի մարմնի մասնատումը և թաղումն արձանագրված է հայկական հեքիաթներում[52]: Սկանդինավյան առասպելաբանության մեջ որոշ վիշապներ ընկալվում են որպես թաղված ռազմիկներ, որոնց հրեղ է դարձրել կուտակված հարստությամբ կիսվելու դժկամությունը: Համապատասխան պատմություններում արկածախնդիր հերոսը ներխուժում է վաղուց մահացած ռազմիկի դամբանաթումբ,

[44] *Սրվանձտյանց. 1978, 56:*
[45] *Սրվանձտյանց. 1978, 58–59, համմտ. Ղանալանյան. 1969, 271:*
[46] *Սրվանձտյանց. 1978, 58–59:*
[47] *Ղանալանյան. 1969, 271:*
[48] *Սրվանձտյանց. 1978, 392–393:*
[49] *Զաքարյան. 1988գ, 3: Ազնավուրների գերեզմանների մասին պատմությունների, դրանց՝ դամբարանների և վիշապների հետ ունեցած կապի մասին համմտ. նաև Դիլանյան. 2012, 64–67, 228–230:*
[50] *Րաֆֆի. 1875, 3, Լեոնեան. 2013, 128–129:*
[51] *Տևկանց. 1985, 86, 136, Սրվանձտյանց. 1978, 405:*
[52] *Զաքարյան. 2016, 80:*

ինչն առաջացնում է կռիվ ներխուժողի և վերակենդանացած ռազմիկ-հրեշի միջև, որը կարող է ստանալ նաև կրակաշունչ թրոլի[53] տեսք[54]:

Սրբերը

Սրբերի, ճգնավորների կամ յուրահատուկ մարդկանց կապը բարձրլեռնային գոտիների հետ ևս ակնհայտ է: Նրանք հաճախ ոչ միայն ապրում և ճգնում են լեռներում, այլև այստեղ հեռանում են կյանքից: Նման պատմություններ պահպանվել են հայկական հիշողության մեջ և հաճախ նյութականացվում են՝ կապվելով քարե արձանների ու, հատկապես, քարե կոտակումների հետ: Ահա դրանցից մի քանիսը:

Արագածի խառնարանում սրբի թաղման մասին առասպելը, նրա մոտ երդման արարողություններ անելն արտահայտվել է «Լուսավորչի կանթեղի» ավանդազրույցում[55]: Այդ ավանդազրույցի՝ Հովհ. Թումանյանի համապատասխան մշակման մեջ ոչ պատահականորեն հիշվում են Արագածը, վիշապային քամին:

Մեծ Աբուլի լեռան գագաթին տեղացի հայերը պաշտել են 1 սաժեն երկարությամբ մի քար, որի տակ սրբի թաղում է եղել: Ըստ ավանդության՝ Աբուլիի վրա է գտնվել Ապոլոնի կուռքը, որի անունից էլ առաջացել է Աբուլի անվանումը[56]:

Սուկավետի կատարներին հանդիպում են ճգնավորներ, որոնց ոգիները սավառնում են սրբակիր և խորհրդավոր սարով՝ բախտ բաշխելով կույս աղջիկներին, ամուլ կանանց ու հիվանդներին[57]:

Արությունասարը (Թրք. Ղոչ-ղարա) գտնվում է ծովի մակերևույթից 3381 մ բարձրության վրա: Սարի կատարը մի տափարակ է, որտեղ կա քարերով շրջապատված գերեզման, ինչը ենթադրել է տալիս մատուռի / սրբի առկայության: Գերեզմանի մոտ կա ձյունից / անձրևից զոյացած «մի լճացեալ ջուր»: «Քանի՛ ուշագրաւ է գագաթիս տեսարանն, քանի՛ գեղեցիկ և անբացատրելի է դիրքն. անթերի զուարճութիւնն և բարձրաթռիչ այցելուի սլացող միտքն ...». սարն ամենահայտնի յայլատեղիներից է, նրա լանջերից բխում են չորս գետակների աղբյուրներ[58]: Տեղանքը կոչվում է Զիարեթգահ, իսկ լեռան ստորոտներին մենհիրների ու ամրոցների կուտակումներ են[59]:

Լեռան գագաթներին՝ հաճախ սրբերի գերեզմանների մոտ, քարակույտեր ստեղծելը տարածված է տարբեր ժողովուրդների մոտ, ինչը կապվում է լեռների ու քարերի պաշտամունքի հետ՝ նպատակ ունենալով կրկնապատկել դրանց ուժը[60]: Արհեստական քարակույտերի պաշտամունքը նաև հայ իրա-

---

[53] *Թրոլը սկանդինավյան առասպելաբանության մեջ մարդանման կերպար է՝ հսկա կամ ոգի, որն ապրում է լեռներում:*

[54] Wellendorf. 2014.

[55] Паффенгольц, Тер-Месропян. 1964, 5; *Համմտ. Ղանալանյան. 1969, 146, 368, Շահազիզ. 1987, 44:*

[56] Ростомов. 1898, 23–24.

[57] *Տէր-Կարապետեան. 2003, 21:*

[58] *Բարխուդարեան. 1895, 302–303:*

[59] *Համմտ. նաև* http://az.geoview.info/ziyaretgah (15. II. 2022).

[60] Штернберг. 1936, 381.

կանոնիզման մեջ կապվել է սրբերի ու նրանց գերեզմանների հետ: Եղել են ուխտատեղեր, որոնք իրենցից քարակույտեր են ներկայացրել. յուրաքանչյուր ուխտավոր մի քար է ձգել, որից էլ այն կուտակվել է: Այս սովորությունը դոյություն է ունեցել հնագույն ժամանակներից և չարունակվում է մեր օրերում[61]*:*

Քարը քարի վրա դնելով կույտ անելու սովորությունը Օշականի շրջանում հիշատակում է ճանապարհորդ Արտեմի Արարատսկին[62]*:*

Պարուրաձև քարե շրջաններ են եղել Արագածի վրա և Ղազախի շրջանում, ուր դեռևս XIX դ. տեղացի բնակչությունը գնում էր աղոթելու՝ դրանք ընկալելով որպես «սրբերի գերեզմաններ»[63]*:*

Վարանդայի Ավդուռ գյուղում է գտնվում Ավդալ-օճախ ուխտատեղին, որը հասարակ քարերի կույտ է. այնտեղ այցելում են չքեր կանայք[64]*:*

Տաթևի վանքի հանդիպակաց լեռնաշղթայի Եղան գերեզման-ուխտատեղին ևս քարերի մեծ կույտ է, որն օրավուր մեծանում է, որովհետև ամեն անցորդ պարտավորվում է մի քար ավելացնել[65]*:*

Այստեղ պետք է նշել՝ բարձրլեռնային գոտիները լի են վերոհիշյալ ավանդապրույցներում նկարագրված քարակույտերով, որոնք ձևով նմանվում են կրոմլեխների. դրանց միջավայրում հաճախ ի հայտ են գալիս վիշապաքարեր: Չի բացառվում նաև, որ մեր գրականության մեջ տարածված «կրոմլեխ» հասկացության հիմքում կարող է ընկած լինել քարակույտեր ստեղծելու այս տարբերակը:

Սրբերի՝ բարձր լեռների ու վիշապների հետ առնչությունն արտահայտված է նաև պաշտոնական պաշտամունքի մեջ: Հայտնի է, որ մի շարք քրիստոնեական սրբեր, հատկապես՝ Ս. Սարգիսն ու Ս. Կարապետը, եղել են վիշապասպան: Շատ հավանական է, որ քրիստոնեական վիշապասպանությունը նախաքրիստոնեական վիշապապաշտության կերպափոխումն է: Մեզ հետաքրքրող համատեքստում, վերն ասվածը հատկապես արտահայտված է Ս. Կարապետի կերպարում: Նրա պաշտամունքի վայրը Քարքե լեռն էր, պաշտամունքի կենտրոնը՝ Վիշապ քաղաքը: Քարքեի իննակնեան սրբավայրին առնչվող վիշապները փակվում-թաղվում էին անդրաշխարհում, բայց այստեղ էր թաղված նաև Ս. Կարապետը՝ նրանց սպանողը, որը, թերևս, պաշտվել է նախկինում վիշապի ձևով: Քարքեն ընկալվում էր որպես «դժոխքի դուռ»: Այն տեղը, որտեղից մտնում էին դժոխք, նշվում էր ոչ միայն քարի կույտով, այլ, հավանաբար, նաև ծիսական հրապարակով, որտեղ անդրաշխարհ մտնելուց առաջ պետք է տեղի ունենային տարբեր ծես-խաղեր[66]*:*

Եզրակացություն

Հնագիտական, պատմական և ազգագրական տվյալները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի բարձրադիր վայրերը, գտնվելով մարդկային

[61] *Լ ի ս ի ց յ ա ն. 1946, 76, Լ ե ո. 1966, 64:*
[62] Жизнь Артемия Араратского. 1980, 48.
[63] Г у р к о-К р я ж и н. 1926, 220.
[64] *Լ ա լ ա յ ա ն. 1988, 156:*
[65] *Լ ա լ ա յ ա ն. 1988, 172:*
[66] П е т р о с я н. 2004, 46, 112–118.

բնակավայրի գոտիներից անդին, ընկալվել են որպես աստվածների, հերոսների և սրբերի կենսատարածքներ: Վերջիններս ոչ միայն «ապրել ու գործել են» այդ գոտիներում, այլև այնտեղ թաղվել (= վերակենդանացել) են:

Հայկական բարձր գոտիների ամենուր գոյություն ունեցող հասկացությունը վիշապն է: Այն տեսանելի է ինչպես հնագիտական նյութի մեջ (հանձին վիշապաքարերի և դրա հետ կապվող այլ մեծաքարային շինությունների), այնպես էլ՝ ազգագրական (հանձին համապատասխան պատկերացումների և ավանդազրույցների): Դրանցում վիշապը ի հայտ է գալիս և՛ աստվածության, և՛ հսկայի, և՛ սրբի դերում: Ընդ որում, այդ գործառույթները երբեմն՝ միահյուսվում են, երբեմն՝ հակադրվում: Այսպես, սուրբը կամ հսկան կարող է մարմնավորել ինչպես վիշապայինը, այնպես էլ հակադրվել / ոչնչացնել նրան: Այստեղ, ժողովրդական հիշողության մեջ բացահայտվում են տարբեր ժամանակագրական ու աշխարհայացքային չերտեր: Հնագիտությունն օգնում է վերականգնել այդ չերտագրության վաղագույն դրսևորումները:

Վերջին տարիների վիշապաքարերի պեղումներն արագածյան Տիրինկատար հուշարձանախմբում բացահայտում են մի կարևոր օրինաչափություն: Այն կառույցները, որոնք ստորին բարձրություններում հանդես են գալիս որպես կրոմլեխներ և որոնց տիպական են մարդկային ոսկորներ, բարձր վայրերում բնորոշվում են ոսկրաբանական նյութի բացակայությամբ: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս համապատասխան կառույցները դիտարկել ոչ թե մարդու, այլ հենց վիշապարձանի ծիսական թաղում:

Մինչ այժմ հայտնի չեն ոսկորների փաստագրումներ նաև «հսկաների տներում» կամ սրբերի գերեզման համարվող քարերի կուտակումներում: Ոսկորների բացահայտումն այս և նման հնագիտական միջավայրերում չենք բացառում հետագայում. այդ հուշարձանների հետազոտությունը միայն նոր է սկսվել Հայաստանում[67]: Առայժմ ենթադրում ենք, որ, հանձին նման կառույցների, գործ ունենք կամ մասունք կրող միջավայրերի, կամ, պարզապես, առանց ոսկորների թաղումների հետ: Ընդ որում, այս թաղումները սովորական կենոտաֆներ չեն, այլ աստվածների, հերոսների և սրբերի «թաղումներ» են, որոնց հողին չեն հանձնել ինչպես սովորաբար ընդունված է. նրանց «թաղել» են յուրովի՝ օժտելով նյութականության բացակայությամբ կամ մարմնավորելով պատկերի ու կառույցի ձևով: Այս պարագայում համապատասխան դամբարան-կառույցները խորհրդանշել են ոչ թե մահը, այլ առավելապես վերածնունդն ու դրանով իսկ ուղղված են եղել համայնքին՝ այն միավորելու և կոլեկտիվ հիշողությունը կառավարելու նպատակով:

Արսեն Բոբոխյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ հնագույն Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի խնդիրներ: Հեղինակ է 3 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: arsen.bobokhyan@sci.am

[67] *Հնարավոր զուգահեռների համար տե՛ս* Ceruti. 2004.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 671 էջ:

Ադոնց Ն. 1972, Հայաստանի պատմություն, Երևան, «Հայաստան», 430 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ, Վենետիկ, «Ս. Ղազար տպ.», 590 էջ:

Ալիշան Ղ. 2002, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Գրիգոր Տաթևացի», 295 էջ:

Ատրպետ. 1912, Եզի պաշտամունքը հին Հայաստանում. – «Ազգագրական հանդես» (Թիֆլիս), № XXIII/2, էջ 114–124:

Բարխուդարեանց Մ. 1895, Արցախ, Բագու, տպ. «Արօր», 461 էջ:

Բդոյան Վ. Հ. 1950, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ. – Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, № III, էջ 5–71:

Բենսէ. 1972, Հարք (Մշո Բուլանըխ). – «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 182 էջ:

Բոբոխյան Ա. 2017, Խորենացու վկայությունը Պաղատի սրբազան տարածքի մասին և վիշապաքարերի խնդիրը. – «Արևելագիտությունը Հայաստանում», № 3, էջ 32–51:

Բոբոխյան Ա., Զիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն. – Վիշապ քարակոթողները, Երևան, էջ 269–396:

Գէորգեան Բ. 1899, Խորենացուն Խորենացով պետք է հասկանալ, Էջմիածին, «Տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի», 108 էջ:

Գրիգորեան Ա. 2014, Բնապաշտական եւ խորհրդաբանական ընկալումների դրսեւորումները Ղեւոնդ Ալիշանի երկերում. – «Բազմավէպ» (Վենետիկ), թիւ 1–2, էջ 15–30:

Դիլանյան Ս. 2012, Հայոց սրբազան լեռնաշխարհը, Երևան, «Էդիթ պրինտ – Արահետ», 230 էջ:

Զաքարյան Ե. 2004, Հարդարանքը «Սասնա ծռերում».– Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը, Երևան, էջ 167–177:

Զաքարյան Ե. 2016, Հիվանդության և բուժման առասպելույթը հայկական հեքիաթներում, Երևան, «Գիտություն», 287 էջ:

Զաքարյան Վ. 1988ա, Էջմիածնի նորագյուտ վիշապաքարի և նմանատիպ կոթողների հարյուրամյա առեղծվածի շուրջը. – «Կոմունիզմի ուղիով» (Երևան), № 110, էջ 3–4:

Զաքարյան Վ. 1988բ, Էջմիածնի նորագյուտ վիշապաքարի և նմանատիպ կոթողների հարյուրամյա առեղծվածի շուրջը. – «Կոմունիզմի ուղիով» (Երևան), № 121, էջ 3–4:

Զաքարյան Վ. 1988գ, Էջմիածնի նորագյուտ վիշապաքարի և նմանատիպ կոթողների հարյուրամյա առեղծվածի շուրջը. – «Կոմունիզմի ուղիով» (Երևան), № 127, էջ 3:

Թադևոսյան Ա. 2007, Դարբինը հայոց ծիսահամակարգում (պատմաազգագրական ուսումնասիրություն). – «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 23, Երևան, «Գիտություն», էջ 101–183:

Թաղիադյան Մ. 1975, Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 619 էջ:

Լալաեան Ե. 1898, Սիսիան, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար. – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), № III, էջ 105–293:

Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 505 էջ:

Լալայան Ե. 2004, Երկեր, հ. 3, Երևան, «Գիտություն», 381 էջ:

Լեո. 1966, Հայոց պատմություն – Հին պատմություն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Հայաստան», 567 էջ:

Լեւոնեան Խ. 2013, Վան-Վասպուրական աշխարհը, Պէյրութ, «Դիզայն» Քես-դենեան, 320 էջ:

Լիսիցյան Ստ. 1946, Ազգագրական հարցարան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 108 էջ:

Լիսիցյան Ստ., Բայբուրթյան Ե. 1928, Հնությունների ցուցակագրությունն ու նկարագրությունը, Երևան–Թիֆլիս, ՀԽՍՀ Կենտրոնական գավառագիտական բյուրո, 72 էջ:

Ծոցիկյան Ս. Մ. 1917, Արարատ–Կովկաս, հ. 1, Ֆրեզնօ, 250 էջ:

Հովհաննիսյան Հ. 1990, Հայ հին դրաման և նրա պայմանաձևերը, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 296 էջ:

Հովսեփյան Գ. 1987, Գերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար. – Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, էջ 153–189:

Դանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:

Մարգարյան Ե. 2014, Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրո-նահոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հռոմ, Երևան, «Պատմության ինստիտուտ», 276 էջ:

Մարտիրոսյան Հ. Ա. 1969, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ. – ՊԲՀ, № 3, էջ 191–208:

Մելիքեան Ե. Յ. 1964, Հարք-Խնուս, Անթիլիաս, «Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 583 էջ:

Մխիթարեան Ա. 1874, Վաղարշապատ, Վաղարշապատ, «Տպ. Ս. Կաթողիկէ էջմիածնի», 75 էջ:

Մխիթարեան Ա. 1904, Դէպի Արարատ, Թիֆլիս, «Հերմէս», 159 էջ:

Մնացականյան Ա. Շ. 1955, Հայկական զարդարվեստ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 659 էջ:

Յակուտ ալ Համավի. 1965, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 367 էջ:

Շահազիզ Ե. 1987, Աշտարակի պատմությունը, Երևան, «Հայաստան», 348 էջ:

Պարրոտ Ֆ. 1990, Դորպատից Արարատ, Երևան, «Հայաստան», 110 էջ:

Պետրոսյան Հ. Լ. 2008, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրութ-յունը, իմաստաբանությունը, Երևան, «Փրինթինֆո», 406 էջ:

Ռեկլյու Է. 1891, Ռուսական Հայաստան, Վաղարշապատ, «Տպ. Ս. Կաթ. էջմիածնի», 150 էջ:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ:

Տէր Կարապետեան Գ. 2003, Տարօնի վանքերը. ուղևորի յիշատակներ, Երե-ւան, «Մուղնի», 360 էջ:

Տեր-Ղազարյան Վ. 1984, Քեղվա բերդ. – «Հայաստանի բնություն» (Երևան), № 1, էջ 39:

Տէր-Ղեւոնդեան Ա. Ն. 1971, Մասիս լերան մասին արաբական զրոյցը. – «Հայկազեան հայագիտական հանդէս» (Բեյրութ), № 3, էջ 9–16:

Տևկանց Ա. 1985, Այցելություն ի Հայաստան 1878, Երևան, ՀՍՀ ԳԱ հրատ., 136 էջ:

Րաֆֆի (Մելիքզադէ). 1875, Գրոց ու բրոց կամ Սասունցի Դաւիթ գրքույկի առիթով՝ տպուած Կ. Պոլսում 1874 ամի Գ. Վ. Սրուանձտեանցի աշխատասիրութեամբ. – «Մշակ» (Թիֆլիս), № 2–3, էջ 1–3:

Քալանթար Աշխ. 1935, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, «Մելքոնյան ֆոնդի հրատ.», 95 էջ:

Андрианов Б. В. 1978, Земледелие наших предков. М., «Наука», 167 с.

Асрян Ю. А. 1999, Нагорный Карабах в эпоху бронзы и раннего железа (II–I тыс. до н. э.). Степанакерт, «Полиграф», 118 с.

Гаврилов Д., Ермаков С. 2009, Боги славянского и русского язычества. Общие представления. М., «Ганга», 230 с.

Гуллакян С. А. 1983, Указатель мотивов армянских волшебных сказок. Ереван, Изд. Ереванского университета, 402 с.

Гурко-Кряжин В. А. 1926, Циклопические сооружения Закавказья. – «Новый Восток» (М.), № 15, с. 212–221.

Евсюков В. В. 1986, Мифы о мироздании. М., «Политическя литература», 111 с.

Жизнь Артемия Араратского. 1980, Григорьян К. Н., Орбели Р. Р. (ред.). Л., «Наука», 224 с.

Капанцян Г. 1952, О каменных стелах на горах Армении. Ереван, Изд. АН АрмССР, 52 с.

Коростовцев М. А. 1976, Религия древнего Египта. М., «Наука», 335 с.

Линч Х. Ф. Б. 1910, Армения II: Турецкие провинции. Тифлис, «Типография М. Мартиросянца», 675 с.

Лисицян Ст. 1992, Армяне Нагорного Карабаха. Ереван, Изд. АН Армении, 239 с.

Марр Н. 1902, Сирийское происхождение հайского դամբարան [‘оссуарий’], ‘могила’, ‘склеп’. – «Записки восточного отделения» (СПб.), № XIV, с. 64–66.

Марр Н. Я., Смирнов Я. И. 1931, Вишапы. Л., «Огиз», 105 с.

Нариманишвили Г., Шаншашвили Н., Нариманишвили Д. 2015, Новые данные о менгирах Южной Грузии.–Каменные стелы вишапы. Ереван, «Гитутюн», с. 76–189.

Паффенгольц К. Н., Тер-Месропян Г. Т. 1964, Арагац. Ереван, Изд. АН АрмССР, 78 с.

Петросян Э. 2004, Боги и ритуалы древней Армении. Ереван, «Зангак», 288 с.

Пиотровский Б. Б. 1939, Вишапы: каменные статуи в горах Армении. Л., Изд. АрмФАН, 40 с.

Плутарх 1977, Моралии об Исиде и Осирисе. Пер. и коммент. Трухиной Н. Н. – «Вестник древней истории» (М.), № 4, с. 229–249.

Ростомов И. П. 1898, Ахалкалакский уезд в археологическом отношении. – Сборник материалов по описанию местностей и племен Кавказа, № XXV. Тифлис, с. 1–133.

Топоров В. Н. 1992, Рыба. – Мифы народов мира, т. 2. М., с. 391–393.

Штернберг Л. Я. 1936, Первобытная религия в свете этнографии. Л., Изд. Института народов Севера, 592 с.

Bard K. A. 2005, Encyclopedia of the Archaeology of Ancient Egypt. London–New York, “Routledge”, 1227 p.

Bergé Ad. 1874, Der Kaukasus in archäologischer Beziehung. – “Russische Revue” (St. Petersburg), № V, S. 405–446.

Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2018, Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia, Context and Connection: Essays on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona. – Orientalia Lovaniensia Analecta (Leuven – Paris – Bristol), v. 268, pp. 255–270.

Ceruti C. 2004, Human Bodies as Objects of Dedication at Inca Mountain Shrines (North–Western Argentina). – "World Archaeology" (London), № 36, pp. 103–122.

Dunand F., Lichtenberg R. 2006, Mummies and Death in Egypt. Ithaca–London, "Cornel University Press", 243 p.

Gilibert A., Bobokhyan A., Hnila P. 2012, Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains. – Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft (Berlin), № 144, pp. 93–132.

Haas V. 1982, Hethitische Berggötter und hurritische Steindämonen, Mainz am Rhein, "Philipp von Zabern", 258 S.

Mansfeld G. 1996, Der Tqisbolo-gora: Eine Siedlungsgrabung als georgisch-deutsches Gemeinschaftsprojekt in der Republik Georgien, Antike Welt, Mainz, № 27/5, S. 365–380.

Narimanishvili G., Shanshanshvili N., Narimanishvili D. 2013, Study of One Group of Megalths from South Caucasus. – "Dziebani" (Tbilisi), № 21, pp. 140–166.

Wellendorf J. 2014, Trolls. Tomb Raiders, and Battles not Worth Fighting in Norse Tradition, Fighting Dragons and Monsters: Heroic Mythology, 8th Annual International Conference on Comparative Mythology, May 24–26, Abstracts. Yerevan, pp. 29–30.

БОГИ, ГЕРОИ И СВЯТЫЕ: АРМЯНСКИЕ ГОРЫ КАК СФЕРА СВЯЩЕННЫХ ПОГРЕБЕНИЙ

АРСЕН БОБОХЯН

Р е з ю м е

Ключевые слова: боги, герои, святые, вишап, высокогорные зоны, археологические памятники, предания.

В представлениях многих народов высокие горы являются основным обиталищем богов, героев и святых или важнейшей ареной их деятельности: они не только действуют в этих ландшафтах, но и хоронятся (= перевоплощаются).

Вездесущей категорией высоких армянских гор является вишап (арм. дракон). Он выявляется как в соответствующих археологических, так и этнографических материалах – в роли божества, героя (= богатыря) и святого. Причем, эти функции то переплетаются, то противопоставляются друг другу.

Раскопки на г. Арагац стел вишапов и смежных контекстов в последние годы выявляют одну важную закономерность: те структуры, которые в

низких зонах известны как кромлехи, которым типичны человеческие захоронения, в высокогорных регионах характеризуются отсутствием остеологического материала. До сих пор не известны находки человеческих костей и в так называемых «домах огузов / гигантов» или в скоплениях камней, считающихся погребениями святых. Хотя не исключается возможность находки костей в таких структурах, пока что можно предположить, что в лице этих структур имеем дело или с контекстом мощей, или просто с погребениями без костей. Причем, эти погребения не простые кенотафы: это «погребения» богов, героев или святых, которых не предавали земле как обыкновенных смертных. Их «хоронили» особым способом одаряя отсутствием материальности или воплощая в образе и в конструкции, в подконтексте акцентируя его социальную т. е. создающую идентичность функцию.

Арсен Бобохян – к. и. н., директор Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: проблемы материальной и духовной культуры древней Армении. Автор 3 монографий и более 100 статей.
arsen.bobokhyan@sci.am

GODS, HEROES AND SAINTS: ARMENIAN MOUNTAINS AS SPHERES OF SACRED BURIALS

ARSEN BOBOKHYAN

S u m m a r y

Keywords: gods, heroes, saints, vishap, high altitude zones, archaeological sites, folk-tales.

In imaginations of many peoples the high mountains appear as the main habitat and field of action of gods, heroes and saints, who not only act in those landscapes, but are also buried (= reborn) there.

The omnipresent category for the Armenian mountains is the vishap (= Arm. for dragon). This is visible both in corresponding archaeological and ethnological materials. According to them, the vishap appears both as deity, and as hero (= giant) and saint. Moreover, these functions are either intermingled or contradicted to each other.

The vishap stones and adjoining contexts, found during the excavations in the last years on the Mt. Aragats, reveal an important regularity. Those constructions, which are known as cromlechs in the low altitudes and to which human burials are typical, in the high altitudes are characterized through absence of osteological material. There are not still known of human bone findings in the so-called “houses of giants” or in the accumulation of stones, which are considered to be the burial places of saints.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Although we do not exclude the possibility of finding bones in such constructions later, currently we suppose that in face of these structures, we deal either with the context of relics or simply with burials without bones. Moreover, those burials are not simple cenotaphs; they are "burials" of gods, heroes and saints, who were not buried as ordinary mortals. They were "buried" in a special way endowing them with absence of materiality or by embodying them in an image and in a structure - emphasizing its social, i.e. identity-creating function.

Arsen Bobokhian – PhD in History, Director of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: problems of material and spiritual culture of ancient Armenia. Author of 3 monographs and more than 100 articles. arsen.bobokhyan@sci.am

ՀՏԴ : 929:902(479.25) Քալանթար+39

Doi:10.54503/0135-0536-2023.1-183

ԱՇԽԱՐՀԲԵԿ ՔԱԼԱՆԹԱՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԱՊԱՀՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(1930-ական թվականներ)*

ԿԱՐԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ

Բանալի բառեր՝ Աշխարհբեկ Քալանթար, Խորհրդային Հայաստան, սոցիալիստական շինարարություն, Հնությունների պահպանության կոմիտե, հուշարձանների պահպանություն, դիմակայություն, հետազոտություն, լուսաբանում:

Նախաբան

1930-ական թվականները քաղաքական, տնտեսական և մշակութային տեսակետից հարուստ ժամանակաշրջան էր խորհրդային պետության պատմության մեջ: Երկրում ողջ թափով ընթանում էին առաջին հնգամյա պլանի կատարման աշխատանքները: Խորհրդային Հայաստանում աննախընթաց վերելք էր ապրում սոցիալիստական շինարարությունը. կառուցվում էին գործարաններ, շարք էին մտնում նոր հիդրոէլեկտրակայաններ և այլն: Բնականաբար, այդ ամենը, անշուշտ, ոչ միայն դրական, այլև բացասական հետևանքներ էր թողնում մշակութային կյանքի վրա: Դրականն այն էր, որ գնալով ավելանում էին ժողովրդական կրթությանը և մշակույթի զարգացմանը հատկացվող միջոցները, տարեցտարի ամրանում էր տեխնիկական բազան: Մյուս կողմից, սակայն, սոցիալիստական շինարարության աննախադեպ ծավալումը նոր խնդիրներ էր առաջացնում հանրապետությունում մշակութային արժեք ներկայացնող հնավայրերի և ճարտարապետական կառույցների համար: Այդ տեսակետից Հնությունների պահպանության կոմիտեի[1] աշխատանքները ոչ միայն չպակասեցին, այլև ամենօրյա հետևողական աշխատանքի նոր ճակատ էր բացվում: Այդ մասին են վկայում Հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար Աշխարհբեկ Քալանթարի (1884–1942)[2] այդ տարի-

---

* *Ներկայացվել է 28. II. 2023 թ.: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի հայցորդ: Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական ղեկավար, պ. գ. թ. Գագիկ Սարգսյանը (03. III. 2023 թ.): Ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

[1] *Հնությունների պահպանության կոմիտեն ստեղծվել է 1923 թ. դեկտեմբերի 30-ին ՀՍԽՀ լուսժողկոմի 107 հրամանով: Կոմիտեի նախագահ է հաստատվել Ալեքսանդր Թամանյանը, գիտնական քարտուղար՝ Աշխարհբեկ Քալանթարը, անդամներ՝ Մարտիրոս Սարյանը, Թորոս Թորամանյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Պահպանության կոմիտեն այս կազմով պահպանվեց մինչև 1933 թ. հունիսի 2-ը, այնուհետև անվանափոխվել է որպես Հնությունների կոմիտե մինչև 1941 թ. հունվարի 25-ը, երբ ՀՍԽՀ ժողկոմխորհի որոշմամբ մտել է Ակադեմիայի հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) կազմի մեջ:*

[2] *Աշխ. Քալանթարի մասին մանրամասն տե՛ս* Г а р и б д ж а н я н. 2021, 281.

ների հուշարձանապահպան գործունեությունը լուսաբանող արխիվային վավերագրերը:

Աչխ. Քալանթարի պայքարը պատմահնագիտական վայրերի պահպանության համար

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայաստանում նոր թափ են ստանում Հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքները. նկատելի էր թե՛ կատարվող աշխատանքների ծավալը և թե՛ տարածքային ընդգրկումը: Երկրի տարածքում սփռված նյութական մշակույթի բազմահազար մնացորդների պահպանության և դրանց համապարփակ ուսումնասիրության գործն ամբողջությամբ դրված էր Հնությունների պահպանության կոմիտեի վրա: Ուստի 1930-ական թվականներին կոմիտեի գիտական քարտուղար Աչխ. Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը լուսաբանող արխիվային վավերագրերի բովանդակությունը, առանձին բացառություններով, գրեթե նույնն էր. նոր շինարարության թույլտվություն ստանալու հարցում խիստ հետևողականություն, կոմիտե հանող ահազանգերին արագ արձագանքում և այլն: Հայաստանի ազգային արխիվում պահվող և ասվածը հավաստող փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի գրությունը Ղռերի վարչության: 25 հունիսի 1930 թ.: Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի ստացած տեղեկություններից պարզվում է, որ Ղամարլվի գավառակի (այժմ Արարատի մարզի – Կ. Բ.) Ագատավան (Ղըռ Բզովան) գյուղի մոտ, Հին Դվինի հնագիտական շրջանում, Ղռերի ոռոգման աշխատանքների միջոցին՝ մագիստրալ առվի փորումների ժամանակ, բացվել են կարևոր հնություններ: Այդ մասին հակառակ գոյություն ունեցող օրենքի, կոմիտեին ժամանակին տեղեկություն չի տրվել և հնությունները հանվել են առանց մեզ, որով և նրանք կորցրել են իրենց գիտական արժեքը: Կոմիտես խնդրում է ձեզ, կարգադրել աշխատանքների ղեկավարներին, այսուհետև հնություններ երևան գալու դեպքում, դեռևս նրանց չբացած, անմիջապես դադարեցնել աշխատանքները տվյալ կետում և մեզ տեղեկացնել հեռագրով, ներկայացուցիչ ուղարկելու պեղումներ կատարելու համար»[3]:

Խորհրդային իշխանության ամրապնդմանը զուգընթաց, պետական չատ մարմիններ հարց էին բարձրացնում զանազան ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով մշակութային մեծարժեք նմուշները հանրապետությունից դուրս տանելու համար: Բնականաբար, միակ թույլ տվող մարմինը, ըստ Հնությունների պահպանության կոմիտեի դեկրետի, մնում էր Հնությունների պահպանության կոմիտեն: Այսպես, 1930 թ. հունվարի 21-ին Լուսժողկոմին ուղղված Կոմիտեի զեկուցագրում կարդում ենք. «...լսելով էջմիածնի թանգարանի վարիչի գրավոր դիմումը, որով նա խնդրում է Կոմիտեից խորհուրդ և աջակցություն թանգարանային որոշ նմուշներ Լենինգրադ՝ էքսիտաժ 6 ամսով փոխադրելու, նույնպես և Պետթանգարանի վարիչի ինֆորմացիան՝ ... Անիի հնաղարանից որոշ նմուշներ նույն էքսիտաժը 4 ամսով ուղարկելու համար ...

---

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1063, ց. 1, գ. 52, թ. 139 և շրջ.: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*

Կոմիտես գտնում է, որ կուլտուրայի այդպիսի արժեքները Հանրապետության սահմաններից, թեկուզ և ժամանակավորապես, դուրս տանելը նախատեսված չի գոյություն ունեցող դեկրետով: … այդ մասին Կոմիտեն տարբեր կարծիք ունի, ուստի նա խնդրում է Ձեզ, հնարավոր վերոհիշյալ արժեքների տեղափոխման հարցը վերանայել Կոմիտեիս մասնակցությամբ: Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտնական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»[4]:

Ահա այսպիսի կոշտ դիրքորոշում ուներ Հնությունների պահպանության կոմիտեն և առաջին հերթին նրա գիտնական քարտուղարը մշակութային արժեք ներկայացնող յուրաքանչյուր բեկորի հարցում: Նույն կերպ էլ կոմիտեն արգելում էր առանց իր իմացության՝ հիմնարկ-ձեռնարկությունների կողմից մշակութային արժեք ներկայացնող իրերի ձեռքբերումը: Հայաստանի ազգային արխիվում պահվող այս փաստաթուղթն ասածի վկայությունն է. կոմիտեի զեկուցագիրն է Լուսժողկոմատին՝ 1930 թ. հունվարի 4-ին. «Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի, Հայաստանի պետական թանգարանի և Էջմիածնի պետական թանգարան-մատենադարանի վարչությունների միացյալ արտակարգ նիստը ս. թ. հունվարի 3-ին քննության առնելով լրագրերում զետեղած («Заря Востока», «Խորհրդային Հայաստան» № 291, 299 – 1929 թ. և № 3 – 1930 թ.) Անդրպետառի հայտարարությունը զանազան հնագիտական և գեղարվեստական արժեք ունեցող իրեր գնելու մասին, գտավ, որ՝ … Հիշյալ հայտարարությունը հիմնովին հակասում է ՀՍՍՀ ժողկոմխորհի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետին (կետ 5), որով խստիվ արգելվում է նման արժեքների արտահանումը Հանրապետության սահմաններից: … արժեքների արտահանումը ներկայացնում է լուրջ վտանգ ոչ միայն Խորհրդային Հայաստանի և նրա ժողովուրդների անցյալը, այլև ընդհանուր կուլտուրայի ուսումնասիրության գործին և խորապես վնասում է մեր կուլտուրայի շինարարությանը: Ուստի ժողովը որոշեց դիմել Ձեզ, … որպեսզի կանխվի վերհիշված և անխուսափելի վտանգը … Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտնական քարտուղար՝ Աշխ. Քալանթար»[5]:

Աշխ. Քալանթարի հետևողական աշխատանքի ու պայքարի արդյունքում էր, որ չատ ժամանակ չանցած՝ 1930 թ. մարտի 2-ին, հրապարակվում է ՀՍՍՀ ժողկոմխորհի որոշումը՝ հնագիտական և գեղարվեստական նշանակություն ունեցող իրերի արտահանումն արգելելու մասին: Որոշման մեջ, մասնավորապես, ասվում էր. «Արգելել հնագիտական և գեղարվեստական ունիկալ նշանակություն ունեցող իրերի արտահանումը ՀՍՍՀ սահմաններից: … Սահմանափակել այն հնագիտական և գեղարվեստական իրերի արտահանումը, որոնք ունիկալ չլինելով, այնուամենայնիվ, ունեն խոշոր նշանակություն ՀՍՍՀ պատմական կուլտուրայի ուսումնասիրության համար: … Թույլ է տրվում արտահանել հնագիտական և գեղարվեստական իրերը, որոնք տարածված են բազմաթիվ օրինակներով, ինչպես նաև նրանց պատճենները: … Այս որոշումը խախտողները ենթարկվում են քրեական պատասխանատվության: Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ՝ Ս. Տեր-Գաբրիելյան: Ժողովրդական կոմիսարների խորհրդի քարտուղար՝ Ա. Իսահակյան»[6]: Ուստի այն, որ

[4] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 11: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*
[5] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 243, թ. 11: Բնագիր: Մեքենագիր:*
[6] *ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 243, թ. 7 և շրջ.: Պատճեն: Մեքենագիր:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Հնությունների պահպանության կոմիտեին հաջողվում էր հետևողական աշխատանքի չնորհիվ ստիպել անգամ հանրապետության բարձրագույն իշխանությանը՝ իր վերաբերմունքն արտահայտել օրենքին հավասար որոշման տեսքով, անշուշտ, գնահատանքի է արժան:

Նկատենք նաև՝ Հնությունների պահպանության կոմիտեն, իր գործակալների միջոցով տեղեկանալով հանրապետության սահմաններից դուրս գտնվող մշակութային արժեքների մասին, հարց էր բարձրացնում ժողկոմխորհի առջև՝ դրանք Հայաստան բերելու համար: Այսպես. «Կոմիտեի գրությունը ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահին: 9 ապրիլի 1930 թ.: Կոմիտեիս ունեցած տեղեկությունների համաձայն, Անդրպետառը Թիֆլիսում՝ 1800 ռուբլով, մի մասնավոր անհատից ձեռք է բերել հայ արվեստի (մանրանկարչության) գլուխգործոցներից մեկը՝ XIII դարի Կիլիկյան շրջանի նշանավոր արվեստագետ Սարգիս Պիծակի նկարազարդած մագաղաթյա մի ձեռագիր: Համաձայն տեղեկությունների, վերոհիշյալ ձեռագիրը ներկայումս գտնվում է Մոսկվայում: Կոմիտես խնդրում է Ձեզ միջոցներ ձեռք առնել, որպեսզի հայ կուլտուրայի այդ եզակի արժեքը դուրս չգնա Միության սահմաններից և Խորհրդային Հայաստանի սեփականությունը դառնա»[7]: Մեզ մնում է հավելել, որ ներկայացված դրվագում Աչխ. Քալանթարն, անշուշտ, իր նշանավոր ուսուցիչ Նիկողայոս Մառի արժանի հետևորդն էր և մշտապես առաջնորդվել է Մառի կողմից մշակված այն սկզբունքներով, որի անմիջական ականատեսն ու մասնակիցն էր եղել: «Անիի տերն ու տնօրենը Մառն էր, – իր հուշերում գրում էր Անիի պեղումներում Աչխ. Քալանթարի մշտական ուղեկից և լուսանկարիչ Ա. Վրույրը, – նա խստիվ արգելել էր Անիից մի քար անգամ դուրս տանել: Նույնիսկ կայսերական օրենքին հակառակ, Անիում գտնված իրերը թողնում էր իր տեղում և գտնում էր, որ պեղումներից հանված իրը պետք է մնա Անիում՝ այն վայրում, որին նա պատկանում է: Մինչդեռ կայսերական օրենքը հրահանգում էր՝ երկրի սահմաններում ի հայտ եկած բոլոր արժեքավոր հնությունները կենտրոնացնել կայսրության մայրաքաղաքում»[8]:

Աչխ. Քալանթարը գիտության կազմակերպիչ էր բառի ամենալայն իմաստով. Ն. Մառին հասցեագրված 1932 թ. նամակում նա գրում է. «Ես խիստ անհանգստացած եմ իմ երեք աշակերտների գիտական պատրաստվածության համաձայն զբաղեցրած պաշտոնների համար – Լիդիա Կրիևա, Կարո Ղաֆադարյան և Սուրեն Երեմյան... նրանք իրենց լավագույնն են դրսևորել կոմիտեում ինձ հետ աշխատանքներում... կարծում եմ, որ նրանք բոլորն էլ արժանի են Ակադեմիայի ասպիրանտուրայում սովորելու համար, եթե, իհարկե, դուք դա հնարավոր համարեք... Ինչ վերաբերում է Վաղարշապատի պեղումներին, ապա պետք է նշեմ, որ իմ ղեկավարությամբ արշավախումբը ամուր հիմքեր ունի ակնկալելու նյութական անհրաժեշտ աջակցություն այս ամռանը և աշնանը: Ձեզ նվիրված Աչխարհբեկ»[9]:

Հնությունների պահպանության կոմիտեն, իրավամբ, վեր էր ածվել հնագիտական արժեքների հավաքման յուրատեսակ մի վայրի. եկեղեցիներից ու վանքերից հավաքել և բեկոր առ բեկոր թանգարաններին էր հանձնել մեծա-

[7] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 94: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*
[8] *Վ ր ո ւ յ ր. 1979, 29:*
[9] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 88, թ. 26–27:*

քանակ նյութեր: Եվ կրկին այդ գործի նախաձեռնողն ու կազմակերպիչն Աչխ. Քալանթարն էր. արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Ցուցակ՝ Սևանա վանքից Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի 1930 թ. փետրվարի 28-ին փոխադրած իրերի՝ հանձնելու էջմիածնի մատենադարան-ձեռագրատունը: 20 հուլիսի 1931 թ.: …Սույն ցուցակում հիշատակված իրերը (մանրամասն նկարագրված են 10 անուն թանգարանային արժեքներ. – Կ. Բ.), համաձայն արված կարգադրության, հանձնարարվում է կոմիտեիս տեսուչ-հրահանգիչին փոխադրելու և հանձնելու էջմիածնի մատենադարան-ձեռագրատունը՝ Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեի գիտական քարտուղար՝ Աչխ. Քալանթար»[10]*:*

Իհարկե, երկրում ամենուր ընթացող աննախադեպ շինարարության պայմաններում Հնությունների պահպանության կոմիտեն ի վիճակի չէր կանգնեցնել պատմական առումով նշանակալի առանձին կառույցների քանդումը, ինչպես ասենք՝ Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու պարագայում[11]*: Այդպիսի կառույցների շարքում էր նաև Երևանի նշանավոր բերդը, որը ռուսական բանակները երեք արշավանքից հետո միայն՝ 1827 թ. հոկտեմբերին, կարողացան գրավել: Այդուհանդերձ, 1920-ական թվականների կեսերին կոմիտեն մի քանի անգամ նամակներ ուղարկեց պատկան մարմիններին, որպեսզի ետ կանգնեն բերդը քանդելու մտքից: Սակայն 1930-ական թվականներին այդպես էլ հնարավոր չեղավ փրկել այդ յուրօրինակ կառույցը, ինչ է թե՝ այն խանգարում էր նոր կառուցվող գինու գործարանին կամ, ինչպես զեկուցման մեջ է գրված, «մագիստրալ կանալի» անցկացմանը: Ներկայացվող վավերագիրը, թերևս, Երևանի բերդի մասին կոմիտեի վերջին զեկուցումներից մեկն է և որքանով նկատելի է զեկուցագրից, բերդը գնալով քայքայվում էր և վերածվում յուրօրինակ ավերակի: Մեջբերում ենք Հնությունների պահպանության կոմիտեի 1931 թ. նոյեմբերի 20-ի Լոսժոդկոմ ուղարկված զեկուցագրից. «Սրանից 4 օր առաջ, Հնությունների պահպանության կոմիտեն պատահաբար տեղեկություն ստացավ, որ Երևանի հին բերդի շրջանում Ղռերի վարչության հողային խոշոր աշխատանքներ է կատարում: Մեր կատարած ստուգումից պարզվեց, որ մագիստրալի մի կանալ (ընդգծումը մերն է – Կ. Բ.) ծրագրված է անցկացնել Բերդի հնագիտական շրջանով՝ Զանգվի ձորի ձախ ափով, Բերդի պարիսպների աշտարակների վրայով, սկսած Արարատ (գինու– Կ. Բ.) գործարանի մոտից մինչև Բերդի հարավ-արևմտյան անկյունը՝ պարսպի թեքման կետը … այդպիսով իսպառ ոչնչացնելու է Երևանի նախկին Բերդի՝ ձորի վրա գտնված հնության բոլոր մնացորդները՝ թե՛ պարիսպներն ու աշտարակները, և թե՛ Սարդարի ապարանքի այն միակ մնացորդը, որ 3 տարի առաջ Արարատ գործարանի շինարարական աշխատանքների միջոցին առանձնացված էր կոմիտեի կողմից և պահվում էր զգուշությամբ ապագա ուսումնասիրությունների և պեղումների համար: Ոչ միայն ընդհանրապես Բերդի սահմանում, այլ նույնիսկ նրա միակ մնացորդներին այդպիսի լուրջ վտանգ է սպառնացող Ղռերի վարչության այդ ձեռնարկը, հակառակ Ժողկոմխորհի Հնությունների պահպանության վերաբերյալ դեկրետի 6 և 7 կետերի … մեր*

[10] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 93, թ. 21: Բնագիր: Ձեռագիր:*

[11] *Այդ մասին մանրամասն տե՛ս Բ ա յ ր ա մ յ ա ն. 2022, 118–137:*

ստուգումը պարզեց, որ արդեն զգալի վնասներ են հասցրած հնութ յան մնացորդներին, մանավանդ Բերդի հարավ-արևմտյան անկյունում կուտակված բուրգերին ու աշտարակներին, որոնց գլխից 5–6 մետր խորութ յամբ արդեն կտրված է: Ձեր կարգադրութ յան համաձայն, այսօր, նոյեմբերի 20-ին, Ղռերի վարչութ յան և Կոմիտեի հատուկ հանձնաժողովը, հանձինս ինժեներ Ս. Օհանեսյանի, Հակոբյանի և Աբրահամյանի, Կոմիտեի գիտաքարտուղար Աչխ. Քալանթարի, գիտաեկտորի վարիչ ընկ. Անդրեասյանի հետ միասին, այցելելով վայրը և տեղում քննութ յան առնելով առանց հնութ յունները վնասելու, մագիստրալ ջրանցքն անցկացնելու հնարավորութ յունները, ցուցաբերեց հետևյալը … Մագիստրալը կարելի է անցկացնել պարիսպների-աշտարակների տակով, նրանց ամբողջ երկարութ յամբ, Զանգվի ձորի լանջով… Արարատ գործարանի մոտ, առաջին և երկրորդ աշտարակների միջով, առուն անցկացնել վերին (Բերդատեղիի տափարակը) և դուրս բերել Բերդի հարավային պատով (առվի աջ կողմում թողնելով Բերդի բոլոր աշտարակները, որով նրանք մնում են անվնաս): … Առուն անցկացնել առաջին և երկրորդ աշտարակների տակով (Արարատ գործարանի մոտ)…

Առաջադրելով այս հնարավորութ յունները, Կոմիտեն խնդրում է Ձեզ անել համապատասխան կարգադրութ յուն, պահպանելու համար պատմական և գիտական խոշոր նշանակութ յուն ունեցող այդ պարիսպները, որոնք նշանավոր են ոչ միայն իբրև պարսկական շրջանի շինարարութ յան, այլև իրենց հիմքում ունեն հայկական և նախահայկական ամրութ յունների մնացորդներ, ինչպես պարզեցին Արարատ գործարանի շինարարական աշխատանքների ժամանակ բացված իրական տվյալները: Կոմիտեն լուրջ կերպով մտահոգված է, որ այս խնդիրը դրական լուծում ստանա, մանավանդ որ, Երևանի Բերդը մինչև այժմ բոլորովին ուսումնասիրված չէ: Նախագահ՝ Ա. Թամանյան: Գիտական քարտուղար՝ Աչխ. Քալանթար»[12]*:*

Աչխ. Քալանթարը հակաեկեղեցական պայքարի հորձանուտում

Անշուշտ, 1930-ական թվականները, ինչպես Խորհրդային Միութ յան, այնպես էլ Խորհրդային Հայաստանի տարածքում հոգևոր հաստատութ յունների հանդեպ անհանդուրժողականութ յունն աննախադեպ ծավալ էր ընդունել: Դրան հատկապես նպաստել էին խորհրդային կառավարութ յան որդեգրած երկու մեծածավալ գործընթացները՝ կոլտնտեսային շարժումը և ինդուստրացումը, որոնք մեծ վնաս հասցրեցին պատմահնագիտական վայրերի պահպանութ յան գործին: Եկեղեցիները քանդվում կամ վեր էին ածվում կոլտնտեսային պահեստի, խոտի ամբարի և այսպես շարունակ: Եվ, ընդհանրապես, կրոնամշակութային այդ հնութ յունները խորհրդային ագիտպրոպագանդայի համար դարձել էին յուրատեսակ թիրախ՝ աթեիստական գաղափարների տարածման համար: Ուստի Հայաստանի հնութ յունների պահպանութ յան կոմիտեի գործունեութ յան համար այդ ժամանակաշրջանն ամենից դժվարին տարիներն էին: Սակայն նույնիսկ նման պայմաններում կոմիտեն անում էր հնարավորը՝ գաղափարական այս մեքենային հակազդել սեփական քարոզչութ յամբ, փորձում էր բացատրական աշխատանք տանել լայն հասարակայ-

[12] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 93, թ. 116–117: Պատճեն: Մեքենագիր:*

նության և, առաջին հերթին, դպրոցահասակ երեխաների շրջանում: Արխիվային վավերագրերից մեկում կարդում ենք. «Կոմիտեի գրությունը Աշտարակի շրջլուսաբաժվարին: 28 դեկտեմբերի 1930 թ.: Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն տեղեկություն ստացավ, որ Աշտարակի սբ. Մարինե եկեղեցու մոտ եղած խաչքարերը ջարդել են նույն հուշարձանի գավթում գտնվող դպրոցի աշակերտները: Նույնանման ապօրինի և միանգամայն անթույլատրելի երևույթ նկատվել է և անցյալներում՝ 1930 ուս. տարեվերջին, որի համար կոմիտեիս մոտ կա կազմած արձանագրություն և որի համաձայն հանցանքն ընկնում է դպվարի վրա: Կոմիտես խնդրում է հրահանգել շրջանիդ ուսուցիչներին՝ Հնությունների պահպանության գործը մասսայականացնել աշակերտության մեջ և նախազգուշացնել վերոհիշյալ դպրոցի վարիչին, որպեսզի նա ներչնչի աշակերտությանը խնամքով վերաբերվելու դեպի Հնությունները, որովհետև նրանք համարվում են պետական սեփականություն և նրանց վնասողները դատի են ենթարկվում իբրև խախտիչ ըստ 1923 թ. դեկտեմբերի 18-ի ԺԿԽ-ի դեկրետի: Գիտական քարտուղար՝ Աչխ. Քալանթար»[13]: Հետևողական նման աշխատանքի շնորհիվ՝ հնարավոր եղավ հնագիտական և պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շատ ու շատ կառույցներ փրկել վերահաս ավերումից: Բնականաբար, տեղերում աջակիցների պակաս էր զգացվում, ուստի կոմիտեն պահպանության գործի մեջ ներգրավեց եկեղեցու սպասավորներին: Այսպես. «Կոմիտեի գրությունը Մուղնու վանքի վանահայր Գրիգորիս քահանա Տեր-Գրիգորյանին: 7 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեի որոշմամբ Դուք ճանաչվում եք Մուղնու հուշարձանի պահպանող-հսկիչ: Գիտական քարտուղար՝ Աչխ. Քալանթար»[14]:

Հնությունների պահպանության կոմիտեի անունից իշխանություններին ուղղված գրությունները հաջորդում էին մեկը մյուսին, փորձում էին անհետևանք չթողնել և ոչ մի դիմում-ահազանգ: Այս տեսակետից ուշագրավ է հետևյալ փաստը. «... Ստեփանավանի շրջգործկոմի նախագահին: 10 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեն անցյալ թվի դեկտեմբերի 23-ի գրությամբ հայտնել է Ձեզ, որ Բերդ գյուղի տեղափոխության առիթով գյուղացիները քանդում և փչացնում են բացված ավազաններն ու դամբարանները ... Այժմ կուլտուրական բրիգադայի ղեկավարի հետազոտությունից պարզվում է, որ այդ ավերումները ոչ միայն չեն դադարեցվել, այլև շարունակվում է քանդվել Բերդի պատն ու հին եկեղեցին: Հիշեցնում ենք, որ նման անփույթ երևույթը խախտումն է Ժողկոմխորհի դեկրետի և համապատասխան շրջաբերականի: Խնդրում ենք անմիջապես միջոցներ ձեռք առնել այդ բացառիկ կարևոր նշանակություն ունեցող հուշարձանը պահպանելու և հանցավորներին պատասխանատվության ենթարկել և հետևանքների մասին մեզ տեղեկացնել ... որպեսզի Կոմիտեն համապատասխան զեկույց անի վերադաս մարմիններին և ձեռք առնի արտակարգ միջոցներ, ապահովելու հնագիտական արժեքները կորստից»[15]:

---

[13] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 89, թ. 130 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

[14] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 52, թ. 41: Բնագիր: Ձեռագիր:

[15] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, թ. 37 և շրջ: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

Ստորև բերվող վավերագիրը ևս ուշագրավ է. գաղափարական նոր մշակույթը գալիս էր քանդելու հին մշակութային արժեքը. «Կոմիտեի գրասենյակը Փաշաքենդի գյուղխորհրդի նախագահին: 20 մարտի 1931 թ.: Հնությունների պահպանության կոմիտեին հայտնի է, որ Դուք Փաշաքենդի հուշարձանի վրա ռադիոյի սյուն եք դրել, որի պատճառով և մեկ քառակուսի խորաչափ նրա պատի քարերը թափվել են: Այժմ գրում եք, որ հուշարձանը խախտվում է և պահանջում եք 500 ռ. նորոգության համար: Կոմիտեն գտնում է, որ ինչպես պատի քարերի թափվելը, այնպես և հուշարձանի խախտվելը հետևանք է կորի վրա սյուն տնկելուն, որ կատարել եք առանց Կոմիտեի գիտության և թույլտվության, որով Դուք անտես առնելով բարձրագույն օրգանների որոշումները, խախտել եք Ժողկոմխորհի դեկրետը և կենտգործկոմի հատուկ շրջաբերականը (2 հունվարի 1931 թ., № 5396): Ի. Տ. նախագահի՝ Աչխ. Քալանթարը»[16]*:*

Վերլուծելով Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի ու նրա գիտնական քարտուղար Աչխ. Քալանթարի 1930-ական թվականներին ծավալած գործունեությունը՝ հատակ կարելի է ընդգծել, որ իրավիճակից դուրս գալու կոմիտեի որդեգրած քաղաքականությունը և Աչխ. Քալանթարի ձեռնարկած քայլերն այդ ուղղությամբ լիովին արդարացված ու հիմնավորված էին: Արվել է այն հնարավորը, ինչը թույլ էր տալիս տեղավորվել ժամանակի «գաղափարական հրամայականների» տրամաբանության շրջանակում: Սկզբում՝ Զվարթնոցի, հետո՝ սբ. Հռիփսիմեի, սբ. Գայանեի, Տաթևի վանքերին սպառնացող վտանգի չեզոքացման լավագույն տարբերակն այդ կառույցները Հնությունների պահպանության կոմիտեի անմիջական տնօրինության տակ ներառելն էր: Ուստի անգնահատելի ծառայություն մատուցեցին կոմիտեի աշխատակիցները և նրանց թվում՝ Աչխ. Քալանթարը, ովքեր կարողացան ներքաղաքական այդ մթնոլորտում համոզել հանրապետության բարձրագույն ղեկավարությանը՝ արձագանքել իրենց խնդրանքներին: Ներկայացվող վավերագիրը վերաբերում է Հաղպատ–Սանահին վանական համալիրին. «Քաղվածք ՀՍԽՀ Ժողկոմխորհի և Տնտխորհի նիստի արձանագրությունից՝ Հաղպատում և Սանահինում գտնվող եկեղեցիները Հնությունների պահպանության կոմիտեին հանձնելու մասին: 12 դեկտեմբերի 1931 թ.: Լսեցին. Հաղպատում և Սանահինում գտնվող եկեղեցիները, որպես պատմական հիշատակարաններ, Հնությունների պահպանության կոմիտեին հանձնելու մասին: Զեկուցող՝ Դ. Տեր-Սիմոնյան: Որոշեցին. … Առաջարկել Ալավերդու շրջգործկոմին 10 օրվա ընթացքում Հաղպատի և Սանահինի գյուղերում գտնվող և պատմական նշանակություն ունեցող եկեղեցիները հանձնել Հնությունների պահպանության կոմիտեին: Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝ Ա. Երզնկյան, քարտուղար՝ Լ. Ստեփանյան»[17]*:*

Իսկ թե ինչպիսի դժվարություններ է հաղթահարել կոմիտեն այդ ընթացքում, տեղեկանում ենք ՀՍԽՀ լուսժողկոմատին 1931 թ. դեկտեմբերի 19-ին

---

[16] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, թ. 40 և շրջ: Վավերացված պատճեն: Ձեռագիր:*

[17] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 104, գ. 19, թ. 31: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*

ներկայացված հաշվետու զեկուցագրից: «Հայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից մինչև 1922 թվի վերջը գործել է Հնությունների պետական պահպանության կոմիտեն, պահպանության օրգանի մի տարվա (1923 թ.) չգոյությունը պատճառ է դարձել մի շարք առաջնակարգ արժեքների ոչնչացման, որի հետևանքով, ԺԿԽ-ի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով կյանքի է կոչվել ներկա կոմիտեի վարչական և նրա հետ սերտորեն կապված, գիտական ֆունկցիաներով ու լիազորություններով իբրև հանրապետական օրգան, – գրված է զեկուցագրում: – Հնությունների պահպանության կոմիտեն իր 7–8 տարվա (1924 թ. ապրիլից) գործունեության ընթացքում ունեցել է և հաջողություններ, և բացեր... Հիշենք միայն, որ հատկապես պահպանության-վերահսկողության ասպարեզում կոմիտեն չունենալով իր տրամադրության տակ նյութական միջոցներ և չտատային աշխատակիցներ, տվել է գործին հասարակական բնույթ, աշխատակցության հրավիրելով բազմաթիվ գործիչներ շրջաններում (վարչական օրգանների աշխատակիցներ և սոսկ գյուղացիներ) և ստեղծելով տեղական ներկայացուցիչների ամբողջ ցանց, որը միաժամանակ կապ է հաստատել թե՛ կենտրոնի, և թե՛ տեղական օրգանների միջև, նրանց թիվը ներկայումս 106 հոգի է»[18]*: Կազմակերպական բազում հնարքների կիրառման շնորհիվ կոմիտեին հաջողվեց իրականացնել հնավայրերի պահպանության այդ մեծ ծրագիրը. «Իր գիտատեխնիկական և գիտահետազոտական աշխատանքների բնագավառում կոմիտեն, կարելի է ասել, որ արել է ամեն ինչ, որ հնարավոր է եղել չնչին նյութական միջոցներով կամ նույնիսկ առանց դրան: Էքսպեդիցիաների միջոցով և անընդհատ շրջագայություններով հաշվառման-ռեգիստրացիայի և մանրամասն հնագիտական նկարագրության է ենթարկել ամբողջական շրջաններ, հավաքել վիմագիր արձանագրություններ և այլն: Տեխնիկական վերստուգման է ենթարկել ճարտարապետական կառուցվածքները՝ պարզելով նրանց դիմացկունությունը և անհրաժեշտ տեխնիկական օգնության տեսակն ու չափը: Կատարել է պեղումներ գոնե ճշգրիտ ֆիկսացիայի ենթարկելու և փրկելու համար գիտական փաստերը այն բոլոր հուշարձանների, որոնք պատահաբար բացվել են շինարարական աշխատանքների միջոցին և ենթակա են եղել ոչնչացման»*[19]*, – ասվում էր 1931 թ. զեկուցագրում: Ավելին, կոմիտեի կողմից կազմակերպված տարատեսակ արշավախմբերի գործունեության արդյունքում հայտնաբերվել է մեծաքանակ հնագիտական նյութ, «պեղումների ժամանակ բացվել են բազում հուշարձաններ, ձեռք են բերվել հարուստ իրական տվյալներ: Սրանք բոլորն էլ խոշորագույն գիտական արժեք են ներկայացնում իրենց նորույթյամբ, բավական է ասել, որ Կոմիտեն արդեն հանձնել է թանգարաններին (Երևանում և Էջմիածնում) 35. 556 առանձին էքսպոնատ»,*[20] *– նշվում էր զեկուցագրում:*

Անշուշտ, այն, ինչ ներկայացված է զեկուցագրում, խոսում է Հնությունների պահպանության կոմիտեի, ի մասնավորի՝ նրա գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի կատարած ծանրակշիռ աշխատանքի մասին: Փրկել և

[18] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 1–2: Վավերացված պատճեն: Մեքենագիր:*
[19] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 2 :*
[20] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 2:*

գալիք սերնդին ի պահ տալ 35 հազարից ավելի գիտական արժեք ներկայացնող ցուցանմուշ. փաստն ինքնին խոսուն է և մեկնաբանության կարիք չունի: Եվ դա այն դեպքում, երբ ինչպես նշվում է նույն զեկուցագրում՝ «... հուշարձանների տեխնիկական պահպանության խնդրում, որ ամենահիմնական անելիքն է, կանխելու համար իրական տվյալները քայքայումից, կոմիտեն իր տրամադրության տակ չի ունեցել համապատասխան հնարավորություններ... Այնուամենայնիվ, նրան հաջողել է կազմակերպել և իրականացնել երկու կարևոր հուշարձանի նորոգումը (Սանահինի կամուրջը և Երերույքի բազիլիկան): Կոմիտեն զրկված է եղել հնարավորությունից կատարելու իր հավաքած նյութերի մշակումը, ուսումնասիրությունը և մասսայականացումը»[21]:

Այս զեկուցագրում ներկայացվածը Հնությունների պահպանության կոմիտեի աշխատանքային ճակատի միայն մի բնագավառն էր. դրան հետևել է ձեռքբերված գիտական տվյալների հրապարակումը. «Հրատարակության միջոցով կոմիտեին հաջողել է դեռևս շատ քիչ բան մասսայականացնել այն ահագին նյութերից, որոնք նոր և շատ կարևոր խոսք ունեն ասելու գիտությունը՝ քաղաքակրթության պատմությանը և որոնք ամենամոտ ապագայում չհրատարակելը կլիներ կորուստ գիտության համար»[22]:

Հաշվետու զեկուցագրում, ի դեպ, ուշագրավ մի ափսոսանք կա: «Չնայած կոմիտեի ձեռք առած բոլոր միջոցներին, կոմիտեն ստիպված է արձանագրել, որ իրենց չի հաջողվել բնակչության միջից լիովին արմատախիլ անել հուշարձանների հանդեպ ցուցաբերած անբարեխիղճ վերաբերմունքը. հուշարձանների քանդումի և փչացման դեպքեր տեղի ունեցել են անգիտակից վերաբերմունքի հետևանքով: Առաջին տարիներում նկատվող քանդումները, կոմիտեի տարած կամպանիաների միջոցով այլևս դադարել են տեղի ունենալուց, ասվում էր զեկուցագրում: Զարամտությունից առաջացած քանդումների հանդեպ կոմիտեն դիմել է օրենքի պաշտպանությանը, իսկ չինարարական աշխատանքների հետ առնչություն ունեցող քանդումների դեպքեր, որոնք ավելի շատ են նկատվում վերջերս, չնորհիվ այդ աշխատանքների, տեխնիկական ղեկավարներից ոմանց անթույլատրելի անփույթ վերաբերմունքի, կոմիտեի ձեռք առած միջոցներն այդպիսիների հանդեպ անցել են ապարդյուն, և քանդվել-ոչնչացվել են հուշարձաններ, որոնք ընդհանուր գիտության համար իրենց ունիկալ նշանակությամբ ամբողջ էպոխաներ բնորոշող միակ դոկումենտներն են հանդիսանում: Իրերի ներկա վիճակում, երբ խոշոր և կարևորագույն հուշարձանների ամբողջական քանդման սանկցիա է արվում պետական օրգանների կողմից, Հնությունների պահպանության գործը դրվում է նույնպես խոշոր դժվարությունների մեջ, նրա հաջողությունը կասկածի տակ: Գործը կանոնավորելու համար հանդես է գալիս հրամայական անհրաժեշտությունն՝ հետևողականորեն կիրառելու արտակարգ միջոցներ»[23]: Ի դեպ, Հնությունների պահպանության կոմիտեին հաջողվեց նաև Զվարթնոց

[21] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թթ. 3–4:*
[22] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 4:*
[23] *ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 110, թ. 4:*

հնավայրի նման, սբ. Հռիփսիմե վանքը կոմիտեի ենթակայությանը հանձնելու համար:

Եզրակացություն

Արձանագրենք. Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն, քայլ գիտակցելով, որ Խորհրդային Միությունում սկսված և նոր թափ առած սոցիալիստական շինարարությունը իր «փլատակների» տակ էր առնելու պատմահնագիտական նշանակության հուշարձանները՝ չխայելով անգամ Զվարթնոցի և նրա նման պատմահնագիտական կառույցները, կոմիտեի գիտնական քարտուղար Աշխ. Քալանթարի ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ոչնչացումից փրկել ճարտարապետական մեծարժեք հնավայրերը: «Աշխարհբեկ Քալանթարը որպես Հնությունների պահպանության կոմիտեի գիտնական քարտուղար, երկար տարիների ընթացքում, փաստորեն գլխավորում էր հանրապետությունում ողջ հնագիտական գործունեությունը: Դառնում է հայագիտության գլխավոր ճյուղերից մեկը հանդիսացող գիտական հաստատության, մերօրյա անվանումով՝ Հնագիտության ինստիտուտի առաջին փառաչուք տնօրենը, մշտապես համագործակցելով հայ մշակույթի պառնասի տիրակալներ Ալեքսանդր Թամանյանի և Մարտիրոս Սարյանի հետ»[24],– նշվում էր Աշխ. Քալանթարի գործունեությանը նվիրված հրատարակություններից մեկում:

1930-ական թվականներին Աշխ. Քալանթարի ծավալած գործունեությունը, անշուշտ, արժանի է գնահատանքի:

Կարեն Բայրամյան – ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության տարածքային գործունեության համակարգման բաժնի պետ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանը XIX–XX դդ., Հայաստանի առաջին Հանրապետությունում և Խորհրդային Հայաստանում պատմահնագիտական հուշարձանների պահպանության պատմության հիմնահարցեր: Հեղինակ է 6 և համահեղինակ 1 հոդվածի:
bayramyan_karen@yahoo.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բայրամյան Կ. 2022, Աշխարհիբեկ Քալանթար. Մի դիմակայության պատմություն. –«Էջմիածին», Ա, էջ 118–137:

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 243, ֆ. 1063, ց. 1, գ. 19, 52, 88, 89, 93, 104, 110:

Վրույր Ա. 1979, Անիում, Երևան, «Սովետական գրող» հրատ, 45 էջ:

Քալանթար Աշխ. 2007, Երկերի ժողովածու, Երևան, ԳԱԱ գիտություն հրատ, 408 էջ:

Гарибджанян Ст. 2021, Биография ученых в документах. Ашхарбек Калантар. – «Вестник общественных наук» НАН РА, № 3, с. 280–286.

[24] *Քալանթար. 2007, 21:*

ДЕЯТЕЛЬНОСТЬ АШХАРБЕКА КАЛАНТАРА ПО СОХРАНЕНИЮ ПАМЯТНИКОВ (1930-е годы)

КАРЕН БАЙРАМЯН

Р е з ю м е

Ключевые слова: Ашхарбек Калантар, Советская Армения, социалистическое строительство, Комитет по сохранению древностей, охрана памятников, противостояние, исследование, освещение.

1930-е годы с политической, экономической и культурной точки зрения были переломными в истории Советской Армении: социалистическое строительство ознаменовал небывалый подъем, что вызвало новые проблемы в сохранении памятников старины и архитектурных сооружений, представляющих культурную ценность. Подчеркнутую нетерпимость советская власть в первую очередь проявляла к духовным институтам; многие церкви, представляющие культурную ценность, были снесены или превращены в колхозные склады, стоговища и т.д.

1930-е годы были самым тяжелым периодом также для деятельности Комитета по охране древностей Армении и его многолетнего ученого секретаря Ашхарбека Калантара. Комитет древностей в эти трудные годы, в рамках логики «идейных императивов» того времени, пытался сделать все возможное для сохранения древних памятников, представляющих историческую и археологическую ценность на территории Армении.

По личной инициативе Калантара были организованы экспедиции, в результате раскопок было найдено большое количество памятников и археологические материалы, получены представляющие научную ценность новые факты и сведения.

Благодаря повседневной работе и последовательности Калантара удалось спасти от разрушения ценные архитектурные памятники. С этой точки зрения проделанная Ашхарбеком Калантаром в 1930-е гг. работа, безусловно, заслуживает высокой оценки и признательности.

Карен Байрамян – начальник отдела координации региональной деятельности Управления охраны памятников истории и культуры МОНКС РА, соискатель отдела эпиграфики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: Армения в XIX–XX вв., вопросы истории сохранения историко-археологических памятников в годы Первой Республики Армения, в Советской Армении. Автор 6 и соавтор 1 статьи.
bayramyan_karen@yahoo.com

ASHKHARBEK KALANTAR'S ACTIVITIES FOR PRESERVATION OF MONUMENTS (1930s)

KAREN BAYRAMYAN

Summary

Keywords: Ashkharbek Kalantar, Soviet Armenia, socialist construction, committee for preservation of antiquities, protection of monuments, research, confrontation, coverage.

From a political, economic and cultural point of view, the 1930s were a turning point in the history of the Soviet Armenia: socialist construction marked an unprecedented rise, which caused new problems in the preservation of ancient monuments and architectural constructions of cultural value. The soviet authorities showed emphasized intolerance, first, to the spiritual institutions; many churches of cultural value were demolished or turned into collective farm warehouses, hayfields, etc.

The 1930s were also the most difficult period for the activities of the Committee for Protection of Antiquities of Armenia and its long-term scientific secretary Ashkharbek Kalantar. During these difficult years, the Committee of Antiquities, within the logic of the "ideological imperatives" of that time, tried to do everything possible to preserve the ancient monuments of historical and archaeological value on the territory of Armenia.

There were organized expeditions on the personal initiative of Ashkharbek Kalantar; as a result of excavations a lot of monuments and archaeological materials were found, new facts and information of scientific value were obtained.

Thanks to the daily work and consistency of Kalantar, valuable architectural monuments were saved from destruction. From this point of view, the work done by Ashkharbek Kalantar in the 1930s, certainly, deserves high praise and appreciation.

Karen Bayramyan – Head of the Division for Coordination of Regional Activities of the Department for Protection of Historical and Cultural Monuments of the MESCS of RA, Applicant at the Department of Epigraphy of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests:history of preservation of historical and archaeological monuments of Armenia in the XIX-XX centuries, the years of the first Republic of Armenia, cultural construction during the period of the Soviet Power in Armenia. Author of 6 articles and co-author of 1 article. bayramyan_karen@yahoo.com

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ՀՏԴ : 929:050/070(479.25) Դադյանց

Doi:10.54503/0135-0536-2023.1-196

ИНИЦИАТИВА В. ДАДЯНЦА ПО ИЗДАНИЮ ЖУРНАЛА ПОД НАЗВАНИЕМ «АРЦАХ» (1887–1888 гг.)*

Общеизвестно, что с незапамятных времен армянский народ в Арцахе создавал свою уникальную национальную культуру. Город Шуши был одним из крупных армянских общественно-политических и духовно-культурных центров. Еще с XIX века там действовали монастыри, церкви, театр, больница, епархиальная семинария, школы; печатались книги и журналы на армянском языке. Примечательно, что открытая в 1827 г. в г. Шуши типография была одной из первых в Закавказье[1]. В 1828–1920 гг., кроме армянских, других типографий в Шуши не было, а уже в 1875 г. здесь вышло первое периодическое издание – журнал «Айкакан ашхар» («Армянский мир»)[2].

О периодической печати г. Шуши XIX–XX вв. разными исследователями написан ряд трудов[3]. Они, в основном, сосредоточивались на событиях, предшествовавших и последовавших за началом периодических изданий в г. Шуши, и их содержательной направленности. Между тем, чтобы составить целостное представление о периодической печати в г. Шуши, нужно обобщить обстоятельства пресечения со стороны российских властей подобных попыток в 1880-х годах.

В годы правления императора Александра III (1881–1894) в Российской империи был осуществлен ряд ужесточений с целью ограничения реформ 1860–1870-х годов. Один из первых ударов был нанесен прессе. Контроль над ней был сконцентрирован в канцелярии Главного управления по делам печати Министерства внутренних дел. В 1882 г. были изданы временные правила о печати, которые установили строжайший контроль над газетами и журналами. В связи с этим стало

* Представлена 20. II. 2023 г., принята к печати 23. III. 2023 г.

[1] Подробно см.: *Ս. Պետոյան. Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.). – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2021, № 1, էջ 45–66:*

[2] Подробно см.: *Մ. Մխիթարյան. Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը, Երևան, 2002, էջ 114:*

[3] *Ս. Ավագյան. Ղարաբաղի մամուլի պատմություն (1828–1920), Երևան, 1989, Մ. Հարությունյան. Արցախի պարբերական մամուլի պատմությունից. Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874–2009 թթ.) (պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով), Ստեփանակերտ, 2010* и др.

довольно затруднительным получение разрешения на издание новой периодики. Канцелярия Главного управления по делам печати стала уделять пристальное внимание политической благонадежности издателей[4].

…1880-е годы были самыми процветающими в просветительской и культурной жизни Шуши, и неслучайно, что в этом и последующем десятилетии здесь развернулась активная книгоиздательская деятельность[5]. Однако в тот же период времени в деле издания периодической печати Шуши отставал от крупных городов Закавказья[6], что было обусловлено невыдачей властями права на печать периодических изданий. Вместе с тем для их выхода в свет было приложено много усилий, из которых нам известны лишь несколько случаев, предпринятых в 80-х годах XIX века.

В данной публикации представлены документы, которые, дополняя друг друга, передают сведения об инициативе известного своей просветительской и издательской деятельностью В. Дадянца (1863–1936)[7] по изданию в 1887–1888 годах журнала под названием «Арцах».

Документы хранятся в Национальном архиве Армении (Ереван), фонд «Архимандрита Хачика Дадианца» (НАА, ф. 319), Национальном архиве Грузии (Тбилиси), фонд «Управление Кавказского цензурного комитета» (НАГ, ф. 480), в Российском государственном историческом архиве (Санкт-Петербург), фонд «Канцелярия Главного управления по делам печати Министерства внутренних дел» (РГИА, ф. 776).

[4] Г. Ж и р к о в. История цензуры в России XIX–XX вв. Учебное пособие. М., 2001, http://evartist.narod.ru/text9/37.htm#%D0%B7_11 (02. 02. 2023).

[5] Подробно см.: *Ս. Պ ե տ ո ս յ ա ն. Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը (1877–1905 թթ.). – «Բանբեր հայագիտության» (Երևան), 2021, № 2, էջ 107–129:*

[6] Нам не известны какие-либо периодические издания, издававшиеся в городе Шуши в 1880-х годах. Хотя есть мнение, что издаваемый под редакцией писателя, публициста, переводчика Симеона Ахумянца (1859–1905) в 1882–1884 гг. журнал «Горц» (Труд) печатался в Шуши, между тем там находилась редакция журнала, а издание осуществлялось в Тифлисской типографии «П. Варданьянца и К°» (см.: *Ս. Ա վ ա գ յ ա ն.* указ. раб., с. 278; *Մ. Հ ա յ ր ու թ ու ն յ ա ն.* указ. раб., с. 44 и др).

[7] В конце 1880-х годов В. Дадянцу и его брату Смбату удалось арендовать типографию Карабахского епархиального духовного училища, открыть в Шуши переплетную, книжную лавку и библиотеку-читальню. В конце XIX и начале XX века В. Дадянц отличался как собиратель драгоценных рукописей и редких предметов, ученый-исследователь и национальный деятель, впоследствии был известен под церковным именем как архимандрит Хачик Дадянц [подробно см: *Ս. Պ ե տ ո ս յ ա ն. Վահան և Սմբատ Դադյանցների գրահրատարակչական գործունեությունը Շուշիում 1880-ական թթ.– «Բանբեր Մատենադարանի» (Երևան), 2022, № 33, էջ 33–54].*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Представленные документы приведены в соответствие с современной орфографией русского языка, а также восстановлены встречающиеся в них сокращения. При необходимости сделаны комментарии[8].

СТЕПА ПЕТОЯН

– № 1 –

ПРОШЕНИЕ УПРАВЛЯЮЩЕГО ТИПОГРАФИЕЮ ШУШИНСКОГО АРМЯНСКОГО ДУХОВНОГО ВЕДОМСТВА, ПОТОМСТВЕННОГО ПОЧЕТНОГО ГРАЖДАНИНА ВАГАНА ДАДИАНЦА ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕМУ ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ ОБ ИЗДАНИИ ПОДЦЕНЗУРНОГО ЖУРНАЛА ЛИТЕРАТУРЫ И ПОЛИТИКИ «АРЦАХ»

Его Сиятельству
Господину Главноначальствующему Гражданскою частью на Кавказе

[до 27 ноября 1887 г.]*

Прошение

Желая издавать в г. Шуше на армянском языке подцензурный журнал литературы и политики под названием «Арцах» «Արցախ» по программе, при сем приложенной, покорнейше прошу разрешить мне приступить к изданию оного журнала с 1-го января 1888 года. Обязанности ответственного редактора и издателя беру лично на себя; при сем прилагается программа[9] предложенного журнала и мои документы: диплом об окончании курса, метрическое свидетельство, свидетельство о происхождении и свидетельство о нравственной благонадежности.

Журнал «Арцах» будет выходить в начале каждого месяца в количестве 5–6-ти печатных листов и более, в формате армянского журнала «Пордз» (Опыт)[10].

Годовая цена издания пять рублей, за ½ года три рубля.

[8] Для уточнения и аннотации имен, подписей и званий различных должностных лиц была использована официальная информация Кавказского календаря на 1887 г. (Тифлис, 1886 г.) и на 1888 г. (Тифлис, 1887 г.) а также: Цензоры Российской империи, конец XVIII – начало XX века. Библиографический справочник. СПб., 2013 и интернет-ресурсы.

* Датируется по содержанию письма.

[9] Текст программы см. также: РГИА, ф. 776, оп. 12 (1888), д. 12, л. 3.

[10] Армянская газета, издаваемая в Тифлисе в 1876–1881 гг.

Журнал «Арцах» будет печататься в типографии Шушинского Духовного Ведомства (Управляющий В. Дадианц).

ПРОГРАММА

1) Повести, рассказы, романы – оригинальные и переводные.
2) Критические статьи об армянской и русской литературе.
3) Статьи, касающиеся исключительно быта Карабаха. Местное обозрение.
4) Политическое обозрение (извлечение из русских журналов и газет).
5) Кавказское обозрение (обзор Кавказской печати).
6) Научный отдел** о новых научных открытиях и популяризация полезных научных сведений.
7) Поэзия, стихотворения – оригинальные и переводные.
8) Объявления.

Ответственный редактор-издатель.

НАА, ф. 319, оп. 1, д. 273, л. 1 и об. Отпуск. Рукопись.

– № 2 –

ОТНОШЕНИЕ ЗА ВИЦЕ-ДИРЕКТОРА М. АМБАРДАНОВА КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ ПРЕДСЕДАТЕЛЮ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА

№ 732 27 ноября 1887 г.
Тифлис

конфиденциально

Препровождая при сем прошение потомственного почетного гражданина Вагана Дадянца с 4-мя приложениями, о разрешении ему, под его редакторством, издавать в гор. Шуше, по представленной им программе, ежемесячный литературно-политический журнал на армянском языке, под названием «Арцах» (Карабаг), Канцелярия, по поручению Главноначальствующего, имеет честь покорнейше просить Ваше Превосходительство не оставить сообщить, с возвращением приложений, надлежащие по содержанию оных сведения, с заключением о степени уважительности настоящего ходатайства Дадянца.

Приписано карандашом:

Доложить.

Комиссия полагает отклонить ходатайство

** В оригинале – «ответ».

За вице-директора М. Амбарданов[11]
За делопроизводителя А. Самойленко[12]

НАГ, ф. 480, оп. 1, д. 818, л. 1. Подлинник. Рукопись.

– № 3 –

ОТНОШЕНИЕ КАВКАЗСКОГО ЦЕНЗУРНОГО КОМИТЕТА В КАНЦЕЛЯРИЮ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ

№ 26085 декабря 1887 г.
Тифлис

конфиденциально

Вследствие отзыва от 27-го минувшего ноября за № 732, имею честь уведомить Канцелярию, что ходатайство потомственного почетного гражданина Вагана Дадянца о разрешении ему издавать в г. Шуше ежемесячный литературно-политический журнал, на армянском языке, под названием «Арцах» (Карабаг), я полагал бы – отклонить. Так как в Тифлисе периодические издания не находят достаточного для существования, числа подписчиков, тем труднее ожидать этого в уездном городе, и кроме того, г. Дадянц совершенно неизвестен Цензурному Комитету, как лицо подготовленное к ведению такого дела, как издание периодического журнала.

Прошение Дадянца с 5-ю к оному приложениями при сем возвращаются.

Секретарь Н. Мелик-Нубаров[13].

НАГ, ф. 480, оп. 1, д. 818, л. 2. Подлинник. Рукопись.

[11] Амбарданов Михаил Григорьевич (?–1907) – потомственный дворянин, действительный статский советник (1883 г.). В 1863–1901 годах– бухгалтер Финансового департамента, регистратор Канцелярии Главного управления, чиновник для особых поручений при начальнике Главного управления Кавказского наместничества, делопроизводитель канцелярии Главноначальствующего на Кавказе.

[12] Самойленко Авксентий Федорович – надворный советник, младший делопроизводитель канцелярии Главноначальствующего.

[13] Мелик-Нубаров Николай Григорьевич ([1851]–?) – из дворян, армяно-григорианского вероисповедания. В 1871–1872 гг. канцелярский чиновник в Тифлисской судебной палате, затем, с 1874 г.– в канцелярии начальника Главного управления Наместника Кавказского. С 1884–1906 гг. секретарь Кавказского цензурного комитета.

– № 4 –

ОТНОШЕНИЕ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ НАЧАЛЬНИКУ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ ОБ ОТКЛОНЕНИИ ХОДАТАЙСТВА ПО ИЗДАНИЮ В. ДАДИАНЦЕМ В Г. ШУШИ ЖУРНАЛА «АРЦАХ»

№ 1226

4 февраля 1888 г.
Тифлис

Проживающий в г. Шуше Елисаветпольской губернии, потомственный почетный гражданин Ваган Дадянц обратился с прошением о разрешении ему, под его редакторством, издавать в г. Шуше литературно-политический журнал на армянском языке под названием «Арцах» (Карабаг), по прилагаемой при сем программе.

Сообщая об этом Вашему Превосходительству, с приложением представленных просителем документов его, а именно диплома о науках за № 178 и свидетельств за № 843, 1074 и 12582, имею честь присовокупить, что хотя о личности Дадянца и получены благоприятные сведения, но он, по заявлению Председателя Кавказского Цензурного Комитета, совершенно не известен как лицо, подготовленное к ведению такого дела, как издание периодического журнала и наконец, что периодические издания в Тифлисе не находят достаточного для их существования числа подписчиков, и что поэтому трудно ожидать, чтобы в таком уездном городе как Шуша, в котором предполагает проситель издавать ежемесячный литературно-политический журнал под названием «Арцах», нашлись подписчики на этот журнал, могущие обеспечить существование его. Ввиду этого, я полагал бы настоящее ходатайство Дадянца отклонить.

За отсутствием Главноначальствующего,
Помощник его, Генерал-Адъютант Шереметьев[14]
Исправляющий должность
Директора Канцелярии, Вице директор Рогге[15]

[14] Шереметьев Сергей Алексеевич (1836–1896) – в 1884 г. назначен помощником Главноначальствующего гражданской частью на Кавказе и командующего войсками Кавказского военного округа, в 1890 г. – Главноначальствующим гражданской частью на Кавказе и командующим войсками Кавказского военного округа.

[15] Рогге Владимир Петрович (1843–1906/1907) – русский государственный деятель, тайный советник. В 1882 г. откомандирован в распоряжение Главноначальствующего гражданской частью на Кавказе. Затем он был назначен вице-губернатором Ставропольской губернии, а в 1883 г. – вице-директором

Արվեստագիտական • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ПРОГРАММА

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОГО ЖУРНАЛА «АРЦАХ»

1. Повести, рассказы, романы – оригинальные и переводные.
2. Критические статьи об армянской и русской литературе.
3. Местное обозрение, статьи (касающиеся исключительно быта Карабага).
4. Политическое обозрение (извлечение из русских журналов и газет).
5. Кавказское обозрение (обзор Кавказской печати)
6. Научный отдел – о новых научных открытиях и популяризация полезных научных сведений.
7. Поэзия, стихотворения – оригинальные и переводные.
8. Объявления

Ответственный редактор-издатель В. Дадианц

РГИА, ф. 776, оп. 12 (1888), д. 12, лл. 1–3. Подлинник. Рукопись.

– № 5 –

ЗАЯВЛЕНИЕ ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ МИНИСТЕРСТВА ВНУТРЕННИХ ДЕЛ

№ 951 19 февраля 1888 г.
[Санкт-Петербург]

Об отказе Вагану Дадянцу издавать в г. Шуша на армянском языке журнал, под названием «Арцах» (Карабаг).

Помощник Главноначальствующего Гражданскою частью на Кавказе, за отсутствием Главноначальствующего, представил Главному Управлению по делам печати ходатайство Потомственного почетного гражданина Вагана Дадянца, о разрешении ему издавать в г. Шуше, с дозволения предварительной цензуры, под его редакторством на армянском языке, ежемесячный литературно-политический журнал, под названием «Арцах» (Карабаг). При этом генерал-адъютант Шереметьев сообщает, что Дадянц по заявлению Председателя Кавказского Цензурного Комитета, совершенно не подготовлен

канцелярии Главноначальствующего. В том же году назначен членом от Министерства внутренних дел в комиссию, учрежденную для ближайшего и всестороннего рассмотрения вопроса по преобразованию управления кавказскими казачьими войсками.

к изданию журнала; кроме того, периодические издания в Тифлисе не находят достаточного для их существования числа подписчиков, и поэтому трудно ожидать, чтобы в таком уездном городе, как Шуша, были бы подписчики на проектированный журнал, могущие обеспечить существование его. В виду этого, генерал-адъютант Шереметьев полагал бы настоящее ходатайство Дадянца отклонить.

В виду изложенного Главное Управление по делам печати и со своей стороны признает ходатайство г. Дадянца не подлежащим удовлетворению, о чем имею честь представить на усмотрение Вашего Превосходительства.

Начальник Главного
Управления по делам печати Е. Феоксистов[16]
Резолюция: 21/II -1888 г.

Согласен Плеве[17]

РГИА, ф. 776, оп. 12 (1888), д. 12, лл. 4–5. Подлинник. Рукопись.

– № 6 –

ОТНОШЕНИЕ НАЧАЛЬНИКА ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ ПО ДЕЛАМ ПЕЧАТИ ПОМОЩНИКУ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ О НЕУДОВЛЕТВОРЕНИИ СЕНАТОРОМ В. К. ПЛЕВЕ ХОДАТАЙСТВА ВАГАНА ДАДЯНЦА ИЗДАВАТЬ В Г. ШУШИ ЖУРНАЛА «АРЦАХ»

№ 1001

26 февраля 1888 г.
[Санкт-Петербург]

Вследствие отношения от 4 сего февраля за № 1226, Главное управление по делам печати имеет честь уведомить Ваше Превосходительство, что, согласно заключению Вашему, за министра Внутренних дел, товарищ министра Сенатор Плеве не изъявил согласия на удовлетво-

[16] Феоксистов Евгений Михайлович (1828–1898) – писатель, журналист, сотрудник журналов «Современник», «Отечественные записки», редактор журналов «Русская речь» и «Журнала Министерства народного просвещения» (1871–1883), затем цензор, с 1883 г. – тайный советник и в 1883–1896 – начальник Главного управления по делам печати Министерства внутренних дел (главный цензор России).

[17] Плеве Вячеслав Константинович (1846–1904) – министр внутренних дел и шеф жандармов в России. С 1881 г. – директор департамента полиции, в 1884–1894 гг. – сенатор, с 1902 г. – министр внутренних дел.

Արվեստագիտական • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

рение ходатайства потомственного почетного гражданина Вагана Дадянца о разрешении ему издавать в г. Шуше, с дозволения предварительной цензуры, под его редакторством, на армянском языке, ежемесячный журнал, под названием «Арцах» (Карабаг).

При сем возвращаются документы г. Дадянца: диплом о науках за № 178 и три свидетельства № 943, 1074 и 12582.

Начальник Главного управления
по делам печати Е. Феоксистов
Заведующий делопроизводством
Член Совета Адикаевский[18]

РГИА, ф. 776, оп. 12 (1888), д. 12, л. 6 и об. Подлинник. Рукопись.

– № 7 –

ОТНОШЕНИЕ КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО ГРАЖДАНСКОЮ ЧАСТЬЮ НА КАВКАЗЕ ЕЛИСАВЕТПОЛЬСКОМУ ГУБЕРНАТОРУ О НЕУДОВЛЕТВОРЕНИИ ПРОШЕНИЯ ВАГАНА ДАДИАНЦА ОБ ИЗДАНИИ В Г. ШУШИ ЖУРНАЛА «АРЦАХ»

№ 2687

17 марта 1888 г.
Тифлис

Проживающий в г. Шуше потомственный почетный гражданин Ваган Дадианц обратился с прошением о разрешении ему под его редакторством, издавать в городе Шуше ежемесячный литературно-политический журнал, на армянском языке под названием «Арцах» (Карабаг).

---

[18] Василий Семенович Адикаевский (1835–1907) – тайный советник, цензор Главного управления по делам печати Министерства внутренних дел. Службу начал в 1855 г. в департаменте общих дел, а в 1865 г. перешел в канцелярию Главного управления по делам печати. В 1877 г. назначен исполняющим должность правителя дел Главного управления по делам печати. С 1881 г. член совета Главного управления по делам печати. С 1898 по 1906 гг. занимал должность исполняющего обязанности начальника Главного управления по делам печати.

По поводу сего сделано было сношение с Главным управлением по делам печати, которое ныне в отзыве на имя помощника Главноначальствующего от 26 минувшего февраля за № 1001, уведомляет, что за Министра Внутренних дел, товарищ Министра, Сенатор Плеве не изъявил согласие на удовлетворение помянутого ходатайства Дадианца.

Канцелярия Главноначальствующего имеет честь покорнейше просить Ваше Сиятельство объявить об этом просителю Дадианцу с выдачию прилагаемых при сем документов его, а именно диплома о науках за № 178 и свидетельств за № № 843, 1074 и 12.582.

Вице-директор Мицкевич[19]
За делопроизводителя

НАА, ф. 319, оп. 1, д. 273, л. 2 и об. Рукопись.

– № 8 –

ОТНОШЕНИЕ ЕЛИСАВЕТПОЛЬСКОГО ГУБЕРНСКОГО ПРАВЛЕНИЯ ШУШИНСКОМУ УЕЗДНОМУ НАЧАЛЬНИКУ ОБ ОБЬЯВЛЕНИИ ВАГАНУ ДАДИАНЦУ ОТЗЫВА КАНЦЕЛЯРИИ ГЛАВНОНАЧАЛЬСТВУЮЩЕГО НА КАВКАЗЕ

26 марта 1888 г.
Елисаветполь

Елисаветпольское Губернское Правление предлагает г. Шушинскому Уездному Начальнику содержание настоящего отзыва канцелярии Главноначальствующего за № 2687, объявить упомянутому здесь Вагану Дадианц, за подпискою с выдачею ему прилагаемых документов

[19] Иустин Васильевич Мицкевич (1841–1918) – государственный деятель Российской империи, помощник наместника на Кавказе по гражданской части, сенатор, действительный тайный советник. В 1878–1888 гг. занимал пост вице-губернатора Елизаветпольской губернии. В 1888 г. назначен вице-директором канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе и одновременно помощником начальника канцелярии Главноначальствующего по военно-народному управлению Кавказского края, в 1894 г. стал директором канцелярии Главноначальствующего гражданской частью и начальником канцелярии по военно-народному управлению Кавказским краем.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

его, а именно, диплома о науках за № 178 и свидетельств за № 843, 1074 и 12.582; об исполнении же сего донести подписью на сем же, с представлением подписки Дадианца.

Временно исполняющий должность

Вице-губернатора Кецинко[20]
Помощник делопроизводителя Тер-Мартиросов[21]

НАА, ф. 319, оп. 1, д. 273, л. 3. Рукопись.

[20] Кеценко (Кецинко) Виктор Антонович – правитель канцелярии Елисаветпольского губернатора.

[21] Тер-Мартиросов Мартирос Серопович – не имеющий чина, помощник делопроизводителя Елисаветпольского губернского правления.

ՀՏԴ : 929:947.929 Տեր-Դանիելյան (Դավիթ Անանուն)

Doi:10.54503/0135-0536-2023.1-207

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆ. ՆԱՄԱԿՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ*

*XX դ. առաջին երեսնամյակի հայ իրականության երևելի դեմքերի շարքում առանձնահատուկ տեղ ունի հայագետ, հասարակական-քաղաքական գործիչ Դավիթ Անանունը (Դավիթ Տեր-Դանիելյան, 1880–1943)**: Նրա գիտական, քաղաքական ու գրական ժառանգության մեջ և՛ իրենց քանակով, և՛ հասցեատերերի բազմազանությամբ ու, ամենակարևորը, արծարծված թեմաների և հարցերի առումով նշանակալի տեղ են գրավում գրած ու ստացած նամակներն անվանի գրողներից, գիտնականներից, հասարակական-քաղաքական և մշակութային գործիչներից, հասարակական-քաղաքական կազմակերպություններից: Դրանց բովանդակությունից բազմաթիվ հարցեր են պարզվում, որոնք առնչություն ունեն իր անձի, կյանքի, գործունեության, ժամանակաշրջանի, պետական ծառայության, շրջապատի, մտերիմ ընկերների հետ ունեցած հարաբերությունների, հասարակական-քաղաքական, գրական-մշակու-*

---

* *Ներկայացվել է 18. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

** *Դ. Անանունի մասին մանրամասն տե՛ս Դ. Ա ն ա ն ո ւ ն. Ղարաբաղ (հրապարակող՝ Ա. Ջաքարյան).– «Գրական թերթ» (Երևան), 22. XII. 1989, Ա. Վ ի ր ա բ յ ա ն. Կյանք և ողբերգություն.– «Հայաստան» (Երևան), 20. VI. 1991, Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Դավիթ Անանունի քաղաքական ճակատագիրը.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1998, № 1, էջ 19–30, Ն ո ւ յ ն ի՝ Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 198–213, Ա. Մ ա ն ո ւ կ յ ա ն. Գրականագետ Դավիթ Անանունը Դաշնակցության համախոհ (1927 թ.).– «Հայոց Աշխարհ» (Երևան), 09. IV. 1999, Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).– ՊՌՀ, 2010, № 1, էջ 245–252, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանուն. մարդը և գործը (ծննդյան 140-ամյակի առթիվ).– ՊՌՀ, 2020, № 1, էջ 90–127, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանունը Հովհաննես Թումանյանի մասին (Դ. Անանունի ծննդյան 140-ամյակի առթիվ). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 1, էջ 430–436, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանուն (ծննդյան 140-ամյակի առթիվ): Ղարաբաղ.– «Գիտություն» (Երևան), փետրվար, № 2, 2020, Ն ո ւ յ ն ի՝ Ազգային գործիչը. Լևոն Ալթաբեկյան (ծննդյան 145-ամյակի առթիվ). – ՊՌՀ, 2020, № 3, էջ 232–243 [այս էջերում տպագրվել է Դ. Անանունի՝ «Լևոն Ալթաբեկյան (կյանքը և հասարակական-գրական գործունեությունը)» ծավալուն հոդվածաշարից «Հառաջաբան» և «Կյանքի հանգամանքները» բաժինները], Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանուն. «Կարսի անկումը».– «Գիտություն», հունվար, № 1, 2021, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանունի «Կարսի անկումը» վերնագրով հոդվածը.– ՊՌՀ, 2021, № 1, էջ 219–222, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանունի «Հայերը Ռուսաստանում» վերնագրով հոդվածը. – ՊՌՀ, 2022, № 3, էջ 245–288, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանունի հուշերը Ստեփան Շահումյանի մասին.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Երևան), 2012, Գ, էջ 123–135, Հ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Ուրվագծեր Դավիթ Անանունի կյանքի և գործունեության.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, № 2, էջ 108–128, Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանուն, Երևան, 2020, Ն ո ւ յ ն ի՝ Դավիթ Անանունի նամակագրությունից.– «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 206–218 և այլն:*

թային բնույթի խնդիրների մասին: Արծարծված հարցերն ունեն պատմաճանաչողական կարևոր նշանակություն:

ՀՀ գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) պահվող Դ. Անանունի և այլ գործիչների, նաև Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) տարբեր ֆոնդերում ի թիվս այլ նյութերի կան Անանունի գրած ու ստացած բազմաթիվ նամակներ: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի ընտրանի: Ի դեպ, հրապարակվող նամակներից մի քանիսը նախկինում տպագրվել են բնագրային չեղումներով, տարընթերցումներով, բացթողումներով. այդ մասին տողատակերում տրվում են համապատասխան պարզաբանումներ:

Նամակները հրապարակում ենք արդի ուղղագրությամբ, սրբագրական և տեխնիկական մասնակի միջամտությամբ. ամիս-ամսաթվերի տեղադրումն ու ձևաչափը դարձրել ենք միօրինակ: Սուրանկյուն (< >) փակագծերի մեջ դրել ենք հեղինակի բաց թողած տառերը, հակիրճ գրված բառերի կրճատված մասերը: Նամակներում դրված բազմակետերը բնագրային են:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

– № 1 –

Բաքու
14 հոկտ<եմբերի> 1911 թ.

Սիրելի Կարեն![1]

Ստացա այսօր նամակդ և շտապում եմ պատասխանելու:

Հովհ. Թումանյանի մասին ես պատրաստել էի հոդված մեր ամսագրի[2] *համար, որ պիտի անպայման հրատարակենք նոյեմբերից, բայց ստանալով քո*

---

[1] *Պատմական Հայաստանի Գողթան գավառի Վերին Ագուլիսից սերված Կարեն (Գերասիմ) Միքայելյանը (1883–1941) XX դ. առաջին երեսնամյակի հայ իրականության ճանաչված դեմքերից էր՝ գրական-հասարակական և մշակութային գործիչ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, «Գարուն» գրական-քննադատական ալմանախի խմբագրակազմի անդամ (1910–1912 թթ.): Ոչ միայն ակտիվ մասնակցություն է ունեցել 1916 թ. Վ. Բրյուսովի խմբագրությամբ լույս տեսած «Հայաստանի պոեզիան» ժողովածուի թարգմանական աշխատանքներին, այլև ֆինանսական զգալի աջակցություն է ցուցաբերել ժողովածուն հրատարակության պատրաստելիս ու տպագրելիս, նաև մեծ աշխատանք է կատարել խորհրդային տարինեերին հայ պոեզիայի առաջին անթոլոգիայի հրատարակության պատրաստման գործում (լույս է տեսել Մոսկվայում 1940 թ.): 1925–1927 թթ. որպես Հայաստանի Կարմիր Խաչի և ՀՕԿ-ի պատվիրակության անդամ եղել է Եվրոպայում ու ԱՄՆ-ում: Անհատի պաշտամունքի զոհերից է: Այս տարի լրանում է նրա ծննդյան 140-ամյակը: Հրապարակվող բովանդակալից նամակները (այս և № 13-ն ու 15-ը) հարգանքի տուրք են նրա հիշատակին: Կ. Միքայելյանի մասին մանրամասն տե՛ս* Р. Багдасарян. Карен Микаэлян. Творчество и вклад в русско-армянские литературно-культурные взаимосвязи. Ереван, 2010.

[2] *Ամենայն հավանականությամբ, նկատի ունի «Նոր կյանք» (Բաքու, 1911–1912) գրական, հասարակական և քաղաքական երկշաբաթաթերթը, որի խմբագիր-հրատարակիչն էր՝ «Դավիթ Տեր-Դանիելյան» ստորագրությամբ:*

նամակը՝ ես հոդվածս[3] ուղարկում եմ քեզ: Ուղարկում եմ, որովհետև ինձ համար անախորժ է մեր թերթում մի քանի հոդվածներ զետեղել և մանավանդ որ դրական բովանդակությամբ կա մի այլ մեծ հոդված Ակ. Ռուբենիի[4], իսկ ես պատրաստել եմ № 1 համար մի հոդված բանվորների ապահովագրության մասին[5]: Առհասարակ ինձ վիճակվում է գրել բազմազան ուղղությամբ և բովանդակությամբ և դա այն պատճառով, որ մի պարբերական պահանջում է բովանդակության զանազանություն[6], իսկ դրա համար մեր բարեկամները մատ մատի չեն խփում և մի բան ուղարկելով հեռու են կենում և հանդիսատես դառնում: Կրկնում եմ, այդ հանգամանքը չափազանց անախորժ է ինձ համար:

Զգիտեմ «Գարունի» խմբագիրներին[7] որքան պիտի ախորժ թվա իմ գրելու և դատելու եղանակը: Մենք այնքան քիչ առիթ են<ք> ունենում տպելու մեր խոհերը, որ երբ առիթ է լինում արտահայտվելու, ապա չանում ենք շատ բան ասել նվազ էջերում: Դա հայ մարքսիստների թերությունն է ընդհանրապես և իմը մասնավորապես: Օրինակ, ներկա դեպքում իմ Հովհ. Թումանյանին նվիրած հոդվածում կա մի գլուխ «Գյուղի քարոզը», որը կարելի էր այլ կերպ խմբագրել, բայց, կրկնում եմ, նպատակահարմարությունը և արտահայտվելու տենչը ինձ դրդեցին գրել այնպես, ինչպես որ նա կա:

Այդ հոդվածը ես քեզ ուղարկում եմ որպես սևագրություն: Դրա սպիտակագրության օրինակը չունեմ: Իմ ձեռքը դյուրընթեռնելի է, և Դուք դժվարության չեք հանդիպիլ: Հոդվածս բաղկացած է 5 թերթից, ինչպես ցույց են

---

[3] *Խոսքն «Անցյալի մեծարանքը (Հովհաննես Թումանյանի քնարը)» վերնագրով հոդվածի մասին է:*

[4] *Ալեքսանդր Ռուբենի՝ Ալեքսանդր Միրզաջանի Ծատուրյան (1881–1920) – հասարակական-քաղաքական գործիչ, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՍԴԲՀԿ, ստեղծվել է 1903 թ. հոկտեմբերին Բաքվում) հիմնադիր-գաղափարախոսներից, հրապարակագիր: Խոսքը «Նոր կյանք» երկշաբաթաթերթի 1911 թ. դեկտեմբերի 11-ի համարում (№ 1–2, էջ 9–38) տպագրված նրա «Գրական նկատողություններ (մի քանի դիտողություններ գեղարվեստի վրա)» վերնագրով ծավալուն հոդվածի մասին է:*

[5] *Խոսքը «Բանվորների պետական ապահովագրումը հիվանդությունից» վերնագրով հոդվածի մասին է (տե՛ս «Նոր կյանք», 1911, դեկտեմբերի 11, № 1–2, էջ 40–53):*

[6] *Ըստ այդմ Դ. Անանունը «Նոր կյանք»-ի 1911 թ. դեկտեմբերի 11-ի համարում (№ 1–2, էջ 68–72) «Դ. Տեր-Դանիելյան» ստորագրությամբ զետեղել է «Նավթարդյունաբերական հայ բանվորի նկարագրից» վերնագրով հոդվածը: «Դ. Տեր-Դ.» ստորագրությամբ «Մատենախոսություն» խորագրի տակ էլ (էջ 78–81) ներկայացրել է «Արսեն Տերտերյան՝ «Միքայել Նալբանդյան– ազգության հրապարակախոսը», 1910 թ., էջ 193, գինը – 50 կ.» վերնագրով գիրքը և այլն: Հավելենք. «Նոր կյանք»-ի 1912 թ. փետրվարի 19-ի № 3–4-ում Դ. Անանունը տպագրել է 3 նյութ. «Հովհաննես Հովհաննիսյան (նրա երեսնամյա բանաստեղծական ստեղծագործության առիթով)» (էջ 113–121), «Բանվորական օրինագծերը Պետ. Դումայում» («Դ. Տեր-Դանիելյան» ստորագրությամբ, էջ 176–181) վերնագրերով հոդվածները և գրախոսել է «Վ. Փափազյան «Պատմություն Հայոց Գրականության», Թիֆլիս, 1910, էջ Թ. 817. XII. 160» գիրքը («Դ. Տեր-Դ.» ստորագրությամբ, էջ 184–186): Ի դեպ, խնդրո առարկա երկշաբաթաթերթի այս համարում (էջ 97–103) «Վերջին հոր-ձանքներ» վերնագրով պատմվածք ունի նաև Կարեն Միքայելյանը:*

[7] *«Գարուն» գրական-գեղարվեստական, ապա գրական-քննադատական ամսանախը 3 գրքով լույս է տեսել Մոսկվայում 1910–1912 թթ.: Մոսկվայի գրական խմբակի հրատարակություն, խմբագրակազմ՝ Վ. Տերյան, Ա. Ծատուրյան, Յ. Խանզադյան, Պ. Մակինցյան, Կ. Միքայելյան, Կ. Կոսիկյան, Ա. Մյասնիկյան և ուրիշներ: Ամսանախի տիտղոսաթերթը ձևավորել է Մ. Սարյանը:*

տալիս №: Եթե «Գարունը» չընդունի, խնդրում եմ անմիջապես հետ ուղարկել, որ նա հասնի մեր թերթին: Եթե կան ձեր ականջին անախորժ էպիտետներ, ապա խնդրում եմ այդ մասին խմբագրական նկատողություն անեք և ոչ թե ջնջեք:

Ստացա և Կարինյանին[8] ուղղած քո նամակը: Կարինյանը Բաքվում չէ: Զինվորագրության համար գնացել է Թիֆլիս, բայց ես նամակդ կհանձնեմ նրա ծնողներին, որ նրանք ուղարկեն ըստ պատկանելվույն:

Էլ ուրիշ բան չունեմ գրելու:

Նորից խնդրում եմ, որ ինձ չուտ պատասխանես հոդվածիս վիճակի մասին և եթե այն չի ընդունվի – հետ ուղարկես[9]:

Ջերմ բարևներով

Քո Դավիթ

ԳԱԹ, Կ. Միքայելյանի ֆ., թիվ 732, 2 թ.: Ինքնագիր:

– № 2 –

4 մայիսի 1912 թ.

Հարգելի պ. Տեր-Դանիելյան

Երեկ երեկոյան ինձ մոտ էին պ. պ. Վ. Տերյան և Ակ. Մյասնիկյան բարեկամներս, որոնք «Նոր կյանք» խմբագրության անունից առաջարկեցին, որ աշխատակցեմ Ձեր հանդեսին: Հաճությամբ ընդունելով այդ առաջարկը, ուղարկում եմ Ձեզ Հայնեի «Շլեզվիգի ծովահակներ» բանաստեղծությունը, որը խնդրում եմ գետեղեք «Նոր կյանքում» կամ այն ժողովածուի մեջ, որ մոտ ապագայում լույս պիտի տեսնի Ձեր խմբագրությամբ:

Հարգանքներով՝

Ակ. Ծատուրյան[1]

Հասցես՝

Москва, Тверская, д. Гришмана.

---

[8] *Նկատի ունի գրականագետ, հրապարակագիր, պատմաբան, հասարակական-քաղաքական, պետական գործիչ, հետագայում՝ ակադեմիկոս Արտաշես Կարինյանին (Գաբրիելյան, 1886–1982):*

[9] *Խնդրո առարկա հոդվածը տպագրվել է «Գարուն» ալմանախի 1912 թ. III գրքում (էջ 99–128):*

[1] *Բանաստեղծ, թարգմանիչ Ալեքսանդր Ծատուրյանի (1865–1917) այս և հաջորդ նամակը ժամանակին պահվել են ԽՄԿԿ Կենտկոմի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվում (ֆ. 44, ց. 1, գ. 1): Նամակներն առաջին անգամ հրատարակել է Վ. Վարդանյանը (տե՛ս «Ալեքսանդր Ծատուրյանի և եղիչե Զարենցի նամակները Դավիթ Անանունին».– «Գրական թերթ», 17. VIII. 1979): Նշված ֆոնդը հետագայում զարձել է ՀԱԱ-ի ֆ. 1455, ց. 1, գ. 100, որտեղ գտնվել են Դ. Անանունին 1912–1923 թթ.՝ Հովհ. Թումանյանի, Շիրվանզադեի, Ստ. Զորյանի, Ատրպետի (Ս. Մուբայաջյան), Լեոյի, Ե. Չարենցի գրած նամակները (59 թերթ), այդ թվում՝ Ակ. Ծատուրյանի վերը նշվածները: Այս ֆոնդում եղած բոլոր նամակները, սակայն, անբացատրելի ձևով «անհետացել» են:*

ՇԼԵԶՎԻԳԻ ՋՈՒԼՀԱԿՆԵՐ
(Հայնեից)

Դազգահների առաջ նստած՝ նրանք անքուն աշխատում,
Աշխատում են անդուլ, անլաց— ատամներ են կրճտում.
«Օհ հայրենիք, մենք պատանք ենք հյուսում նեխած քո կյանքին
Եվ երեք տակ անեծք խառնում ամեն հյուսքին ու ծալքին»:

Անեծք նրան, որին հավերժ հայրենիք կոչել ողորմած,
Որին հավերժ աղոթել ենք ճմեռ-ցրտին մերկ, քաղցած
Ջուր ենք վերաչ մենք հուսացել, զուր սպասել օր-արև.
Նա մեզ ծաղրել, ծանակել է, մեզ դարձրել է խենթ ու խև …
Մենք հյուսո՛ւմ ենք, մենք հյուսո՛ւմ:

Անեծք և այն հարուստների տեր ու պաշտպան արքային,
Որ միշտ խո՛ւլ է, միշտ անտարբեր մեր հառաչանքին, մեր ցավին …
Նա մեր վերջին ծուծն է քամում, նա մեզ ճաղկում ու փետում,
Վերջն էլ սրրի բերան քաշում ու չան-սատակ՝ դեն նետում:
Մենք հյուսում ենք, մենք հյուսում:

Անեծք և այն հայրենիքին՝ լրկտիացած, նենգավո՛ր,
Ուր արարն է կեղծիքի հետ ուժեղանում օրեցօր.
Ուր ծաղիկն է թոշնում կանուխ, ճըմլած անլոյս ու անկար.
Ուր ոճրածին ճիճուներն են խնդում անզո՛ւսպ, անպատկա՛ռ …
Մենք հյուսում ենք, մենք հյուսում:

Թուչկոտո՛ւմ են մաքոքները, դազգահներն են աղմկո՛ւմ:
Մենք գործում ենք օր ու գիշեր— անխոնջ ո՛յժ կա մեր բազկում,
Հին հայրենիք, քե՛զ համար ենք մահու պատանք մենք հյուսում,
Ու գայրույթի բյո՛ւր անեծքով քո օրհասին սպասում
Մենք հյուսո՛ւմ ենք ու հյուսո՛ւմ:

— № 3 —

Մոսկվա
27 մայիսի 1912 թ.

Հարգելի պ. Դավիթ Տեր-Դանիելյան

Ցավում եմ, որ Հայնեի «Շլեզվիգի ջուլհակներ» բանաստեղծությունը չպիտի լույս տեսնի Ձեր ժողովածուում: Բայց, հավատացեք, ինձ համար ավելի ևս ցավալի կլիներ, եթե թարգմանական այդ աշխատությանս պատճառով Ձեր ժողովածուն որևէ վտանգի ենթարկվեր[1]:

[1] *Ըստ էության, «Նոր կյանք»-ում բանաստեղծության թարգմանության տպագրությունը խմբագրությունը մերժել է՝ նկատի ունենալով գրաքննության պահանջները:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

Ձեմ զարմանում, որ միևնույն բանաստեղծության ռուսերեն թարգմանություններն անարգել լույս են տեսել երկու հրատարակությամբ: Ձեռքիս տակ ունեցել եմ երկու թարգմանությունն էլ, որոնք, իմ կարծիքով, միանգամայն հեռու են թե՛ բնագրի հարազատությունից, թե՛ Հայնեի ստեղծագործական ուժի ու թափի ազդու արտահայտությունից …

Թեպետ ես գերմաներեն չգիտեմ, բայց վստահ կարող եմ ասել, որ թարգմանությունս կատարված է բնագրից, որովհետև ձեռքիս տակ ունեցել եմ բնագրի արձակ-բառացի թարգմանությունը և օգտվել եմ բացառապես այդ թարգմանությունից:

Թարգմանությունս թողնում եմ Ձեզ մոտ: Եթե ուզենաք ուղարկել «Կայծ» հանդեսին[2], ես դեմ չեմ, միայն խնդրում եմ ոտանավորի տակ չդնել անունս, ազգանունս, որովհետև, ով գիտե, ապրում ենք այնպիսի ժամանակներում, որ այդպիսի մի օրինական իրավունքն էլ կարող է անախորժ հետևանքներ ունենալ … Ուղարկելու դեպքում դրեք կեղծ անուն – Սանդրո[3]: Այսպես էին կոչում ինձ իմ ծննդավայրում[4], երեխա ժամանակ:

Ընդունեցեք հարգանքներիս հավաստիքը՝

Ալ. Ծատուրյան

– № 4 –

<Անթվակիր>[1]

Պայծառ Դավիթ,

Ստացա հոդվածդ[2] այսօր: Իսկույն գնացի Աչոտի[3] մոտ և միասին կարդացինք: Մեր երկսի կարծիքն էլ այս է. առաջին 9 գլուխը – չա՛տ և չա՛տ լավ ես գրել, առանց տատանվելու կարելի է ասել, որ այդպես և ոչ ոք չէր կարող գրել մեզանում: Իսկ վերջը – չտապելուց է, թե ընչից է – խարաբ ես արել: Որովհետև մեր երկսի համար էլ շատ թանկ է քո մասնակցությունը մեր

---

[2] *Որքան հայտնի է, 1912 թ. նման անվանումով հանդես չի տպագրվել:*

[3] *Թե ինչ ճակատագրի է հետագայում արժանացել թարգմանության հրատարակությունը, չգիտենք. որքան հայտնի է, այն տեղ չի գտել Ալ. Ծատուրյանի երկերի հրատարակություններում: Ի դեպ, 1923 թ. Ե. Զարենցն էլ է թարգմանել և տպագրել գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Հայնեի (1797–1856) այս բանաստեղծությունը՝ «Ջուլհակները» վերնագրով (տե՛ս Ե. Զ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու, հ. 3, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ա. Գ. Զաքարյան, Երևան, 1964, էջ 269–270):*

[4] *Զաքաթալայում:*

[1] *Ելնելով նամակի բովանդակությունից՝ կարծում ենք, որ այն գրվել է 1915 թ. վերջին–1916 թ. սկզբներին:*

[2] *Խոսքը Դ. Անանունի «Հայկական հարցը Ռուսաստանում» վերնագրով ծավալուն հոդվածի մասին է:*

[3] *Նկատի ունի Էջմիածնի ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս, փիլիսոփայության դոկտոր, ՍԴՌՀԿ-ի բովով անցած, հետագայում խորհրդային պետական գործիչ, ակադեմիկոս, ականավոր պատմաբան, Դ. Անանունի մտերիմ ընկեր Աչոտ Հովհաննիսյանին (1887–1972):*

ժողովածվի[4] մեջ, ուստի խնդրում ենք, որ նորից գրես վերջը: Թե թույլ տաս– կանենք այս նկատողությունը՝ նախ դուրս գրիր 10 գլխից մինչև վերջ և տեղը գրիր միայն մի կամ երկու գլուխ հետևյալ բովանդակությամբ. ինչպես հոդվածիդ բնույթ է՝ ռուսահայերս պոլիտիկական պահանջներ չունենք. այլ ունենք քաղաքացիական պահանջներ (պետիցիան օրինակ) և ահա առանց հասարակության չերտավորման պատմությունն անելու –[5] ամփոփիր մեր հասարակության ընդհանուր պահանջները ամենաաջակողմյանից սկսած մինչև ամենաձախակողմյաններ: Վերջինների պահանջները – կարող ես ներկայացնել քո այն հոդվածի սեղմ բովանդակությունը տալով, որ տպված էր «Նոր հոսանքում»[6]:

Ապա՝ լիբերալական վերաբերմունքդ դեպի Վորոնցով Դաշկովը[7] թող: Այդ ի՞նչ մանիլովչինա է: Դու ինքդ և դպրոցական հարցի առիթով և մանավանդ հողային կոլոնիզացիայի պոլիտիկայի առիթով բողոքական հոդվածներ ես գրել և նույն իմաստով քննադատաբար վերաբերվել դեպի այդ բյուրոկրատը:

Տաճկահայերի հարցը բոլորովին թո՛ղ: Վաղը կլինի մի հատուկ ժողովածու տաճկահայերին նվիրված և այնտեղ կգրես «Հայկական հարց» վերնագրով այդ նյութի մասին: Եթե կարևոր է, կարող ես իհարկե հիշատակել, բայց առանձին գլուխ մի նվիրիր:

Այսքանը: Կարծում եմ, որ ընկերաբար կվերաբերվես մեր այս ընկերական դիմումին և չես մերժի այս ծրագրով ավարտել հոդվածդ, որ ըստ[8] ամենքի տեղյակ և չնորհալի գրչի …[9] : Եթե թույլ կտաս – հոդվածդ ետ չեմ ուղարկի և կտպեմ «Գարունի» առաջիկա IV համարում, որ այս տարի ուզում ենք լույս ընծայել[10]:

Անմիջապես գրիր – եթե հանձն կառնես մեր խնդիրը կատարել, որ 10-րդ գլխից սկսած հոդվածիդ վերջին մասը քեզ ետ ուղարկեմ:

---

[4] Նկատի ունի «Գարուն» ալմանախը:

[5] Նամակի չարունակությունը թերթ 2-ի վրա է:

[6] Ամենայն հավանականությամբ, խոսքը Թիֆլիսում լույս տեսնող «Նոր հոսանք» թերթում (1913, № 6, օգոստոս, էջ 1062–1071) Դ. Անանունի տպագրած «Դարձյալ ազգային հարցը և դեմոկրատիան» վերնագրով հոդվածի մասին է:

[7] Նկատի ունի Կովկասի փոխարքա Իլարիոն Վորոնցով-Դաշկովին (1837–1916):

[8] Նամակի չարունակությունը թերթ 1-ի հակառակ երեսին է:

[9] Դժվարընթեռնելի բառ է. հավանաբար, պրոտեքրանքն է կամ պրոդուկտն է:

[10] 1916 թ. ապրիլի 23-ին Պետերբուրգից Կ. Միքայելյանին գրած նամակում Վ. Տերյանը մանավորապես հայտնում է, որ տպագրության է պատրաստվում և աշնանը լույս կտեսնի «Գարուն» գրական-քննադատական ալմանախի IV գիրքը (տե՛ս Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու, հ. չորրորդ, կազմեց և ծանոթագրեց՝ Վ. Զ. Պարտիզունին, Երևան, 1979, էջ 249): Այդ մասին «Հորիզոն» (Թիֆլիս) թերթում հայտարարություն է տպագրվում (տե՛ս 08. VI. 1916): Սակայն «Գարունի» նոր համարներ չհրատարակվեցին. 1917 թ. հունվարին Տերյանի, Մակինցյանի և Միքայելյանի ստորագրությամբ «Նամակ խմբագրության»-ը ծանուցում էր. «Ի նկատի ունենալով «Գործ» ամսագրի երևան գալը. «Գարուն»-ի խմբագրությունը սրանով հայտնում է, որ դադարեցնում է նոր ալմանախների հրատարակությունը … » (Վ. Տ ե ր յ ա ն. Նշվ. ժող., էջ 430):

Այս անում եմ – որովհետև չնայած քո վեհանձն առաջարկին և փոփոխել, և օգտվել և այլն – չեմ կամենում ինքս փոխած լինել և ոչ մի տառ քո գրածիցդ: Հարմարացրու մեր ծրագրին – թարգմանեմ – ղրկեմ[11]*:*

Եթե համաձայնություն ստացա, կսկսեմ թարգմանել և դու այդ ժամանակամիջոցում կկարողանաս հասցնել վերջը:

Շուշի Մատուրի[12] *մերձավոր աշխատակցությամբ թերթ է լույս տեսնելու: Աչոտին*[13] *և նրա միջոցով նաև ինձ հրավիրել են աշխատակցելու: Աչոտը պայման է դրել, որ Բ. Իշխանյանը*[14] *չլինի, իսկ ես, որ դու և մեր տեղը լինենք*[15]*: Երևի դու ևս ստացած կլինես հրավեր: Ի՞նչ ես կարծում, բան դուրս է գալու, թե ոչ*[16]*:*

Ողջ լեր և գրիր քո Պողոս <Մակինցյան>[17]

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 80, թ. 1–2: Ինքնագիր:

---

[11] *Խնդրո առարկա* «Армянский вопрос в России» *վերնագրով հոդվածը լույս է տեսել ռուս գրող, հրապարակախոս Մաքսիմ Գորկու (1868–1936) նախաձեռնությամբ ու խմբագրությամբ 1916 թ. Պետրոգրադում հրատարակված* «Сборник Армянской литературы» *ժողովածուի մեջ (ի դեպ, ժողովածուն բացվում է այդ ուսումնասիրությամբ): Այս նյութը «Հայերը Ռուսաստանում» վերնագրով 1917 թ. տպագրվել է Բաքվում լույս տեսնող «Գործ» ամսագրում (1917, № 2, փետրվար, Բ. մաս, էջ 1–42): Հայ ընթերցողների համար այսօր էլ «չահեկան»՝ «Գործ»-ում տպագրվածը վերահրատարակել ենք ՊՒՀ-ի 2022 թ. № 3-ում (էջ 245–288):*

[12] *Նկատի ունի Ալեքսանդր Մատուրյանին՝ Ալեքսանդր Ռուբենիին:*

[13] *Խոսքը Աչոտ Հովհաննիսյանի մասին է:*

[14] *Բախշի Իշխանյան (1879–1921) – հասարակական-քաղաքական հայտնի գործիչ, ՍԴՀԿ-ի, հետագայում Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ, ստեղծվել է 1920 թ. հունվարին Երևանում) հիմնադիր-գաղափարախոսներից, տնտեսագետ, խմբագիր: «1919 թ. հուլիսից նա գլխավորում էր Հանրապետության գյուղատնտեսության և պետական գույքի գլխավոր վարչության երկրագործության բաժանմունքին կից կենտրոնական վիճակագրական բյուրոյի աշխատանքները: Արդեն 1920 թ. վիճակագրական այդ գիտահետազոտական հիմնարկը կոչվում էր Պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունք: Բ. Իշխանյանը փաստորեն համարվում էր Հանրապետության գլխավոր վիճակագիրը» (Հայ պարբերական մամուլի պատմություն 1900–1922, հ. 2, Երևան, 2017, էջ 696): 1920 թ. նոյեմբերին Դ. Անանունին և Բ. Իշխանյանին առաջարկվել է մտնել Ս. Վրացյանի «ճախ» կոալիցիոն կառավարության մեջ, սակայն նրանք հրաժարվել են (տե՛ս նույն տեղում, էջ 697):*

[15] *Նամակում այդպես է գրված:*

[16] *Որքան հայտնի է, «բան դուրս» չի եկել. Ալ. Մատուրյանի՝ Ռուբենիի, «մերձավոր աշխատակցությամբ» լույս տեսած թերթը եղել է 1917 թ. կեսերից Շուշիում Աչոտ Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված ՌՍԴ(բ)Կ Շուշիի կոմիտեի օրգան «Նեցուկ» հասարակական-քաղաքական շաբաթաթերթը (լույս է տեսել 8 համար):*

[17] *Պողոս Մակինցյան (1884–1938)– գրաքննադատ, թարգմանիչ, հրապարակագիր, խմբագիր-հրատարակիչ, խորհրդային պետական, կուսակցական գործիչ:*

– № 5 –

5 դեկտ<եմբերի> 1915 թ.

Սիրելի Դավիթ[1]*.*

Ողջույն և խնդություն մեծ!

Քո ոսկեբերան դարձվածքներից[2] *ինձ ևս մաս ու բաժին հանած կլինես՝ լռությանս համար: Ախր բան ասացիր, պատվեր տվիր. հիշում ես, իհարկե, հանձնարարությունդ գրքիդ տպագրության մասին*[3]*:*

Կարող ես վստահ լինել, որ քո հանձնարարությունը նույնքան անմոռանալի է եղել ինձ, որքան և քո դեմքը՝ պայծառ ու լուսեղ: Միայն թե այստեղ տպագրական թուղթ չկար և տպարանական վարչ<ության> նախագահը չաբաթներով այդ իսկ պատճառով գնացել է Թիֆլիսում նստել: Նոր վերադարձավ և ես հնարավորություն ունեմ ավետել քեզ, որ այս երկու օրը այստեղ թուղթ կստացվի. ուստի և կարող են ընդունել քո պատվերը[4]*: Ահա և պայմանները: Գիրքը կչարվի «Արարատի» մեծ տառերով (№ 12). 30 տող x 40 տառ. տպագրական թերթը՝ 12 ռուբլի: 1200 օրինակի վրա կգնա մոտ 15 ստող. մի թերթից դուրս կգա 32 էջ: Եթե տպագրվի հասարակ ֆինլանդական թղթի վրա, յուրաքանչյուր ստողը կարժենա՝ 11 ռ. 50 կ.: Ընդամենը կգնա 172 ռ.*

---

[1] *Նամակն առաջին անգամ հրատարակել է Վ. Հակոբյանը (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 208–209)՝ նախաբանում կատարելով մանավորապես հետևյալ չեշտադրումը. «Նամակները խոսակցական, բարբառային լեզվից փոփոխվել և շարադրվել են ժամանակակից հայերենով…» (էջ 208): Մյ քեզ նորարարական մոտեցում վավերագրեր հրապարակելիս … Ինչևէ. ըստ այդ մոտեցման՝ հենց երկրորդ տողում (էջ 208) «խնդություն մեծ» բառակապակցությունը դարձել է՝ «խանդավառություն», էջ 209-ում՝ վերևից 3-րդ տողում, «տպարանական» բառը՝ «տպագրական», նույն էջում՝ վերևից 15-րդ տողում, «միջնորդությունը» դարձել է «միջամտություն»: Զծավալվելով՝ նշենք. հրապարակման մեջ կան բացթողումներ, այդ թվում՝ վերջում տպագրված չէ նամակագրի հասցեն:*

[2] *Գրող, հրապարակագիր, հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Արամայիսը (Միսակ Տեր-Դանիելյան, 1874–1954) «Փշրանքներ» վերնագրով իր ուշագրավ հուշերում Դ. Անանունի մասին գրում է.«… շատերն էին, որ խոսակցության ժամանակ վախվխում էին նրա սուր, կծու, չեշտակի հարվածներից. շատ սրամիտ էր ու հայհոյական … հայհոյելը կարծես թե նրա համար օրգանական պահանջ էր» [Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Հուշեր Դավիթ Անանունի մասին (ծննդյան 130-ամյակի առթիվ).– ՊԲՀ, 2010, № 1, էջ 247]: Գրող Ստ. Զորյանն էլ իր նամակներից մեկում գրում է՝ «… իմ ազատախոս ու հայհոյաբան Դավիթ» (Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Հայ գրողների նամակները Դավիթ Անանունին. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 205): Ա. Հովհաննիսյանը, «ոսկեբերան դարձվածքներ» ասելով, նկատի է ունեցել հայհոյելը:*

[3] *Խոսքը Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով գրքի տպագրության մասին է:*

[4] *Նկատի ունի Դ. Անանունի վերոհիշյալ գիրքը էջմիածնի տպարանում տպագրելը:*

50 կ. թուղթ: Բրոշյուր կապելու և երեսի թղթի վրա կգնա մոտ 25 ռ. ծախք: Հաշվելով այդ բոլորի վրա տպագրության ծախք 156 ռ. (13 տպ. թերթ. 12 ռուբլով՝ յուրաքանչյուր թերթը) ընդամենը գիրքը կնստի՝ 353 ռ. 50 կ.: Եթե տպագրել 1000 օրինակ՝ մոտ 25 ռուբլով ավելի քիչ: Զգիտեմ, ձեռնտու է արդյոք քեզ այս հաշվով գիրքդ այստեղ տպագրել տալը: Եթե այո՛, խնդրում եմ ուղարկիր ձեռագիրդ, որպեսզի քանի թղթի պաշարը դեռ չի սպառվել տպագրել տանք գիրքը: Համենայն դեպս չուտ պատասխան գրիր. ի նկատի ունեցիր, որ այստեղ գրած գները, ի նկատի առնելով իմ միջնորդությունը, էժան են նշանակված սովորականից[5]*:*

Ջերմ բարևներ քեզ՝

քո Աշոտ Հովհաննիսյան

Հասցես՝ Էջմիածին, Ашоту Иоаннисяну.

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 71, թ. 1: Ինքնագիր:

– № 6 –

<Անթվակիր>[1]

Շա՛տ սիրելի Դավիթ,

Ստացա պայծառ գրությունդ: Հոդվածդ, որ մի 4–5 օրից լույս կտեսնի մեր ժողովածվի[2] *մեջ կուղարկեմ (6 խավածքները –* оттиски!*) և բնագիրն*

---

[5] *Խնդրո առարկա Դ. Անանունի գիրքը, սակայն, տպագրվել է 1916 թ. Բաքվում:*

[1] *Դ. Անանունի ձեռքով նշված է՝ «Ստացված է՝ Ապրիլի 25. 1916»:*

[2] *Խոսքը, ինչպես վերը նշվեց, Մ. Գորկու նախաձեռնությամբ ու խմբագրությամբ հրատարակված «*Сборник Армянской литературы*» ժողովածուում զետեղված Դ. Անանունի «*Армянский вопрос в России*» վերնագրով ծավալուն հոդվածի մասին է: Հետաքրքիր է, որ Ստ. Զորյանը 1916 թ. օգոստոսի 21-ին Դ. Անանունին Թիֆլիսից գրած նամակում մանրամասնորեն հայտնում է. «“Арм. Сборник”-ում տպագրված Ձեր հոդվածը մեծ աղմուկ էր հանել վրացիների մեջ մի քանի ֆրազների առթիվ: Քութայիսում հրապարակվող «Միջօբարի» թերթի 4–5 համարում կիյա Աբաշիձեն «Իմ-ամ» կեղծանունով հայհոյում է Ձեզ: Անպայման «Մշակում» քաղվածքներ կտանք, որից գաղափար կկազմեք …» (Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. հրապ., էջ 200): Ի դեպ, խնդրո առարկա նամակն այստեղ տպագրվել է կրճատումներով: Այն ամբողջությամբ հրատարակվել է Ստ. Զորյանի «Սրտի մտոք և հարգանոք» ժողովածուում (կազմ. և ծանոթ. Կ. Ս. Զորյան և Հ. Լ. Զորյան, խմբագիր՝ Ա. Գ. Ափինյան, Երևան, 2010, էջ 7–8): Նամակից վերը բերված մեջբերումն այս ժողովածուում մեծ տարբերությունով հրապարակվել է այսպես. «*Арм. сборник*»-ում տպված Ձեր հոդվածները մեծ աղմուկ են հանել վրացիների մեջ՝ մի քանի ֆրազների առթիվ: Քութայիսում հրատարակվող «Մեգոբարի» թերթի 4–5 համա-*

էլ հետը: Արխեյին կաց: … (չորս բառ անհասկանալի է – Ա. Զ.) չէ, հոնորարն էլ հետը:

«Մշակին» ուղարկել եմ մի քանի մանր-մունր և անհետաքրքրական բաներ: Ուզում եմ գրեմ «Մարմնավոր Հայաստան» խորագրով մի մեծ հոդված մեր … (մեկ բառ անհասկանալի է – Ա. Զ.) ու ղեպքերի մասին–տեսնենք:

Բանն այն է, որ այդտեսակ չեզոք գործերով եմ զբաղված, որ ուշք ու միտքս ազատ չէ և չեմ կարող ժուռնալիստիկայի նվիրել: Ողջունում եմ Ձեր ամսագիրը[3] … բայց վախենում եմ դաշնակցական засилье*-ից: Վախենում եմ – հիշելով «Բաքվի Ձայնի» փորձը: Քո մասնակցությունը – որոշ գարանտիա է, բայց դարձյալ խախուտ, ինչպես անցյալում: Ազգային հարցն էլ է սրվել և մեկը մյուսի ետևից ժողովածուներ են լույս տեսնում: Նոր լույս տեսավ «Отечество»: Ուզում եմ գրեմ այդ մասին էլ: Բայց այն, ինչ որ ես եմ մտածում մասամբ անպատեհ մտքեր են և դժվար արտահայտելի, մասամբ էլ մի տեսակ մենակ զգալով տատանվում եմ գուցե և չպետք է խոսել, լսող չունենալու ղեպքում:*

Անհամբեր սպասում եմ գրքիդ լույս տեսնելուն[4]: Ախպեր, գոռ եք աշխատում: Հրեն Սուրխաթն էլ է մի ամբողջ գիրք գրել հուն<ական> գրակ<անության> պատմության[5]: Ղոչաղ եք, ղոչաղ, մեր թայը չեք: Ցոլակին[6] ողջունիր: Ինքդ լեր ողջ և պայծառ ընդմիշտ:

Քո Պողոս <Մակինցյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 80, թ. 3: Ինքնագիր:

րում կիտա Աբաշիձեն «Իմ-ամ» պսեվդոնիմով հայհոյում է Ձեզ: … Մեր վրացական բաժնի կազմողը այդ երկար հոդվածներից այս օրերս քաղվածքներ կտպի «Մշակ»-ում, և հույս ունիմ Դուք որոշ գաղափար կկազմեք նրանց մասին»: Հ. Բ. Աբրահամյանի կողմից հրատարակված 1916 թ. հոկտեմբերի 25-ին Դ. Անանունին հասցեագրած նամակում էլ Ստ. Զորյանը հայտնում է. «Աբաշիձեի հոդվածից քաղվածքներ թարգմանվեց, բայց անկարելի եղավ տպագրել» (Հ. Բ. Աբրահամյան. նշվ. հրապ., էջ 201): Վերը նշված ժողովածուում այս թվակիր նամակից բերված մեջբերումն էլ տպագրվել է ահա այսպես. «Աբաշիձեի հոդվածի քաղվածքները թարգմանեցի, բայց անկարելի եղավ տպագրել» (էջ 11): Նկատենք. ժողովածուում արձանագրված է, որ հրապարակվող նամակները պահվում են ՀԱԱ-ում, սակայն նշված չէ ֆոնդը, ցուցակը, գործը: Ինչևէ. միևնույն նամակների հրապարակումը նման արտառոց տարբերություններով, մեղմ ասած, առնվազն տարօրինակ է:

[3] Նկատի ունի Բաքվում հրատարակվելիք «Գործ» ամսագիրը:

[4] Խոսքը «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով գրքի մասին է:

[5] Հարություն Սուրխաթյան (Թումանյան, 1882–1938)– գրականագետ, հրապարակախոս, քննադատ, թարգմանիչ, մշակութային և հասարակական գործիչ: Նկատի ունի նրա «Հին հունական գրականություն: Դասական շրջան: Էպոս: Քնարերգություն: Դրամա» (Թիֆլիս, 1922) վերնագրով գիրքը:

[6] Նկատի ունի գրականագետ, գրաքննադատ, թարգմանիչ, ՀՍԴԲԿ-ի հիմնադիր անդամ Ցոլակ Խանզադյանին (1886–1935):

– № 7 –

30 սեպտեմբերի 1916 թ.[1]

Պայծառակերպդ իմ Դավիթ[2]*! Շնորհակալ եմ գրքիդ*[3] *համար: Հուսով եմ, կտանամ չուտով նաև քո* посылка*-ն: Մոտիկ ապագայում ժամանակ կունենամ խորասուզվելու գրքիդ ընթերցումի մեջ: Եկող տարվանից այդ աշխատությունը կմտցնեմ ճեմարանի լսարաններում, որպես ձեռնարկ հայոց նոր պատմության: Մնում է, որ շարունակես ամփոփել նյութերդ և տալ մեզ աշխատությանդ Բ. հատորը: Կարդացի «Արև»-ի հոդվածաշարքը*[4]*! Բավական չէ, որ այդ կարճամիտները իրենք են տրաքվում նախանձից ու չարակամությունից, հիմա էլ, խաղալով մեր մարդկային թուլություններուի վրա, կամենում են մեզ վարակել նույն ախտով: «Արարատ»-ի հետևյալ №-ում խմբագիր Գյուտ աբեղան տպագրելու է գրախոսական*[5]*. այսօր տպարանում կարդացի ձեռագիրը. ամբողջովին հյուսված է տկարամտությունից: Դասեր է տալիս քեզ, թե ինչպես պետք է սովորես կարդալ և գրել հայոց լեզվով, սիրես ազգը և եկեղեցին, պաշտես նրա մեռած և կենդանի ֆետիշներին … Եվ այդ բոլորից հետո եզրակացություն, որ դու հետևում ես … Լեոյի*[6] *և Երիցյանի*[7] *մեթոդին: Այս մարդը տարիների ընթացքում կարդացել և գրել է հայերեն, սիրել և պաշտել է ազգային սրբությունները և այսուամենայնիվ*

---

[1] *Նամակը գրված է փոստային բացիկի վրա:*

[2] *Նամակն առաջին անգամ հրատարակել է Վ. Հակոբյանը (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 210–211): Կան տարընթերցումներ. այսպես, օրինակ, հենց առաջին տողում (էջ 210) «Պայծառակերպդ» բառը տպագրվել է «Պայծառակերտ», նույն էջում՝ վերևից 3-րդ տողում, «ընթերցումի»-նը՝ «ընթերցանության», նույն տողում «ճեմարանի լսարաններում»-ը՝ «6 դասարանի լսարաններում» և այլն: Նամակի վերջում (էջ 211) նշված չէ Պողոսի հասցեն:*

[3] *Խոսքը «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով գրքի մասին է:*

[4] *Նկատի ունի Բաքվի «Արև» թերթում՝ «Թերթոն» խորագրի ներքո, Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով աշխատության վերաբերյալ «Դ.-ն» ստորագրությամբ հանդես եկած դաշնակցական գործիչ Վահան Նավասարդյանի (1888–1956) ծավալուն հոդվածաշարքը (տե՛ս թերթի 1916 թ. սեպտեմբերի 22, 23, 24, 25-ի համարները): Վ. Հակոբյանն այս նյութի հեղինակ է համարում վերջինիս՝ առանց նշելու, որ Վ. Նավասարդյանն այստեղ հանդես է եկել «Դ.-ն» ծածկանունով (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 210, ծնթ. 4):*

[5] *Խոսքը քահանա, պատմաբան, ազգագրագետ, թարգմանիչ, մանկավարժ, խմբագիր-հրատարակիչ Գյուտ Աղանյանի (Տեր-Առաքելյան Հարություն, 1856–1920)՝ «Արարատ» ամսագրի 1916 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համարում (էջ 753–762) Դ. Անանունի վերոգրյալ գրքի վերաբերյալ «Գ. ա.» ստորագրությամբ (նամակն առաջին անգամ հրապարակողն այս մասին չի նշում) տպագրած գրախոսականի մասին է:*

[6] *Լեո՝ Առաքել Բաբախանյան (1860–1932) – պատմաբան, հրապարակագիր, գրականագետ, գրող:*

[7] *Նկատի ունի պատմաբան, հնագետ Ալեքսանդր Երիցյանին (1841–1902):*

պատմաբան չի դառել, թեկուզ հենց երիցյանի չկոլային պատկանող, այլ … աբեղա հոգով և մտքով: Երևի լսել է, որ ամուրի ես, ուզում է քեզ համար ևս գայթակղության դուռ բանալ: Дух-ը *բարձր պահիր, սիրելի Դավիթ! Թքի՛ր սրանց գերեզմանների վրա և անցի՛ր:*

Պողոսի[8] *հասցեն՝* Эривань, Карвансарайская 34.

Ջերմ բարևներ քո Աշոտ <Հովհաննիսյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 73, թ. 4: Ինքնագիր:

– № 8 –

Էջմիածին
24 հունվարի 1917 թ.

Սիրելի Դավիթ![1]

Կարղացի նամակդ և ահա՛ պատասխանում եմ: Եվ քանի որ դեռ նոր ենք մտել մեր հարաբերությունների ռոմանտիկական շրջանը, թույլ տուր ինձ ևս լինել սրտաբաց ու բացատրվել քեզ հետ նախ և առաջ սիրո մեջ:

Գաղտնիք չէ իմ բարեկամների համար, որ եթե կա մեկը իմ համախոհներից, որ եղել է իմ սիրո ու հարգանքի մշտական առարկան՝ դա հենց քո լուսաթաթախ անձնավորությունն է: Դեպի քեզ ունեցած այդ վերաբերմունքին հիմք է եղել նախ և առաջ այն գիտակցությունը, որ ներկայումս ապրող հայ հրապարակախոսների մեջ դու միակն ես, որ ունես քո պաշտոնին վայել և՛ բնական ձիրք, և՛ բարոյական կշիռ: Սիրով և հետաքրքրությամբ եմ կարդում քո բոլոր գրությունները և գոհունակության զգացումով հետևում քո աճող գրական ճաշակի և ունակությունների ծավալմանը: Հատկապես գնահատելի եմ համարում քո գրությունները այն պատճառով, որ մեր հոսան-

---

[8] *Խոսքը Պողոս Մակինցյանի մասին է:*

[1] *Նամակն առաջին անգամ հրատարակել է Վ. Հակոբյանը (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 211–213): Դրանում կան մի չարք տարընթերցումներ. այսպես, օրինակ, էջ 211-ի վերևից 13-րդ տողում «հենակետների» բառը տպագրվել է՝ «ձեռակերտների», 19-րդ տողում «ելումուտ»-ը դարձել է «հետամնաց», ներքևից 1-ին տողում «փորել»-ը՝ «փոխել», «ոչ՝»-ը՝ «սեպ», էջ 212-ի վերևից 1-ին տողում «խրվելը»՝ «խրել», էջ 213-ի վերևից 15-րդ տողում «Մեծ չենում» գյուղի անունը հրապարակվել է փոքրատառով՝ «մեծ չենում», 17-րդ տողում «Մտաղիր»-ը՝ «Մտածում եմ», 22-րդ տողում «ճանապարհորդագրությունների» բառը՝ «ճանապարհորդությունների» և այլն: Կան մի չարք բացթողումներ. էջ 211-ի 2-րդ տողում «Եվ քանի որ»-ից հետո բաց է թողնված «դեռ» բառը, նույն էջի ներքևից 14-րդ տողում «այդպես եմ ուզում»-ից հետո՝ «ես»-ը, էջ 212-ում՝ վերևից 6-րդ տողում՝ «ունի» բառից հետո «իր»-ը և այլն, և այլն:*

քին[2] պատկանող մտավորականներից ոչ ոք այնպես սերտորեն չի կապված մեր աշխարհայացքի սոցիալական հենակետների – արդյունաբերական դեմոկրատիայի հետ, որքան հենց դու: Ես միայն զայրանալ կարող էի, երբ, քո մի քանի մեղքերի վրա ծանրանալուց հետո, մեր չարքերից քեզ մնաս բարև ուղղեց ... Գ. Պհիհկյանը[3]. ավելի քան ծիծաղելի էր այդ տղայական ժեստը: Մեզանից յուրաքանչյուրի առնչությունը հայ սոցիալական դեմոկրատիայի հետ ունի նախ և առաջ գրական-իդեական ծագում, մինչդեռ քո կապը նրա հետ ռեալ է և կենսական. մեր հայացքները հարուստ են նախ և առաջ ելումուտ տարրերով ու կազմակերպվել են կողմնակի ազդեցությունների ներքո, մինչդեռ քո համոզմունքները ինքնաբուխ են և կաղապարվել են փորձի ու պայքարի մեջ: Մեր մեջ ոչ ոք չէ կարող պատկանել հայ բանվորական շարժմանը և հայ սոցիալիստական մտքի պատմությանն այն չափով, ինչ չափով դու ես պատկանում դրանց: Պատահական երևույթ չէ անշուշտ, որ դու առաջինն ես սոցիալիստորեն մտածող հայ մտավորականներից, որ լուրջ ձգտում է ցույց տվել դնել հայ հետևողական դեմոկրատիայի հասարակական իդեալը նրա «գոյության ինքնօրինակ պատվանդանի» վրա. այդպես եմ ուզում ես ըմբռնել քո վերջին աշխատության[4] իսկական նպատակը:

Բայց ես բավականանում եմ այդ խոստովանությամբ և դրանով էլ չափավորում իմ սիրային հափշտակությունը: Քեզ հետ ի միասին հարելով միանդամայն այն հոսանքին, որ կոչում ունի հաղթահարելու հայ մարքսիզմի զարգացման բացառապես լուսավորչական շրջանը և չբավականանալով հայ սոցիալիստական մտքի այն հին հոգևոր կացարանով, որ կառուցվել է սիմպլ դատողությունների և անալոգիան որպես ապացույց ճանաչող մտածողության աղյուսներով՝ ես հարկադրված եմ հիշեցնելու քեզ, որ մեր նախորդներից մեզ տարբերողը պետք է լինի այսուամենայնիվ ոչ թե հին տեսակետն ու ուղղությունը, այլ նոր մտածելակերպն ու էրուդիցիան: Եթե մեր գործերը պետք է դառնան ավելի նշանակալից, քան այն, ինչ արել են մեզանում մեր

---

[2] *Նկատի ունի Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը:*

[3] *Գագիկ Պհիհկյան (1882–1938) իրավաբան, տնտեսագետի մասին խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում հիշատակություն չկա: Եղել է ՍԴԲՀԿ-ի, հետագայում ՀՍԴԲԿ-ի հիմնադիր անդամներից, Բաքվում 1917–1918 թթ. լույս տեսած ՍԴԲՀԿ-ի օրգան «Բանվոր» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչը: Ի դեպ, Դ. Անանունը «Բաքվի չիրիմները» հոդվածաշարում գրում է. «... ես ստիպված էի իմ խմբագրած «Բանվորի» էջերից հայտարարել ... (ընդգծումը մերն է – Ա. Զ.)» [տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 29. III. 1919]: 1920–1921 թթ. եղել է Հայկոոպի նախագահը: Նաև հավելենք. Գ. Պհիհկյանը, ում «1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ ինքն էր (Դ. Անանունը – Ա. Զ.) բանտից ազատել, նրա (Դ. Անանունի – Ա. Զ.) ձերբակալությունից հետո (1927 թ. – Ա. Զ.) Թիֆլիսում մոտեցել է Հայաստանի Պետքաղվարչության պետ Ս. Մելիք-Հովսեփյանին և հայտնել Դ. Անանունի ու ՀՅԴ-ի կապերի մասին: ... Գ. Պհիհկյանն այդպես է արտահայտել իր «երախտագիտությունը» Դ. Անանունին՝ Փետրվարյան ապստամբության օրերին իրեն և կնոջը բանտից ազատելու համար ...» (տե՛ս Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանուն, էջ 151):*

[4] *Խոսքը «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800–1870)» վերնագրով գրքի մասին է:*

նախորդները, անհրաժեշտ է, որ մենք կազմակերպվենք որպես հայ անցյալի ու ներկայի խոր և բազմակողմանի ճանաչողությամբ ղեկավարվող մի ուժ: Սակայն մեր գիտակցության «ազգային» այդ հիմնավորումը չպետք է բանա մեր առաջ «ազգային գիտակցության» մի նոր անդունդ. մեր նպատակն է փորել հայ կյանքը և ոչ՝ խրվել նրա մեջ: Փնտրելով հայ կյանքում գոյության իրական հենակետներ՝ մեր կամքը չէ ապօրինի կենակցություն հաստատել այդտեղ գործող այն ուժերի հետ, որոնց դեմ պայքարելու կոչումն ունենք մենք: Մեր մտահոգության առարկա չէ կարող լինել «հայրենաբաղձ հայության» ազգային հավաքումը[5], այլ միայն և բացառապես հայ սոցիալական դեմոկրատիայի դասակարգային հավաքումը: Հայ սոցիալական դեմոկրատիան պետք է ցույց տա, որ նա ունի իր հատուկ միսիան հայ կյանքի մեջ. նա կարող է հանդես գալ որպես ազգային դասակարգ իր սոցիալական միսիայի իրագործման ճանապարհով: «Ազգաշինությունը», որպես նպատակ հայության հավաքական ջանքերի, պետք է նկատվի որպես դասակարգային պայքարի տեսակետի վրա կանգնած դեմոկրատիայի ոգուն անհարազատ մի մտահղացումը: Դա մի գաղափար է՝ սխալ իր հիմքերով և վնասակար՝ իր հետևանքներով:

Յուրաքանչյուր համակեցություն պարտավորացնում է, գիտակցաբար թե անգիտակցաբար՝ այդ միևնույն է: Յուրաքանչյուր աննպատակ գործակցություն հակառակորդի հետ կոտրում է դեմոկրատական պայքարի թափը և բթացնում նրա մտայնության դիալեկտիկական սրությունը: Այդ առումով է, սիրելի Դավիթ, որ չժխտելով հանդերձ «Գործ» ամսագրի պիտանիությունը, որպես գրական հանդեսի, չեմ կարող չհամարել այն վնասակար, որպես հասարակական օրգանի: Պաշտոնապես նա չունի ուղղություն. սակայն փաստորեն նա մի նշանացույց է հայ հասարակական տրամաղրությունների մի որոշ ուղղության. նա պետք է դառնա ժամադրավայր այն բոլոր հոգնած ուղեղների համար, որոնք սոցիալական համերաշխության մեջ են փնտրում իրենց հոգեկան հանգիստը: Հրատարակած № 1-ը կարծես նույնիսկ նախորոշում է ամսագրի ապագա ուղղությունը. նրա ամենաճախակողմյան հոդվածը «Փորձության ժամի» մասին[6] մի կատարյալ փորձություն է հայ սոցիալական դեմոկրատիայի պատմության համար: Անանունը վճռական քայլ է անում դեպի աջ և ձեռք մեկնում անհաստատ քայլերով աջից ձախ թեքվող Մանանդյանին[7]: Ի՞նչ կարող է առաջ գալ այդ երջանիկ հանդիպումից: Անշուշտ. իր անծայր մեղքերը գղջացող մի Զիլինկարյան[8] միայն, քանի որ բացի այդ

---

[5] *Նկատի ունի Հայաստանում հայության ազգային համախմբման անհրաժեշտության մասին Դ. Անանունի տեսակետը:*

[6] *Խոսքը Դ. Անանունի «Փորձության ժամին» վերնագրով հոդվածի մասին է (Բ. մաս, էջ 19–24):*

[7] *Նկատի ունի պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, մանկավարժ Հակոբ Մանանդյանի (1873–1952) «Ազգության գաղափարը» վերնագրով հոդվածը (Բ. մաս, էջ 1–18):*

[8] *Խոսքը ՀՅԴ կուսակցության անդամ, խմբագիր Արտաշես Զիլինգարյանի (Ռուբեն Դարբինյան, 1883–1968) «Հայության մեծ տագնապը» հոդվածի մասին է (Բ. մաս, էջ 91–110): Վ. Հակոբյանը Զիլինգարյանի անունը գրել է Աբշավիր (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 212):*

միակ բնական սինթեզից հայ հասարակական միտքը վաղուց է, ինչ հոգևոր հանգրվան չի փնտրում ոչ Գեղամյանի[9], ոչ Անկախի[10], ոչ Ֆրանկյանի[11] և ոչ նույնիսկ ... մեր պատվական Բախչի Ձախարիչի[12] գրվածքներում: Զլինկարյանն անկասկած «չիտակ» մարդ է և անպայման «լուրջ» մտածող մի գլուխ: Նա կարող է նկատվել որպես մարմնացումը այն նշանաբանի, որ ընտրել է իր համար «Գործ» ամսագիրը: Բայց և այնպես. արժե՞ ոգևորվել թեկուզ հենց մի այդպիսի բարի ծնունդով: Այդ նոր Մագթաղինեն չէ համենայն դեպս այն ապահով կամուրջը, որ պետք է ձգվի հայ ղեմոկրատիայի ներկա անկազմակերպ վիճակի ու նրա «հավաքման» առաջիկա հանգույցների միջև:

Աչխատակցելով հասարակական դեմքից զուրկ օրգանների մեջ՝ մենք ավելի ևս խրախուսում ենք այն անկազմակերպ վիճակը, որի մեջ գտնվում է այսօր հայ հասարակական միտքը: Ուժերի հսկայական վատնում, և ոչ մի արդյունք: Ահագին եռանդ և ուժ ենք թափում կենդանությունն ներշնչելու զառամած «Մշակ»-ի պես մի այլանդակության՝ չենք նկատում, որ դրանով իսկ մեզ վրա ենք առնում պատասխանատվություն պատանի «Պայքարի»[13] անկիրթ բարքերի ու տղայական մտածելակերպի համար: Այսօր մենք կենտրոնացնում ենք մեր ուժերը «Գործ»-ում ու այդպիսով թուլացնում անկախ ղեմոկրատական սոցիալիստական օրգան ունենալու պահանջը: Եվ այսպես անվերջ: Սխալ է կարծել, թե մեզ կհաջողվի նվաճել օտարի ստեղծած տաքուկ անկյունները: Հիշիր, թե ինչպես վարվեցին Յոլակի[14] ու քեզ հետ Բաքվի հայ օրաթերթերը: Չպետք է ենթադրել, որ ավելի վեհանձն կգտնվեն «Գործ»-ի ֆինանսական մագնատները: Ինչ վերաբերում է «Մշակ»-ին՝ մինչայժմ դեռ չհաջողվեց «դարձի բերել» ոչ այդ թերթի խմբագրին[15] և ոչ էլ նրա ընթերցողներին: Առաքելյանը ամենից քիչը զերեզմանի մասին է մտածում: Նա դեռ նոր եռանդ է զգում իր մեջ ու դեռ նոր է սկսում միջոցներ ձեռնարկել միացնելու իր համախոհներին մի նոր կուսակցության[16] մեջ: Գուցե քո անցյալ տարվա ուեցեպտները ևս առանց հետևանքի չեն մնացել Առաքելյանի այս նոր ծննդաբերության արագացնելու տեսակետից: Սակայն նաև այդ դեպքում ճիշտ է, թե մարքսիստները չեն, որ շահագործում են մշակականներին, այլ,

---

[9] *Նկատի ունի հոգևոր գործիչ, պատմաբան, հրապարակագիր, գրող, մանկավարժ Եղիշե (Հովակիմ) ա. ք. Գեղամյանի (Հայկունի, 1840–1920) «Պետրոս Շանչյան» վերնագրով նյութը (Բ. մաս, էջ 41–65):*

[10] *Խոսքը գրական-հասարակական գործիչ, խմբագիր Լևոն Սարգսյանի (1862–1927) «Հուշեր իմ անցյալից» նյութի մասին է (Բ. մաս, էջ 36–41):*

[11] *Նկատի ունի փիլիսոփա Երվանդ Ֆրանգյանի (1878–1928) «Էռնստ Մախի փիլիսոփայությունը (նրա մահվան առիթով)» հոդվածը (Բ. մաս, էջ 66–85):*

[12] *Խոսքը Բախչի Իշխանյանի «Ինքնուսումնասիրություն և ինքնաճանաչողություն (դիտողություններ և գործնական առաջարկներ)» վերնագրով հոդվածի մասին է (Բ. մաս, էջ 24–36):*

[13] *Ամենայն հավանականությամբ, նկատի ունի 1914–1917 թթ. Բաքվում ՀՅԴ-ի կողմից հրատարակվող «Պայքար» թերթը:*

[14] *Նկատի ունի Յոլակ Խանզադյանին:*

[15] *Խոսքը հրապարակագիր, գրող, մանկավարժ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ Համբարձում Առաքելյանի (Շահրիար, 1855–1918) մասին է:*

[16] *Նկատի ունի Թիֆլիսում 1917 թ. ապրիլին ստեղծված Հայ ժողովրդական կուսակցությունը. Հ. Առաքելյանը դրա հիմնադիրներից էր:*

ընդհակառակը, սրանք են, որ օգտագործում են իրանց նպատակների համար նրանց գրական աշխատանքը:

Իհարկե, ես չեմ գրում այս տողերը քեզ խելքի բերելու նպատակով: Դու ունես քո ուրույն ըմբռնումները այստեղ չոշափած խնդիրների մասին և քո գործնական քայլերը միանգամայն հետևողական են քո այդ ըմբռնումների տեսակետից: Ես կամենում էի միայն հայտնել քեզ, թե զորեղ հիմքեր չեմ գտնում փոխելու իմ հին կարծիքը «Գործ»-ում աշխատակցելու մասին[17]: Եվ չատ ցավում եմ, որ դա այդպես է, քանի որ իմ ջերմ ցանկությունը կլիներ ունենալ քեզ հետ որևէ գրական ժամադրավայր. միայն թե մեր տեսակցության քաղցր ժամերը չդառնացներ օտարի դիտող հայացքը[18]:

Հունվարի տոներին Պողոսի[19] մոտ էի, երբ ստացվեց ու կարդացինք միասին քո նամակը: Շատ ցավեցինք, որ առիթ չպիտի ներկայանար հանդիպելու քեզ:

---

[17] *1916 թ. սեպտեմբերի 23-ին Դ. Անանունին Աչոտ Հովհաննիսյանի գրած նամակից հայտնի է, որ նախապես խոստացել էր աշխատակցել «Գործ»-ին (տե՛ս Դավիթ Անանունի նամակագրությունից.– ՊԲՀ, 1984, № 1, էջ 173–174, նաև՝ Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանունի նամակագրությունից, էջ 209–210): Ի դեպ, ուշագրավ են «Գործ»-ին աշխատակցելու հետ կապված Շիրվանզադեի և Ստ. Զորյանի՝ Դ. Անանունին գրած նամակները (տե՛ս Հ. Բ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Նշվ. հրապ., էջ 199, 200–201, Ս տ. Զ ո ր յ ա ն. Սրտի մտոք և հարգանոք, էջ 9):*

[18] *Քաղաքական սուր բանավեճը երբեմնի գաղափարակից ընկերների միջև, ակայն, չէր խանգարում իրար հանդեպ բարեհաճ լինելուն, մտերմությանը, որը, անկասկած, կարևոր դեր ուներ նրանց փոխհարաբերություններում: Դ. Անանունը «խելքի» չի եկել. նրա անունը կա խմբագրական խորհրդի կազմում: «Գործ» գրական, գիտական, հասարակական և քաղաքական ամսագիրը լույս է տեսել 1917 թ. հունվար-դեկտեմբերին: Առաջին համարում (էջ 165–166) խմբագրությունը մանավորապես ծանուցում էր. ««Գործը» մի հոսանքի կամ մի ուղղության բերան չէ: Նրա հրատարակման գաղափարը երկնվել է տարբեր աշխարհայացքի տեր մտավորականների մեջ: Ահա լրանում է մի տարին, որ այդ մտավորականների խումբը հարթում է խոչընդոտները և ստեղծում այն պայմանները, որ հնարավոր լինի Բաքվում հրատարակել մի ամսագիր: ... «Գործը» խմբագրվում է հատուկ խմբագրական կազմի ձեռքով, կազմի, որ այդ նպատակի համար լիազորվել է նախաձեռնող մտավորականների ընդհանուր ժողովից: Խմբագրական կազմը գիտակցում է ընկերովի աշխատանքի թե ձեռնտու և թե պակասավոր կողմերը: Նա համոզում ունի, թե ընկերովի աշխատանքով հնարավոր կլինի խուսափել շատ սխալներից, բայց և ընդունում է, որ կարող է իր հավաքական որոշումներով անհաճո վճիռ արձակել այս կամ այն գրական երկի մասին: Եվ եթե անգամ պատահեն նման դեպքեր միանգամայն սխալ կլինի եզրակացնել, թե խմբագրական կազմը կարող է առաջնորդված լինել որևէ կանխակալ դիտումով: Ոչ. նրա մտահոգությունը լավ ասված, չնորհքով ու համոզչությամբ գրված հայ խոսքի գոյությունն է, ո՛ր բանակից էլ ելած լինի նա: Այս տեսակետից խմբագրական կազմը լայն հյուրընկալող է և ոչ նեղսիրտ աղանդավոր»: Ամսագրի խմբագիրը Կոստանդին Կրասիլնիկյանն էր, հրատարակիչը՝ Սարգիս Տեր-Ղազարյանը, խմբագրության անդամները՝ Դ. Անանունը, Եր. Թաղիանոսյանը, Յ. Խանզադյանը, Հ. Մանանդյանը և Արտ. Զիլինգարյանը: Յ. Խանզադյանը 1917 թ. մարտին հեռացել է «Գործ»-ից: Այդ մասին տեղեկանում ենք նրան Վ. Տերյանի գրած <1917, 30 մարտի, Սուխումի> թվակիր նամակից. «Սիրելի Յել // Անչորհք բացիկդ ստացա, բայց բան չհասկացա: Ինչո՞ւ ես «Գործ»-ից հեռացել, գրի՛ր, դա շատ կարևոր է և հետաքրքրական: Գուցե ինձ է՞լ պետք է հեռանալ: Մի ծուլանա, գրի՛ր խնդրեմ» (Վ. Տ ե ր յ ա ն. Նշվ. ժող., էջ 313):*

[19] *Նկատի ունի Պողոս Մակինցյանին:*

Հիշեցինք քեզ, և ես պատմեցի Պողոսին քո այն մանկական հիշողությունների մասին, որ լսել էի քեզնից անցյալ տարի Բաքվում. Մեծ չենում ձեզ հարևան ապրող այրի կնոջ («խասա»!) մարդու գնալու պատմությունը, որ շատ զվարճություն պատճառեց:

Ազատ ժամերս պարապում եմ մի շատ կարևոր նյութի վրա: Մտադիր եմ մի ուսումնասիրություն հրատարակել տաճկահայերի հասարակական-տնտեսական զարգացման մասին՝ օսմանցիների տիրապետության ժամանակաշրջանում: Թեման դժվար լինելուց զատ, զգում եմ նյութի պակասություն ևս. եղած նյութերն էլ սարսափելի կերպով ցրված են հայ և օտար հրատարակությունների մեջ: Հայ հիշատակարանները քիչ բան են տալիս. երևի հարկադրված պետք է լինեմ հիմնավորել իմ տեսությունը հին և նոր ճանապարհորդագրությունների ու նման օտար հրատարակությունների տվյալներով:

Խորեն Լորենցը[20] հասավ էջմիածին: Երեք նամակ էր բերել ուղղած ինձ, Ալթունյանին[21] և Սիմ. Հովյանին[22]. միամտաբար այդ երեքն էլ հանձնեց մեզ միաժամանակ, այն էլ ուսուցչական սենյակում ... ծիծաղելի վիճակի մեջ ընկավ թե ինքը, թե մենք: Նրա հարցը դեռ չէ քննված: Կաշխատեմ օգտակար լինել նրա գործին:

Ընդունիր առայժմ ջերմ բարևներ և ների՛ր, եթե նամակով քեզ վշտացնում եմ:

Քո Աշոտ <Հովհաննիսյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 74, թ. 5–7: Ինքնագիր:

---

[20] *Խորեն Բորյան (1892–1919) – հեղափոխական գործիչ: Անդրկովկասի հեղափոխական շարժումների մասնակից Գ. Ղազարյանը (1888–1960) «Հին "правда"-ն Բաքվում (երիտհիշողություններ)» վերնագրով հոդվածում գրում է. «Դեռ պատանի էի. սովորում էի Բաքվի հայոց «Մեսրոպյան» դպրոցում: ... Մի դասարանում և մի սեղանի էինք նստում ես և հանգուցյալ Խորեն Բորյանը (Խ. Լորենց – բանաստեղծ) ընկ. Բագրատ Բորյանի և 26 կոմիսարներից մեկի – Արմենակ Բորյանի փոքր եղբայրը» («Խորհրդային Հայաստանի», 08. V. 1927): Խ. Բորյանը գրել է բանաստեղծություններ, որոնք 1910-ական թվականներին տպագրվել են անդրկովկասյան մամուլում Խորեն Լորենց ծածկանունով (տե՛ս Բ. Մ. Հ ո վ ա կ ի մ յ ա ն. Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 191): Գնդակահարվել է դենիկինյան զորքերի կողմից: Ի դեպ, խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում նրա մասին հիշատակություն չկա:*

[21] *Գևորգ Ալթունյան (1881–1947) – գրականագետ, թարգմանիչ, դրամատուրգ: Դասավանդել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում:*

[22] *Սիմոն (Սիմեոն) Հովյան (Դոկտոր Տաչիր, 1869–1942) – Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ստեղծվել է 1887 թ. ժնևում) գործիչ, խմբագիր: Դասավանդել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Վ. Հակոբյանը նրա ազգանունը գրել է Հովոյան (տե՛ս «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, № 1, էջ 213):*

– № 9 –

Լոնդոն
3 ապրիլի 1917 թ.[1]

Հարգելի պր. Դ. Անանուն,

Հույս ունեմ մի քանի ամիս հետո հոս հրատարակել մի հատոր հայկական պատմություն՝ առանձնապես չեչտելով հայության կյանքի պայմանները Կովկասի և Տաճկահայաստանի մեջ ԺԹ. դարու սկզբից: Իհարկե ես կընտրեմ պրոպագանդի ընություն ունեցող մի ուղղություն՝ հնարավորության չափով առանց չեղվելու առարկայական անաչառության: Գուցե ... (մեկ բառ անհասկանալի է – Ա. Ջ.) կտանամ ձեր «Հասարակական զարգացման» առաջին հատորը չուտով: Նկատի ունեմ նաև «Գործի» մեջ Ձեր գրածները: Հրապարակվելիք հատորը իհարկե կլինի անգլերեն, և մեր անգլ<իացի> բարեկամները այդպիսի մի հատորի հրատարակությունը գտնում են օգտակար:

Խնդրեմ թույլ տվեք օգտվել Ձեր ուսումնասիրություններից, առաջիկա աշնան հատորը լույս ընծայել կարենալու համար:

Հարգանքներով

Ձերդ Արշակ Սաֆրաստյան[2]

Հ.Գ. Կաշխատեմ չուտով «Գործին» ուղարկել մի գրություն:
Ա. Ս.

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 92, 1 թ.: Ինքնագիր:

– № 10 –

Բաքու
9 հունիսի 1917 թ.

Հայոց Կ. Ազգային Բյուրոյի
Հրատարակչական Մասնախմբին

Մեծ. պ. պ.

Ստացել եմ Ձեր հրավերը «Հայոց հասարակական կյանքը Ռուսաստանում» վերտառությամբ հոդված գրելու Բյուրոյի հրատարակելիք «Կարմիր Գրքի»

---

[1] *Նամակը գրված է* "The Armenian United Association of London" *ձևաթղթի վրա:*

[2] *Ազգային-հասարակական գործիչ, հայագետ, լրագրող, դիվանագետ Արշակ Սաֆրաստյանի (1885–1958) մասին խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում հիշատակություն չկա:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

համար: Իբրև ազգի անդամ և որոշ քաղաքական-հասարակական աշխարհայացքի տեր մի մարդ՝ ես միշտ բողոքել և դեմ եմ եղել Ազգային Բյուրոյի վարած քաղաքականութիւյան: Այս պատճառով էլ չեմ կարող աջակցել Բյուրոյի այդ նախաձեռնած աշխատանքին[1]:

Հարգանոք՝ Դ. Անանուն

ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ. 1: Ինքնագիր:

– № 11 –

4 ապրիլի 1919 թ.

Մեծարգո Պրն Դավիթ Անանունին[1]

Առաջիկա գարնան կըրանա Վանի Մեծ Իմաստասեր երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի ծննդյան հարյուրամյակը – 1820 ապրիլ 4 – 1920 ապրիլ 4 (Հ. տ.):

Մեծ ժողովրդասերի ծննդյան հարյուրամյակը հավերժացնելու համար, երկու տարի ի վեր է, որ Խրիմյան Հայրիկի մասին ես կհավաքեմ բազմատեսակ անտիպ նյութեր, որոնք ժողովածուի ձևով լույս պիտի տեսնեն առաջիկա գարնան: Իմ հավաքած նյութերը – կենսագրական անտիպ տեղեկութիւյունները, Հայրիկի սրախոսութիւյունները, անեկդոտները, անտիպ նամակները և լուսանկարները, Հայրիկի անսահման ժողովրդականութիւյունը հաստատող բազմաթիվ փաստական տեղեկութիւյունները և այլն, որոնք բոլորն ալ նորութիւյուններ են, նաև կարևոր աղբյուր՝ Հայրիկի մանրակրկիտ կենսագրութիւյունը գրողին համար:

Ուստի այսու կդիմեմ այն բոլոր անձնավորութիւյուններուն և կխնդրեմ, որ եթե գիտեն Հայրիկի սրախոսութիւյունները, անեկդոտները, ունին Հայրիկի նամակները, և վերջապես կրնան ունէ գրավոր կամ բանավոր նոր ու հետաքրքիր տեղեկութիւյուն հաղորդել ինձ, այդպիսի անձնավորութիւյուններուն երախտապարտ պիտի մնամ և անոնց անունը ուրախութիւյամբ պիտի հիշեմ ժողովածուի առաջաբանին մեջ:

Ի դեպ հայտնեմ, որ Հայրիկի ծննդյան հարյուրամյակի օրը (1920 ապրիլ 4/17) Էջմիածնի մեջ, Հայրիկի գերեզմանին վրա կատարվելու է սգահանդես և ժողովրդական մեծ օր: (Երեկույթ, հանգանակութիւյուն, հանդեսներ և այլն):

Հիշյալ ժողովածուի հրատարակութիւյան օգտին հանգանակված է (Հայրիկի մահվան տասնամյակի օրը 1917 հոկտ<եմբեր> 29 – նոյ<եմբեր> 6) մոտ 500 ռուբլի գումար մը. այդ հանգանակութիւյունը դեռ կչարունակվի:

---

[1] *Մակագրված է՝ «Ի նկատի առնել»: Ընդգծվել է ստացողի կողմից:*

[1] *Անուն-ազգանունը գրված է ձեռագրով:*

Իմ հասցեն Էջմիածին՝

Հայկ Աճեմյան[2]

ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ. 3[6]: Մեքենագիր:

– № 12 –

6 հուլիսի 1919 թ.

Սիրելի Դավիթ[1],

Ջես կարող երևակայել, թե որքան վշտացած եմ, որ չկարողացա քեզ տես-

---

[2] *« … գրագետ, վաստակավոր կրթական գործիչ, Սպահանի համալսարանի հայագիտական բաժնի դասախոս» [տե՛ս «Արծվի Վասպուրական» (Ֆրեզնո), 1965, մայիս–հունիս, թիվ 3, էջ 1030] Հայկ Աճեմյանի (1898–1965) մասին խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում հիշատակություն չկա: Հայտնի է, որ 1909–1915 թթ. Վանի երեմյան ղպրոցում աշակերտելիս, պատմագիտական պեղումներ և ուսումնասիրություններ կատարելու նպատակով 1916 թ. հունիսին Վան ժամանած ռուս գիտնական ու հայագետ Ն. Մառի արշավախմբի աշխատանքներին մասնակցելիս, ապա ռուսական բանակի հուլիսյան նահանջից հետո՝ սեպտեմբերից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանելիս, 1918 թ. Էջմիածնի «Հայրիկյան թանգարան»-ի կառավարիչ, գիտնական ու բանասեր Գարեգին արք. Հովսեփյանի օգնական աշխատելիս, զբաղվել է Խրիմյան Հայրիկի կյանքի ու գործունեության մասին նյութեր հավաքելով: 1919 թ. եղել է Վաղարշապատում հրատարակվող ՀՅԴ Էջմիածնի շրջանային կոմիտեի օրգան «Արարատյան աշխատավոր» գյուղացիական թերթի խմբագրական կազմի անդամ: 1920 թ. Հ. Աճեմյանը հրատարակել է «Խրիմեան Հայրիկ: Ծննդեան հարիւրամեակի առթիւ. 1820–1920: Արծիւ-Հայրիկ-Պապիկ: Նուագող վշտից Հայրենեաց Հայոց» վերնագրով գրքույկը: Դրա կազմի վերջին էջի ներսի կողում գրված է. «ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ Է ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ (Անտիպ նիւթեր Հայրիկի մասին)» ժողովածուն: Զծավալվելով՝ նկատենք, որ 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո՝ ապրիլ-մայիսին, նա «թափառել է» Արագածի լանջերում, ապա հունիսի սկզբին անցել է Պարսկաստան՝ Թավրիզ: Խառնակ ժամանակներ էին, նամակում նշված ժողովածուն չի հրատարակվել. դրա նյութերը մեծապես օգտագործվել են 1929 թ. Թավրիզում Հ. Աճեմյանի հրատարակած «Հայոց Հայրիկ. «Նուագող Վշտից Հայրենեաց Հայոց», առաջին հատոր: Կենսագրություն» վերնագրով ստվարածավալ (856 էջ) գրքում:*

[1] *Նամակն առաջին անգամ հրապարակել է Հ. Բ. Աբրահամյանը (տե՛ս ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 202) աղճատված՝ բազմաթիվ վրիպակներով, տարընթերցումներով, բացթողումներով ու կրճատումներով: Թեև առաջաբանում (էջ 198) նշում է, որ «Մի շարք նամակներում կատարել ենք անհրաժեշտ կրճատումներ և լեզվական շտկումներ», սակայն անհասկանալի է մնում «անհրաժեշտ կրճատումներ» ասվածը (քանի որ նման ձևով վավերագիր-նամակ հրապարակելը, այն էլ՝ ակադեմիական ամսագրում, արտառոց երևույթ է, ստորև չծավալվելով՝ կանդրադառնանք դրանցից մի քանիսին): Հավելենք՝ խնդրո առարկա նամակն ամբողջությամբ 2010 թ. տպագրվել է Ստ. Զորյանի «Սրտի մտոք և հարգանոք» վերնագրով ժողովածուում (էջ 20–21)՝ մեկ-երկու բացթողումով ու, կարծում ենք, կետադրական անհարկի միջամտություններով: Բացի այդ, արձանագրված է, որ այն պահվում է ԳԱԹ-ում, սակայն նշված չէ ֆոնդն ու նամակի թվահամարը: Կազմողներին, ըստ ամենայնի, նաև հայտնի չի եղել, որ նամակն արդեն իսկ հրապարակվել է, այն էլ՝ աղճատված:*

նել իմ հայրենի կայարանում: Հայկի[2] հայտնելը[3] և իմ կայարան վազելը մեկ եղավ, բայց քեզ այնտեղ չգտա. ձեր գնացքը արդեն մեկնել էր: Որքան ուզում էի քեզ տեսնել և ինչ հիասթափություն! Հավանորեն Հայկը ուշ, դժվարությամբ գտավ մեր տունը, իբրև տեղին և գյուղին միանգամայն անծանոթ մարդ, և ես ուշացա[4]: Հավատա, Դավիթ ջան, ամբողջ օրը մի այնպիսի դրության մեջ եմ, կարծես մի թանկագին բան եմ կորցրել կամ մի ծանր հանցանք եմ գործել: Որպիսի լավ առիթ տեսակցության, և ինչ հիմար արդյունք: Սիմոն Հախումյանը[5] պատմեց, որ իբրև Հայաստանի դիվանագիտական[6] ներկայացուցիչ մեկնել ես դեպի Ղարաբաղ[7], բայց Ազրբեյջանի կառավարությունը քե՛զ չի ընդունել: Ցավում եմ, որ անհաջողության ես հանդիպել քո դիվանագիտական առաքելության հենց առաջին քայլին: Բայց մի վհատիր:

Այժմ ինձ հետաքրքրում է, թե ինչպե՞ս է առողջությունդ, ի՞նչ ես անելու այսուհետև և ի՞նչ մտադրություններ ունես: Արդյոք աջողվո՞ւմ է «Ազդարարի» հրատարակությունը, թե այդ հարցն էլ քնեց, ինչպես չատ ուրիշ հարցեր[8]: Իմացա՞, որ Մայիլյանները[9] ուզում են գնել (թե արդեն գնել են)[10]

---

[2] *Հայկի ով լինելը մեզ հայտնի չէ:*

[3] *Տպագրված է՝ հայտնվելը:*

[4] *Տպագրված չէ «իբրև»-ից «ուշացա» նախադասությունը. դրա փոխարեն դրված է բազմակետ:*

[5] *Ինքնությունը մեզ անհայտ է: Ըստ Ստ. Զորյանի «Սրտի մտոք և հարգանոք» ժողովածուի կազմողների՝ «Հավանաբար՝ Տիգրան Սեմյոնի Հախումյան – 1894–1973 թթ.: Գրականագետ, թարգմանիչ, թատերագետ, պրոֆեսոր: … Եղել է Ստ. Զորյանի մոտիկ ընկերներից» (էջ 288):*

[6] *Տպագրված է՝ դիվանագիտության:*

[7] *Ըստ 1919 թ. հունիսի 25-ին Դ. Անանունին տրված վկայականի (№ 2411)՝ նա եղել է Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացուցիչ «Շուշու հարցի առթիվ» (տե՛ս ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 111, թ. 7):*

[8] *Տպագրված չէ «Այժմ»-ից «հարցեր» հատվածը:*

[9] *Տպագրված է՝ Իմացիր:*

[10] *Նկատի ունի բաքվաբնակ մեծահարուստ ձեռնարկատերեր Մայիլյաններին՝ եղիա, Դանիել և Հովհաննես եղբայրներին: Ժամանակին նրանք հայտնի են եղել ազգօգուտ բոլորանվեր բարեգործությամբ: Կառուցել են Բաքվի օպերային թատրոնի շենքը, և այն կոչվել է նրանց անունով՝ Մայիլովի թատրոն: 1919 թ. սկզբներին իրենց նյութական միջոցներով ստեղծել են «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավախումբ» անվանումով կազմակերպություն, որը Հայաստանում պետք է որոշակի գործունեություն ծավալեր: Դրա ստեղծումը և նրա ձեռնարկած առաջին քայլերը լայն արձագանք են գտել ոչ միայն հայ հասարակայնության ամենատարբեր շերտերում: Մի շարք հայտնի հանգամանքների պատճառով, սակայն, Մայիլյան եղբայրների ֆինանսական հնարավորությունները պակասում են, և, ըստ այդմ էլ, արշավախմբի աշխատանքները նախ դանդաղում, ապա դադարում են: Արշավախմբի ստեղծման, նրա առջև դրված խնդիրների և նպատակների, կատարված աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Ա. Զ ա ք ա ր յ ա ն. Լևոն Լիսիցյանը Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին. – ՊՌՀ, 2001, № 3, էջ 277–285,* А. Г а з и я н. Интересный документ об экспедиции братьев Маилянов (1919 г.). – ИФЖ, 2008, № 2, с. 244–251.

«Մշակը» Երևան փոխադրելու նպատակով: Գիտեմ[11], «Մշակի» վիճակը, Լ. Քալանթարի[12] չնորհիվ, քեզ չէր հետաքրքրում, բայց հիմա պետք է որ հետաքրքրի: Որքան գիտեմ Մայիլյանները լուրջ մարդիկ են և կարող են ապահովել թերթը: Ապահով եմ, որ խմբագրի պաշտոնը չես մերժի, եթե առաջարկ լինի: Այս հարցերը չոչափում եմ նրա համար, որովհետև գրական գործը քեզ (ինչպես և ինձ) հետաքրքրում է ավելի, քան որևէ ուրիշ բան[13]:

Դավիթ ջան, հիմա մի խոնարհ խնդիր:

Նամակիս մի պատասխան գրիր և ասա այն բոլորը, ինչ որ պիտի ասեիր մեր հանդիպման ժամանակ և առհասարակ աչքի ընկնող նորույթ:

Իսկ եթե չուտով վերադառնալու ես, կուզեի, որ իջևաններ այստեղ և մի քանի օր մնայիր մեր տանը, այս հանգիստ ամառանոցում, այս բուրմունքներով լի ժամանակաշրջանում: Թեև ընդամենը մի ամիս է բաժանվել ենք իրարուց, բայց, հավատա՛, արդեն կարոտել եմ քեզ. կարծես մի տարի է անցել[14]:

Իսկ այն դեպքում, եթե ընդմիշտ մնալու ես Երևանում, ես էլ կուզեի սեպտեմբերից քեզ մոտիկ լինել: Թիֆլիսից սիրտս կտրվել է, և բացի այդ, այնտեղ այլևս մի սրտակից ընկեր չկա:

Հետո, Հայաստանի մայրաքաղաքում այդ ի՛նչ վայրենի բարքեր են տիրում. օրը մի ինտելիգենտ են ծեծում, առանց ամաչելու, այն էլ խմբագիրների!

Երևելի օրինակներ է տալիս մայրաքաղաքը գավառին!

Եթե մեր սիրելի Պետր Արտեմիչը (Զաքարյանը)[15] այդտեղ է, խոնարհ ողջույններ իմ կողմից: Բարևներ Խ. Սամուելյանին[16]:

Ողջ և գվարթ եղի՛ր:

Ողջույններով քո՝ *Ստեփան*[17]

Հասցես. Ղարաքիլիսա, Վորոնցովսկայա փ., 48. ինձ: Փոստը կանոնավոր է[18]:

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 35, թ. 1–2: Ինքնագիր:

---

[11] Տպագրված է՝ Գիտես:

[12] Նկատի ունի «Մշակ» հասարակական, քաղաքական, գրական թերթի այդ օրերի խմբագիր, թատերական գործիչ, ռեժիսոր Լևոն Քալանթարին (1891–1959):

[13] «Բան»-ից հետո դրված է բազմակետ. տպագրված չէ «Դավիթ ջան»-ից «նորույթ» պարբերությունները:

[14] «… անցել»-ից հետո դրված է բազմակետ. տպագրված չէ «Իսկ այն»-ից մինչև «Խ. Սամուելյանին» ծավալուն հատվածը:

[15] Խոսքը հրապարակագիր, ֆինանսիստ, քաղաքական գործիչ, Ազգային խորհրդի անդամ, ապա Հայաստանի խորհրդարանի ավագ քարտուղար, ՀՍԴԲԿ-ի հիմնադիրներից Պետրոս Արտեմի Զաքարյանի (1866–1922) մասին է:

[16] Խաչիկ Սամուելյան (1873–1940) – իրավագետ, պատմաբան, խմբագիր, ազգագրագետ, բանագետ, մանկավարժ, թարգմանիչ: ՀՍԴԲԿ-ի հիմնադիրներից է: 1921–1922 թթ. եղել է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական կոլեգիայի անդամ, նախագահ, տպարանի վարիչ: 1924 թ.՝ նորաստեղծ ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվի վարիչ:

[17] Ստեփան Զորյան (1889–1967) – գրող, ՀՍԴԲԿ-ի հիմնադիր անդամ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս:

[18] Տպագրված չէ «Հասցես» բառից «կանոնավոր է» տողը:

– № 13 –

Մոսկվա
19 հոկտ<եմբերի> <19>20թ.[1]

Սիրելի Դավիթ!

Մի կարճառոտ նամակ էլ Շանթին[2] *միջոցով եմ ուղարկել քեզ կցելով մի չարք հատվածներ սովետական լրագիրներից, մի օրինակ հազվագյուտ В. Ч. К.-ի կարմիր գրքից*[3] *և մի օրինակ էլ իմ թարգմանությամբ այստեղ լույս տեսած Օսկար Ուայլդի «Հեքիաթներ» թարգմանությունից*[4]*:*

Այնուհետև ուղարկեցի քեզ իմ «Ռուսական հեղափոխությունը» սերիայից չորս պատկեր, քո ընտրությանը թողնելով տպագրության տեղը:

Ձգիտեմ այս բոլորը ստացե՞լ ես, թե ոչ[5]*:*

Գրաբերս իմ կնոջ եղբայրն է և քո հայրենակիցը: Շատ աչքաբաց տղա է և տեղիս, ռուսական անցքերին լավ տեղյակ և մարքսիզմի բովով անցած: Հանձնարարելով քեզ՝ կարծում եմ, որ կարող կլինես նրանից չատ բան իմանալ:

Սրա միջոցով ուղարկեցի իմ նախկին աշխատասիրություններից մեկը՝ «Մանուկ Հայաստանը», որբերի բանաստեղծական գրականության մասին «Գեղարվեստին» հանձնելու համար: Եթե ինչ պատճառներով անհարմար գտավ «Գեղարվեստին» տալու, խնդրել եմ բերի Երևան՝ քեզ հանձնելու համար: Թերևս ավելորդ չգտնես «Կոոպերացիայիդ»[6] *մեջ գետեղելու:*

---

[1] *Նամակը գրվել է «Խմբագրություն «ԳԱՐՈՒՆ» գրական-քննադատական ալմանախների» ձևաթղթի վրա:*

[2] *Խոսքը գրող, մանկավարժ, հասարակական գործիչ, ՀՀ խորհրդարանի անդամ և նրա փոխնախագահ Լևոն Շանթի (Լևոն Սեղբոսյան, 1869–1951) մասին է: 1920 թ. գլխավորել է Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցելու համար Մոսկվա մեկնած Հայաստանի առաջին հանրապետության պաշտոնական պատվիրակությունը:*

[3] Красная книга ВЧК, т. 1. Под ред. и с предисл. П. Макинциана. М., 1920.

[4] *Լույս է տեսել 1920 թ.:*

[5] *Նկատենք, որ Դ. Անանունը ստացել և «Հայաստանի կոոպերացիա»-ում Կ. Միքայելյանի գործերից տպագրել է «Հակահեղափոխականները» (1920, № 18, 30 սեպտեմբերի, էջ 757–759) և «Հրաժեշտ» (1920, № 19, 15 հոկտեմբերի, էջ 799–801) վերնագրերով պատմվածքները:*

[6] *Նկատի ունի «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը: Լույս է տեսել 1919 թ. հունվարից 1920 թ., նախ որպես Երևանյան նահանգի կոոպերատիվների միության, ապա՝ Հայաստանի կոոպերատիվների միության օրգան, հիմնադիր խմբագիրն էր ՀՅԴ գործիչ, հրապարակագիր Սիմոն Վրացյանը (1882–1969): 1919 թ. օգոստոսից երկշաբաթաթերթը հրատարակել է խմբագրական կոլեգիան, բայց փաստացի խմբագիրը եղել է Դ. Անանունը, իսկ քարտուղարի պաշտոնը վարել է Ստ. Զորյանը: Հանդեսի բնաբանն է՝ «Միությունը ուժ է»: Տպագրվել է Էջմիածնում, խմբագրությունը գտնվել է Երևանում: Այդ բազմաժանր պարբերականում արծարծվում են տնտեսական, հողային, սոցիալական բնույթի խնդիրներ, բերվում են վիճակագրական տվյալներ Հայաստանում տնտեսական տեղաշարժերի, կոոպերացիայի տարբեր ճյուղերի զարգացման վերաբերյալ: Հրապարակախոսական-խմբա-*

Այստեղից գրելու այնքան նյութ կա, որ չես իմանում ինչից սկսես և ինչով վերջացնես:

Կանգ կառնեմ երկու խոշոր երևույթի վրա, որ տեղի ունեցան մոտ ժամանակներս:

Շանթի անհաջող առաքելությունից հետո մենք այստեղ պատիվ ունեցանք մեր մեջն ունենալու Հայաստանի դիպլոմատիական ներկայացուցչին: Թվում էր, թե Հայաստանի ու իր գաղութի մեջ պիտի ստեղծվեր այդ քայլից հետո շատ սերտ հարաբերություն: Գոնե այդպիսի տրամադրություն կար, և առհասարակ տեղական ինտելիգենցիան մինչ այդ մեծ հետաքրքրություն էր ցույց տալիս դեպի մեր երկրի անցուդարձը: Անցյալ գարնան մեր հրավիրած աշխատավոր ինտելիգենտների միտինգին մոտ 200 հոգի կար, ըստ մեծի մասին մասնագետներ: Սակայն այժմ այդ հետաքրքրությունն ու չահագրգռությունը քանի գնում մարում է չնորհիվ այն մեկուսացնող քաղաքականության, որ բերավ այստեղ Հայաստանի դեկեգացիան և որի չարունակողն այժմ դառավ միսիան: Որտեղից որ է ճարվեցին մի քանի կիսակուլտուրական դաշնակցականներ և Հայաստանն ու իր գործերը ղառան նրանց սեփականությունը, մտցվեց մի աններելի խարդախանություն, կուսակցական մենաշնորհ: Գուցե Հայաստանում կուսակցական դիկտատուրան պակասավորություն չունի, բայց այստեղ, իհարկե, քաջալերվել չի կարող, որովհետև այստեղ այդ կուսակցության դեմ են տրամադրված երևի գաղութի 99 %-ը: Հայաստանն ու իր անկախությունը այդ մեծամասնության համար դառնում է մի մասնակի, խմբակցական և օտար երևույթ: Այդ այն ժամանակ, երբ հարկավոր է բոլոր ուժերի մոբիլիզացիա մեր մանուկ պետական ապարատը կարգավորելու և երկիրը չինարարելու համար:

Երկրորդ նշանավոր երևույթը մեր այստեղի գաղութում Լազարյան ճեմարանի[7] մադրասայի վերածվելն է: Այո՛, չզարմանաս, այժմ նա պիտի կոչվի Центральный Институт живых Вост<очных> языков Восток … *(մեկ բառ անհասկանալի է – Ա. Ջ.) մի նոր ակտ է սա:*

գրական աշխատանքի հսկայական փորձ ունեցող Դ. Անանունի ջանքերով «Հայաստանի կոոպերացիա»-ն էլ ավելի հետաքրքիր բովանդակություն է ստանում, երբ նա դիմում է հայ մտավորականության նշանավոր դեմքերին՝ պարբերականին աշխատակցելու խնդրանքով: Ստեղծվում է «Գրական բաժին», որն «առանձնանում է ինչպես տպագրվող գրողների հեղինակավոր կազմով. Հովհ. Թումանյան, Վ. Տերյան, Վրթ. Փափազյան, Լեո, Ստ. Զորյան, Ե. Չարենց, Կ. Միքայելյան, Գ. Քալաշյան, Վեսպեր… +, Դ. Դեմիրճյանի,– այնպես էլ հրապարակախոսական ընդհանուր (ներառյալ լեզվական) մակարդակով: Ըստ այդմ, օրինականորեն կարելի է այն համարել «Նորք» հանդեսի արժանավոր նախորդը Հայաստանի հողի վրա», – իրավացիորեն նկատելի է անվանի գրականագետ Ալմաստ Զաքարյանը (Ալ. Զ ա ք ա ր յ ա ն. Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, գիրք 1, Երևան, 1997, էջ 706): Երկշաբաթաթերթի էջերում ամենից հաճախակի տպագրվում են Դ. Անանունի հոդվածները և նյութերն ամենատարբեր թեմաներով՝ սկսած հողային խնդրից ու կոոպերատիվներից, վերջացած Հայկական հարցով, միջազգային քաղաքականության հիմնախնդիրներով, հասարակական-քաղաքական, ազգային-կուսակցական, գրական-մշակութային բնույթի բազում հարցերով:

[7] Հայագիտական ու արևելագիտական ուսումնական և գիտական խոշոր կենտրոն: Հիմնադրվել է 1815 թ. Մոսկվայում, մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ ու միջոցներով:

Տերյանի ժամանակ[8] *պրոֆ. Մառի*[9] *մշակած ծրագրի համաձայն փակվեցին միանգամայն անգործնական նախկին* специальные курсы *ու վերածվեցին* Историко-филологический и этнографический переднеазиатский Лазаревский институт-*ի, ուր պիտի ուսումնասիրվեին առաջավոր Ասիայի ազգությունների լեզուն, պատմությունն ու գրականությունը, առաջնակարգ տեղ տալով Հայաստանին:*

Այնուհետև Մակինցյանի ժամանակ[10] *այդ ինստիտուտը դարձավ* Армянский институт, *պահպանելով իր նախկին* преднеазиатский *ծրագիրը:*

Գիմնազիական մասը փակվեց ու դրա տեղը բացվեց նույն դասընթացները, այս անգամ միայն հայերեն լեզվով: Մի ամբողջ տարի գոյություն ունեցավ այդ գիմնազիական մասը, ուր ուսուցչական խորհրդի նախագահ լինելու պատիվը ունեցա: Այնուհետև, չնորհիվ Հ<այկական> Կոմիսարիատում[11] *տեղի ունեցող մի շարք ինտրիգների ու տարաձայնության, այդ դասընթացները փակվեցին և այդպես էլ փակված մնում են մինչև օրս: Լիցեական մասը հետզհետե քարշ է տալիս իր գոյությունը:*

Այժմ Бюро Востока-*ն գտնելով, որ այդ հաստատությունից ոչ ոք չի օգտվում, Սուլթան-Գալիևի*[12] *ձեռներեցությամբ որոշել է փոխել Արևելյան կենդանի լեզուների ճեմարանի: Սեպտ<եմբերի> 7-ին արդեն դուրս է եկել դեկրետը և ճեմարանի համար նշանակված է արդեն թուրք կոմիսար իր թուրք օգնականով:*

Այդ ինստիտուտի խնամքին է հանձնվում մուզեյը, գրադարանը և մյուս հնություններ: Այդ վերակազմության առանձին չահագրգռություն են ցույց տալիս ճեմարանի նախկին երկու մահմեդական պրոֆեսորները, որոնք Մառի նոր կանոնադրությունից հետո դասավանդողների ցանկը չմտան, իբրև պատշաճավոր պատրաստություն չունեցող անձինք: Այժմ դրանք ինչ ասել կուզի, որ նոր մադրասի արժանի մոլլաները կլինեն:

Հայ կոմունիստները չչմել ու չվարել են: Այդ կարգադրությունը բեկանելու հույս չունին և երևի ստիպված կլինեն հաշտվել կատարված փաստի հետ: Կասկածներ կան, որ Բյուրոն ճեմարանի, իր տեսակի մեջ միակ, գրադարանը կարող է փոխադրել Բաքու, Ադրբեջանի համալսարանին: Վաղվանից արդեն չինովնյությունը պիտի հանձնվի նոր տերերին[13]*:*

---

[8] *Նկատի ունի Վ. Տերյանի՝ ՌԽՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր Հայկական գործերի կոմիսարի տեղակալ աշխատած ժամանակահատվածը՝ 1917–1918 թվականները:*

[9] *Խոսքն արևելագետ, հայագետ, լեզվաբան Նիկողայոս Մառի (1864–1934) մասին է:*

[10] *Նկատի ունի Պողոս Մակինցյանի՝ ՌԽՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատին առընթեր Հայկական գործերի կոմիսարի տեղակալ (1918–1919 թթ.), ապա՝ ՌԽՖՍՀ լուսավորության ժողկոմատի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ (1919–1920 թթ.) աշխատած ժամանակահատվածը:*

[11] *Խոսքը ՌԽՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատին առընթեր Հայկական գործերի կոմիսարիատի մասին է:*

[12] *Սուլթան-Գալիև Միրսաիդի (1892–1940) – մուսուլման քաղաքական գործիչ, ՌՍԴԲԿ (բ)-ի անդամ, Թաթարստանի Հանրապետության հիմնադիրներից: Մեղադրվել է* «национал-уклонизм»*-ի մեջ ու գնդակահարվել:*

[13] *Նկատենք, որ Կ. Միքայելյանի հաղորդած այս վերջին տեղեկությունները, բարեբախտաբար, տեղի չունեցան. տե՛ս ստորև բերվող № 15 նամակը:*

Այսքանն այստեղի մասին:

Այժմ գրիր դու, քո մասին, քո կուսակցության գործունեությունից[14] ու անելիքներից: Այստեղ քեզանով և քո կուսակցությամբ հետաքրքրվող բավականին մարդիկ կան:

Ես այդպես էլ չկարողացա թույլտվություն ստանալ Հայաստան գալու: Այստեղ, այս ձմեռ, երևի մառազմի[15] ենթարկվելով, բոլորովին կփտենք:

Գրիր:

Ընկերական ողջույններով՝ Կարեն <Միքայելյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 82, թ. 6–9: Ինքնագիր:

– № 14 –

<Անթվակիր>[1]

Սիրելի Դավիթ!

Մոտիկ ապագայում քեզ հետ հանդիպելու հույսս դեռ չեմ կորցրել: Երևի դեռ կհաջողվի մտնել Երևան, տեսնել քո երբեմն պայծառ դեմքը, այժմ, ավա՜ղ, այնքան պղտորված ու մթագնած հոգուդ խորքերում հուզված ներքին հայի բնագրից ... Ինչևիցե: Սկյութացոց աշխարհում[2] սովորություն է խաչ տնկել դերեզմանների վրա, և ոչ՝ թքել ու անցնել նրանց վրայից ... ինձ մնում է այդ հարցում ևս հետևող լինել Հյուսիսի առաքինության, քանի որ, մանավանդ, դեռ չեմ կորցրել քո հարության աղոտ հույսը ...

Այդ իսկ հույսով է, որ տարիներ չարունակ հետս քաշքշելով Աստրախանում թողած քո ձեռագիրներն ու թղթերը, բերել, հասցրել եմ Աղստաֆա «և զքոյսդ ի քոյոց» քեզ մատուցանելու դիտումով: Եթե հաստատվելու լինենք Երևանում բոլշևիտական մնացած «անձեռնմխելի» կապոցների հետ ի միասին – որ այնքա՜ն մտատանջություն են պատճառում Հայաստանի ներկայիս տերերին – Արարատյան աշխարհ կտեղափոխենք նաև այդ «կասկածելի» բագաժը: Հակառակ դեպքում անկորուստ ետ կտանենք, գուցե Բաքու, Հակոբին[3] հանձնելու, գուցե նույնիսկ՝ Մոսկվա, Լազարյան ճեմարանում պահ տալու համար:

---

[14] *Խոսքը ՀՍԴԲԿ-ի մասին է, որի հիմնադիրներից ու ղեկավարներից էր Դ. Անանունը: Նա նաև եղել է ՍԴԲՀԿ-ի հիմնադիր-գաղափարախոսներից:*

[15] *Հյուծանք, լիակատար անկարողություն:*

[1] *Ելնելով նամակի բովանդակությունից՝ կարծում ենք, որ այն գրվել է 1920 թվականին:*

[2] *Նկատի ունի Ռուսաստանը: «Սկյութացոց երկիր». Ռուսաստանն այդպես է անվանել նաև Դ. Անանունը: «Հանդիպումներ Վ. Տերյանի հետ» հուշագրության մեջ նա գրում է. «Վահանը մեռավ Սկյութացոց երկրում: Այդպես էի անվանում ես Ռուսաստանը մեր մտերիմ զրույցների մեջ» (տե՛ս «Հայաստանի կոոպերացիա», 1920, № 13, հուլիս 15, էջ 525):*

[3] *Հակոբը Դ. Անանունի համագյուղացին էր:*

Փոխադարձաբար չմոռանամ, համենայն դեպս, քո բարձր հոգատարությանը հանձնարարելու իմ ձեռագիրներն ու գրքերը, որ պահվում էին Սենիկ Տեր-Հակոբյանի մոտ[4]:

Ջերմ բարևներ քո Աշոտից <Հովհաննիսյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 76, թ. 9: Ինքնագիր:

– № 15 –

Մոսկվա
1 հուլիսի <19>21 թ.

Սիրելի Դավիթ,

Երկու նամակ էլ հանգուցյալ դաշնակցական կառավարության ժամանակ եմ ուղարկել, բայց քեզանից մի տող գրության անգամ չարժանացա:

Սաստիկ ուզում էի գալ Հայաստան և արդեն համարյա դուրս էի գալիս, բայց Լազարյան ճեմարանը խանգարեց:

Այդ հիմնարկությունը մի տարի թրքանալուց և վանդալական ավերածության ենթարկվելուց հետո, նորից դառնում է հայկական: Այս քանի օրս երևի դեկրետով այդ կհայտարարվի: Ողջ շինությունը պիտի կոչվի «Հայաստանի Կուլտուրայի Տուն»[1], ուր բացի դպրոցից և ինստիտուտից, արդեն կենտրոնացած են մի շարք հայկական կուլտուրական հիմնարկություններ:

Սիրելի Դավիթ, նեղություն չլինի, գրաբերիս տուր բերի «Հայաստանի կոոպերացիայի» ողջ կոմպլեկտը: Երևակայիր, բացի 2 համարից, այստեղ այլ համարներ մեր ձեռքը չի ընկել: Եվ եթե կան ուրիշ հետաքրքրական գրական նորություններ՝ ուղարկիր, «Հայկոոպը» մանավանդ և անպատճառ:

Գրիր ի՞նչ ես անում այժմ:

Ընկերական ողջույններով՝

Կարեն <Միքայելյան>

ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 102, թ. 90: Ինքնագիր:

---

[4] *Խոսքը բանասեր, մանկավարժ, 1921 թ. փետրվարի 2-ից էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտական կոլեգիայի անդամ, միաժամանակ նաև մատենադարանի վարիչ Սենեքերիմ Տեր-Հակոբյանի (1881–1937) մասին է:*

[1] *Կ. Միքայելյանը եղել է այդ տան տեսուչը (տե՛ս* Р. Багдасарян. *Նշվ. աշխ., էջ 193):*

– № 16 –

№ 1086
3 հոկտեմբերի 1921 թ.[1]

Ընկ<եր> Դավիթ Անանուն

Սորանով Դուք հրավիրվում եք Վաղարշապատի II աստիճանի դպրոցում ընդ<հանուր> պատմության ուսուցիչ:
Խնդրում եմ այսօրվանից անցնեք գործի:

Սոց<իալական> դաստիարակ<ության>
Ենթաբաժնի վարիչ՝ ստորագրություն
Քարտուղար՝ ստորագրություն[2]

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 112, թ. 7: Ինքնագիր:

– № 17 –

№ 74
Էջմիածին
5 հոկտեմբերի 1921 թ.[1]

Գիտական աշխատակից
ընկ. Դավիթ Անանունին

Հայտնում եմ Ձեզ ի գիտություն, որ Գիտական կոլեգիան իր երեկվա նիստում լսելով Գավհեղկոմի լուսաբաժնի 3/X № 1091 գրությունը Ձեզ Վաղարշապատի II աստ<իճանի> դպրոցում պաշտոնավարելու թույլտվություն տալու մասին՝ որոշեց արտոնել Ձեզ դասեր ունենալ հիշյալ դպրոցում:

Գիտնական քարտուղար՝ Ե. Տեր-Մինասյան[2]

ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ.11: Ինքնագիր:

---

[1] *Գրությունը գրված է ՀՍԽՀ Էջմիածնի գավառի Հեղկոմի ժողովրդական լուսավորության բաժնի ձևաթղթի վրա:*
[2] *Ստորագրություններն անընթեռնելի են:*
[1] *Գրությունը գրված է ՀՍԽՀ Լուսժողկոմատի գիտական ինստիտուտի գիտնական քարտուղարի ձևաթղթի վրա:*
[2] *Երվանդ Տեր-Մինասյան (1879–1974) – բանասեր, պատմաբան, բառարանագիր: 1921 թ. փետրվարի 2-ին նշանակվել է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի գիտքարտուղար, սեպտեմբերի վերջին միաժամանակ նաև՝ «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի» տարեգրքի խմբագիր:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

– № 18 –

Ղարաքիլիսա
5 դեկտեմբերի 1921 թ.

Սիրելի Դավիթ[1],

Ջնեղանաս, որ նամակիդ այսքան ուշ եմ պատասխանում: Պատճառն այն է, որ ստացա մի քանի օր ուշացած և հետո, հարմար եկող չկար, և առհասարակ եկող չի լինում դեպի Էջմիածին: Սիրելիս, ես քեզ չեմ մոռացել, ինչպես կարծում ես: Ընդհակառակը, ամեն անգամ, երբ իմ հայացքը դառնում է դեպի Արարատյան աշխարհը, ես տեսնում եմ միայն քեզ, որ կանգնած ես բաց ճակատով ու բյուրեղե սրտով այդ երկրի խառնիճաղանջ ողորմելի թուչնի ծառերի մեջ: Կուզես հավատա, կուզես ոչ — ես սիրահարի[2] *պես ամեն օր հիշում եմ քեզ ... Բայց, թողնենք այս. դու ինձնից խոստովանություն չես ուզում: Իսկ թե ինչու՛ նամակ չեմ գրում, ճիշտն ասած, նամակ գրելը մոռացել եմ. հավատալ*[3] *չի գալիս, թե մարդիկ այժմ իրար նամակ են գրում: Այս խնդրում ես իսկ և իսկ այն դրության մեջ եմ, ինչ-որ Ջեկ Լոնդոնի «Կարմիր ժանտախտի» երեխաները, որ չեն հավատում իրենց պապին— այդ նախկին պրոֆեսորին, թե մի ժամանակ էապես երկաթուղի է եղել*[4] *... Փոստը՝ գլուխը քարը, գոն է եկող պատահել: Այդ էլ չկա:*

Սիրելիս, հիմա գանք կարտոֆիլին: Այս տարի մենք լավ կարտոֆիլ պիտի ունենայինք, եթե մեր ցանքսը չենթարկվեր գիշատիչների արշավանքին: Մի կողմ թողած մանր գողերին, հենց 30 փութ կարտոֆիլ գողացան տեղական «կարաուլնի բատալիոնի»[5] *զինվորները: Հաստատեցինք էլ, բռնեցին էլ: Բայց ո՛մից ես առնում: Քամուց՝ պահանջ: Ուրեմն, սիրելիս, ներողամիտ եղիր, որ կարտոֆիլ չեմ կարող ղրկել, որովհետև չունենք: Ախ, այդ, այդ կարտոֆիլը: Ով կմտածեր, որ դա, այդ արհամարհված «տոկսին»*[6] *մի օր կդառնա առաջնակարգ մթերք: Մեր գյուղացիները այժմ միաբերան օրհնում են դրա հնարողին: Իսկապես, օրհնվի Ֆրենսիս Դրիկը, որ գետնախնձոր մտցրեց Եվրոպա: Ասում են արկածախնդիրները միայն չարիք են բերում: Բայց ահա Դրիկը: Ով ավելի իրավունք ունի այժմ բարերար համարվելու, քան նա: Փույթ չէ, որ նրա անունը չգիտեն, բայց այսօր անթիվ չուրթեր նրան են օրհնում, քան «չորիկն չոզ-մոզ» ...*

Բայց, Դավիթ ջան, ներողամիտ եղիր, որ կարտոֆիլի փոխարեն ուղարկում եմ լոբի և ճու: Ջու շատ կուղարկեի, եթե հավերը հիմա չմրսեին: Շուտով բոլորը ճու կլինեն, և ես կաշխատեմ չուտ-չուտ ճու ղրկել:

---

[1] *Նամակն առաջին անգամ հրատարակվել է Ստ. Զորյանի «Սրտի մտոք և հարգանոք» վերնագրով ժողովածուում (էջ 38–39)՝ ստորև բերվող տարընթերցումներով և, կարծում ենք, կետադրական անհարկի միջամտություններով: Ի դեպ, արժանագրված է, որ նամակը պահվում է ԳԱԹ-ում, սակայն նշված չէ ֆոնդն ու նամակի թվահամարը:*

[2] *Տպագրվել է՝ սիրահարվածի:*

[3] *Տպագրվել է՝ հավատս:*

[4] *Նկատենք, որ Արամ Բուդաղյանի թարգմանությամբ «Ալ ժանտախտը» վերնագրով լույս տեսած այս վիպակում երեխաները՝ Էդվինը, Հոու-Հոուն և Նապաստակի Շրթունք մականունով տղան իրենց պապի՝ անգլիական գրականության պրոֆեսոր Ջեյմս Հովարդ Սմիթի հետ երկաթուղու հետ կապված խոսակցություն չեն ունեցել (տե՛ս Ջ ե կ Լ ո ն դ ո ն. Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 9, Երևան, 1969, էջ 625–688):*

[5] *Պահակային գումարտակ:*

[6] *Տպագրվել է՝ տակռին:*

Ես գալ կուզեի, և հատկապես իմ վեպի մասին խոսելիք շատ ունեմ քեզ հետ, բայց այստեղ արդեն ձյուն-ձմեռ է: Մինչև այժմ երեք անգամ ձյուն է եկել: Զզվելի երկիր է իսկապես: Դու որ ասում էիր, չէի համոզվում: Համենայն դեպս, գարնանը քեզ տեսնելու պիտի գամ, ինչ էլ ուզում է լինի: Վեպս էսօր-էգուց կվերջացնեմ. երևակայիր, մոտ 400 երես բան է դուրս գալիս: Շատ բաների մասին քո կարծիքները կուզեի իմանալ[7]: Ես մինչև հիմա ամենաթեժևամիտ գրողն եմ եղել Հայաստանում, բայց այժմ ուրիշ ապրումներ կան իմ հոգում ... Մի խոսքով, կտեսնվենք-կխոսենք:

Առայժմ ողջ եղի՛ր: Բարևիր ազնիվ ծանոթներին, ի միջի այլոց, Կարապետ Մելիք-Օհանջանյանին[8] և մեր սիրելի և խիզախ Կարապետին[9]:

Շատ բարևներով՝ քո Ստեփան <Զորյան>

ԳԱԹ, Դ. Անանունի ֆ., թիվ 38, թ. 5–6: Ինքնագիր:

---

[7] *Վեպը գրելու մասին Ստ. Զորյանը դեռևս 1921 թ. հուլիսի 17-ին Դ. Անանունին Ղարաքիլիսայից գրած նամակում մասնավորապես հայտնում է. «... սկսել եմ մի վեպ, որ մտադիր եմ այս տարի վերջացնել: «Կարմիր հորձանքը» (այս վերնագիրն ունի վեպս առայժմ) բաղկացած կլինի երկու մասից: Նյութը մեր ժամանակի անցքերն են: Կան շատ զավեշտական և տխրալի երևույթներ, որոնց միասին ականատես ենք եղել այդտեղ (Երևանում – Ա. Զ.): Մեջը կան ամեն դասի ու հայացքի մարդիկ, վեճ, կռիվ, կրակ, մահ ... եթե հաջողեցի գրել այն, ինչ ցլխումս կա – լավ բան կլինի կարծում եմ» (տե՛ս Ստ. Զ ո ր յ ա ն. Երկերի ժողովածու: 12 հատորով, հ. 4, Երևան, 1980, էջ 612–613): Ի դեպ, այս նամակն առաջին անգամ հրապարակել է Հ. Բ. Աբրահամյանը՝ կրճատումներով ու տարընթերցումներով (տե՛ս ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2001, № 2, էջ 203–204): Իսկ նամակն ամբողջությամբ տե՛ս և վերջինիս հետ համեմատիր Ստ. Զորյանի «Սրտի մտոք և հարգանոք» ժողովածուում (էջ 36–37): Նաև նկատենք. արձանագրված է, որ այն պահվում է ՀԱԱ-ում, սակայն նշված չէ ֆոնդը, ցուցակը, գործը: Ժողովածուի կազմողները, ամենայն հավանականությամբ, տեղյակ չեն եղել, որ նամակը նախկինում հրատարակվել է, այն էլ՝ աղճատված, քանզի այդ իրողությունը կարձանագրեին: Զծավալվելով՝ նշենք, որ Զորյանը վեպը հետագայում վերնագրել է «Ծանր ժամանակներ», ապա՝ «Ուղիներ», այնուհետև՝ «Քսաներեք թիվը», իսկ ամբողջական հրատարակելիս դրել է «Ամիրյանի ընտանիքը» խորագիրը: Վեպի ստեղծագործական պատմության փուլերի վերաբերյալ մանրամասն տե՛ս Ստ. Զ ո ր յ ա ն. Երկերի ժողովածու, հ. 4, էջ 612–617: Երկն առաջին անգամ՝ 1963 թ., հրատարակելիս հեղինակը «Երկու խոսք»-ում գրում է. «Ամիրյանի ընտանիքը», որ առաջ կրում էր «Քսաներեք թիվը» վերնագիրը, ես գրել եմ 1921 թ. աշնանը՝ Հայաստանի քաղաքացիական կռիվների անմիջական տպավորության տակ, սեպտեմբերից մինչև դեկտեմբերի վերջը» (Ստ. Զ ո ր յ ա ն. Երկերի ժողովածու: Տասը հատորով, հ. 8, Երևան, 1963, էջ 5):*

[8] *Խոսքը բանասեր, հայագետ-արևելագետ, թարգմանիչ, հետագայում ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի (1893–1970) մասին է: 1921 թ. ընդմիջումներով եղել է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար և գիտական կոլեգիայի նախագահ:*

[9] *Կարապետ Պողոսի Հովհաննիսյան (1890–1940) – տնտեսագետ, իրավաբան: «Ծնվել է Արտաշատում: Ստ. Զորյանի մոտիկ ընկերներից է եղել. երբեմն համատեղ կատարել են խմբագրական աշխատանքներ: Նրա բնակարանում (Երևան, Գնունի 37) երկար ժամանակ բնակվել է Զորյանը: Ենթարկվել է կոմունիստական բռնաբարքների և սպանվել» (Ստ. Զ ո ր յ ա ն. Սրտի մտոք և հարգանոք, էջ 290–291):*

– № 19 –

Երևան
12 մարտի 1923 թ.[1]

Սիրելի Սահակ[2]*,*

Քանի օր առաջ քեզ պատվիրած նամակ եմ գրել Թանգարանի Հեղափոխության բաժնի կարիքների մասին: Այժմ կրկնում եմ նույնը: Պետերբուրգի նախկին ժանդարմական վարչության մեջ պահվում են հայ անցեգար թերթերի կոմպլեկտները, թռուցիկներ, գործիչների լուսանկարներ, զանազան զեկուցումներ հայ հեղ<ափոխական> շարժման մասին: Աշխատիր այդ բոլորը ստանալ և մեզ ուղարկել: Աշխատիր նաև Սենատից ստանալ Դաշնակցության գործը իր բոլոր իրական (вещественное) *ապացույցներով, նախնական քննության ու դատավարության արձանագրություններով: Այս ուղղությամբ արա՝ ինչ հնարավոր է: Մասնավորապես ինձ համար խնդրել էի Պլեխանովի*[3] *բոլոր գործերի մի կոմպլեկտ, ինչպես և* «Общест<венное> движение в России в начале 20-го века» *հավաքական գործը: Այժմ հիշեցնելով՝ խնդրում եմ ձեռք բերես ինձ համար և հետևյալ գրքերը ազգային հարցին վերաբերյալ.*

1) Формы национального движения в соврем<енных> государствах, редакция Кастелянского, 1910 г.

2) Отто Бауэр. «Национальный вопрос и соц<иал –демокр<аты>»

3) Рудольф Шпрингер (Карл Реннер). «Национальный вопрос»

4) Протоколы брюннского партейтага. *Այս գրքերից կարող են լինել բուկինիստների մոտ, մասնավոր գրադարաններում:*

Ողջ եղիր՝ Քո Դավիթ

ԳԱԹ, Հ. Կուսիկյանի ֆ., № 1296, 1 թ.: Ինքնագիր:

---

[1] *Նամակը գրվել է «Հ.Ս.Խ.Հ. Պետական կենտրոնական Թանգարան»-ի ձևաթղթի վրա. կարմիր գրիչով մակագրվել է՝* «Кусикян»*-ին: Առաջին անգամ որոշ տարբերություններով, առանց սկզբնաղբյուրի հղման՝ «Դավիթ Անանունի նամակագրությունից» վերնագրի տակ հրապարակվել է ՊԲՀ-ում (տե՛ս 1984, № 1, էջ 175–176): Խմբագրության կողմից գրված հինգտողանոց խոսքում ասվում է. «Նամակները հրատարակության է ներկայացրել հանգուցյալ բանասեր Գոհար Ազնավուրյանը, որը, ցավոք, չկարողացավ գրել նախատեսված ծանոթագրություններ» (էջ 171): Այս պարզաբանումը նաև վերաբերում է ստորև տպագրվող № 24 նամակին:*

[2] *Նամակն ուղղված է պետական-կուսակցական գործիչ Սահակ Տեր-Գաբրիելյանին (1886–1937): 1921 թ. նա ՀԽՍՀ-ի լիազոր ներկայացուցիչն էր ՌԽՖՍՀ-ում (Մոսկվա): Անհատի պաշտամունքի զոհերից է:*

[3] *Գեորգի Վալենտինովիչ Պլեխանով (1856–1918)–ռուս քաղաքական նշանավոր գործիչ, մարքսիզմի տեսաբան ու քարոզիչ:*

– № 20 –

№ 2108
Երևան
11 սեպտ<եմբերի> 1923 թ.[1]

Պետական թանգարանի աշխատակից
ընկ. Դավիթ Անանուն

Դատարանը խնդրում է Ձեզ չորեքշաբթի սեպտեմբերի 12-ին առավոտյան ժամը 9-ին գալ դատարան որպես ժողատենակալ դատարանի կազմը լրացնելու համար:

Ներկայությունը պարտադիր է:

Դատարանի անդամ *Հ. Ամիրխանյան*
Քարտուղար *ստորագրություն*[2]

ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 105, թ. 19: Մեքենագիր:

– № 21 –

Երևան
23 հունիսի 1924 թ.

Մեծահարգ պարոն
Հ. Խաչմանյան[1]*,*

Ձեր դիմումի համաձայն ուղարկում եմ «երկու կուլտուրական գործիչ» խորագրով հոդված[2]*: Չկարողացա ավելի արդիական նյութ ուղարկել: Եթե*

---

[1] *Գրությունը մեքենագրված է ՀՍԽՀ հանրապետական դատարանի ձևաթղթի վրա:*

[2] *Ստորագրությունն անընթեռնելի է:*

[1] *Հակոբ Խաչմանյանի (1888–1968) մասին խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում հիշատակություն չկա: Եղել է ՀՅԴ գործիչ, մանկավարժ, հրապարակագիր, «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթի «Մեզմե մեկը» բաժնի երկարամյա վարիչ, «Ամերիկահայ հանրագիտակ տարեգրքի» (Բոստոն) հրատարակիչ: Նրա մասին մանրամասն տե՛ս Հ. Խ ա չ մ ա ն յ ա ն. Մոռացված էջեր (նամակներ): Կազմող և ծանոթագրող՝ Մ. Մ. Խաչատրյան, Երևան, 2022:*

[2] *Հոդվածը, որ Դ. Անանունը գրել է 1924 թ. հունիսի 21-ին, 1925 թ. լույս է տեսել «Ամերիկահայ հանրագիտակ տարեգրքում» (էջ 118–137). երկու կուլտուրական գործիչներն են՝ բժիշկ Դավիթ Հարությունյան Ռոստոմյանցը (1820–1869) և Մովսես Զոհրապյան Զոհրապյանցը (1816–1874): Հոդվածի առաջաբանում Դ. Անանունը գրում է. «... ընթերցողին ծանոթացնում ենք երկու հայ մտավորա-*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

անհրաժեշտ է, որ հոդվածի նյութ եղող մտավորականների լուսանկարները նույնպես ուղարկեմ Ձեզ – գրեցե՛ք: Գուցե կարողանամ մի արդիական նյութ էլ պատրաստել, բայց ստուգապես չեմ խոստանում: Ձեր հասցեն հաղորդել եմ մի քանի գրողների ևս: Հավանորեն նրանք էլ արձագանքեն Ձեր հրավերին: Ես կկամենայի, որ հոդվածիս փորձը ուղարկեք ինձ:

Հասցես՝ Երևան, Հեղափոխության թանգարան:

Ամենայն հարգանքով՝
Դ. Անանուն

ԳԱԹ, Հ. Խաչմանյանի ֆ., № 334, թ. 1: Ինքնագիր:

– № 22 –

Երևան
21 օգոստոսի 1924 թ.

Մեծահարգ պարոն
Հ. Խաչմանյան,

Ձեր դիմումին ի պատասխան ուղարկում եմ երեք լուսանկարներ – 1. Դավիթ Ոստոմյանի, 2. Մովսես Զոհրապյանի և 3. իմը[1]: Լուսանկարս հինն է, հանված 1911 թ.: Նորը չունեմ: Ունենալը չդայլությունն կլինի: Գոհ եղեք ունեցածովս: Դժբախտաբար չեմ կարող Համալսարանի և Թանգարանի վերաբերյալ լուսանկարներ ուղարկել Ձեզ: Թանգարանը չունի: Համալսարանի վերատեսուչը այժմ այստեղ չէ: Ուշ կվերադառնա ամառանոցից: Դարձին դիմում կլինի իմ կողմից:

Այժմեական նյութ դժբախտաբար չեմ կարող ուղարկել Ձեզ: Ես դարձյալ հիշեցրի մի քանի գրողների և հաղորդեցի Ձեր հասցեն: Թերահավատությամբ են վերաբերում: Կարող է պատահել, որ մեկը-երկուսը մի բան ուղարկեն:

Կամենում եմ մի խնդրի առիթով ինքս Ձեզ նեղություն պատճառել: Բանը ահա ինչումն է. ես պատրաստ ունեմ իմ աշխատության («Ռուսահայերի հասարակական զարգացումը») երրորդ հատորը: Տպագրված այդ գործը կլինի 480 էջ (էջում 38 տող, տողում 50 տառ): Ձեռագիրս հանված է գրամեքենայով, ուրեմն դյուրընթեռնելի է: Հարցնում եմ Ձեզ. կարո՞ղ է հրատարակիչ գտնվել Ամերիկայում իմ այդ գործի համար: Հարկավ՝ հրատարակիչը իր վրա է առնում բոլոր ծախքերը (թուղթ, տպագրություն) և վայելուչ հոնորար է

կանների կյանքի ու հասարակական տքնության հետ, մտավորականների, որոնք Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության հիմնադիրների մեջ գլխավորներն էին և որքան էլ համեստ, բայց նկատելի լուսատուներ էին նախորդ դարի վաթսունական թվականների հայ միջավայրում» (էջ 120):

[1] Խնդրո առարկա լուսանկարները տեղադրվել են վերոհիշյալ հոդվածում:

վճարում ինձ՝ հեղինակիս: Հաղորդում եմ Ձեզ նաև այն, որ աշխատությունս զբաղվում է ռուսահայ իրադարձություններով, նրանց լուսաբանությամբ և քննությամբ՝ նկատի ունենալով 1901–1918 տարիների ժամանակաշրջանը: Իմ գործի մեջ ես անաչառ եմ, թեև սա ենթակայական հասկացողություն է: Համենայն դեպս ինձ փրկում է իմ պատմահայեցողությունը – մարքսիզմը: Անաչառ լինելով՝ գործս խոստովանում է որոշ դեմքերի ու հոսանքների դրական չանքերը, բայց և անխնա դատափետում նրանց պատմական խոշոր սխալները: Մասնավորապես քննության եմ առել և դատապարտության խոսք ասել Հայկական հարցի շուրջը տարված քաղաքականության, չեմ խնայել կամավորական շարժումը և բնականաբար Հ. Հ. Դաշնակցությանը: Այս հաղորդում եմ, որ պատրանքներ չստեղծվեն իմ գործի շուրջը և հրատարակիչը իմանա, թե ինչի հետ գործ ունի: Աշխատությանս աղբյուրների մի խոշոր մասը ռուսական է, ուրեմն և պահանջվում է այնպիսի տպարան, որ ռուսերեն քիչ տառեր ունենա[2] ծանոթությունների համար: Բազմաթիվ թվական աղյուսակներ կան գործիս մեջ: Արևմտահայերը խորշում են թվերից, բայց մենք ձգտում ենք երևույթները պատկերացնել հաստատ տվյալներով: Ուրեմն հրատարակիչը պիտի նկատի ունենա և այս հանգամանքները – ռուսերենի և թվերի:

Բարի եղե՛ք որոնելու մի հրատարակիչ: Ձեմ կարծում, որ նա վնասվի: Հավանորեն գիրքը մեզ, Հայաստանի բնակիչներին, չի հասնի, բայց մեծ նվազ են գաղութների հայ ընթերցողները և կամ պակաս հետաքրքրություն ունեն նրանք դեպի մեր երեկը, որ սնուցանում է պատմական այսօրը: Իհարկե, իմ հրատարակչին ես չեմ արտոնում ոչինչ հապավելու կամ փոփոխելու իմ գործի մեջ: Այն պիտի լույս ընծայվի այնպես, ինչպես դուրս է եկել իմ գրչի տակից[3]: Գրականությունը իմ աչքում սրբագործություն է: Զիջում այստեղ ես չգիտեմ:

Լավ համբավի հուսացումով
մնամ հարգանքով Դ. Անանուն

Հասցե.
Հայաստան, Երևան,
Հեղափոխության թանգարան:

ԳԱԹ, Հ. Խաչմանյանի ֆ., № 334, թ. 3–4: Ինքնագիր:

[2] *Նամակում այդպես է գրված:*

[3] *Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918)» վերնագրով գիրքը լույս է տեսել 1926 թ. Վենետիկում:*

– № 23 –

Երևան
7 մարտի 1925 թ.

Հարգելի բարեկամ
պ. Հ. Խաչմանյան,

Ձեր երեք նվաճ ուղարկած դրքերը (2 դիրք Համաստեղի, 4 Տարեգիրք) ստացել եմ: Գրքերը հանձնել եմ տերերին (Սուրխաթյան, Ստ. Կանայան, Կ. Մելիք-Շահնազարյան, Սիմ. Հակոբյան): Սիմ. Հակոբյանին հայտնել եմ նաև ձեր ապսպրանքը: Երեկ ստացա նաև ձեր փոխադրած 20 դոլլարը և հանձնեցի ըստ պատկանելվույն: Այս հաշվապահական տեղեկանքից հետո անցնում եմ ուրիշ նյութի, որ դուք եք հարուցել ձեր նամակում:

Համաստեղի[1] գիրքը հաճույքով կարդացի[2]: Շնորհավորում եմ երիտասարդ գրողի տաղանդը: Նրա գրքի առիթով գրախոսական եմ գրել և ուղարկել Վիեննայի «Հանդես Ամսօրյային»: Հավանորեն կտպագրվի[3] և երիտասարդ գրողը իրազեկ կդառնա այն կարծիքին, որ ես ունեմ նրա ձիրքի մասին: Թող անբռնաղաս գրե այն պատկերների ու տեսիլների մասին, որ այցելում են նրա հոգին: Հայտնեցեք խորին շնորհակալությունս Համաստեղին, որ պատիվ է արել ինձ ուղարկելով իր հատորը[4]:

Ձեր խմբագրած ու հրատարակած Տարեգիրքը լավ ձեռնարկել է և լավ էլ ըմբռնել եք ձեր պաշտոնը – այն է՝ նյութեր մթերել հայկական կյանքի և հայկական հատվածների մասին[5]: Ապագայում ամեն ոք շնորհակալությամբ պիտի հիշե ձեր կատարածը: Այժմ ընթերցողները չոշափելիորեն գիտեն, թե,

---

[1] *Համաստեղ (Համբարձում Կելենյան, 1895–1966) – սփյուռքահայ նշանավոր գրող, ՀՅԴ անդամ:*

[2] *Խոսքը «Համաստեղ՝ «Գիւղը», Պոսթըն, 1924, էջ 155, գին՝ մէկ տոլար» գրքի մասին է:*

[3] *Գրախոսությունը տե՛ս «Հանդես ամսօրյա» (Վիեննա), 1925, թիվ 5–6, մայիս–հունիս, էջ 316–320: Ի դեպ, Համաստեղի ծննդյան 70-ամյակի և գրական գործունեության 50-ամյակի առթիվ Բեյրութում հրատարակվող գրականության և արվեստի «Բագին» ամսագիրը 1966 թ. հուշակել էր Համաստեղի տարի և, ըստ այդմ, գրել. «Այս առիթով կու տանք զինք առաջին անգամ գնահատող քննադատներեն՝ Դավիթ Անանունի գրության (նկատի ունի վերոգրյալ գրախոսությունը – Ա. Զ.) մեկ մասը, գրված Երևանի մեջ, 1925-ին» [տե՛ս «Բագին» (Բեյրութ), 1966, դեկտեմբեր, թիվ 12, էջ 58]. նյութը տպագրվել է ամսագրի էջ 59–61-ում:*

[4] *Ի դեպ, ուշագրավ է, որ Վ. Նավասարդյանը 1949 թ. հոկտեմբերի 26-ի նամակում Համաստեղին գրել է. «Խեղճ Դավիթ Անանուն. ինչպես էր սիրել գրիչդ: Անհետ կորավ նաև այդ շնորհալի մարդը՝ գանձեր տանելով իրեն հետ. ոչ ոք այնքան վառ կերպով պիտի կարողանար տալ մեր պատմության բոլշևիկյան շրջանը, որքան նա» (Համաստեղ՝ նամականի / Կազմող՝ Մ. Խաչատրյան, Երևան, 2003, էջ 387):*

[5] *Տարեգիրքը բացվում է հրատարակչի հետևյալ տողերով. «ՆՎԵՐ // ԲՈԼՈՐ ԱՆՈՆՑ // որ ոևէ չափով ու ձևով աջակցեցան // Պատրաստութեանը // ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ՏԱՐԵԳՐՔԻՆ // Ձեր աջակցության չափովն է, որ ինձ հաջողվեցավ գլուխ բերել այս մեծ գործը: // Հետևաբար ընդունեցեք զայն իբր ձե՛րը, քանի որ իմը՝ փնտրողի, հավաքողի ու դասավորողի համեստ բաժինը միայն եղավ: // Շնորհակալությամբ ու հարգանքներով, // Հ. ԽԱՉՄԱՆՑԱՆ»:*

օրինակ, ինչ է ներկայացնում իրանից հայ գաղութը Ամերիկայում: Եթե Տարեգրքի հետագա տարիները նույնպիսի խնամքով կազմված բաժիններ պարունակեն մեր մյուս հայկական գաղութների մասին, – դա ինքնին խոշորագույն ծառայություն կլինի: Ես այն կարծիքին եմ, որ Տարեգիրքը պիտի չանա բանասիրական ժողովածուի դեմք նվաճել: Օրվա քաղաքականությունից կարելի է խուսափել, որ հնարավոր լինի տարբեր հոսանքների մարդկանց ժամադրավայր դարձնել Տարեգիրքը: Կիրք հարուցելու տեղ չատ ունենք մեր օրվա մամուլի մեջ: Հերիք է այդ: Աչխատեցեք Տարեգիրքը զերծ պահել կողմնակալությունից, որ ազատ լինեք մանր մարդկանց թունոտ փչչոցից: Կուզեի այն էլ հիշեցնել, որ մի ազատ երկրում, որպիսին Ամերիկան է, և մի աչխարհիկ հրատարակության մեջ, որպիսին Տարեգիրքն է, կարելի էր և պետք էր խուսափել հին սովերներից: Ի՞նչ արժեք ունեն (անգամ գրական) ձեր հյուրընկալած հոգևոր հայրերը, կամ չէ՞ հասել ժամանակը, որ գրական մի լավ գործ ձեռնարկվի առանց Պողոս Նուբարի օրհնության[6]: Ամերիկայում ժողովվել են հայ ցեղի ձեռներեց տարրերը: Պետք է, որ այդ տարրերը խունկ չծխեն ոչ-դեմոկրատիկ հեղինակություններին: Արժանապատվության զգացումը մեծ առաքինություն է և ես կցանկանայի, որ մեր ամերիկահայ եղբայրները տոգորվեն այդ առաքինությամբ: Իրանք աչխատանքի մարդիկ, … (մեկ բառ անհասկանալի է – Ա. Զ.) ու ստեղծագործողներ և հանկարծ … Նուբարի պաչտամունք: Բավ է, հերիք է, հարգելի բարեկամ:

Դժգոհ եմ նաև մի բանից, որ անձնական բնույթ է կրում: Ձեր ծանոթությունը իմ հոդվածի ներքո՝ ես տեղին չեմ համարում[7]: Այստեղի մարդիկ սովոր չեն կենդանության օրով նման բաներ լսելու: Անձնապես ինձ չի գոհացնում ձեր ծանոթությունը, ուրիշներին էլ ամաչում եմ այն ցույց տալու:

Հիմա գանք ձեր հարուցած մյուս հարցին: Հայաստանի մասին ես չեմ կարող ձեզ համար տեսություն կազմել – չատ եմ հեռու արդի կյանքից: Կարող է կազմել մի ուրիչը – Խաչիկ Սամուելյանը, որ այստեղ Պետ<ական> Հրատարակչության օրացույցների կազմողն է: Նրա հասցեն է՝ Հայաստան, Երևան, Պետական Կենտրոնական Արխիվ (Archive Central d' Armenia, Chatschik Samuelian)*: Բանակցեցեք այս Խ. Սամուելյանի հետ: Հարկա՛վ, նա ձեզանից վարձատրություն պիտի պահանջե, գուցե և կանխավճար: Խ. Ս<ամուելյանը>*

---

[6] Տարեգրքին աչխատակցելու հրավերով Հ. Խաչմանյանը դիմել է նաև Պողոս Նուբարին, ով էլ գրել է «Գնահատության խոսք մը» վերնագրով նյութը, որը 1925 թ. տպագրվել է տարեգրքում (էջ 98–100):

[7] Նկատի ունի «Ամերիկահայ հանրագիտակ տարեգրում» տպագրված «Երկու կուլտուրական գործիչ» վերնագրով հոդվածի վերջում (էջ 137) Դ. Անանունի մասին գետեղված Հ. Խաչմանյանի հետևյալ տեղեկատվությունը. «ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆ – Կովկասահայ մտավորականության այն սակավաթիվ անուններեն է սա, որ ա՛նգամ ներկա խառնակ օրերուն՝ և՛ ակնածանք, և՛ հիացում, և՛ համակրանք կներշնչե բոլորին: Ան եղած է՝ տարաբախտ Բախչի Իչխանյանի հետ՝ Հայ Սոցիալ Դեմոկրատ կուսակցության հիմնադիրներեն ու արժանավոր ներկայացուցիչներեն մեկը: Ունի բազմաթիվ հոդվածներ Կովկասահայ զանազան թերթերու և պարբերականներու մեջ: Իրն է Ռուսահայերի Հասարակական Զարգացումը անուն մեծարժեք գործը, որուն Գ. հատորը (որ այժմ պատրաստ է), լավ կ'ըլլար որ հրատարակեր՝ հայ Հրատարակչականներեն կամ ունևոր դրասերներեն ոևէ մեկը»: Այնուհետև տողատակում նշվում է. « Տարեգրքիս խմբագրությունը ուրախությամբ պիտի տա այս մասին ավելի բացատրություն, եթե գործնականորեն հետաքրքրվողներ դիմեն իրեն»:*

միակ հարմար անձն է, որովհետև հետամուտ է օրվա կյանքին, իրազեկ մարդ է և կարող է գոհացնել Ձեզ[8]: Մի չարք այլ գրողներ ցանկություն են հայտնում նյութեր ուղարկելու ձեր Տարեգրքին: Այդ գրողներն են՝ Լեո, Երվանդ Շահազիզ, Ստ. Կանայան, Էմին Տեր-Գրիգորյան, Արսեն Տերտերյան, Թադ. Ավդալբեգյան և այլն: Եթե սերտ հարաբերություն չի սահմանվում, որովհետև հեռու է Ամերիկան, դեռ անծանոթ է ձեր ձեռնարկը: Այստեղի մարդիկ, պիտի իմանաք, որ անվան համար չէ, որ պիտի գրական այս կամ այն նյութը ուղարկեն ձեզ: Նրանք սովոր են գրական վարձատրությամբ գոցել իրանց բյուջեն: Ուրեմն հոնորարի խնդիրը չպետք է անտեսել: Եթե հիշածս մարդկանց աշխատակցությունը ձեզ ցանկալի է՝ գրեցեք և խոստացեք վարձատրել նրանց աշխատանքը: Անձամբ ես կկամենայի ձեր Տարեգրքին առաջարկել հետևյալ նյութը՝ «Վարդան Գոլոշյանը և նրա շրջանը»: Այդ պատմական նյութի առաջին մասը տպագրվել է Երևանի «Նորքի» № 4-ում: Շարունակությունը անտիպ է մնում: Պիտի ուրեմն վերահրատարակեք առաջին մասը և մնացածը: Ամբողջը կկազմե «Տարեգրքի» 80 էջը: Ներածություն է, նամակներ ու ծանոթություններ: Նյութը լույս է սփռում նախորդ դարի 80-ական թվականների ազգային հեղափոխական շարժման վրա և հայտնաբերում մի չարք դեմքեր: «Նորքի» 4-րդ գրքից արդեն գաղափար կազմած կլինեք նյութի էության մասին: Տպագրելով Տարեգրքի մեջ՝ կարելի կլինի «Վարդան Գոլոշյանը և իր շրջանը» լույս ընծայել այն առանձին գրքով:

Քանի խոսք եղավ Վարդան Գոլոշյանի մասին՝ ապա կխնդրեի, որ իմ կողմից նամակ գրեք Գարեգին Բաղեշցյանին (վանեցի, կարծեմ մանր վաճառական, Զրյսի քաղաքում, այսպես են ասել նրան ճանաչողները) և խնդրեք, որ հաղորդե ինձ, թե նրա հետ 1897–1898 թթ. արմենականներից ովքե՞ր են եղել բանտարկված Թիֆլիսում, Երևանում և Թավրիզում: Թող տա մանրամասն ցուցակը, բանտարկվածների հասարակական դիրքը, տարիքը, ապա տեղեկություն այն մասին, թե ով որքան ժամանակ է մնացել բանտում: Այս գործը կարող է կատարել նաև նկարիչ Փանոս Թերլեմեզյանը, որը նույնպես բանտարկված է եղել: Փանոսին հայտնեցեք իմ ողջույնները, բարեմաղթություններն և խնդրեցեք Բաղեշցյանի հետ միասին կազմելու ինձ հարկավոր տեղեկանքը:

Ահա բոլորը, ինչ անհրաժեշտ համարեցի գրելու ձեզ, հարգելի բարեկամ:

Ողջ եղեք: Հաջողություն Ձեզ ու Ձեր գործին:

Ամենայն հարգանքով՝

Դ. Անանուն[9]

ԳԱԹ, Հ. Խաչմանյանի ֆ., № 334, թ. 5–6: Ինքնագիր:

---

[8] *Դ. Անանունը չի սխալվել. 1926 թ. տարեգրքում տպագրվել է Խ. Սամուելյանի «Խորհրդային Հայաստան 1925-ին» վերնագրով ծավալուն, ուշագրավ ու բովանդակալից հոդվածը (էջ 33–76)՝ հետևյալ չեչտագրումով. «Գրել Խորհրդային Հայաստանի անցյալ 1925 թ. քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի տեսությունը, կնշանակե հետադարձ հայացք ածել այդ երկրում գործող Խորհրդային իշխանության հինգ տարվա գոյության վրա» (էջ 33):*

[9] *Սույն նամակի առաջին էջի վերին մասում, ամենայն հավանականությամբ, նշված է նամակի ստացման օրը՝ «V–20–25», իսկ հակառակ երեսին՝ «Պատասխան»-ի տակ, ներկայացված է նամակում Դ. Անանունի հարցադրումներին տրվելիք պատասխանների սեղմ կոնսպեկտը:*

– № 24 –

Երևան
30 նոյեմբերի 1926 թ.[1]

Շատ սիրելի Հրաչ[2]*,*

Նամակդ ստացա: Ինչ որ պիտի գրեմ՝ այն է, որ հիշեցնեմ անելիքներդ: Ամենից առաջ չմոռանաս տեղեկություններ ժողովել 1897 թվականին ձերբակալված արմենականների մասին (Գարեգին Բաղեշցյան, Փանոս Թերլեմեզյան և այլն, թվով կարծեմ 20 հոգի) և հաղորդել ինձ: Արտակը[3] *այս բանում օգնական կլինի, քանի որ ինքն էլ պատասխանատվության է ենթարկվել: Ապա աղբյուրներ և նյութեր էի խնդրել թուրքահայ հասարակական կյանքը ուսումնասիրելու համար (հողային հարաբերություններ, առևտրաարդյունաբերական կյանք, ուսումնական խնդիրներ, միջցեղային հարաբերություններ և այլն): Ենթադրում եմ, թե այս բանում քեզ աջակցել կարող է պ. Լևոն Բաչալյանը*[4]*, որին խնդրում եմ բարևներս հաղորդել և հիշեցնել, որ ինքն էլ ժամանակին, երբ Երևան էր, խոստացել է նույնպես նյութեր ուղարկել այս հարցերին վերաբերյալ, մանավանդ թե խոստացել էր գտնել ու ստանալ Արփիար Արփիարյանի արխիվը և ուղարկել Թանգարանին:*

Խնդրում եմ քեզ ու Արտակին, որ ժողովեք մամուլի այն №№-ը, որոնք հոդվածներ են պարունակում իմ գրքի մասին[5] *և ինձ ուղարկեք (կարելի է այդ անել Սիմոնիկ Փիրումյանի*[6] *միջոցով):*

---

[1] *Նամակն առաջին անգամ առանց սկզբնաղբյուրի հղման, ծանոթագրությունների ու հետգրության հրատարակվել է ՊԲՀ-ում (1984, № 1, էջ 176–177): Տե՛ս № 19 նամակի ծնթ. 1-ի մեջ եղած պարզաբանումը:*

[2] *Հրաչ Երվանդ (1885–1968) – հասարակական-քաղաքական գործիչ, խմբագիր: Վերակազմյալ հնչակյան, 1921-ից՝ ՌԱԿ անդամ: Հրատարակել և խմբագրել է «Արագած» (Նյու Յորք), «Պահակ» (Բոստոն), «Արոր» (Ֆրեզնո), «Ապագա» (Փարիզ), «Ժողովրդի ձայն–ժամանակ» (Կ. Պոլիս), «Պայքար» (Բոստոն) պարբերականները:*

[3] *Արտակի ով լինելը մեզ հայտնի չէ:*

[4] *Լևոն Բաչալյան (Թափառիկ, Ծիծեռնակ, Զարեհյան, 1868–1943) – գրող, հրապարակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ:*

[5] *Նկատի ունի «Ռուսահայերի հասարակական զարգացում (1901–1918)» վերնագրով գիրքը:*

[6] *Սիմոնիկ Փիրումյանի մասին խորհրդային և հետխորհրդային տարիներին մեզանում հրատարակված հանրագիտարաններում հիշատակություն չկա: Հայտնի է, որ եղել է սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ), Անդրկովկասյան սեյմի անդամ: Այնուհետև մտել է բոլշևիկյան կուսակցության շարքերը, խորհրդային առաջին տարիներին զբաղեցրել է տարբեր պաշտոններ. 1923–1925 թթ. եղել է Անդրֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչը Բեռլինում, 1926 թ. ղեկավարել է Փարիզում գործող Խորհրդային Անդրկովկասի ուսանողության միությունը, ակտիվ գործունեություն է ծավալել Փարիզում՝ Հայաստանի առևտրական ներկայացուցիչ, Ֆրանսիայում ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչության առաջին քարտուղար աշխատելու ժամանակ: Ֆ. Նանսենի հետ եղել է ՀՍԽՀ կառավարության ներկայացուցիչն Ազգերի լիգայում: Անհատի պաշտամունքի զոհերից է: Ի դեպ, 1928 թ. օգոստոսի 25-ին աքսորավայր Տոմսկի նա-*

Երևանը և կյանքը քո տեսածն է մնում: Նույն ղեմքերը, նույն գրույցները, նույն ճանճրույթը: Մարդիկ ցնցվեցին երկրաշարժի առիթով[7]: Հին մտավորականները այն հույսն էին տածում, թե գաղութների հայերը հրատապ օգնության կգան, սակայն մինչև օրս չոչափելի բան չերևաց: Անդարմանալիորեն հիվանդ է հայ մարդու հոգին: Ոչ միայն ֆիզիկապես պարտվեցանք արտաքին թշնամուց, այլ մեր հոգին իսկ ծանր վերք է ստացել և հանրական հոգսերը, հանրական ձգտումները ու ճիգերը մարելու վրա են: Եթե Հայաստանի փոքրաթիվ գավառներից մեկի գլխին պայթած աղետն իսկ անզոր է թափահարելու մարդկանց՝ նշանակում է իսկապես անդարմանալիորեն հանգել է մեր հոգու կրակը: Անչափ ուրախ կլինեմ, եթե հակառակը ապացուցվի:

Ողջ ու առողջ եմ: Մի փոփոխություն, որ կատարվեց իմ կյանքում՝ այն է, որ այլևս պաշտոնի չեմ թանգարանում: Այս պատճառով նամակներդ բնականաբանիս հասցեով կուղարկես — Աբովյան փող., № 45 — ինձ: Հասցես գրել կարող ես և թանգարանին՝ ինձ հանձնելու համար:

Ողջ լե՛ր և բարևներս ընդունի՛ր:

Բարևիր Արտակին: Հարցրե՞լ ես նրանից արդյոք, թե իմ աշխատության II հատորի[8] քան օրինակը Մալումյանը[9] 1922 թ. հասցրել է նրան, թե ոչ: Այս մասին էլ էի խնդրել քեզ, երբ հյուր էիր մեզ մոտ:

Հա՛, չմոռանաս հին ու նոր պարբերականներ ժողովել Թանգարանի համար: Այս մասին այսօր գրում եմ նկարիչ Մարտիրոս Սարյանին, որ Փարիզ է: Նրա հետ միասին հոգ տարեք ճոխացնելու Թանգարանի մամուլի հավաքածուն:

Սեղմում եմ ալդ:

Քո Դավիթ

<Հ.Գ.> Նամակը կակնարկե Լենինականի երկրաշարժին, մղվելով այնքան դառն մտածումներս «հայ հոգու» մասին …

ԳԱԹ, Հր. Երվանդի ֆ., № 55, 2 թ.: Ինքնագիր:

հանգի Նարիմի երկրամասի Իլինո գյուղից Կ. Միքայելյանին Անանունի գրած նամակում մանավորապես կարդում ենք. «… Ավելի ստոր գտնվեցին Սիմոնիկ Փիրումյան և Պողոս Մակինցյան պարոնները: Իմ ձերբակալությունը մասամբ նրանց գործն է: Այս պարոնները իրենց խախտված կուսակցական դրությունը փրկելու համար ամենուրեք տարածում էին և պաշտոնական մարդկանց հավաստիացնում էին, թե ես դաշնակցական եմ դարձել և այդ կուսակցության գործակալն եմ: Անամո՛թ մարդիկ: Փիրումյանը խոստում էր պղծությունն խոսող Զապել Եսայանի բերանով» (Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Անանունի նամակագրությունից, էջ 216):

[7] Խոսքը 1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած Լենինականի ավերիչ երկրաշարժի մասին է. եղել է 300 զոհ, 350 վիրավոր, ավերվել է 40 գյուղ, 9-ը՝ հիմնահատակ:

[8] Նկատի ունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870–1900)» վերնագրով գիրքը (լույս էր տեսել 1922 թ. էջմիածնում):

[9] Մալումյանի ինքնությունը մեզ հայտնի չէ:

ՀՏԴ : 947.925

ARAM KOSYAN: The hittite kingdom (Political history). Yerevan, "Copy Print" publishing house, 2022, 252 pages*.

Keywords: Asia Minor, Hittites, the Hittite Kingdom, sources, Ḫattusa, Mittani, Egypt, Assyria, the Armenian Highland.

The history of the Hittite state is considered one of the most remarkable pages in the history of Near East in the XVII–XIII centuries BC. The state



founded by the Indo-European Hittites (Nesians) in the east of Asia Minor and in the west of the Armenian Highland soon included most of the territories of Asia Minor and became one of the most powerful states in the region. However, Asia Minor was not enough for the Hittites. Their aspirations also began to spread to the countries of the Aegean Sea basin, Syria, Mesopotamia, Phoenicia and the Armenian Highland. In the XIV century BC it already began to divide the region into spheres of influence together with other "great powers" of the Near East.

The legacy of the Hittite state (Hatti) still draws the attention of the specialists studying the history, culture, religion, linguistics and other issues of the Near East in the II millennium BC. Hittite written sources come to supplement the Mesopotamian and Egyptian sources and are invaluable for reconstructing the complete picture of the history of the given period.

The written sources of the Hittite state are also invaluable for studying the history of the Armenian Highland II millennium BC. There are unique descriptions of many historical events, personal names, toponyms and theonyms that allow us to reconstruct the history of the Armenian Highland of the given period.

In this regard, the book "The Hittite Kingdom (political history)" by Aram Kosyan, Doctor of Sciences (History), Professor, Head of the Department of Ancient Orient of the Institute of Oriental Studies of NAS RA, published at the recommendation of the Scientific Council of the Institute, is of great importance for Armenian historiography.

Since the 20s of the previous century, Armenian historians realized the importance of Hittite sources for our history and turned their attention in that direction as well. Many Armenian historians have conducted research in

* Submitted as of 17. I. 2023, approved for publication on 23. III. 2023.

various fields of Hittite studies, but it is the first time that a complete version of the political history of the Hittite kingdom has been presented in Armenian. Since the 80s of the previous century, Aram Kosyan has carried out research in the field of Hittite studies and over the years has become one of the well-known experts in that field. His scientific authority is recognized not only in Armenia, but also abroad. It is very important to emphasize that Professor Kosyan has also created a school of Hittite studies in Armenia and is still developing and expanding it[1].

The book "The Hittite Kingdom (political history)" consists of four chapters. The introduction depicts the geographical environment in which the Hittite kingdom formed and developed. The part on the population of Asia Minor is also an important sub-chapter. It depicts the multi-ethnic image of Asia Minor in the III–II millennia BC. It shows the movements in the region of the peoples belonging to the Indo-European and other language families. Besides, it presents the views prevailing nowadays in the field of Hittite studies on the possible movements of the Hittites and their kindred Luwians, Palaians and the initial areas they settled in, as well as the author's own approaches to these complex issues.

The first chapter of the work presents the Hittite written and archaeological sources that are the basis for the study of the history of the Hittite civilization. It also gives a brief history of the study of Hittite cuneiform sources and, in general, the emergence and development of Hittite studies. Armenian specialists who contributed to the given field were also valued. In that sense, of course, academician Grigor Ghapantsyan's contribution and especially his monumental work "Hayasa - the Cradle of Armenians" are invaluable[2]. Academician Gevorg Jahukyan's great contribution to the study of relations and connections between Armenian and Hittite languages was also shown[3].

A. Kosyan also referred to the "Cappadocian" sources of the period of the trading colonies of Assur. Those sources are also invaluable for the history of Asia Minor of the XX–XVIII centuries BC and the prehistory of the Hittite state. They are mainly about the activities of Assyrian merchants in the trading centers founded in different cities of Asia Minor. The center of these trading colonies was the city of Kanesh or Nesa, which was also important for the early history of the Hittites[4].

---

[1] On these and other issues see *Ռ. Ղ ա զ ա ր յ ա ն. Խեթագիտությունը Հայաստանում. անցյալ, ներկա և ապագա. – Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, 17–19 հոկտեմբերի, 2013 թ., զեկուցումների ժողովածու, Երևան, 2014, էջ 124–127:*

[2] Гр. К а п а н ц я н. Хайаса-колыбель армян. Ереван, 1948.

[3] *Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:*

[4] On some questions about the history of the city of Kanesh and the prehistory of the Hittite state, see R. Ghazaryan, Administrative and political system and

The second chapter of the work presents the history of Asia Minor at the beginning of the II millennium BC, the period of the so-called Assyrian trading colonies. The presentation of the history of the cities of Kussara, Nesa and Hattusa is particularly important here. Those cities played an important role in the process of the establishment of the Hittite kingdom and the emergence of early statehood. At the beginning of the history of the Old Kingdom, the Hittites moved their capital to Hattusa, which remained their main capital for centuries to come.

The next, third chapter, presents the history of the Old Hittite Kingdom. This phase of the history of the Hittite statehood, unlike the New Kingdom, lacks written sources. Sometimes it is difficult to accurately restore the logic of the events that took place during the reign of this or that Hittite king, because the sources are sometimes missing. However, it should be noted that within the limits of the current Hittite studies, on the basis of his own thoughts and conclusions, the author presents this least studied period of the Hittite history in a well-founded manner. The activities of the kings of the period of the Old Kingdom, the military-and-political events of the region, internal developments, etc. are presented in the chapter.

In the fourth chapter of his work A. Kosyan depicts the history of the New Kingdom, which is the most extensively covered period of the Hittite history and is of great importance for the history of the Armenian Highland, and is full of important events. This is the period when the Hittite Empire stretching from the west of the Armenian Highland to the shores of the Aegean Sea, from the Pontic Mountains to southern Syria and northern Mesopotamia. The chapter describes the eventful history of the period of reign of the Hittite kings Tudḫaliya II, Arnuwanda I, Tudḫaliya III, Suppiluiliuma II, Arnuwanda II, Mursili II, Muwatalli II, Mursili III, Ḫattusili III, Tudḫaliya IV, Arnuwanda III and Suppiluliuma II. A special place is given to the activities of Suppiluliuma I, the true founder of the Hittite Empire. He managed not only to restore the rather weakened state, but also to make it the most powerful state in the Near East. The sources written during the reign of Suppiluliuma I's son Mursili II are particularly important for Hittite historiography. They describe not only the period of reign of that king, but also that of his predecessors. The chapter also presents the Hittite-Egyptian treaty of 1259 BC (signed between Ḫattusili III and Ramesses II), which occupies a unique place in the history of the Near East and international relations in general. The Treaty of "Eternal Peace and Friendship" brought a legal settlement in the relations between the two Empires and was strengthened by the establishment of dynastic relations between the two dynasties.

The last sub-chapter of the the fourth chapter depicts the history of the fall of the Hittite kingdom. The theory about the political instability caused by famine and the change in natural climatic conditions and population

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

economy of the Kingdom of Kanesh. – "Bulletin of the Institute of Oriental Studies", 2022, № II/2, pp. 13–24.

movement as a result of the division of the state was put forward and substantiated. In this regard, the theories previously based only on the intervention of external forces are now largely rejected and Hittitologists mainly try to find the reasons for the fall and division of the Hittite kingdom in internal developments. From the XII century BC the Hittite state traditions continued mainly in the southeast of Asia Minor, in the southwest of the Armenian Highland and in the north of Syria. In part, these areas coincide with the geographical area of the formation of the Hittite state traditions, the Kussara-Nesa region. Thus, in late XIII century and early XII century, as a result of the "Near Eastern crisis"[5], one of the most important Bronze Age powers of the Near East experienced a decline, as a result of which the Hittite written tradition was also interrupted.

An extensive list of Hittological studies and lists of personal names and toponyms and maps in Armenian (compiled by Dr. Yervand Grekyan) are also attached to this valuable work.

In the book, a significant place is also given to the history of the political and spiritual-and-cultural interactions of the ancient societies and states of Asia Minor and its neighboring Armenian Highland. The focus of those relations was mainly the western part of the Armenian Highland, mainly the historical territories of Armenia Minor, Upper Armenia, Tsopk, Turuberan, Aghdznik. According to Hittite and other sources, Ḫayasa-Azzi, Isuwa, Alzi and other states existed there in the II millennium BC. In that region there were also a number of cities and regions of great importance for the history of the Hittite kingdom, namely Upper Land, Tegarama, Maldiya, Samuḫa, Sarissa, Kummaḫa, etc.

It should also be noted that the work is useful for those studying the history of the Near East of the II millennium BC, because it presents the complete picture of relations that were formed between Hatti and the countries near or far from it (Egypt, Mittani, Assyria, Babylonia, Aḫḫiyawa, Arzawa, Isuwa, Hayasa, Alzi, etc.). The work is also important for those studying the history of the Ancient Orient, as well as the history of the Armenian Highland.

ROBERT GHAZARYAN

Ph.D., Associate Professor, Director of the Institute of Oriental Studies of NAS RA. Scientific interest: history of the Armenian Highland and Asia Minor of the II millennium BC, author of about 40 articles and 3 books. rghazaryan@orient.sci.am

[5] On the "Middle Eastern Crisis" see *Ա. Քոսյան. Մ. թ. ա. XII դարի միջերկրածովահետևյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:*

ՀՏԴ : 947.925

ՄԱԳԴԱ ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ. «Աշխարհում միայն մեկ Հայաստան կա…», *Երևան, 2022, «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, 160 էջ*:*

МАГДА ДЖАНПОЛАДЯН: «На свете лишь одна Армения…». Ереван, 2022, Изд. «Эдит Принт», 160 с.

Բանալի բառեր՝ Մ. Ջանփոլադյան, Հայաստանի կերպարը, Մ. Պետրովիխ, Օ. Մանդելշտամ, Արցախ, եղեռն, ռուս պոետներ:

Հայ գրականագիտությունը բազմիցս է անդրադարձել այլազգի գրողների, գիտնականների ու քննադատների՝ Հայաստանի, հայ ժողովրդի, նրա կյանքի ու բազմադարյա պատմության մասին ուսումնասիրությունների, գեղարվեստական ու հրապարակախոսական երկերի քննությանը: Սակայն վերջին շրջանում այդպիսի երկերը չափազանց կարևոր են և՛ մեր մշակույթի միջազգայնացման առումով, և՛ ինքներս մեզ օտարի աչքերով տեսնելու, մեր կեցությունն ու պատմությունն առավել բազմակողմանի ընկալելու, ինքներս մեզ ճանաչելու առումով: Այս առումով առանձնանում է վերջերս լույս տեսած բ. գ. դ., պրոֆ. Մագդա Ջանփոլադյանի՝ «Աշխարհում միայն մի Հայաստան կա…» խորագրով ուսումերեն ժողովածուն:

Մ. Ջանփոլադյանի գրքի նշանակությունը չափազանց կարևոր է հատկապես այսօր՝ նյութի արդիական հնչեղության տեսանկյունից: Աշխատությունը բացող «Հեղինակի կողմից» խոսքում գրականագետը խոստովանում է, որ գրքի մտահղացումը, նրա երևան գալը պայմանավորված էր ժամանակի թելադրանքով: Հեղինակի խոստովանությամբ՝ գիրքը ծնվեց «մեր անկանխատեսելի օրերին, երբ կշեռքի նժարին Հայաստանի ճակատագիրն էր» (էջ 3):

Մ. Ջանփոլադյանը հայ և ռուս գրական կապերի յուրօրինակ խորհրդանիշ է: Նա եղել և մնում է հայ-ռուս գրական ցանկացած բնույթի առնչությունների լավագույն վերլուծաբանն ու բացառիկ ներկայացուցիչը մեզանում: Մեկ անգամ չէ, որ գրականագետը հայ և ռուսալեզու ընթերցողին ներկայացրել է հայ-ռուս գրական կապերի պատմության ուշագրավ և ամենավառ էջերը: Այս ժողովածուն ամփոփում է հեղինակի բազմամյա վաստակի միայն մի ոլորտը: Գրքում զետեղված են Ջանփոլադյանի՝ «Հայաստանը և ռուս բանաստեղծները» թեմայով գրված ոչ բոլոր հոդվածները: Հեղինակը ընտրել է այն ռուս պոետներին, որոնք եղել են Հայաստանում և առանձնահատուկ սիրով են կապվել մեր հայրենիքին, իրենց կյանքի ու ճակատագրի մի մասն են

* *Ներկայացվել է 03. X. 2022 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

դարձրել հային ու Հայաստանը, բանաստեղծություններ են ձոնել մեր երկրին ու ժողովրդին, մեր մշակույթի՝ ժամանակի լավագույն գործիչներին: Մ. Ջանփոլադյանը գրում է. «Իհարկե, թեման ինքնին շատ ավելի լայն է (ինչպես ժամանակագրական, այնպես էլ թեմատիկ առումով), քան ներկայացված է այս գրքում: Բայց կարծում եմ, որ նույնիսկ այս հոդվածներից ընթերցողը կզգա, թե ինչ խորությամբ են ռուս բանաստեղծներին ոգեշնչել Հայաստանը և նրա ճակատագիրը, նրա դարավոր մշակույթը, ինչպես նրանք կիսեցին հայ ժողովրդի հետ նրա չդադարող պատմական ցավը, ողբերգությունը ...» (էջ 3): Թե՛ այդ հոդվածները գրելիս, թե՛ հատկապես այսօր դրանք հրատարակելիս հեղինակին առաջնորդել է երախտագիտության զգացումն այն ռուս բանաստեղծների նկատմամբ, «որոնց կյանքում և ճակատագրում մեծ տեղ գտավ Հայաստանը, իր վառ, անջնջելի հետքը թողնելով նրանց ստեղծագործության մեջ» (էջ 3):

Մ. Ջանփոլադյանի ընտրած նյութը ինքնին բարձրացնում է գրքի արժեքը: Օգտվելով էպիստոլյար գրականությունից և այլ աղբյուրներից, հուշերից ու գրական երկերից՝ հեղինակը հայ-ռուս գրական աղերսների մեկզարյա համապատկերում հյուսել է ռուս բանաստեղծների (Սերգեյ Գորոդեցկի, Վալերի Բրյուսով, Օսիպ Մանդելշտամ, Սամուիլ Մարշակ, Վերա Զվյագինցևա, Մարիա Պետրովիխ, Ելենա Նիկոլաևակայա, Միխայիլ Մատուսովսկի, Միխայիլ Դուդին, Ալեքսանդր Գիտովիչ, Սեմյոն Լիպկին, Բորիս Զիչիբաբին և այլք)՝ հայոց վշտի ցավից ծնված ապրումներից մի պատում, որը միաժամանակ ռուս բանաստեղծների ընդհանուր ձոնն է՝ ուղղված հայ ժողովրդին, նրա պատմությանն ու մշակույթին:

Գրքի գիտական արժեքը, ներկայացված նյութի փաստարկվածությունն ամենևին չի խանգարում, որ այն զարմանալի հուզմունք առաջացնի: Հեղինակը նկարագրում է՝ ինչպես է ռուս պոեզիայում կերտվում Հայաստանի կերպարը՝ որպես էություն, բովանդակություն ու ոգի: Ջանփոլադյանը յուրաքանչյուր հեղինակի կոնկրետ ստեղծագործության միջոցով կարողանում է հայտնաբերել ռուս գրողին, նրա պոետական նկարագիրն ու մարդկային կերպարը:

Ռուս բանաստեղծների համար ընկալելի ու սրբասուրբ են դարձել հայկական խորհրդանիշները՝ Արարատը, Սևանը, լավաշը, հայկական առածն ու ասացվածքը: Նրանցից ոմանք կանգնած էին արցախյան դատի արդար լուծման ակունքներում և պատրաստ էին իրենց լման բերել այդ գործին: Ոմանց համար Հայաստանը դարձել էր գոյության մի մաս, ոմանց համար՝ ցավի ու լույսի կերպար:

Ս. Մարշակին, Վ. Զվյագինցևային, Մ. Պետրովիխին, Ե. Նիկոլաևակայային, Մ. Մատուսովկուն և Մ. Դուդինին նվիրված հոդվածները թե՛ սկզբից, թե՛ վերջից շրջանակված են Վ. Բրյուսովի մասին ուսումնասիրություններով: Այդ հոդվածները մի անխզելի ամբողջություն են կազմում և հավաստում են ռուս պոետների հիացմունքն ու սերը հայկականի նկատմամբ, փաստում հայ ազգային բնավորության և Հայաստանի ընկալման նրանց խոր զգացողությունը:

Ժողովածուն բացող Բրյուսովի ներածության խոսքերով վերնագրված «Հայերը ավելի մեծ իրավունք ունեն մեր ուշադրության» հոդվածը ներկայացնում է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանում հայ գրականությանը տված բարձր գնահատականները, ինչպես, օրինակ. «Սակայն

հայերն ունեն մեր և ողջ աշխարհի ուշադրության ավելի բարձր իրավունք՝ այն բարձր մշակույթը, որը ստեղծել է հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում և այն բացառիկ հարուստ գրականությունը, որը Հայաստանի թանկարժեք ներդրումն է մարդկության ընդհանուր գանձարանում» (էջ 4–5), «Հայ պոեզիայի հետ ծանոթությունը պետք է պարտադիր լինի յուրաքանչյուր կրթված մարդու համար, ինչպես պարտադիր է նրա համար ծանոթանալ հելլենական ողբերգակների, Դանթեի «Կատակերգության», Շեքսպիրի դրամաների, Վիկտոր Հյուգոյի բանաստեղծությունների հետ»: «Միջնադարյան հայ քնարերգությունը հայ ոգու իսկական հաղթանակն է համաշխարհային պատմության մեջ» (էջ 4–5): Մ. Զանիփոլադյանը ուշադրություն է դարձրել նաև «Поэзия Армении» *ժողովածուի հրատարակության նախապատրաստական շրջանում հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու, բարեգործություն կազմակերպելու Բրյուսովի ջանքերին: Վերջինս ամեն ինչ անում էր Ռուսաստանի լավագույն գրական ուժերին (Ա. Բլոկ, Կ. Բալմոնտ, Վ. Իվանով, Վ. Խոդասևիչ, Ֆ. Սոլոգուբ և այլք) հայ պոեզիայի շուրջ համախմբելու նպատակով. մեծ համառություն պահանջվեց հատկապես Բլոկին համոզելու, որ նա թարգմանի հայ պոեզիա:*

Ժողովածուն եզրափակող «Վալերի Բրյուսովի հայ քնարերգության տված գնահատականները մեկ դար անց» հոդվածում Մ. Զանիփոլադյանը նկատում է, որ Բրյուսովի խորաքնին վերլուծություններն ու գնահատականները վիթխարի դեր են խաղացել հայ գրական մտքի պատմության մեջ և այսօր էլ հիմնականում և մեծ մասամբ ուղղորդող են ու չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը:

Գրքի արժանիքներից է նաև գիտականության ու գեղարվեստականության ներդաշնակ միաձուլումը, որը բխում է սույն թեմայի լուսաբանման պահանջից: Արձանագրենք, որ գիրքն ուղղված է առաջին հերթին լայն ընթերցողին: Այս հանգամանքը դրսևորվում է նույնիսկ ենթավերնագրերում՝ «Որքան կուզեի հայերեն իմանալ!...» (Ս. Մարշակ), «Խաչքարը կեչիների ստվերում» (Վ. Զվյագինցևա), «Հարազատ անուն» (Մ. Պետրովիխ), «Լույսը չորս կողմից» (Ե. Նիկոլաևսկայա), «Տողեր թեժ սրտից» (Մ. Մատուսովսկի), «Զինակից ընկեր» (Մ. Դուդին) և այլն:

Գիտական ճշգրտությամբ, միաժամանակ գեղարվեստական պատկերավորությամբ են ներկայացվում ռուս բանաստեղծների ներշնչանքն ու ոգևորությունը հայ պոեզիայով, արվեստով ու արվեստագետներով:

Մարշակին ապշեցնում, կախարդում ու «հիպնոսացնում» է Նարեկացու «ֆանտաստիկ» հանճարը, որի պոեզիան նա համեմատում է Եկեղեցու գմբեթի տակ հնչող Բախի երգեհոնային երաժշտության և Շեքսպիրի ստեղծագործության հետ: 1962 թ. նա, ասես հանդիմանելով ողջ հայ ժողովրդին, արձակագիր, թարգմանիչ Կարպիս Սուրենյանին ասում է. «Զարմանալի ժողովուրդ եք հայերդ՝ Նարեկացուն մինչ այժմ թաքցնում էիք աշխարհից» (էջ 25): Մարշակը երազում էր թարգմանել Կ. Երզնկացի և Հովհ. Թլկուրանցի՝ նկատելով «Նրանց բանաստեղծությունները վառվում են վարդերի պես, մինչդեռ Պետրարկայի պոեզիայում ես զգում եմ չուշանների սառը գեղեցկություն» (էջ 24):

Մեծ էր Մարշակի ոգևորությունը Մեծարենցի քնարերգության: Հատկապես «Հյուղը» բանաստեղծությամբ հմայված ռուս պոետը վախճանում էր

հայերեն սովորել բնագրի «տիեզերական երջանկությունը» ռուս ընթերցողին հաղորդելու համար: Սակայն նախախնամությունն անկատար թողեց. վախճանվեց՝ չհասցնելով ստանալ տողացիները:

Հայաստանի ու հայ պոեզիայի նկատմամբ նույնպիսի հիացմունք ուներ Վ. Զվյագինցևան, որի չիրմի վրա դրվեց հայ քանդակագործ Սամվել Ղազարյանի տուֆից խաչքարը՝ որպես նվեր ողջ հայ ժողովրդի անունից: Ստամբուլի փողոցներով քայլելիս Վ. Զվյագինցևային թվում է, թե քայլում է հայերի արյան ու ողբերգության միջով:

Մ. Ջանփոլադյանը նուրբ ղիտողականությամբ է ներկայացնում ռուս բանաստեղծների պոեզիայի առանձնահատկությունները, աշխարհայացքային մոտեցումները, նկատում է բնավորության հատկանիշները, որոնք ճանաչում են նրանց թարգմանական երկերին, դրսևորվում Հայաստանին նվիրված երկերում:

Ե. Նիկոլաևակայային է նվիրված «Լույսը չորս կողմից» հոդվածը: Այստեղ հեղինակը ներկայացնում է բանաստեղծուհու՝ հայի ու հայկականության ընկալումը: Նրա համար Հայաստանը քարի ու երգի, «թռչնի պես ճախրող ոգու տարածքն է» («Край души, // Парящей, словно птица») *(էջ 74), և որ ամենակարևորն է՝ ամեն կողմից ճառագող լույսի աշխարհը* («Край света – света – света! // Свет с четырех сторон, //Не гаснущий веками») *(էջ 74): Ռուս բանաստեղծուհին օրհնում է Հայաստանը …* («О будь благословен, // Край – и начало – света!») *(էջ 75): Նիկոլաևակայան պոեզիայի նյութ էր դարձնում նաև հայ արվեստն ու արվեստագետներին: Նրա համար թանկ էին Մ. Սարյանը, Ավ. Իսահակյանը, Կոմիտասը: Գրականագետը հետաքրքրվում էր մեր ժողովրդական բանահյուսությամբ, մեր առածներով ու ասացվածքներով: Բանաստեղծուհու համար քնարական ներշնչանքի աղբյուր դարձավ «Ջուրը՝ փոքրին, խոսքը՝ մեծին» ասացվածքը՝ որպես դարերի միջով փոխանցված իմաստություն ու փորձ («Ջուրը փոքրին՝ ահա փրկությունը… // Խոսքը մեծին՝ ապա պաշտպանությունը» (էջ 80):*

1940-ական թթ. վերջերից Հայաստանի կերպարը հառնում է նաև Միխայիլ Մատուսովսկու պոեզիայում: Նրա՝ Հայաստանին նվիրված քնարական ու արձակ երկերում հայոց կյանքն է, կենցաղն ու առօրյան, Երևանի չուկաների իրարանցումը, «Արարատ» ռեստորանի մառանները, նուռը, ծիրանն ու բանջարեղենը, օդը և ջուրը, Գառնին, Սևանն ու Զվարթնոցի քարերը, լեռների պարը, լավաշ հացը, մեր պատմությունը, Մաշտոցը և հայ գրերը («Երեսունվեց նշան»), խաչքարերը, Սասունն ու Մուսա լեռը, Սարդարապատը, Ծիծեռնակաբերդի հուշակոթողը և մեր ազգային երազի ու ինքնության խորհրդանիշ Արարատը («Արարատը մշուշում», «Հրաժեշտ Արարատին»), մեր ցավն ու վիշտը, Սպիտակի երկրաշարժը, Արցախը և Բաքվի ջարդերը: Դրանց զգալի մասը զետեղված են 1988 թ. Երևանում հրատարակված Մատուսովսկու ժողովածուում, որի վերնագիրն անգամ հայկական է ու հարազատ՝ «Տողեր թեժ թոնրից» («Строки из горячего тонира»)*: Իր իսկ խոստովանությամբ՝ Մատուսովսկին կախարդված էր Հայաստանով:*

Մ. Ջանփոլադյանը հոդված առ հոդված ցույց է տալիս, թե ինչպես էր հայոց վիշտն անցնում ռուս պոետների սրտի միջով: Հայոց ողբերգությունը հառնում է Մատուսովսկու պոեզիայում Ծիծեռնակաբերդի հուշարձանի տես-

քով ու խորհրդով: Նրա համար Եղեռնի հուշահամալիրը խորհրդանշում էր Արևմտյան Հայաստանի 12 նահանգները, վչտից քարացած 12 այրիացած կանայք, 12 սգավոր խաչքարեր և վրեժի ծարավով լցված 12 ռազմիկներ (էջ 74): Մ. Մատուսովսկին «Իմ ծննդյան տարեթիվը» բանաստեղծության մեջ ներողություն է խնդրում հայերից, որ ծնվել է 1915-ին («Прошу у вас прощения, армяне, // Что я рожден в пятнадцатом году»)*:*

Առանձնահատուկ էր Մ. Դուդինի սերը Հայաստանի նկատմամբ: «Ես Հայաստանի դժբախտությունը համարում եմ ողջ մարդկության դժբախտությունը… Ես սիրում եմ Հայաստանը…» («Я думаю о беде Армении, как о беде всего человечества … Я люблю Армению …»)*, «Հայաստանն ինձ համար դարձել է անհրաժեշտություն»* («Армения стала моей необходимостью») *(էջ 114):*

Ռուս պոետները չէին կարող չարձագանքել թուրքական յաթաղանի նոր եղեռնագործությանը, Սումգաիթյան ջարդերի սահմռկեցուցիչ պատկերներին: Դուդինի՝ «Հայաստանը ես ոչ մի կերպ և երբեք չեմ կարողանա մոռանալ» (էջ 117) բառերը պարզապես խոսքեր չէին, այլ՝ գործ և իրականություն[1]: Նա իր հոնորարներն էր տրամադրում թե՛ արցախահայությանը, թե՛ բնական աղետից՝ երկրաշարժից տուժածներին: Նա հայի ճակատագիրը զգում էր ոչ այնքան մտքով, որքան՝ սրտով.

То геноцид, то Сумгаит,
То гром землетрясения.
Все кровь и кровь. И все болит
В твоей судьбе, Армения *(էջ 114)* .

Ռուս պոետներից ամենից շատ Դուդինն արձագանքեց Արցախյան ազատագրական պայքարին և Սումգաիթյան ջարդերին, որոնց ցեղասպանական բնույթն անթաքույց արտահայտեց իր պոեզիայում՝ արձանագրելով և՛ պատճառը («Եվ ամեն օր Ալլահի անունով // Մոլլաները բղավում են. «Սպանիր անհավատին»), և՛ անողոք կռվի անմարդկային դաժանությունը, և սատանայական վայրենությամբ անաստվածների անափատելությունը («Война идет не по-людски и не // По-божески, – по-сатанински дико. // В ней ненависть не знает берегов») *(էջ 116): Բանաստեղծն իր աղոթքի ձայնն էր բարձրացնում հանուն արցախահայության* («Не дай в кровавый Карабах // Столкнуть свое отечество!»)*:*

Մ. Ջանփոլադյանը գրքում առանձնացրել է ռուսական պոեզիայում և գրական այլ ժանրերում հայոց ցեղասպանության թեմային նվիրված մի հոդված՝ «Ահեղ դատաստանի կեղծիքը» (էջ 116): Այստեղ ընթերցողն աղերսվում է Վ. Բրյուսովի, Ս. Գորոդեցկու, Օ. Մանդելշտամի, Ա. Տարկովսկու, Ա. Գիտովիչի, Ս. Լիպկինի, Դ. Սամոյլովի, Վ. Կորնիլովի, Բ. Զիչիբաբինի, Ա. Կուշների և այլոց գրական գեղարվեստական երկերում ցեղասպանության

[1] *Դուդինը, որպես կամավոր, պատրաստ էր գենք վերցնել և գնալ Արցախը փրկելու (տե՛ս* Л. М к р т ч я н. Для человека ход времен печален… Штрих и портрет Михаила Дудина. Ереван, 1924, с. 96)*:*

թեմայի արծարծումներին: Միայն այս անուննների թվարկումը բավական է պատկերացնելու, թե ինչպիսի մանրակրկիտ աշխատանք է կատարել Մ. Ջանփոլադյանը, որի ձեռքը մշտապես եղել է սույն թեմայի զարկերակի վրա:

Ս. Գորոդեցկին ցեղասպանության տարիներին Արևմտյան Հայաստանում էր: Նա ականատեսն էր հայոց մեծ ողբերգության և իր պոեզիայում վերականգնում էր այն մղձավանջը, որը տեսել էր սեփական աչքերով: Ադրբեջանցիների (թուրք ազերիների) կազմակերպած հայկական ջարդերից մի ողջ տասնամյակ անց Օ. Մանդելշտամը և կինը՝ Նադեժդան, Շուշիում ականատես եղան հայերի նկատմամբ անպատմելի զարհուրանքների հետքերին ու ողջ կյանքում երբեք չմոռացան «գիշատիչների» ավերած քաղաքի ջրհորներում եղած դիակները: Նրանք չնչահեղձ եղան միայն սարսափ ներշնչող ավերակների և ուրվականների աշխարհում (էջ 123):

Մի ամբողջ ազգի դեմ կատարված հրեշավոր հանցագործության անպատժելիության դեմ դուրս եկավ նաև Ա. Տարկովսկին («И стоит в багровых звездах // Кривда Страшного суда») *(էջ 125): Նա մտովի վերապրեց անմեղ զոհերի, ցեղասպանությունից խենթացած Կոմիտասի ճակատագիրը և այն զարհուրելի սարսափը, որը զգացել էր անմեղ զոհերից յուրաքանչյուրը: Ալ. Գիտովիչը հակադրում է զոհին ու դահճին, մեկի տառապանքը, մյուսի հրճվանքը. արյան խրախճանքում ներկա է նաև Աբդուլ Համիդը* («А там и ты пришел, Абдул Гамид, // Побаловаться в каменных деревиях») *(էջ 126): Գիտովիչը հակադրում է նաև ստեղծագործ ազգին ու բարբարոսին. վերջինս միայն յուրացնել գիտի արդեն ստեղծվածը.*

Не забыли мы, как в селах отчих
Полыхал неистовый пожар –
На страну строителей и зодчих
Пали ятаганы янычар.
И когда нас буря долу гнула,
Различали мы через туман
Драгоценные дворцы Стамбула,
Созданные гением армян *(էջ 127).*

Ալ. Գիտովիչը հայ ժողովրդի հանդեպ պատմական անարդարությունը ներկայացնում է կոնկրետ իրողությամբ՝ Հայաստանից խլված հայոց աշխարհի բնապատկերի անբաժան բաղադրիչ, հայոց պատմության ու ճակատագրի խորհրդանիշ «Վիթխարի հայկական լեռան» բիբլիական Արարատի պատկերով: Արարատի թեմային անդրադառնում է նաև Ե. Եվտուշենկոն՝ ապրելով հայի ցավով, երազելով հայի երազը.

С мольбою и укором Арарат
Зовет меня, как будто армянина.
…Пусть надорвусь, пусть мой хребет дробится, –
Я Арарат на плечи бы взвалил
И перенес его через границу *(էջ 130).*

Ս. Լիպկինը նույնպես հակաղրության միջոցով է անդրադառնում ցեղասպանության թեմային՝ միմյանց կողքի դնելով մի կողմից՝ երևանյան վարդն՝ իբրև գեղեցկության ու խաղաղ կյանքի խորհրդանիշ, մյուս կողմից՝ սարսափներ ու վիշտ տեսած ծերունու ցավը՝ արտացոլված մանկան աչքերում (էջ 101): Լիպկինը Հայոց եղեռնի անմեղ զոհերին ոգեկոչելիս եկեղեցական զանգերի բազմաձայն համանվագում աղոթք է հնչեցնում: Նա հայտնաբերում է «Սաստնցի Դավիթ» էպոսում թշնամու դեմ կռվի գնացող հայ դյուցազուններին ուժ տվող հացի, գինու և Աստծո խորհուրդը («Հայոց վշտի տարելիցը») (էջ 128):

Դավիթ Սամոյլովի Հայաստանը վաղ քրիստոնեության, արարող, ստեղծագործ ժողովրդի մի երկիր է, որտեղ բազում դարեր թագավորում է բիբլիական Արարատը: Հայ ժողովրդի հանդեպ հրեշավոր հանցագործություն է կատարվել, որը ոչ միայն անպատիժ է մնացել, այլև ամեն ինչ արվում է մոռացության տալու համար: Ինչպես Սամոյլովի, այնպես էլ ռուս այլ պոետների գործերում Ջանփոլադյանն առանձնացնում է ցեղասպանության մերժումը դատապարտող թեման, որին հանդիպում ենք և՛ Միխայիլ Մատուսովսկու, և՛ Վլադիմիր Կորնիլովի պոեզիայում: Մատուսովսկին զգուշացնում էր, որ գուր են մոռացության տալու, պատմությունը կեղծելու թշնամու բոլոր ջանքերը («Ժողովրդի հավերժ հիշողությունը սուր է ու անողոք») (էջ 131): Իսկ Վ. Կորնիլովը վստահ էր, որ սուտն ու կեղծիքը ոչ մի լավ տեղ չեն տանում («Пойми: несвобода от лжи // Доводит до зверства. // Послушай, не будем крутить, // А врать и тем паче. … // А то можно стыд потерять // Как радиотурки») *(էջ 132):*

Առանձնակի հետաքրքրությամբ են ընթերցվում խորհրդային տարիներին այլախոհ բանաստեղծ Բորիս Զիչիբաբինի երկերի վերլուծությունը: Հեղինակը նրան բնորոշում է իբրև «ճշմարտություն որոնող և զարմանալի ազնվության» բանաստեղծ (էջ 132): Նրա սերը Հայաստանի նկատմամբ մեծ էր ու սրտանց: Օտարազգի պոետի ու մտածողի ինքնատիպ ու անկեղծ գնահատականները կարող են բարձրացնել ցանկացած հայի ազգային արժանապատվության զգացողությունը: Նրա ընկալումներում Հայաստանը ցեղասպանություն տեսած հայ ժողովրդի օրրանն է, հերոսների ու սրբերի, մեծ լուսավորիչների, գիտնականների և բանաստեղծների երկիր (էջ 134): Ուշագրավ է, որ ռուս բանաստեղծն իր հիացմունքը հայ ժողովրդի նկատմամբ առանձնահատուկ սիրով է արտահայտում հենց Արցախյան հերոսամարտի օրերին, որպեսզի նեցուկ դառնա նրա ազատագրական պայքարին, դառնա բալասան հայ ժողովրդի արնահոսող այն վերքերին, որոնք արդյունք էին Սումգաիթյան ու Բաքվի ջարդերի, արցախահայությանը պարտադրված պատերազմի: Ահա թե ինչու 1991 թ. գրած Հայաստանի մասին նրա ակնարկը վերնագրված էր «Իմ սրտում Հայաստանն է ցավում» («В сердце моем болит Армения»)*: Հայաստանն իր մշակույթով, անցյալով ու ներկայով, ապագայի անհանգստություններով, իր Արարատ լեռան ու խաչքարերի խորհրդով, իր բիբլիական, հնամենի ու հոգևոր նկարագրով մշտապես Զիչիբաբինի մտատանջություններում էր: Եվ նա այդ մասին ասում էր իր մտերիմներին, գրում էր նաև իր նամակներում: Բանաստեղծ ե. Օլշանսկայային ուղղված նրա նամակում կարդում ենք. «Յուրաքանչյուր բանաստեղծ, յուրաքանչյուր հոգևոր մարդ, ի վերջո, կյանքում գոնե*

մեկ անգամ պետք է տեսնի այս եզակի, սուրբ, գեղեցիկ, ողբերգական երկիրը» (էջ 133): Նա հոգով հայ էր զգում, իսկ Հայաստանը համարում էր իր հոգևոր հայրենիքը [«Բացի արյունակցական կապից, կա նաև հոգեհարազատություն, և ես Հայաստանը համարում եմ իմ հոգևոր, առեղծվածային, ճակատագրական հայրենիքը: Այն բոլոր տարածքներից ու երկրներից, որոնք ես տեսել եմ իմ աչքով կամ կարդացել եմ գրքերում, ես չունեմ հող ու վայր ավելի հարազատ, ավելի մոտ, ավելի ցանկալի, քան Հայաստանը» (էջ 136–137)]: Իհարկե, Զիչիբաբինը նախ և առաջ բանաստեղծ էր և իր ապրումները պետք է արտահայտեր իր ստեղծագործության մեջ: Նա հայ ժողովրդին նվիրված բանաստեղծությունները վերնագրում է «Սաղմոսներ», այսինքն՝ իր աղոթքն ու օրհներգություն է հնչեցնում հայ ազգին: Հայոց ցեղասպանությունը նա ապրում է իբրև անձնական ողբերգություն («Мой мозг сечет резня Пятнадцатого года») *(էջ 135): Այդ սաղմոսներն այնքան հոգեհարազատ են յուրաքանչյուր հայի, որ, ինչպես նկատում է Մ. Ջանփոլադյանը, Զիչիբաբինի ընկալումները դարձնում են ոչ թե կողմնակի, դրսից նայողի, այլ ներսից տեսնողի հայացք (էջ 134): Եղեռնի հուշարձանին նվիրված սաղմոսը ռեքվիեմ է զոհերի հիշատակին:*

Այս ընդհանուր համապատկերում Մ. Ջանփոլադյանը ներկայացնում է նաև ռուս գրականության մեջ ցեղասպանության թեմայի արծարծումների մի կարևոր առանձնահատկություն: Մինչև 1980-ականների վերջը ռուս գրողների պատկերացումներում համազգային հայոց ցեղասպանությունը միայն պատմություն էր և մնացել էր անցյալում: Սակայն Արցախյան ազատագրական շարժմանն ի պատասխան՝ Ադրբեջանի իշխանությունների ցեղասպանական գործողությունները իրենց դաժանությամբ անակնկալի բերեցին նրանց, ցնցեցին ու ստիպեցին վեր կանգնել գորբաչովյան իշխանական գնահատականներից: Նրանք ամենայն խորությամբ ընկալեցին ողբերգական իրականությունը՝ գնահատելով այն որպես ցեղասպան երկրի անպատժելիության հետևանք:

Մի քանի ամիս է, ինչ Մ. Ջանփոլադյանի սույն գիրքը դրվել է ընթերցողի սեղանին, և արդեն ռուս ընթերցողի հիացական ու երախտիքի խոսքն է ուղղվում հեղինակին: Գրականագետ, թարգմանիչ, քննադատ, Հայաստանի լավ բարեկամ Ավ. Դմշիցի դուստր Ելենա Մովչանը մայիսի 22-ին հեղինակին ուղղված նամակում գրում է. «Հրաշալի գիրք ես գրել: Մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով կարդացի: Քեզնից շատ բան սովորեցի: Պարզվեց, որ ես ընդհանրապես չգիտեի Մատուսովսկու Հայաստանի մասին բանաստեղծությունները, բայց դրանք այնքա՜ն գեղեցիկ են: Եվ, ընդհանրապես, նա ինձ համար պարզապես երգահան էր, իսկ նա այնքա՜ն խորը, այնքա՜ն նուրբ բանաստեղծ է, այնքա՜ն համակրելի: Ժողովածուի քո լավագույն հոդվածը, ինձ թվում է, Պետրովիխի մասին հոդվածն է: Այո, իրականում ամեն ինչ արժանի է ամենաբարձր գնահատականի: Նաև իմ սիրելի Բորիս Ալեքսեևիչ Զիչիբաբինի մասին ինձ համար ոչ միայն ուրախալի, այլև շատ հետաքրքիր է կարդալ քո գրքում: Շնորհակալություն այս հրաշալի, այս շատ ամբողջական, շատ բովանդակալից գրքի համար: Մաղթում եմ քեզ շատ նոր գրքեր: Միայն թե ուժը տեղը լինի՝ իսկ ձեռքիդ գրիչը սուր է, հղկված»:

Նշենք նաև, որ Մ. Ջանփոլադյանի այս գիրքը նաև գեղարվեստական ընթերցման հաճույք է պատճառում: Հեղինակի չարաղրանքի սահուն անցումները, գիտական պարզ, հստակ, առանց որևէ ավելորդ բառի ու արտահայտության, սեղմ ու անսեթևեթ ոճը գրավում են ցանկացած ընթերցողի:

Մ. Ջանփոլադյանի «Աչխարհում միայն մի Հայաստան կա …» արժեքավոր ժողովածուն մի յուրօրինակ երախտիքի խոսք է՝ ուղղված ռուս այն պուետներին, ովքեր մեծ ու անհուն սիրով են կապված եղել մեր երկրին ու մշակույթին:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրության և շուրջ 300 հոդվածի ու հրապարակումների: sushovh@mail.ru

ՀՏԴ : 947.925

ՍԱՐԳԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ. Խանասորի Վարդանի հիշատակարանը, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022, 259 էջ*:*

Բանալի բառեր՝ Խանասորի Վարդան, հայ-թաթարական կռիվներ, ինքնապաշտպանական մարտեր, կամավորական շարժում, Հայ Հեղափոխական դաշնակցություն, Թուրքիա, Ռուսաստան:

Հայ ազգային-ազատագրական շարժման նվիրյալների կյանքի և գործունեության ուսումնասիրությունը մեր պատմագրության կարևոր ուղղություններից է: Այս համատեքստում կարևոր տեղ են զբաղեցնում առանձին գործիչների հուշերը, որոնք լուսաբանում են սկզբում ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների վրա և դրանով ստանում աղբյուրագիտական արժեքի նշանակություն: XIX դարավերջի և XX դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հուշագրությունները հրատարակության նախապատրաստելու գործում զգալի աշխատանք է կատարել պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի վարիչ Ռուբեն Սահակյանը: Նրա ջանքերով և աշխատասիրությամբ հրատարակվել են Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Ա-դո) (Երևան, 2015 թ.) և Միքայել Տեր-Մարտիրոսյանի (Մար) (Երևան, 2022 թ.) հուշերը: Խանասորի Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) հուշերի հրատարակությունն այս շարքի հերթական աշխատանքն է: Ռ. Սահակյանը նշում է, որ Խանասորի Վարդանի հուշերի առաջին մասը (1894–1896 թթ.) Սիմոն Վրացյանը տպագրել է «Հայրենիք» ամսագրում, իսկ խորհրդային տարիներին Վարդանը սկսել է շարադրել իր հուշերը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հանձնարարությամբ (էջ 26):

Խանասորի Վարդանի կյանքն ու գործունեությունը Ռ. Սահակյանը ներկայացրել է ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների համատեքստում՝ զուգադրելով ինչպես այդ շրջանի ՀՅԴ գործիչների և տեսաբանների՝ Ակնունի, Ռոստոմ, Վարանդյան, ֆիդայական շարժման հայտնի դեմքերի (Սևքարեցի Սաքո, Նիկոլ Դուման և այլն), այնպես էլ ժամանակակից պատմաբանների (Հ. Գևորգյան) Խանասորի Վարդանի գործունեության վերաբերյալ արտահայտած տեսակետները:

Հուշագրությունն ունի աղբյուրագիտական արժեք: Գրքի արժանիքներից մեկն այն է, որ Ռ. Սահակյանն ինչպես Ս. Մեհրաբյանի կյանքին և գործու-

* *Ներկայացվել է 06. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

նեությանը վերաբերող գլխում, այնպես էլ բուն հուշագրության տողատակերում բազմաթիվ ու բազմաբնույթ ծանոթագրություններ է տվել, որոնք հարստացրել են կատարված աշխատանքը և խորացրել նրա գիտական կողմը:

«Սարգիս Մեհրաբյանի կյանքը և գործունեությունը» գլխում Ռ. Սահակյանը համառոտ ներկայացնում է նրա գործունեության առաջին շրջանը, հայ ազգային-ազատագրական շարժման ապագա գործչի աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն թողած գործոնները, այնուհետև՝ նրա պրակտիկ գործունեությունը՝ մասնակցությունը Խանասորի արշավանքին, հայդուկային գործունեության շրջանը Վան-Վասպուրականում: Խոսվում է Պարսկաստանում 1890-ական թվականներին նրա գործունեության, ՀՅԴ-ին անդամագրվելու և «Վարդան» կուսակցական անունը ստանալու մասին: Այս գլխում Սահակյանն ընդգծել է այն կարևոր հանգամանքը, որ, մասնավորապես, Արցախում հայ-թաթարական կռիվների հրահրման հարցում իր «սև» գործն է կատարել հետադիմական մամուլը: Բերվում է Բաքվի «Каспий» թերթի օրինակը, որի էջերում կեղծ ու սադրիչ տեղեկություններ են տպագրվել և թաթարներին հայերի դեմ հրահրել (էջ 38): Բացի այդ, Օսմանյան Թուրքիայի կառավարությունն էլ զինական աջակցություն է ցույց տվել կովկասյան ցեղակիցներին (էջ 49):

Սահակյանն արժևորել է 1905–1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ Արցախի թատերաբեմում հայերի ինքնապաշտպանության կազմակերպման գործում Վարդանի դերակատարությունը: Հիմնվելով նաև Վարդանի փաստերի վրա՝ նա ընդգծել է այն հանգամանքը, որ Նախիջևանի շրջանի հայ-թաթարական բախումներն ունեցել են ոչ միայն ազգային, այլև տնտեսական ենթատեքստ, այսինքն՝ թաթար բուրժուազիան ցանկացել է ազատվել իր համար անցանկալի հայ մրցակիցներից:

Գլխում ցույց է տրվում, որ ցարական իշխանությունների կողմից, այսպես կոչված, «Դաշնակցության գործի» հրապարակ հանելուց հետո Վարդանը ստիպված է լինում Արցախից հեռանալ Բաքու, իսկ հետո մեկնում է Վիեննա՝ մասնակցելու ՀՅԴ IV ընդհանուր ժողովին: Այստեղ նա ներկայացրել է ազատագրական հետագա պայքարի մարտավարության հարցերի վերաբերյալ իր տեսակետները: Սահակյանը նկատում է այն հանգամանքը, ըստ որի, կյանքի իր փորձառությունից ելնելով՝ Վիեննայում Վարդանը հակադրվել է ցարիզմի դեմ հայ-թաթարական համագործակցության և համատեղ հեղափոխական պայքարի վերաբերյալ ՀՅԴ որոշ գործիչների (Օհանջանյան, Ահարոնյան) առաջ քաշած տեսակետներին:

Իր հուշերում Վարդանը քննադատել է արմենականներին՝ նրանց որդեգրած պայքարի լուսավորական մարտավարության համար, չի գնահատել նրանց ներդրումը՝ ընդգծելով միայն դաշնակցության դերը: Ռ. Սահակյանը ցուցաբերել է անաչառ, վերկուսակցական մոտեցում և ցույց տվել, որ արմենականները, մասնավորապես, Արևմտյան Հայաստան զենքի տեղափոխման հարցում մեծ աշխատանք են կատարել:

Գրքի այս բաժնում Ռ. Սահակյանը, հիմնվելով նաև Վարդանի վկայությունների վրա, տեսականորեն հիմնավորել է այն հանգամանքը, թե ինչո՞ւ ՀՅԴ-ն չկարողացավ այնպիսի կուռ կառույց ստեղծել Կիլիկիայում, ինչպիսին ուներ Վասպուրականում:

1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխություններից հետո Անդրկովկասում ստեղծված տագնապալի իրավիճակում Վարդանը զբաղեցրել է Բաքվի հայոց ազգային խորհրդի գլխավորական կոմիսարի պաշտոնը: Սահակյանը գրում է, որ Վարդանն Աստրախանի Արտակարգ հանձնաժողովից հանձնարարություն է ստացել՝ պարզելու Բաքվից ծովային ճանապարհով տարհանված 26 կոմիսարների գտնվելու վայրը և հնարավորության դեպքում փորձել նրանց ազատել գերությունից. սակայն Վարդանին դա չի հաջողվել (էջ 57):

1918 թ. հետո՝ մինչև Վարդանի մահը (1943 թ., Մոսկվա), նրա կյանքի ու գործունեության մասին որևէ տեղեկություն չի տրված, թերևս միայն այն, որ կնոջ մահից հետո զբաղվել է հողագործությամբ (էջ 58):

... Սարգիս Մեհրաբյանն իր հուշերը չարադրել է 1936–1939 թթ. Երևանում և Մոսկվայում: Դրանք գրվել են 12 տետրում, որոնցից Ռ. Սահակյանը հրատարակության է պատրաստել նշանավոր գործչի 1906–1916 թթ. գործունեության շրջանն ընդգրկող 10-րդ, 11-րդ և 12-րդ տետրերը: Հիշատակարանը բաղկացած է 5 ենթագլխից, որոնք կրում են հետևյալ վերնագրերը. ա. «Արցախի ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար», բ. «Մասնակցությունը ՀՅԴ IV ընդհանուր ժողովին և հետագա գործունեությունը», գ. «Կամավորական շարժում», դ. «Դեպի Վան», ե. «Կամավորական խմբերի լուծարումը»:

Առաջին ենթագլխում Վարդանն առաջ է մղում այն միտքը, որ 1905–1906 թթ. Անդրկովկասի հայ-թաթարական կռիվները կազմակերպվել էին ռուսական իշխանությունների կողմից: Նա հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Արցախում և Սյունիքում ծավալված այդ կռիվներից, որոնք ընթերցողին հնարավորություն են տալիս ավելի խորն ու առարկայական պատկերացում կազմել ողբերգական այդ իրադարձությունների մասին: Վարդանը հիշատակում է այն բոլոր գործիչների անունները՝ մեծամասամբ ՀՅԴ-ից, որոնք դերակատարություն են ունեցել հայ-թաթարական կռիվների ժամանակ: Դրա հետ մեկտեղ նա նշում է նաև, որ, օրինակ, հնչակյաններ կային Խնձորեսկում, ուր միշտ կռիվներ էին լինում (էջ 71): Վարդանը, հավանաբար, տուրք տալով կուսակցական մտայնությանը, չի գրում՝ գրանք միջկուսակցական բնույթ էին կրում, իսկ Ռ. Սահակյանն իր ծանոթագրության մեջ նշում է, որ դժբախտաբար հնչակյանների ու դաշնակցականների միջև եղել են միջկուսակցական կռիվներ (էջ 71): Վարդանն առանձին մանրամասնությամբ է նկարագրել Շուշիում և շրջակայքում տեղի ունեցած հայ-թաթարական կռիվները, տեղի ռուսական իշխանությունների դիրքորոշումը:

Խոսելով ՀՅԴ IV ընդհանուր ժողովին մասնակցելու նպատակով Վիեննա կատարած իր ճամփորդության մասին՝ Վարդանը նկարագրում է լեհական, մակեդոնական և այլ հեղափոխական կազմակերպությունների (օրինակ՝ էսէռների) հետ Դաշնակցության համագործակցությունը: Հետաքրքիր մանրամասներ է տալիս Ավստրիայի, Շվեյցարիայի տեղական կյանքի ու կենցաղի, իր ամուսնության, անձնական կյանքի, քայքայված առողջությունը վերականգնելու համար ձեռնարկված քայլերի, 1911–1912 թթ. Կ. Պոլսից՝ Էրզրում, իսկ հետո նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրեր կատարած իր ճամփորդության մասին: Խոսում է երիտթուրքական հեղաշրջումից հետո Թուրքիայում ստեղծված իրադրության և իր ստացած տպավորությունների մասին:

Ընդգծենք ուշագրավ մի հանգամանք. Վարդանը 1909 թ. կիլիկիահայության կոտորածի, իսկ հետո նաև 1914 թ. Կովկասում ծավալված կամավորական շարժման մեջ մեղադրում է հայությանը և չարիք է համարում թուրքերի հետ կողք կողքի խաղաղ ապրելու վերաբերյալ արևմտահայերի անվստահությունը, ընդգծում վերջիններիս ռուսասիրությունը: Վարդանը դատապարտում է Ռուսաստանին, որ «միշտ Հայաստան է ցանկացել առանց հայի» (էջ 131), և մեկ այլ «սրիկա պետության էլ, որի նավերը չէին կարող բարձրանալ Սանո լեռները (իմա՝ Մեծ Բրիտանիա – Հ. Գ.)» (էջ 132):

Վարդանի այս տեսակետի կապակցությամբ Ռ. Սահակյանը վկայակոչում է ազատագրական շարժման մեկ այլ գործչի՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանի (Մար) հուշերը, ըստ որի՝ վերջինս մտավախություն էր հայտնել առ այն, որ երիտթուրքական հեղաշրջումից հետո հայերի ու թուրքերի իրավահավասարությունը չհանդուրժող թուրք հետադեմ տարրերի դժգոհությունը կարող էր հակահայկական բռնկման վերածվել (էջ 131): Հետագա իրադարձությունները ցույց տվեցին Մարի մտավախության օբյեկտիվ լինելը:

Առաջին աշխարհամարտի լուրը Վարդանը ստանում է Բաքվում, որտեղից մեկնում է Թիֆլիս, ուր արդեն եռուզեռի մեջ էր կամավորական շարժումը: Նա գրում է, որ կամավորական առանձին ջոկատ կազմակերպելու առաջարկով Դաշնակցությունն իրեն դիմել է, բայց ինքը մերժել է՝ պատճառաբանելով, որ ՀՅԴ արևմտահայ հատվածը դեմ էր կամավորական շարժմանը: Սակայն հուշերի հետագա շարադրանքից երևում է, որ 1914 թ. դեկտեմբերին՝ Սարիղամիշի շրջանում թուրքերի հարձակումից հետո, հաշվի առնելով ստեղծված տագնապալի իրադրությունը՝ ինքն ընդառաջել է Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի առաջարկին և ձեռնամուխ եղել կամավորական ջոկատի կազմավորման գործին: Հուշերում նկարագրում է իր ծանոթությունը Գարեգին Նժդեհի հետ և իր վրա վերջինիս թողած լավ տպավորությունը:

Իր հուշերում Խանասորի Վարդանն արծարծում է կամավորական շարժման խնդրահարույց կողմերից մեկը՝ ներքին կարգապահության հարցը, և այս համատեքստում անդրադառնում հնչակյան կամավորների հետ տեղի ունեցած միջադեպերին: Պատմում է կամավորական ջոկատների հրամանատարներ Դրոյի, Համազասպի, Անդրանիկի, Քեռու բարդ փոխհարաբերությունների մասին: Կամավորական շարժման ընթացքում ի հայտ եկած թերությունների մասին խոսելով՝ Վարդանը, թերևս, ծայրահեղության մեջ է ընկնում՝ գրելով, որ հայը չի կարող ազատ ու անկախ լինել: Այս հարցի կապակցությամբ Ռ. Սահակյանը տողատակում իր անհամաձայնությունն է հայտնում՝ գրելով՝ «հեղինակի նման պնդումը չի համապատասխանում իրականությանը» (182 էջ): Սրա հետ մեկտեղ որոշ դեպքերում հուշերի հեղինակն իր դատողություններում երբեմն հակասում է ինքն իրեն՝ խոսելով հայ ժողովրդի զոհաբերության ընդունակ երիտասարդության, բռնակալական իշխանության տակ գտնվող արևմտահայությանը փրկելու հայ երիտասարդության պատրաստակամության մասին (էջ 190–191):

Խոսելով Վանի 1915 թ. հուլիսյան նահանջի մասին՝ Ռ. Սահակյանը տարակուսանք է հայտնում առ այն, որ Վարդանն իր հուշերում չի խոսում քրդական հարձակումների մասին, որոնք անընդհատ ուղեկցել են Վանի գաղթականությանը (էջ 219): Այդտեղ նա պատմում է իրեն Արարատյան գնդի հրամանատար նշանակելու, գնդի հանդերձավորման ու զինման ուղղությամբ իր գործադրած ջանքերի մասին:

Հուշագրության վերջին ենթագլխում Վարդանը պատմում է, որ Վանից վերադառնալուց հետո իրեն հանձնարարվում է նոր կամավորական ջոկատ կազմակերպելու գործը, որին ինքը ձեռնամուխ է լինում Երևանում: 1916 թ. ամռանը Վարդանի կազմած ջոկատը մեկնում է Ջուլֆա, ուր և ստանում են կամավորական ջոկատները հրաձգային գումարտակների վերածելու ու ռուսական զորքի մեջ տարրալուծելու լուրը: Վարդանի վկայությամբ՝ դա ծանր տպավորություն է գործում կամավորականների վրա, որոնց մեծագույն մասը հրաժարվում է: Ռուսական հրամանատարությանն իր հրաժարականն է ներկայացնում նաև Վարդանը, որին առաջարկել էին սպայական աստիճան, եթե նա շարունակեր ծառայությունը ռուսական բանակում: Այս ենթագլխում հուշագրողը կրկին չեչտում է ռուսական իշխանությունների անբարյացակամ վերաբերմունքը դեպի հայ կամավորական շարժումը: «Մեր այնքան զոհաբերություններն ու աջակցությունը միայն անտարբերություն և արհամարհանքի արժանացան» (էջ 227),– խորին հիասթափությամբ գրում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի նվիրյալը:

Զինվորական ծառայությունից հրաժարվելուց հետո Վարդանը մեկնում է Երևան, որտեղից էլ ընտանիքով տեղափոխվում է Բաքու՝ եղբայրների մոտ: Այստեղ ավարտվում է Վարդանի հուշագրությունը:

Գիրքն ունի ռուսերեն ու անգլերեն ծավալուն ամփոփումներ, անձնանունների և տեղանունների բառարան:

Նկատենք, որ թեպետ Ս. Մեհրաբյանի կյանքի ու գործունեության 1918–1943 թթ. դուրս են հրատարակված հուշագրության ժամանակագրական շրջանակից, սակայն ցանկալի էր, որ գրքի այս բաժնում որոշ տեղեկություններ տրվեին ազատագրական շարժման գործչի՝ ավելի քան 20 տարվա կյանքի և գործունեության մասին:

Խանասորի Վարդանի հիշատակարանն ունի աղբյուրագիտական կարևոր արժեք: Պատմական դեպքերի ու իրադարձությունների նրա մեկնաբանությունները, որոշակի սուբյեկտիվիզմով հանդերձ, պատմաբան-հետազոտողի համար առանձնահատուկ նշանակություն ունեն տվյալ պատմական ժամանակաշրջանը օբյեկտիվ ներկայացնելու առումով:

Հուշերը միաժամանակ սրընթաց զարգացող իրադարձությունների բովում գտնվող ականատեսի վկայություններ են, որոնք բավական պատկերացում են տալիս ազգային խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ ազատագրական շարժման հորձանուտում գտնվող առանձին գործիչների մտայնության մասին:

Արձանագրենք. Խանասորի Վարդանի սևագիր հուշերի հրատարակության նախապատրաստման տքնաջան գործը լավագույնս իրականացրել է Ռուբեն Սահակյանը, ում շնորհիվ պատմաբանների ու ժամանակաշրջանի պատմությամբ հետաքրքրվողների սեղանին է դրվել սույն արժեքավոր աշխատությունը:

ԳԵՂԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի և ազգային կուսակցությունների պատմությունն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 30 հոդվածի:
gegham.hovhannisian@mail.ru

ՀՏԴ : 947.925+891.981

ԶԻՆԱԻԴԱ ԲԱԼԱՅԱՆ. Արցախը XIX դարի հայ գրականության մեջ, *Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հրատ., 2021, 832 էջ*:*

Բանալի բառեր՝ Զինաիդա Բալայան, Արցախ, Անկախության շարժում, Պլատոն Զուբով, Րաֆֆի, Մուրացան, Ալրես Բեկնազարյանց, Մակար Բարխուդարյան, գրական ժանր, բանագիտություն:

Երեք տասնամյակ առաջ, Անկախության շարժման հզոր ալիքի ներքո, մասնավորապես՝ արցախյան ազգային-ազատագրական պատերազմի հաղթական ելքի և Արցախի Հանրապետության (Ա Հ) ինքնորոշմանն ուղղված իրավական քայլերի համատեքստում, օրակարգային դարձավ այդ ամենը նաև պատմագիտական, գրական-մշակութային փաստերով, վերլուծություններով հիմնավորելու և ամրապնդելու խնդիրը: Ավելորդ է ասել, որ այսօր, երբ 2020 թ. 44-օրյա պատերազմի արդյունքում, ցավոք, մենք դարձյալ կանգնել ենք հազարավոր հայ քաջորդիների կորստի և Հայոց Արցախի պատմական տարածքների մեծ մասի բռնազավթման փաստի առջև, անշուշտ, ավելի է չեչտադրվում նշված խնդրի իրականացման կարևորությունը:

Ըստ էության, հենց այդ նպատակին է ուղղված արցախցի բանաստեղծ, արձակագիր, բանասեր, գրականագետ, մանկավարժ, Արցախի և Հայաստանի գրողների միության անդամ Զինաիդա Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» ծավալուն մենագրությունը, որը բոլորովին վերջերս նա հաջողությամբ պաշտպանել է որպես դոկտորական ատենախոսություն: Ուսումնասիրությունը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի, Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի բանասիրական ֆակուլտետի և Ա Հ ԱրՊՀ գիտական խորհրդի երաշխավորությամբ ու որոշումներով:

Զինաիդա Բալայանը ծնվել է 1954 թ. Հայոց Արցախի պատմական Վարանդական աշխարհի Ավետարանոց մելիքանիստում (Լ Ղ Հ, Ասկերանի շրջան, գյուղ Զանախչի): Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: 1980-ական թվականներին սկսված Արցախյան շարժման նախաձեռնողներից և ակտիվ մասնակիցներից է: Հետագա տասնամյակներին զբաղվել է գրական-գիտական-մանկավարժական եռանդուն գործունեությամբ:

---

* *Ներկայացվել է 26. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

Նախ ընդգծենք, որ սույն մենագրությունն արդյունք է հեղինակի՝ տասնամյակների հետազոտական տքնաջան աշխատանքի: Մինչ այս, նույն թեմատիկայի շրջանակներում, 2004 թ. նա հրատարակել է «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ և մշակույթում» ընդհանուր խորագրով ուսումնասիրության առաջին մասը՝ «Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպը» ենթավերնագրով, 2014 թ.՝ «Մուրացանի գեղարվեստի պարադիգմաների փիլիսոփայական մեկնությունները» պատմաբանասիրական ուսումնասիրությունները:

«Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» մենագրությունը բաղկացած է ներածությունից, վեց գլխից [«Րաֆֆի. թարգմանական և վիպապատմական անդրադարձներ», «XIX դարում Արցախի մասին մերժված գիրքը (Ապրես Բեկնազարյան, «Գաղտնիք Ղարաբաղի»), «Արցախը Մուրացանի գեղարվեստում», «Արցախը XIX դարի ուղեգրություններում», «Արցախը XIX դարի պատմագեղարվեստական երկերում», «Արցախը բանահյուսական նյութի գրական մշակման մեջ»] (առանձին ենթաբաժիններով), եզրակացությունից, հավելվածներից և օգտագործված գրականության՝ բավական պատկառելի ցանկից, որն ընդգրկում է՝ բնագրեր-սկզբնաղբյուրներ (հայերեն և ռուսերեն), տեսաբանական աղբյուրներ (հայերեն և ռուսերեն), օտար աղբյուրներ (ֆրանսերեն), պարբերական մամուլ, այդ թվում՝ հանդեսներ, թերթեր (հայերեն և ռուսերեն), արխիվներ, էլեկտրոնային կայքեր. ընդհանուր հաշվով՝ 177 անուն:

Միանգամայն գիտակցելով ընտրված հիմնախնդրի ծավալայնությունը՝ Զ. Բալայանը «Ներածության» մեջ նշում է, որ «Թեմայի շրջանակները բավական լայն են, ուստի մենք աշխատանքում՝ որպես խնդրի լուսաբանության առաջին փորձ, նախընտրել ենք առանցքային այն հուշարձանները, որոնք առավել խորությամբ են ներկայացնում Արցախի գրականությունն ու պատմությունը, ազատասիրության ոգիսականը, բնաշխարհագրական պատկերը, ստեղծագործ ոգին, քաղաքական նկարագիրը» (էջ 14): Իսկ այդ ամենի գլխավոր «նպատակն ու խնդիրը Արցախի հայտնությունն է XIX դարի գրականության մեջ» (էջ 23):

Նշենք, որ հիշյալ աշխատության մեջ Զ. Բալայանի հիմնավոր և ծավալուն անդրադարձը ռուս պատմավիպագիր, պատմաբան-աշխարհագրագետ Պլատոն Զուբովի Արցախին նվիրված պատմավեպին, պատահական չէր: Ժամանակին այն արժանացել է հայ մտավորականների, գրողների (Միք. Միանասյանց և այլք), այդ թվում՝ Րաֆֆու ուշադրությանը. այն աստիճան, որ նա թարգմանել է վեպը ռուսերենից հայերեն[1]: Ընդ որում՝ ինչպես վերջինս նշել է «Թարգմանչից» վերնագրով առաջաբանում, թարգմանությունը կատարել է «խամսայի մելիքությունները» ավարտելուց հետո՝ այդ երկու գործերը համարելով «միմյանց փոխլրացնող»: Ահա թե ինչու մենագրության հեղինակը ևս նպատակահարմար է գտել այդ երկերի քննությունը մի գլխի երկու ենթաբաժինների մեջ ներկայացնել՝ «որպես միևնույն հեղինակի՝ նույն թեման

[1] *Պլ. Զուբով. Ղարաբաղի աստղագետը կամ Շուշի բերդի հիմնարկությունը 1752 թ.: Անդրկովկասեան պատմական վէպ, թարգմանութիւն՝ Րաֆֆի, Թիֆլիզ, 1882:*

ամփոփող երկու տարբեր գրքեր՝ մեկը թարգմանական, մյուսը սեփական» (էջ 23): Ավելացնենք նաև, որ ինչպես հաստատում է Զ. Բալայանը, Պլ. Զուբովի վեպը «առաջին թարգմանական վեպն է Արցախի մասին, Արցախի պատմության առաջին գեղարվեստական անդրադարձը…» (էջ 39): Ինչպես անցյալի, այնպես էլ ներկայի հետազոտողները կարևորել են «Ղարաբաղի աստղագետը» պատմավեպում արտացոլված հաստատումները՝ Արցախի հայության պատմական արմատների, հայ-պարսկական, հայ-ռուսական, ռուս-պարսկական փոխհարաբերությունների, իր ինքնության համար արցախահայության դժվարին պայքարի, նաև ողբերգական հետևանքների վերաբերյալ:

Աշխատության «Առաջաբանում» բ. գ. դ., պրոֆ. Սոկրատ Խանյանը նկատում է. «Կան ժողովրդի գոյատևման հետ կապված երևույթներ, որոնք անհատներին տանում են դեպի գիտություն» (էջ 5): Ըստ այդմ, նա համոզված է՝ մենագրության հեղինակին դեպի Պլ. Զուբովի պատմավեպը մղած «ներքին կամ արտաքին գաղափարը» եղել է «Հայոց Աչխարհի Արևելից կողմանց դուռ ու դարպաս հանդիսացող Արցախի ճակատագիրը», նաև այն, որ վեպում «լուրջ խոսք կա /…/ հին ժամանակներում հայության ուժերով» կառուցված Շուշի բերդի հիմնադրման մասին (էջ 4):

Աշխատության՝ մեկ այլ կարևոր հարցադրումն առնչվում է քննարկվող երկերի՝ մասնավորապես՝ Րաֆֆու «Խամսայի մելիքությունների» ժանրի ճշգրտմանը՝ դրականությո՞ւն են, թե՞ պատմագիտություն: Ըստ մենագրության հեղինակի, դրականություն են, քանի որ նախկինում մեծամասամբ ուշադրության առանցքում են եղել «ազգային-ազատագրության գաղափարի հարցադրումները՝ անտեսելով երկի սյուժեների ընթացքը հատկանշող տարաբնույթ կենսապատկերների, ժողովրդական ստեղծագործ ոգու իմացական և բարոյական, գեղագիտական, փիլիսոփայական նշանակությունը, կերպարների մեկնության բաֆֆիական հարցադրումները, այդ ամենից ուղղորդված գեղարվեստական-փիլիսոփայական ու հայրենագիտական ընթերցումները» (էջ 151): Ուստի, Զ. Բալայանը երկերի հետազոտությունը կատարել է նաև նշանագիտական, այսինքն՝ ժանրային սահմանների ճշգրտման մեթոդով:

Կարծում ենք՝ հարցադրումը, ըստ էության, ճիշտ է, քանզի գրողի գրչից ելած ցանկացած երկ (եթե, իհարկե, հայտնի չափանիշներով նախապես մտահղացված գիտական աշխատություն չէ ու չի հավակնում այդպիսին լինել) գրականություն է՝ անկախ ժանրային զանազանությունից՝ հուշագրություն, նոթագրություն, ուղեգրություն, պատմաքննական ակնարկ (ինչպես որակվել է Րաֆֆու «Խամսայի մելիքությունները») և այլն: Այլապես գրականությունից դուրս կմնան հայ և օտարազգի բազմաթիվ դասական գրողների շատ ու շատ գործեր:

Աշխատության մեջ նաև արծարծվում է Ապրես Բեկնազարյանցի «Գաղտնիք Ղարաբաղի»[2] գրքի հեղինակի խակությունն և այդ երկի պատմական հավաստիության խնդիրը: Հանգամանորեն ներկայացնելով իր ժամանակին այդ երկի վերաբերյալ պատմաբան Լեոյի և Րաֆֆու մերժողական կարծիքները,

[2] *Ա. Բ է կ ն ա զ ա ր ե ա ն ց. Գաղտնիք Ղարաբաղի, Ս.-Պետերբուրգ, 1886: Տե՛ս նաև՝ Ա. Բ է կ ն ա զ ա ր ե ա ն ց. Գաղտնիք Ղարաբաղի, Ստեփանակերտ, 2018:*

որոնք մեծ չափով պայմանավորված էին նաև «մշակական-մեղվական» պայքարով, նրանց և գրքի իրական հեղինակ ենթադրվող թարգմանիչ-հրատարակիչ Մակար Բարխուդարյանի բանավեճերի պատմությունը, Զ. Բալայանն առաջին անգամ խիզախում է վերադնահատել այն: Կասկածի տակ չառնելով հիշյալ երկի հեղինակի և նրա թարգմանիչ-հրատարակչի իսկությունը, ուրեմն և՝ շարադրանքի պատմական հավաստիությունը՝ նա նաև ընդգծում է, որ գրքում «գեղեցիկ պատկերներով է ներկայացված ու վիպականացված Արցախը» (էջ 313): Հետևապես և՝ «...Գաղտնիք»-ը կարելի է համարել Արցախի պատմության և գրականության, հոգևոր արարումների ազգային արժեքավոր հուշակոթողներից մեկը» (էջ 288): Կարծում ենք՝ այս հարցում ևս իրախուսելի են աշխատության հեղինակի ջանքերը, գրական-պատմական երևույթները նորովի գնահատելու գիտական համարձակությունը:

Մենագրության մեջ ըստ պատշաճի ուշադրություն է հրավիրվում Մեսրոպ Թաղիադյանի «Ճանապարհորդություն ի հայս», Սարգիս Արք. Ջալալյանցի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» ուղեգրություններում առկա արցախյան անդրադարձներին, որոնցում չեչտվում է Հայոց պետականության վերահաստատման գաղափարի անհրաժեշտությունը: Առանձին գլուխներում հանգամանորեն քննվում են Արցախի պատմության ու ներկայի բարձրարվեստ գեղարվեստական արձագանքները ներկայացնող Մուրացանի «Ռուզան», «Խորհրդավոր միանձնուհի», Ղևոնդ Ալիշանի «Արցախ», Մակար Բարխուդարյանի «Արցախ», Լեոյի «Մելիքի աղջիկը» երկերը, ինչպես նաև Արցախը՝ Կոստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաչի Խաչան) բանահյուսական նյութի գրական մշակումներում («Ջուռնա-Տմբլա», Ա և Բ հատորներ) և այլն:

Զ. Բալայանի ծավալուն աշխատության գրական արժանիքներից է նաև այն՝ հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ է դնում և արժևորում մի քանի ուշագրավ երկեր, ինչպես բազմավաստակ գրող, գրականագետ, պատմաբան, բանահավաք Հայկունու՝ Եղիշե (Հովակիմ) Գեղամյանցի «Ուխտագնացական ակնարկներ» գիրքը (1885), որը, նրա հավաստմամբ, «հանիրավի դուրս է մնացել նույնիսկ մասնավորաբար Արցախի պատմության ուսումնասիրությամբ զբաղվող հետագա բանասերների և պատմաբանների ուշադրությունից» (էջ 543), Սայաթ-Նովայի, Միսկին Բուրջիի, Առստամ բեկ Աբովյանի, Աչուղ Ղարայի մի շարք գործեր կամ առաջին՝ ամենահին բնագրեր, որոնք ներկայացվում են աշխատության «Հավելվածներ» բաժնում (էջ 800–821):

Հատկանշական է, որ մենագրությունն ունի ընդգծված արդիական ուղղվածություն: Այս իմաստով Զ. Բալայանի աշխատասիրությունը գրված է հայրենասիրական ներշնչմամբ, անցյալի իրողությունները ներկայի հիմնարար խնդիրներին ծառայեցնելու ներքին մղումով, Արցախի և արցախահայության ներկայի ու ապագայի համար սրտացավ մտահոգությամբ: «Գիտական քննության տողերում զգացվում է, որ հեղինակը փաստերի սառը և անտարբեր արձանագրող չէ, այլ ներկայացվող իրադարձություններով ապրող և ալեկոծվող Արցախի դուստրը» (էջ 12), – գրքի իր ներածական խոսքում վկայում է բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը:

Աշխատությունը, իհարկե, ինչպես ամեն մի ծավալուն գիտական աշխատանք, զերծ չէ թերություններից: Մասնավորապես, ցանկալի էր, որ հեղինակը

զերծ մնար Արցախի արդիական քաղաքական ճակատագրի վրա հզոր տերությունների ռազմաքաղաքական շահերի ու ձգտումների շուրջ առանձին մեկնաբանություններից, որոնք դեռևս կարոտ են ճշգրտման և, ըստ էության, դուրս են ուսումնասիրության բուն նյութից: Կարծում ենք՝ չարագրանքում տեղ-տեղ կան նաև խմբագրման ենթակա հատվածներ՝ դրանք ավելի հստակ ներկայացնելու նպատակով: Բայց այդ ամենը չի ստվերում հեղինակի կատարած գիտահետազոտական զգալի աշխատանքը՝ քննվող ժամանակաշրջանի պատմաքաղաքական, ազգային, հոգևոր-մշակութային երևույթների վերհանման, գնահատության-վերագնահատության և գիտական արժևորման ուղղությամբ:

Վերջապես, վերը բերված բոլոր դիտարկումներն ամփոփելով՝ կարող ենք ասել՝ Զ. Բալայանի «Արցախը XIX դարի հայ գրականության մեջ» մենագրությունը նշված ժամանակաշրջանի գրական բազմաժանր երկերում արցախյան թեմատիկայի արտացոլմանը նվիրված առաջին ամբողջական գիտական վերլուծությունն է, որի ասելիքը՝ գրքի ազդագրի հավաստմամբ, հասցեագրված է ոչ միայն գրողներին ու գիտնականներին, Արցախի պատմությամբ, մշակույթով, արցախագիտությամբ զբաղվողներին, այլև «ուսանողությանը, ընթերցող լայն շրջանակներին, ինտելեկտուալ հայությանը…»:

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար: Գիտական հետաքրքրությունը՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների:
pdemirchyan@mail.ru

ՀՏԴ : 800.87+809.198.1-3

VIKTOR KATVALYAN. Dictionary of Bayazet Dialect. Yerevan, Institute of Language after H. Acharyan NAS of the RA, 2021, 429 pages*.

Keywords: Armenian language studies, dialectology, a dialect, a speech, Bayazet dialect, vocabulary, dialect features, entry, head word, word meaning, lexical unit, phrase, style.

In the eight decades of its existence, the Institute of Language named after H. Acharyan of the National Academy of Sciences of the Republic of Armenia has done a huge amount of work in the field of Armenian language studies, particularly in the field of Armenian dialectology. As one of the most important branches of Armenian linguistics, it has always been the center of attention for many Armenian and foreign researchers, as well as for this academic institution. Dialectological works are a significant part of the great scientific achievements authored by Hrachya Acharyan, Ararat Gharibyan, Eduard Aghayan, Gevorg Jahukyan and others. And with the efforts of Hovhannes Muradyan, Albert Khachatryan, Maro Muradyan, Ani Haneyan, Dariko Kostandyan, Melada Aghabekyan and others, distinguished dialectologists of the Institute's department of dialectology, valuable and everlasting studies of this branch of Armenian language studies have been created years after years.



Even today, in the works of the dialectology department of the NAS RA Institute of Language named after H. Acharyan, the current issues include synchronic and diachronic examination of individual dialects of Armenian, the comparative and historical study of related speeches, dialects and dialect groups, the spatial-functional description of vocabulary layers and semantic groups, the determination of the coverage boundaries of the dialect features and suppletive forms, as well as the other related questions. At the same time, the comprehensive study of the vocabulary of dialect units in separate works is also highlighted, and one of the manifestations of such works is the last publication authored by Dr. Viktor Katvalyan.

By the resolution of the Scientific Council of the NAS RA Institute of Language named after H. Acharyan, the Institute’s publishing house

* Submitted as of 13. III. 2023, approved for publication on 23. III. 2023.

published the work “Dictionary of Bayazet Dialect” authored by Viktor Katvalyan, Doctor of Philology. The editor-in-chief is Nazik Hovhannisyan, Candidate of Philology.

The work that was previously published only in electronic version, recently was also published in printed version.

Until the beginning of the 19th century, the Bayazet dialect was used in the Bayazet province of Western Armenia, which occupied a southeastern part of the Karin area, northeast of Lake Van. The dialect of Bayazet is one of the dialects still in use today, which is currently spoken in the town of Gavar of the RA Region of Gegharkunik and in more than a dozen surrounding villages, whose ancestors migrated from Bayazet and neighboring settlements in 1829–1830.

The work covers a considerable layer of the vocabulary of Bayezet dialect, about 8,000 lexical units, phrases and styles. The dialectologist, who has a perfect command of his native dialect, also included in his work the results of the detailed fieldwork carried out in the area, he studied the materials available in the relevant scientific literature and the materials stored in the Institute and registered by the Armenian language dialectological atlas collection program, and supplemented them with rich dialectal and folklore samples.

The preface of the book briefly presents the phonological and morphological features of the Bayazet dialect, and then the structure of the dictionary.

Then, after the headword of each entry, the body part of the dictionary gives the meaning, grammatical information, and as a rule, also an example of dialectal speech with the given word. Examples are dialectal active speech samples, proverbs, and phrases. A very interesting novelty brought by the dictionary is that sample-sentences related to successive headwords often form a connected speech, as a rule, then a short story. Thus, the dictionary also presents the dialectal word in its active use. The dictionary also contains information on the daily life, customs, ideas, and worldview of the dialect-speaking community. Headwords and their speech samples are given in dialectal transcription.

Lists of abbreviations and source languages are also included in the work.

It would be better to have included in this valuable dictionary also the list of proper names common in the dialect, but this, however, in no way reduces the value of the work.

Dialectological works spread light not only on the problems of Armenian language studies, and general and comparative linguistics, but also on Armenian history, ethnography, folklore, study of manuscripts, and other related fields. This important work, which is another remarkable addition to the available reference literature on Armenian dialectology, has a similar mission and is a result of years of work and dedication.

Viktor Katvalyan's research is intended for linguists, dialectologists, ethnographers, students, as well as those interested in Armenian language studies, in general. It can provide important material for further Armenian studies, contribute to the clarification of issues on Armenian dialectology, the history of the Armenian language, and be useful to specialists doing related work.

ARTAK VARDANYAN

Candidate of Sciences in Philology, Senior Researcher at the Department of Dialectology of the Institute of Language after H. Acharyan NAS of the RA. Scientific interests: study of dialects of Nakhijevan and Vayots Dzor areas. Author of 4 monographs, more than forty scientific articles. artva@list.ru

Պատմություն և բանասիրություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

ՀՏԴ : 929:891.981 Զաքարյան+891.981

ԱԼՄԱՍՏ ԶԱՔԱՐՅԱՆ – 100*

Լրացավ գրականագետ, Զարենցի ժառանգության արժանավոր հետազոտող Ալմաստ Գրիգորի Զաքարյանի ծննդյան 100-ամյակը: Մեծ վաստակի տեր մի անուն, որին համապատասխան բնութագրական արտահայտություն որոնելու դեպքում պետք է ասենք գրական աշխատավոր: Փառքի, մրցանակների ու պաշտոնների համար երբեք չպայքարեց. այնպես չէ, որ այդ ամենի կողքով անցավ անտարբեր, պարզապես, ըստ ժամանակի տերերի, այդ ամենը նրա համար չէին:

Ծնվել է 1923 թ. հունվարի 22-ին Նախիջևանի Գողթան գավառի (իր ժամանակ Նախիջևանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջան) Փառակա գյուղում: Գյուղի յոթնամյա դպրոցն ավարտելուց հետո կրթությունը շարունակել է Երևանի մանկավարժական ուսումնարանում, որի վերջին կուրսում մեկ տարի ուսուցչություն է արել Վարդենիսի շրջանի Կարմիր Վանք գյուղում: 1940–1944-ին ուսանել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժանմունքում: 1945-ի հունվարից աշխատանքի է անցել ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ խորհրդային գրականության բաժնում և այնտեղ էլ 2013-ի հուլիսի 28-ին առաջատար գիտաշխատողի կարգավիճակում ավարտել իր կյանքի ուղին: Գրականության ինստիտուտը նրա միակ մայր օջախն էր, և նա իրենով պայմանավորում էր ինստիտուտի պատմությունը:

Գրական գործունեության երկար ճանապարհն Ալ. Զաքարյանը սկսել է որպես լաբորանտ: Աշխատել է ինստիտուտին կից գրական թանգարանում, չփվել գրողների արխիվների հետ, առաջինը մշակել Տերյանի ու Աղայանի ֆոնդերը: Աղբյուրագիտությունն էլ դարձավ նրա գրական պարգևը, և աստիճանաբար դուրս բերեց գրական մայրուղի:

1951-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սուրեն Սպանդարյանը և գրականության հարցերը», որից հետո, սակայն, ամեն ինչ հարթ չի ընթացել՝ մեկ տարի աշխատանքի չեն ընդունել: Հարցը լուծվել է Շուղիկ Սաֆյանի միջնորդությամբ և Ծատուր Աղայանի միջամտությամբ (տե՛ս Ալ. Զաքարյան. Գրականության և պատմության ընթացքները, 1989, էջ 471): Թեկնածուականն առանձին գրքով տպագրվեց 1956-ին (211 էջ): Տպագիր հաջորդ աշխատանքը «Գիտելիք» ընկերության հրատարակած «Սովետահայ գրականության անցած ուղին» աշխատանքն էր (1957, 42 էջ): Հայ գրականության անցած ուղին ի մի բերելու տեսակետից հիշարժան է նախ՝ «1920–

---

* *Ներկայացվել է 26. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

1940 թթ. «Սովետահայ գրականության ժամանակագրություն (1920–1947)»-ը («Սովետահայ գրականության պրոբլեմներ: Գրական-բանասիրական հետազոտություններ», գիրք 2, 1948, Հ. Ղազարյանի համահեղինակությամբ), այնուհետև՝ «Սովետահայ գրականության տարեգրություն»-ը (1957, 754 էջ, Հ. Ղազարյանի և Ս. Մանուկյանի համահեղինակությամբ): Այստեղ ամբարված թվերն ու փաստերը գրականության պատմական հիմքն էին, որից հետո անցավ նախ՝ ընթացիկ գրականությանը՝ «Ժամանակակից գրականության հարցերից» («Ժամանակակից գրականության հարցեր: Սովետահայ գրականությունը 1961–1962 թթ.») (1964), այնուհետև՝ հայոց բանաստեղծության հանգուցային մի շրջանի ուսումնասիրությանը՝ «XX դարի սկզբի հայոց բանաստեղծությունը» (հ. 1, 1973, 330 էջ, հ. 2, 1977, 440 էջ): Հայ պոեզիայի վաղնջական ակունքներից գալով, դարերի հոլովույթի մեջ զարգացման ուղիները ճշտելով, Աբովյանի «Վերք...»-ով անցած ճանապարհը վերագնահատելով՝ նա ձևակերպում է այն գաղափարական նախադրյալները, որոնք բարձրարվեստ քնարերգության վերածվեցին Թումանյանի, Իսահակյանի, Մեծարենցի, Տերյանի և ժամանակի այլ բանաստեղծների գործերում: Այս աշխատությունն ամբողջական գիրք էր, միայն ծավալի բերումով կիսվեց ու տպագրվեց երկու մասով և ղարձավ նրա դոկտորական ատենախոսությունը, որը պաշտպանեց 1976 թվին:

Ավ. Ձաքարյանը հետազոտողի այն տեսակն էր, որը ձգտում էր մասը տեսնել ու քննել ամբողջի մեջ, այն է, ինչ կոչվում է համակարգ և համակարգային մտածողություն: Իսկ համակարգն ամբողջն է՝ գրողի ամբողջական վաստակը իր ժամանակի մեջ, գրողը՝ հայ գրականության ամբողջական ընդգրկումով: Այդ իսկ պատճառով նրա թե՛ գրքերի, թե՛ հոդվածների վերնագրերում հաճախակի կարելի է հանդիպել ակունքներ, ավանդներ, պատմություն և համանման բառերի: Այս տեսակետից հիշարժան են նրա «Ավանդների ուժը» (1981, 268 էջ), «Գրական արձագանքներ և հուշեր» (1985, 320 էջ) և «Գրականության և պատմության ընթացքները» (1989, 548 էջ) ժողովածուները, որոնք լի են գրականագիտական ուշագրավ անակնկալներով ու բացահայտումներով: Գրականագետի տեսադաշտում են Հովհ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Արմենը, Ա. Բակունցը, Պ. Սևակը, արվեստի մյուս ոլորտներից՝ կոմիտասը, Մ. Սարյանը և ուրիշներ: Բոլոր առիթներով նրան առաջնորդել է հայոց ազգային-ազատագրական ոգին, ինչը և դարձավ նրա կազմած «Ազատագրական գաղափարները հայ հրապարակագրության մեջ. 1820–1920» (1982, 596 էջ, համահեղինակ՝ Գ. Հովհաննիսյան) հոդվածների ժողովածուի էությունը:

Այս ամենով հանդերձ Ավ. Ձաքարյանն առաջին հերթին մնում է որպես Ե. Չարենցի ժառանգության լավագույն հրատարակիչ և հետազոտող: Նա կազմել է Չարենցի «Երկերի ժողովածու»-ի վեցհատորյակը (1962–1968): Ահա արդեն վեց տասնամյակ է, ինչ այդ հրատարակությունը գիտական ու հանրային շրջանակներում պահպանում է իր նշանակությունը և դարձել է հետագա բազմաթիվ հրատարակությունների սկզբնաղբյուր: Չարենցի նոր նախաձեռնված 13 հատորով «Ամբողջական երկեր»-ի համար այդ հրատարակությունն ունի կողմնորոշիչ նշանակություն: Ձաքարյանը մասնակցել է նաև Չարենցի «Անտիպ և չհավաքված երկեր» (1983) ժողովածուի կազմման ու հրատա-

րակութ յան նախապատրաստման աշխատանքներին և միայն վերջում, ինչ-ինչ տարաձայնությունների պատճառով, հեռացել աշխատանքային խմբից:

Ավ. Զաքարյանը խմբագրել է Եղիշե Հովհաննիսյանի կազմած «Հուշեր Եղիշե Չարենցի մասին» (1986, 504 էջ) ժողովածուն և գրել Չարենցի կենսագրական նոր փաստեր չրջանառող շահեկան առաջաբան:

Ավ. Զաքարյանի կազմած Ե. Չարենցի վեցհատորյակն անթերի չէ. կան սխալներ, կան վրիպումներ, կան չբացահայտված իրողություններ, որոնք իր հետագա աշխատանքներում մասամբ նկատել ու վերանայել է և, վեցհատորյակի ու անտիպների հիրավի հերոսական ճանապարհն անցնելուց հետո, նախաձեռնել «Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը» բազմահատորյակը: Հասցրեց տպագրել միայն երեք հատոր, որոնք հասնում են մինչև ներառյալ 1927 թվականը (հ. 1, 1997, 968 էջ, հ. 2, 2003, 432 էջ, հ. 3, 2008, 532 էջ): Ասենք, որ անթերի չեն նաև այս հատորները՝ շատ-շատ են ընդարձակ ծավալումները, բուն նյութից անհարկի հեռացումները, ավելորդ զգացմունքային գեղումները, երբեմն նաև՝ ենթադրական վերագրումները: Բայց այս չեղումները, որոնք նաև նրա չարաղրանքի ոճական կողմերից են, չնչին բան են այն վիթխարի փաստական աշխատանքի համեմատ, որն արել է նա:

Տպագրված վերջին հատորում մեկ անգամ չէ, որ հեղինակն ակնարկում է առաջիկա նոր հատորի մասին: Սա նշանակում է, որ շարունակվող հատորի նյութը կա, թե ի՞նչ մշակվածությամբ՝ հարց է, բայց կարելի է մասնագիտական հայացքի ներքո այդ թողոնները հրատարակել՝ այս դեպքում արդեն որպես գրականագետի անտիպ ժառանգություն:

Թե՛ իր կազմած հատորների ծանոթագրություններում և թե՛ նշված երեք գրքերում Ավ. Զաքարյանը մեծ դեր կատարեց բացահայտելու Չարենցի կյանքի ու ստեղծագործության հետ կապված բազմաթիվ թվեր, անուններ, գործերի գրության հանգամանքներ ու չարժառիթներ, կենսագրական կնճիռներ... Հանդիպեց Չարենցին տեսած բազմաթիվ անձնավորությունների, եղավ Մայկոպի նրա հարազատների տանը, նրանցից հուշեր գրի առավ: Արեց առավելագույնը, ինչ կարող էր: Գրականագետի հետազոտական աշխատանքի մեջ անթափանց մնացին երկու կարևոր պահոցներ՝ Անդրդաշնության արխիվը Թիֆլիսում և Ստալինի, Միկոյանի ֆոնդերը ԽՄԿԿ կենտկոմի արխիվում. մի բան, որ ԽՍՀՄ-ի համակարգում այն տարիներին հնարավոր էր, հիմա դժվարությունները շատ են:

Ավ. Զաքարյանը մտավ Չարենցի սիրո աշխարհը և ոչ միայն գիտնականի ճշգրտությամբ, այլև վիպասանի գեղարվեստով ու հոգեբանական նրբության ներքին անցումներով բացահայտեց մարդկային թանկ առնչություններ, մոտեցումներ ու հեռացումներ՝ կապված Լեյլիի, Լյուսի Թառայանի, Կարինե Քոթանջյանի և հատկապես՝ Արմենուհի Տիգրանյանի հետ: Այս խոր ապրումների ծնունդ է նրա չհնացող սիրերգությունը, որի զգացմունքային տաք ալիքը հետազոտողը բացահայտում է ահա կենսագրական այսպիսի նուրբ թափանցումներով:

Ավ. Զաքարյանը չի անտեսում Չարենցի հետ կապված ոչ մի մանրամասն՝ մտնում է խորքերը՝ երբեմն նաև հեռանալով փաստից ու իրականությունից: Բանաստեղծին շատ լավ իմանալով՝ այս հատվածներում (օրինակ՝ արտասահմանյան ուղևորության ժամանակ Ամենքում եղած օրերը) ապավինում է

ներքնազգացողությանը, տրամաբանությանը: Ակնհայտորեն հնարավոր է, որ դա այդպես չէ, բայց այս դեպքում արդեն հետաքրքրական է դառնում գրականագետի կերպարը, թե ո՞ւր կհասնի մտքի թռիչքը և ինչո՞ւ:

Արտակարգ հարուստ են Զարենցի առնչությունները իր ժամանակի գրական, մշակութային, կուսակցական, քաղաքական գործիչների հետ: Ավ. Զաքարյանը բացահայտում է Զարենցի ու նրանց հարաբերությունների նախադրյալները՝ առօրյա չփումներից մինչև նրանց կերպարների գեղարվեստական մարմնավորում:

Լավ տիրապետելով մամուլին և արխիվային իրեն հասանելի նյութերին՝ գրականագետը ներկայացնում է նաև Զարենցի գրքերի ու առանձին գործերի մասին անդրադարձները: Այլ խոսքով՝ ձգտում է ստեղծել Զարենցի ամբողջական կերպարը: Ամբողջականին թեև չհասավ, բայց շատ բան այդ ճանապարհին հասցրեց անել:

Զարենցով շատերն էին հետաքրքրվում, մեծ գրողին ուղղված գրականագիտական շատ հայացքներ կային, որոնք վերածվում էին գրքերի, հոդվածների ու զեկուցումների: Շատերն էին օգտվում հատկապես Ավ. Զաքարյանի կազմած հատորներից և անգամ մի պարզ հղումով չէին հիշատակում նրա անունը: Գրականության ինստիտուտում 1971–2000 թթ. համատեղ աշխատանքի ընթացքում նկատել եմ՝ վիրավորանքը զուսպ էր տանում, երբեմն միայն լցված ակնարկ անում այդ մասին. հետո ընտելացավ՝ խմաստուն բնազդը հուշեց, որ յուրաքանչյուր ոք իր առաքելությունն ունի այս անցավոր աշխարհում: Եվ դա աչքի առաջ էր:

Ժամանակակիցներից Զաքարյանի նախասիրած հեղինակը Պ. Սևակն էր: Աչքիս առաջ է, թե ինչպես Նորագույն շրջանի հայ գրականության բաժնի սենյակում Հ. Ղազարյանի հետ խմբագրում և տպագրության էր պատրաստում բանաստեղծի անտիպների «Մուտք» (1985, 236 էջ) ժողովածուն: Սևակին նվիրված հոդվածներից բացի, վերջինս նրա համար նաև հեղինակություն էր ղեպի Զարենց տանող ճանապարհին: Քանի անգամ է իր դիտարկումները հիմնավորելու նպատակով դիմել Զարենցի 70-ամյակի առիթով Սևակի «Ե. Զարենցը և արդի գրականությունը» (1967) զեկուցման առանձին դրույթների:

1983–1984 թթ. շարադրեց «Պարույր Սևակ» հուշագրությունը, որի կրճատ տարբերակը տպագրեց «Գրականության և պատմության ընթացքները» գրքում (էջ 447–546): Աչքի առաջ 20 տարվա մարդկային հարաբերությունների կենդանի պատմություն է՝ գրված փաստագրական հավորդականությամբ, որով ազդարարել է, որ սևակագիտությունն առանց այդ հուշագրության ըստ ամենայնի թերի կլինի: Շատ ափսոս, որ տպագրել է կրճատ տարբերակը՝ միջավայրն իմանալով դուրս թողնելով անուններ և իրողություններ, իսկ դա նշանակում է՝ եկել է այդ հուշագրությունն ամբողջությամբ տպագրելու ժամանակը, մանավանդ որ 2024-ին լրանում է Սևակի ծննդյան 100-ամյակը (զարմանալի զուգադիպությամբ երկուսն էլ ծնվել են հունվար ամսին մեկ տարվա տարբերությամբ): Այդ գրքում կարելի է զետեղել նաև Ավ. Զաքարյանին գրած Պ. Սևակի նամակները, որոնցից հղումներ է անում և Սևակին նվիրված նրա հոդվածները: Կատացվի 100-ամյակին արժանի հրատարակություն:

Ասենք, որ նման էին նաև նրանց աշխատանքային խառնվածքները: Գրում է. «…Պ. Սևակը աշխատանքային հոգեբանությամբ տոհմիկ հայ գյուղացի էր: Մի տարբերությամբ միայն: Գյուղացին, այնուամենայնիվ, ձմռանը հանգստանում էր, Սևակը՝ երբեք: Ինչ էլ պատահած լիներ իրեն, ինչ տրամադրություն էլ ունենար՝ ամեն, ամեն ինչից վերը գործն էր, ամենօրյա աշխատանքը» (նույն տեղում, էջ 458–459): Նաև այս. «Սևակին օրգանապես խորթ էր էժան ու ձանձրալի քարոզչությամբ կարծիք կազմակերպելը ինչպես իր օգտին, այնպես էլ ի վնաս ուրիշների, որի «արվեստին», գրչակիցներից ու քննադատներից ոմանք տիրապետում էին կատարելապես» (նույն տեղում, էջ 499):

Ալ. Զաքարյանը իրական դրվածքով ներկայացնում է գրականության ինստիտուտի գիտական միջավայրը, որտեղ 1963-ի հունվարից աշխատանքի անցավ նաև Սևակը: Աչքի առաջ է վերջինիս ատենախոսության պաշտպանության պատմությունը (1967, 27 հունիս), որը ձգձգումներից հետո ԽՍՀՄ Բարձրագույն attestացիոն հանձնաժողովը (ВАК) հաստատեց 1970 թ. փետրվարի 13-ին: Չի թաքցնում իր խորին վրդովմունքն առ այն, որ ակադեմիայի անդամների ընտրությունների ժամանակ Սևակին մերժել էին (1971), և չներեց այդ քայլը: Հաջորդեց բանաստեղծի ողբերգական մահը: Ինչպես ասում են՝ համբերության բաժակը լցվեց, և հենց գրականագետ Ալ. Զաքարյանն էլ դարձավ 1971-ին Գրականության ինստիտուտում տնօրենի դեմ ծայր առած գիտական խռովության պարագլուխը, որովհետև հենց նա էլ ընտրվել էր ակադեմիայի անդամ: Խռովության արդյունքում, որն աննախադեպ բան էր այն տարիներին. տնօրենը փոխվեց, եղան կադրային տեղաշարժեր:

Ալ. Զաքարյանի կերպարի մեջ, ինչպես ասացի, գրական աշխատավորն էր, այն, որ Հրանտ Մաթևոսյանի «Բեռնաձիեր» չարքում իր Ավխո անունն ունի և որի հակադրությունը խնամված, փայլեցված կրկեսային զամբիկն է կամ հովատակը: Այդպիսի դրվածք էր նաև գիտական հաստատությունում, ուր՝ առավելագույնը լրագրողի իմացություններով չպարված, փայլեցված գրագիտուհին և հայերեն ոչ մի գիրք մինչև վերջ չկարդացած, բայց 50 տարի բաժին ղեկավարած ու ակադեմիկոսի աստիճանի հասած գրագետն ավելի էին գնահատված, քան աշխատանքային վաստակով ծանրաբեռն անչպար, անփայլ, արխիվից նոր դուրս եկած Ալ. Զաքարյանը: Իրենից օգտվողները կարողանում էին կազմակերպել իրենց գրքերի գրախոսությունները, չարենցագետի համբավ ձեռք բերել, իսկ ինքը միշտ ստվերում էր, երբեք իրեն առաջ չգցեց, թեև այդ բնագավառում առաջինն ինքն էր:

Անտարբեր չէր շրջապատի հանդեպ և վերաբերմունքը չէր թաքցնում թե՛ ժողովներում կամ բաժնի նիստերում ելույթների ժամանակ, թե՛ մարդկային առնչությունններում: Խիստ էր միջանցքներում պատերին կպած ընթացիկ լրտեսների ու մանկլավիկների հանդեպ, որոնց տարբերում էր առաջին իսկ հայացքից: Կյանք էր մտել ստալինյան հետապնդումների ու հալածանքների երկրորդ ալիքի տարիներին (1949–1951), և փորձը չէր խաբում: Ահա Զաքարյանն անցել է նաև մարդկային հարաբերությունների այս խոչոխոթերի միջով, որովհետև յուրաքանչյուր նոր ղեկավար փորձում էր իրենը պարտադրել և Ալ. Զաքարյանին հարմարեցնել թղթային-պայմանագրային ինչ-ինչ պահանջների, իսկ ինքը իր ճանապարհն ուներ, որին հավատարիմ մնաց

մինչև վերջ և իր անավարտ չարենցապատումով փառքով պսակեց գիտական ուղին: Ոչ ոքի մտքով չանցավ ակադեմիայի անդամների հերթական ընտրությունների ժամանակ առաջադրել նաև նրա թեկնածությունը, մինչդեռ նա արժանավորներից էր, բայց երբեք ինքն իրեն չհրեց առաջ:

Նրան նկատողները քիչ էին, և այդ քչերի մեջ էին Մարտիրոս Սարյանը, ով 1950-ականների վերջերին երկու անգամ նկարել է նրան (մատիտանկար, յուղանկար), Ավետիք Իսահակյանը, ով նրան բնորոշել է «սև աղամանդ» մնայուն արտահայտությամբ …Նկատող-գնահատողներից էր նաև Պարույր Սևակը …

Բաժնի ուրախ առիթներից մեկն էր՝ չնորհավորանքներ, կենացներ և հանկարծ Ալ. Զաքարյանը երգեց: Երգեց «Ճախարակ»-ը և լավ երգեց՝ արցունքն աչքերին … Մարդ էր, և ով գիտի այդ պահին մտքով ո՞ւր էր՝ իր կորած ծննդավայր Փառակայո՞ւմ, Չարենցի ու Սևակի բախտի՞ հետ, թե՞ իր հետ: Բնությունը բարեհաճ չէր գտնվել նրա արտաքինի հանդեպ, ինքն էլ գիտեր և ստիպված կատակի էր տալիս, բայց մարդ էր՝ փայլուն դատարկությունների հանդեպ ուղղված իր անթաքույց քամահրանքի ու հպարտ հեգնանքի, իր ցավի և ուրախության հետ. այո՛, նաև ուրախության, որ այդ պահին իր նոր հրատարակած գրքերից մեկի գինեճոնն էր:

Հարգանք և խոնարհում Ալմաստ Զաքարյանի հիշատակին:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարի հայ գրականության ու մշակույթի պատմություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների:
grakanagetgasparyan@mail.ru

ՀՏԴ : 929:891.981 Մկրտչյան+891.981

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)*

Լևոն Մկրտչի Մկրտչյանը ծնվել է 1933 թ. մարտի 2-ին Վրաստանի Ախալցխա քաղաքում: 1936 թ. ընտանիքը տեղափոխվում է Բաթում: Իր «Аттестат зрелости, или «А» упало, «Б» пропало» *ինքնակենսագրական վիպակում հեղինակը վառ նկարագրել էր իր մանկության և պատանեկության տարիները: Այդ տարիներն այդքան էլ սովորական չէին: Երկրորդ դասարանը նա ավարտել էր գովասանագրով, սակայն երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նրան տեղափոխեցին այլ դպրոց: Ուսուցչուհին չսիրեց նրան: Եվ 11 տարեկան Լևոնին հեռացրեցին դպրոցից՝ որպես անհույս, վատ սովորող աշակերտի: Նա սկսեց փողոցներում ծխախոտ վաճառել… Հետո աշխատեց ճուլարանում՝ որպես աշակերտ: Երբ պատերազմն ավարտվեց, Մկրտչյանը տեղափոխվեց կոչկակարանոց և յուրացրեց այդ արհեստը: Ութնամյակն ավարտեց երեկոյան դպրոցում, ընդունվեց ծովագնացության ուսումնարան, սակայն 2-րդ կուրսում այնտեղից էլ հեռացվեց կարգապահության պատճառով… Էքստեռն հանձնեց քննությունները հասունությանատեստատ ստանալու համար. երազում էր շարունակել ուսումը … Իսկ մասնագիտության ընտրությունն առաջին հայացքից բավականին անսպասելի էր՝ ռուսաց լեզու, գրականություն: Այդ ընտրությունը ծնվեց մի կենսական փաստից. 15 տարեկան պատանին իրենց տան դիմացի կրպակից գնել էր իր կյանքում առաջին գիրքը՝* «Генрих Гейне. Лирика и сатира»*: «Սա իմ առաջին գիրքն էր, իմ առաջին սերը, – հիշում է Լ. Մկրտչյանը.– Շուտով ես գերմանացի պոետի գիրքը ամբողջովին անգիր էի արել: Ռուսական հայկեն սովորեցրեց ինձ սիրել ռուսաց լեզվի պոեզիան, սովորեցրեց սիրել բառը»*[1]*:*

Ուսանողական տարիներին (1954–1959 թթ.) նա արդեն տպագրում էր իր գրականագիտական հոդվածները: Ավարտելով պետհամալսարանը՝ Լ. Մկրտչյանը սկսեց աշխատել այնտեղ, սկզբում՝ որպես ռուս գրականության ամբիոնի լաբորանտ, հետո՝ որպես դասախոս: 1963 թ. նա պաշտպանեց թեկնածուական թեզ՝ «Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը» թեմայով, 1970 թ.՝ դոկտորական՝ «Հայ պոեզիան և XIX–XX-րդ դարերի ռուս բանաստեղծները»:

---

* *Ներկայացվել է 06. II. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

[1] Л. М к р т ч я н. Аттестат зрелости, или «А» упало, «Б» пропало. Автобиографическая повесть в статьях, рассказах, заметках и воспоминаниях. Ереван, 1983, с. 50–51.

1973 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: 1974 թ. ԵՊՀ-ի ռուս լեզվաբանության և թարգմանության տեսության ամբիոնի վարիչն էր, 1979-ից՝ ռուս գրականության ամբիոնի վարիչ: 1975–1979 թթ. նաև եղել է Հայաստանի Գրողների միության քարտուղար: 1980 թ. համարյա 20 տարի նա աշխատել է որպես ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան: 1998 թ. Լ. Մկրտչյանը նշանակվել է նոր ստեղծված Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի ռեկտոր և այդ պաշտոնում աշխատել մինչ մահը (2001 թ., օգոստոսի 22):

Լ. Մկրտչյանի վաստակը բարձր է գնահատված: 1979 թ. նա դարձավ ՍՍՀՄ Գրողների միության դափնեկիր քննադատության գծով՝ «Родное и близкое» (М., 1978) *գրքի համար, 1981 թ. արժանացավ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչմանը: 1983 թ. ստացավ ՀՍՍՀ պետական մրցանակ՝ հայ միջնադարյան գրականությունը ուսումնասիրելու և պրոպագանդելու համար: 1993 թ. պարգևատրվել է Հայաստանի գրողների միության Մ.Նալբանդյանի անվան մրցանակով՝ Մ.Խայիլ Դուդինի* («Для человека ход времен печален». Ереван, 1992) *և Աննա Ախմատովայի* («Анна Ахматова. Жизнь и переводы». Егвард, 1992) *մասին գրքերի համար: 1996 թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ: Պարգևատրվել է Խ. Աբովյանի մեդալով, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Հետմահու՝ Ռուսաստանի Հայերի միության «Ոսկե խաչ» շքանշանով՝ հայ-ռուս և ռուս-հայ հարաբերությունների զարգացման ավանդի համար (2002), ինչպես նաև* «Голос Армении» *թերթի հոբելյանական հուշամեդալով (2003):*

Լ. Մկրտչյանը թողել է հարուստ ժառանգություն՝ որպես գիտնական և գրականագետ, գեղարվեստական թարգմանության տեսաբան, գրող, հուշագիր, հրապարակախոս … Նա 35 գրքի հեղինակ է: Բացի դրանից, 80-ից ավելի գիրք լույս է տեսել իր նախաճեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ (կազմող, նախաբանների և վերջաբանների, ծանոթագրությունների հեղինակ)[2]: Գրականագետի գիտաքննադատական հետաքրքրությունները լայն էին ու բազմակողմանի. հայ գրականություն, ռուս գրականություն, գրական կապեր, գեղարվեստական թարգմանության խնդիրներ … Նրա մենագրությունները, գրքերը, հոդվածները լույս էին տեսնում թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն:

XX դարի երկրորդ կեսի հայ-ռուս և ռուս-հայ գրական կապերի զարգացման ոլորտում Լ. Մկրտչյանի ավանդը եզակի է, բացառիկ: Ռուս քննադատ Կսենիա Լաստան նշում էր. «Մկրտչյանի ստեղծագործությունը նման է կամրջի. իր աշխատանքներում նա հայ ընթերցողին է հասցնում ռուս գրականության ուժեղ հոսքը, իսկ ռուսներին հասնում է դեռևս լիովին չբացահայտված հայ գրականությունը, որի նշանակությունը գնալով ավելի մասշտաբային է դառնում ողջ աշխարհի համար՝ նրա ճանաչելիության աճին զուգահեռ»[3]:

Նախ, Լ. Մկրտչյանը իր գործունեությամբ ստեղծեց մի ամբողջ դարաշրջան: Դա ռուս ընթերցողի համար հայ միջնադարյան պոեզիայի բացահայտ-

---

[2] *Տե՛ս Լևոն Մկրտչյան. Մատենագիտություն (կազմեց Կ. Սահակյանը), Երևան, 2008:*

[3] К. Л а с т а. Воплотиться во времени. –«Звезда» (Л.), 1984, № 2, с. 204.

ման ղարաչրջանն էր: Զէ՞ որ Վ. Բրյուսովի «Поэзия Армении» (М., 1916) *հռչակավոր անթոլոգիայից և* «Антология армянской поэзии» (М., 1940) *ժողովածուից բացի, ուր միջնադարյան բանաստեղծները ներկայացված էին նվազագույն քանակի բանաստեղծություններով և ոչ միշտ հաջողված թարգմանություններով, հայ գրականության այդ շրջանը թարգմանությունների առումով մնում էր համարյա անշարժ վիճակում: Իսկ 60-ականների 2-րդ կեսից սկսեցին լույս տեսնել նոր գրքեր՝ ծնված Լ. Մկրտչյանի նախաձեռնությամբ, ոգեշնչությամբ և քրտնաջան աշխատանքով: Զենք թվարկում այդ բոլոր հրատարակությունները. դրանք նշված են Մկրտչյանի «Մատենագիտության» (էջ 9–15): Սակայն հնարավոր չէ չհիշատակել դրանցից գոնե մի քանիսը: Դա Մկրտչյանի կազմած, իր ներածական հոդվածներով և ծանոթագրություններով լույս տեսած հայ միջնադարյան պոեզիայի անթոլոգիկ ժողովածուներն են՝ զգալիորեն հարստացած թե՛ հեղինակներով, թե՛ բանաստեղծությունների քանակով, թե՛ նոր, ավելի որակյալ թարգմանություններով: Դա, իհարկե, և առաջին անգամ ռուսերեն լույս տեսած Գրիգոր Նարեկացու փոքրիկ գրքույկն էր (Երևան, 1969), ուր զետեղված էին Նաում Գրեբնևի թարգմանությամբ երեք տաղ և ընդամենը վեց դուխ «Մատեան Ողբերգության» պոեմից, որը մեծ արձագանք ունեցավ խորհրդային երկրում: Այս գրքին հաջորդեցին նաև միջնադարյան հայ բանաստեղծների՝ Դավթակ Քերթողի, Գրիգոր Նարեկացու, Կոստանդին Երզնկացու, Նահապետ Քուչակի առանձին ժողովածուները, ուր թարգմանությունները տպագրված էին բնագրերի հետ զուգահեռ, իսկ հավելվածներում զետեղված էին Լ. Մկրտչյանի տողացի թարգմանությունները («Մատեանի ...» 1977 թ. հրատարակության մեջ տողացիների համահեղինակն է Մարգարիտա Դարբինյանը): Նման հրատարակություններ եզակի էին: Դրանք արժանացան բազմաթիվ բարձր, հիացական արձագանքների: Եվ այսպիսով ոչ հայ հեղինակների կարծիքները Գրիգոր Նարեկացու մասին (հոդվածներ, բանաստեղծություններ) դարձան առանձին ժողովածուների նյութ: «Կարդալով Նարեկացուն» գիրքը, որի կազմողն ու նախաբանի հեղինակը Լ. Մկրտչյանն էր, լույս է տեսել ռուսերեն 1974 թ. և 1997 թ. (ավելի հարստացած): Ռուս ընթերցողը ընկալեց և բնութագրեց Նարեկացուն որպես համաշխարհային արժեք ունեցող բանաստեղծի:*

1982 թ. Լ. Մկրտչյանը Լենինգրադում հրատարակեց «Սասունցի Դավիթ» հայ հերոսական էպոսը («Библиотека поэта», Большая серия) *իր ներածական հոդվածով և ծանոթագրություններով:*

Հայ միջնադարյան գրականությունը սկսեցին թարգմանել և հրատարակել տարբեր լեզուներով տարբեր երկրներում (Գերմանիա, Լեհաստան և այլն): Ինքը՝ Լ. Մկրտչյանը, 1986 թ. հրատարակելով Դավթակ Քերթողի «Ողբը ...», դրաբար բնագրին զուգահեռ, զետեղեց թարգմանություններ տարբեր լեզուներով՝ արևելահայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, լեհերեն: Ստանալով Լևոնից այդ գիրքը՝ ականավոր կիրգիզ գրող Չինգիզ Այթմատովը 1986 թ. դեկտեմբերի 12-ին նրան գրել է. «Լևո՛ն, սիրելիս, դու այդքան բան ես անում հայոց հին գրականության վերածննդի ու փառա-

բանուժյան համար, որ Աստված տա ամեն ժողովրդի այնպիսի որդիներ, ինչպես դու ես …»[4]*:*

Ոչ պակաս ջանքեր գործադրեց Լ. Մկրտչյանը, որպեսզի XIX–XX դարերի և ժամանակակից հայ բանաստեղծները ներկայացվեն ռուս ընթերցողին ավելի կատարյալ թարգմանություններով: Նա կազմեց Հովհ. Թումանյանի ռուսերեն հոբելյանական եռահատորյակը (Ереван, 1969)՝ *Լևոն Հախվերդյանի համահեղինակությամբ, Ավ. Իսահակյանի հոբելյանական երկհատորյակը* (М., 1975)*: Լ. Մկրտչյանը Համո Սահյանի ռուսերեն* «Годы мои» (Ереван,1971) *լավագույն ժողովածուի կազմողն էր, նաև՝ հայ հին ու նոր պոեզիայի անթոլոգիական ժողովածուների՝* «Поэты Армении» (Л., 1979), *երկհատորյակներ* «Армянская классическая лирика» (Ереван, 1977), «От «Рождения Ваагна» до Паруйра Севака» (Ереван, 1983)*:*

Լ. Մկրտչյանը զբաղվում էր նաև այն ռուս գրողների ստեղծագործությամբ, ովքեր կապված էին Հայաստանի հետ, գրում էին մեր երկրի մասին և թարգմանում հայ գրականությունը: Բացի 1967 թ. Երևանում լույս տեսած «Это – Армения» *գրքույկից, ուր զետեղված էին ռուս պոետների բանաստեղծությունները՝ նվիրված Հայաստանին, նա կազմել և իր նախաբաններով հրատարակել էր ռուս պոետների առանձին ժողովածուներ, որոնք ընդգրկում էին Հայաստանին նվիրված բանաստեղծություններ և հայ պոեզիայի թարգմանություններ: Դա Վերա Զվյագինցևայի, Նիկոլայ Տիխոնովի, Ալեքսանդր Գիտովիչի, Ելենա Նիկոլաևակայայի, Մարիա Պետրովիխի և այլոց գրքերն են: Իսկ Մ. Պետրովիխի* «Дальнее дерево» *գիրքը (Երևան, 1969) դարձավ հայտնություն նաև ռուս ընթերցողի համար. այն ականավոր ռուս բանաստեղծուհու կենդանության օրոք առաջին ու վերջին գիրքն էր: «Մարիա Պետրովիխը չէր ձգտում տպագրել իր բանաստեղծությունները, – գրել է Յուլիա Նեյմանը: – Բայց երբ հայտվեց մի մարդ, ով ստիպեց նրան հանել դարակից իր բանաստեղծությունները, հավաքել դրանք, երբ հայտվեց այդպիսի մարդ, այդպիսի ընկեր, այն ժամանակ էլ լույս աշխարհ եկավ Պետրովիխի կյանքի օրոք իր սեփական բանաստեղծությունների միակ գիրքը՝ «Հեռավոր ծառը»: Շնորհակալությո՛ւն այդ ընկերոջը, շնորհակալությո՛ւն Լևոն Մկրտչյանին»*[5]*:*

Հնարավոր չէ չնշել նաև Լ. Մկրտչյանի հոդվածները XIX դարի ռուս դասական գրողների՝ Դոստոևսկու, Լ. Տոլստոյի, Չեխովի, Սալտիկով-Շչեդրինի մասին: Հեղինակը ռուս դասական արձակը կարդաց աչքերով ու հոգով մի մարդու, ով ապրում էր իր ժամանակի խնդիրներով, և այդ գրողների երկերից նա հայտնաբերեց այն, ինչ ուշագրավ ու ժամանակակից էր XX դարի երկրորդ կեսի ընթերցողի համար: Իր հոդվածներում դասականն ու այժմեականը սերտ միահյուսվում են իրար: Ինքը՝ Մկրտչյանը, նշել էր այդ հոդվածների, ինչպես և իր գրականագիտական երկերի առանձնահատկությունը. «Ես չէի կարողա-

[4] *Տե՛ս* Краски души и памяти. Левон Мкртчян в статьях, высказываниях, письмах и стихах. Сост. М. Джанполадян. Ереван, 1994, с. 135.

[5] Ю. Н е й м а н. Маруся. – В кн.: М. Петровых. Черта горизонта. Стихи и переводы. Воспоминания о М. Петровых. Сост. Н. Глен, А. Головачева, Е. Дейч, Л. Мкртчян. Ереван, 1986, с. 292.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2023 № 1

նում և արդեն երբեք էլ չեմ կարողանա գիտակցորեն սահմանափակել ինքս ինձ, որպեսզի դուրս չգամ իմ հիմնական թեմայի՝ հայ գրականության սահմաններից: Սակայն եթե լուրջ խորհել, ապա կպարզվի, որ հենց հիմնական թեմայի շահերից ելնելով՝ մեկ-մեկ ցրում ես ուժերդ ... Ինչի մասին էլ, որ ես չգրեի, գրում էի որպես հայ քննադատ: Մասնավորապես, ես չէի կարող Դոստոևսկու և Տոլստոյի վեպերի կողքով անցնել: Դոստոևսկին օգնեց ինձ հասկանալու Գրիգոր Նարեկացու «Մատյանը ...»»[6]:

Հսկայական է Լ. Մկրտչյանի ավանդը գեղարվեստական թարգմանության տեսության զարգացման ասպարեզում: Բազմաթիվ հոդվածներով, հետազոտություններով, ելույթներով՝ նվիրված թարգմանության տեսության, պրակտիկայի, քննադատության խնդիրներին [իր հիմնական աշխատություններն այս ոլորտում հավաքված են «Եթե Բաբելոնում թարգմանիչներ լինեին» գրքում (Երևան, 1976)], նա ձեռք բերեց ճանաչում ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև երկրի սահմաններից դուրս: Որպես թարգմանության տեսաբան՝ Մկրտչյանը հեռու էր մնում վերացական տեսականացումից. միշտ գրում էր կենդանի լեզվով, թեթև, պատկերավոր: Եվ նրա այդ գրելաոճը հաճախ արժևորվում էր իր գրքերի մասին գրախոսականներում: Անդրեյ Ֆյոդորովը՝ խորհրդային երկրում թարգմանության տեսության հիմնադիրներից մեկը, Լ. Մկրտչյանի «Родное и близкое» գրքի իր գրախոսականում նկատել է. «Զուկովսկուց հետո, հավանաբար, ոչ ոք չի գրել գեղարվեստական թարգմանության մասին այդքան կենդանի, մատչելի, գրավիչ, ես նույնիսկ կասեի՝ ուրախ, ինչպես Լ. Մկրտչյանը»[7]:

Մկրտչյանը՝ որպես գիտնական, միշտ հետաքրքրվում էր թարգմանական վարպետության հարցերով: Նա հետազոտում էր Ալ. Բլոկի, Վ. Բրյուսովի, Վ. Զվյագինցևայի, Մ. Պետրովիխի թարգմանական արվեստը, ուսումնասիրում թարգմանիչների արխիվները, թարգմանությունների սևագիր տարբերակները, կերտում էր թարգմանիչների ստեղծագործական դիմանկարներ: Աննա Ախմատովայի թարգմանական արվեստի մասին գիրքը շատ բարձր գնահատվեց գրական, ընթերցողական շրջաններում:

Մկրտչյանի մեջ ծնվում էին օրիգինալ մտահղացումներ: Այսպես, որոշել էր հրատարակել ժողովածու, ուր զետեղված լինեն բանաստեղծությունները պոեզիայի թարգմանության մասին: Նրա կազմած «Поэзию в язык из языка» գիրքը (1978) դարձավ նշանավոր երևույթ այն տարիներին թարգմանության մասին հրատարակված գրքերի մեջ և մինչ այժմ չի կորցրել իր արժեքը:

Նշանակալից է Լ. Մկրտչյանի դերը և թարգմանական գործի կազմակերպման, թարգմանական կադրերի պատրաստման (թե՛ թարգմանիչների, թե՛ թարգմանությունները վերլուծելու և գնահատելու մասնագետների) ոլորտում: ՍՍՀՄ գրողների միության հետ նա ԵՊՀ-ում կազմակերպել էր համամիութենական և համաշխարհային կոնֆերանսներ՝ նվիրված գեղարվեստական թարգմանության խնդիրներին: Այդ գիտաժողովների նյութերը հրատարակվե-

---

[6] Л. М к р т ч я н. «Да придут к нам благородные мысли со всех сторон ...». М., 1983, с. 5

[7] А. Ф е д о р о в. Искусство слова. – «Вопросы литературы» (М.), 1979, № 2, с. 259.

ցին երկու ստվար ժողովածուներում. «Художественный перевод. Взаимодействие и взаимообогащение литератур» (1973) *և* «Художественный перевод. Вопросы теории и практики» (1982)*: Ինքը՝ Լ. Մկրտչյանը, ակտիվորեն մասնակցում էր համամիութենական և համաշխարհային տարբեր կոնֆերանսների՝ նվիրված գեղարվեստական թարգմանության հարցերին (ոչ միայն Մոսկվայում և Խորհրդային Միության հանրապետություններում, այլև աշխարհի տարբեր քաղաքներում): Եվ միշտ լսող արժանվույն ներկայացնում էր իր Հայաստանը: Հնարավոր չէ նաև մոռանալ, որ աշխատելով Հայաստանի գրողների միությունում որպես քարտուղար՝ Լ. Մկրտչյանը գործի դրեց բոլոր ուժերը, որպեսզի Հայաստանում վերածնվի հնագույն «Թարգմանչաց տոնը»: Եվ այդ տոնը սկսեցին նշել 70-ականների վերջերից:*

Լ. Մկրտչյանը նաև հուշագրող էր, գրականության և արվեստի ականավոր գործիչների՝ Ալ. Գիտովիչի, Ա. Տարկովսկու, Ի. Էրենբուրգի, Վ. Զվյագինցևայի, Կ. Զուկովսկու մասին սքանչելի հուշերի, նաև՝ Հարության Գալենցի, Միխայիլ Դուդինի, Համո Սահյանի, Մարիա Պետրովիխի, Կայսին Կուլիևի, Զինգիզ Այթմատովի մասին գրքերի հեղինակը:

Մկրտչյանը թողել է նաև հետաքրքիր ճամփորդական ակնարկներ, ուր նկարագրել է իր տպավորությունները օտարերկրյա ուղևորություններից (Ֆրանսիա, ԳԴՀ, Մեքսիկա, Մոնղոլիա, Սիրիա, Հնդկաստան, Կանադա): Հետաքրքիր է նաև ինքնակենսագրական արձակի: Բացի արդեն նշված «Аттестат зрелости, или «А» упало, «Б» пропало» *գրքից, ինքնակենսագրական է նաև Վրաստանի մասին հետմահու լույս տեսած* «Цоцхали вар, цоцхали» *գիրքը (Երևան, 2001): Իսկ Մկրտչյանի կյանքի օրոք լույս տեսած վերջին գիրքը դարձավ* «Слово царя, или мелочь разных достоинств» *(2001), ուր նկարագրված են կյանքից վերցրած առակաբանական պատմություններ, հետաքրքիր դրվագներ:*

1980-ականների վերջին – 90-ականների սկզբին, երբ Հայաստանում և Խորհրդային Միությունում առաջնային դարձան հասարակական, քաղաքական խնդիրները, Մկրտչյանը դիմեց հրապարակախոսական գրչին: Իր այդ ժանրի հոդվածները՝ գրված կյանքի վերջին տասնամյակում, տպագրված են «Прежде всего – не убивать» (Ереван, 1991), «Слепой, но не настолько» (Ереван, 1998), «Не хочу быть иностранцем в России» *(2001, լույս է տեսել հետմահու) գրքերում: Հեղինակն արտահայտում էր հստակ կարծիք իր օրերի տարբեր հարցերի մասին: Այսպես, նա բաց նամակ գրեց աղրբեջանական գրող Մաքսուդ Իբրագիմբեկովին: Մկրտչյանը ստորագրում էր հայ մտավորականների կոլեկտիվ նամակների տակ՝ ուղղված Միխայիլ Գորբաչովին: Եվ իր առաջին ինֆարկտը նա ստացավ 1990 թ. հունվարի վերջին՝ Բաքվում տեղի ունեցած հայերի ջարդերից հետո, երբ* «Дружба народов» *ամսագրի խմբագրությունը հավաքել էր Մոսկվայում հայ և աղրբեջանցի գրողների կլոր սեղան՝ Ղարաբաղի հարցը քննարկելու նպատակով: Համարձակ, խիզախորեն գրում էր նաև անկախ Հայաստանի նոր իշխանությունների մասին: Հատկապես սուր էին Մկրտչյանի հոդվածները՝ ուղղված այն քաղաքականության դեմ, որն իրագործվում էր Ռուսաստանի, ռուս մշակույթի, ռուսաց լեզվի դեմ: Այդ հոդվածների վերնագրերն արդեն բավականին խոսուն են.* «Россия – это

не только Ильичи и Свердловы», «Россия – это не «какая-нибудь другая страна»», «О русском языке и о многом другом», «У нас языковая политика тупая и тупиковая», «Русский как национальная необходимость», «Нельзя делать языковую политику с лопатой в руках» *և այլն: «Իսկ ինչ վերաբերում է հակառուսական տրամադրություններին, – գրում էր նա, – ապա ես ընկալում եմ դրանք որպես հակահայկական»*[8]*: Լ. Մկրտչյանն այն հայ մտավորականներից էր, ում ակտիվ միջամտությունը կանխել էր «Հայրենասերների» կողմից նախապատրաստվող վայրագության հերթական ակտը՝ ոչնչացնել, քանդել Պուշկինի արձանը Երևանում: Իսկ իր սուր ելույթը՝ Վ. Բրյուսովի անվան ինստիտուտում ռուսաց լեզվին նվիրված կոնֆերանսում, ուր վերջերս հանել էին մուտքի առաջ կանգնեցված հայ ժողովրդի մեծ, անճնվեր բարեկամի արձանը, առիթ դարձավ, որ որոշ հայկական թերթերում նրան մեղադրեն ոչ այլ ինչի, քան … հակահայրենասիրության մեջ:*

Լևոն Մկրտչյանը իսկական հայ էր, բայց նաև՝ «աշխարհի քաղաքացի», ինչպես իրավացիորեն բնութագրել էր նրան քննադատ և թարգմանիչ Ելենա Մովչանը[9]*: Նա ականավոր, բացառիկ մարդ էր: Մկրտչյանի ստեղծածի և գործունեության նշանակությունն անգնահատելի է մեր մշակույթի պատմության մեջ:*

ՄԱԳԴԱ ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ

Բ. գ. դ., ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայ գրականության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գրականություն, ռուս գրականություն, հայ-ռուս և ռուս-հայ գրական կապեր, գեղարվեստական թարգմանության խնդիրներ: Հեղինակ է 7 գրքի և շուրջ 180 հոդվածի: m-poladyan@mail.ru

[8] Л. М к р т ч я н. Не хочу быть иностранцем в России. Ереван, 2001, с. 32.

[9] Е. М о в ч а н. Левон Мкртчян – гражданин мира и патриот Армении. – В кн.: Пусть не гаснет свет в окне Левона. Сост. К. Саакянц. Ереван, 2004, с. 202.

ՀՏԴ : 929:008(479.25) Պետրոսյան+39

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ
(Ծննդյան 75-ամյակի առթիվ)*

ՌԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ – Պարո՛ն Պետրոսյան, ինչպե՞ս սկսեցիք Ձեր գիտական ուղին:

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ – Ես մանկուց սիրել եմ կարդալ, ամեն ինչ, բայց, իհարկե, հատկապես գեղարվեստական գրականություն: Տանը հարուստ գրադարան ունեինք: Հայրս՝ գրականագետ Եղիշե Պետրոսյանն էր, և մենք ստանում էինք հայագիտական մի շարք հանդեսներ, որոնք նույնպես սիրով կարդում էի: Ութերորդ դասարանում կարդացի Աճառյանի «Լիակատար քերականության» առաջին հատորը, ապա՝ «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորը (առաջինը չունեինք): Ես կարծես նոր աշխարհ հայտնաբերեցի ինձ համար և տարվեցի նրանով: Բայց հայրս թաքցրեց այդ գրքերը. նրա դառը փորձը ցույց էր տալիս, որ Խորհրդային Միությունում հումանիտար գիտությամբ զբաղվելը շատ ծանր բան է: Այն ժամանակներում ամենահեղինակավոր գիտությունը ֆիզիկան էր (հարաբերականության տեսություն, քվանտային ֆիզիկա, տիեզերագնացություն և այլն): 1966 թ. ընդունվեցի Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, բայց շուտով հասկացա, որ դա իմը չէ, չեմ ուզում այդտեղ սովորել: Ինչևէ, ստացա կենսաֆիզիկոսի մասնագիտություն և աշխատեցի տարբեր ինստիտուտներում, ամենից երկար՝ Հայկական հանրագիտարանի խմբագրությունում՝ որպես կենսաբանության բաժնի խմբագիր: Սակայն դա ինձ չէր բավարարում. ես երազում էի զբաղվել հայագիտությամբ: 1982-ին աներոջս՝ Հայաստանի լավագույն բանագետ Սարգիս Հարությունյանի մի նվերը՝ «Мифы народов мира» *հանրագիտարանը, նոր լիցք տվեց իմ այդ ձգտմանը: Ուղիղ 40 տարի առաջ՝ 1983 թ. մարտի սկզբին, երկարատև հիվանդությունից հետո որոշեցի աստենախոսություն գրել հայ առասպելաբանության թեմայով և սկսեցի ինտենսիվորեն աշխատել: Այդ ժամանակ, հանրագիտարանին զուգահեռ, աշխատում էի նաև երաժշտական դպրոցում. երեկոյան կիթառի դասեր էի տալիս: Ցերեկային ընդմիջմանը գնում էի Հանրային գրադարան՝ գրքեր կարդալու, իսկ երեկոյան՝ աշակերտներիս հետ դասերը կարճ կապելով՝ նորից կարդում գիտական գրքեր: Մինչև ապրիլի վերջ արդեն մի շարք գաղափարներ ձևավորվեցին ինձ մոտ: Այդ մասին պատմեցի Ս. Հարությունյանին, որը շատ հավանեց գրանք: Իմ*

---

* *Ներկայացվել է 10. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

աշխատանքային թեմաների մի նշանակալի մասը՝ հայ առասպելաբանության հնդեվրոպական ժառանգությունը, հայոց ազգածագման էթիունյան վարկածը և այլն, որոնցով մինչ օրս զբաղվում եմ, այդ մեկուկես ամսում մտածածն է:

Ռ. Գ. – *Ո՞ր հարցն էր այդ ժամանակ Ձեր ուշադրության կենտրոնում:*

Ա. Պ. – *Ըստ ռուս ականավոր գիտնականներ Վյաչեսլավ Իվանովի և Վլադիմիր Տոպորովի՝ հնդեվրոպական առասպելաբանության մեջ ամպրոպի աստծու հակառակորդ օձ-վիշապի անունը կազմվել է *wel- արմատով: Ես այնքան էի ծանոթ հայ լեզվաբանությանը, որ գիտեի՝ դրա հայերեն ժառանգը պիտի լիներ գեղ- (վիշապն իրանական փոխառություն է): Եվ միանգամից մտքիդ է գալիս ազգածին ավանդության Գեղամ նահապետը, որի անունով են կոչվել Գեղամա լիճը և լեռները: Իսկ վիշապ քարակոթողներն ամենամեծ խտությամբ հանդիպում են հենց Գեղամա լեռներում, Գեղ լեռան վրա և Գեղի ամրոցի կողքին: Գեղամի երկրամասը՝ Գեղաքունին ուրարտական արձանագրություններում վկայված է* Uelikuni *և* Uelikuhi *ձևով: Ուրեմն, այդ երկիրը կարող էր հնդեվրոպական բնակչություն ունենալ: Սա շատ անսպասելի էր այն ժամանակվա գիտության տեսակետից, քանի որ կարծում էին, որ հնագույն հայերը կարող էին տեղայնացվել լեռնաշխարհի միայն արևմտյան տարածքներում:*

Ռ. Գ. – *Ինչպե՞ս ընդունվեցին Ձեր մտքերը գիտական շրջանակներում:*

Ա. Պ. – *Հանդիպում էի տարբեր գիտնականների, ներկայացնում իմ գաղափարները և սովորաբար շատ դրական արձագանքներ ստանում: Սակայն բարդ էր տպագրվելու խնդիրը: Գևորգ Ջահուկյանը, ծանոթանալով իմ առաջին հոդվածի ձեռագրին, շատ բարձր կարծիք հայտնեց դրա վերաբերյալ, բայց մի երկրորդական մանրամասնության չուրջ համաձայնության չեկանք, և դրանից հետո Լեզվի ինստիտուտից ես մշտապես բացասական գրախոսություններ էի ստանում: Հատուկ գնացի Մոսկվա, հանդիպեցի Վ. Իվանովի հետ, որը հիանալի գրախոսություն տվեց, բայց դա էլ չօգնեց: Ի վերջո, մի քանի հայ ակադեմիկոսների դրական կարծիքների, Սարգիս Հարությունյանի ակտիվ աջակցության և խմբագիր Վարդգես Միքայելյանի բարյացակամության շնորհիվ իմ այդ հոդվածը 1987 թ. տպվեց ՀՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում: Իսկ 1988-ին այդ հոդվածի շնորհիվ ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Գևորգ Տիրացյանն ինձ աշխատանքի ընդունեց: Այսպիսով, քառասուն տարեկանում սկսեցի աշխատել որպես ավագ լաբորանտ, որը շատ ծանր էր ֆինանսական առումով, բայց ես երջանիկ էի: 1991-ին, կրկին Գ. Տիրացյանի նախաձեռնությամբ, գիտնականների փոխանակման ծրագրով գործուղման մեկնեցի ԱՄՆ: Դա մեծ հնարավորություն էր արևմտյան գիտության հետ չփվելու: Ես այնտեղ ծանոթացա ամերիկացի շատ գիտնականների հետ, կարողացա շատ բան կարդալ, սովորել, ապա՝ գիտական դրականություն պատճենել և արկղերով բերել Հայաստան: Մինչև 2000 թ. հրատարակեցի երկու մենագրություն և պաշտպանեցի թեկնածուական, ապա՝ դոկտորական ատենախոսություններ:*

Գիտնականի աշխատանքը դժվար բան է: Պետք է անընդհատ կարդաս, սովորես: Դժվար էր հատկապես մեծ տարիքում օտար լեզուներ սովորելը: Բայց կար նաև ավելի մեծ դժվարություն: Իմ առաջին հոդվածները տպագրելու համար երկարատև պայքարի և անիմաստ խոչընդոտների պատճառով ես

երբեմն այնքան եմ հիասթափվել, որ տարիներով չեմ զբաղվել գիտությամբ: Ինչևէ, չնայած մեր տարաճայնությանը, ես Ջահուկյանին նվիրել էի իմ գրքերը: 1990-ականների վերջին, երբ մի անգամ հանդիպեցի նրան, նա անսպասելիորեն ինձ օրհնեց. ուրեմն հավանել էր իմ գործերը: Ընդհանրապես, իմ աշխատանքների մասին շատ դրական կարծիքներ են հայտնել մի շարք նշանավոր, նույնիսկ մեծ գիտնականներ (Վյաչեսլավ Իվանով, Իգոր Դյակոնով, Յաան Պուհվել): Ջահուկյանի այդ խոսքով վերջին արգելքն այլևս հաղթահարված էր: Իմ աշխատանքների տպագրության ճանապարհը բաց էր:

Ռ. Գ.– Ձեր ուսումնասիրության հիմնական ուղղություններից մեկն առասպելաբանությունն է: Ինչո՞ւ է կարևոր այդ ոլորտի ուսումնասիրությունը, և ի՞նչ նոր շերտ բացեցիք Ձեր աշխատանքով:

Ա. Պ. – Հնագույն մշակույթների հիմքն առասպելաբանությունն է: Առասպելաբանությունն է միավորել իրենում դեռևս իրարից լրիվ չառանձնացած կրոնը, արվեստը, գրականությունը, փիլիսոփայությունը և ձևավորել մարդկանց աշխարհայացքը: Սակայն հայոց հնագույն առասպելները չեն պահպանվել: Միայն էպոսների հիման վրա կարելի է որոշ գաղափար կազմել դրանց մասին: Իսկ նախաքրիստոնեական ժամանակների հայտնի աստվածների մեծ մասի անունները իրանական են (Արամազդ, Անահիտ, Վահագն, Միհր): Ընդհանրապես, իրանական ազդեցությունը հզոր շերտ է թողել մեր լեզվում և մշակույթում. իրանական են նաև բոլոր հին հայ արքաների ու հայտնի գործիչների հսկայական մեծամասնության անունները: Մեր հին բանահյուսությունը՝ էպոսները ևս խճողված են իրանական տարրերով: Ժամանակին նույնիսկ կարծել են, որ հայերենն իրանական լեզու է, բայց պարզվեց, որ՝ ոչ, հնդեվրոպական լեզուների մի առանձին ճյուղ է: Եվ մեր, բայց հատկապես արևմտյան գիտնականները ողջ հայ մշակույթն ուսումնասիրում էին իրանական ազդեցությունների համատեքստում, մի տեսակ որպես իրանական հետազոտությունների և վերակազմությունների դաշտ: Սակայն ակնհայտ է, որ հնագույն հայերը, ինչպես և աշխարհի մյուս ժողովուրդները, հնում, մինչև իրանական ազդեցությունը, ունեցել են սեփական լեզվով կոչվող աստվածներ, նրանց մասին առասպելներ և համապատասխան կրոն:

Հնարավո՞ր է եղած տվյալների հիման վրա գտնել մեր առասպելների և դիցաբանական անունների բնիկ հայկական՝ հնդեվրոպական և այլ, ոչ իրանական շերտերը (ինչպես օճ-վիշապի դեղ անվանումը): Այդ առումով նշանակալի նյութ է տալիս ազգածին ավանդությունը՝ նրա մեծ հերոսները՝ Հայկը, Արամը և Արան հին աստվածների վիպականացած կերպարներ են: Ապա, հայ և իրանական աստվածների անունների նույնությունից չի բխում կերպարների նույնությունը: Պարզվում է, որ իրանական անունների տակ պահպանվել են հին աստվածների՝ իրանականներից տարբեր կերպարներ: Այսպես, Միհրը Իրանում եղել է արևի աստված, նույնացված՝ հունական Հելիոսի և Ապոլոնի հետ, իսկ հայոց մեջ նա նույնացվել է աստղերկրյա կրակի և դարբնության աստված Հեփեստոսի հետ: Միհրի էպիկական ժառանգ Փոքր Մհերը կյանքի վերջում մտնում է «Մհերի դուռ» կոչվող ժայռափոր կառույցից ներս, իսկ այն ուրարտական դարաշրջանում կոչվել է «Խալդիի դարպասներ»: Ասվածը պարզորոշ ցույց է տալիս իրանական և հայկական Միհրերի տարբերությունը և հայոց Մհերի ու Խալդիի կերպարային նույնությունը:

Ես փորձել եմ հին հայ հոգևոր մշակույթում բացահայտել ոչ միայն բնիկ հայկական՝ հնդեվրոպական, այլև այն հինարևելյան շերտը, որը մտել է հայոց մեջ հազարամյակներ Միջագետքի, Սիրիայի և Փոքր Ասիայի հնագույն քաղաքակրթությունների հետ շփման արդյունքում:

Ռ. Գ. – Կարո՞ղ ենք ասել, որ հնարավոր եղավ բեկել հայ առասպելաբանության և կրոնի վերաբերյալ այդ մոտեցումը:

Ա. Պ. – 1990-ականներից սկսած՝ այդ թեմայով մի շարք հոդվածներ ու գրքեր եմ հրատարակել հայերեն, անգլերեն և ռուսերեն, Հայաստանում, Եվրոպայում և Ամերիկայում: Ներկայումս հայագիտության այս ճյուղը, կարծում եմ, դուրս է եկել իրանագիտական հետազոտությունների դաշտի կարգավիճակից: Նույնիսկ որոշ համահնդեվրոպական վերակազմություններ համար էական է դարձել հայկական նյութը (օրինակ՝ հնդեվրոպական պատանեկան ռազմական եղբայրություններ վերակազմության մեջ կարևորում են հայկական ավանդական «թուխ մանուկների» և Արամ նահապետի մասին տվյալները):

Ռ. Գ. – Խոսեցինք հայերի կրած ազդեցության մասին: Իսկ տեսնո՞ւմ ենք հայկական հետքն այլ մշակույթներում:

Ա. Պ. – Իրոք, մեր գիտնականներն ավելի շատ խոսել են հայերի կրած ազդեցությունների մասին: Սակայն, ակնհայտ է նաև հայկական ազդեցությունը հարևան մշակույթների վրա: Այսպես, ուրարտական դիցարանում բացահայտում է հնդեվրոպական՝ հայկական նշանակալի տարր, և՛ անունների, և՛ դիցարանի կառուցվածքի մակարդակով: Ապա, մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ կովկասյան նշանավոր նարթական էպոսը չափազանց հզոր ազդեցություն է կրել հայկական «Վիպասանքից» (այսպես, այստեղ հանդիպում են հայոց Սաթենիկի, Արտավազդի և Արգավանի կերպարները):

Ռ. Գ. – Անդրադառնանք հայ ժողովրդի ծագման թեմային. ինչպե՞ս սկսեցիք զբաղվել այդ հարցով:

Ա. Պ.– 1964 կամ 65 թվականին ես մի գրախանութից 30 կոպեկով գնեցի Ջահուկյանի «Хайасский язык и его отношения к индоевропейским языкам» *գիրքը: Ըստ պատմության դասագրքերի, ես կարծում էի, որ հայոց հայասական ծագումն ապացուցված փաստ է: Սակայն պարզվեց, որ ոչինչ էլ ապացուցված չէ: Տարիներ անց կարդացի Իգոր Դյակոնովի գիրքը հայոց նախապատմության վերաբերյալ և համոզվեցի, որ եղած բոլոր տեսակետներն էլ շատ վարկածային են:*

*Իմ վարկածի համաձայն՝ վիշապ քարակոթողները հնդեվրոպական ամպրոպային առասպելի հետ կապված հուշարձաններ են, և եթե դա այդպես է, ուրեմն հենց Արևելյան Հայաստանում մ. թ. ա. երրորդ-երկրորդ հազարամյակներից եղել է հնդեվրոպական՝ հայկական տարր: Այս երկրամասի ուրարտական էթիունի անվանումը կարող է բխեցվել հայ ցեղանվան հին *Հաթիո- ձևից (որը պետք է ծագեր հնդեվրոպական *poti- «տեր» արմատից): Այդ երկրի հայտնի մի արքայի Դիուծինի անունը հեշտությամբ ստուգաբանվում է հայերենով՝ «աստծու ծնունդ» (դի «աստված» և ծին «ծնունդ», համմտ. հունական Դիոգենես և Թեոգենես նույն կառուցվածքով անունները): Ուրարտական արձանագրությունների հսկայական կորպուսում չկա մեկ այլ այդքան ակնհայտ հայկական անուն: Հայոց ազգածին ավանդությունը ևս Հայաստանի ու*

հայ ժողովրդի կազմավորումը տեղայնացնում է Արարատյան դաշտում՝ Արմավիր մայրաքաղաքի շուրջ, որտեղ ապրել և գործել են Հայկին հաջորդած առաջին նահապետները: Այդ մասին գրել եմ սկսած իմ առաջին հոդվածներից, իսկ ասելիքս ամփոփել հայոց ազգածագման վերաբերյալ «Հայ ժողովրդի ծագման խնդիրը» մենագրության մեջ (2017 թ., անգլ. հրատ. 2018 թ.), որտեղ, ի տարբերություն մյուս նմանօրինակ աշխատությունների, ներկայացվում ու քննվում են նաև մյուս գիտական վարկածները, դրանց ուժեղ և թույլ կողմերը:

Ռ. Գ. – Այս քննարկումները չարունակվո՞ւմ են տարբեր գիտական հարթակներում:

Ա. Պ. – Անցած տարի օգոստոսին “Science” *հանդեսում տպվեց հեղինակների մի մեծ խմբի երեք կարևորագույն հոդված հնէվերապական ցեղերի նախահայրենիքի և վաղ գաղթերի վերաբերյալ, ըստ գենետիկական տվյալների, որտեղ նշանակալի տեղ է հատկացվել հայկական և հայաստանյան նյութին: Վերջին տարիներին գենետիկական տվյալներն այդ հարցում սկսել են լեզվաբանության ու հնագիտության հետ զուգընթաց կարևորագույն դեր կատարել: Ներկայումս բազում հարցերում ընդհուպ մոտեցել ենք խնդիրների լուծմանը: Ընդ որում, ըստ այս վերջին տվյալների ևս առավել հավանական է պատկերանում հենց իմ վարկածը:*

Ռ. Գ. – Վերջում կուզեի խոսել Ձեր ներկայիս աշխատանքների, գիտության Ձեր ոլորտի անելիքների և խնդիրների մասին: Ի՞նչ ծրագրեր կան: Պետական քաղաքականությունը ի՞նչ նպաստակներ պետք է դնի իր առջև:

Ա. Պ.– Իմ աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ Հայաստանի նախապատմության, հնագույն պատմության, էթնիկական կազմի և մշակույթի հարցեր, Հին Արևելքի, Հայկական լեռնաշխարհի և Կովկասի հին դիցարաններ, առասպելներ և էպոսներ, հնդեվրոպական համեմատական առասպելաբանություն ու լեզվաբանություն, ժամանակակից ազգագրություն և բանահյուսություն: Ընդգրկումը բավական լայն է՝ նախապատմությունից և հին հուշարձաններից մինչև լեզվաբանություն, ժամանակակից հայկական սփյուռքի կառուցվածք և մանկական բանահյուսություն: Վերջին տպված հոդվածներս եղել են Սյունիքի հնագույն բնակչության, հայ-խուռռաուրարտական առուգաբանությունների, Արագած լեռնանվան և ուրարտական Թեյշեբա աստծու հայկական ծագման վերաբերյալ: Խմբագրել եմ մի շարք գիտական գրքեր, 2006-ին պ. գ. ղ. Արամ Քոսյանի և Երվանդ Գրեկյանի հետ հիմնել ենք “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies” *հանդեսը, որը նշանակալի դեր է կատարել հայաստանյան գիտությունն Արևմուտքում հանրահռչակման գործում: Ընդհանուր առմամբ, ունեմ 340 տպագրված նյութ, մեծագույն մասով գիտական հոդվածներ, 15 գիրք, բայց նաև գիտամասսայական ու այլ հրապարակումներ (ճանապարհորդական նոթեր, էսսեներ, երգիծական մանրապատումներ):*

Ըստ իս՝ հայաստանյան արդի հայագիտության առավել կարևոր խնդիրն է Հայաստանի նախապատմության, վաղ պատմության և Ուրարտուի պատմության հարցերը ժամանակակից գիտության լույսի ներքո հայաստանյան հասարակությանը ներկայացնելը: Վերջին տասնամյակներին հնագիտական, մարդաբանական, սեպագրական, լեզվաբանական և գենետիկական հետազո-

տուժյունների չնորհիվ հիմնովին թարմացվել է Հայաստանի հնագույն անցյալի ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը: Նորահայտ նյութերն ու տվյալները, քննական և համեմատական վերլուծությունների արդյունքներն արմատապես փոխում են Հայկական լեռնաշխարհի մինչպատմական և վաղպատմական շրջանների մասին եղած նախկին պատկերացումներն ու տեսակետները: Սակայն, մասնավոր խնդիրների և ընդհանրացնող ուսումնասիրության բացակայության հետևանքով առ այսօր մեզանում հաճախ շրջանառվում են հնացած տվյալներ և կեղծ կամ մերձգիտական տեսակետներ, ինչի հետևանքով աղավաղվում է Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային գործընթացների և հայոց ազգածագման ու էթնիկական պատմության ողջ համապատկերը: Մինչդեռ Հայաստանում ներկայումս ապրում և ստեղծագործում են միջազգային հեղինակություն ունեցող գիտնականներ, որոնց միացյալ ջանքերով հնարավոր է մի քանի տարվա ընթացքում դուրս գալ ժամանակակից գիտությանն անհարիր այս վիճակից: Ահա նրանց անունները. հնագետներ Պավել Ավետիսյան և Արսեն Բոբոխյան (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նախկին ու ներկայիս տնօրենները), խեթագետ Արամ Քոսյան և Երվանդ Գրեկյան: Վերջին ամիսներին փորձում եմ այս գիտնականներին միավորել և Գիտության պետական կոմիտեի աջակցությամբ ստեղծել մի կենտրոն կամ աշխատանքային խումբ, որը կզբաղվի նշված հարցերի վերաբերյալ նոր ուսումնասիրությունների, այդ թվում՝ ընդհանրացնող գրքերի հրատարակությամբ: Ինչպես ասացի, մեր իրականության մեջ գիտնականը երբեմն ստիպված է լինում հաղթահարել անհամաստ, նույնիսկ հիասթափեցնող արգելքներ: Մինչդեռ անհրաժեշտ է օգնել նրան: Շատ կուզեի, որ մեր գիտությամբ զբաղվող կազմակերպությունները՝ Գիտության պետական կոմիտեն և Ակադեմիան, այդ հարցում օգնեին մեզ:

Հարցազրույցը վարեց ՌԻՄԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՀՏԴ : 929:800 Խաչատրյան

ԳՈՒՐԳԵՆ ԿԻՊՐՈՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)*

Փետրվարի 1-ին լրացավ բ. գ. դ., պրոֆ. Գուրգեն Կիպրոնի Խաչատրյանի ծննդյան 70-ամյակը: Աստված նրան պարգևել է ամենակարևորը՝ տոհմիկ մանկավարժի ընտանիքի զավակ լինելու բախտավորություն և բնական խելք, ջանասիրություն ու իմաստնություն: Եվ ահա շուրջ քառասուն տարի է՝ Գ. Խաչատրյանն իր գիտական ներդրումն է բերում հայ լեզվաբանական մտքի զարգացման գործում:

Իր առաջին գիտական աշխատանքը՝ «Նախդիրների և նախադրությունների առնչակցությունը» («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1981, № 6, էջ 51–56) հոդվածը, լույս է ընծայել դեռևս դպրոցում հայոց լեզու և գրականություն դասավանդելու տարիներին: 40 տարի անց արդեն հրապարակի վրա են Գ. Խաչատրյանի՝ շուրջ 120 գիտական ուսումնասիրությունները (մենագրություններ, հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ): Դրանց քննությունը ցույց է տալիս, որ նա գերազանցապես անդրադառնում է այնպիսի թեմաների, որոնց առումով կա՛մ համակողմանի ուսումնասիրության խնդիր կա, կա՛մ էլ նորովի ուսումնասիրության խնդիր: Ասվածը պայմանավորված է նրանով, որ Գ. Խաչատրյանը, որպես կանոն, լեզվական իրողությունները քննության է ենթարկում արդիական մոտեցումով:

Բավականին ընդգրկուն է Գ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը (հայոց լեզվի պատմություն, գրաբարի բառագիտություն և քերականություն, միջին հայերենի շարահյուսություն և ոճաբանություն, ժամանակակից հայոց լեզվի բառագիտություն, շարահյուսություն և ոճաբանություն, բառարանագիտություն, թարգմանչություն, գրականագիտական հարցեր), սակայն պարզորոշ երևում է, որ նրա գիտական նախասիրությունը, այնուամենայնիվ, գրաբարն է, մասնավորապես՝ գրաբարի շարահյուսությանը վերաբերող հարցերը: Ամենևին պատահական չէ, որ նրա՝ թվով 60-ից ավել մենագրություններն ու հոդվածներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են գրաբարին:

Այդ շարքից առանձնանում է Հոբելյարի «Գրաբարի վերլուծական բայերի արժույթը» (2000) աշխատությունը՝ նվիրված շարահյուսության բնագավառի արդիական հարցերից մեկի՝ բայի արժույթի ուսումնասիրությանը, որի համար լեզվական նյութ են ընտրվել դասական հայերենի վերլուծական բայերը: Հեղինակը համակարգված քննության է ենթարկել այդ բայերի արտահայ-

---

* *Ներկայացվել է 20. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

տության և բովանդակության պլանները, միաժամանակ առանձին գլուխներով ու ենթագլուխներով ուսումնասիրել ներգործական, կրավորական և չեզոք սեռի վերլուծական բայերի արժութային առանձնահատկությունները: Ուսումնասիրությունը կարևոր է նաև այն բանով, որ նրանում հայ լեզվաբանության մեջ բայի արժույթի հասկացությունը ստացել է իր լիարժեք դրսևորումը (առաջին անգամ բայի արժույթի ուղեծրում տեղ են գտել ոչ միայն ենթակառուցությունը, ստորոգառությունը, խնդրառությունն ու պարագառությունը, այլև բայի կապակցելիության հինգերորդ դրսևորումը՝ կոչականառությունը):

«Գրաբարի միակազմ նախադասությունները» (2002) մենագրությունը ևս նվիրված է գրաբարին, մասնավորապես՝ նրա հաղորդակցական միավորներից մեկի՝ միակազմ նախադասությունների ուսումնասիրությանը: Հեղինակը գրաբարի ընձեռած հարուստ լեզվական փաստերի հիման վրա կատարել է համակողմանի քննություն՝ առաջին անգամ դիտարկելով միակազմ նախադասությունների նոր տեսակներ և արտահայտության նոր միջոցներ: Նա առաջարկել է միակազմ նախադասությունների դասակարգման նոր տարբերակ: Հայական միակազմ նախադասությունների դասակարգման նորույթներից մեկն էլ այն է, որ այստեղ առանձնացվել է միաղիմի միակազմ նախադասությունների երկու ենթատեսակ՝ անկախ և զուգորդվող: Վերոնշյալ երկու աշխատությունների վերջինի մի առանձին գլուխը՝ «Գրաբարի բայական միակազմ նախադասությունները (V դ.)», 1986 թ. հրապարակային պաշտպանության է ներկայացվել որպես թեկնածուական ատենախոսություն, իսկ «Գրաբարի վերլուծական բայերի արժույթը» ուսումնասիրությունը 2000 թ. պաշտպանել է որպես դոկտորական ատենախոսություն:

2013 թ. հրապարակի վրա էր «Հայրենների ոճագիտական և կառուցվածքային ուսումնասիրություններ» խորագրով աշխատությունը, որում ընդգրկված մեկ տասնյակից ավել հոդվածներում գիտական խոր վերլուծության է ենթարկում միջնադարյան գոհարների՝ հայրենների կառուցվածքին, լեզվական համակարգին, միջին հայերենի բառապաշարի տարբեր շերտերին, քերականությանը և ոճաբանությանը վերաբերող մի շարք հարցեր:

Վերջերս լույս տեսավ Գ. Խաչատրյանի «Միջին հայերենի միակազմ նախադասությունները» վերնագրով մենագրությունը (2022), որով հեղինակը փաստացի փակում է գրական հայերենի միակազմ նախադասությունների ուսումնասիրության ոլորտում առկա բացը: Աշխատությունը բովանդակում է տեսական և փաստական ծավալուն տեղեկություն միջին հայերենի միակազմ նախադասությունների մասին: Ուսումնասիրվել են և՛ գրաբարից ավանդված, և՛ միջինհայերենյան լեզվական իրողություններ: Միջին հայերենի բուն միակազմ կառույցներից բացի՝ հեղինակն այստեղ քննության է առել նաև զուգորդվող միակազմ նախադասությունները:

Գ. Խաչատրյանն զբաղվել է նաև գրաբար բնագրերի արևելահայերեն թարգմանությամբ: 2003-ին նա լույս ընծայեց Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի ՀԵ գլխի (Հայտնի է նաև «Նիկիական հանգանակ» խորագրով) արևելահայերեն առաջին թարգմանությունը, որը հեղինակի՝ թարգմանության բնագավառում առաջին փորձն էր:

Թարգմանական այդ փոքրածավալ, բայց դժվարին ճեռնարկումին հետևեցին նոր, սակայն արդեն ծավալուն արձակ գործեր: Վ. Եղիազարյանի համահեղինակությամբ լույս տեսավ VII դ. հայ պատմիչ Սեբեոսի «Պատմություն» երկի արևելահայերեն առաջին թարգմանությունը (2005)՝ արժեքավոր առաջաբանով ու ծանոթագրություններով: Այս հրատարակությունն արժևորվում է նաև նրանով, որ թարգմանական էջերին զուգադիր զետեղված է Սեբեոսի երկի քննական բնագիրը նույնպես (հեղինակ՝ Ա. Աբգարյան): «Գրաբարից աշխարհաբար կատարվող թարգմանության հարցում, մեր կարծիքով, կարևոր են՝ ա) հայերենի բոլոր շրջանների քերականական օրինաչափությունների հաշվառումը, բ) բառիմաստների դրսևորումները, պատմական շրջանում կրած իմաստային փոփոխությունների պատճառով առաջացած իմաստային տարբերությունների հաշվառումը, գ) նյութի պատմականության վերարտադրության ապահովումը և հաստատումը համապատասխան հղումներով ու ծանոթագրություններով և դ) բնագրային ընդունելի և ճշգրիտ փոփոխությունները:

Միանգամից ասենք, որ այս պահանջները իրագործված են Սեբեոսի «Պատմության» արևելահայերեն թարգմանության մեջ ...»[1]:

Վերոնշյալ երկի տրամաբանական ավարտը Գ. Խաչատրյանի «Հայկական համաբարբառ – 17. Սեբէոս» աշխատության հրատարակությունն էր (2004), որով հեղինակն ընդարձակեց իր գիտական գործունեության ուղեծիրը, այս անգամ՝ բառարանագրության ասպարեզում: Կազմելով հեղինակային քարտարանն ու բնագրային համաբարբառը և պատրաստելով հրատարակության՝ լեզվաբանը շարունակեց ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի համապատասխան աշխատակիցների՝ տարիներով ընդհատված գործը՝ այս դեպքում միայնակ գիտական շրջանառության մեջ դնելով Սեբեոսի երկի համաբարբառը: «Համաբարբառն ունի մի շարք արժեքավոր կողմեր. նախ՝ այն նոր լույս է սփռում գրաբարի բայի կազմության և հարադիր բայերի ըմբռնման վրա: Համաբարբառում առանձնացվել են հարադիր բայեր, որոնցից մոտավորապես 180-ը իբրև այդպիսիք «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և «Առաձեռն բառարան հայկազեան լեզուի» բառարաններում չկան: Ամենևին նպատակ չունենալով հեռավորապես ստվեր գցելու անզուգական բառարանների անուրանալի արժեքի վրա՝ նշենք միայն, որ վերը նշված բառարանների հեղինակները նման նպատակ չեն հետապնդել, բայց քանի որ բառարանը հարուստ է հարադիր բայերով, փորձեցինք նրանով ճշտել, թե որ մասն է համապատասխանում Սեբեոսի համաբարբառի հարադիր բարդություններին: Կարծում ենք, որ այդ 180 հարադրությունների մի մասը հեղինակային է և առաջին անգամ այս համաբարբառում է առանձնացվել. այսպես՝ անմիաբան լեալ, անքակ առնեմ, դարան գործեալ, լի լինիմ, կարող լինիմ, ... պատերազմ տալ և այլն»[2]:

[1] *Է. Ս. Մկրտչյան. Սեբեոսի պատմության արևելահայերեն թարգմանությունը և համաբարբառը. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, № 2, էջ 258:*

[2] *Թ. Ս. Շահվերդյան. Սեբեոսի «Պատմության համաբարբառը».– «Կանթեղ» (Երևան), 2007, № 3, էջ 123–124:*

Թարգմանական գործին Գ. Խաչատրյանը վերադարձավ 2011-ին՝ դարձյալ Վ. Եղիազարյանի համահեղինակությամբ լույս ընծայելով XIII դ. պատմիչ Գրիգոր Ակներցու «Պատմութիւն վանն ազգին Նետողաց» երկի արևելահայերեն թարգմանությունը: Գրքում պահպանվել են այն նույն սկզբունքները, որոնք կիրառվել էին Սեբեոսի երկի թարգմանության և հրատարակության ժամանակ:

2015-ին լույս տեսավ Հովհաննես Կամենացու «Պատմություն Խոտինի պատերազմի» երկը՝ նորից գրաբար ու արևելահայերեն զուգադիր էջերով (թարգմանությունը, առաջաբանը և թարգմանության ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի):

Գ. Խաչատրյանի հեղինակած և համահեղինակած վերոհիշյալ թարգմանական գործերն աչքի են ընկնում ոչ միայն նրանով, որ լույս են տեսնում գրաբար ու արևելահայերեն զուգադիր էջերով, և գերազանցապես կատարվում է ոչ թե իմաստային, այլ գրեթե բառացի թարգմանություն, այլև՝ արժեքավոր ծանոթագրություններով, որոնք լույս են սփռում բնագրերի՝ մեկնաբանության կարոտ մի շարք հարցերի վրա:

Գ. Խաչատրյանն զբաղվում է նաև գրականագիտական հարցերով: Լույս է տեսել գրականագիտական մի քանի հոդված, որոնցում նա անդրադառնում է իր ժամանակակիցների (Հրաչյա Սարուխան, Նելլի Շահնազարյան, Մանվել Միկոյան, Սերգեյ Աղաջանյան, Ռուզան Թումանյան, Ալբերտ Գրքաշարյան) ստեղծագործություններին: Իսկ «Հայերենագիտական աշխատասիրություններ» (2008) հոդվածների ժողովածուն, լեզվաբանական քննություններից բացի, ներառում է նաև վերոհիշյալ հոդվածներից մի քանիսը: Կարևորենք, որ այս ժողովածուի մեջ ընդգրկված հոդվածների նշանակալի մասը լույս է տեսել առաջին անգամ: Ի դեպ, գիրքն ավարտվում է լեզվաբանի հեղինակած ու թարգմանած արձակ և չափածո մեկական ստեղծագործություններով:

Արդի հայ գրողների (Հրանտ Մաթևոսյան, Հրաչյա Սարուխան, Վահագն Մուղնեցյան) ստեղծագործություններին Գ. Խաչատրյանն անդրադարձել է նաև ոճաբանության տեսանկյունից՝ կատարելով նշված հեղինակների ոճին վերաբերող մի շարք նուրբ դիտարկումներ:

2006–2018 թթ. Գ. Խաչատրյանը եղել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի (ՎՊՀ) ռեկտորը: Թեև նա գիտության զարգացման և տարածման գործում աչքի էր ընկնում նաև մինչ այդ պաշտոնում ընտրվելը (2001 և 2005 թթ. կազմակերպել է երկու գիտաժողով), սակայն պաշտոնավարման առաջին իսկ օրերից նա ձեռք զարկեց Լոռու մարզի առաջատար կրթօջախում գիտական կյանքի աննախադեպ աշխուժացմանը: Բավական է նշել, որ պաշտոնավարման 12 տարիների ընթացքում նրա անմիջական ղեկավարությամբ համալսարանում կազմակերպվել է շուրջ չորս տասնյակ միջազգային, հանրապետական և ներբուհական գիտաժողով՝ չհաշված բազմաթիվ սեմինարներն ու գիտագործնական կոնֆերանսները: Որպես կանոն՝ գիտաժողովների արդյունքներն ամփոփվել են համապատասխան ժողովածուներում, որոնց գլխավոր խմբագիրն այդ տարիներին ինքն էր: Այս ամենից բացի՝ Գ. Խաչատրյանը խմբագրել է լեզվաբանական և գրականագիտական մի շարք աշխատություններ:

Գիտության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների մեջ Գ. Խաչատրյանն առանձնակի կարևորում է երիտասարդ հետազոտողների և գիտնականների գիտական գործունեության խթանումը: Նրա անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ կազմակերպված գիտաժողովներից երեքը նախատեսվել են երիտասարդ գիտնականների, երկուսը՝ հետազոտող ուսանողների համար:

Գ. Խաչատրյանի գիտական գործունեությունը չի սահմանափակվում միայն մենագրություններով ու հոդվածներով. նրա անմիջական ղեկավարությամբ թվով յոթ երիտասարդ լեզվաբաններ, իրենց առաջին գիտական քայլերը կատարելով, արժանացել են բ. գ. թ. գիտական աստիճանի և դասավանդել կամ դասավանդում են բուհում:

Հայցորդների և ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների ղեկավարումը, ինչ խոսք, աշխատատար և պատասխանատու գործ է, որից, սակայն, Գ. Խաչատրյանը չի խուսափում, քանի որ նա կայացած էր համարում այն բուհը, որի պրոֆեսորադասախոսական կազմը ինքնավերարտադրման արդյունք է: Ներկայում նա ղեկավարում է ևս չորս հայցորդի ու ասպիրանտի թեկնածուական ատենախոսություններ:

Գ. Խաչատրյանն ակտիվորեն մասնակցում է հանրապետության գիտական և գրական կյանքին. 1995 թվականից՝ ՎՊՀ գիտխորհրդի անդամ (2006–2018 թթ.՝ նախագահ), 2005 թվականից՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող 019 մասնագիտական խորհրդի անդամ, 2010–2018 թթ.՝ միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, 2006-ից՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Լեզու և լեզվաբանություն» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, 2012 թ. Հայաստանի գրողների միության անդամ է, թվով յոթ լեզվաբանների դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս է, սկսած ասպիրանտական տարիներից՝ մասնակցել է հանրապետական և միջազգային երկու տասնյակից ավել գիտաժողովների, ինչի մասին վկայում են նրա՝ համապատասխան ժողովածուներում լույս տեսած հոդվածներն ու զեկուցումների դրույթները: Այդ գիտաժողովների մի մասն անցկացվել է իր իսկ նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ[3]*:*

---

[3] *Դրանցից են՝ 1. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆ. Տ. Ավետիսյանի ծննդյան 60-ամյակին, Վանաձոր–Երևան, 2001: 2. «Մաթևոսյանական արձագանքներ – 1» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 70-ամյակին, Վանաձոր, 2005: 3. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված հայ լեզվաբանության երախտավորներ Վ. Առաքելյանի, Գ. Ջահուկյանի, Հ. Բարսեղյանի, Ս. Աբրահամյանի, Հ. Մուրադյանի և Ն. Պառնասյանի հոբելյաններին, Վանաձոր, 2010: 4. «Մաթևոսյանական արձագանքներ – 2» խորագրով հանրապետական գիտաժողով՝ նվիրված Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 75-ամյակին, Վանաձոր, 2010: 5. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին, Վանաձոր, 2011: 6. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆ. Գ. Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին, Վանաձոր, 2013: 7. «Մաթևոսյանական արձագանքներ – 3» խորագրով միջազգային գիտաժողով՝ նվիրված Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 85-ամյակին, Վանաձոր, 2020:*

Բուհի ղեկավարման տարիներին Գ. Խաչատրյանը հայոց լեզվի ամբիոնին առընթեր ձևավորեց նախադեպը չունեցող գիտաչխատախումբ, որը Ստ. Զորյանի և Հովհ. Թումանյանի տուն-թանգարաններում կատարում էր մեծ գրողների ստեղծագործությունների համաբարբառների կազմման աշխատանքները: Ներկայում շրջանառության մեջ են «Հովհաննես Թումանյան, երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 2–10, Երևան, 1988–1999 թթ.», «Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 1, Երևան, 1989 թ., Համաբարբառ», «Ստեփան Զորյան. Երկերի լիակատար ժողովածու 12 հատորով, հ. 2–10, Երևան, 1978–1999 թթ.» և «Ստեփան Զորյան. Երկերի լիակատար ժողովածու 12 հատորով, հ. 1, Երևան, 1977 թ., Համաբարբառ (3 գրքով)» աշխատությունների էլեկտրոնային տարբերակները:

Գիտամանկավարժական երկարամյա գործունեության ընթացքում Գ. Խաչատրյանի ուսումնասիրության առարկան են դարձել նաև ուսումնամեթոդական հարցերը: 1989 թ. Կիրովականում լույս տեսավ նրա՝ նախատիպը չունեցող «Գրաբարի շարահյուսության ձեռնարկը», որում առաջին անգամ հանգամանորեն տեղ են գտել գրաբարի շարահյուսության տեսական և գործնական նյութեր: Երբ Գ. Խաչատրյանը որպես դասախոս ոտք դրեց բանասիրության ֆակուլտետ, նրա առաջին գործը եղավ լրացնել ամբիոնի այն գիտաճյուղերի մեթոդական ձեռնարկների պակասը, որի անհրաժեշտությունը զգացվում էր ոչ միայն մեր ֆակուլտետում, այլև բուհական համակարգում առհասարակ: Այսպես՝ երբ գրաբարի բոլոր մակարդակները հանգամանորեն ուսումնասիրվել են հայերենագիտական բոլոր դպրոցներում՝ հունաբան, լատինաբան, մխիթարյան, հնդեվրոպական, խորհրդային, սակայն շարահյուսական մակարդակը դուրս էր մնացել գիտնականների տեսադաշտից (սեղանի վրա էին միայն Ստ. Մալխասյանցի փոքրածավալ «Գրաբարի համաճայնությունը» և մի քանի հեղինակների՝ առանձին հարցերի ուսումնասիրությունները), Գ. Խաչատրյանը գրեց գրաբարի շարահյուսության մեթոդական ձեռնարկը՝ գործնական աշխատանքի վարժություններով:

1994 թ. Վանաձորում լույս տեսավ Գ. Խաչատրյանի «Հայոց լեզվի ոլորաններում» ուսումնական ձեռնարկը (1000 տպաքանակով), որը ներառում է ժամանակակից հայերենի հնչյունաբանությանը, բառագիտությանն ու քերականությանը վերաբերող 201 հարց՝ իրենց պատասխաններով: Վերջիններս առանձնանում են ժամանակակից հայերենի տեսության որոշ դրույթների նոր մեկնաբանությամբ, որով նա օգնության ձեռք է մեկնում աշակերտներին, ուսանողությանը և ուսուցիչներին: Հեղինակը ձեռնարկում առաջ էր քաշել առանձնակի դժվարություններ ներկայացնող հարցեր և այնպես բացատրել ու տվել դրանց բոլորի պատասխանները, որ ուսանողը կարող էր նաև դրանք յուրացնելով պետական քննություն հանձնել:

2014 թ. լույս տեսավ լեզվաբանի «Գրաբար (տեսական և գործնական պարապմունքների նյութեր)» ուսումնամեթոդական ձեռնարկը: Ձեռնարկում, որը նախատեսվում է հայագիտական մասնագիտությունների ուսանողների համար, հեղինակը ներկայացնում է գրաբարի դասավանդման իր երկարամյա

փորձը՝ քերականական մի շարք իրողություններ ներկայացնելով նոր լուծումներով և նյութի մատուցման նոր մեթոդներով[4]:

2018 թ. հրատարակվեց «Գրական հայերենի պատմության դասընթաց (տեսական և գործնական պարապմունքների նյութեր)» համահեղինակային (Գ. Խաչատրյան, Թ. Շահվերդյան, Լ. Պետրոսյան) երկհատորյակը, որի Բ մասը («Շարահյուսություն») հեղինակել է Գ. Խաչատրյանը: Դասընթացում առաջին անգամ ծավալուն (12 տպ. մամուլ) ներկայացվում են գրական հայերենի երեք փուլերի շարահյուսական իրողությունների առանձնահատկությունները:

Նշված ուսումնամեթոդական ձեռնարկներն իրենց ընդգրկած նյութով ու վերջինիս մատուցման ձևով արդիական են, ուստի և անհրաժեշտ են դպրոցական ու բուհական կրթական համակարգերում:

Գ. Խաչատրյանի հետաքրքրությունների շրջանակում արձագանք են գտել նաև ժամանակակից կրթական համակարգում կատարվող բարեփոխումները, որոնց նա անդրադառնում է ժամանակ առ ժամանակ[5]:

2010 թ. երախտազետ գիտնականն անդրադարձել է իր թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի՝ տաղանդաշատ գրաբարագետ, բ. գ. դ., պրոֆ. Վարագ Առաքելյանի լեզվաբանական ժառանգությանը՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով անվանի լեզվաբանի գիտական ուսումնասիրությունների ցանկը [«Վարագ Առաքելյանի լեզվաբանական ժառանգության համառոտ տեսություն».– Գիտական հոդվածների ժողովածու (Վանաձոր), էջ 3–28]: Փորձելով հրավիրել հրատարակչությունների ուշադրությունը՝ նա 2003-ին հրատարակել է Վ. Առաքելյանի անտիպ աշխատություններից մեկին («Գրաբարի կապերը») առնչվող հոդված [«Գրաբարի ԱՌ նախդիրը պրոֆ. Վ. Դ. Առաքելյանի «Գրաբարի կապերը» անտիպ աշխատության մեջ». – Գիտական աշխատություններ (Գյումրի), թիվ 6, էջ 17–25]:

Գ. Խաչատրյանը կրթական գործի, երիտասարդ սերնդի դաստիարակության և հայագիտության մեջ ունեցած ներդրման համար պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով (2004), Մովսես Խորենացու մեդալով (2008), ՀՀ վարչապետի հուշամեդալով (2010), ՀՀ մշակույթի նախարարության «Ս. Գրիգոր Նարեկացի» հուշամեդալով (2013), ՀՀ գրողների միության ոսկե մեդալով (2018) և գերատեսչական այլ պարգևներով:

Միանգամայն իրավացի էր Գ. Խաչատրյանի գիտական ղեկավարը՝ Վ. Առաքելյանը, սրանից շուրջ 40 տարի առաջ թեկնածուական ատենախոսության հրապարակային պաշտպանության առիթով բնութագրում տված իր

[4] *Լ. Հովհաննիսյան, Վ. Փիլոյան, Գ. Խաչատրյան. Գրաբար, Երևան, 2014, 491 էջ.– ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, 2014, հ. 17, էջ 206–209:*

[5] *Դրանցից են՝ «Կրթական ծրագրերը (բակալավրիատ, մագիստրատուրա) Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում».– «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» (Երևան), 2008, թիվ 3, էջ 11–22 (համահեղինակներ՝ Ս. Թումանյան, Շ. Սահակյան, Ա. Գևորգյան, Վ. Քոչարյան), «Ուսանողը և ժամանակակից կրթական ծրագիրը», Վանաձոր, 2011 (համահեղինակ՝ Ս. Կարաբեկյան):*

կանխատեսությամբ. «Հայագիտությունը, հատկապես գրաբարագիտությունը, հանճին Գ. Խաչատրյանի, ստանում է պատրաստի երիտասարդ մի ուժ. նա գառնալու է այն ամուր ու վստահելի օղակը, որ հին մեկնող սերունդի և եկող սերունդի կապի անընդհատությունն է ապահովում»:

… Թերթում ենք անցած կյանքի էջերն ու նորից համոզվում, որ նա իր գիտական ճանապարհն անցել է առանց սայթաքումների, բնականոն ընթացքով, և ոչ ոք սկուտեղի վրա նրան ոչինչ չի մատուցել:

Գործուն գիտնականի համար 70-ամյակը գիտական ձեռքբերումների նորանոր հեռանկարներ է բացում: Մաղթենք Գուրգեն Խաչատրյանին արևշատություն՝ եռանդուն ստեղծագործելու և իր հարուստ գիտելիքներն ուսանողներին փոխանցելու համար:

ԹԵՐԵԶԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Բ. գ. դ., ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆ., ՎՊՀ Գիտական տեղեկագրի՝ հումանիտար և հասարակական գիտություններ պրակի խմբագրական խորհրդի նախագահ, գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ գիտական աստիճաններ չնորհող 019 մասնագիտական խորհրդի անդամ: Գիտական հետաքրքրություններ՝ հայոց լեզվի պատմություն, գրաբար, ոճագիտություն: Հեղինակ է 5 գրքի և չուրջ 100 հոդվածի: tereza.shahverdyan@mail.ru

ՀՏԴ : 78(479.25)+7

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆ»-Ը ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 90-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ*

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ 2022 թ. դեկտեմբերի 1–2 գումարվեց «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնհինգերորդ նստաշրջան»-ը՝ նվիրված Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադրման 90-ամյա հոբելյանին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից (ԱԻ), Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից (ՀԳՊԱ), Ք. Քուչնարյանի անվան արվեստի դպրոցից, Երևանի պետական համալսարանից (ԵՊՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից (ՃՇՀԱՀ), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից (ԵԹԿՊԻ), նաև մեկ մասնակից՝ Չինաստանից (հեռավար):

Նստաշրջանի բացման խոսքում ԱԻ տնօրեն, արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը կարևորեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանների դերը հայ արվեստագիտության, ինստիտուտի պատմության մեջ. «Այս նստաշրջանների կորիզն Արվեստի ինստիտուտի գիտաշխատողներն են, սակայն դրանք համախմբում են արվեստի ոլորտում մնացած ԲՈՒՀ-երի, թանգարանների երիտասարդ հետազոտողներին նույնպես: Այս միջոցառումների ընթացքում տեսնում ենք, թե ինչ ներուժ կա, ինչ հերթափոխ ունի արվեստագիտությունը, և միշտ շատ ուրախանում ենք, որ արվեստագիտությունը չի ծերանում, մենք ունենք արժանի հերթափոխ, մեր շարքերն անընդհատ համալրվում են երիտասարդներով»:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ողջունելով նստաշրջանի մասնակիցներին, նշեց. «Այս գիտական նստաշրջանները լավ դպրոց են երիտասարդ գիտնականների համար՝ փորձարկելու իրենց աշխատանքի առաջին արդյունքները: Այս միջոցառումները շատ օգտակար են և պետք է լինեն շարունակական: Ուզում եմ դիմել երիտասարդներին. դուք ընտրել եք հրաշալի մասնագիտություն, ձեր մասնագիտությունը ոչ միայն հետաքրքիր է ու հեռանկարային, այլ նաև շատ գայթակղիչ: Դուք միշտ փնտրում եք գեղեցիկը և նկարագրում, բացահայտում այն: Սա գնահատվում է գիտական հանրության և հասարակության կողմից: Արվեստի ինստիտուտում ստեղծված են բոլոր պայմաններն արդյունավետ գիտական աշխատանք կատարելու համար»:

---

* *Ներկայացվել է 04. I. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

ԱԻ գիտական խորհրդի անդամ, ԵԹԿՊԻ ռեկտորի պաշտոնակատար, բ. գ. դ. Լիլիթ Արզումանյանն իր ելույթում ասաց. «Այսօրվա մեր քաղաքական, հոգեբանական, բարոյական ծանր իրավիճակում գիտությունը հույս և հավատ է տալիս, որ կյանքը շարունակվում է, և երիտասարդները շարունակում են ստեղծագործել: Ուզում եմ չեշտը դնել սերնդափոխության վրա և նշել, որ այս առումով մեծ դերակատարություն ունի Արվեստի ինստիտուտի ղեկավարությունը, որ կարողացավ ձեռքն անընդհատ պահել զարկերակի վրա, բայց չթողեց լավ կադրերին: Սա համարում եմ մեծ և կարևոր աշխատանք: Հաջողություն եմ ցանկանում նստաշրջանի մասնակիցներին, հույս ունեմ և համոզված եմ, որ այս գործընթացը շարունակական է լինելու»:

ԱԻ գիտական խորհրդի անդամ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Սաթյանը, ողջունելով և շնորհավորելով նստաշրջանի մասնակիցներին, ասաց. «Ինձ համար «երիտասարդ» հասկացությունը շատ հարաբերական է, որովհետև երիտասարդ ժամանակ անում են այն քայլերը, որոնք երբեք հետո չեն անում, և այն համարձակությունը, որը նրանք դրսևորում են երիտասարդ ժամանակ, հետագայում չեն դրսևորում: Առհասարակ, երիտասարդը պետք է բոլոր ուղղություններով աշխատի, մտածի և անի այն, ինչը տալիս է իրեն նոր հնարավորություններ: Շնորհավորում եմ բոլորին, ովքեր գիտակցում են, թե ինչ կարևորություն ունի արվեստը մարդկության զարգացման գործում»:

Այնուհետև ԱԻ տնօրեն Ա. Ասատրյանը Գիտության համաշխարհային օրվա կապակցությամբ ակադեմիկոս Յու. Սուվարյանին հանձնեց ինստիտուտի «Գիր գնահատանքի»: Ա. Սաթյանին շնորհվեց վաստակագիր՝ ծննդյան 75-ամյա հոբելյանի կապակցությամբ, հայ երաժշտարվեստում ունեցած ծանրակշիռ վաստակի համար: Վաստակագրեր շնորհվեցին նաև բ. գ. դ. Լ. Արզումանյանին՝ հայ արվեստագիտության ասպարեզում ծանրակշիռ վաստակի համար և արվ. թ., ԱԻ ավագ գիտաշխատող Մերի Կիրակոսյանին՝ երիտասարդ արվեստաբանների խորհրդի նախագահի պաշտոնում կատարած երկարամյա անբասիր ու բեղմնավոր աշխատանքի համար:

Նստաշրջանի չորս նիստերի ընթացքում ընթերցվեցին 25 զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. կերպարվեստագիտություն՝ 12 զեկուցում, երաժշտագիտություն՝ 6, ճարտարապետության պատմություն և տեսություն՝ 3, թատերագիտություն՝ 2 և կինոգիտություն՝ 1:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *ԱԻ սփյուռքահայ արվեստի և մշակութային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ Մարտին Հարությունյանը հանդես եկավ «Դիզայնի զարգացումը Սենտ Էտիենում» վերտառությամբ զեկուցմամբ: Բանախոսը Սենտ Էտիենում կատարած տեղային դիտարկումներով և հետազոտություններով ներկայացրեց քաղաքի դիզայնի զարգացման կարևոր գործոններն ու համեմատական վերլուծությամբ անդրադարձավ Երևանի և Սենտ Էտիենի դիզայնի զարգացման միտումներին: «Ռեալիզմը Ռուբեն Արուտչյանի ստեղծագործություններում» զեկուցման մեջ ԵՊՀ դասախոս, արվ. թ. Հովիկսիմե Վարդանյանն անդրադարձավ արվեստագետի ստեղծագործական ուղուն, ճևամտածողությանն ու յուրատիպ արտահայտչաձևերին: Հեռավար ճևաչափով Անի Մարգարյանը (Զինաստան) ներ-*

կայացրեց «Ձինական թեմաներով նատյուրմորտի ժանրը Հովսեփ Փուշմանի արվեստում» թեման, որում կարևորվեց ու վերլուծվեց անվանի նկարչի արվեստում չինական թեմաներով նատյուրմորտի ժանրի դրսևորումը: «Լուսաբաց» դրական-գեղարվեստական ժողովածուի նկարչական բաժինը» զեկուցմամբ հանդես եկավ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մանե Մկրտչյանը: Բանախոսն անդրադարձավ 1927–1930 թթ. Թիֆլիսում հրատարակված ժողովածուին, ներկայացրեց վերջինիս նպատակները, հինգ համարների ընդհանուր բովանդակությունը և վերլուծեց ժողովածուի նկարչական բաժինը: «Հայաստանի կինոթատրոնների դիզայնը 1960–1970 թթ.» բանախոսության հեղինակն էր ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ Ռուզաննա Միքայելյանը (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենյան), ով դիտարկեց նշված ժամանակահատվածում կառուցված տիպային և անհատական նախագծերով կատարված հայաստանյան կինոթատրոնների ինտերիերի դիզայնը, մատնանշեց հորինվածքային, ոճական ու տեխնիկական լուծումները, միևնույն ժամանակ զուգահեռներ անցկացրեց տվյալ շրջանի և նախորդող ժամանակահատվածի կինոթատրոնների ինտերիերների միջև: ԱԻ գիտքարտուղար, արվ. թ. Մարգարիտա Քամպյանը «Էդգար Շահինի ստեղծագործությունը «Անահիտ» հանդեսի էջերում» զեկուցման մեջ չոշափեց Փարիզում հրատարակված «Անահիտ» հանդեսում ֆրանսահայ անվանի նկարիչ Էդգար Շահինի ստեղծագործության լուսաբանման հարցը: ՃՇՀԱՀ դասախոս, արվ. թ. Նարե Նադարյանը «Սասունցի Դավթի կերպարը Արտաշես Հովսեփյանի արվեստում» զեկուցման մեջ ներկայացրեց քանդակագործ Արտաշես Հովսեփյանի՝ ազգային էպոսին և, հատկապես, Սասունցի Դավթի կերպարին նվիրված աշխատանքները: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Մարի Աբրահամյանը (գիտական ղեկավար՝ Մ. Կիրակոսյան) հանդես եկավ «Ստեփան Աղաջանյանի հոր և մոր դիմանկարները» զեկուցմամբ, որտեղ ներկայացրեց ու վերլուծեց նկարչի արվեստում կարևորվող նշված աշխատանքները: «Կերպարվեստի հարցերը 1950 թվականի «Գեղունի» հանդեսի էջերում» վերտառությամբ բանախոսության հեղինակը՝ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մերի Կիրակոսյանը, ներկայացրեց Վենետիկում հրատարակված «Գեղունի» հանդեսի 1950 թ. համարում զետեղված՝ կերպարվեստի մասին հոդվածները, լուսաբանեց ղրանցում առկա կերպարվեստի հարցերը և տվեց բովանդակային նկարագիրը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող Շուշանիկ Մուրադյանը (գիտական ղեկավար՝ Մ. Քամալյան) «Դիմանկարը Արա Բեքարյանի ստեղծագործության մեջ» զեկուցման շրջանակում առաջին անգամ ներկայացրեց նկարիչ Ա. Բեքարյանի դիմանկարչական ժառանգությանը: «Սրբանկարչության խորհրդանշական պատկերների ժամանակակից միտումները Հայկ Ազարյանի արվեստում» թեման ներկայացրեց ՀԳՊԱ դասախոս, արվ. թ. Գայանե Պողոսյանը, ով անդրադարձավ Հայկ սարկավագ Ազարյանի սրբանկարչության մեջ կանոնիկ խորհրդանշական պատկերագրության ժամանակակից լուծումների վերլուծությանը, կարևորելով նոր շրջանի սրբանկարչության միտումները՝ դիտարկեց նկարչի կերտած սրբապատկերներում Տիրամոր պատկերագրության մեր-

օրյա կերպավորման հարցը: ԱԻ սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Արմինե Պետրոսյանը *(գիտական ղեկավար՝ Մ. Կիրակոսյան) հանդես եկավ «Հմայակ Հակոբյանի ինքնադիմանկարները որպես ինքնարտահայտում» զեկուցմամբ և վերլուծեց արվեստագետի վեց ինքնադիմանկար:*

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Լիլիթ Արտեմյանը *հանդես եկավ «Կոմպոզիտոր Վարդ Մանուկյանի ստեղծագործական դիմանկարը» զեկուցմամբ, որում առաջին անգամ համակողմանի լուսաբանեց կոմպոզիտորի ծավալած գործունեության երկու հիմնական՝ ստեղծագործական և մանկավարժական ուղղությունները: «Երաժշտական կրթության դերը երեխաների և դեռահասների կրեատիվության զարգացման հարցում» թեման ներկայացրեց Ք. Քոչնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն* Էդգար Գյանջումյանը, *ով նկարագրեց երաժշտական կրթության միջոցով ստեղծարարությանը նպաստելու մեխանիզմներն ու դրանց առանձնահատկությունները: ԱԻ երաժշտության բաժնի գիտաշխատող* Լիլիթ Հակոբյանը *(գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) հանդես եկավ «Նիկոլ Գալանդերյանի մանկական օպերաները» զեկուցմամբ, որտեղ կոմպոզիտորի ստեղծագործության օրինակով բացահայտեց Գալանդերյանի 5 մանկական օպերաների ժանրային առանձնահատկությունները, ոճային հատկանիշներն ու թեմատիկ ուղղվածությունը: «Օրորը ժամանակակից հայ ընտանիքում» թեման արծարծեց ԱԻ ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող* Անի Հակոբյանը *(գիտական ղեկավար՝ Ա. Փահլևանյան)՝ ներկայացնելով ժամանակակից մայրիկների միջավայրում իրականացրած հարցումների արդյունքները, որի նպատակն էր հասկանալ, թե բազմազբաղ այս ժամանակաշրջանում հայ մայրիկը ի՞նչ է երգում երեխային քնեցնելիս: ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Գայանե Ամիրաղյանը *ներկայացավ կոմպոզիտոր, խմբավար, Կոմիտասի սան «Վարդան Սարգսյանի դիտարկումները Կոմիտասի «Պատարագի» մասին» զեկուցմամբ, որի հիմքում ընկած է Վ. Սարգսյանի նամակագրությունը Տիրան արք. Ներսոյանի և Թորգոմ արք. Մանուկյանի հետ: «Էդուարդ Հայրապետյանի դաշնամուրային կվարտետը» բանախոսության հեղինակն էր ԱԻ երաժշտության բաժնի հայցորդ* Գոհար Կարապետյանը *(գիտական ղեկավար՝ Մ. Ռուխկյան):*

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *«Պատմական Անիի շրջանի կարմիր վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական չերտագրական ուսումնասիրությունները» զեկուցման մեջ ՃՇՀԱՀ դասախոս, ճարտ. թ.* Դավիթ Նահատակյանը *բացահայտեց կառույցի՝ X–XI դդ. պահպանված ուղղահայաց չերտերը, ինչպես նաև՝ XII–XIII դդ. վերակառուցված լինելու հանգամանքը: ԱԻ ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտ. թ., դոցենտ* Արեգ Հասրաթյանի *բանախոսության թեման էր «Սբ. Հռիփսիմե տաճարի վաղմիջնադարյան հորինվածքի վերակազմությունը»: Հեղինակը, հիմք ընդունելով Ն. Տոկարսկու և Ա. Երեմյանի տեսակետները՝ ներկայիս դմբեթը վերակառուցման արդյունք լինելու առնչությամբ, փորձեց վերստեղծել տաճարի նախնական տեսքը: Երևանի Կարմիր կամրջի վերակազմությանն ու վերականգնման խնդիրների հետազոտմանն էր միտված ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտ. թ.* Հրանտ Հովսեփյանի *բանախոսութ-*

յունը «Երևանի կարմիր կամրջի վերակազմութիւնն ու վերականգնման խնդիրները» վերնագրով զեկուցմամբ:

ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *Ա.Իի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ, դոցենտ* Անուշ Ասլիբեկյանը *«Համազգային թատրոնի թատերականացված ընթերցումները որպես խաղացանկային նոր երևույթ և հայեցակարգ» բանախոսության մեջ անդրադարձավ թատրոնում թատերականացված ընթերցումների ժանրի ձևավորմանն ու առաջին անգամ հայ թատրոնում ստեղծված խաղացանկային նոր հայեցակարգի կարևորմանը: «Դերասանուհի Սաթենիկ Աղամյանը» զեկուցման հեղինակ, ԵԹԿՊՀ հայցորդ* Սուսաննա Բրիկյանը *(գիտական ղեկավար՝ Գ. Օրդոյան), արխիվային, փաստագրական տվյալների օգնությամբ ճշգրտեց դերասանուհու կենսագրական մանրամասները, ներկայացրեց դերասանական գործունեության ժամանակագրությունը, դերացանկը և որոշարկեց նրա էսթետիկական կողմնորոշումները:*

ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ: *Ա.Իի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Արսեն Համբարձումովը *«Նոամ Խոմսկու գեներատիվ քերականությունը և կինոստեղծագործության կառուցվածքի որոշ առանձնահատկությունները» զեկուցմամբ անդրադարձավ գեղարվեստական պրոցեսի նշանակությանը:*

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ Ա.Իի տնօրեն Աննա Ասատրյանը: *Առաջիկայում զեկուցումները կհրատարակվեն առանձին ժողովածուի տեսքով:*

Դեկտեմբերի 1-ի երեկոյան Երևանի Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ «Ակադեմիական երաժշտական ֆոլկլորագիտության օջախը. անցած ուղին, ներկան և ապագան» վերտառությամբ համերգ՝ նվիրված Ա.Իի ժողովրդական երաժշտության բաժնի հիմնադրման 55-ամյակին: Ներածական խոսքով հանդես եկավ Ա.Իի տնօրեն Ա. Ասատրյանը, *իսկ միջոցառումը վարեց ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող* Անի Հակոբյանը: *Համերգին մասնակցեցին «Գեղարդ» երգեցիկ խումբը, ավանդական երգի-պարի «Կարին», «Նուբար», «Ծովակ» խմբերը:*

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՏԴ : 809.198.1

ՄԱՅՐԵՆԻՆ ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ*

Բոլոր ժամանակներում լեզուն անվերապահորեն համարվել է ազգային գոյության հիմնական երաշխիքը: Մասնավորապես, հայոց լեզուն դարերով պետականություն չունեցած հայ ժողովրդի համար դարձել է մտքի ջահ, ձեռքի սուր ու հոգևոր վահան՝ օտարների ամենակուլ ոտնձգությունների դեմ:

Լեզուն ուսումնասիրվում է, նրա պահպանման ու զարգացման ուղիներ են նախանշվում, մշակվում են կիրառության ու գործադրման կանոններ, մաքրության հետ կապված խնդիրներ են լուծվում, սակայն այդ ամենը մտքի աշխատանք է, կարող ես հասկանալ ու գնահատել, բայց չզգալ և չընկալել նրա գեղեցկությունը: Մինչդեռ լեզվական բնական միջավայրում բանավոր հաղորդակցվելն ու միմյանց պարզապես լսելը ոչ միայն լեզվի արտահայտչականության ցուցադրում կարող է լինել, այլև միասնության հզոր լիցքեր պարունակել:

Այսպիսի նպատակ էր հետապնդում փետրվարի 21-ին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կայացած Մայրենիի օրվան նվիրված առցանց միջոցառումը, որին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍՆ լեզվի կոմիտեի, Գավառի պետական համալսարանի (ԳՊՀ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ), Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ), Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի, Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի (ՎՊՀ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներկայացուցիչներ, գիտաշխատողներ, դասախոսներ, մանկավարժներ, ՀՀ-ից, Արցախի Հանրապետությունից, Սիրյուքից, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ, աշակերտներ, տարբեր բարբառների ներկայացուցիչներ: Ամեն տարվա այդ օրն անցկացվող ավանդական գիտաժողովի փոխարեն այս անգամ այլ ձևաչափ էր ընտրված՝ կազմակերպել մայրենիի լեզվաչքերի զգալու, վայելելու մեր լեզվի տարածաժամանակային ղրսևորումների անկրկնելի գեղեցկությունն ու հնչեղությունը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վիկտոր Կատվալյանը, մասնակիցներին իր օրհնության խոսքն ասաց Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Շահե ծայրագույն վարդապետ Անանյանը, ողջույնի խոսքեր ասացին ԳՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ, ի. գ. դ., պրոֆ., ՀՀ պետական տոնացույցում Մայրենի լեզվի օրը ներառելու մասին օրենսդրական նախաձեռնության

* *Ներկայացվել է 13. III. 2023 թ., ընդունվել է տպագրության 23. III. 2023 թ.:*

հեղինակ Հրանուշ Հակոբյանը, ՀՀ ԿԳՄՄՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, Վ.ՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆ., բ. գ. դ. Գուրգեն Խաչատրյանը, ՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. դ., պրոֆ. Աշոտ Գալստյանը, ԱրՊՀ-ի ռեկտոր, բ. գ. թ. Արմեն Սարգսյանը, ԱրՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ. Լուսինե Մարգարյանը, ԳՊՀ-ի պրոռեկտոր, ֆիզմաթ. գ. թ., դոցենտ Նելլի Կուտուզյանը, ԳՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոցենտ Թաթուլ Ասոյանը, պրոֆեսորաշրջանավարտական կազմի անդամներ և ուսանողներ:

Միջոցառման նոր ձևաչափով պայմանավորված՝ ստեղծվել էր անմիջական ու անկաշկանդ մթնոլորտ, դիտական զգուշավորությունը փոխարինվել էր ազատ չփումների անկեղծությամբ, բազմատեսակ, բայց միասնական հայերենը ներկայանում էր իր տարածաժամանակային բազմազանությամբ (գրաբար, միջինհայերեն, գրական արևելահայերեն, գրական արևմտահայերեն, բարբառներ): Մասնակիցները հետաքրքիր պատմություններ էին հնչեցնում իրենց մայրենի բարբառներով ու խոսվածքներով: Հետաքրքրությամբ էին լսվում Բայազետի, Դիադինի, Մշո, Ալաշկերտի, Խոյի, Մակուի, Շիրակի, Լոռվա, Զեյթունի, Ադիյամայի, Արցախի, Արծափի, Գորիսի և այլ բարբառներով ու խոսվածքներով ներկայացվող հետաքրքրաշարժ պատմություններն ու զվարճապատումները: Հատուկ ուզում ենք շեշտել ԱրՊՀ-ի ռեկտոր Արմեն Սարգսյանի դլխավորությամբ համալսարանի դասախոսների և ուսանողների ակտիվ ու կազմակերպված մասնակցության փաստը: Կարևոր էր նաև այն, որ չէին անտեսվել ինչպես Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների, այնպես էլ այլ ազգերի լեզուները, մասնավորապես՝ հնդկերենը, չինարենը, հունարենը, ասորերենը, ռուսերենը, քրդերենը, որոնք ներկայացվեցին Հայաստանում սովորող ուսանողների կողմից:

Հետաքրքրությունը շատ մեծ էր: Ապասված միջոցառում լինելու մասին է խոսում այն փաստը, որ 5 ժամ տևած միջոցառմանը մասնակցել ցանկացողների մեծ մասը չկարողացավ միանալ ZOOM հարթակում տեղերի սահմանափակության (100 տեղ) պատճառով:

Մասնակիցները, արտահայտելով իրենց գոհունակությունը, նշեցին, որ առաջին անգամ հայոց լեզուն ներկայացավ իր բոլոր վիճակների դրսևորումներով ու կրողներով, և ունկնդիր եղան մեր ոսկեղենիկ լեզվի ախորժալուր ու կենդանի արտասանությանը:

Միջոցառման ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկան Հրանուշ Հակոբյանը, Նելլի Կուտուզյանը, Թաթուլ Ասոյանը, Աշոտ Գալստյանը, Վիկտոր Կասովայանը՝ կարևորելով նմանատիպ միջոցառումների հաճախ կազմակերպումը՝ մեր մայրենիի հավերժության երթը շարունակելու, այն սրբորեն պահել-պահպանելու և հարստացնելու նպատակով:

Ուրախությամբ փաստենք, որ Մայրենիի օրվան նվիրված միջոցառումը իրապես վերածվեց լեզվի տոնի:

ԹԱԹՈՒԼ ԱՍՈՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Սահակյան – Վահագն Տատրյան. Հայոց ցեղասպանության ականավոր ուսումնասիրողը.....3
Մաջիդ Քարիմի (Իրան) – 1920–1921 թթ. Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որոնք փոխեցին Նախիջևանի ճակատագիրը (անգլ.).....34
Ալբերտ Խառատյան – Երուսաղեմի հայոց պատրիարքությունը և Ս. Տեղյաց շուրջ հույն-հայկական դիմակայությունը (1700–1730-ական թվականներ) 55

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ
ՀԻՇԱՏԱԿԻ 850-ԱՄՅԱԿԻՆ

Ալիտա Դոլուխանյան – Հայ միջնադարյան գրականության մեծ նորարարը 74
Եվա Մնացականյան – Դիտարկումներ Հովի. Թումանյանի «Արտավազդ» անավարտ դրամայի շուրջ 96
Մարինե Սարգսյան – Ավետիք Իսահակյանի «փոքրիկ ողբերգությունները» 112
Բուրաստան Զուլումյան (Մոսկվա) – Տիրան Չրաքյանը (Ինտրա) և նրա «Նոճաստան» բանաստեղծությունների ժողովածուն (ռուս.) 128

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գյուլզատյան – Հոլովումների տիպաբանության հարցի շուրջ (գրաբարի, գրական արևելահայերենի, լատիներենի, գերմաներենի, ռուսերենի համեմատությամբ) 154

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արսեն Բոբոխյան – Աստվածները, հերոսները և սրբերը. հայոց լեռները որպես սրբազան թաղումների միջավայր 166
Կարեն Բայրամյան – Աշխարհիբեկ Քալանթարի հուշարձանապահպան գործունեությունը (1930-ական թվականներ).....183

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ստյոպա Պետոյան – «Արցախ» անունով ամսագիր հրատարակելու Վ. Դադյանցի նախաձեռնությունը (1887–1888 թթ.) (ռուս.) 196
Անուշավան Զաքարյան – Դավիթ Անանուն. նամակների ընտրանի 207

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռոբերտ Ղազարյան – Արամ Քոսյան. Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն) (անգլ.) 247
Սուսաննա Հովհաննիսյան – Մագդա Զանփոլադյան. «Աշխարհում միայն մեկ Հայաստան կա…».....251
Գեղամ Հովհաննիսյան – Սարգիս Մեհրաբյան. Խանասորի Վարդանի հիշատակարանը 260
Պետրոս Դեմիրճյան – Զինաիդա Բալայան. Արցախը XIX դարի հայ գրականության մեջ 266
Արտակ Վարդանյան – Վիկտոր Կատվալյան. Բայազետի բարբառի բառարան (անգլ.) 271

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Դավիթ Գասպարյան – Ալմաստ Զաքարյան – 100 274
Մագդա Զանփոլադյան – Լևոն Մկրտչյան (ծննդյան 90-ամյակի առթիվ) 280

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Ռիմա Գրիգորյան – Հարցազրույց Արմեն Պետրոսյանի հետ (ծննդյան 75-ամյակի առթիվ) 287
Թերեզա Շահվերդյան – Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան (ծննդյան 70-ամյակի առթիվ) 293

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Մերի Կիրակոսյան – «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնհինգերորդ նստաշրջան»-ը՝ նվիրված Հայաստանի կոմպոզիտորների միության հիմնադրման 90-ամյա հոբելյանին 301
Թաթուլ Ասոյան – Մայրենին ազգապահպանության հիմք 306

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Лусине Саакян – Ваагн Татрян: выдающийся исследователь Геноцида армян ……...3
Маджид Карими (Иран) – Александропольский, Московский и Карсский договоры 1920–1921 гг., изменившие судьбу Нахиджевана (на англ. яз.) …..34
Альберт Харатьян – Иерусалимское армянское патриаршество и греко-армянское противостояние вокруг Святых мест (1700–1730-е годы)……55

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ПОСВЯЩАЕТСЯ 850-ЛЕТИЮ
ПАМЯТИ НЕРСЕСА ШНОРАЛИ

Аэлита Долуханян – Великий новатор армянской средневековой литературы ……74
Ева Мнацаканян – Наблюдения о неоконченной драме Ов. Туманяна «Артавазд»…96
Марине Саргсян – «Маленькие трагедии» Аветика Исаакяна ……112
Бурастан Зулумян (Москва) – Тиран Чракян (Интра) и его поэтический сборник «Кипарисовая страна» (на русск. яз.)……...128

ЛИНГВИСТИКА

Давит Гюлзатян – Вокруг вопроса о типологии склонения (на основе сравнения древнеармянского, литературного восточноармянского, латинского, немецкого, русского языков)……..154

ЭТНОГРАФИЯ

Арсен Бобохян – Боги, герои и святые: армянские горы как сфера священных погребений ……...166
Карен Байрамян – Деятельность Ашхарбека Калантара по сохранению памятников (1930-е годы) ……183

ПУБЛИКАЦИИ

Степа Петоян – Инициатива В. Дадянца по изданию журнала под названием «Арцах» (1887–1888 гг.) (на русск. яз.) ……...196
Анушаван Закарян – Давид Ананун: избранные письма ……207

РЕЦЕНЗИИ

Роберт Казарян – Арам Косян: Хеттское царство (политическая история) (на англ. яз.) ……247
Сусанна Ованесян –Магда Джанполадян: «На свете лишь одна Армения…» …….251

Гегам Ованнисян – Саргис Меграбян: Дневник Вардана Ханасори ……..260
Петрос Демирчян – Зинаида Балаян: Арцах в армянской литературе XIX века …...266
Артак Варданян – Виктор Катвалян: Словарь Баязетского диалекта (на англ. яз.)...271

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

Давид Гаспарян –Алмаст Закарян – 100 ……274
Магда Джанполадян – Левон Мкртчян (к 90-летию со дня рождения) …….280

НАШИ ЮБИЛЯРЫ

Рима Григорян – Интервью с Арменом Петросяном (к 75-летию со дня рождения) …….287
Тереза Шахвердян – Гурген Кипронович Хачатрян (к 70-летию со дня рождения)…….293

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Мери Киракосян – «Пятнадцатая научная сессия молодых армянских искусствоведов», посвященная 90-летнему юбилею основания Союза композиторов Армении……...301
Татул Асоян – Родной язык – основа сохранения нации ……..306

CONTENTS

HISTORY

Lusine Sahakyan – Vahagn Dadryan – The outstanding researcher of the Armenian Genocide ……...3
Majeed Karimi (Iran) – The treaties of Alexandropol, Moscow and Kars, 1920–1921, that changed the fate of Nakhijevan (in Eng.) ……34
Albert Kharatyan – The Armenian Patriarchate of Jerusalem and the Greek–Armenian confrontation around the Holy Places (1700s–1730s) ……55

LITERATURE

TO THE 850TH DEATH ANNIVERSARY
OF ST. NERSES SHNORHALI

Aelita Dolukhanyan – The great innovator of Armenian medieval literature ……74
Yeva Mnatsakanyan – Some observations on H. Tumanyan's unfinished drama "Artavazd" ……..96

Marine Sargsyan – Avetik Isahakyan's "little Tragedies" ……112
Burastan Zulumyan (Moscow) – Tiran Chrakyan (Intra) and his Collection of Poems "Cypress Country" (in Russ.) ……128

LINGUISTICS

Davit Gyulzatyan – A novel intepretation of the declension typology (By comparison of Grabar, Literary Eastern Armenian, Latin, German, Russian) …….154

ETHNOGRAPHY

Arsen Bobokhyan – Gods, Heroes and Saints: Armenian mountains as spheres of sacred burials 166
Karen Bayramyan – Ashkharbek Kalantar's activities for preservation of monuments (1930s) ……...183

PUBLICATIONS

Styopa Petoyan – V. Dadyants' initiative to publish a magazine entitled "Artsakh" (1887–1888) ……196
Anushavan Zakaryan – David Ananun: Selected letters ……207

REVIEWS

Robert Ghazaryan – Aram Kosyan: the Hittite Kingdom (political history) (in Eng.)…247
Susanna Hovhannisyan – Magda Dzhanpoladyan: "There is only one Armenia in the world…" ……251
Gegham Hovhannisyan – Sargis Mehrabyan: Diary of Vardan Khanasori ……260
Petros Demirchyan – Zinaida Balayan: Artsakh in the Armenian literature of the 19th century……266
Artak Vardanyan – Viktor Katvalyan: Dictionary of the Bayazet dialect (in Eng.) 271

OUR HONOURED SCHOLARS

David Gasparyan – Almast Zakaryan – 100 ……274
Magda Dzhanpoladyan – Levon Mkrtchyan (on the occasion of his 90th birthday) …280

OUR JUBILEES

Rima Grigoryan – Interview with Armen Petrosyan (on the occasion of his 75th birthday) 287

Teresa Shahverdyan – Gurgen Kipro Khachatryan (on the occasion of his 70th birthday)…….. 293

SCIENTIFIC LIFE

Mary Kirakosyan – “Fifteenth scientific session of young Armenian art critics”, dedicated to the 90th anniversary of the foundation of the Union of composers of Armenia……...301
Tatul Asoyan – Mother tongue is the basis for the nation preservation……306

Հայերեն բաժնի խմբագիրներ	Թամար Զաքարյան Լիանա Օհանյան
Ռուսերեն բաժնի խմբագիր	Կարինե Ալեքսանյան
Հայերենի սրբագրիչ	Աղավնի Շահինյան
Անգլերենի խմբագիր	Մարինե Ժամկոչյան
Համակարգչային ձևավորում և էջադրում	Գոհար Հովհաննիսյան

Редакторы армянского отдела	Тамар Закарян Лиана Оганян
Редактор русского отдела	Карине Алексанян
Корректор армянского отдела	Агавни Шагинян
Редактор английского отдела	Марине Жамкочян
Компьютерный дизайн и пагинация	Гоар Оганнисян

Editors of Armenian segment	Tamar Zakaryan Liana Ohanyan
Editor of Russian segment	Karine Aleksanyan
Proofreader of Armenian segment	Aghavni Shahinyan
Editor of English segment	Marine Zhamkochyan
Computer design and pagination	Gohar Hovhannisyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramian av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайт журнала: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official site of the journal: http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
Электронная почта журнала: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com
E-mail of the journal: patmhandes@rambler.ru, patmhandes@yahoo.com

Հրատ. պատվեր № 1231
Ստորագրված է տպագրության 05. 04. 2023 թ.:
Տպագրական 19,75 մամուլ: Թուղթ № 1, 70x100:
Տպաքանակը՝ 250:

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1231
Подписано к печати 05. 04. 2023 г.
Печ. 19,75 л. Бумага № 1, 70x100.
Тираж −250.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.